ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1957-1975

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

ЛЕТОПИСЬ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

1957-1975

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1957-1975

Ա 45 93 III

Ա 45 93 III

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1977

016:8 Ap 2
Գ 31

Կազմեցին՝
Հ. Ա. ԴԱԼՍՏՅԱՆ, Գ. Վ. ԳՅՍՊԱՐՅԱՆ
Խմբագրությամբ՝
Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Գ $\frac{70202}{703\ (02)\ -77}$ 10—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության, 1977,

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը 1957 թ. լույս ընծայեց «Սովետահայ գրականության տարեգրություն» գիրքը, որն ընդգրկում էր մեր հանրապետության և մասամբ համամիութենական գրական-մշակութային կյանքի կարևորագույն երևույթները՝ 1917—1956 թվականներին։

«Սովետահայ գրականության տարեգրության» սույն գիրքը ընդգրկում է 1957—1975 թվականների հարուստ ու արգասավոր ժամանակաշրջանում մեր գրական-մշակութային կյանքում տեղի ունեցած հիմնական իրադարձությունները։

Ներկա տարեգրությունը նույնպես ներառնում է գրական-պատմական պրոցեսի համար առավել կարևոր նշանակություն ունեցող, գրականության ուսումնասիրման գործին նպաստող փաստերն ու երևույթները՝ գրականության և արվեստի վերաբերյալ կուսակցական փաստաթղթեր, ՍՄԿԿ և գրողների համագումարների ու պլենումների որոշումներ ու բանաձևեր, լենինյան և պետական մրցանակների շնորհում, գրական-ստեղծագործական համաժողովների, խորհրդակցությունների, քննարկումների նյութեր, գրական-մշակութային կապեր, տասնօրյակներ, շաբաթներ, գրական երեկոներ ու բանավեճեր, հոբելյանական տարեթվեր, նշանավոր գրողների ելույթներ, գեղարվեստական և գրականագիտական գրքերի, ժողովածուների, թարգմանությունների հրատարակության փաստեր և այլն։ Այսինքն՝ այն ամեն էականը, կարևորը, որ կարող է որոշակի գաղափար տալ մեր գրականության վերջին քսան տարվա փաստական պատմության մասին։

Սույն տարեգրությունը հենվում է հիմնականում հայ պարբերական մամուլի տվյալների վրա, բայց օգտագործված են նաև միութենական թերթեր, ամսագրեր, մի շարք մատենագիտական աղբյուրներ, որոնք նշվում են գրքի համապատասխան էջերում։

Տարեգրությունը կառուցված է նախորդ գրքում մշակված սկզբունքներով։ Յուրաքանչյուր տարեթվի տակ նշվում է տվյալ անցքի, իրադարձության ամիսը և օրը, հակիրճ շարադրվում է դրանց բովանդակությունը, որոշ դեպքերում փաստերը պարզաբանվում են տարբեր վավերագրերի, ականավոր գրողների, հասարակական-քաղաքական և մշակութային նշանավոր գործիչների մտքերի ու ասույթների մեջբերումներով։ Երբ պարզապես հնարավոր չի եղել որոշելու այս կամ այն դեպքի, անցքի, իրողության ստույգ օրը, հիմք է ընդունվել մամուլի հաղորդման ժամկետը։ Բոլոր դեպքերում խստիվ պահպանված է երևույթների դրանցման ժամանակագրական հերթականությունը։ Բացառության կարգով հիշատակվում են նաև գիտության ու արվեստի բնագավառի (նկարչություն, երաժշտություն, թատրոն և այլն) ամենակարևոր, համամիութենական նշանակության երևույթները։

Յուրաքանչյուր տարեթվի վերջում տրվում է տվյալ տարվա ընթացքում լույս տեսած գեղարվեստական, գրաքննադատական-գրականագիտական և

Թարգմանական գրականության հարցերին նվիրված ժողովածուների համառոտ և ոչ լիակատար մատենագիտությունը։ Սեղմության նկատառումներով չեն բերվում նաև մատենագիտական մանրամասն տվյալներ՝ գրքերի տպաքանակը, էջերի թիվը, թարգմանիչների, ժողովածուներ կազմողների և նրանցում տեղ գտած հեղինակների անունները և այլն։ Որոշ դեպքերում առանձին գրքերի հրատարակության փաստը արձանագրված է տարեգրության բուն տեքստում։

Տարեգրությունը հրատարակության են պատրաստել ինստիտուտի սովետական գրականության բաժնի աշխատակիցներ՝ բանասիրական գիտությունների թեկնածուներ Հ. Գալստյանը (1957—1964) և Դ. Գասպարյանը (1965—1975)։

1957

Հունվարի 10-ին

«Գրական թերթի» առաջին համարից սկսում է տպագրվել Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքը։

Հունվարի 15-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանի հանդիպումը գրողների հետ։ Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը, զեկուցում է Ս. Փոթիչյանը՝ «Փափազյանը և նրա «Հետադարձ հայացք» դիրքը» թեմայով։

Հունվարի 20-ին

Գրողների տանը քննարկվում է Վ. Ալազանի «Հյուսիսային ասող» վեպը։ Զեկուցում է Հ. Մկրտչյանը, ելույթ են ունենում՝ Գ. Արևյանը, Ս. Տարոնցին, Վ. Գրիգորյանը, Վ. Նորենցը, Վ. Մնացականյանը, Մ. Արմենը։

Հունվարի 31-ին

«Գրական թերթը» (№ 4) հաղորդում է, որ 1956 թ. դեկտեմբերից Հալեպում (Սիրիա) սկսել է լույս տեսնել «Երկիր» գրականության և արվեստի հանդեսը։

Փետրվարի 7-ին

«Գրական թերթում» (№ 5) հրապարակվում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը՝ 1957 թ. Եղիշե Չարենցի ծննդյան վաթսունամյա հոբելյանը նախապատրաստելու և անցկացնելու համար կառավարական հանձնաժողով կազմելու մասին. Ա. Քոչինյան (նախագահ), Էդ. Թոփչյան (տեղակալ), Վ. Ալազան, Հ. Այվազյան, Աղավնի, Լ. Բաբայան, Հ. Բաղդասարյան, Ս. Բաղդասարյան, Գ. Դավթյան, Ստ. Զորյան, Ավ. Իսահակյան, Ռ. Խաչատրյան, Ա. Կարինյան, Գ. Հայրյան, Վ. Համբարձումյան, Հր. Հովհաննիսյան, Գ. Հովնան, Հ. Մարգարյան, Բ. Մարտիրոսյան, Վ. Նորենց, Ա. Շահինյան, Հ. Սահյան, Գ. Սարյան, Ա. Սաթյան, Հ. Սալախյան, Գ. Սևունց, Վ. Սիրցև, Շ. Սիմոնյան, Հ. Շիրազ, Ջ. Վելիբեկով, Ս. Տարոնցի։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանը Փարիզից ստանում է նշանավոր գրականագետ, բանաստեղծ և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի արխիվը։

«Գրական թերթ», № 29

Փետրվարի 12-ին

Գրողների տանը քննարկվում է Հր. Հովհաննիսյանի «Հրաշալի այգեպան» բանաստեղծությունների ժողովածուն։ Զեկուցում է Ն. Զարյանը։

Փետրվարի 18-ին

ՀՍԳ միության քննադատների բաժանմունքում «Տերյանի ռեալիզմը» թեմայով զեկուցում է կարդում Խ. Սարգսյանը։ Ելույթ են ունենում Ա. Գրաշին, Վ. Թերզիբաշյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Ա. Ինճիկյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Թամրազյանը։

Փետրվարի 27-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված ամերիկյան գրող Հենրի Լոնգֆելլոյի ծննդյան 150-ամյակին։

Փետրվարի 28-ից մարտի 7-ը

Մոսկվայում տեղի է ունենում սովետական նկարիչների համամիութենական առաջին համագումարը։

Մարտի 4-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում ստեղծագործական երեկո՝ նվիրված Ս. Տարոնցու գրական գործունեության 30-ամյակին։ Զեկուցում է Ս. Սողոմոնյանը, ելույթ են ունենում Վ. Նորենցը, Հր. Հովհաննիսյանը, Ա. Գրաշին, վերջում՝ Ս. Տարոնցին։

Մարտի 28-ից ապրիլի 5-ը

Մոսկվայում տեղի է ունենում սովետական կոմպոզիտորների համամիութենական երկրորդ համագումարը։

Մարտ

Նշվում է Գուսան Շերամի (Գրիգոր Տալյան) ծննդյան 100-ամյակը։

Լույս է տեսնում Ադրբեջանի սովետական գրողների միության օրգան «Գրական Ադրբեջան» հայերեն հանդեսի առաջին համարը։

Ապրիլի 10-ին

Հայաստանի սովետական գրողների միության վարչության նիստում քննարկվում է «Գրական թերթի» խմբագրական կոլեգիայի վերջին երկու տարվա աշխատանքը։ Զեկուցում է թերթի խմբագիր Հր. Հովհաննիսյանը։ Ելույթ են ունենում Գ. Սևունցը, Ս. Տարոնցին, Վ. Նորենցը, Ս. Վահունին, Ն. Զարյանը, Ստ. Կուրտիկյանը, Բ. Հովսեփյանը, Ս. Կապուտիկյանը, Էդ. Թոփչյանը։

Ապրիլի 15-ին

Վախճանվեց թարգմանիչ Արշավիր Խոնդկարյանը (ծնվ. 1889)։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակներ են շնորհվում Լ. Լեոնովին («Ռուսական անտառ» վեպի համար), Մ. Ջալիլին (նամակներ, «Մոաբիտյան տետրակ» բանաստեղծությունների շարքի համար)։

Ապրիլ

Լույս է տեսնում ՍՍՀՄ գրողների միության և Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի օրգան «Վոպրոսի լիտերատուրի» ամսագրի առաջին համարը։

Մայիսի 3-ին

Վախճանվեց ականավոր լեզվաբան, ՀՍՀ ԳԱ ակադեմիկոս Գրիգոր Այվազի Ղափանցյանը (ծնվ. 1887 թ.)։

Մայիսի 6-ին

Գրողների միության գահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված սփյուռքահայ գրականությանը։ Երեկոն բացում է ՀՍԳ միության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանը։ Հաղորդվում է գրողների միության նախագահ Ավ. Իսահակյանի ողջույնի ձայնագրված խոսքը՝ ուղղված սփյուռքահայությանը։

Սփյուռքահայ արդի գրականության մասին զեկուցում է Հր. Գրիգորյանը։

Մայիսի 14—15-ը

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության III պլենումը։ Օրակարգ՝ «ՍՄԿԿ XX համագումարից հետո սովետական գրականության զարգացման մի քանի հարցերի մասին»։

Պլենումը բաց է անում Կ. Ֆեդինը։ Ներածական խոսք է ասում Ա. Սուրկովը։

Մայիսի 14-ին

ՀՍԳ միությունում տեղի է ունենում Գ. Մահարու «Երիտասարդության սեմին» գրքի քննարկումը։ Զեկուցում է Լ. Հախվերդյանը։ Ելույթ են ունենում Վ. Ծովյանը, Բ. Հովսեփյանը, Գ. Արևյանը, Հր. Բեմբաշյանը, Վ. Նորենցը, Ա. Սահինյանը, Ս. Խանզադյանը, վերջում՝ Գ. Մահարին։

Մայիսի 23-ին

«Գրական թերթ» (№ 19) հաղորդում է, որ Հայաստանում հյուրընկալվում է չիլիական ականավոր բանաստեղծ և հասարակական գործիչ, միջազգային լենինյան մրցանակի դափնեկիր Պաբլո Ներուդան։

Մայիսի 26-ին

ՀՍԳ միության տան գահլիճում տեղի է ունենում հանդիպում Պաբլո Ներուդայի և նրա կնոջ՝ տիկին Մաթիլդայի հետ։ Երեկոն բացում է Գ. Սեմնյը։ Չիլիացի բանաստեղծի կյանքի և գործունեության մասին զեկուցում է կարդում Վ. Մնացականյանը։ Այնուհետև ընթերցվում են Ներուդայի բանաստեղծությունների հայերեն թարգմանություններից։ Իր շնորհակալական խոսքում Պ. Ներուդան ասում է. «Ես եկել եմ իմ վազուցվա երազած երկիրը տեսնելու, ուսումնասիրելու և երգելու համար... Ես չեմ մոռանա այն ջերմ, անկեղծ ու բարեկամական ընդունելությունը, որին արժանացանք մենք ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ հյուրընկալ Հայաստանում»։

«Սովետական Հայաստան», № 124

Հունիսի 28—30-ը

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության երկրորդ պլենումը։ Պլենումը բաց է անում ՀՍԳ միության քարտուղար Գ. Սևունցը։ Օրակարգ՝ «ՍՄԿԿ XX համագումարը և սովետահայ գրականության զարգացման մի քանի հարցեր»։ Զեկուցում է ՀՍԳ միության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Ն. Զարյանը, Շ. Թաթիկյանը, Ա. Կարինյանը, Ս. Աղաբաբյանը, Ս. Սարինյանը, Գ. Երյոմինը, Գր. Տեր-Գրիգորյանը, Ս. Խանզադյանը, Ա. Գրաշին, Հր. Գրիգորյանը, Վ. Տալյանը, Հր. Հովհաննիսյանը, Զ. Դարյանը, Ա. Մակարյանը, Գ. Էմինը, Հր. Թամրազյանը, Արտ. Ոսկերչյանը, Ար. Մնացականյանը, Հր. Մարգարյանը։ Պլենումը քննարկված հարցի մասին ընդունում է ընդարձակ որոշում։

Հուլիսի 13-ին

Երևան են ժամանում անգլիական ժամանակակից ականավոր գրող Ջեյմս Օլդրիջը, անգլիական «Մանչեստր Գարդիան» թերթի Մոսկվայի թղթակից տիկին Աննա Ուիլեանները։

Մեկնելիս Օլդրիջը «Գրական թերթին» է թողնում հետևյալ գրությունը.

«Ես միշտ եղել եմ հայ ժողովրդի և միասնության ու անկախության համար նրա մղած պայքարի առանձնահատուկ բարեկամը։ Բայց լոկ այս կարճատև այցելության ժամանակ ես ըմբռնեցի, թե ինչքան հարուստ ու հարատև են ձեր պատմությունն ու մշակույթը և թե ինչպես բաղում դարերի ընթացքում դուք մաքառել եք այն պահպանելու համար։

Իրոք դուք մի ուշագրավ ժողովուրդ եք, որ կարողացել եք մնալ այսքան կենսունակ և հավատարիմ ձեր ավանդություններին, երբ ամբողջ պատմությունն ու հանգամանքները ձեր դեմ են եղել։

Ինձ թվում է, եթե ես հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով։ Մի՞թե չափազանցություն կլիներ ասել, թե արդի Սովետական Հայաստանը արդեն բռնել է գեղեցիկ ու կուլտուրական մի երկիր ստեղծելու ճանապարհը, որին ձգտել է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը»։

«Գրական թերթ», № 30

Հուլիսի 17-ին

Նշվում է Պիեր Բերանժեի մահվան 100-ամյակը։

Հուլիսի 23-ին

«Լիտերատուրնայա գազետան» տպագրում է «Գրականության պարտականությունը» առաջնորդող հոդվածը (տե՛ս «Գրական թերթ», № 28)։

Հուլիսի 31-ին

Կիրովականի քիմկոմբինատի կուլտուրայի պալատում տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների Կիրովականի միավորման հիմնադիր ժողովը։ Ողջույններ են ստացվում Ավ. Իսահակյանից, Գեղամ Սարյանից, Սերո Խանզադյանից, Հայաստանի սովետական գրողների միության վարչությունից։

Ավ. Իսահակյանի ողջույնի խոսքից

«Փոքր մարդիկ, մանր ճղճիմ զգացմունքների և մտքերի տեր մարդիկ չեն կարող ստեղծել մեծ գրականություն։ Սակայն փոքր ժողովուրդները իրենց վեհ իդեալներով, երազներով, աղաղության տենչով կարող են ստեղծել մեծ գրականություն։ Գրականությունը մի որևէ ժողովրդի հոգեկան արտահայտությունն է։ Միավորման երիտասարդ գրողները ոչ միայն պետք է ձգտեն վերարտադրել ժողովրդի կյանքն ու հոգին, այլև պիտի կրթեն նրան, բարձրացնեն, ազնվացնեն և սիրել տան հայրենիքն ու ժողովուրդը»։

«Գրական թերթ», № 28

Հուլիսի 31-ին

«Գրական թերթը» (№ 28) հաղորդում է, որ Գանձայում (Վրացական ՍՍՀ) բացվել է Վահան Տերյանի տուն-թանգարանը։

Հանրագումարի են բերվում Համամիութենական գրական մրցանակաբաշխության արդյունքները, որն անցկացվել էր 1957 թ. մարտի 1-ից մինչև հուլիսի 1-ը։ Երկրորդ մրցանակ է շնորհվում Պ. Զեյթունցյանին՝ պատմվածքների համար։

«Գրական թերթ», № 28

Օգոստոսի 7-ին

Վախճանվեց ՀՍՀ ժողովրդական արտիստ, թատերական նշանավոր գործիչ Համազասպ Խարազյանը (Ամո Խարազյան, ծնվ. 1880 թ.)։

Օգոստոսի 29-ին

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության ընդլայնված նիստը։ Որոշվում է ստեղծել ՌՍՖՍՀ գրողների միություն։

Օգոստոս

Երևանում լույս է տեսնում Վ. Բրյուսովի բանաստեղծությունների հայերեն ժողովածուն։

Հայաստանում հյուրընկալվում է Գվատեմալայի ականավոր գրող Միգել Անխել Աստուրիասը։

«Գրական թերթ», № 32

Սեպտեմբերի 8-ին

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրեին «Պրավդան» իր 261-րդ համարը նվիրում է Հայկական ՍՍՀ-ին։ Տպագրվում են ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Թովմասյանի «Վերածնված ժողովուրդը», Վ. Համբարձումյանի «Ծաղկում է գիտությունը» հոդվածները, Ավ. Իսահակյանի «Հայրենիքիս», Գ. Էմինի «Խոսի՛ր, Հայաստան» բանաստեղծությունները, Նորա Ադամյանի «Արարատյան հովտում», Գ. Սևունցի

«Իմ Հայաստան» ակնարկները, Մ. Սարյանի նկարները և մի շարք այլ նյութեր։

Սեպտեմբերի 22-ին

«Գրական թերթը» (№ 35) էջ է նվիրում Ե. Չարենցի 60-ամյակին։ Թերթում հաղորդվում է, որ բանաստեղծի հոբելյանի նախօրյակին հանդիսավոր նիստեր ու երեկոներ են տեղի ունեցել Լենինականում, Դիլիջանում, Աշտարակում, Երևանում։

Սեպտեմբերի 25-ին

Գրողների միությունում քննարկվում է սփյուռքահայ գրող Գեղամ Սևանի «Կանաչ անապատ» պատմվածքների գիրքը։ Զեկուցում է Վ. Մնացականյանը։ Մարքերի փոխանակությանը մասնակցում են Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Ստ. Զորյանը, Շ. Տատուրյանը, Ստ. Ալաջաջյանը, Մ. Հարությունյանը։

Սեպտեմբերի 28-ին

Վախճանվեց Հովհ. Թումանյանի դուստր, գրականագետ-տեքստաբան Նվարդ Թումանյանը (ծնվ. 1895 թ.)։

Երևանի հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում բացվում է Եղիշե Չարենցի ծննդյան 60-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստը։ Բացման խոսք է ասում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Հր. Մարգարյանը։ Զեկուցում է էդ. Թոփչյանը։ Ողջույնի խոսքով հանդես են գալիս Դ. Երյոմինը (ՍՍՀՄ գրողների միության վարչություն), Մ. Ստելմախը (Ուկրաինա), Օ. Սարիվելին (Ադրբեջան), Ի. Ստավսկայան (Մոլդավիա), Թ. Էսենովան (Թուրքմենիա), Կ. Սիտալը (ամերիկահայ գրող), Գ. Ադղարյանը (լիբանանահայ բանաստեղծ) և ուրիշներ։ Այնուհետև հրապարակվում են շնորհավորական հեռագրեր՝ Մոսկվայից, Կիևից և երկրի այլ քաղաքներից։

Իլյա Էրենբուրգի հեռագիրը

«Սրտանց շնորհակալ եմ հրավերից։ Վաղը մեկնում եմ արտասահմանյան ուղևորության և, ցավոք սրտի, չեմ կարող մասնակցել Հայաստանի սքանչելի բանաստեղծ Եղիշե Չարենցի հոբելյանական հանդեսին։ Հոբելյանական այս օրերին ես ձեզ հետ եմ, Հայաստանի իմ թանկագին բարեկամներ, Չարենցի անմոռանալի կերպարը՝ իմ սրտում»։

Մաքսիմ Ռիլսկու հեռագիրը

«Ամբողջ սրտով իմ հայ բարեկամների հետ եմ, որոնք նշում են սքանչելի բանաստեղծ Եղիշե Չարենցի պայծառ հիշատակը։ Ես հպարտ եմ, որ եղել եմ նրա բարեկամը, գրչի եղբայրը։

Կեցցե սովետական գրականությունը, թող ծաղկի ժողովուրդների բարեկամությունը»։

«Սովետական Հայաստանի» համարը (№ 230) նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 60-ամյակին։

Կ. Սիմոնովի խոսքից

«Հայ խոշորագույն բանաստեղծ Եղիշե Չարենցը ամենապատվավոր տեղերից մեկն է գրավում եղբայրական հանրապետությունների սովետական գրականության շատ գործիչների շարքում, որոնք սովետական բազմազգ գրականության հիմքերն են դրել»։

«Գրական թերթը» (№ 36) ամբողջությամբ նվիրված է Ե. Չարենցի ծննդյան 60-ամյակին։ Տպագրված են Ավ. Իսահակյանի «Չարենցի հետ վեճերում», Մաքսիմ Ռիլսկու «Եղիշե Չարենցի մասին», Գ. Մահարու «Չարենցյան քանդակներ», Խ. Դաշտենցի «Հիշողություններ Չարենցի մասին», Մ. Արազու «Մեծ բանաստեղծի հիշատակին», Հր. Քոչարի «Բոցասիրտ հայրենասերը», Հ. Սալախյանի «Չարենցի վարպետության մասին», Գ. Էմինի «Ռևոլյուցիայի բանաստեղծը» և այլ նյութեր։

«Կոմունիստ» թերթը (Երևան) նվիրված է Ե. Չարենցին։

Տպագրված են Ն. Տիխոնովի, Ի. Էրենբուրգի, Մ. Սարյանի, Մ. Ռիլսկու, Գ. Մահարու, Մ. Թուրսուն-Զադեի, Գ. Լեոնիձեի և ուրիշների խոսքը։

«Լիտերատուրնայա գազետան» տեղեկություններ է տալիս Ե. Չարենցի մասին և տպագրում նրա բանաստեղծություններից։

Սեպտեմբերի 30-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության պլենումը՝ նվիրված Ե. Չարենցի ծննդյան 60-ամյակին։ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և Չարենցի ստեղծագործությունը» թեմայով զեկուցում է Հ. Սալախյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Վ. Մոգուրյունասը (Լիտվա), Վ. Զվյագինցևան, Վ. Նորենցը, Մ. Արմենը։

Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Ե. Չարենցի ծննդյան 60-ամյակին։ Բացման խոսք է ասում ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովհաննը։ Զեկուցում են Ա. Կարինյանը («Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին»), Ա. Գրիգորյանը («Էսթետիկայի հարցերը Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» գրքում»), Հր. Գրիգորյանը («Եղիշե Չարենցը արտասահմանում»), Ս. Մանուկյանը («Վ. Ի. Լենինի կերպարը Ե. Չարենցի պոեզիայում»), Ս. Աղաբաբյանը («Եղիշե Չարենցի գեղարվեստական արձակը»), Ս. Սարյանը («Եղիշե Չարենցի գրաքննադատական հայացքները»)։ Նստաշրջանին մասնակցում էին նաև Մոսկվայից, Կիևից, Բաքվից ու այլ քաղաքներից ժամանած գրողներ ու քննադատներ։

Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում բացվում է Ե. Չարենցի ծննդյան 60-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։ Բացման խոսք

է ասում պրոֆեսոր Վ. Նալբանդյանը, զեկուցումներ են կարդում Գր. Սարգսյանը («Եղիշե Չարենցը՝ Հոկտեմբերի երգիչ»), Տ. Հարությունյանը («Եղիշե Չարենցի 1918—21 թթ. պոեմների լեզուն»), Ս. Բաղյանը («Եղիշե Չարենցը և կլասիկ գրականությունը»), Էդ. Ջրբաշյանը, («Եղիշե Չարենցը և Հովհաննես Թումանյանը»), Հ. Սալախյանը («Ե. Չարենցի բանաստեղծական արվեստի մի քանի հարցերի մասին»)։

Ուկրաիներեն լույս է տեսնում Չարենցի երկերի միհատորյակը՝ Մ. Ռիլսկու ներածական խոսքով, Հ. Սալախյանի և Էդ. Թուիշյանի առաջաբանով։

«Գրական թերթ», № 36

Հոկտեմբերի 1-ին

Լույս է տեսնում ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի և աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի օրգան «Երևան» (հետագայում՝ «Երևկոյան Երևան») թերթի առաջին համարը։

Հոկտեմբերի 4-ին

Սովետական Միությունում արձակվում է Երկրի՝ աշխարհում առաջին արհեստական արբանյակը։ «Գրական թերթը» էջ է նվիրում այդ խոշոր իրադարձությանը։ Նույն համարում տպագրված են Ավ. Իսահակյանի, Ստ. Զորյանի, Անդրե Մորուայի և ուրիշների խոսքերը։

Ավ. Իսահակյանի խոսքից

«Մեր երկրագնդի արհեստական արբանյակը, որ սովետական գիտությունը ստեղծեց և նետեց երկնային տարածությունների մեջ, մարդկային հանճարի ամենամեծ հաղթանակն է։ Այս զարմանահրաշ հայտնագործումը նոր դարաշրջան բացեց տիեզերքի ճանաչողության մեջ։ Մարդը ազատագրվեց Երկրի ձգողական ուժից, որից ձերբազատվելը թվում էր անհնար։ Սակայն այսօր նա կանգնած է տիեզերական տարածություններում մոլորակից մոլորակ ճանապարհորդելու նախասեմին»։

«Գրական թերթ», № 38

Գրական թերթը (№ 38) հաղորդում է, որ ռումիներեն լույս է տեսել Ավ. Իսահակյանի ընտիր բանաստեղծությունների ժողովածուն։

Հոկտեմբերի 16-ին

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, դիրիժոր Միքայել Թավրիզյանը (ծնվ. 1907 թ.)։

Հոկտեմբերի 17-ին

Վախճանվեց հայ մեծ գրող, Հայաստանի գրողների միության վարչության նախագահ, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ավետիք Սահակի Իսահակյանը (ծնվ. 1875 թ.)։

Հոկտեմբերի 19-ին

«Սովետական Հայաստանի» (№ 248) համարը նվիրվում է Ավետիք Իսահակյանին։ Տպագրված են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՍՍՀՄ գրողների միության, Ա. Միկոյանի, Մ. Շահինյանի, Վանո Մուրադելու, Սուրեն Քոչարյանի, Մ. Սարյանի, Մ. Արաղու, Արտ. Կարինյանի և ուրիշների ցավակցական խոսքերն ու հեռագրերը։

Ա. Միկոյանի խոսքից

«Ավետիք Իսահակյանի գեղարվեստական խոսքը մարդկանց մի քանի սերունդների է ոգեշնչել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Ավետիքի շատ երգերն ու բանաստեղծությունները ժողովրդական են դարձել, մտել են քաղաքի ու գյուղի աշխատավորների կենցաղի մեջ, նրանց համար միս ու արյուն են դարձել»։

Մ. Շահինյանի խոսքից

«Հանճարի կորուստը, որը ներկայացնում էր իր ժողովրդին, որն ամբողջ աշխարհի առջև բացահայտում էր, թե ստեղծագործական ինչպիսի ուժեր են թաքնված հարազատ ժողովրդի ընդերքում, ինչպիսի մեծ բարձրության կարող է հասնել այդ ժողովրդի արվեստը՝ դա ամենադառն կորուստն է, որը ցավագին սեղմում է ամեն մի կենդանի սիրտ...»։

Մ. Սարյանի խոսքից

«Իսահակյանին կորցնելով կա միայն մի մխիթարություն, որ նա հավերժորեն ճամփորդելու է համաշխարհային պոեզիայի լուսավոր ճանապարհով, վկայելով հայ ժողովրդի վեհությունը և ազնվությունը։

Հավերժ հիշատակ իմ անփոխարինելի ընկերոջը, բնության հազվագյուտ գյուխգործոցներից մեկին՝ անսահմանորեն սիրելի Ավետիք Իսահակյանին»։

Ավ. Իսահակյանի մահվան կապակցությամբ «Սովետական Հայաստանը» էջեր է նվիրում նաև իր 249 (20 հոկտեմբերի), 250 (22 հոկտեմբերի), 251 (23 հոկտեմբերի) համարներում։

Հոկտեմբերի 22-ին

Տեղի է ունենում Ավ. Իսահակյանի թաղումը։ Սգո միտինգում հանդես են գալիս ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Թովմասյանը, Ստ. Զորյանը, Դ. Գրանինը (ՍՍՀՄ գրողների միության վարչության անունից), Լ. Քոչարյանը (Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի նախագահ), Բ. Ժղենտին (Վրաստանի գրողների անունից), ակադեմիկոս Ի. Մայսկին (ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայից), Գ. Ներսեսելին (Վրաստանի գիտությունների ակադեմիայից), Մ. Ռահիմը (Ադրբեջանի գրողների անունից), Վ. Համբարձումյանը, Կ. Միտալը (ամերիկահայ բանաստեղծ)։

Դ. Գրանինի ճառից

«Ռուս ժողովուրդը գնահատել է, գնահատում է և միշտ կգնահատի մեծ բանաստեղծ Իսահակյանին, որի անմահ ստեղծագործությունները հավերժական ուրախություն կպատճառեն աշխարհի բոլոր լեզուներով խոսող մարդկանց նորանոր սերունդներին»։

Բ. Ժլենատի ճառից

«Ավելի քան կես դար Իսահակյանը կանգնած է եղել համաշխարհային պոեզիայի և կուլտուրայի բարձունքներում, իր պոեզիայով հարստացրել է համաշխարհային կուլտուրան։ ...Նա անմահ է, նա կապրի հայ ժողովրդի սրտում, մեր հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդների, ամբողջ առաջադեմ մարդկության սրտերում։ Նրա երգերն ու բանաստեղծությունները, սքանչելի պոեզիան հարուստ ժառանգություն են դարձել»։

Կ. Սիտալի ճառից

«Իսահակյանը մեզ համար, արտաստահմանում, մնում է անմահ։ Նրա երգերը զրոշ և նեղշնչման աղբյուր դարձրած, մենք սովետական մեր հայրենիքի կողքին կմնանք մինչև այն բախտավոր օրը, երբ բոլորս կհավաքվենք հայրենիքում և մեր գլուխը կխոնարհենք հանգուցյալ անմահ բանաստեղծի շիրմի առաջ»։

«Գրական թերթը» ամբողջությամբ նվիրված է Ավ. Իսահակյանին։ Տպագրված են ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, ՀՍՍՀ Մինիստրների սովետի, ՍՍՀՄ գրողների միության վարչության, ՀՍԳ միության վարչության, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի, Ա. Ի. Միկոյանի, Ի. Բաղրամյանի, Ի. Էրենբուրգի, Մ. Շահինյանի, Ա. Վեցլովայի, Լ. Պերվոմայսկու, Ի. Սելվինսկու և այլ անձանց ու կազմակերպությունների ցավակցությունները, ինչպես նաև Վ. Բրյուսովի, Ալ. Բլոկի, արաբ պրոֆեսոր Էլ. Ասատրի, ուրուգվայացի գրող Խոսուալդո Սոսայի գնահատականի խոսքերը. Մ. Ռիլսկու («Պայծառ, մաքուր սիրտը»), Վ. Փափազյանի («Անմահություն»), Ստ. Զորյանի («Անփոխարինելի կորուստը»), Մուռեդ Ռահիմի («Հանճարները չեն մեռնում»), Գ. Մահարու («Հավերժական ճամփորդը») և ուրիշների հոդվածները։

Ցավակցական հեռագրերից

«ՍՍՌՄ գրողների միության վարչության քարտուղարությունը, սովետական գրողների բազմազգ ընտանիքի հետ միասին, խորապես սգում են սովետական խոշորագույն գրողներից մեկի՝ Հայաստանի ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակյանի անակնկալ մահը։ Հայ ժողովրդի ականավոր զավակի բանաստեղծական ոգեշունչ ստեղծագործությունը համաշխարհային պոեզիայի լավագույն գործերի հետ ընդմիշտ կմնա սովետական մարդկանց հիշողության մեջ։ Խնդրում ենք մեր ցավակցությունը հայտնել հանգուցյալի ընտանիքին, ինչպես նաև Հայաստանի բոլոր գրողներին։

Աժան, Բաժան, Լեոնով, Մարկով, Պոլևոյ, Սիմոնով, Վ. Սմիրնով, Ս. Սմիրնով, Սուրկով, Տիխոնով, Ֆեդին»։

«Բանաստեղծ Իսահակյանը այն գրողներից է, որոնք հազվադեպ են ծնվում։ Նրանով իրավունք ունի պարծենալ ամեն մի, նույնիսկ ամենահարուստ, գրականություն։

Շատ տասնամյակների ընթացքում նրա պոեզիան օգնել է ինձ ապրելու։ Ես համոզված եմ, որ նա դարեդար կենդանի կմնա։

Իլյա Էրենբուրգ»։

«Ցնցված եմ մեր ժամանակի մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Ավետիք Իսահակյանի մահվան բոթից։ Ձեզ հետ միասին սգում եմ։

Անտանաս Վենցլովա»։

«Ձեզ հետ միասին խորապես ապրում եմ մեր բոլորի կողմից սիրված Ավետիք Իսահակյանի մահվան առթիվ հայ ժողովրդին համակած վիշտը։

Իլյա Սելվինսկի»։

Լուի Արագոնի «Ավ. Իսահակյանի հիշատակին» խոսքը՝ տպագրված «Պրավդայում»

«1956 թվականին էլզա Տրիոլեն և ես Գորկու հրավերով եկանք իրեն տեսնելու։ Գորկին մահանում էր։ Եվ միայն ճանապարհին մենք իմացանք, որ նա, ում պատրաստվում էինք այցելել, արդեն վախճանվել է։ Եվ ահա հիմա 1957 թվականին Մոսկվա գալով՝ ես իմացա այս հարյուրամյակի խոշոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի մահը, որին մենք ուզում էինք անձամբ հաղորդել մեր սրտագին ողջույնը, իսկ նրա միջոցով՝ Հայաստանի ամբողջ ոգեշունչ պոեզիային։

Մեր դարի կերպարանքը կրում է մի քանի պայծառ բանաստեղծների կնիքը։ Անգլիայում Կիպլինգն է դա, Ֆրանսիայում՝ Ապոլիներ և Էլյուարը, Գերմանիայում՝ Ռիլկեն, Իսպանիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին ու Եսենինը, Հայաստանում՝ Չարենցն ու Իսահակյանը։ Ամեն անգամ, երբ այս լուսատուներից մեկն ու մեկը հանգչում էր, թվում էր, թե աշխարհին իավար է պատում։ Բայց այն ամենը, ինչ թողել են նրանք իրենցից հետո, ոչ թե սավեր է, այլ բոց է։ Իսահակյանը չկա այլևս, սակայն մնացին «Արու-Լալա-Մահարին» և «Սասմա Մհերը»։ Եվ ճիշտ այնպես, ինչպես դարերը չեն կարողացել ջնջել կերպարը Մհերի, «որը սիրում էր չքավորներին», նույնպես և հաղարամյակներ հետո Իսահակյանի ձայնում նորից հնչեց Մհերի շունչը, ճիշտ այնպես էլ Ավետիք Իսահակյանի մահը անզոր է միապանելու նրա պոեզիայի լույսի կենդանի ճաճանչը, որը հավերժորեն ջերմացնելու է ոչ միայն հայերի սրտերը, այլև անմար լույսով լուսավորելու է մարդկության լավագույն երազանքները։

...Այժմ մեզ՝ կենդանի մնացածներիս վրա, պարտք է ընկած՝ բարձրացնել նրա ջահը։ Թող մեզանից հեռացած Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների միջոցով ամենուրեք տարածվի հայ բազմադարյան պոեզիայի վարդաստանի բույրը։ Թող բոլորն իմանան նրա ժողովրդի կրած տառապանքները, մարդասիրական վեհությունն ու փառքը»։

«Գրական թերթ», № 40

ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ Գ. ԴԱՇՏ ԱՆԱՆՈՒՆ

Ստ. Զորյանի «Անփոխարինելի կորուստ» խոսքը.

«Սուգի օրեր են մեզ համար...

Հայ ժողովուրդը կրեց ծանր, անփոխարինելի կորուստ՝ մեռավ մեր գրականության նահապետը, մեր ժողովրդի սիրելի Ավետիք Իսահակյանը։

Մեռավ մեր մեծագույն հայրենասեր բանաստեղծը, մեր վարպետը և մեր ամենից սրտացավ բարեկամն ու ընկերը։

Մեռավ մի բանաստեղծ, որ մեր հանրապետության մեջ բարձրանում էր որպես գրական մի հսկա լեռնագագաթ, որին տեսնում էին աշխարհի բոլոր ծայրերից։

Մեռավ մեր պարծանքը, թողնելով մեզ, սակայն, բազմադարյան անկրկնելի, բուրումնավետ լիրիկան, որը զարդարում է մեր գրականությունը, և պիտի զարդարի այնքան ժամանակ, որքան կապրի հայ ժողովուրդը։

Մեծ և անգնահատելի է Իսահակյանի գրական վաստակը մեզ համար։ Վաստակ, որի մեջ խտացած է մեր դարավոր գրական կուլտուրան ու իմաստությունը։ Այդ ստեղծագործության մեջ մշտապես բաբախում է հայ ժողովրդի սիրտը։

Այդ ստեղծագործությունը մի սակի մատյան է՝ ազնվացնող հույզերի ու խոհերի։

Իսահակյանը մի նուրբ, զգայուն հոգի էր, որ ապրում էր իր ժողովրդի և հանուր աշխարհի ցավերով ու խոհերով։

Իր երկար կյանքի ընթացքում, պատանի հասակից Իսահակյանը իր բյուրեղյա քնարով երգել է շինականի սերն ու վիշտը, նրա նվիրական խոհերն ու երազները, մերթ մորմոքվելով մարդկային դառն կյանքի համար, մերթ ցասումով դատապարտելով այդ կյանքի անարդարությունները։

Լինելով ճնշված, իրավազուրկ ժողովրդի զավակ՝ նրա մեծ սիրտը ապրում էր ոչ միայն իր ժողովրդի ցավերը, նա միաժամանակ համազգում էր ամբողջ աշխարհի անիրավությունները և դա արտահայտում էր իր անմիջական, վարակող պոեզիայի մեջ։ Հին աշխարհից դժգոհ՝ նա չէր կամենում աշխարհն ընդունել այնպես, ինչպես կա. նա փնտրում էր ճշմարտություն և արդարություն կյանքի անարդարություններով շրջապատված, բացականչում էր.

«Գթա, հայտնվիր, սուրբ ճշմարտություն»...

Մեր գրականությունը միջնադարից սկսած մինչև այժմ ունեցել է քնարերգակ շատ բանաստեղծներ, բայց ոչ մեկի լիրիկան չի եղել այնքան բազմակողմանի ու լայն, որքան Իսահակյանի լիրիկան։

Իր զգայուն ու որոնող սրտով, իր խոհուն խառնվածքով Իսահակյանը լայնացրեց մեր լիրիկայի սահմանները և միաժամանակ բարձրացրեց նրա խոհական-իմացական կշիռը։

Իսահակյանի պոեզիան որքան նուրբ է և խորունկ, նույնքան և պարզ է ու ամեն խավի մարդկանց մատչելի. նրան ըմբռնում և հասկանում է թե մտավորականը, թե գյուղացին և թե բանվորը, որովհետև պոետը խոսում է բոլորի սրտից, բոլորին հուզող խնդիրների և խոհերի մասին։

Մեծ էր Իսահակյանի խոսքի ուժը իր վարակիչ, սրտագրավ հույզերով ու խոհերով, ուստի և մեծ էր նրա հմայքը, նրա ժողովրդականությունը։

Եվ այդ հմայքն ու ժողովրդականությունը կմնա երկար, ինչպես և նրա հուզաթաթավ պոեզիան, լեռնային մի վճիտ աղբյուր, որով իրենց հոգևոր ծարավը հագեցրել են սերունդներ և պիտի հագեցնեն սերունդներ։

Դու հավերժ կերգես,
Հայրենի աղբյուր...
Մեռավ Իսահակյանը... Անմահ է Իսահակյանը»։

«Գրական թերթ», № 39

«Պիոներսկայա պրավդան» իր հերթական համարը նվիրել է Սովետական Հայաստանին։ Թերթի էջերը պատմում են հանրապետության աշխատանքային առօրյայի, կուլտուրական շինարարության, հայ երեխաների մասին։ Տպագրված է Ավ. Իսահակյանի «Հայրենիքը ամենից թանկ է» խորագրով նամակը, որ վարպետը «Պիոներսկայա պրավդայի» ընթերցողների համար գրել էր մահվանից մի քանի օր առաջ։

Ավ. Իսահակյանի նամակից

«Ամեն անգամ, երբ խոսք է բացվում Հայրենիքի մասին, իմ սիրտը լցվում է համայնապարփակ սիրով ու հոգիս պատում է մի անսահման ջերմ զգացում։ Ոչ Վենետիկի սուրբ Մարկոսի մարմարակերտ հրապարակը, ոչ Բեռլինի գոթական շենքերը, ոչ էլ Փարիզի հրաշալիքները չեն կարող փոխարինել այն վսեմ ու նվիրական զգացումին, ինչ ես ապրեցի, երբ աշխարհաշխարհ երկար դեգերումներից հետո ոտք դրի իմ սուրբ ու աննման Հայրենի հողի վրա։

...Դուք էլ, իմ սիրելի բալիկներ, լինեք ռուս, ուկրաինացի, ադրբեջանցի, թե վրացի, սիրեցեք մեր Հայրենիքը, մեր ժողովրդին»։

«Սովետական Հայաստան», № 253

Հոկտեմբերի 25-ին

«Գրական թերթը» նվիրված է Ավ. Իսահակյանին։ Տպագրված են մեծ բանաստեղծի մահվան առթիվ կազմակերպված սգո միտինգին արտասանված ճառերը, միության մի շարք քաղաքներից, գրական կազմակերպություններից և մի շարք անձանցից ստացված ցավակցական հեռագրերը։

Ավ. Իսահակյանի մասին բազմաթիվ նյութեր ու ցավակցություններ են տպագրվում «Պրավդա», «Լիտ. գազետա», «Սովետական արվեստ», «Կոմունիստ» (Երևան), «Երևան», «Սովետական գրականություն» և մի շարք այլ պարբերականներում՝ ինչպես մայրենի, նույնպես և եղբայրական ժողովուրդների լեզուներով։

Հոկտեմբեր

Հայպետհրատը լույս է ընծայում «Լենինը մեր սրտում» գրական-գեղարվեստական ժողովածուն։

Նոյեմբերի 1-ին

Նշվում է Իլյա Ճավճավաձեի ծննդյան 120-ամյակը։

Նոյեմբերի 6-ին

«Գրական թերթը» (№ 42) ամբողջությամբ նվիրված է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակին։ Տպագրված են Հովհ. Թումանյանի, Ալ. Շիրվանզադեի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Նար-Դոսի խոսքը՝ հայ ժողովրդի ազատագրության գործում Հոկտեմբերյան հեղափոխության ունեցած դերի մասին, Մ. Արազու, Հր. Քոչարի, Գ. Բորյանի, Վ. Նորենցի, Գ. Էմինի և ուրիշների հոդվածները։

Նոյեմբերի 14-ին

Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում սովետահայ գրականության երեկո՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակին։ Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։ «Հոկտեմբերը և հայ գրականությունը» թեմայով զեկուցում է Հր. Հովհաննիսյանը. բանաստեղծները կարդում են իրենց ստեղծագործություններից։

Նոյեմբերի 17-ին

Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հրապարակում տեղի է ունենում հայ ժողովրդի մեծ զավակներ Հովհաննես Թումանյանի և Ալեքսանդր Սպենդիարյանի արձանների հանդիսավոր բացումը։

Նոյեմբերի 18-ին

Երևանի հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում գրականության և արվեստի աշխատողների հանրապետական ակտիվի ժողովը՝ նվիրված հանրապետության գրականության ու արվեստի խնդիրներին։ Զեկուցումով հանդես է գալիս Էդ. Թոփչյանը, արտահայտվում են՝ Ավետ Ավետիսյանը, Ստ. Զորյանը, Վ. Աճեմյանը, Ռ. Պարսամյանը, Ա. Արաքսմանյանը, Գ. Սարյանը, Հ. Շիրազը, Հ. Սալախյանը և ուրիշներ։

«Գրական թերթը» (№ 44) տեղեկացնում է, որ Փիենյանի Կորեա-սովետական կուլտուրական կապի ընկերության հրատարակչությունը կորեերեն լույս է ընծայել Գ. Էմինի «Խոսի՛ր, Հայաստան» բանաստեղծությունների ժողովածուն։

Դեկտեմբերի 2-ին

Նշվում է Պերճ Պռոշյանի ծննդյան 120 և մահվան 50-ամյակը։ Պերճ Պռոշյանի ծննդավայրում՝ Աշտարակում, տեղի է ունենում ԳԱ գրականության ինստիտուտի հոբելյանական գիտական նստաշրջան։ Ներածական խոսք է ասում Ա. Կարինյանը։ Զեկուցում են Ս. Սարինյանը («Պերճ Պռոշյանի ստեղծագործության արժեքը»), Ս. Ինճիկյանը («Պ. Պռոշյանը Նալբանդյանի գնահատությամբ»), Կ. Դանիելյանը («Պերճ Պռոշյանն իբրև մեմուարիստ»)։ Մեծարման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Դեկտեմբերի 8-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված հայ խաղորագույն դերասանուհի Սիրանույշի ծննդյան 100-ամյակին։

Դեկտեմբերի 12-ին

Տեղի է ունենում ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական բաժանմունքի գիտական սեսիան՝ նվիրված Սուրեն Սպանդարյանի ծննդյան 75-ամյակին։

Դեկտեմբերի 17-ին

«Գրական թերթը» (№ 47) հատուկ էջ է նվիրում երիտասարդ և սկսնակ գրողներին՝ հանրապետական 6-րդ խորհրդակցության առթիվ։

Մ. Արազու «Երիտասարդ գրողներին» խոսքից

Երբանիկ է նոր սերունդը, նա ծնվել է մեր մեծ, աշխարհացունց էպոխայում, մեր երկրի աննախընթաց ազատության և գաղափարական վերելքի պայմաններում։ ...Սակայն այդ մեծ էպոխան ընդգրկելու համար, նրա գաղափարները յուրացնելու համար անհրաժեշտ է մեծ աշխատանք։ Ահա այդ մեծ և վեհ գործի առաջ մեր խոհերը թելադրում են ասելու երիտասարդ գրողներին, որ գրականությունը պահանջում է անընդհատ ջանքեր գնալի կատարելություն, գաղափարական հագեցում և կյանքի լիակատար ճանաչողություն»։

Դեկտեմբերի 21-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված Գևորգ Բաշինջաղյանի ծննդյան 100-ամյակին։

Դեկտեմբերի 26-ին

ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի է ունենում հասարակական գիտությունների բաժանմունքի նիստ՝ նվիրված Ստ. Մալխասյանցի ծննդյան 100-ամյակին։

Դեկտեմբերի 31-ին

«Գրական թերթը» (№ 49) հաղորդում է, որ Պեկինում չինարեն լույս է տեսել «Սասունցի Դավիթ» էպոսը։

Դեկտեմբեր

Լույս է տեսնում Հայաստանի սովետական գրողների միության գրական-գեղարվեստական «Երևան» ուսերեն ամսանոթի առաջին համարը։

Նշվում է լատիշական ժողովրդական գրող Անդրեյ Ուպիտի ծննդյան 80-ամյակը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ադդարյան Գ. — Պատնեշին վրա
Ալազան Վ. — Հորիզոններ

Բորյան Գ. — Բանաստեղծություններ
Գրաշի Ա. — Սարերի սրինգը
Գրիգորյան Ք. — Գարնան ծաղիկներ
Դավթյան Վ. — Լուսաբացը լիոնիրում
Դուրյան Լ. — Արշալույսի երգեր
Զարյան Ն. — Արև ու սավեր
Էմին Գ. — Երեք երգ (ռուսերեն), Մոսկվա
Թարյան Ս. — Կարոտի երգեր
Կապուտիկյան Ս. — Բարի երթ
Կարենց Վ. — Աղբյուր
Մարգարյան Մ. — Լիրիկական լուսաբաց
Նորենց Վ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Շիրազ Հ. — Սիամանթո և խջեղարի
Չարենց Ե. — Ընտիր երկեր
Չարենց Ե. — Ընտիր երկեր (ուկրաիներեն), Կիև
Չարենց Ե. — Լենինն ու Ալին (ռուսերեն)
Սարմեն — Կարոտի կրակներ
Սարյան Գ. — Բալլադներ
Սարոյան Ա. — Սարն ի վեր
Սիտալ Կ. — Դյուցազնական
Սևակ Պ. — Նորից քեզ հետ

Արձակ

Ալաջաջյան Ստ. — Պարտություն
Աղավնի — Շիրակ
Այվազյան Ս. — Խիզճը
Արազի — Երկերի ժողովածու, հ. 3
Մկրտիչ Արմեն — Պատմվածքներ
Դարյան Զ.— Մայիս
Դեմիրճյան Դ. — Երկերի ժողովածու, հ. 4, 5
Զորյան Ստ. — Պապ Թագավոր
Թափալչյան Քր.— Կյանքի արշալույսը
Թոթովենց Վ. — Աղավնիներ
Թոթովենց Վ. — Երկեր
Խանզադյան Ս. — Հողը (ռուսերեն), Մոսկվա
Կուրտիկյան Ստ. — Հայրենի լեգենդներ և պատմվածքներ
Զուբար Եղիա — Սկզբում
Ստաֆֆի Բ. — Նովելներ և վիպակներ
Սևան Գեղամ — Կանաչ անապատ

ժողովածուներ

Գրական Հայաստան — (աղբրեջաներեն)
Եղբայրություն — Անդրկովկասի գրողների գրական-գեղարվեստական ժողովածու (ռուսերեն)
Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից

Լենինը մեր սրտերում (գրական-գեղարվեստական ժողովածու)
Հայ գուսաններ (ժողովածու)
Սովետահայ գրականության ժողովածու (ռուսերեն)

Դասականներ

Աբովյան Խ.— Վերք Հայաստանի (Սուրեն Քոչարյանի գրական կոմպոզիցիան)
Ալիշան Ղ. — Նվագներ
Գրիգոր Նարեկացի — Տաղեր
Ծերենց — Երկեր
Մուրացան — Գևորգ Մարզպետունի
Նահապետ Քուչակ — Հայրենի կարգալ
Նար-Դոս — Պայքար։ Մահը
Շիրվանզադե — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3 (ռուսերեն), Մոսկվա
Շիրվանզադե — Արսեն Դիմաքսյան
Սիամանթո — Ընտիր երկեր
Րաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 8
Րաֆֆի — Խենթ (ռուսերեն)
Րաֆֆի — Խաչատրի հիշատակարանը
Րաֆֆի — Սամվել
Փափազյան Վրթ. — Զրույցներ

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Գրիգորյան Կ. — Վահան Տերյան (ռուսերեն), Մոսկվա
Եղիշե Չարենց, Բիբլիոգրաֆիա (1897—1937)
Եղիշե Չարենցի ստեղծագործությունը (հոդվածների ժողովածու)
Եղիշե Չարենցը գրականության մասին
Զաքարյան Ա. — Սովետահայ գրականության անցած ուղին
Զարյան Ռ. — Սիրանույշ
Զարյան Ռ. — Արուս Ոսկանյան (ռուսերեն)
Հյուսյան Մ. — Գրիգոր Զոհրապ
Հովակիմյան Հր. — Սովետահայ դրամատուրգիայի մի քանի հարցեր
Հովսեփյան Գ. — Հովհաննես Հովհաննիսյան
Ղանալանյան Հովհ. — Պետրոս Դուրյան
Ղանալանյան Հովհ. — 19—20-րդ դարերի հայ գրականության ակնարկներ (ռուսերեն)
Մակարյան Ա. — Երգիծական ստեղծագործություն
Մկրյան Մ. — Էջեր հայ վիպասանության պատմությունից
Մկրտչյան Մ. — Նաղաշ Հովնաթան
Մուրադյան Հ. — Դերենիկ Դեմիրճյան
Նազինյան Ա. — Սովետահայ ժողովրդական բանահյուսություն
Ոսկերչյան Ա. — Ռուս մեծ քննադատներ և հրապարակախոսներ
Զմշկյան Կ. — Տուրգենևը գրական քննադատ (ռուսերեն)

Պատմություն Ֆարման մանկան (միջնադարյան պոեմ)
Սալախյան Հ. — Եղիշե Չարենց
Սամվելյան Խ. — Բաֆֆի
Սարինյան Ս. — Բաֆֆի
Սովետահայ գրականության տարեգրություն (1917—1957 թթ.)

Թարգմանություն

Բալզակ — Երկերի ժողովածու, հ. 4, 5
Բելոռուսական գրականության անթոլոգիա
Բրյուսով Վ. — Բանաստեղծություններ
Դիկկենս Չ. — Դավիթ Կոպպերֆիլդ, մաս 1, 2
Դիկկենս Չ. — Դոմբի և որդին, գիրք 1, 2
Գրանին Դ. — Որոնողներ
Լերմոնտով Մ. — Մեր ժամանակի հերոսը
Կոնան Դոյլ Ա. — Կորուսյալ աշխարհը
Հաֆեզ — Լիրիկա
Հոմերոս — Ոդիսական
Շիլլեր Ֆ. — Բալլադներ
Շոլոխով Մ. — Մարդու ճակատագիրը
Պետեֆի Շ. — Բանաստեղծություններ
Պրիշվին Մ. — Ոսկի մարգագետին
Պուշկին Ա. — Դուբրովսկի
Պուշկին Ա. — Բորիս Գոդունով
Ռայնիս Յան — Ընտիր երկեր
Ռզա Ռատուլ — Լենին
Ռոդարի Ջ. — Չիպոլինոյի արկածները
Սաբիր — Բանաստեղծություններ
Սենկևիչ Հ. — Խաչակիրներ
Տոլստոյ Լ. — Աննա Կարենինա, հ. 1, 2
Քրդական ժողովրդական բանահյուսություն
Օստրովսկի Ն. — Ինչպես էր կոփվում պողպատը

1958

Հունվարի սկզբին

Նշվում է «Հյուսիսափայլի» հրատարակության 100-ամյակը։

ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարանում բացվում է հայ թատրոնի պատմության մշտական ցուցահանդես։

Հունվարի 5-ին

Նշվում է Սմբատ Շահազիզի մահվան 50-ամյակը։

Հունվարի 12-ին

Երիտասարդ և սկսնակ գրողների հանրապետական 6-րդ խորհրդակցության առթիվ «Սովետական Հայաստան» թերթը էջ է նվիրում։ Տպագրվում է Գ. Սարյանի «Բանաստեղծների երիտասարդ սերունդը» հոդվածը։

Հունվարի 13-ին

Նշվում է բուլղարական գրականության կլասիկ Պենչո Յավորովի ծննդյան 80-ամյակը։ «Սովետական Հայաստան» օրաթերթը նույն օրվա համարում Հ. Սահյանի թարգմանությամբ տպագրում է Պ. Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը։

Հունվարի 13—15-ը

Տեղի է ունենում երիտասարդ և սկսնակ գրողների հանրապետական 6-րդ խորհրդակցությունը։ Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։ Զեկուցում են Ստ. Ալաջաջյանը (արձակի մասին) և Հ. Սահյանը (պոեզիայի մասին)։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Վ. Բաբայանը, Ա. Երեմեյին, Հմ. Սիրասը, Գ. Բալասանյանը, Շ. Թորոսյանը, Գ. Սևունցը, Վ. Պետրոսյանը, Սարմենը, Նոր-Այրը, Էդ. Թոփչյանը և ուրիշներ։

Հունվարի 17-ին

Գրողների միության դահլիճում քննարկվում է Ադ. Վարդանյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն։ Ելույթ են ունենում Գ. Սևունցը, Գ. Հովսեփյանը, Վ. Կարենցը, Ա. Գրաշին, Ս. Տարոնցին, Ա. Պողոսյանը, Վ. Նորենցը։

Հունվարի 20-ին

Արվեստի աշխատողների տանը քննարկվում է Ալ. Արաքսմանյանի «Վարդեր և արյուն» դրամատ։ Զեկուցում է Հր. Հովհաննիսյանը, ելույթ են ունենում Հ. Սալախյանը, Գր. Տեր-Գրիգորյանը, Վ. Թերզիբաշյանը, Ժ. Հակոբյանը, Հ. Գալստյանը, Ալ. Արաքսմանյանը, Վ. Վաղարշյանը։

Հունվարի 25—27-ը

Տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կուսակցության XIX համագումարը։

Փետրվարի 9-ին

Բելգիայի Գանտի համալսարանի կենտրոնական մատենադարանի պատին հանդիսավոր պայմաններում դրվում է հուշատախտակ, որի վրա քանդակված է Դանիել Վարուժանի դիմանկարը՝ հայերեն, ֆրանսերեն և ֆլամանդերեն մակագրություններով։ Հուշատախտակը դրվում է ի հիշատակ Գանտի համալսարանում 1906—1909 թվականներին Դ. Վարուժանի սովորած տարիների։

«Գրական թերթ», № 43

Փետրվարի 11—13-ը

Մոսկվայի գրողների կենտրոնական տանը տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության պլենումը։ Նիստը բացում է Ա. Սուրկովը։ «Սովետական գրականության 40-ամյակը և սովետական գրողների խնդիրները ՍՍՀՄ գրողների համամիութենական III համագումարի նախապատրաստման կապակցությամբ» հարցի շուրջը զեկուցում է Ն. Տիխոնովը։ Ելույթ են ունենում Պ. Բրովկան, Լ. Նովիչենկոն, Ս. Սմիրնովը, Ս. Միխալկովը, Ա. Զակովսկին, Մ. Հուսեյնովը, Դ. Բլագոյը, Ի. Անիսիմովը, Կ. Սիմոնովը, Լ. Սոբոլևը, Մ. Շահինյանը, Վ. Ինբերը և ուրիշներ։

Փետրվարի 14-ին

Նշվում է Վահան Թեքեյանի ծննդյան 80-ամյակը։

Փետրվարի 25-ին

Հայաստանի սովետական գրողների տանը տեղի է ունենում 1957 թվականի սովետահայ արձակի քննարկումը։ Զեկուցում է Ս. Սարինյանը, ելույթ են ունենում Մ. Արմենը, Ռ. Աթայանը, Լ. Հախվերդյանը, Ս. Խանզադյանը, Ս. Արզումանյանը, Հ. Շիրազը, Հ. Ֆելեքյանը, Ա. Սահինյանը, Սաղ. Հարությունյանը, Էդ. Թոփչյանը։ Քննարկման արդյունքներն ամփոփում է Հր. Թամրազյանը։

Փետրվարի 26-ին

Քննարկվում է Մ. Մարգարյանի «Վիրիկական լուսաբաց» ժողովածուն։ Զեկուցում է Տ. Հախումյանը, արտահայտվում են Գ. Շահնազը, Ս. Կապուտիկյանը, Ն. Զարյանը, Ա. Մարգարյանը, Հր. Թամրազյանը, Ս. Սարինյանը։ Քննարկումն ամփոփում է Հր. Հովհաննիսյանը։ Ելույթ է ունենում Մ. Մարգարյանը։

Մարտի 23-ին

Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է ստեղծել կառավարական հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. Ա. Քոչինյան (նախագահ), Ի. Աբաշիձե, Աղավնի, Վ. Աճեմյան, Հ. Այվազյան, Վ. Անանյան, Մ. Արազի, Գ. Բալասանյան, Հովհ.

Բաղդասարյան, Ս. Բաղդասարյան, Գ. Բորյան, Գ. Դավթյան, Սա. Զորյան, Հր. Թամրազյան, Էդ. Թոփչյան, Ս. Խանզադյան, Ռ. Խաչատրյան, Ս. Կապուտիկյան, Ա. Կարինյան, Գ. Հայրյան, Վ. Համբարձումյան, Մեհրի Հյուսեին, Հր. Հովհաննիսյան, Գ. Հովնան, Գ. Մահարի, Հր. Մարգարյան, Բ. Մարտիրոսյան, Ա. Շահինյան, Հ. Ոսկանյան (Սիրաս), Հ. Սալտիկյան, Գ. Սարյան, Մ. Սարյան, Շ. Սիմոնյան, Վ. Սիրցև, Ա. Սուրկով, Գ. Սևունց, Կ. Վարդանյան, Ջ. Վելիբեկով, Ն. Տիխոնով։

Մարտի 26-ին

Վախճանվեց բանաստեղծ Ազատ Վշտունին (Մամիկոնյան) (ծնվ. 1894 թ.)։

Մարտի 27-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Ս. Կապուտիկյանի «Բարի երթ» ժողովածուի քննարկումը։ Զեկուցում է Հր. Գրիգորյանը, ելույթ են ունենում Ս. Սարինյանը, Լ. Ամատրյանը, Ս. Հարությունյանը, Վ. Նորենցը, Վ. Դավթյանը, Էդ. Թոփչյանը, Հ. Սահյանը, Գ. Սարյանը։

Մարտ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակի առթիվ անցկացված Պատանի հանդիսատեսի թատրոնների համամիութենական ֆեստիվալում Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի երկու ներկայացում (Մ. Շաթիրյանի «Երաժշտախումբը» և Գ. Յաղջյանի «Ոսկի բաղաք») արժանանում են մրցանակի և շահում առաջին կարգի դիպլոմներ։

Հայաստանի սովետական գրողների տանը քննարկվում է Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր աշխատությունը։ Զեկուցում է Ա. Ասատրյանը, ելույթ են ունենում Ա. Մակարյանը, Ա. Ինճիկյանը, Մ. Արազին, Խ. Վեմյանը, Հր. Թամրազյանը, Գ. Զուբարը, Ն. Զարյանը, Հ. Ղազարյանը։ Վերջում ելույթ է ունենում Ա. Հովհաննիսյանը։

Ապրիլի 3-ին

Հայաստանի սովետական գրողների միության դահլիճում տեղի է ունենում 1957 թ. սովետահայ դրամատուրգիայի քննարկումը։ Զեկուցում է Ս. Հարությունյանը, ելույթ են ունենում Լ. Հախվերդյանը, Ս. Ռիզաևը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը, Ա. Արաքսմանյանը, Գ. Տեր-Գրիգորյանը։

Ապրիլի 4-ին

Աբովյանի աշխատողների տանը քննարկվում է Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակներ» դրաման և նրա երկու բեմադրությունները Երևանի Գ. Սունդուկյանի և Լենինականի Ա. Մռավյանի անվան թատրոններում։ Զեկուցում է Հր. Թամրազյանը, ելույթ են ունենում Վ. Թերզիբաշյանը, Լ. Հախվերդյանը,

Հր. Հովհաննիսյանը, Ա. Արաքսմանյանը, Լ. Սամվելյանը, Լ. Խալաթյանը, Ա. Հովսեփյանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Ռ. Զարյանը։

Ապրիլի 6-ին

«Գրական թերթը» Մարիետա Շահինյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ տպագրում է ՍՍՀՄ գրողների միության վարչության, Ռուսաստանի ֆեդերացիայի գրողների միության կազմկոմիտեի և գրողների միության Մոսկվայի բաժանմունքի վարչության ողջույնի խոսքը՝ ուղղված գրողին։

Մ. Շահինյանին ուղղված ողջույնի խոսքից

*«Ավելի քան հիսուն տարի է, ինչ շարունակվում է Ձեր գրական փառավոր ճանապարհը։ Կես հարյուրամյակի ընթացքում Ձեր կողմից ստեղծված է մոտ 70 գիրք։ Հիացմունքի զգացմունքով ենք մենք՝ Ձեր գրչակիցները, նշում այդ պատկառելի, նշանակալից ներմուծությունը մեր գրականության մեջ, ուրախանալով Ձեր աննվազելի տաղանդով, խոնարհվելով Ձեր անսպառ աշխատասիրության առաջ։ Մենք հիշում ենք, թե Դուք ինչպես սաք գրիք սովետական երիտասարդ գրականության մեջ։ «Պրավդայի» և «Իզվեստիայի» մանդատներով Դուք ճանապարհորդում էիք երկրով մեկ, ծանոթանում նրա մարդկանց և նրանց գործերի հետ։ Դուք, որ վիպագիր եք և հրապարակախոս, չէիք հրաժարվում նաև կազմակերպչական աշխատանքից՝ Դոնում լինելով որպես հյուսվածքային գործի հրահանգիչ, մասնակցելով Հայաստանում Զորագնդի շինարարությանը։ Ճանապարհորդությունները երկրով, աշխատանքը թերթում սնում էին այն հերոսական հեռու տարիների Ձեր ստեղծագործությունը։ Ակնարկների ժողովածուներ «Նեապի թելը», «Տորնատոյի ֆաբրիկան», «Լեռնային Ղարաբաղ», «Զանգեզուրի պղինձը»—ահա ոչ լրիվ ցուցակը Ձեր այն գրքերի, որոնք վառ կերպով արտացոլում են սոցիալիստական արդյունաբերության ծնունդը։ Եվ ինչպե՞ս նրանց հետ միասին չհիշել Ձեր հայտնի վեպերը՝ «Փոփոխությունը»—քաղաքացիական կռիվների մասին առաջին ստեղծագործություններից մեկը, որն արժանացել է Վ. Ի. Լենինի բարձր գնահատականին, «Հիդրոցենտրալը», որը ներթափանցված է հեղափոխական ստեղծագործության պաթոսով»։

Ապրիլի 12-ին

ՀՍՍՀ Մինիստրների սովետը Մ. Աբեղյան ծննդյան 80-ամյակի կապակցությամբ կազմում է հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. Գ. Սեվունց (նախագահ), Հովհ. Բաղդասարյան, Գ. Բորյան, Ստ. Զորյան, Ս. Խանզադյան, Ա. Կարինյան, Գ. Հովնան, Հր. Հովհաննիսյան, Լ. Մկրտչյան, Գ. Ներսիսյան, Վ. Նորենց, Կ. Պողոսյան, Տ. Սպանդարյան, Գ. Սարյան, Ա. Ստեփանյան։

Ապրիլի 18-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Սարմենի «Կարոտի կրակներ» բանաստեղծությունների ժողովածուի քննարկումը։ Զեկուցում է Ստ. Կուրտիկյանը, արտահայտվում են Ա. Սարոյանը, Արաքսը, Ս. Սարինյանը, Ս. Արզումանյանը, Ա. Սոլախյանը, Վ. Գրիգորյանը, Գ. Սարյանը և ուրիշներ։

Ապրիլի 19-ին

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Բազդասարի Դանիելյանը (ծնվ. 1893 թ.)։

Ապրիլի 27-ին

Նշվում է Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 80-ամյակը։

Ապրիլի 28-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված հայ պրոլետարական գրականության վեհերան Մովսես Արազու ծննդյան 80-ամյակին։ Հանդիսավոր երեկոն բացում է Գ. Սևունցը։ Մ. Արազու կյանքի ու գրական գործունեության մասին զեկուցում է Ս. Խանզադյանը։ Ողջույնի խոսք են ասում Գ. Սարյանը (ՀՍԳ միության կողմից), Ա. Կարինյանը (ՀՍՍՀ ԳԱ կողմից), Պ. Պապյանը (Կիրովի անվան գործարանի կողմից), պետհամալսարանի ուսանողուհի Հ. Արեգյանը, Վ. Մկրտչյանը (Հայպետհրատի կողմից), Հ. Զոհրաբյանը (Երևանի ուսուցչության անունից)։ Շնորհակալական խոսքով հանդես է գալիս Հոբելյարը։

Մայիսի 14-ին

Կրեմլի Սվերդլովյան դահլիճում տեղի է ունենում «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման համար» միջազգային լենինյան մրցանակի հանձնումը սովետական ականավոր հասարակական գործիչ, խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նախագահ, գրող Ն. Ս. Տիխոնովին։

Մայիսի 28-ին

ՍՄԿԿ Կենտկոմը ընդունում է որոշում՝ «Մեծ բարեկամություն», «Բոգդան Խմելնիցկի» և «Ամբողջ սրտով» օպերաների գնահատության սխալներն ուղղելու մասին»։

ՍՄԿԿ Կենտկոմի որոշումից

1. «Նշել, որ Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին Կենտկոմի 1948 թվականի փետրվարի 10-ի որոշման մեջ, որով ճիշտ էր սահմանված ժողովրդայնության ու ռեալիզմի ուղիով սովետական արվեստի զարգացման ուղղությունը և որը բովանդակում էր երաժշտության մեջ սխալ, ֆորմալիստական տենդենցների արդարացի քննադատություն, միաժամանակ թույլ էին տրվել սովետական տաղանդավոր մի շարք կոմպոզիտորների ստեղծագործությունների որոշ անարդարացի և չհիմնավորված խիստ գնահատականներ, որը անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի համար բնորոշ բացասական գծերի դրսևորումն էր։

2. Ոչ ճիշտ, միակողմանի համարել «Պրավդա» թերթի խմբագրական հոդվածներում «Բոգդան Խմելնիցկի» և «Ամբողջ սրտով» օպերաների գնահատականը։ Հանձնարարել «Պրավդա» թերթի խմբագրությանը (ընկ. Սատյուկովին) սույն որոշման հիման վրա պատրաստել խմբագրական հոդված, տալով սովետական երաժշտական արվեստի զարգացման հիմնական հարցերի բազմակողմանի ու խոր վերլուծությունը»։

«Գրական թերթ», № 23

Մայիս

Լույս է տեսնում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական օրգանի՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» առաջին համարը։

Հունիսի 8-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Բոգդան Վերդյանի «Ինչպես է գալիս երջանկությունը» վեպի քննարկումը։ Զեկուցում է Վ. Սնայականյանը, ելույթ են ունենում Երևանի Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորներ Ս. Ենգիբարյանը, Ա. Վարդանյանը, ինչպես նաև Էդ. Թոփչյանը, Բ. Վերդյանը։

Հունիսի 13-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Աբիգ Ավագյանի «Պատմվածքներ» գրքի քննարկումը։ Զեկուցում է Ս. Ենգիբարյանը, ելույթ են ունենում Մ. Մարգարյանը, Վ. Կարենցը, Գ. Ենոնցը, Ս. Արզումանյանը, Գ. Սարյանը, Խ. Գյուլնազարյանը, Ս. Խանզադյանը, վերջում՝ հեղինակը։

Հունիսի 18-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության նիստը, ուր քննարկվում է ՍՄԿԿ Կենտկոմի «Մեծ բարեկամություն», «Բոգդան Խմելնիցկի», «Ամբողջ սրտով» օպերաների գնահատության սխալները ուղղելու մասին որոշումը։

Հունիսի 24-ին

ՀՍԳ միությունում քննարկվում է Վ. Կարենցի «Աղբյուր» ժողովածուն։ Զեկուցում է Մ. Սարգսյանը, ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Ս. Բալայանը, Ա. Սահակյանը, Լ. Միրիջանյանը, Գ. Սարյանը։

Հունիս

Հայաստանի պետական պատմական թանգարանում բացվում է հայ ժողովրդի պատմության XVI—XIX դարերի մշտական ցուցահանդես։

Հուլիսի 8-ին

«Լիտերատուրնայա գազետան» «Գրողների համագումարներից առաջ» վերնագրով տպագրում է առաջնորդող հոդված։

Առաջնորդողից.

«...Առաջիկա համագումարները դեռևս ոչ բոլոր տեղերում են դարձել հիմնական առաջնորդիչ, թերթերի աշխատանքների գործնական առանցք, դեռևս իրեն զգացնել է տալիս ինչ-որ պասսիվ «սպասման» տրամադրություն։

Մի՞թե վրացական «Լիտերատուրուլի գազետին» պարտավոր չէ հանդես գալ ժամանակակից վրացական և սովետական ողջ գրականության զարգացման ակտուալ հարցերի շուրջը։ Ինքը, հարցը անհերքելիորեն չափ տարօրինակ է։ Բայց սոսկալի ես այդ հարցը տալ, քանի որ այս տարվա անցած վեց ամսում թերթը տպագրել է միայն երկու հոդված (դրամատուրգիայի վիճակի մասին), որոնք կարելի է մի կերպ կապել առաջիկա համագումարի հետ։

«Լիտերատուրուլի գազետի» նման, նախահամազումարային նյութերի վիճակի տեսակետից, մեզ չեն բավարարում նաև ուզբեկական «Ուզբեկիստոն մադանիյատին» և հայկական «Գրական թերթը»։

«Գրական թերթ», № 26

Հուլիսի 9-ին

Թբիլիսիում, բուսաբանական այգում, ուր թաղված է Մ. Ֆ. Ախունդովը, տեղի է ունենում ադրբեջանական գրականության կլասիկի հուշարձանի հանդիսավոր բացումը։ Հայաստանի գրողներից ելույթ են ունենում Գ. Բորյանը, Հ. Սիրասը։ Իրենց բանաստեղծություններն են կարդում Հ. Սահյանը, Վ. Նորենցը, Գ. Բորյանը, Հ. Կարայանը։

Հուլիսի 20-ին

«Գրական թերթը» (№ 27) հաղորդում է, որ 1956 թ. Պրագայում չեխերեն լույս է տեսել Ալ. Շիրվանզադեի «Քառոս» վեպը։ Վեպը հայերենից թարգմանել է Բոհումիլ Բարեղը։

Հուլիսի 22-ին

Լիբանանի և Հորդանանի դեմ ԱՄՆ-ի ու Անգլիայի կողմից սանձազերծված ագրեսիայի կապակցությամբ մամուլում հրապարակվում է Սովետական Միության գրողների կոչը՝ ուղղված աշխարհի գրողներին։ Կոչի տակ հայ գրողներից ստորագրել են Մ. Արազին, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Գ. Սևունցը։

Օգոստոսի 8-ին

«Գրական թերթը» (№ 29) տեղեկացնում է, որ Ուկրաինայում մանկական գրականության պետական հրատարակչությունը ուկրաիներեն լույս է ընծայել Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը։

Օգոստոսի 17-ին

«Պրավդայում» տպագրվում է «Սովետական գրողի բարձր կոչումը» խմբագրական հոդվածը։

Օգոստոսի 24-ին

Վախճանվեց դրամատուրգ-թարգմանիչ Արշալույս Տեր-Հովհաննիսյանը (ծնվ. 1890 թ.)։

Օգոստոս

Մոսկվայում տեղի է ունենում հանրապետական ամսագրերի, գրական թերթերի խմբագիրների խորհրդակցություն՝ նպատակ ունենալով նշել նախահամազումարյան բանավեճի աշխուժացման և խորացման ուղիները։ Բացման խոսք է ասում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Գ. Մարկովը, արտահայտվում են Մ. Թուրսուն-Զադեն, Գ. Բորյանը, Պիմենը Պանչենկոն, Դ. Կորաբլենիկովը, Վ. Աժաևը, Ս. Եվդոնովը, Վ. Կոզաչենկոն, Ս. Ջիքովանին, Ա. Սուրկովը։

Մոսկվայում, ռուսերեն, լույս է տեսնում «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոսը՝ Վ. Դերժավինի, Ա. Կոշնակովի, Կ. Լիպսկերովի և Ս. Շերվինսկու թարգմանությամբ, նկարները՝ Ա. Գոնչարովի, Մ. Պիկովի և Ն. Ֆավորսկու, ձևավորումը՝ Վ. Նոսկովի, առաջաբանը՝ ակադեմիկոս Հ. Օրբելու։

Սեպտեմբեր

Լույս է տեսնում ՀԿԿ Կենտկոմի օրգան «Հայաստանի աշխատավորուհի» հասարակական-քաղաքական, գիտական-գեղարվեստական ամսագրի առաջին համարը։

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դահլիճում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Բաքվի 26 կոմիսարների չարանենգ սպանության 40-ամյակին և Ստ. Շահումյանի ծննդյան 80-ամյակին։ Բացման խոսք է ասում Գ. Հայրյանը, զեկուցում են Գ. Գալոյանը («Բաքվի կոմունայի գործունեությունը»), Խ. Բարսեղյանը («Ստ. Շահումյանի կյանքն ու հեղափոխական գործունեությունը»), Վ. Ներկարարյանը («Բաքվի 26 կոմիսարները կոմունիզմի գործի համար պայքարի պանծալի մարտիկներ են»)։ Հուշեր են պատմում Ա. Կարինյանը, Մ. Յուզբաշյանը և Կ. Ղազարյանը։

Հոկտեմբերի սկզբներին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության նիստը, ուր քննարկվում է Հայաստանի պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի գործունեությունը։ Զեկուցում է Վ. Գրիգորյանը, ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, Ս. Այվազյանը, Քր. Թափալցյանը, Վ. Դանիելյանը, Ստ. Զորյանը, Ս. Պայազատը, Ե. Հովհաննիսյանը, Հ. Շիրազը, Գր. Բալասանյանը, Էդ. Թոփչյանը։

Հայպետհրատը լույս է ընծայում «Ասիայի և Աֆրիկայի երկրների բանաստեղծները» հայերեն ժողովածուն։

Հոկտեմբերի 7-ին

«Սովետական Հայաստան» (№ 233) թերթը էջ է նվիրում Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների Տաշքենդի կոնֆերանսին։

Հոկտեմբերի 7—13-ը

Տաշքենդում տեղի է ունենում Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների կոնֆերանսը։ Հայաստանից կոնֆերանսի աշխատանքին մասնակցում են Գ. Սևունցը, Ս. Կապուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Հաջի Ջնդին, Ստ. Ալաջաջյանը։

Հոկտեմբերի 8-ին

«Գրական թերթի» համարը նվիրվում է Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների կոնֆերանսին։ Տպագրվում են Ստ. Ալաջաջյանի, Գ. Սևունցի, Ս. Այվազյանի հոդվածները, իրանական գրող Բ. Ալավիի և սիրիական գրող

Մ. Սիբիրյի պատմվածքները, նմուշներ կորեական և ճապոնական պոեզիայից և այլ նյութեր։

Հոկտեմբերի 11-ին

Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Ստ. Շահումյանի ծննդյան 80-ամյակին։ Նիստը բացում է Ա. Կարինյանը, լսվում են «Ստ. Շահումյանը և հայ գրականության զարգացման հարցերը» (Գ. Աբով), «Ստ. Շահումյանը քաղաքական և գեղարվեստական գրականության թարգմանիչ» (Գ. Հովնան), «Ստեփան Շահումյանի կերպարը սովետահայ պոեզիայում» (Ս. Աղաբաբյան) զեկուցումները։

Հոկտեմբերի 12-ին

«Սովետական Հայաստանի» համարը նվիրվում է Ստ. Շահումյանի ծննդյան 80-ամյակին։

Հոկտեմբերի 15-ին

«Գրական թերթի» համարը նվիրվում է Ստեփան Շահումյանի ծննդյան 80-ամյակին։ Տպագրվում են գրականության և գրողների մասին Ստ. Շահումյանի ասույթները, Վ. Տերյանի «Անմոռաց ընկեր» խոսքը, Ս. Աղաբաբյանի, Հ. Մելիքյանի, Ա. Ոսկերչյանի հոդվածները, Արազու հուշերը և այլ նյութեր։

«Գրական թերթը» տպագրում է մեքսիկացի գրող Խուան Միգել դե Մորայի «Հայաստանի և գրականության մասին» հոդվածը։

Հոկտեմբերի 17-ին

Գրողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Ավ. Իսահակյանի ծննդյան 83-ամյակին և մահվան տարելիցին։ Երեկոն բացում է Էդ. Թոփչյանը, զեկուցում է Ա. Ինճիկյանը։

Հոկտեմբերի 20-ին

Գրողների տանը քննարկվում է Լ. Միրիջանյանի «Այգեստաններ» բանաստեղծությունների ժողովածուն։ Ելույթ են ունենում՝ Գ. Էմինը, Վ. Գրիգորյանը, Ռ. Տոնոյանը, Վ. Մնացականյանը և ուրիշներ։

Հոկտեմբեր

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված Ալ. Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բացում է Հմ. Սիրասը։ Լսվում են Ստ. Ջորյանի, Հ. Շիրազի, Ս. Մելիքսեթյանի, Դ. Դզնունու հուշերը։

Նոյեմբերի 5-ին

«Գրական թերթը» (№ 44) տպագրում է Երևան ժամանած հնդիկ գրողներ Գովինդ Սինգհի «Հայաստանին» և Պրիտամ Մաֆիրի «Սևան» բանաստեղծությունները։

Նոյեմբերի 11-ին

Հայաստանի սովետական գրողների միության դահլիճում տեղի է ունենում հանդիպում ափյուռքահայ բանաստեղծ Վահե Վահյանի հետ։ Երեկոն բացում է Էդ. Թոփչյանը։ Վ. Վահյանի պոեզիայի մասին զեկուցում է Հր. Գրիգորյանը, ելույթ են ունենում Մ. Մարգարյանը, Վ. Նորենցը, Մ. Կորյունը, Ս. Կապուտիկյանը։

Նոյեմբերի 14-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դահլիճում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ալեքսանդր Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին։ Նիստը բացում է Հր. Մարգարյանը։ «Հայ մեծ ռեալիստը» զեկուցումով հանդես է գալիս Գ. Սեւունցը։ Ողջույնի խոսք են ասում՝ Վ. Աժաևը (ՌՍՖՍՀ), Ս. Աբուլհասանը (Ադրբեջան), Ի. Աբաշիձեն (Վրաստան), Օ. Շարաֆուտդինովը (Ուզբեկստան), Ս. Սկալբեն (Լատվիա), Ս. Խաիտովը (Թուրքմենիա), Դ. Իբրամին (Տաջիկստան)։ Ադրբեջանական բանաստեղծ Ս. Ռուստամը կարդում է իր «Հայ եղբայրներիս» բանաստեղծությունը։ Երևանի Շիրվանզադեի անունը կրող դպրոցի պիոներների անունից ողջունում է 10-րդ դասարանի աշակերտուհի Ս. Նալբանդյանը։

Մոսկվայում, Միությունների տան Սյունազարդ դահլիճում տեղի է ունենում Ալ. Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։ Երեկոն բացում է Գ. Մարկովը, զեկուցում է Մարիետա Շահինյանը։ Ելույթ են ունենում Ա. Սաֆրոնովը (ՌՍՖՍՀ), Հ. Սահյանը, Դ. Շենգելայան (Վրաստան), Մ. Իբրահիմովը (Ադրբեջան)։

Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին ամբողջական համարներ են նվիրում «Սովետական Հայաստան», «Գրական թերթ», «Коммунист», «Սովետական գրականություն» և այլ թերթեր ու պարբերականներ։

«Սովետական Վրաստան», «Լիտերատուրուլի գազետի» թերթերը Շիրվանզադեի հոբելյանին են նվիրում ամբողջական էջեր։

Վրաստանի գրողների միության նախագահությունը և հանրապետության թատերական ընկերության վարչությունը կազմակերպում են Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկո։ Բացման խոսք է ասում բանաստեղծ Ս. Ջիկովանին, զեկուցում է Ս. Ավչյանը։ Հուշեր են պատմում ակադեմիկոս, բանաստեղծ Գ. Լեոնիձեն, պրոֆ. Լ. Մելիքսեթբեկը, բանաստեղծություններ են կարդում Ս. Էուլին, հանրապետության վաստակավոր արտիստ Պահարեն և ուրիշներ։

Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակը նշելու համար ՀՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է Երևան քաղաքում կանգնեցնել Ալ. Շիրվանզադեի հուշարձանը և Ղափանի շրջանային թատրոնը կոչել Ալ. Շիրվանզադեի անունով։

«Սովետական Հայաստան» թերթը (№ 264) Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակի առթիվ տպագրում է Մ. Սարյանի, Կոնստանտին Գամսախուրդիայի, Սուլեյման Ռահիմովի խոսքերը։

Մ. Սարյանի խոսքից

«Ալեքսանդր Շիրվանզադեն անցյալ դարավերջի և XX դարի առաջին երեք տասնամյակների հայ կուլտուրայի այն մոնումենտալ դեմքերից է, որն իր մեջ անձնավորում է մեր ժողովուրդը։ Նա ներդաշնակում էր խորին հայրենասիրությունը և ինտերնացիոնալիզմը, եվրոպական կուլտուրան և ազգային կոլորիտի նուրբ զգացումը, բարձր ճաշակը դեպի գեղեցիկը թե՛ կյանքում, թե՛ արվեստի մեջ և իր երկրպագումը ճշմարտությանը»։

Կ. Գամսախուրդիայի խոսքից

«Հոգեպես խոր ցավ եմ զգում, որ տկարությանս պատճառով չեմ կարող ներկա գտնվել հայ ժողովրդի մեծանուն գրողի, մեծ սրտի տեր մարդու, առյուծաբաշ Շիրվանիս ծննդյան 100-ամյակի հոբելյանին։

Հայ վիպագրության և դրամատուրգիայի ռեալիստական ուղղության ամենախոշոր ներկայացուցիչներից է բազմաբեղուն Շիրվանզադեն։ Դարավոր հարևան, արյունակից բարեկամ հայ ժողովրդի փառքը կազմող՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Բաֆֆի, Գ. Սունդուկյան, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան լեռնապարի հսկաներից է նա՝ Շիրվանզադեն, որ թողել է մեզ հավերժ չմարող, սերունդների միտքը, սիրտը ազնվացնող, սերունդներին մարդասիրությամբ, ազնվությամբ դաստիարակող վեպերի, դրամաների, պատմվածքների տասնյակ հատորներ»։

Նոյեմբերի 22-ին

«Գրական թերթը» (№ 46) էջ է նվիրում Զեխոսլովակիայում հայ կուլտուրայի ուսումնասիրման և պրոպագանդման ուղղությամբ կատարվող աշխատանքներին։ Տպագրված նյութերը հաղորդում են, որ Պրագայում չեխերեն լույս են տեսել Ավ. Իսահակյանի պատմվածքների ժողովածուն, «Հայկական հին առասպելները», Շիրվանզադեի «Քառասը», Լենինի մասին հայկական հեքիաթների ժողովածուն, Հովհ. Թումանյանի «Գիքորը» և այլ գրքեր։ Տպագրված է Վ. Անանյանի «Զեխ հայագետները» հոդվածը՝ Յարոմիր Նոլիչկայի, Վացլավ Զերնիի, Բոհումիլ Բարեշի, Պալեկ Բոհումիլի, Լուդմիլա Մոտալովայի, Մարցելա Բոուշկովայի մասին։

Նոյեմբերի 29-ին

Մոսկվայում, արվեստի աշխատողների կենտրոնական տանը, բացվում է հայ թատրոնի 2000-ամյա պատմությանը նվիրված ցուցահանդես։ Ցուցահանդեսը բացում է Ա. Շահինյանը, ողջույնի խոսք են ասում պրոֆ. Պոկրովսկին և ՌՍՖՍՀ ժող. արտիստ, ռեժիսոր Զախավան։ Նույն օրը տեղի է ունենում երեկո՝ նվիրված ցուցահանդեսի բացմանը։ Զեկուցում է Ս. Հարությունյանը։

«Գրական թերթ», № 46

Դեկտեմբերի 1-ին

Մոսկվայում, արվեստի աշխատողների կենտրոնական տանը, տեղի է ունենում երեկո՝ նվիրված Հայկական ՍՍՀ մշակույթի ծաղկմանը։ Երեկոն

բացում է ՍՍՀՄ ժող. արտիստուհի Վ. Բարսովան, զեկուցում է Ա. Շահինյանը։

Դեկտեմբերի 4-ին

Մոսկվայում, հայ հին թատրոնին նվիրված ցուցասրահում, տեղի է ունենում ՍՍՀՄ ԳԱ արվեստների պատմության ինստիտուտի և Ա. Լունաչարսկու անվան պետական թատերական արվեստի ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ թատրոնի 2000-ամյա պատմությանը։ Զեկուցում են պրոֆ. Գ. Գոյանը, Ս. Հարությունյանը։ Զեկուցումների շուրջ արտահայտվում են արվեստաբաններ Յու. Դմիտրիևը, Գ. Բոյաջիևը, Ն. Զոդրաֆը, Վ. Գոլովնյան, Օ. Օլիդորը և ուրիշներ։

Դեկտեմբերի 7—13-ը

Կրեմլի մեծ պալատում տեղի է ունենում ՌՍՖՍՀ գրողների առաջին հիմնադիր համագումարը։ Համագումարը բացում է Լ. Սոբոլևը, որը հանդես է գալիս հիմնական զեկուցումով։

Դեկտեմբերի 8-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված անգլիական բանաստեղծ Ջոն Միլտոնի ծննդյան 350-ամյակին։ Երեկոն բացում է Ն. Զարյանը, զեկուցում է Հովհ. Մամիկոնյանը։

Վախճանվեց սիրելի հայ նշանավոր բանաստեղծ, գրականագետ Հ. Պոտուրյանը (ծնվ. 1881 թ.)։

Դեկտեմբերի 10-ին

Նշվում է ազրբեջանական բանաստեղծ Մոհամեդ Ֆիզուլիի մահվան 400-ամյակը։

«Գրական թերթը» տպագրում է Հայաստանում գտնվող չեխ նշանավոր լեզվաբան, հայագետ Յարոմիր Նդրիչկայի «Ողջույն հայ ժողովրդին» հոդվածը։

Դեկտեմբերի 12-ին

ՀՍԳ միությունում տեղի է ունենում թարգմանիչների խորհրդի նիստը։ Զեկուցում է Ստ. Ալաջաջյանը, ելույթ են ունենում Ս. Պայազատը, Վ. Միքայելյանը, Լ. Մարությանը, Ս. Վահունին։

Դեկտեմբերի 14-ին

Նշվում է Հակոբ Կոջոյանի ծննդյան 75-ամյակը։ Հայաստանի պետական պատկերասրահում բացվում է Հ. Կոջոյանի ստեղծագործությունների հոբելյանական ցուցահանդեսը։

Դեկտեմբերի 20-ին

Գրողների տանը տեղի է ունենում Գ. Սևունցի «Գերիներ» վեպի քննարկումը։ Զեկուցում է Ս. Արզումանյանը, ելույթ են ունենում Մ. Նահապետյանը, Վ. Մնացականյանը, Վ. Նորենցը, Էդ. Թոփչյանը։

Դեկտեմբերի 24-ին

«Գրական թերթը» (№ 52) տպագրում է «Սփյուռքահայ գրականությունը վերելքի ճանապարհին» խմբագրական հոդվածը։

Թերթի նույն համարը հաղորդում է, որ Սոֆիայում, Բուլղարիայի գրողների միության, Բուլղարա-Սովետական ընկերության և հայկական «Երևան» կազմակերպության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիսավոր երեկո՝ նվիրված Ալ. Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակին։ Զեկուցումով հանդես է եկել Բուլղարիայի գրողների միության քարտուղար Անգել Տոդորովը։

«Գրական թերթ», № 52

Թերթի նույն համարը հաղորդում է, որ Բուդապեշտում, հունգարական գրական-գեղարվեստական «Նաջի Վիլաջ» ամսագրի 10-րդ համարում տպագրվել են Դ. Դեմիրճյանի «Զարդահ» պատմվածքը, Եղ. Չարենցի բանաստեղծություններից, Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսից մի հատված և Վ. Խեչումյանի «Տպագրյալ յԱմստերդամ» պատմվածքը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ալազան Վ. — Բանաստեղծի սիրտը (ռուսերեն), Մոսկվա
Ալիքյան Ա. — Վերադարձած երդը (ռուսերեն), Մոսկվա
Գրիգորյան Ս. — Բանաստեղծություններ
Գուսան Աշոտ — Գուսանի սերը
Գուսան Հավասի — Երգեր
Զարյան Ն. — Հայրենի տուն (ռուսերեն), Մոսկվա
Էմին Գ. — Սուր և խոփ (ռուսերեն), Մոսկվա
Թումանյան Հեն.— Ջինարի
Խարազյան Ս. — Գարնան առավոտ
Խերանյան Մ. — Սասնա տուն (դյուցազնական)
Կորյուն Մ. — Առակներ (ռուսերեն), Մոսկվա
Հակոբյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Հակոբյան Հ. — Բանաստեղծություններ և պոեմներ
Հակոբյան Մ.— Անանուն ծաղիկներ
Հարությունյան Միք. — Պատիվ
Հարությունյան Սաղ.— Թե ինչ է շշնջում առուն
Մարգարյան Արշ.— Հայրենի հովիտ
Միրիջանյան Լ. — Այգեստաններ
Միքայելյան Ն. — Իմ գարունը
Նորենց Վ. — Իմ աշխարհը
Շիրազ Հ. — Քնար Հայաստանի (գիրք 1)
Պետրոսյան Ռ. — Սրտի ճամփա
Պողոսյան Արտ. — Պոեմներ
Պողոսյան Հռ. — Անձրևից հետո
Ջանյան Բ. — Իմ Երևան

Սահակյան Ա. — Աստղիկներ
Սահյան Հ. — Նաիրյան դալար բարդի
Սարյան Գ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Մոսկվա
Սարյան Գ. — Բանաստեղծություններ
Սենալ Ա. — Նվագներ
Վահյան Վ. — Ոսկե կամուրջ
Տարոնցի Ս. — Ավելի լույս
Փանիկյան Օ. — Յայգերդ

Ուրձակ

Աթայան Ռ. — Զարթոնք
Ալազան Վ. — Հյուսիսային աստղը
Անանյան Վ. — Լեռնային արահետներով (անգլերեն), Մոսկվա
Անանյան Վ. — Որսորդական պատմվածքներ
Ավագյան Աբ. — Պատմվածքներ
Արաքսմանյան Ա. — Աղատություն աքսորական (ռուսերեն), Մոսկ
Բալասանյան Գ. — Փորձության ժամին
Դեմիրճյան Դ. — Երկերի ժողովածու, հ. 6
Զարյան Ն. — Պարոն Պետրոսն ու իր նախարարները
Զարյան Ն.— Հայտվան (ուկրաիներեն), Կիև
Զորյան Ստ. — Մի կյանքի պատմություն (ուկրաիներեն), Կիև
Թաթիկյան Շ. — Նրա ճանապարհը (գիրք 2)
Թորգոմյան Ծ.— Պատմվածքներ
Խանդամուրյան Հ. — Հանդիպում
Խանզադյան Ս. — Կարմիր շուշաններ
Խեչումյան Վ. — Գիրք մաքառման (ռուսերեն), Մոսկվա
Կորյուն Մ. — Կամո
Հովսեփյան Բ. — Սևան
Հրահան Հ. — Իմ կյանքի վեպը (մաս Բ)
Ղուկասյան Զվ. — Պատմվածքներ
Նոր-Այր — Ոլորտներում (գիրք 1, 2)
Նուրիկյան Բ. — Պանդուխտ հոգիներ
Շաթիրյան Մ. — Զինվորներ (ռուսերեն), Մոսկվա
Պետրոսյան Վ. — Բալլադ մարդու մասին
Ռշտունի Գ. — Մագիլների մեջ
Սահինյան Ան. — Խաչուղիներ
Սեկոյան Ա. — Ոսկե վազերի մեջ
Սեկոյան Ա. — Ոսկե վազերի մեջ (ռուսերեն), Մոսկվա
Սեյրանյան Բ. — Լեռներում
Սիրաս Հմ. — Արարատ (ռուսերեն), Մոսկվա
Սիրաս Հմ. — Երկերի ժողովածու, հ. 1
Ստեփանյան Ա. — Ոսկե մեդալ
Սևունց Գ. — Գերիներ
Քոչարյան Մ. — Հարազատ մարդիկ (ուկրաիներեն), Կիև

Դրամատուրգիա

Բարսեղյան Ար. — Դրամատիկական երկեր
Բորյան Գ. — Դրամատիկական երկեր
Յաղջյան Գ. — Ակնառու դաս (ռուսերեն), Մոսկվա
Տեր-Գրիգորյան Գր. — Վերջին մեխակներ (ռուսերեն), Մոսկվա

Գրականներ

Աբովյան Խ. — Երկերի լիակատար ժողովածու, հ. 8
Թեքեյան Վ. — Երկեր
Թումանյան Հովհ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Թումանյան Հովհ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն). Լենինգրադ
Թումանյան Հովհ. — Երկեր, հ. 1, 2
Իսահակյան Ավ. — Հատընտիր
Իսահակյան Ավ. — Երկեր, հ. 1, 2
Մատուրյան Ալ. — Բանաստեղծություններ
Մատուրյան Ալ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Մուրացան — Գևորգ Մարզպետունի (ռուսերեն)
Շիրվանզադե — Ընտիր Երկեր, հ. 1, 2 (ռուսերեն), Մոսկվա
Շիրվանզադե — Պիեսներ (ռուսերեն), Մոսկվա
Շիրվանզադե — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Շիրվանզադե — Վիպակներ և պատմվածքներ (ռուսերեն)
Պաղտասար Դպիր — Ծաղիկներ սիրո և կարոտանաց
Պարոնյան Հ. — Երկեր
Պարոնյան Հ. — Մեծապատիվ մուրացկաններ
Պռոշյան Պ. — Հայի խնդիր
«Սասունցի Դավիթ» (ռուսերեն), Մոսկվա
Տերյան Վ. — Բանաստեղծություններ
Ռաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 9
Ռաֆֆի — Ոսկի աքաղաղ
Ռաֆֆի — Սամվել (ռուսերեն)
Փափազյան Վրթ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Ավդալբեգյան Մ. — Խաչատուր Կեչառեցի
Բաբայան Արշ. — Զարենցը հոկտեմբերի երգիչ

Բիբլիոգրաֆիա (հոդվածներ, ակնարկներ, ուսումնասիրություններ, հիշողություններ, նամակներ՝ հայ և ռուս ժողովուրդների գրական և կուլտուրական կապերի մասին)։

Թամրազյան Հր. — Ալեքսանդր Շիրվանզադե (ռուսերեն)
Թամրազյան Հր. — Շիրվանզադե
Թարիվերդիևա Ք. — Աբովյանը և Ախունդովը
Հախումյան Տ. — Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան

Ղազարյան Հովհ. — Հայ պոեզիան 1917—1920 թվականներին
Ղանալանյան Հովհ. — Միսաք Մեծարենց
Մարգարյան Ալ. — Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը
Մելիքսեթ-Բեկ Լ. Մ. — Շամչի-Մելքոն և նրա հայերեն խաղերը
Մկրտչյան Հ. — Ակսել Բակունց
Մնացականյան Վ. — Գրական հարցեր
Նալբանդյան Վ. — Միջնադարի հայ տաղերգուներ
Ջրբաշյան Էդ. — Միսաք Մեծարենց
Ռշտունի Հ. — Գեղամ Սարյան
Սալախյան Հ. — Եղիշե Չարենց (ռուսերեն), Մոսկվա
Սրապյան Ս. — Հովհաննես Երզնկացի
Բաֆֆի — Գրականության մասին

Թարգմանություն

Աբաշիձե Ի. — Բանաստեղծություններ
Ասիայի և Աֆրիկայի բանաստեղծները (ժողովածու)
Բալզակ — Երկերի ժողովածու, հ. 6
Բեդիե Ժ. — Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը
Բելյաև Ա. — Պրոֆեսոր Դուելի գլուխը
Գրոսսման Վ. — Հանուն արդար գործի
Դիկկենս Չ. — Դավիթ Կոպպերֆիլդ, հ. 3
Դիկկենս Չ. — Օլիվեր Թվիստի արկածները
Զլոբին Ստ. — Ստեպան Ռազին, հ. 2
Զուդերման Հ. — Հոգսը
Իսակովսկի Մ. — Հատընտիր
Լեոնով Լ. — Ռուսական անտառ
Լոնգֆելլո Հ. — Հայավաթի երգը
Կոնան Դոյլ Ա. — Նոթեր Շերլոկ Հոլմսի մասին
Հայնե Հ. — Երկեր, հ. 1
Մալո Հ. — Առանց ընտանիքի
Մուրոմցի Իլյա — (ռուսական բիլինաներ)
Չինական կլասիկ պոեզիա
Պուշկին Ա. — Երկեր, հ. 4
Ռաշիդ Մ. — Հայրենի ճամփաներով
Ռիդ Մ. — Անգլուխ ձիավորը
Ռուդաքի — Ժողովածու
Սաադի — Գուլիստան
Վեռն Ժյուլ — Տասնհինգամյա նավապետը
Վոլտեր — Ընտիր երկեր
Ուսուֆեն Բաքո — Սրինդ

1959

Հունվարի 6—8-ը

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների չորրորդ համագումարը։

Հաշվետու զեկուցումով («Կոմունիզմի կառուցումը և սովետահայ գրականությունը») հանդես է գալիս Էդ. Թոփչյանը, ՀՍԳ միության վերստուգիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին զեկուցում է Ս. Տարոնցին, մանդատային հանձնաժողովի հաշվետվությամբ հանդես է գալիս Գ. Բեսը։

Ելույթ են ունենում՝ Գ. Մահարին, Բ. Վերդյանը, Արաքսը, Ա. Արաքելյանը, Դ. Նագիշկինը (Մոսկվա), Ս. Կապուտիկյանը, Ե. Մատուզյավիչուսը (Լատվիա), Վ. Ալազանը (կարդացվում է նրա գրավոր խոսքը), Տ. Հախումյանը, Օ. Շեստինսկին (Լենինգրադ), Վ. Նորենցը, Ա. Կարինյանը, Մ. Մրևլիշվիլին (Վրաստան), Ա. Երևանլին, Վ. Տալյանը, Ս. Պալազատը, Մ. Շահինյանը, Ս. Խանզադյանը, Ստ. Ալաջաջյանը, Հենր. Թումանյանը, Ս. Աղաբաբյանը, Բ. Կարապետյանը, Ա. Ղուկասյանը, Մ. Ռահիմը (Ադրբեջան), Հր. Հովհաննիսյանը, Ա. Գրաշին, Ա. Իմերմանիսը (Լիտվա), Ն. Զարյանը, Հր. Քոչարը, Հր. Թամրազյանը, Հ. Շիրազը, Ա. Սուրկովը (Մոսկվա), Աշիրովը (Թուրքմենիա)։

Համագումարը ընտրում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության կազմը՝ Վ. Ալազան, Ստ. Ալաջաջյան, Ս. Աղաբաբյան, Աղավնի, Վ. Անանյան, Մ. Արազի, Արաքս, Մ. Արմեն, Գ. Բալասանյան, Գ. Բորյան, Վ. Գրիգորյան, Խ. Դաշտենց, Ա. Երևանլի, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Գ. Էմին, Հր. Թամրազյան, Քր. Թափալչյան, Էդ. Թոփչյան, Ս. Խանզադյան, Ս. Կապուտիկյան, Ստ. Կուրտիկյան, Հաջիև Ջնդի, Հր. Հովհաննիսյան, Գ. Հովնան, Գ. Մահարի, Մ. Մարգարյան, Հ. Մկրտչյան, Վ. Մնացականյան, Նոր-Այր, Վ. Նորենց, Հ. Շիրազ, Հռ. Պողոսյան, Ա. Սահինյան, Հ. Սահյան, Սարմեն, Գ. Սարյան, Պ. Սևակ, Գ. Սևունց, Հմ. Սիրաս, Ս. Վահունի, Ս. Տարոնցի, Գ. Տեր-Գրիգորյան, Հր. Քոչար, Մ. Օվչիննիկով։

Ընտրվում են ՍՍՀՄ գրողների III համագումարի պատգամավորներ՝ Մ. Արազի, Մ. Արմեն, Գ. Բորյան, Ա. Երևանլի, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Գ. Էմին, Քր. Թափալչյան, Էդ. Թոփչյան, Ս. Խանզադյան, Ս. Կապուտիկյան, Ա. Կարինյան, Հաջիև Ջնդի, Հր. Հովհաննիսյան, Գ. Մահարի, Հ. Շիրազ, Ա. Սահինյան, Հ. Սահյան, Սարմեն, Գ. Սարյան, Գ. Սևունց, Հմ. Սիրաս, Հր. Քոչար, Մ. Օվչիննիկով։

Հայաստանի սովետական գրողների միության վարչության պատասխանատու քարտուղար է ընտրվում Էդ. Թոփչյանը, քարտուղարներ՝ Գ. Սևունցը և Հր. Հովհաննիսյանը։ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ է ընտրվում Գ. Բեսը։

Էդ. Թոփչյանի զեկուցումից

«...Մեր գրականության, հատկապես արձակի զարգացումը վերջին տարիների ընթացքում նշանավորվել է վճռական շրջադարձով դեպի արդիականության հիմնական խնդիրները։ Սովետական կյանքի ճշմարտությունը արվեստի ավելի մեծ ուժով է ընդգրկվել արձակի մեջ, դարձել գեղարվեստական ճշմարտություն, կենդանի կերպար և բնավորություն։

...Նոպատերազմյան ժամանակաշրջանում, հատկապես վերջին հինգ տարիներին, ստեղծագործական բնորոշ տեղաշարժեր եղան մեր պոեզիայի մեջ։ Պոեզիան ավելի մոտեցավ համաժողովրդական պայքարին, սովետական մարդուն, ավելի տոգորվեց կյանքի բովանդակությամբ։ Զարգացման նոր աստիճանի հասավ բանաստեղծական արվեստը։ Այդ շրջադարձը պոեզիայի մեջ նշանավորվեց նոր, արժեքավոր երկերով, որոնք դարձան ժողովրդի սեփականությունը, օգնեցին նրա կյանքին և աշխատանքին։

...Վերջին չորս տարիների ընթացքում սովետահայ դրամատուրգիան որոշ աշխուժացում է ապրել, ստեղծվել են նոր պիեսներ, որոնք շոշափում են այժմեական կարևոր թեմաներ։ Գեղարվեստական տեսակետից հաջողված գործերը դեռևս քիչ են, սակայն ուրախալի է և նշանակալից այն հանգամանքը, որ մեր դրամատուրգիան այժմ իր հիմնական ուշադրությունը դարձնում է սովետական կյանքի գեղարվեստական արտացոլմանը։

...Ցանկություն չունենալով գերագնահատելու քննադատների կատարած աշխատանքը, միաժամանակ չենք կարող համաձայնել քննադատության նկատմամբ եղած ժխտողական վերաբերմունքի հետ։ Թերությունները քիչ չեն քննադատության մեջ. նա դեռևս անբավարար է ներգործում գրականության զարգացման պրոցեսի վրա, անհրաժեշտ վճռականություն հանդես չի բերում ապոլիտիզմի և գրական խոտանի դեմ մղվող պայքարում, անբավարար է օգնում աշխատավորության մեջ գեղարվեստական բարձր ճաշակի դաստիարակման գործին։ Բայց նշելով թերությունները, չի կարելի մոռացության մատնել քննադատության կատարած դրական գործը նոր ստեղծագործությունների գնահատման և գրականության պատմության հարցերի լուսաբանման բնագավառում։

...Արտասահմանի հայ գրականության հարցը առաջին անգամ քննության նյութ դարձավ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարում, 1946 թվականին։ Այդ ժամանակից անցել է ավելի քան տասը տարի և այդ տարիների ընթացքում արտասահմանի հայ աշխատավորությունը ավելի խորն է ճանաչել և ավելի ամուր է կապվել մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ, նրա բարգավաճման մեջ տեսնելով իր կյանքի հեռանկարը։ Անցած տարիների ընթացքում սերտ կապեր ստեղծվեցին սովետահայ գրողների և արտասահմանի հայ առաջավոր գրողների միջև, սովետական գրականության մեծ գաղափարները արժանացան հայ աշխատավորական լայն զանգվածների և դեմոկրատական գրականության ջերմ համակրանքին։

«Սովետական գրականություն», 1959, № 1։

Գ. Մահարու ելույթից

...Որո՞նք են ժամանակակից պոեզիայի գլխավոր տենդենցները, որքա՞ն մոտ են նրանք մեր պոեզիայի մայրուղուն։ Միգ թվում է, որ մեր պոեզիայի մայրուղին դա Եղիշե Չարենցի պոեզիայի մայրուղին է։ Չարենցն այն բանաստեղծն է, որն իր մեջ ընդունեց ինչպես համաշխարհային, ռուսական, այնպես էլ արևմտահայ ու արևելահայ պոեզիաների հարուստ ժառանգության առաջավոր տրադիցիաները, մեր պոեզիան բարձրացրեց մի նոր աստիճանի։ Լինելով իր մեծ ժամանակի մեծագույն շեփորահարն ու տրիբունը, Չարենցը երբեք չմոռացավ, որ մարդը իրավունք ունի և՛ տխրելու, և՛ սիրելու, և՛ դեպի անցյալը նայելու՝ առանց սակայն կորցնելու ոտքի տակի հողը և կոմունիստական ապագայի հեռանկարները։ Այն ամենը, ինչ մարդկային էր, առաջավոր և հոգին վեհացնող՝ խորթ չեղավ նրա քնարին։

«Գրական թերթ», № 1

Մ. Շահինյանի ելույթից

«Գրողները գիտեն, նրանց գրավոր թե բանավոր հիշեցնում են, որ սովետական գրականությունը պետք է սնվի արդիականությամբ, արտացոլի մեր ժամանակաշրջանը։ Բայց կարո՞ղ ենք մենք ասել, թե ինչ է արդիականությունը։ Ըմբռնո՞ւմ ենք արդյոք արդիականությունն իր ողջ ընդգրկմամբ, խորությամբ։ Արդիականությունը ըմբռնելու համար հնարավոր չէ նրան մոտենալ այն ուղիներով ու մեթոդներով, ինչպիսիք եղել են 20-ական, 30-ական, 40-ական և նույնիսկ 50-ական թվականներին։ Մենք այժմ կանգնած ենք գիտության մեծագույն վերափոխությունների շեմքին, երբ իրականություն են դառնում մարդու ամենախիզախ երազանքները։ ...Գրական նոր հայտնագործությունները և սոցիալական ռևոլյուցիաները ցնցում են աշխարհը և ամբողջովին փոխում նրա դեմքը, պատմական արենա են մտնում ճնշված ժողովուրդները և ստեղծագործական մեծ ուժով սկսում են կառուցել իրենց ազգային կուլտուրան,— այս բոլորը գրողներից պահանջում է մտածողության ու գիտողության նոր սրություն, գիտելիքների նոր լայնություն։ Ինձ թվում է, որ մեր մասնագիտական շատ հարցերը՝ կոնֆլիկտի, սատիրայի, վիպական ժանրի հարցերը, իրենք իրենց հեշտությամբ կլուծվեն, եթե մենք, գրողներս, դառնանք իսկապես մեր կոմունիստական դարաշրջանի կրթված մարդիկ, այնպիսին, ինչպիսին եղել են մեր կլասիկները իրենց դարաշրջանում։ Արդիականությունը ըմբռնելու համար անհրաժեշտ է մեր գրքերի հերոսների հետ ապրել նույն զգացմունքներով ու խոհերով, անհրաժեշտ է ձգտել մեր ժամանակը հասկանալու, բարձրանալու մեր դարաշրջանի գիտական մեծ իդեաների մակարդակին, այսինքն կյանքի ըմբռնմանը մոտենալ կուլտուրական մեծ պաշարներով»։

Ա. Սուրկովի ելույթից

«Այստեղ մի շարք ընկերներ ասում էին, որ հայ գրականությունը մայրենի լեզվով կարդացող ոչ մեծաթիվ ընկերների թվական վիճակագրություն է։ Բայց ինձ թվում է, որ հայ գրականությունը այն հրաշալի հաստատու-

թյունն է, որի մասին կարելի է ասել հին առածով՝ քաշը քիչ է, բայց արժեքը մեծ, և նա հաստատվում է այն հսկայական ավանդով, որ մուծել են հայերը մեր բազմազգ սովետական կուլտուրայի մեջ, համաշխարհային գրականության զարգացման մեջ»։

«Գրական թերթ», № 2

Հունվարի 8-ին

Հայաստանի սովետական գրողների չորրորդ համագումարին եղբայրական հանրապետություններից մասնակցող մի խումբ գրողներ՝ Ա. Սուրկովը, Մ. Շահինյանը, Վ. Զվյագինցևան, Դ. Նագիշկինը, Օ. Շեստինսկին, Գ. Մանասյանը, Ն. Մատուզյավիչուսը, Մ. Մրևլիշվիլին, Մ. Ռահիմովը, Զ. Աշիրովը, Ա. Իմերմանիսը և ուրիշներ այցելում են Ավ. Իսահակյանի գերեզմանը և պսակ դնում Վարպետի շիրիմին։

Հունվարի 9-ին

Հայաստանի սովետական գրողների չորրորդ համագումարի առթիվ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում բարեկամության երեկո։ Իրենց ստեղծագործություններն են կարդում Վ. Զվյագինցևան, Դ. Նագիշկինը, Օ. Շեստինսկին, Լ. Վիշնևավսկին, Ն. Նիկոլաևսկայան, Մ. Ռահիմը, Իմերմանիսը, Մատուզյավիչուսը, Մ. Դիլբազին, Հ. Շիրազը, Հ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Սաղ. Հարությունյանը, Ա. Դարբնին, Աշիրովը, Հյուսեինզադեն և ուրիշներ։

Հունվարի 20-ին

Նշվում է Ռոբերտ Բեռնսի ծննդյան 200-ամյակը։

Հունվարի 30-ին

ՀՍԳ միությունում քննարկվում է Գ. Մահարու «Մեծ փորձություն» պիեսը։ Զեկուցում է Ս. Սարյանը, ելույթ են ունենում Շ. Շահրիկյանը, Գ. Էմինը, Հր. Գրիգորյանը, Ն. Զարյանը, Վ. Նորենցը, Գ. Սարյանը, Ալ. Արաքսմանյանը, Ս. Ինճիկյանը, Ս. Պապայանը, Վ. Աճեմյանը, Լ. Հախվերդյանը։

Փետրվարի 23-ին

Գրողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Միսաք Մանուշյանի մահվան 15-ամյակին։ Երեկոն բացում է Հր. Քոչարը։ Մ. Մանուշյանի կյանքի ու գործունեության մասին զեկուցում է Ս. Կապուտիկյանը։ Հուշեր են պատմում Շ. Տատուրյանը, Ա. Կոթիկյանը, Ս. Բաղդասարյանը, բանաստեղծի այրի Մելինե Մանուշյանը։ Միսաք Մանուշյանի բանաստեղծություններն են կարդում Հր. Հովհաննիսյանը և Գր. Զալիկյանը։

Փետրվարի 24-ին

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Սերգեյ Եսենինին։ Զեկուցում է Լ. Մկրտչյանը։ Բանաստեղծի մասին հիշողություններ է պատմում համալսարանի դասախոս Զ. Յասինսկայան։ Ուսանողները արտասանում են Եսենինի գործերից։

Փետրվարի 27-ին

Նշվում է Շոլոմ-Ալեյխեմի ծննդյան 100-ամյակը։

Փետրվար

«Սովետական գրականություն» ամսագիրը (№ 2) գրեթե ամբողջությամբ նվիրվում է Մերձբալթյան հանրապետությունների գրականությանը։

Մարտի 3—6-ը

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության և Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հրավիրած համամիութենական ստեղծագործական խորհրդակցությունը՝ նվիրված սոցիալիստական ռեալիզմի հարցերին։ Հայաստանից ելույթ է ունենում Ս. Աղաբաբյանը։

Մարտի 8-ին

«Սովետական Հայաստան» օրաթերթը հաղորդում է, որ Վրաստանի «Սաբճոթա Սաքարթվելո» հրատարակությունը 10 հազար օրինակ տպաքանակով լույս է ընծայել Շիրվանզադեի «Ընտիր երկերի» ժողովածուն։

Մարտի 12-ին

Նշվում է լիտվական գրականության դասական Պետրաս Ցվիրկայի 50-ամյակը։

Մարտի 13-ին

Վախճանվեց բանահավաք-աշուղագետ Գեղամ Թարվերդյանը (Աշուղ Վերդի, ծնվ. 1884 թ.)։

Մարտի 17-ին

Վախճանվեց վրաց ժողովրդական բանաստեղծ Գալակտիոն Տաբիձեն (ծնվ. 1892 թ.)։

Մարտի 19—20-ը

Գրողների տանը տեղի է ունենում քննադատների բաժանմունքի նիստ՝ նվիրված գրական քննադատության հարցերին։ Զեկուցում է Անահիտ Սահինյանը, ելույթ են ունենում Ն. Մուրադյանը, Լ. Հախվերդյանը, Բ. Վերդյանը, Պ. Սահակյանը, Ս. Սարինյանը, Վ. Մնացականյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Թամրազյանը և ուրիշներ։

Ապրիլի 1-ին

Նշվում է Ն. Վ. Գոգոլի ծննդյան 150-ամյակը։

Ապրիլի 6-ին

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում Հայաստանի ժուռնալիստների առաջին (հիմնադիր) համագումարը։

Ապրիլի 10-ին

«Գրական թերթը» (№ 14) հաղորդում է, որ Սոֆիայում «Նարոդնա կուլտուրա» հրատարակչությունը բուլղարերեն լույս է ընծայել Պերճ Պռոշյանի «Հացի խնդիր» վեպը՝ Պերճ Միքայելյանի թարգմանությամբ։

Ապրիլի 17-ին

Նշվում է վրաց նշանավոր գրող Իոսեբ Գրիշաշվիլու ծննդյան 70-ամյակը։ Այս առթիվ «Գրական թերթը» (№ 15) տպագրում է Գ. Սարյանի «Խոսք սրտագին՝ Իոսեբ Գրիշաշվիլուն» հոդվածը։

Ապրիլի 22-ին

Գրականության և արվեստի բնագավառում լենինյան մրցանակներ են շնորհվում Մ. Աուեզովին («Աբայի ուղին» վեպի համար), Ա. Դովժենկոյին («Պոեմ ծովի մասին» գրական կինոսցենարի համար), Ա. Խաչատրյանին («Սպարտակ» բալետի համար), Ն. Պոգոդինին («Հրացանավոր մարդը», «Կրեմլյան կուրանտներ», «Երրորդը, պաթետիկականը» դրամատիկ տրիլոգիայի համար)։

Ապրիլի 24-ին

Վախճանվեց ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանը (ծնվ. 1883 թ.)։

Մայիսի 3-ին

Լենինականի Ստ. Շահումյանի անվան կուլտուրայի և հանգստի զբոսայգում տեղի է ունենում Ավ. Իսահակյանի կիսանդրու բացումը։

Մայիսի 6-ին

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ռեժիսոր, ՍՍՀՄ Պետական մրցանակի կրկնակի դափնեկիր, թատերագիր, պրոֆեսոր Վաղարշ Բոգդանի Վաղարշյանը (Պողոսյան, ծնվ. 1894 թ.)։

Մայիսի 12-ին

Գրողների տանը տեղի է ունենում բանավեճ՝ «Սովետահայ լիրիկայի և հարակից հարցերի շուրջը»։ Զեկուցում է Գ. Հովսեփյանը, արտահայտվում են՝ Ս. Հարությունյանը, Սարմենը, Վ. Մնացականյանը, Ս. Արզումանյանը, Ա. Վարդանյանը, Վ. Գրիգորյանը, Հ. Շիրազը, Ս. Վահունին և ուրիշներ։

Մայիսի 18—23-ը

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների երրորդ համագումարը։ Համագումարը բաց է անում Կ. Ֆեդինը։

Հաստատվում է հետևյալ օրակարգը.

1. Սովետական գրականության խնդիրները կոմունիստական շինարարության գործում։ Զեկուցող Ա. Սուրկով։

2. ՍՍՀՄ գրողների միության կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը։ Զեկուցող Յու. Լիբեդինսկի։

3. ՍՍՀՄ գրողների միության կանոնադրության մեջ որոշ փոփոխություններ մտցնելու մասին։ Զեկուցող Գ. Մարկով։

4. ՍՍՀՄ գրողների միության ղեկավար օրգանների ընտրությունները։

Ելույթ են ունենում Ի. Աբաշիձեն (Վրաստան), Ա. Սալինսկին (Մոսկվա), Կ. Յաշենը (Ուզբեկստան), Ա. Պրոկոֆը (Լենինգրադ), Վ. Լուքսը (Լատվիա), Ս. Սարտակովը, Կ. Զուկովսկին, Ա. Մալիշկոն (Ուկրաինա), Մ. Հուսեյնը (Ադրբեջան), Արման Լանուն (Ֆրանսիա), Գ. Պոլևոյը, Լև Կասսիլը, Վ. Կատաևը, Էդ. Թոփչյանը, Տ. Խակավան (Ճապոնիա), Մ. Ռիլսկին (Ուկրաինա), Մ. Թուրսուն-Զադեն (Տաջիկստան), Ա. Զակովսկին, Ի. Սկալան (Չեխոսլովակիա), Դ. Լինդսեյը (Անգլիա), Է. Մեժելայտիսը (Լիտվա), Ֆ. Բոնոսկին (ԱՄՆ), Վ. Սոլոուխինը, Ա. Լուպանը (Մոլդավիա), Գ. Լևոնիձեն (Վրաստան), Ա. Տվարդովսկին, Լ. Սոբոլևը, Ռ. Համզատովը (Դաղստան), Լ. Նովիչենկոն (Ուկրաինա), Ա. Դիմշիցը (Լենինգրադ), Գ. Գուլյամը (Ուզբեկստան), Պ. Բրովկան (Բելոռուսիա) և ուրիշներ։ Եզրափակիչ ճառ է ասում Ն. Տիխոնովը։

Համաժողովարը ընդունում է բանաձև Ա. Սուրկովի «Սովետական գրականության խնդիրները կոմունիստական շինարարության գործում» զեկուցման առթիվ և ողջույն՝ ուղղված Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին։

«Գրական թերթ», № 20—23

Մայիսի 25-ին

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության նորընտիր վարչության պլենումը։ ՍՍՀՄ գրողների միության վարչության առաջին քարտուղար է ընտրվում Կ. Ֆեդինը, քարտուղարներ՝ Ի. Աբաշիձեն, Տ. Աբդումոմունովը, Ն. Բաժանը, Պ. Բրովկան, Ա. Գոնչարը, Ն. Գրիբաչովը, Էդ. Թոփչյանը, Մ. Թուրսուն-Զադեն, Լ. Լեոնովը, Ա. Լուպանը, Վ. Լուքսը, Ա. Կորնեյչուկը, Մ. Հուսեյնը, Գ. Մարկովը, Է. Մեժելայտիսը, Գ. Մուսրեպովը, Լ. Նովիչենկոն, Կ. Նուգմանովը, Ֆ. Պանֆերովը, Ա. Սալինսկին, Յու. Սմուուլը, Լ. Սոբոլևը, Ա. Սուրկովը, Ն. Տիխոնովը, Ա. Տվարդովսկին, Բ. Քերբաբաևը։

Հունիսի 8—9-ը

ՀՍԳ միությունում տեղի է ունենում մանկական գրականության հարցերին նվիրված խորհրդակցություն։ «Սովետահայ մանկական գրականության արդի վիճակը և հեռանկարները» թեմայով զեկուցում է Խ. Գրալնազարյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Վ. Տալյանը, Ս. Հարությունյանը, Լ. Ասմարյանը, Ս. Մուրադյանը, Կ. Սիմոնյանը, Էդ. Թոփչյանը, ուսուցչուհիներ Վ. Թադևոսյանը, Ս. Կազարյանը, Պ. Սիմոնյանը։

Հունիսի 10-ին

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Հարություն Ալամդարյանի մահվան 125-ամյակին։ Լսվում են Ա. Ինճիկյանի «Հարություն Ալամդարյանի պոեզիան» և Շ. Նազարյանի «Հ. Ալամդարյանի գործունեությունը Լազարյան ճեմարանում» զեկուցումները։

Հունիսի 12-ին

«Գրական թերթի» համարը (№ 24) լույս է տեսնում Ուկրաինայի սովետական գրողների կազմած նյութերով՝ «Ջերմ ողջույն հայ բարեկամներին»

ընդհանուր խորագրով։ Համարում տպագրված են՝ «Անխախտ բարեկամության ուղիով» խմբագրականը, Մաքսիմ Ռիլսկու «Ողջույն ծաղկած Հայաստանին» խոսքը, Ե. Շաբլիովսկու «Եղբայրական գրականությունների համատեղության մեջ» հոդվածը, Մ. Ռիլսկու, Վ. Սոսյուրայի, Վ. Կոշևսկու, Ա. Մալիշկոյի և ուրիշների չափածո ու արձակ գործերից, բազմաթիվ այլ նյութեր, լուսանկարներ։

Մաքսիմ Ռիլսկու խոսքը

«Մեր ժողովուրդների բարեկամությունը, որի արմատները դարերի խորքին են հասնում, այժմ ծաղկել-պճնվել է ծիածանի բոլոր գույներով։ Մենք՝ ուկրաինացիներս, հիանում ենք Հայաստանի հին, փառահեղ կուլտուրայով և հայ ժողովրդի ստեղծագործության հզոր վերելացքով մեր օրերում։

Երբ ես Երևանում այցելեցի Հովհաննես Թումանյանի թանգարանը, որտեղ լիովին վերաստեղծված է մեծ բանաստեղծի ու ժողովուրդների բարեկամության մեծ մարտիկի Թիֆլիսի բնակարանի կարգուսարքը, նրա առանձնասենյակի գրասեղանի վրա իմ աչքին դիպան երկու գիրք, որոնք այդտեղ էին դրված, երբ կենդանի էր Թումանյանը՝ Պուշկինի և Շևչենկոյի հատորները։ Դա ինձ թվաց հրաշալի խորհրդանշան։

Հիշում եմ, թե ինչպիսի հուզաթաթավ սիրով էր Շևչենկոյի մասին խոսում Ավետիք Իսահակյանը։

Մի քանի տարի առաջ ես հյուր եղա մի հայկական կոլտնտեսությունում, որի նախագահի գրադարակում իմ ուղեկիցները ցույց տվին ինձ Շևչենկոյի բանաստեղծությունների հատորը, որ հայերեն է թարգմանել Դեղամ Սարյանը։

Այս և նման փաստերը հուզում են, ուրախացնում, բարձրացնում ոգին։ Փոխադարձ թարգմանությունների քանակը տարեցտարի ավելանում է։ Մեր ժողովուրդների կուլտուրական մերձեցումն ու շփումը անշեղորեն լայնանում է ու խորանում։ Հայ ժողովրդի աշխատանքային սխրանքներն ու հրճվանքները մոտ են յուրաքանչյուր ուկրաինացի բանվորի, գյուղացու ու ինտելիգենտի սրտին։ Հայ գրականության կլասիկներն ու ժամանակակից գրողները պատվավոր տեղ են գրավում մեր գրադարաններում։

Ես մեծ երջանկություն եմ համարում ինձ համար, որ Հայաստանում ունեմ բազմաթիվ անձնական բարեկամներ թե ավագ, թե երիտասարդ սերնդից։ Ողջունում եմ նրանց և նրանց միջոցով իմ ողջույնն եմ հաղորդում ամբողջ ծաղկած Հայաստանին, որի կերպարը դրոշմված է Մարտիրոս Սարյանի զմայլելի կտավներում, որի մեղեդիները հնչում են Արամ Խաչատրյանի ոգեշնչված երաժշտության մեջ, ողջույնս եմ հաղորդում ամբողջ հայ ժողովրդին, որի հոգին արտացոլված է իմ բարեկամ գրողների հիանալի ստեղծագործություններում։

Հունիսի 30-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված դանիական խոշորագույն գրող Մարտին Անդերսեն Նեքսեի ծննդյան 90-ամյակին։ Երեկոն բացում է Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Ս. Սողոմոնյանը։

Հունիս

Լույս է տեսնում հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության առաջին հատորը։

Հուլիսի 10-ին

«Գրական թերթը» (№ 28) հաղորդում է, որ Բուխարեստում Շ. Թեոդորիանու և Շ. Գասպամյանի թարգմանությամբ ռումիներեն լույս է տեսել «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն։

Հուլիսի 18-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հանդիսավոր պայմաններում Հայկական ՍՍՀ-ին հանձնվում է Լենինի շքանշան։

Հուլիսի 25-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված է. Հեմինգուեյի ծննդյան 60-ամյակին։ «Էռնեստ Հեմինգուեյի կյանքն ու ստեղծագործական ուղին» թեմայով զեկուցում է Է. Պետրոսյանը։

Հուլիս

ՀՍՍՀ Մինիստրների սովետի և ԳԱ նախագահության որոշմամբ պատմության ինստիտուտից անջատվում է մի բաժին (սեկտորը) և ստեղծվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտ։

«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 3

Օգոստոսի 16-ին

Բացվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության թանգարանը։

Օգոստոսի 31-ին

Նշվում է Յոհան Վոլֆգանգ Գյոթեի ծննդյան 210-ամյակը։ Գրողների տանը կազմակերպված նիստում զեկուցում է Ս. Սողոմոնյանը։

Սեպտեմբերի 4-ին

Լույս է տեսնում «Գրական թերթի» 1000-րդ համարը։ Այս առթիվ թերթը տպագրում է Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի գրողների միությունների ստացված ողջույնի հեռագրեր։

Սեպտեմբերի 12-ին

Երևանում հյուրընկալվող նշանավոր գրող ու հասարակական գործիչ Իլյա Էրենբուրգը գրողների տանը հանդիպում է ունենում հայ գրողների հետ։

Սեպտեմբերի 24—25-ը

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Մանուկ Աբեղյանի մահվան 15-ամյակին։ Բացման խոսք է ասում Ա. Ղանալանյանը։ Զեկուցումներ են կարդում Էդ. Աղայանը, Ա. Ղարիբյանը, Ս. Սարինյանը, Մ. Ավդալբեգյանը, Գ. Աբովը։

Սեպտեմբեր

Նշվում է Երվանդ Օտյանի ծննդյան 90-ամյակը.

Նշվում է Կոմիտասի ծննդյան 90-ամյակը։

Հոկտեմբերի 2-ին

«Գրական թերթը» (№ 40) հաղորդում է, որ Ակսել Բակունցի ծննդյան 60-ամյակը հոկտեմբերին նշելու համար կազմվել է կառավարական հոբելյանական հանձնաժողով՝ Ս. Աղաբաբյան, Վ. Ալազան, Մ. Արազի, Հ. Բաղդասարյան, Գ. Բալասանյան, Ստ. Զորյան, Էդ. Թոփչյան, Ս. Խանզադյան, Ա. Խաչատրյան, Գ. Հայրյան, Հր. Հովհաննիսյան, Գ. Հովնան, Հր. Մարգարյան, Գ. Մահարի, Ա. Շահինյան, Ս. Պայազատ, Հ. Սահյան, Գ. Սարյան, Գ. Սևունց, Լ. Ստեփանյան (նախագահ), Հր. Քոչար։

«Գրական թերթում» (№ 40) Մ. Աբեղյանի մահվան 15-ամյակի կապակցությամբ տպագրվում է Ավ. Իսահակյանի 1945 թ. սեպտեմբերին գրած անտիպ խոսքը։

Ավ. Իսահակյանի խոսքից

«...Մանուկ Աբեղյան։ Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով. անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի մարդ՝ մեր ապառաժների պես կայուն մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա. պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ։

Հավերժ սիրելի Մանուկ Աբեղյան. խորին հարգանքով և շնորհակալությամբ տոգորված են մեր սրտերը քո հանդեպ, որովհետև դու ավելի քան կես դար, առանց հուսահատվելու և հոգնելու, պրպտեցիր հայ ժողովրդի հոգեկան հազարամյա գանձերը՝ ֆոլկլոր, պատմություն, հին և միջին դարերի գրականություն և լեզու։

Քո անալիտիկ մտքի զարմանալի կարողությամբ, քո հզոր տրամաբանությամբ դրանցից ստեղծեցիր դիսցիպլիններ։ Ուր որ դիպավ քո տիտանական ձեռքը՝ լինի դա ֆոլկլոր, միֆոլոգիա, միջնադարյան տաղեր ու խաղեր, հայ լեզվի տեսություն, քերականություն, տաղաչափություն՝ նրանք դարձան անթերի, լրիվ, կատարյալ դիտություններ, դիսցիպլիններ։

«Սասմա ծռերի»՝ մեր հոյակապ դյուցազնավեպի առաջին գտնող-վերծանողներից մեկը եղար դու և մանավանդ նրա անզուգական ուսումնասիրող և գիտականորեն հետազոտող։

Բովանդակ հայությունը հարգում և պատկառում է քեզանից և քո մեծարժեք վաստակներից և քո՝ մեզնից հեռանալը համազգային վիշտ է։

Մենք խորապես զգում ենք, որ քո շնորհիվ մեր ազգային-հոգեկան միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»։

Հոկտեմբերի 8-ին

Էջմիածնում տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Հովհաննես Հովհաննիսյանի հուշարձանի բացմանը։ Այս առթիվ Ուկրաինայից ստացվում է Պ. Տիչինայի հեռագիրը։

Պ. Տիչինայի հեռագիրը

«Հայ մեծ բանաստեղծի արձանի հանդիսավոր բացման առթիվ իմ ուրախությունն եմ միացնում ձեր ուրախությանը։ Հովհաննիսյանը անդադար ամրապնդում էր հայ ժողովրդի բարեկամությունը Սովետական Միության ժողովուրդների և ամենից առաջ ռուս ժողովրդի հետ։ Ինձ մեծ բախտ է վիճակվել անձնապես ծանոթ լինել ձեր սիրելի բանաստեղծի հետ, Երևանում լինել նրա հյուրընկալ տանը։ Հովհաննիսյանի միջոցով ես ավելի սիրեցի Հայաստանը և ուշադիր կերպով հետևեցի հայ ժողովրդի նվաճումներին։ Ցանկանում եմ բանաստեղծի թանկագին հարազատներին, բարեկամներին և ծանոթներին, որոնք հավաքվել են նրա հիշատակը հարգելու, երջանկություն և առողջություն, միշտ բարձր պահել մեր սոցիալիստական կուլտուրայի դրոշը»։

«Գրական թերթ», № 41

Հոկտեմբերի 13-ին

Գրողների տանը տեղի է ունենում Աբիգ Ավագյանի «Նազելի Դալարյան» վիպակի քննարկումը։ Զեկուցում է Ս. Սարինյանը, ելույթ են ունենում Ս. Արզումանյանը, Ս. Յափուջյանը, Կ. Դանիելյանը, Ս. Շահիկյանը, Հր. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Հոկտեմբերի 23-ին

«Գրական թերթը» (№ 43) նվիրվում է Ակսել Բակունցի ծննդյան 60-ամյակին։ Համարում տպագրված են «Կենսական ճշմարտության ուժը» առաջնորդողը, Մ. Արազու «Նա միշտ կապրի ժողովրդի սրտում» հոդվածը, Գ. Մահարու «Ակսելյան քանդակները» և բազմաթիվ այլ նյութեր։

Հոկտեմբերի 24-ին

Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված սովետահայ գրող Ակսել Բակունցի ծննդյան 60-ամյակին։ Հանդիսավոր նիստը բացում է կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Լ. Ստեփանյանը։ Զեկուցում է Էդ. Թոփչյանը։ Վրաստանի գրողների անունից հանդես է գալիս Ա. Բելիաշվիլին, Ադրբեջանի գրողների անունից՝ Ջ. Մամեդովը։ Ողջույնի խոսք է ասում Ջուվաշիայի ժողովրդական բանաստեղծ Պ. Խուզանդայը։ Բակունցին նվիրված իր բանաստեղծությունն է կարդում ադրբեջանական պոետ-դրամատուրգ Իսլամ Սաֆարլին։ Ընթերցվում են բազմաթիվ հեռագրեր։

Էդ. Թոփչյանի զեկուցումից

«Ակսել Բակունցի գրական վաստակը հայ գրականության իսկական նվաճումներից մեկն է, նրա խոր ժողովրդայնության արտահայտությունը։

Օգտագործելով կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները, սերտորեն կապվելով կյանքի հետ, Բակունցը գեղարվեստորեն հայտնագործեց մի նոր իրականություն, իր ուրույն կյանքով ու մարդկանցով։

...Կարճատև եղավ Բակունցի գրական կյանքը, ընդամենը տասը տարի, բայց իր մեծ վաստակով նա դարձավ սովետահայ արձակի հիմնադիրներից մեկը, և Արազու, Դեմիրճյանի ու Ջորյանի հետ նոր աստիճանի բարձրացրեց հայ գրականությունը»։

«Գրական թերթ», № 45

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարության հեռագիրը

Թանկագին ընկերներ։ ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարությունը ամենասրտագին ողջույն է ուղարկում այսօր, երբ մենք, Հայկական ՍՍՀ բոլոր աշխատավորների հետ, նշում ենք հայ ժողովրդի հիանալի զավակ, ականավոր արձակագիր Ակսել Բակունցի ծննդյան 60 տարին։

Ակսել Բակունցը այն հայ գրողներից է, որոնք դրեցին սովետահայ գրականության հիմքի առաջին քարերը, որով և նա առանձնապես սիրելի է մեզ համար։ Նրա ստեղծագործությունները՝ պատմվածքները, նովելները, վեպերը վառ կերպով արտացոլում են սովետական իշխանություն հաստատելու համար հարազատ ժողովրդի մղած պայքարը և Հայաստանի աշխատավորության կյանքը հեղափոխությունից հետո տարիներին։

Հայաստանի գրողները, խոր ու ճշմարտացի կերպով իրենց երկերում պատկերելով տաղանդավոր ու աշխատավոր հայ ժողովրդի կյանքը և անշեղ կերպով ամրապնդելով սոցիալիստական եղբայրական ազգերի բարեկամությունը, շարունակում են ու զարգացնում Ակսել Բակունցի տրադիցիաները։

«Գրական թերթ», № 44

Ա. Բելիաշվիլու ելույթից

Հայ գրականության ականավոր ներկայացուցիչների մեջ, որոնց անմահությունը դարերով է հաշվում, արձակագիր Ակսել Բակունցը թերևս ամենաերիտասարդն է և նրա անմահությունը առայժմ ընդամենը 60 տարվա է։

...Հեռավոր և խոր արմատներ ունի մեր երկու ժողովուրդների բարեկամությունը։ Վրաց ժողովուրդը սիրով է ծանոթացել հայ գրականության ականավոր ներկայացուցիչների ստեղծագործությանը։ Բաֆֆու, Շիրվանզադեի, Թումանյանի, Սունդուկյանի, Չարենցի և վարպետ Ավետիք Իսահակյանի անունները հարգում են վրացիները այնպես, ինչպես Ակակի Ծերեթելու, Իլյա Ճավճավաձեի, Նիկոլոզ Բարաթաշվիլու, Վաժա Փշավելայի և Գալակտիոն Տաբիձեի անունները։

Ծնվել է Բակունցը Զանգեզուրի շրջանի Գորիս քաղաքում։ Ես չգիտեմ, այդ բնակավայրը նմա՞ն է արդյոք Արևմտյան Վրաստանի Սաչխերիի շրջանին, որտեղ ծնվել եմ ես և որտեղ իմ հայրենի գյուղի մոտ կա Գորիսա գյուղը, սակայն այդ երկու բնակավայրերի մեջ ես ընդհանուր ու մեզ հարստացնող շատ բան եմ գտնում։ Եվ այդ պատճառով չէ՞, արդյոք, որ Ակակի Ծերեթելու և Հովհաննես Թումանյանի, Ակսել Բակունցի և վրաց շատ արձակագիրների ստեղծագործությունը ընդհանուր շատ բան ունի։

«Գրական թերթ», № 44

Հոկտեմբերի 27-ին

Պետական անվտանգության կոմիտեի ակումբում տեղի է ունենում Երևանի միլիցիայի աշխատողների և սովետահայ գրողների հանդիպումը։ Գրողներից ելույթ են ունենում Հմ. Սիրասը, Գ. Բորյանը, Էդ. Թոփչյանը, իրենց բանաստեղծություններն են կարդում Ա. Գրաշին, Ս. Կապուտիկյանը, Ա. Սարոյանը, Սարմենը և ուրիշներ։

Նոյեմբերի սկզբներին

Նշվում է Ֆրիդրիխ Շիլլերի ծննդյան 200-ամյակը։

Նոյեմբերի 17-ին

Հայաստանի սովետական գրողների միության դահլիճում տեղի է ունենում Բ. Հովսեփյանի «Սևան» պատմվածքների ժողովածուի քննարկումը։ Զեկուցում է Պ. Սահակյանը, արտահայտվում են Էդ. Թոփչյանը, Ս. Կապուտիկյանը, Ա. Սահինյանը, Խ. Գյուլնազարյանը և ուրիշներ։

Նոյեմբերի 20-ին

Հայաստանի գիտությունների ակադեմիայում տեղի է ունենում հայ դասական բանաստեղծների ռուսերեն թարգմանություններին նվիրված երեկո։ «Հայ կլասիկ բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանության պրոբլեմը» թեմայով զեկուցում է Կամսար Գրիգորյանը (Լենինգրադ)։ Ելույթ են ունենում Խ. Սարգսյանը, Հր. Գրիգորյանը, Ա. Ինճիկյանը, Ա. Կարապետյանը, Ե. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը։

Դեկտեմբերի 3-ին

Երևանի կայարանամերձ հրապարակում տեղի է ունենում Սասունցի Դավթի արձանի (հեղինակ՝ Երվանդ Քոչար) հանդիսավոր բացումը։

Դեկտեմբերի 10—12-ը

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության երկրորդ պլենումը։ Լսվում են «Կյանքը և ժամանակակից դրամատուրգիան» (զեկ.՝ Գ. Բորյան), «Սովետահայ կինո-դրամատուրգիայի արդի վիճակը ու նրա զարգացման ուղիները» (զեկ.՝ Մ. Շաթիրյան) զեկուցումները։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Սուր. Հարությունյանը, Գ. Մելիք-Ավագյանը, Հր. Ղափլանյանը, Վ. Վարդանյանը, Լ. Հախվերդյանը, Ա. Բարսեղյանը, Ա. Շահինյանը, Խ. Ավագյանը, Մ. Արմենը, Ա. Հունանյանը, Էդ. Թոփչյանը, Մ. Պապավան (Մոսկվա), Մ. Դավթյանը, Ս. Ռիզաևը, Վ. Աճեմյանը, Լ. Սամվելյանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Լ. Գլազոլևան (Մոսկվա), Ա. Սալինսկին (ՍՍՀՄ գրողների միության վարչություն) և ուրիշներ։

Դեկտեմբերի 14-ին

«Գրական թերթը» (№ 50) հաղորդում է, որ Հելսինկիում ֆիններեն լույս է տեսել Ալ. Շիրվանզադեի «Քաոս» վեպը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ալիքյան Ա. — Կանաչ սոսափ
Աղասյան Վ. — Բանաստեղծություններ
Բաբայան Վ. — Մասրենի
Բանդուրյան Գ. — Ջրվեժի երգը
Գրաշի Ա. — Միածանի յոթ գույնը (ռուսերեն), Մոսկվա
Գուսան Սերոբ — Գուսանի քնարը
Դարբնի Ա. — Առակներ և սատիրական ոտանավորներ
Դարբնի Ա. — Փիսիկը կինոյում (ռուսերեն), Մոսկվա
Դարյան Ջ. — Գարնան աղմուկ
Դուրյան Լ. — Երբ ծառերը ծաղկում են
Ջարյան Ն. — Միհատորյակ
Թորոսյան Շ. — Շիրակի առավոտը
Լեյլի — Կարոտ
Կապուտիկյան Ս. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա.
Կապուտիկյան Ս. — Վարդաքարեր (ռուսերեն), Մոսկվա
Կարենց Վ. — Կակաչներ
Կորյուն Մ. — Մանկական երգեր
Միրիջանյան Լ. — Հեռու հեռուներից
Մուրադյան Ս. — Հասկեր
Շիրազ Հ. — Սիրանամե
Ջիվանի — Քնարը
Սահակյան Ա. — Սիրո հասակ
Սահյան Հ. — Նաիրյան դալար բարդի (ռուսերեն), Մոսկվա
Սարգսյան Մ. — Գեղակ
Սարմեն — Հարազատ լեռներ (ռուսերեն), Մոսկվա
Սարյան Գ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն)
Սևակ Պ. — Անլռելի զանգակատուն
Վեսպեր Մ. — Հրազդան

Արձակ

Այվազյան Ս. — Տուր ձեռքդ, կյանք
Անանյան Վ. — Լեռնային արահետներով (Հինդի լեզվով), Մոսկվա
Անանյան Վ. — Որսորդական պատմվածքներ
Անանյան Վ. — Սևանի ափին (ռուսերեն), Մոսկվա
Անանյան Վ. — Հովազաձորի գերիները (ադրբեջաներեն), Բաքու
Ասլանյան Լ. (Լաս) — Հարցականի ուղիներով
Ավետիսյան Ժ. — Ուր են տանում ճամփաները
Արազի Մ. — Իսրայել Օրի
Արմեն Մ. — Ոսկե հնձան
Բակունց Ա. — Եղբայրության ընկուզենիները
Գյուլնազարյան Խ. — Շարքերում

Դերմենջյան Գր. — Սև սքեմի տակ
Զեյթունցյան Պ. — Մեր թաղի ձայները
Զորյան Ստ.— Հայոց բերդը
Զորյան Ստ. — Հուշերի գիրք
Զորյան Ստ. — Պատմվածքներ (ռուսերեն), Մոսկվա
Թափալչյան Քր. — Անմար կրակներ
Թափալչյան Քր. — Ոսկե հովիտ (ռուսերեն), Մոսկվա
Լեռ Կամսար — Դրաբար մարդիկ
Խանզադյան Ս. — Իմ հարազատները և հարևանները (ռուսերեն), Մոսկվա
Խանզադյան Ս. — Քարանձավի բնակիչները
Խեչումյան Վ. — Գիրք պանդխտության
Ծառուկյան Ա. — Մանկություն չունեցող մարդիկ
Հուրունց Լ. — Հարարաղյան պոեմ (ռուսերեն)
Մահարի Գ. — Հին այգու պատմությունը (ռուսերեն), Մոսկվա
Մահարի Գ. — Հնձաններ
Նոր-Այր — Անտառի երգը
Պետրոսյան Վ. — Վերջին դիշերը
Ռշտունի Գ. — Մագիլների մեջ (գիրք 2)
Սիմոնյան Կ. — Կապարե մարդկանց գաղտնիքը
Ստեփանյան Ա. — Ամառնամուտ
Սուրենյան Կ. — Մաքուր ձեռքեր
Սևունց Գ. — Թեհրան (ռուսերեն), Մոսկվա
Ուլուբաբյան Բ. — Հայրենի հող
Փափազյան Վահրամ — Սրտիս պարտքը
Քոչար Հր. — Մեծ տան զավակները (ուկրաիներեն), Կիև
Քոչար Հր. — Մեծ տան զավակները (գիրք 1, 2)

Դրամատուրգիա

Բորյան Գ. — Նույն հարկի տակ (ռուսերեն), Մոսկվա
Ղարագուլյան Ա. — Գաղտնի գործիչ
Սարգսյան Ս. — Պիեսներ

ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1

Դասականներ

Աբովյան Խ. — Երկերի լիակատար ժողովածու, հ. 9
Աբովյան Խ. — Վերք Հայաստանի
Ադամյան Պ. — Նամակներ
Թումանյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 6
Թումանյան Հովհ. — Հատընտիր
Իսահակյան Ավ. — Երկեր, հ. 3, 4

Լեո — Գեղարվեստական երկեր
Հովհաննիսյան Հովհ. — Երկեր
Մանվելյան Միք. — Երկեր
Շիրվանզադե — Ջար ոգի (ռուսերեն), Մոսկվա
Շիրվանզադե — Երկերի ժողովածու, հ. 3, 4, 5, 6, 7
Շիրվանզադեի — Արտիստը
Պարոնյան Հ. — Քաղաքավարության վնասները
Սայաթ-Նովա — Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու
Տյուսաբ Ս. — Երկեր
Բաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 10
Բաֆֆի — Ոսկի աքաղաղ Խենթ (ռուսերեն), Մոսկվա
Բաֆֆի — Սամվել (ռուսերեն)
Փափազյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 4, 5

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Ակսել Բակունցի ստեղծագործությունը։ Հոդվածների ժողովածու
Աղաբաբյան Ս. — Գուրգեն Մահարի
Բաբայան Ս. — Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում
Բակունց Ս. — Գրականության մասին
Դաշտենց Խ. — Բայրոնը և հայերը
Գրիգորյան Ար. — Եղիշե Չարենցը Հոկտեմբերի երգիչ (ռուսերեն), Մոսկվա
Գրիգորյան Գր. — Հայ ժողովրդական հերոսական էպոսը
Գրիգորյան Հ. — Վալերի Բրյուսովը և հայ պոեզիան
Ջավարյան Միք. — Ուրվագծեր հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմության, 19—20-րդ դդ.
Թերզիբաշյան Վ. — Հայ դրամատուրգիայի պատմություն, 1768—1868
Թերզիբաշյան Վ. — Պետրոս Դուրյան
Լևոնյան Գ. — Հուշեր
Հատիսյան Գ. — Ռուբեն Սևակ
Հարությունյան Վ. — Թորոս Թորամանյան
Հովհաննիսյան Գ. — Նար-Դոս
Ղազարյան Հովհ. — Ազատ Վշտունի
Մանուկյան Ա. — Սմբատ Շահազիզ
Մանուկյան Ա. — Վահան Թոթովենց
Նալբանդյան Վ. — Եղիշե
Շիրվանզադեի ստեղծագործությունը (հոդվածների ժողովածու)
Շահիկյան Ս. — Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիան
Պետրոսյան Եղ. — Բաֆֆի
Ոսկերչյան Ա. — Ստեփան Շահումյանը և գրականության հարցերը (ռուսերեն), Մոսկվա
Սարգսյան Խ. — Նալբանդյանի գրական ստեղծագործությունը
Սարգսյան Ս. — Պետրոս Դուրյան

Սարյան Ս. — Սովետահայ արդի պատմվածքը
Վարդազարյան Ռ. — Գրականության մասին
Ֆեստիսով Մ. — Սովետական բազմազգ գրականության ստեղծագործական կապերի ուսումնասիրման պրոբլեմները

Թարգմանություն

Արագոն Լուի — Բանաստեղծություններ և պատմվածքներ
Բալզակ — Երկերի ժողովածու, հ. 7
Բունին Ի. — Պատմվածքներ
Դանթե — Աստվածային կատակերգություն։ Դրախտ
Դեֆո Դ. — Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանալի արկածները
Լոպե դե Վեգա — Սևիլիայի աստղը
Խայյամ Օմար — Քառյակներ
Խետագուրով Կ. — Օսեթական քնար
Կոլցով Ա. — Հատընտիր
Կորոլենկո Վ. — Ընտիր երկեր
Կուպեր Ֆ. — Վերջին մոհիկանը
Հազար ու մեկ գիշեր
Հայնե Հ. — Երկեր, հ. 2
Մայակովսկի Վ. — Վլադիմիր Իլյիչ Լենին
Չապեկ Կ. — Հեքիաթներ և ուրախ զրույցներ
Չուկովսկի Կ. — Հեքիաթներ
Պուշկին Ա. — Հեքիաթներ
Ջալիլ Մ. — Հատընտիր
Ջովանյոլի Ռ. — Սպարտակ
Սարոյան Վ. — Մարդկային կատակերգություն
Տագոր Ռ. — Գորա
Ուելս Հ. — Անտեսանելի մարդը
Օրբելիանի Ս. — Հնարանքի իմաստություն
Ֆլոբեր Գ. — Սալամբո
Ֆրանս Ա. — Կրինքբիլ

1960

Հունվարի 5-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում բանաստեղծների սեկցիայի նիստ՝ նվիրված երիտասարդ բանաստեղծների վերջին տարիներին լույս տեսած գրքերին։ Զեկուցում է Լ. Միրիջանյանը. ելույթ են ունենում էդ. Թոփչյանը, Ն. Միքայելյանը, Մ. Սարգսյանը, Վ. Գրիգորյանը, Ս. Վահունին և ուրիշներ։

Հունվարի սկզբներին

Նշվում է «Կռունկ հայոց-աշխարհին» ամսագրի 100 տարին։

Հունվարի 18—19-ին

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության ընդլայնված նիստը՝ նվիրված գրաքննադատության հարցերին։

Զեկուցում է Գ. Մարկովը։ Հայաստանից ելույթ է ունենում Ս. Աղաբաբյանը։

Հունվարի 20-ին

«Գրական թերթը» (№ 5) նշում է Ա. Պ. Չեխովի ծննդյան 100-ամյակը։ Տպագրվում են Ստ. Զորյանի «Արձակի փայլուն վարպետը», Մ. Արազու «Ռուս ժողովրդի մեծ արվեստագետը», Մ. Արմենի «Աշխարհի Չեխովը» հոդվածները և ուրիշ նյութեր։

Հունվարի 29-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Չեխովի ծննդյան 100-ամյակին։ Նիստը բաց է անում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Հր. Քոչարը։

Փետրվարի սկզբին

Թբիլիսիի պետհամալսարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված ռուս, ադրբեջանական, վրաց ու հայ ժողովուրդների գրական կապերին։ Հայաստանից զեկուցումներով հանդես են գալիս Ռ. Հովհաննիսյանը, Մ. Զավարյանը, Ա. Մարգարյանը։

Փետրվարի 10—12-ը

Տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի XXI համագումարը։ Համագումարում ելույթ է ունենում էդ. Թոփչյանը։

Փետրվարի 16—17-ը

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում արձակագիրների խորհրդի նիստը՝ նվիրված ժամանակակից պատմվածքին։ Զեկուցում է Լ. Հախ-

վերդյանը, ելույթ են ունենում Էդ. Թոփչյանը, Ա. Սահինյանը, Բ. Հովսեփյանը և ուրիշներ։

Փետրվարի 19-ին

Նշվում է Վ. Տերյանի ծննդյան 75-ամյակը։

Մարտի 2-ին

Հրապարակվում է ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության հրամանագիրը՝ Մ. Սարյանին ՍՍՀՄ ժողովրդական նկարչի պատվավոր կոչում շնորհելու մասին։

Մարտի 16-ին

«Գրական թերթը» (№ 12) հաղորդում է տպագրում Վ. Անանյանի չինարեն և ճապոներեն լույս տեսած գրքերի արձագանքների մասին։

Մարտի 25-ին

«Գրական թերթում» (№ 13) տպագրվում է Հրաչյա Քոչարի «Սրտերի գրույցը» վերնագրով բաց նամակը՝ ուղղված ֆրանսիացի նշանավոր գրող Լուի Արագոնին։

Մարտ

Ռումինիայում երկու շաբաթ հյուրընկալվում է սովետական գրողների պատվիրակությունը, որի կազմում՝ Գ. Բորյանը։

Ապրիլի 1-ին

Նշվում է Հրաչյա Քոչարի ծննդյան 50-ամյակը։ «Գրական թերթում» (№ 14) հրապարակվում են ՍՍՀՄ գրողների միության վարչության և ՀՍԳՄ վարչության ողջույնի խոսքերը։

ՍՍՀՄ գրողների միության վարչության ողջույնից

«Թանկագին Հրաչյա Քոչար.

Գրողների միության վարչությունը և Ձեր բարեկամները՝ Մոսկվայի գրողները, ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ Սովետական Հայաստանի ականավոր գրողներից մեկին, Ձեր հիսնամյակի առթիվ։

Դեռևս երեսնական թվականներին լույս տեսած Ձեր առաջին ստեղծագործությունները, հատկապես «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» վիպակը աշխույժ հետաքրքրություն առաջացրին Ձեր ստեղծագործության նկատմամբ, ինչպես և արժանացան ընթերցողների ճանաչմանը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Դուք, գտնվելով ռազմաճակատում, պատերազմի թարմ հետքերով գրեցիք մի շարք վառ պատմվածքներ ու ակնարկներ։ Մեծ ժողովրդականություն էին վայելում նաև սովետական հայրենասիրությամբ տոգորված Ձեր հրապարակախոսական հոդվածները։

Հայ գրականության մեջ արժեքավոր ավանդ հանդիսացավ Ձեր «Մեծ տան զավակները» վեպը, որտեղ տաղանդավոր կերպով պատկերված է սո-

վեհական մարդկանց հերոսական պայքարը իրենց ազատության և անկախության համար։

Մենք սիրում և հարգում ենք Ձեզ ոչ միայն որպես խոշոր գրողի, այլև հասարակական ակտիվ գործչի, զգայուն և սրտացավ ընկերոջ, երիտասարդ, գրողների անխոնջ դաստիարակի»։

Ապրիլի 12-ին

Գրողների միությունում տեղի է ունենում Գ. Մահարու «Հնձաններ» ժողովածուի քննարկումը։ Ձեկուցում է Գ. Հովսեփյանը, ելույթ են ունենում Գ. Էմինը, Ն. Զարյանը, Պ. Սևակը, Վ. Նորենցը, Ս. Վահունին և ուրիշներ։

Ապրիլի 22-ին

«Գրական թերթի» (№ 17) համարը ամբողջությամբ նվիրվում է Վ. Ի. Լենինի ծննդյան 90-ամյակին։

Գրականության բնագավառում լենինյան մրցանակներ են շնորհվում Մ. Ֆ. Ռիլսկուն («Վարդեր ու խաղող» և «Հեռավոր երկնակամարներ» բանաստեղծությունների գրքերի համար), Մ. Թուրսուն-Զադեին («Ասիայի ձայնը» բանաստեղծությունների ու պոեմների գրքի համար), Մ. Ա. Շոլոխովին («Հերկած խոպան» վեպի համար, I և II գրքեր)։

Ապրիլի 29-ին

«Գրական թերթը» (№ 18) էջ է նվիրում Ադրբեջանում սովետական իշխանության հաստատման 40-ամյակին։

Մայիսի 11-ին

«Սովետական Հայաստան» թերթը (№ 194) հաղորդում է, որ Բուենոս-Այրեսում լույս է տեսել «Հայ կյանք» սփյուռքահայ նոր շաբաթաթերթի առաջին համարը։

Մայիսի 13-ին

«Գրական թերթում» (№ 20) տպագրվում է Պ. Սևակի «Տերյանը պահանջում է...» հոդվածը։

Մայիսի 25—27-ը

Երևանում, ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում, տեղի է ունենում գրական կապերի և փոխադրեցությունների հարցերին նվիրված Անդրկովկասյան առաջին կոնֆերանսը։ Բացման խոսք է ասում Վ. Համբարձումյանը։ Ձեկուցում են Ի. Նեուպոկոևան, Գ. Լոմիձեն, Մ. Դաղաշզադեն, Շ. Սահակաձեն, Ս. Արեշյանը, Ա. Բարամիձեն, Գ. Արասլին, Ա. Գվախարիան, Մ. Արշարունին և ուրիշներ։

«Տեղեկագիր հասարակական գիտություններից», № 6

Մայիսի 30-ին

Գրողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված բանաստեղծներ Գևորգ Աֆրիկյանի, Իսահակ Իսահակյանի, Արտաշես Տեր-Մարտիրոսյանի

գործերին։ «Հայ պոեզիայի մոռացված էջերից» զեկուցումով հանդես է գալիս Աղասի Վարդանյանը։

Հունիսի 3-ին

«Գրական թերթը» (№ 23) տպագրում է վրաց նշանավոր գրող Կ. Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը» վեպի հայերեն թարգմանության առթիվ հեղինակի գրած առաջաբանը և Ս. Խանզադյանի «Հայրենասիրական վեպ» հոդվածը։

Հունիսի 10—11-ին

Նշվում է նկարիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 100-ամյակը։

Հուլիսի 9-ին

«Լիտերատուրնայա գազետայում» տպագրվում է Հր. Քոչարի «Լսելի մտորումներ» հոդվածը։

Օգոստոսի 8-ին

Հայֆիլհարմոնիայի ամառային թատրոնում տեղի է ունենում Երևանի ստեղծագործական ինտելիգենցիայի ակտիվի ժողովը։ Գրողներից ելույթ է ունենում Հր. Քոչարը։

Օգոստոսի 21-ին

Մեռավ դուստան Աշխույժը (ծնված 1883 թ.)։

Օգոստոսի 22-ին

Նշվում է սումինացի անվանի հայագետ Վլադ Բրնբոյանուի ծննդյան 60-ամյակը։

Սեպտեմբերի 14—22-ը

Երևանում հյուրընկալվում է Վիլյամ Սարոյանը։

Վիլյամ Սարոյանի խոսքից

«Ես երկրորդ անգամ է ինչ գտնվում եմ Սովետական Հայաստանում և Երևանում։ Առաջին անգամ ես Երևան եկա 1935 թվականին։ Այդ թվին էլ ծանոթացա հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի հետ։

Ես եղել եմ աշխարհի բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներում և հաստատապես կարող եմ պնդել, որ ոչ մի քաղաք քսանհինգ տարվա ընթացքում այնքան չի փոխվել և զարգացել, որքան Երևանը։ Պայծառ և անուշ քաղաք է Երևանը, քաղցր է Հայաստանի արևը, իսկ մեր հայերը շնորհալի են և աշխատասեր։

Ես հեռանում եմ Հայաստանից հոգով, մտքով բարձրացած և հարստացած։ Այստեղ ես տեսա հին, սակավաթիվ բարեկամներ, բայց ձեռք բերի նոր, բազմաթիվ բարեկամներ։

Ես եղա Մատենադարանում։ Դա իր արժեքով և նշանակությամբ կարող է պատիվ բերել ոչ միայն Հայաստանին։ Ես եղա Սունդուկյանի թատրոնում

և տեսա «Պաղտասար աղբարը»։ Պիտի ասեմ, որ այս ներկայացումը աշխարհի լավագույն ներկայացումներից մեկն է։

Ես եղա գրողների տանը և ծանոթացա բազմաթիվ ժամանակակից գրողների հետ, որի համար շատ ուրախ եմ։

Դուք հարցնում եք՝ նշանակություն ունեցա՞վ իմ Հայաստան գալը ստեղծագործական մղումի տեսակետից։ Պատասխանում եմ.— այո, ունեցավ։ Չեմ կասկածում, որ պիտի գրեմ Հայաստանի մասին մի շարք պատմվածքներ»։

«Գրական թերթ», № 39

Սեպտեմբերի 27-ին

Գրողների տան դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Դանիել Դեֆոյի ծննդյան 300-ամյակին։ Զեկուցում է Հովհ. Մամիկոնյանը։

Սեպտեմբեր

Հայպետհրատը լույս է ընծայում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը՝ Մ. Խերանյանի աշխարհաբար թարգմանությամբ։

Հոկտեմբերի 25-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում բացվում է ՍՍՀՄ-ի և Անդրկովկասի հանրապետությունների գիտությունների ակադեմիաների միացյալ նստաշրջանը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման 40-ամյակին։ Նստաշրջանի գրականության և լեզվի բաժանմունքի նիստերը տեղի են ունենում հոկտեմբերի 26—27-ին։ Լսվում են Ի. Անիսիմովի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և համաշխարհային գրականությունը», Ա. Կարինյանի «Գրականագիտությունը Սովետական Հայաստանում» և ուրիշ զեկուցումներ։

Նոյեմբերի 1-ին

Վախճանվեց թարգմանիչ, գրականագետ Հակոբ Սամսոնի Խաչատրյանցը (ծնվ. 1884 թ.)։

Նոյեմբերի 19-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության հոբելյանական պլենումը՝ նվիրված Սովետական Հայաստանի 40-ամյակին։ Պլենումը բացում է Էդ. Թոփչյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Ս. Կապուտիկյանը՝ պոեզիայի մասին, Ս. Աղաբաբյանը՝ արձակի, Գ. Բորյանը՝ դրամատուրգիայի։ Պլենումում ողջույնի խոսք են ասում Գ. Խոլոպովը (Լենինգրադ), Ալ. Զարիցկին (Բելոռուսիա), Ռ. Բաբաջանը (Ուզբեկստան), Ի. Նոնեշվիլին (Վրաստան), Ա. Աթաջանովը (Թուրքմենիա), Ռ. Ամոնովը (Տաջիկստան), ամերիկահայ գրող Կ. Սիտալը։

Նոյեմբերի 29-ին

Հանրապետությունում մեծ հանդիսավորությամբ նշվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմկուսակցության ստեղծման 40-ամյա հոբելյանը։

Դեկտեմբերի 18-ին

«Պրավդան» (№ 349) առաջնորդող է տպագրում՝ «Մեծ գրականություն՝ մանուկներին և պատանիներին» վերնագրով։

Դեկտեմբերի 21—22-ը

Մատենադարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված աղբյուրագիտության ու հնագիտության հարցերին։ Նստաշրջանը բացում է Լ. Խաչիկյանը։ Զեկուցում են Ֆ. Պողոսյանը, Լ. Խաչերյանը, Շ. Նազարյանը, Օ. Եղանյանը և ուրիշներ։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Գրաշի Ա. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Գրիգորյան Ս. — Ջինջ հորիզոններ (ադրբեջաներեն), Բաքու
Դավթյան Վ. — Լուսաբացը լեռներում (ռուսերեն), Մոսկվա
Զարյան Ն. — Ես տանն եմ (ռուսերեն), Մոսկվա
Զարյան Ն. — Սեր և գժություն
Թումանյան Հեղն. — Երգի ծնունդը
Կարապետյան Բ. — Լիրիկա և սատիրա (ռուսերեն), Մոսկվա
Հակոբյան Հ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Մոսկվա
Վահե Հալկ — Հայրենի ծխան
Հովհաննիսյան Հր. — Հրաշալի այգեպան (ռուսերեն), Մոսկվա
Մ. Մարգարյան — Լիրիկա (ռուսերեն), Մոսկվա
Մեսաքսե — Կնոջ սիրտը
Միքայելյան Ն. — Խոյանքներ
Նորենց Վ. — Պոեմներ
Շիրազ Հ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Մոսկվա
Շիրազ Հ. — Սիամանթո և խջեզարև (ռուսերեն)
Չարենց Ե. — Երկիր Նաիրի (ռուսերեն)
Չարենց Ե. — Պոեմներ և բալլադներ (ռուսերեն)
Պողոսյան Հռ. — Հարազատ մարդիկ (ռուսերեն), Մոսկվա
Սարմեն — Հայոց սիրտ
Սեակ Պ. — Մարդը ափի մեջ (ռուսերեն), Մոսկվա
Վշտունի Ա. — Երկեր, հ. 1
Տալյան Վ. — Վերադարձ
Տարոնցի Ս. — Ոսկեդար

Արձակ

Ալազան Վ. — Հյուսիսային աստղ (ռուսերեն)
Ալազան Վ. — Հուշեր
Աղավնի — Շիրակ (ռուսերեն), Մոսկվա
Անանյան Վ. — Հովազածորի գերիները (ուկրաիներեն), Կիև
Արազի — Վիպակներ և պատմվածքներ
Բեռ Գ. — Նովելներ
Դաշտենց Խ. — Խոդեղան
Դավթյան Մ. — Առաջին շիվը
Դարյան Զ. — Սայաթ-Նովա
Դեմիրճյան Դ. — Երկերի ժողովածու, հ. 7
Զարյան Ն. — Հայցավան
Զարյան Ն. — Հայցավան (ռուսերեն), Մոսկվա
Զորյան Ստ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Խանզադյան Ս. — Դեպք լեռներում (ռուսերեն), Մոսկվա
Հուրունց Լ. — Ես գինվորական փոստատար եմ (ռուսերեն), Մոսկվա
Ղուկասյան Անդ. — Հայրենի ավանդավեպեր
Շաթիրյան Մ. — Գարունը նորից եկավ
Շայրոն Ա. — Երկիր մոլորակի գաղտնիքները
Սիրաս Հմ. — Երկերի ժողովածու, հ. 3
Ստաֆֆի Բ. — Ստեփան Շահումյան
Սևունց Գ. — Գերիներ (ռուսերեն)
Սևունց Գ. — Թեհրան, գիրք 1, 2 (ադրբեջաներեն), Բաքու
Վեսպեր Մ. — Հորեղբոր սրինգ

Դրամատուրգիա

Բորյան Գ. — Երկու դրամա (ռուսերեն), Մոսկվա
Պապայան Ա. — Մեծ հարսանիք

Ժողովածուներ

Մաղկեփունջ։ Հայ ժողովրդական առակներ, ղրույցներ, խաղեր, առածներ ու հանելուկներ։
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1
Հուշարձան
Նրանք ընկան լուսաբացին
Սովետահայ գրականության ընտիր էջեր (արձակ)
Սովետահայ գրականության ընտիր էջեր (պոեզիա)
Սովետահայ գրականության ընտիր էջեր (ռուսերեն)

Դասականներ

Գրիգոր Նարեկացի — Մատյան ողբերգության
Թլկուրանցի Հովհաննես — Տաղեր
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր, հ. 1, 2 (ռուսերեն), Մոսկվա

Թումանյան Հով. — Կանաչ ախպեր (ուկրաիներեն), Կիև
Խաչատրյան Ա.վ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Մոսկվա
Մուրացան — Գևորգ Մարզպետունի
Մուրացան — Պատմվածքներ
Նար-Դոս — Աննա Սարոյան։ Սպանված աղավնի (ռուսերեն)
Նար-Դոս — Սպանված աղավնի (ռուսերեն), Մոսկվա
Շիրվանզադե — Նամուս (ադրբեջաներեն), Բաքու
Շիրվանզադե — Ընտիր երկեր (վրացերեն), Թբիլիսի
Պռոշյան Պ. — Հունոն
Տերյան Վ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա—Լենինգրադ
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 1
Բաֆֆի — Սամվել (ռուսերեն)
Օտյան Ե. — Երկերի ժողովածու, հ. 1

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Ալիխանյան Ս. — Վահան Տերյան
Արեշյան Ս. — Լև Տոլստոյ
Բեժանյան Ա. — Ալեքսանդր Ծատուրյան
Գրիգորյան Կ. — Սալտիկով Շչեդրին
Հակոբյան Թ. և Մելիք-Բախշյան Ս. — Ստեփանոս Օրբելյան
Հարությունյան Սարգիս — Հայ ժողովրդական հանելուկներ
Հարությունյան Ս. — Գաբրիել Սունդուկյան
Հովհաննիսյան Ռ. — Ռուս գրականության ուրվագծեր
Հովնան Գ. — Ռուս հայ գրական կապերը 19—20-րդ դարերում, գիրք 1
Մադոյան Գ. — Հակոբ Պարոնյան
Պայազատ Ս. — Ա. Պ. Չեխով
Դանիելյան Ս. — Լերմոնտովը և հայ մշակույթը
Սարգսյան Գ. — Սուրեն Սպանդարյանը հրապարակախոս-քննադատ
Սարգսյան Խ. — Ստեփան Զորյան (տասական թվականներ)
Սողոմոնյան Ս. — Արդի պոեզիայի մի քանի հարցեր
Տերտերյան Ա. — Երկեր

Թարգմանություն

Բալզակ — Երկերի ժողովածու, հ. 8, 9
Բոկաչչո— Դեկամերոն
Գամսախուրդիա Կ. — Վարպետաց վարպետի աջը
Գոգոլ Ն. Վ. — Մայիսյան գիշեր
Դրայզեր Թ. — «Հանճարը» հ. 1, 2, 3
Զվյագինցևա Վ. — Զմեռային ասող
Լուկրեցիոս — Իրեր բնության մասին

Կուպրին Ա. — Մենամարտը
Շոլոխով Մ. — Հերկած խոպան, գիրք 1 և 2
Զեխով Ա. — Երկեր, հ. 1
Պուշկին Ա. — Երկեր, հ. 5
Սենկևիչ Հ. — Հանյա
Վոյնիչ Է. — Բոռ
Տակակուրա Տ. — Խակոնեի ջուրը
Տոլստոյ Ալ. — Ակլիտա
Տուրգենև Ի. — Որսորդի հիշատակարանը։

1961

Հունվարի սկզբին

Նշվում է Ս. Վահունու ծննդյան 50-ամյակը։ «Գրական թերթում» (№ 2) հրապարակվում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության ողջույնը։

Նշվում է Ա. Դարբնու ծննդյան 50-ամյակը։ «Գրական թերթում» (№ 3) հրապարակվում է ՀՍԳՄ վարչության ողջույնը։

Հունվարի 13-ին

«Գրական թերթը» (№ 3) հաղորդում է, որ կորևերեն լույս է տեսել Գ. Էմինի «Խոսիր, Հայաստան», իսկ բուլղարերեն՝ Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների ժողովածուները։

Հունվարի 20-ին

Նշվում է Գ. Բեսի ծննդյան 50-ամյակը։

Հունվարի 25-ին

Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում նշվում է Երևանի պետական համալսարանի հիմնադրման քառասնամյակը։

Գրողների միության վարչության նիստում լսվում և քննարկվում են «Լիտերատուրնայա Արմենիա», «Սովետական գրականություն» ամսագրերի և «Գրական թերթի» խմբագիրներ Գ. Բորյանի, Վ. Մնացականյանի և Մ. Սարգսյանի զեկուցումները։

Հունվարի 27-ին

Նշվում է Պավլո Տիչինայի ծննդյան 70-ամյակը։ Այս առթիվ Հայաստանի սովետական գրողների միությունը ողջույնի խոսք է ուղղում Հոբելյարին։

ՀՍԳՄ վարչության ողջույնի խոսքից

«Հարգելի Պավել Գրիգորևիչ։

Մենք՝ Սովետական Հայաստանի գրողներս, ամբողջ հոգով շնորհավորում ենք Ձեզ՝ մեծ բանաստեղծին և մեր անկեղծ բարեկամին, Ձեր պանծալի յոթանասնամյակի օրը։

Հայ ժողովուրդը, որ վաղուց իր մայրենի լեզվով կարդում է Ձեր բանաստեղծությունները, ջերմորեն սիրում ու բարձր է գնահատում Ձեզ՝ սովետական բազմազգ գրականության կլասիկներից մեկին։

...Վաղ երիտասարդությունից Դուք ոչ միայն հայ բանաստեղծների սրտակից ու մտերիկ բարեկամն եք՝ սկսած ավագագույն լիրիկ Հովհաննես

Հովհաննիսյանից մինչև Հայաստանի այսօրվա երիտասարդ բանաստեղծները, այլև ամբողջ հայ գրականության մեծ բարեկամը։ Առաջին անգամ Ձեր շնորհիվ զմայլելի ուկրաինական լեզվով հնչեցին հայ կլասիկների՝ Գաբրիել Սունդուկյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և Հայաստանի ժամանակակից շատ բանաստեղծների երկերը։ Զուր չէ, որ մեր հայ ինտելիգենցիան Ձեզ սիրով անվանում է հայկական կուլտուրայի մշտական ներկայացուցիչը Ուկրաինայում և այսօր բոլոր եղբայրական ժողովուրդների հետ միասին նշում է Ձեր հոբելյանը՝ որպես իր հարազատ զավակի տոնը։

Թող երջանիկ ու բեղուն լինի Ձեր կյանքի երկրորդ յոթանասնամյակը, թանկագին մեր Պավլո Գրիգորևիչ»։

«Գրական թերթ», № 15

Հունվար

«Հայպետհրատը» լույս է ընծայում «Վրաց գրականության անթոլոգիան»։

Փետրվարի 2-ին

Վախճանվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին (ծնվ. 1887 թ.)։

Փետրվարի 4-ին

Ննդյան 60-ամյակի կապակցությամբ գրող Նաիրի Զարյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Փետրվարի 8-ին

Գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական խորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված Հովսեփ Օրբելու հիշատակին։ Զեկուցում է Ա. Ղանալանյանը։ Օրբելու հիշատակին նվիրված խոսք են ասում Գ. Հովնանը, Խ. Սարգսյանը, Հ. Ջնդին։

Փետրվարի 20-ին

Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում տեղի է ունենում Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի քննարկումը։ Ուսանողներ Ֆ. Պետրոսյանի, Մ. Սանթոյանի, Զ. Գրիգորյանի, Լ. Բազիկյանի, Ռ. Դավոյանի, Գ. Մանուկյանի և ուրիշների ելույթից հետո իրենց խոսքն են ասում քննարկմանը մասնակցող Հ. Սահյանը, Գ. Մահարին, Մ. Սարգսյանը։ Քննարկումն ամփոփում է Վ. Պարտիզունին։

Փետրվարի 21-ին

«Գրական թերթը» (№ 9) հաղորդում է, որ Փարիզում լույս տեսնող «Եվրոպա» ամսագրի վերջին հատուկ համարը ամբողջությամբ նվիրված է հայ գրականությանը։ Հանդեսում զետեղված են հին ու ժամանակակից երևելի հայ բանաստեղծների ու տասը արձակագիրների ստեղծագործություններ։

Փետրվար

«Սովետական գրականություն» ամսագիրը Սովետական Վրաստանի 40-ամյակի առթիվ տպագրում է Գ. Տաբիձեի, Մ. Մաճավարիանիի, Ս. Չիքովանու, Գ. Լեոնիձեի, Մ. Քվիլիվիձեի, Ս. Շանշիաշվիլու, Ա. Մաշաշվիլու ստեղծագործություններից։ Ակակի Ծերեթելու ծննդյան 120-ամյակի առթիվ տպագրված է Վ. Մնացականյանի «Աչքի լույս է բարեկամությունը» հոդվածը։ Վրաստանին ու վրաց գրականությանն են նվիրված այլ հոդվածներ ու բանաստեղծություններ։

Մարտի սկզբներին

Նշվում է Արամ Ինճիկյանի ծննդյան 50-ամյակը։

Մարտի 10-ին

Տ. Շևչենկոյի մահվան 100-ամյակի կապակցությամբ «Գրական թերթը» (№ 11) տպագրում է Գ. Սարյանի «Ուկրաինական ժողովրդի մեծ սիրտը» հոդվածը և բազմաթիվ այլ նյութեր։

Գ. Սարյանի հոդվածից

«Ուկրաինական ժողովրդի մեծ զավակ Տարաս Շևչենկոն աշխարհի այն խիզախ բանաստեղծներից մեկն է եղել, որ իր ամբողջ կյանքը, առանց մնացորդի, նվիրել է իր հայրենիքին, իր հարազատ ժողովրդի ազատության վեհ գործին։ Նա այն մարանչող բանաստեղծներից մեկն էր, որոնք իրենց գրիչը գործ են ածել իբրև զենք՝ իրենց ժողովրդին ստրկացնող, նրա ազգային արժանապատվությունը վիրավորող, նրա մայրենի լեզուն և պատմությունը ոտնահարող ամեն տեսակի բռնակալների, հարստահարիչների և օտարերկրյա նվաճողների դեմ։

Երբ կարդում ես Տարաս Շևչենկոյի բանաստեղծություններն ու պոեմները, զգում ես, որ նրանց յուրաքանչյուր տողի մեջ տրոփում է մեծ բանաստեղծի սիրտը։ Այդ սիրտը տրոփում է հարազատ Ուկրաինայի ազատության համար, իր սիրելի ժողովրդի երջանկության ու բախտավորության համար, այդ սիրտը համակվում է յուրաքանչյուր ուկրաինացու վշտերով ու տառապանքներով, ուրախություններով ու հաղթանակներով։

...Հարյուր տարի է անցել այն օրից, ինչ Ուկրաինայի հարազատ հողը իր գիրկն է առել իր մեծ զավակին, իր ազատաշունչ և անվեհեր բանաստեղծին։ Եվ այսօր ոչ միայն Ուկրաինայի, այլև աշխարհի բոլոր ժողովուրդները մեծագույն երախտագիտության զգացմունքով, «բարի և անդորր» խոսքով հիշում են ազատության մեծ կոչվարին՝ Տարաս Շևչենկոյին»։

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում հոբելյանական նիստ՝ նվիրված Տ. Շևչենկոյի մահվան 100-ամյակին։ Հանդիսավոր նիստը բաց է անում Էդ. Թոփչյանը, զեկուցում է Վ. Դավթյանը։

Ապրիլի 2-ին

«Պրավդայում» տպագրվում է «Մեր օրերի հերոսները գրականության և արվեստի հերոսներ են» առաջնորդող հոդվածը։

Ապրիլի 7-ին

Նշվում է Սարմենի ծննդյան 60-ամյակը։ Այս առթիվ ՀՍԳՄ վարչության ողջույնը տե՛ս «Գրական թերթում» (№ 15)։

Ապրիլի 12-ին

Իրագործվում է աշխարհում առաջին անգամ դեպի տիեզերական տարածություն, մարդու՝ Յուրի Ալեքսեևիչ Գագարինի, թռիչքը։

Ապրիլի 22-ին

Գրականության և արվեստի բնագավառում լենինյան մրցանակներ են շնորհվում գրողներ Ս. Ա. Պրոկոֆիևին, («Ճանապարհորդության հրավեր» գրքի համար), Մ. Ա. Ստելմախին («Հաց և աղ», «Մարդկային արյունը ջուր չէ», «Մեծ հարազատություն» եռագրության համար), Ա. Տ. Տվարդովսկուն («Հեռաստանից հեռաստան» պոեմի համար) և նկարիչ Մ. Ս. Սարյանին։

Ապրիլի 28-ին

Բարձր պարգևի՝ լենինյան մրցանակ ստանալու կապակցությամբ ՀՍԳՄ վարչությունը, «Գրական թերթի», «Սովետական գրականություն» և «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսների խմբագրությունները ողջույնի խոսք են հղում Մարտիրոս Սարյանին.

ՀՍԳ միության վարչության ողջույնի խոսքից

«Հայաստանի բնության անկրկնելի երգիչ, մեր սիրելի Մարտիրոս Սարյան.

...Ձեր շողշողուն արվեստը հարազատ և սիրելի է մեր ժողովրդին, որովհետև փայլուն զուգադիպությամբ նա իր մեջ միավորել է մեր հայրենի բազմերանգ բնաշխարհի բանաստեղծական հմայքը, ժողովրդի խորունկ հոգու ամենավեհն ու գեղեցիկը, ամենամարդկայինն ու ազնիվը։

Հայ ժողովրդի դարերի իմաստությունը և այսօրվա երջանկությունն է խտացել Ձեր արվեստում, Ձեր հիանալի կտավներում, կտավներ, որ դուրս եկան իրենց բնօրրանից և դարձան համամարդկային։

Դուք, հայ գեղանկարչության Կոմիտաս, եկաք Ձեր կախարդական վրձինով նկարչական արվեստում հայտնագործելու իրական, վերածնված մեր Հայաստանը, Դուք աշխարհի առջև կանգնեցրիք Ձեր ժամանակակից աշխատավոր, ստեղծագործ մարդուն և հիացած նրանով, հիացրիք ուրիշներին։

Մենք սիրում ենք Ձեզ, Ձեր արվեստը, գույնն ու նրանը, իմաստությունն ու վարպետությունը, Ձեր քաղաքացիությունն ու հայրենասիրությունը։ Երջանիկ են նրանք, ովքեր Ձեզ նման լավատես են, կենսասեր, մշտապես երիտասարդ, ամեն պահի պարտահատույց սեփական խղճի, ժողովրդի, դարերի առաջ։

Դրկում, համբուրում ենք Ձեզ, ցանկանում առողջություն և երկար կյանք, ստեղծագործական նորանոր հաջողություններ»։

«Գրական թերթ», № 15

Մայիսի սկզբին

Մեծ շուքով նշվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը։ Այս առթիվ «Սովետական Հայաստան», «Երևան» «Ավանգարդ» թերթերը, «Գրական թերթը» հոբելյանական համարներ են նվիրում նշանավոր տարեդարձին։ Մամուլում հանդես են գալիս անվանի արվեստագետներ, գրողներ, գիտնականներ։

Մարտիրոս Սարյանի խոսքից

«Արևը որքան էլ կենարար և գորովագութ, բայց յուրաքանչյուր ժողովուրդ պետք է հայրենիք ունենա՝ ի մի հավաքելու համար այդ ամենազոր լուսատուի ճառագայթները։ Քառասուն տարի առաջ հայ ժողովուրդը նվաճեց այդ իրավունքը։

Նրա զավակները հազարամյակներ շարունակ գոտեմարտում էին հանուն այն բանի, որ հնարավոր դառնա իրենց մայր հայրենիքի բարիքները, աղնիվ հոգին, խորաթափանց միտքը համայն մարդկության երջանկությանը ի սպաս դնելու գոնե նվազագույն հնարավորությունը։ Որքան զավակներ կորցրեց նա այդ գոտեմարտում, հանճարներ, որոնք չրացվեցին իրենց ողջ խորությամբ և գեղեցկությամբ, իրենց նվիրաբերեցին հարազատ օդի և ջրի պես անհրաժեշտ հայրենի հողի փրկությանը։

Քառասուն տարի առաջ հայ ժողովրդի լավագույն զավակները իրենց կյանքի գնով ստեղծեցին սովետական հայ պետականությունը՝ Հոկտեմբերյան հեղափոխության կենարար շողերի ներքո կյանքի կոչված ժողովուրդների ընտանիքում։ Աշխատավոր հայ ժողովուրդն իր հայրենիքը դարձրել է ադամանդի նման թանկարժեք ու գեղեցիկ։

Մենք՝ հայ ժողովրդի հոգևոր մշակույթը գոնե ինչ-որ երանգներով հարստացնելու սրբազան նպատակը մեր առջև, գրիչով և վրձինով կոչված ենք հղկելու այդ ադամանդը»։

Ստեփան Զորյանի խոսքից

«Սովետական Հայաստանը տոնում է իր կյանքի 40-ամյակը։ Քառասունամյակ... որքան բեղմնավոր եղավ այն մեր երկրի վերածնության համար։ Այդ 40 տարիների ընթացքում մեր ժողովուրդը հսկայի ճիգերով ու ջանքերով ոչ միայն բուժեց մեր հոշոտված հայրենիքի վերքերը, այլև ունեցավ իրոք աննախընթաց հաջողություններ՝ մեր կյանքի շատ ու շատ բնագավառներում։

...Սակայն ամենամեծ նվաճումը ինձ թվում է այն, որ մեր հին ազգը այսօր դարձել է երիտասարդ ժողովուրդ՝ իր ձգտումներով ու հոգեբանությամբ, և համարձակ մրցության է ելնում շատ ու շատ գործերով։

Խոսելով մեր նվաճումների մասին՝ մենք այսօր երախտագիտությամբ պիտի հիշենք նրանց, ովքեր նպաստեցին մեր երկրի վերածնության գործին և այժմ չկան, և նրանց, որ ընկան պատերազմի դաշտում, նաև նրանց, որ անձնազոհ եռանդով առաջ էին մղում մեր վերաշինությունը։

Փառք և պատիվ հայրենիքի բարօրության համար ընկածների և նահատակվածների հիշատակին։

Անմար եռանդ ու կորով հայրենիքի բարգավաճման համար մարտնչող հերոսներին»։

«Գրական թերթ», № 19

«Գրական թերթում» (№ 19) տպագրվում է Վիլյամ Սարոյանի 1960 թ. գրած «Հայրենիքը կաճի ու կծաղկի» խոսքը։

Վ. Սարոյանի խոսքը

«Սիրելի հայրենակիցներ և հայ զավակներ. աշխարհի բոլոր անկյունները, ուր որ ալ ըլլան, մեկ խոսքով՝ բոլոր հայ արյունը կրող մարդոց, որոնք անկասկած անսահմանորեն հպարտ են այսօր պատմական անուրանալի իրականության առջև, ուր կգտնվի մեր հայրենիքը 40 տարիներե ի վեր և ուր կապրին մեր ժողովուրդը, մեր եղբայրները և մեր հարազատ ընտանիքը.

Պետք է գիտնանք—և ինչո՞ւ չէ, նույնիսկ հպարտությամբ—թե՝ վերջին 40 տարիները՝ մասնավորաբար շատ ծանր էին, ինչպես մեզի՝ նույնպես ալ բոլոր մարդկության համար։ Սակայն հատկանշական էր պարագա մը. հայությունը այդ ժամանակաշրջանին՝ ոչ միայն անգամ մը ևս վերապրեցավ, այլև աներևակայելի հառաջադիմություններ ստեղծեց գիտության, գեղարվեստի, գյուղատնտեսության և մանավանդ ճարտարվեստի մեջ։

Անշուշտ, այս ամենը կատարվեցան չարաչար աշխատանքով, մեծ զոհողություններով և մանավանդ՝ հայու պողպատե կամքով։

Անշուշտ, մեր հայրենիքի սահմանները փոքր են, բայց ուրիշ շատ մը տեսակներով ան շատ մեծ է, սկսելով հայ գյուղականեն, տքնաջան աշխատողներեն մինչև գիտնականը կալալա գիտության ու գաղափարական աշխարհին մեջ։

Այս տարի, իմ առաջին այցելությունս չէ, որ տվի մեր սիրելի հայրենիքին։ 1935-ին էր, որ ես հոն գացի, և այս տարի՝ սեպտեմբերի վերջերը։

Ինչպե՞ս հպարտ չըլլայի բոլոր այն բաներուն համար, որ տեսա հայրենիքին մեջ։

Հայրենիքը կաճի ու կծաղկի օրե-օր։ Ի տես այս ամենուն՝ հայ մարդու սիրտը կատաքանա գոհունակությամբ և երջանկությամբ։

Անշուշտ մեր մեջ կան գաղափարական բաժանումներ և ինչո՞ւ չէ, նույնիսկ տարակարծություններ, և պետք է որ ըլլան։

Բան մը սակայն, որուն մեջ ոչ մեկ տարակարծություն ունինք, այն է, որ միակամ ենք և հպարտ, որ հայրենիք մը ունենք, կմտածենք մեկ մարդու պես, մեկ սիրտ, մեկ հոգի՝ այն ալ հայ ըլլալու մեր հպարտությունը և հայ հայրենիքի անսահման սերն է։ Ես Հայաստանի մեջ իմացա Ժողովրդական առած մը «Հայաստան՝ քարաստան»։ Ես ուրիշ տեսակ կթարգմանեմ այս առածը՝ «անքակտելի և անպարտելի ժողովուրդ»։

Հազար ապրի հայ ժողովուրդը և մեր ամենուն պաշտելի հայրենիքը, որ կկոչվի Հայաստան»։

Մայիսի 12-ին

«Գրական թերթի» համարը (№ 20) նվիրվում է Վրաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին։

Մայիսի 18-ին

Գրողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Ռաբինդրանաթ Տագորի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Ավ. Շահսուվարյանը։

Մայիսի 19-ին

Գրողների տանը տեղի է ունենում տարբեր ձեռնարկությունների կոմերիտական կազմակերպությունների քարտուղարների հանդիպումը գրողների հետ։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Ստ. Զորյանը, Ս. Խանզադյանը, իրենց բանաստեղծություններն են կարդում Ա. Դարբինին, Վ. Նորենցը, Մ. Սարգսյանը, Հր. Հովհաննիսյանը։

Մայիսի 21-ին

Մոսկվայի գրականության պետական թանգարանում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի ժողովրդական բանաստեղծ Հակոբ Հակոբյանի ծննդյան 95-ամյակին։ Զեկուցում է Գոսլիտիզդատի ՍՍՀՄ ազգությունների գրականության խմբագրության բաժնի վարիչ Ս. Դարոնյանը։ Հուշերով հանդես է գալիս հին բոլշևիկ Ս. Սահակունին։ Հ. Հակոբյանի բանաստեղծություններից արտասանում են թարգմանիչներ Պ. Ժելեզնովը, Վ. Զվյագինցևան, Վ. Պոտապովան, Ս. Շերվինսկին։

Մայիսի 22-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում մայրաքաղաքի հասարակությունը նշում է Նաիրի Զարյանի ծննդյան 60-ամյակը։ Հոբելյանական հանդիսավոր նիստը բացում է Հր. Մարգարյանը։ «Ն. Զարյանի կյանքն ու ստեղծագործությունը» զեկուցումով հանդես է գալիս Գ. Բորյանը։ Ողջույնի խոսք են ասում Պ. Նիլինը (ՍՍՀՄ գրողների միություն), Վ. Կոչեսկին (Ուկրաինա), Մ. Ռահիմը (Ադրբեջան), Հր. Հովհաննիսյանը, Վ. Աճեմյանը և ուրիշներ։ Ընթերցվում են հոբելյարի անունով ստացված շնորհավորական բազմաթիվ հեռագրեր։ Վերջում շնորհակալական խոսք է ասում Ն. Զարյանը։

ՍՍՀՄ գրողների միության ողջույնը

«Թանկագին Նաիրի Զարյան.

ՍՍՀՄ գրողների միության վարչությունը Ձեզ՝ սովետահայ նշանավոր գրողիդ, ջերմորեն ողջունում է Ձեր վաթսունամյակի օրը։

Դուք անցել եք մեծ և փառավոր ուղի։ Գրական ասպարեզ մտնելով հանրապետությունում սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին, Դուք դարձել եք նոր գրականության՝ սոցիալիստական ռեալիզմի գրականության հիմնադիրներից ու վարպետներից մեկը։ Ձեր բանաստեղծություններն ու պոեմները ներթափանցված են ժողովրդի, նրա ոգեշունչ ստեղծարար աշխատանքի նկատմամբ խոր սիրով։ Հատկապես ուզում ենք նշել «Մուշանի քարափը», «Ձայն հայրենական» հիանալի պոեմները և «Ակա Գեղեցիկ» ողբերգությունը, որոնք արտահայտում են հայ ժողովրդի հոգեկան լավագույն պոռթկումներն ու ձգտումները։

Դուք բեղմնավոր աշխատանք եք կատարում նաև արձակի ու դրամատուրգիայի բնագավառում։ Ձեր «Հայավան» վեպը, որը թարգմանված է շատ լեզուներով, բազմագդ սովետական գրականության խոշոր նվաճումն է։ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վեպում Դուք ստեղծել եք Հայաստանում սովետական իշխանության հաստատման նախօրյակին հայ ժողովրդի կյանքի ու պայքարի անմոռաց պատկերներ։ Ձեր «Վրեժ», «Աղբյուրի մոտ», «Փորձագաշտ» պիեսները մեծ հաջողությամբ են ներկայացվում հանրապետության թատրոններում։

Թանկագին Նաիրի Զարյան։ Մենք Ձեզ խորապես հարգում և սիրում ենք ոչ միայն որպես տաղանդավոր գրողի, այլև որպես ակտիվ հասարակական գործչի, կոմունիստի, խաղաղության անխոնջ մարտիկի։

Դուք Ձեր վաթսունամյակը դիմավորում եք ուժերով, եռանդով և ստեղծագործական մտահղացումներով լի։ Ձեր ընթերցողների լայն շրջանի հետ միասին ի սրտե Ձեզ նորանոր հաջողություններ ենք մաղթում՝ ի փառս մեր բազմազգ սովետական գրականության։

Ամուր սեղմում ենք Ձեր ձեռքը, թանկագին Նաիրի, Ձեզ մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, ուրախություն»։

«Գրական թերթ», № 22

Ն. Զարյանի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ ողջույնի հեռագրեր են ուղարկում եղբայրական բոլոր հանրապետությունների գրողների միությունները, գրողներ Ի. Էրենբուրգը, Ս. Մարշակը, Բ. Պոլևոյը, Մ. Շահինյանը, Մ. Ռիլսկին, Ա. Վենցլովան, Պ. Տիչինան, Ղ. Ղուլյամը, Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Մ. Հյուսեյնը, Ի. Աբաշիձեն, Ի. Սելվինսկին և ուրիշներ։

Հունիսի 5-ին

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Մարտիրոս Սարյանին լենինյան մրցանակի հանձնմանը և նկարչի ծննդյան 80-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։ Երեկոն բացում է հորելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ Լ. Ստեփանյանը։ Լենինյան մրցանակների կոմիտեի գիտական քարտուղար Ի. Վասիլևը, շնորհավորական խոսքից հետո, բուռն ծափահարությունների ներքո Մարտիրոս Սարյանի կրծքին ամրացնում է լենինյան մրցանակի գաղափարի կրծքանշանը և հանձնում դիպլոմը։ Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի ողջույնը։ Այնուհետև ողջույնի խոսք են ասում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Յու. Զավադսկին, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Շահինյանը, ՌՍՖՍՀ ժող. նկարիչ Ա. Ժուկովը, Վրաստանի կերպարվեստագետների միության նախագահ Ու. Զափարիձեն, Ստ. Զորյանը, Ա. Կարինյանը, Հայաստանի կերպարվեստագետների միության նախագահ Ռ. Պարսամյանը, ՍՍՀՄ նկարիչների միության անունից՝ Վ. Գորյաևը, ՍՍՀՄ ժող. արտիստուհի, Տ. Սաղանդարյանը և ուրիշներ։ Շնորհակալական խոսք է ասում Մ. Սարյանը։

Մ. Սարյանի խոսքից

«Տարիներ շարունակ իմ հոգին տանջել են մեր բազմաչարչար ժողովրդի տառապանքն ու վիշտը։ Բայց իմ ժողովուրդը ունեցավ նաև իր իսկական վի-

բածնունդը, որը սկսվեց 1920 թվականին։ Հասկանալու համար այդ վերածննդի իմաստը, հարկավոր էր տեսնել 1915 թվականը։ Ես երջանիկ եմ, որ այդ թվականներին իմ մոտիկ ընկերներն են եղել նոր հայ պետականության հիմնադիրներ՝ Ալ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը։

Այն պարգևը, որ այսօր ստացա ես, պատկանում է իմ ժողովրդին։

Իմ առաջին շնորհակալությունը ես հայտնում եմ իմ հնադարյան, տաղանդավոր հայ ժողովրդին։ Շնորհակալություն եմ հայտնում հարազատ կոմունիստական պարտիային ու մեր կառավարությանը, որոնք իմ ժողովրդին արժանացրին այդ բարձր պարգևին։ Շնորհակալություն Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմին իմ հանդեպ ցուցաբերած հոգատարության համար։

Շնորհակալություն Հայաստանի նկարիչների միությանը, որ միշտ պաշտպան է կանգնել իմ արվեստին։

Շնորհակալություն լենինյան մրցանակների կոմիտեին և նրա անդամներին, որոնք եկել են Երևան՝ լենինյան մրցանակ ինձ հանձնելու։

Եվ կրկին ու կրկին շնորհակալություն իմ ազնիվ ու շինարար, տաղանդավոր ու մեծ հայ ժողովրդին»։

«Գրական թերթ», № 24

Հունիսի 7-ին

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում Գարեգին Սեռունցի ծննդյան 50-ամյակին նվիրված երեկո։ Երեկոն բացում է հոբելյանական հանձնաժողովի նախագահ Գ. Բորյանը, զեկուցում է Ա. Բաբայանը։

Հունիսի 13-ին

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Վիսարիոն Բելինսկու ծննդյան 150-ամյակին։ Ներածական խոսք է ասում հոբելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ Հր. Մարգարյանը։ Բելինսկու կյանքի և գործունեության մասին զեկուցում է Ռ. Հովհաննիսյանը։

Հունիսի 16-ին

Մոսկվայում սկսվում են հայկական պոեզիայի երեկոները։ Սովետահայ բանաստեղծների առաջին հանդիպումը մոսկվացիների հետ տեղի է ունենում Լիխաչովի անվան ավտոգործարանում։ Գործարանի տարբեր ցեխերում իրենց բանաստեղծություններն են կարդում Գ. Սարյանը, Հ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Բորյանը, Հր. Հովհաննիսյանը, Ն. Զարյանը, Մ. Մարգարյանը, Ա. Գարբնին։ Ելույթներ են ունենում նաև թարգմանիչներ Վ. Ջվյագինցևան, Ե. Նիկոլաևսկայան, Էմ. Ալեքսանդրովան։ Այնուհետև կոնֆերանսդահլիճում Գ. Բորյանը ներկաներին պատմում է Հայաստանի ու նրա կուլտուրայի մասին։

Հունիսի 17-ին

Մոսկվայի գրողների կենտրոնական տանը տեղի է ունենում հայկական պոեզիայի երեկո՝ նվիրված Սովետական Հայաստանի 40-ամյակին։ Երեկոն բացում է Ս. Սարատակովը։ Ընդարձակ ելույթ է ունենում Հր. Հովհաննիսյանը։ Այնուհետև հայ բանաստեղծներն ու նրանց թարգմանիչները կարդում են

սովետահայ պոեզիայի նմուշներից։ Երեկոն ավարտվում է արվեստի հայ վարպետների համերգով։

Նույն օրը մի խումբ հայ բանաստեղծներ ելույթ են ունենում Կենտրոնական հեռուստատեսությամբ։

Հունիսի 18-ին

Մ. Գորկու անվան կուլտուրայի ու հանգստի զբոսայգու կենտրոնական էստրադայում ելույթ են ունենում հայ բանաստեղծները։

Հունիսի 23-ին

Նշվում է Գր. Զոհրապի ծննդյան 100-ամյակը։ Այս առթիվ «Գրական թերթը» (№ 26) տպագրում է Ալ. Շիրվանզադեի «Գրիգոր Զոհրապը» հուշագրական էսքիզը, Ստ. Կուրտիկյանի «Նորավեպի իշխանը», Վ. Դավթյանի «Ճիտին պարտքը», Ա. Կոստանյանի «Հզոր տաղանդը» հոդվածները։

Նշվում է Կոստանտին Գամսախուրդիայի ծննդյան 70-ամյակը։

Հունիս

Հայկական պոեզիայի օրերին մասնակցող սովետահայ բանաստեղծները հանդիպումներ են ունենում նաև Լենինգրադի և Յարոսլավլի արվեստասեր հասարակության հետ։

Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրվում է Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը։

Հուլիսի 1-ին

«Վիտերատուրնայա գազետա» թերթում տպագրվում է Պարույր Սևակի «Ծածկագրության ծածկանիշը» հոդվածը։

Հ ո դ վ ա ծ ի ց

«...Բանաստեղծ լինել և չունենալ ազգային պատկանելություն՝ անհնարին է, ինչպես հնարավոր չէ լինել լույսի ճառագայթ և չանդրադառնալ ջրում։ Բայց սովետական մարդն ամենից առաջ մարդ է, ապա միայն այս կամ այն ազգի ներկայացուցիչ։ Հոգևոր աշխարհում, ուրեմն և պոեզիայում ամեն տեսակի «տեղայնությունը» անբնական է։ Իսկական բանաստեղծը, թող որ նա ամբողջ կյանքը անցկացնի որևէ գյուղում, պետք է ապրի ամենուրեք։

Ճամփորդում են ոչ միայն մարդիկ, այլև բառերը։ Եվ հաճախ այնպես է լինում, որ մի լեզվից մյուս լեզվին անցնող բառը համահնչյուն է դառնում արդեն այդ լեզվում գոյություն ունեցող այլ բառի։ Այսպես են առաջացել երկված «թվանիշ» և «ծածկանիշ» բառերը։

Ես ուզում եմ բանաստեղծական ընկալմամբ օգտվել այս երկու բառերի իմաստային տարբերությունից։ Մարդկային կյանքը կատարյալ «ծածկագիր» է, և իսկական պոեզիան այն «ծածկանիշն» է, առանց որի ոչ միայն չի կա-

բելի հասկանալ այդ ծածկագիրը, այլև անհնարին է այն արտահայտել։ Իսկ «թվանիշը» խանգարում է մեզ։ Հաճախ մենք վազում ենք թվանշի ետևից (կատարված լինելը ցույց տվող նշանի ետևից)։ Սա առնվազն... անպարկեշտություն է։ Մենք չափազանց լե՞նք ծանրաբեռնում Մոսկվային և Լենինգրադին։ Ախր, փառք աստծո, Ռուսաստանը հարուստ է քաղաքներով, որտեղ նույնպես մեր բարեկամներն են ապրում, որոնց մենք անծանոթ ենք, և որոնք ուրախ կլինեին ծանոթանալ մեզ հետ...

Հայկական առած կա. «Մարդ չի նա, ով հյուր չի ընդունում և մարդ չի այն հյուրը, որ ժամանակին չի հեռանում»։ Խոնարհ ողջույն մեզ ջերմորեն ընդունող ռուսական փառապանծ քաղաքներին։ Իսկ մենք հույսով ենք, որ մեզ էլ բարի կհիշեն այնտեղ»։

«Գրական թերթ», № 28

Հուլիսի 7-ին

«Գրական թերթում» (№ 28) տպագրվում է հայկական պոեզիայի երեկոների մասնակիցների «Մեր շնորհակալությունը» խոսքը։

Խոսքից

«Ավարտվեցին սովետահայ պոեզիայի երեկոները ՌՍՖՍՌ քաղաքներում։ Հայ բանաստեղծներն ու արտիստները բազմաթիվ հանդիպումներ ունեցան աշխատավորների հետ, ելույթներ ունեցան գործարաններում, ուսումնական հաստատություններում, զինվորական մասերում, կուլտուրայի ու հանգստի պարկերում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ։

Աշխարհում շատ են գեղեցիկ ճանապարհները։ Բայց, ինչպես ասում է ժողովրդական իմաստությունը, ամենալավ ճանապարհն այն է, որ ձգվում է սրտից սիրտ։ Ահա հենց այդ ճանապարհով մենք եկանք մեր ռուս եղբայրների մոտ և այդ նույն ճանապարհով վերադառնում ենք տուն։ Մենք տանում ենք մեզ հետ ռուսական դաշտերի ու ռուսական սրտի լայնությունը, անմոռանալի հանդիպումների ջերմությունը։

Խորապես շնորհակալ ենք ձեզանից, թանկագին բարեկամներ, մեր ռուս ընկերներ, ուշադրության, հյուրընկալության համար, որը հզոր խթան կհանդիսանա մեզանից յուրաքանչյուրի ստեղծագործական կյանքում»։

Նշվում է Հովհաննես Մալխասյանի ծննդյան 95 և մահվան 30-ամյակը։ Այս առթիվ գրողի ծննդավայր Ախալքալաքի Կիրովի անվան կուլտուրայի տանը տեղի է ունենում գրական երեկո։

Հուլիսի 12-ին

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում «Սովետական գրականություն» ամսագրի 1961 թ. № 4-ում տպագրած Հր. Մաթևոսյանի «Ահնիձոր» ակնարկի առթիվ՝ «Սովետական գրականության» ամսագրի թույլ տված քաղաքական կոպիտ սխալի մասին»։ Ձևկուցումով հանդես է գալիս ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը։ Ելույթ են ունենում՝ Վ. Ամարյանը, Ս. Այվազյանը, Ա. Վարդանյանը, Ա. Լուսենցը, Էդ. Թոփչյանը,

Մ. Սարգսյանը, Ա. Արաքսմանյանը, Հր. Քոչարը, Ս. Խանզադյանը, Ս. Աղաբաբյանը, Վ. Մնացականյանը, Ստ. Այլաջջյանը, Ն. Զարյանը։

«Գրական թերթ», № 29

Նշվում է վրաց գրականության կլասիկ Վաժա Փշավելայի ծննդյան 100-ամյակը։

Հուլիսի 14-ին

«Գրական թերթում» (№ 23) տպագրվում է Հայաստանի գրողների միության վարչությանը ուղղված հեռագիր, ուր ասված է.

«Թանկագին ընկերներ.

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարությունը սրտագին շնորհակալություն է հայտնում Հայաստանի գրողների միության վարչությանը՝ մի խումբ հայ գրողների Մոսկվա, Լենինգրադ և Յարոսլավլ ուղարկելու և հայ պոեզիայի երեկոներ անցկացնելու համար։

Հայ պոեզիայի երեկոները նպաստեցին մեր եղբայրական գրականությունների ստեղծագործական կապերի հետագա ամրապնդմանն ու Սովետական Միության ժողովուրդների անխախտ բարեկամությանը։

Հայ գրողների՝ Նաիրի Զարյանի, Գեղամ Սարյանի, Էդվարդ Թոփչյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Էմինի, Մարո Մարգարյանի, Համո Սահյանի, Աշոտ Գրաշու, Պարույր Սևակի, Արշավիր Դարբնու, Գուրգեն Բորյանի, Սալոմե Արեշյանի, Սերո Խանզադյանի, Հակոբ Սալախյանի և Գրիգոր Մանասյանի ելույթները Մոսկվայի, Յարոսլավլի ու Լենինգրադի գրողների, ինտելիգենցիայի, գործարանների բանվորների, զինծառայողների և ուսանողության հետ ունեցած հանդիպումներում անցան մեծ հաջողությամբ և արժանացան այդ երեք քաղաքների աշխատավորների ջերմ երախտագիտությանը։

Խորապես ու սրտագին շնորհակալ ենք ձեզանից, թանկագին ընկերներ։ Ամբողջ հոգով ցանկանում եմ ձեզ, մեր սիրելի եղբայրներ, ստեղծագործական նոր հաջողություններ։

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարության հանձնարարությամբ՝ ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Կ. Վորոնկով»։

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում բեմադրվում է Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը։

Հուլիսի 24-ին

Երևան են ժամանում հնդիկ գրողներ Գուրբակիշ Սինգհը և Նավրեջ Սինգհը։

Օգոստոսի 12-ին

ՍՍՀՄ Մինիստրների սովետը հավանություն է տալիս Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ու ՀՍՍՀ Մինիստրների սովետի առաջարկությանը և որոշում ընդունում «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ շուռ տալու միջոցառումների մասին»։

«Գրական թերթ», № 36

Օգոստոսի կեսերին

Սրբանում մի քանի օր հյուրընկալվում է ֆրանսիական նշանավոր գրող, «Եվրոպա» ամսագրի քարտուղար Պյեր Գամարան։

Սեպտեմբերի 1-ին

«Գրական թերթը» (№ 36) հաղորդում է, որ Նյու-Յորքում անգլերեն լույս է տեսել Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթը»՝ Կալիֆորնիայի համալսարանի համեմատական գրականությունների ամբիոնի դասախոս, դոկտ. Արամ Թոլեդյանի թարգմանությամբ։

Սեպտեմբերի 15-ին

Նշվում է Աղասի Վարդանյանի ծննդյան 70-ամյակը։ «Գրական թերթում» (№ 38) հրապարակվում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության ողջույնը հոբելյարին։

Սեպտեմբերի 21—23-ը

Տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարը։ Համագումարում ելույթ է ունենում էդ. Թոփչյանը։

Սեպտեմբերի 26-ին

Երևան է ժամանում լեհ գրողների պատվիրակությունը՝ Ադոլֆ Ռուդնիցկի, Եժին Պիոլյակովսկի, Կոռնել Ֆիլիպովիչ, Իգոր Սիկիրսկի, Լեոն Պշեմսկի, Զեմոմիտ Ֆեդեցկի։

Հոկտեմբերի 5-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության կուսկազմակերպության ժողովը՝ նվիրված ՀԿԿ XXII համագումարի արդյունքներին և գրականության խնդիրներին։ Զեկուցում է Հր. Քոչարը, արտահայտվում են՝ Ն. Զարյանը, Հ. Սիրասը, էդ. Թոփչյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Նորենցը, Պ. Սևակը։

Հոկտեմբերի սկզբներին

Նշվում է Արամաշոտ Պապայանի ծննդյան 50-ամյակը։

Հայաստանի սովետական գրողների միության նախագահությունը կազմակերպում է երիտասարդ գրողների հետ աշխատող հանձնաժողով հետևյալ կազմով. Հր. Քոչար (նախագահ), Գ. Սարյան, Հր. Հովհաննիսյան, Հր. Թամրազյան, Մ. Ասատրյան, Կ. Սիմոնյան, Բ. Հովսեփյան (քարտուղար)։ Կազմվում է նաև արձակագրության գրականության հանձնաժողով՝ Ս. Կապուտիկյան (նախագահ), Հր. Քոչար, Ն. Զարյան, Վ. Նորենց, Գ. Մահարի, Ս. Տա[illegible], [illegible], Հր. Գրիգորյան, Ստ. Կուրտիկյան (քարտուղար)։

«Գրական թերթ», № 42

Հոկտեմբերի 17—31-ը

Մոսկվայում տեղի է ունենում Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXII համագումարը։ Գրողներից համագումարում ելույթ են ունենում Մ. Շոլոխովը, Ա. Տվարդովսկին։

Հոկտեմբերի 31-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Ավ. Իսահակյանի հիշատակին։ Ներածական խոսք է ասում Հր. Քոչարը։

Նոյեմբերի 6-ին

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանը (ծնվ. 1895 թ.)։

«Գրական թերթում» տպագրվում է մի խումբ գրողների հրաժեշտի խոսքը։

«Չկա այլևս սովետահայ թատրոնի և կինոյի մեծատաղանդ արտիստ Հրաչյա Ներսիսյանը։ Ծանր և մեծ է կորուստը, դժվար բոլոր նրանց համար ովքեր երբեք բախտ են ունեցել տեսնել ու ճանաչել նրան։

Սովետական Հայաստանի թատրոնի և կինոյի ողջ պատմության մեջ, այդ պատմության ընթացքում ձեռք բերած քիչ թե շատ նշանակալից հաջողություններում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանը թողել է իր անջնջելի հետքը։ Նրան ճանաչել և սիրել են Միության բոլոր ռեսպուբլիկաներում և այդ բովանդակ սահմաններից էլ շատ հեռու։ Նա պատկանում էր սովետական մեծ արտիստների ընտանիքին, այն շատերից քչերի թվին, ովքեր բեմ են հանել և անմահացրել սովետական ու դասական դրամատուրգիայի լավագույն կերպարները։ Եվ անմոռանալի մեր Հրաչյայի խաղով բեմի և էկրանի վրա հավասար շքեղությամբ են փայլել այդ կերպարները։ Ահա ինչու ամեն անգամ մենք հպարտացել ենք մեր արտիստի շողշողուն խաղով, նրա յուրաքանչյուր ցնցող հաջողությամբ։ Նա կենդանացրել է իր ժողովրդին և առհասարակ մարդկությունը, հարազատը, այն, ինչ ծնունդ է առնում թրթռուն կյանքից և գալիս է հասատանելու կյանքը։

Մեծ է կորուստը, մեծ է վիշտը, սակայն այդ մեծ վշտի հետ մենք մեր սրտերում մշտապես կպահենք սիրելի արտիստի լուսեղ հայացքը։ Մենք չենք մոռանա քեզ, սիրելի Հրաչյա, որովհետև դու հաղվագյուտ բարեկամը եղար բոլոր բարձր արվեստների, գրականության և իսկական կենդանի կյանքի։

Վ. Ալազան, Ադավնի, Վ. Անանյան, Մ. Աբազի, Ա. Աբրահամանյան, Մ. Արմեն, Գ. Բորյան, Վ. Դավթյան, Ա. Դարբնի, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Գ. Էմին, Էդ. Թոփչյան, Ս. Խանզադյան, Ս. Կապուտիկյան, Հր. Հովհաննիսյան, Գ. Մահարի, Մ. Մարգարյան, Վ. Նորենց, Ա. Սահինյան, Հ. Սահյան, Պ. Սևակ, Գ. Սեւունց, Հմ. Սիրաս, Ս. Վահունի, Գր. Տեր-Գրիգորյան, Հր. Քոչար»։

«Գրական թերթ», № 46

Նոյեմբերի սկզբներին

Գրողների տանը քննարկվում է Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» ժողովածուն։ Զեկուցում է Պարույր Սևակը, արտահայտվում են Ն. Զարյանը, Ս. Սարինյանը, Հր. Թամրազյանը, Գ. Էմինը, Վ. Դավթյանը, Լ. Հախվերդյանը, Խ. Եսայանը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը։

Նոյեմբերի 17-ին

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում մեծարման երեկո՝ նվիրված ամերիկահայ բանաստեղծ Կարապետ Սիտալի ծննդյան 70-ամյակին։ Ներածական խոսք է ասում Էդ. Թոփչյանը, զեկուցում է Հր. Գրիգորյանը։ Հոբելյարին ողջունում են Հմ. Սիրասը, Ստ. Կուրտիկյանը, Հ. Ջնդին և ուրիշներ։ Շնորհակալական խոսք է ասում Կ. Սիտալը։

Նոյեմբերի 20-ին

Սովետական Ուզբեկստանում սկսվում է հայ գրականության և արվեստի շաբաթը։ Տաշքենդ են ժամանում Էդ. Թոփչյանը, Գ. Սևունցը, Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Սահյանը, Պ. Սևակը, Ս. Հարությունյանը, Հր. Հովհաննիսյանը, Գր. Տեր-Գրիգորյանը, Ա. Սարոյանը։

Նոյեմբերի 21-ին

Տաշքենդի Ալիշեր Նավոիի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի շաբաթի հանդիսավոր բացումը։ Երեկոն բացում է Ուզբեկստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Քամիլ Յաշենը։ Ողջույնի պատասխան խոսք է ասում Էդ. Թոփչյանը՝ Ուզբեկստանի գրողներին նվիրելով ուզբեկ գրողների գործերի հայերեն հրատարակությունները։ Ուզբեկստանի գրողների միության վարչության քարտուղար Ռամս Բաբաջանը որպես փոխադարձ նվեր հյուրերին է հանձնում հայ գրողների ստեղծագործությունների ուզբեկերեն թարգմանությունները։

Սովետահայ գրականության մասին զեկուցում է Հր. Հովհաննիսյանը։ Իրենց կատարած թարգմանությունների ընթերցումով հանդես են գալիս Գ. Սևունցը, Ս. Հարությունյանը, Վր. Բալասանը, Հ. Սահյանը, Ղ. Ղուլյամը։

Նոյեմբերի 22—26-ը

Շարունակվում է հայ գրականության և արվեստի շաբաթը Ուզբեկստանում։ Հայ գրողները լինում են Սամարղանդում, Ֆերգանայի հովտում, Մարգելանում և Ուզբեկստանի այլ վայրերում։ Նրանք զեկուցումներ են կարդում հայ գրականության ու մշակույթի մասին, ընթերցում իրենց ստեղծագործություններից ու թարգմանություններից, հաստատում բարեկամական ջերմ կապեր։

Նոյեմբերի 27-ին

Տաշքենդի Նիզամիի անվան մանկավարժական ինստիտուտի դահլիճում տեղի է ունենում հայ գրականության և արվեստի շաբաթի եզրափակիչ երեկոն։ Շաբաթի արդյունքները ամփոփում է Ուզբեկստանի ԳՄ վարչության քարտուղար Համիդ Գուլյամը։ Շնորհակալական խոսք է ասում Գ. Տեր-Գրի-

գորյանը։ Իրենց բանաստեղծություններն են կարդում Հ. Սահյանը, Ա. Սարոյանը, Ս. Կապուտիկյանը։

Հ. Գուլյամի խոսքից

Հայ գրականության դանձարանը էլ ավելի խոր թափանցելու գործում մեզ օգնեց ռուսաց մեծ լեզուն, Լենինի լեզուն, այն լեզուն, որը ազգային կուլտուրաների հաջողությունները դարձնում է սովետական համերաշխ ընտանիքի բոլոր ժողովուրդների սեփականությունը։ Ուզբեկստանի հողում Հայաստանի կուլտուրայի գործիչների գտնվելն էլ ավելի ամրապնդեց երկու ժողովուրդների բարեկամությունը։

«Գրական թերթ», № 49

Նոյեմբերի 29-ին

Վախճանվեց երգիծաբան Էդուարդ Խոճիկը (ծնվ. 1900 թ.)։

Դեկտեմբերի 1-ին

«Գրական թերթը» (№ 49) հաղորդում է, որ Սահակ Քեշիշյանի թարգմանությամբ Փարիզում, 1961 թ., ֆրանսերեն, առաջին անգամ ամբողջությամբ լույս է տեսել Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը։

Դեկտեմբերի 8-ին

«Գրական թերթը» (№ 51) հաղորդում է, որ Լավվիայի պետական հրատարակչությունը լատիշերեն լույս է ընծայել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը։

Դեկտեմբերի 15—16-ը

Մատենադարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Նաղաշ Հովնաթանի ծննդյան 300-ամյակին։ Բացման խոսք է ասում Լ. Խաչիկյանը, լսվում են Շ. Նազարյանի «Նաղաշ Հովնաթանի կյանքն ու գրական ժառանգությունը», Գ. Սևակի «Նաղաշ Հովնաթանի լեզուն», Ա. Մնացականյանի «Նաղաշ Հովնաթանի տաղարանները», Մ. Սարգսյանի «Նաղաշ Հովնաթանը և հովնաթանյանների նկարչական դպրոցը», Մ. Ավդալբեգյանի «Հայ նոր գրականության նախանշանները 16—17-րդ դդ. տաղերգության մեջ և Նաղաշ Հովնաթանը», Հ. Սահակյանի «Նաղաշ Հովնաթանը և աշուղական պոեզիան» զեկուցումները։

Նշվում է Աշոտ Գրաշու ծննդյան 50-ամյակը։ Հրապարակվում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության ողջույնը (տե՛ս «Գրական թերթ», № 52)։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Դավթյան Վ. — Թոնդրակեցիներ
Գրաշի Ա. — Միածանի յոթ երգը

Գրիգորյան Ք. — Սրջանկության ճանապարհին
Խաչունց Ալ. — Կանաչ արահետ
Խնկո Ապեր — Ընտիր էջեր
Կապուտիկյան Ս. — Հեռավոր ճամփաներին (ադրբեջաներեն), Բաքու
Կապուտիկյան Ս. — Մտորումներ ճանապարհի կեսին
Հակոբյան Հ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն) Լենինգրադ
Հայրապետյան Հ. — Բալիկների համար
Հարությունյան Ս. — Սրտի արահետով (ռուսերեն), Մոսկվա
Սարմեն — Բանաստեղծի աղբյուրը
Վշտունի Ա. — Երկեր, հ. 2
Քարամյան Մ. — Հայրենիքի ճամփաներում

Արձակ

Անանյան Վ. — Հովազաձորի գերիները (ռուսերեն), Մոսկվա
Անանյան Վ. — Սևանի ափին
Արազի Մ. — Իսրայել Օրի
Արագի Մ. — Վիպակներ և պատմվածքներ (ռուսերեն), Մոսկվա
Արմեն Մ. — Հեղնար աղբյուր
Դաշտենց Խ. — Խոդեղան (ռուսերեն)
Դեմիրճյան Դ. — Վարդանանք (ռուսերեն), Մոսկվա
Զարյան Ն. — Պարոն Պետրոսն ու իր նախարարները (ռուսերեն), Մոսկվա
Զորյան Ստ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Զորյան Ստ. — Մի կյանքի պատմություն (ռուսերեն), Մոսկվա
Զեյթունցյան Պ. — Տարբեր թաղի մարդիկ (ռուսերեն), Մոսկվա
Խանզադյան Ս. — Մխիթար սպարապետ
Սիմոնյան Կ. — Թափառող մոլորակը
Սիրաս Հմ. — Երկերի ժողովածու, հ. 4
Քոչար Հր. — Մայրը (ռուսերեն), Մոսկվա

Դրամատուրգիա

Արաքսմանյան Ալ. — Երկունք
Բեռ Գ. — Աշխարհը սկսվում է ինձանով (ռուսերեն), Մոսկվա
Սաղաթելյան Լ. — Դրամատիկական երկեր

Ժողովածուներ

Ամբողջ սրտով
Հայ աշուղներ (17—18-րդ դդ.)
Հայ ժողովրդական պանդխտության երգեր
Հայ ռևոլյուցիոն պոեզիան (1900—1920 թթ.)
Սրտի խոսք
Ուսանողի քնար
Փունջ։ Սովետահայ մանկական գրականություն

Դասականներ

Աբովյան Խ. — Երկերի լիակատար ժողովածու, հ. 10
Աբովյան Խ. — Վերք Հայաստանի (լատիշերեն), Ռիգա
Առանձար — Վշտի ծիծաղ
Բաբկենց (Գաբրիել Մնացականյան) — Նորեկ
Թումանյան Հովհ. — Գիքոր (ուկրաիներեն), Կիև
Սերենց — Երկունք Թ դարու (ռուսերեն)
Մուրացան — Նոյի ապառավը (ռուսերեն), Մոսկվա
Մուրացան — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Շահազիզ Ս. — Երկեր
Շիրվանզադե — Երկերի ժողովածու, հ. 8, 9
Շիրվանզադե — Քաոս (ուկրաիներեն), Կիև
Պարոնյան Հ. — Մեծապատիվ մուրացկաններ
Պեշիկթաշլյան Մ. — Տաղեր
Սասունցի Դավիթ
Սունդուկյան Գ. — Երկերի լիակատար ժողովածու, հ. 4
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 2
Րաֆֆի — Սամվել
Րաֆֆի — Պատմվածքներ
Օտյան Ե. — Երկերի ժողովածու, հ. 2

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Ավագյան Մ. — Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը
Ավետիք Իսահակյանը ռուս քննադատության մեջ (ռուսերեն)
Արզումանյան Ս. — Վահան Թոթովենց
Գյուլնազարյան Խ. — Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության
Գրական ժառանգություն։ Գիրք 1 (Ալ. Շատուրյանի և Նար-Դոսի նամակները)
Գրիգորյան Ար. — Եղիշե Չարենցի պոեզիան (ռուսերեն)
Դանիելյան Կ. — Հայ մեմուարային գրականության պատմությունից
Եղիազարյան Լ. — Անատոլ Ֆրանսը նովելիստ
Զարյան Ռ. — Ադամյան, արվեստը
Թամրազյան Հր. — Շիրվանզադե
Ժամանակակիցները Կոմիտասի մասին (հիշողությունների ժողովածու)
Հարությունյան Բ. — Սովետահայ թատրոնի տարեգրություն, գ. 1 (1917—1940)
Հարությունյան Վ. — Վարդգես Սուրենյանց
Հարությունյան Տ. — Նար-Դոսի «Մահը» վեպը
Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին
Հովհաննես Թումանյան (1869—1923) — Մատենագիտություն
Հովնան Գ. — Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դարերում, գիրք 2

Ղանալանյան Ա. — Առածանի
Ղանալանյան Հովհ. — Դանիել Վարուժան
Ղուկասյան Զ. — Ռուս-հայ գրական կապերը նախահեղափոխությունից շրջանում
Մամիկոնյան Հովհ. — Արտասահմանյան գրականության պատմություն
Մուրադյան Հր. — Դերենիկ Դեմիրճյան
Նանումյան Ռ. — Ծերենց
Շահինյան Մ. — Հայ գրականության և արվեստի մասին (ռուսերեն)
Պողոսյան Խ. — Վեպեր և կերպարներ
Ջրբաշյան Էդ. — Գրականության տեսություն
Սելյան Պ. — Կարապետ Սիտալ
Սովետահայ գրականության պատմություն, հ. 1

Թարգմանություն

Արգենտինյան պատմվածքներ
Բալզակ — Երկերի ժողովածու, հ. 10
Բուլվեր Լիտտոն — Պոմպեյի վերջին օրերը
Գորկի Մ. — Մանկություն
Եսենին Ս. — Հատընտիր
Զուլֆիա — Լիրիկա
Էքզյուպերի Ս. — Մարդկանց երկիրը
Թևեքելյան Վ. — Երկու ճակատագիր
Կուբայական պատմվածքներ
Հազար ու մի սիրու Անթոլոգիա, հ. 1
Մոպասան Գի դը — Մահվան պես հզոր
Շահինյան Մ. — Ուլյանովների ընտանիքը
Շամիլով Ա. — Բախտի ճանապարհ
Շեքսպիր Վ. — Լիր արքա
Շեքսպիր Վ. — Համլետ
Շեքսպիր Վ. — Սոնետներ
Շևչենկո Տ. — Կոբզար
Չեխով Ա. — Երկեր, հ. 2, 3, 4, 5
Ռումինական պատմվածքներ
Սենկևիչ Հ. — Յո՞ երթաս
Սովետական Ուզբեկստանի բանաստեղծները
Ստեյնբեք Ջ. — Մարգարիտը
Ստենդալ — Պարմի մենաստանը
Վրաց գրականության ընտիր էջեր
Տագոր Ռ. — Պարտիզպանը
Տվարդովսկի Ա. — Հեռաստանից հեռաստան
Ուզբեկական երեք պիես
Ուզբեկական պատմվածքներ
Փշավելա Վ. — Բախարիոնի

1962

Հունվարի 12-ին

«Գրական թերթը» (№ 2) տեղեկացնում է, որ անգլերեն «Լոնդոնյան արևելյան մատենաշարով» (8-րդ գիրք) Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը։ Կաղանկատվացու «Պատմության» ամբողջական այս թարգմանությունը կատարել է Լոնդոնի համալսարանի արևելագիտության ու աֆրիկագիտության ֆակուլտետի դասախոս, անգլիացի հայագետ դոկտոր Ս. Դոուսեթը։

Հունվարի 17—18-ը

Երևանի ոպերայի տանը տեղի է ունենում ռազմա-գեղարվեստական գրականության հարցերին նվիրված խորհրդակցություն, որ հրավիրել էին ՍՍՀՄ գրողների միության ռազմա-գեղարվեստական գրականության հանձնաժողովը, Սովետական բանակի գլխավոր քաղաքական վարչությունը, ՀՍԳՄ նախագահությանը։

Խորհրդակցությունը բացում է ՍՍՀՄ գրողների միության ռազմա-գեղարվեստական գրականության հանձնաժողովի նախագահի տեղակալ Մ. Ա. Կրյուչկինը։ Սովետահայ ռազմա-գեղարվեստական գրականության արդի վիճակի մասին զեկուցում է Մ. Շաթիրյանը։ Լսվում է նաև մայոր Վ. Բելոուսովի զեկուցումը՝ Երևանի կայազորի գրական միավորումներում ընդգրկված երիտասարդ ստեղծագործողների մասին։ Ապա ելույթ են ունենում զինվորական թերթի խմբագիր Յու. Կլիկմանը, Հմ. Սիրասը, Գ. Սեունցը, Ա. Իսբախը, Մ. Մնացականյանը, զինծառայող Ա. Դմիտրիևը, բանաստեղծ Ե. Գոլմատովսկին, «Սովետական վոին» ամսագրի խմբագիր Ե. Յարյովը, Սովետական բանակի գլխավոր քաղաքական վարչության արվեստի և կուլտուրայի բաժնի պետ, գեներալ-մայոր Ե. Ի. Վասատկովը, Ռ. Աթայանը, Ա. Սարոյանը և ուրիշներ։

Հունվարի 18—20-ը

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում Հայաստանի կերպարվեստագետների VII համագումարը։

Հունվարի 19-ին

ՀԿԿՄ Երևանի քաղաքային կոմիտեի նիստերի դահլիճում տեղի է ունենում երիտասարդ գրողների խորհրդակցություն։ «ՍՄԿԿ XXII համագումարը և երիտասարդ գրողների խնդիրները» թեմայով զեկուցում է Էդ. Բոիչյանը։ Ելույթ են ունենում Ա. Սահակյանը, Կ. Սիմոնյանը, Ռ. Կարապետյանը, Գ. Մկրտչյանը, Գ. Ալազյոզյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ։

Փետրվարի 6-ին

Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը տոնելու մասին։

Որոշումից

«Լրացավ հայ գրության ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600 տարին։

Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի պատմության մեջ աչքի ընկնող տեղ է գրավում։ Մեր թվագրության V դարում նրա ստեղծած հայ գիրը և վերջինիս հիման վրա ծագած հայ գրականությունը վճռական դեր խաղացին հայ ժողովրդի ազգային գոյության, հայ կուլտուրայի պահպանման ու զարգացման գործում։

Հաշվի առնելով հայ ժողովրդի կուլտուրայի պատմությանը Մեսրոպ Մաշտոցի մատուցած հսկայական ծառայությունները, Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմը և հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշեցին 1962 թվականի մայիսի երկրորդ կեսին նշել Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

«Սովետական Հայաստան», № 31

Փետրվարի 7-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում Չարլզ Դիկկենսի ծննդյան 150-ամյակին նվիրված երեկո։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Ս. Սողոմոնյանը։

Փետրվարի 14-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների V համագումարը։

Փետրվարի 16-ին

«Գրական թերթը» «Լիտերատուրնայա գազետայից» արտատպում է Վլադիմիր Սոլոուխինի հոդվածը՝ «Ինչն է մեզ հարազատացնում»։

Փետրվարի 23-ին

Նշվում է «Գրական թերթի» լույս ընծայման 30-տարին։

Փետրվարի 26-ին

Հայաստանի սովետական գրողների միության դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Վիկտոր Հյուգոյի ծննդյան 160-ամյակին։ Ներածական խոսք է ասում Ն. Զարյանը։ «Վիկտոր Հյուգոյի կապերը հայ մտավորականների հետ» թեմայով զեկուցում է ԳԱ գրականության ինստիտուտի գիտաշխատող Հայկ Գասպարյանը։

Մարտի 7-ին

Վախճանվեց հայ նշանավոր մանկագիր Հայրապետ Հայրապետյանը (ծնվ. 1874 թ.)։

Մարտի 13-ին

Նշվում է Ե. Չարենցի ծննդյան 65-ամյակը։ «Գրական թերթում» (№ 11) տպագրվում են Չարենցի անտիպ ստեղծագործություններից և նամակներից,

Ավ. Իսահակյանի և Իլյա Էրենբուրգի ասույթները, Գ. Էմինի հոդվածը, Գ. Մահարու բանաստեղծությունը։

Մարտի 17-ին

Թբիլիսիում, 26 կոմիսարների անվան շրջանի բարեկամության զրուսայգում, հանդիսավոր պայմաններում բացվում է հայ գրողների և արվեստի գործիչների պանթեոնը։ Ժողովուրդների բարեկամության միտինգը բացում է Վրաստանի գրողների միության քարտուղար Ս. Ճիլայան։ Ելույթ են ունենում Բ. Ժղենատի, Գ. Էմինը, Ս. Լիբկինը, Վ. Հարությունյանը, Բ. Սեյրանյանը, պանթեոնի նախագծի հեղինակ Ռ. Աղաբաբը։

Բ. Ժղենատի ելույթից

«Դարերի խորքից է գալիս վրաց և հայ ժողովուրդների բարեկամությունը։ Թերթեցեք պատմության էջերը և դուք վառ փաստերի կհանդիպեք, նայեցեք ձեր շուրջը՝ օրինակներ կտեսնեք։ Ո՞վ չի հիշում Սայաթ-Նովայի «Էրված, փոթոթված» սրտի ջերմ խոսքերը՝ նվիրված իր երկրորդ հայրենիք Վրաստանին։ Ո՞վ սրտի թրթիռով չի կարդացել Վրաստանի մեծ զավակ Ծերեթելու սրտաբուխ խոսքերը՝ ուղղված հայ մեծանուն գրող, իր ընկեր, իր բարեկամ Գ. Սունդուկյանին, հապա մեծ Լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի Վրաստանի բանաստեղծներին ձոնած բանաստեղծությունները՝ գրված լի սիրով, բարեկամության խոր զգացմունքներով, բարձր արվեստով։ Այստեղ, Վրաստանի հարազատ հողում են ապրել ու ստեղծագործել հայ մեծանուն գրողներ Բաֆֆին ու Մուրացանը, Աղայանն ու Նար-Դոսը, Ջիվանին ու Պռոշյանը, հայտնի նկարիչ Գ. Բաշինջաղյանը և շատ ուրիշներ։ Նրանք հանդչում են այս պանթեոնում, որը զուրգուրանքով կպահպանենք»։

Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվում է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը։

«Գրական թերթ», № 11

Մարտի 25-ին

Նշվում է Հովսեփ Օրբելու ծննդյան 75-ամյակը։ «Գրական թերթում» տպագրվում է Պարույր Սևակի «Պահպանենք և հարստացնենք մայրենին» հոդվածը։

Մարտի 26-ին

Մոսկվայում, Կրեմլի Մեծ պալատում տեղի է ունենում ՍՍՀՄ կոմպոզիտորների համամիութենական երրորդ համագումարը։

Մարտի 27-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում Հայաստանի ժուռնալիստների երկրորդ համագումարը։

Մարտի 30—31-ը

Գիտությունների ակադեմիայի դահլիճում անց են կացվում «Թումանյանական ընթերցումներ»։ Բացման խոսք է ասում Մ. Աբեղյանի անվան

գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Ա. Ղանալանյանը («Հովհ. Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը»), Էդ. Ջրբաշյանը («Անուշ» պոեմի կոմպոզիցիան»), Ա. Ինճիկյանը («Թումանյանը և հայագիտությունը»), Լ. Հախվերդյանը («Թումանյանի հայրենասիրական մոտիվները 90-ական թվականներին»), Աս. Ասատրյանը («Թումանյանի արտասահմանյան ուղևորությունը), Ի. Սաֆրազբեկյանը («Թումանյանի հնդկական հեքիաթները»)։

Ապրիլի 6-ին

«Գրական թերթում» (№ 14) «Մենք զորացել ենք բարեկամությամբ» ընդհանուր վերնագրի տակ տպագրվում են Ե. Չարենցի, Պ. Տիչինայի, Ա. Սուրկովի, Բ. Սելվինսկու, Է. Մեժելայտիսի, Ռ. Ռզայի, Պ. Յաշվիլու, Ս. Վուրգունի, Վ. Սոսյուրայի բանաստեղծությունները, Մ. Գորկու, Ա. Ֆադեևի, Մ. Ռիլսկու, Ա. Տոլստոյի ասույթները և այլ նյութեր։

Թերթի նույն համարը հաղորդում է, որ Մոսկվայում ընթացիկ տարում լույս կտեսնեն Ա. Բակունցի ստեղծագործությունների, Մ. Մարգարյանի և Գ. Էմինի բանաստեղծությունների ժողովածուները, Ա. Սահինյանի «Խաչուղիներ», Ա. Ստեփանյանի «Ամառնամուտ» վեպերը և այլ գրքեր։

Ապրիլի 13-ին

«Գրական թերթը» (№ 15) հաղորդում է, որ Լուդմիլա Մոսալովայի թարգմանությամբ Պրագայում չեխերեն լույս է տեսել Ե. Չարենցի միհատորյակը։

Ապրիլի 18-ին

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում համալսարանի ուսանողական գիտական XXV հոբելյանական կոնֆերանսը՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի հոբելյանին։ Կոնֆերանսին մասնակցում են նաև Թբիլիսիից, Օդեսայից, Ռոստովից, Տաշքենդից և երկրի կրթական այլ կենտրոններից ժամանած հյուրեր։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակներ են շնորհվում Պ. Ու. Բրովկային («Իսկ օրերը գնում են»... բանաստեղծությունների գրքի համար), Էդ. Բ. Մեժելայտիսին («Մարգը» բանաստեղծությունների գրքի համար), Կ. Հ. Զուկովսկուն («Նեկրասովի վարպետությունը» գրքի համար)։

Ապրիլի 26-ին

Թատերական ընկերության դահլիճում տեղի է ունենում Գ. Բորյանի «Կամուրջի վրա» պիեսի և բեմադրության քննարկումը։ Զեկուցում է Ս. Մելիքսեթյանը, ելույթ են ունենում Ա. Կոթիկյանը, Լ. Հախվերդյանը, Վ. Մելիքսեթյանը, Լ. Խալաթյանը, Ս. Շտիկյանը, Ռ. Զարյանը։

Ապրիլի 27-ին

Հայաստանի սովետական գրողների միության վարչության նիստում քննվում է «Ժամանակակից թեման Հայպետհրատի պլաններում» հարցը։

Ձեկուցում է Հայպետհրատի դիրեկտոր Մ. Դավթյանը, մաքերի փոխանակությանը մասնակցում են Ազավնին, Ա. Արաքսմանյանը, Վ. Նորենցը, Ս. Վահունին, Մ. Սարգսյանը, Հր. Թամրազյանը, Վ. Վարդանյանը, Վ. Գրիգորյանը, Հ. Շիրազը, Էդ. Թոփչյանը։

Մայիսի 15-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության IV պլենումը՝ «ՍՄԿՊ XXII համագումարը և սովետահայ գրականության խնդիրները» օրակարգով։ Ձեկուցում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության քարտուղար Հր. Հովհաննիսյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Լ. Հախվերդյանը, Վ. Նորենցը, Խ. Գյուլնազարյանը, Խ. Դաշտենցը, Սաղ. Հարությունյանը, Ա. Սարոյանը, Վ. Գրիգորյանը, Ստ. Կուրտիկյանը, Հ. Շիրազը, Ա. Ոսկերչյանը, Ս. Խանզադյանը։ Պլենումի աշխատանքին մասնակցում է Մ. Շահինյանը։

Մայիսի կեսերին

ՍՍՀՄ կապի մինիստրությունը թողարկում է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի դիմանկարով զունազարդ նամականիշ։

Մայիսի 26-ին

«Գրական թերթի» 17-րդ համարը ամբողջությամբ նվիրվում է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։ Տպագրվում են Ն. Տիխոնովի «1600-ամյա բարձունքից», Մ. Շահինյանի, Ն. Սիսակյանի, արտասահմանյան նշանավոր գիտնականների խոսքերը, Դ. Վարուժանի, Ներսիսյանի, Լեոի, Հր. Աճառյանի աշխատությունները, Սիամանթոյի, Հովհ. Թումանյանի, Պ. Սևակի, Հովհ. Շիրազի բանաստեղծությունները և այլ նյութեր։

Ն. Տիխոնովի խոսքից

«Ամեն անգամ, երբ լսում եմ, որ տոնվում է, այսպես ասած, դարերի խավարով մեզանից ծածկված որևէ իրադարձություն, համակվում եմ և՛ զարմանքով, և՛ խոր երախտագիտությամբ այն հնադարյան գործիչների հանդեպ, որոնց անունները պահպանել և մեզ են հասցրել անհամար սերունդների ալիքները։

...Նա եղել է հայ գրության հիմնադիրը։ Նրան անվանել են Մեսրոպ Մաշտոց։ Նա ստեղծել է հայկական այբուբենը ու գրությունը։ Դա ավելի քան հերոսական արարք է։ Դա ծնունդ է մի ամբողջ աշխարհի, որն այդ օրվանից կարող էր պատմել ապագային՝ իր և իր կյանքի մասին, իր պատմածը գրոշմագրելով մագաղաթի, կաշու, քարի և կավի վրա։ Նա հնարավորություն տվեց հասարակ մարդկանց հաղորդակից լինելու համաշխարհային ստեղծագործություններին։ Նա թարգմանեց Աստվածաշունչը, Հունաստանի ու Ասորիքի դասականներին։

...Այն հավերժական հուրը, որ բազում դարեր առաջ վառել է կատարյալ իմացություն որոնողը, վառվում է հիմա ոչ միայն իր հայրենիքի լեռներում ու հովիտներում, այլև նրա սահմաններից դուրս.

...Մեծ աշխարհի մարդիկ երբեմն ամենաբարձր լեռներից էլ բարձր են։ Իր հազարվեցհարյուրամյա բարձունքից մեզ է նայում մեր բարեկամ Մեսրոպ Մաշտոցը։

Եվ մենք երախտագիտությամբ ողջունում ենք նրան՝ խոնարհվելով նրա կյանքի սխրագործության առջև, մեր բոլոր հայ բարեկամների հետ»։

Մ. Շահինյանի խոսքից

«Հայկական այբուբենի հայտնագործումը Մեսրոպ Մաշտոցի կողմից խոշորագույն նշանակություն ունեցավ հայկական մշակույթի ազգային ինքնատիպության պահպանության համար։ Բայց նրա իմաստը մեր հայրենիքի սահմաններից շատ ավելի հեռուն է գնում։ Ուսումնասիրելով Մեսրոպ Մաշտոցի ժամանակաշրջանն ու գործը, արտասովոր պարզությամբ տեսնում ես, թե մարդկության պատմության մեջ ինչպիսի վճռական ուժ ունի մշակույթի հոգևոր զենքը։ Ֆիզիկական և ոչ մի զենք՝ հնագույն օրից մինչև ժամանակակից ռումբը, չէր կարող պաշտպանել և պահպանել հայ ժողովրդի զարգացումը այնպիսի ուժով ու անհաղթահարելիությամբ, ինչպիսին արեց Մեսրոպ Մաշտոցի հայտնագործած հայկական սևիական գիրը։ Պատմության խորին և ուսուցանող այս դասը, որ խաղաղության համար պայքարի այս օրերին ցույց է տալիս հոգևոր զենքի ուժն ու նշանակությունը, հայերի ազգային առնին տալիս է համաժողովրդական նշանակություն»։

Թերթի նույն համարում հրապարակվում է ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշումը՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը նշանավորելու մասին.

«Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ—մատենադարանը կոչել Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան։

Մատենադարանի հրապարակում կանգնեցնել Մեսրոպ Մաշտոցի հուշարձանը։

Աշտարակի շրջանի Օշական գյուղում, որտեղ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, կանգնեցնել հուշասյուն։

Հանձնարարել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային՝ հինգ տարին մեկ կազմակերպել Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակաբաշխություն՝ հայագիտական լավագույն աշխատության համար»։

«Սովետական Հայաստան», «Коммунист» (Երևան), «Ավանգարդ», «Երևան» և այլ թերթեր համարներ են նվիրում Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։ Տպագրվում են նշանավոր գրողների, արվեստագետների, արտասահմանյան մշակութային գործիչների ու գիտնականների հոդվածները, խոսքերը, ողջույնի հեռագրերը, ասույթները։

Ողջույնի հեռագրերից

«Եղբայրական հայ ժողովրդի պայծառ մտքի խորաթափանցությունն ու հնարագիտությունը դեռ հեռավոր անցյալում, ի դեմս Մեսրոպ Մաշտոցի,

գոան իրենց հանճարեղ արտահայտչին, որի վառած ջահը լուսավորեց նաև մեր սրտերը...

Թանկագին բարեկամներ, ընդունեցեք Ձեր հավիտենական հարևանի, բարեկամի ու եղբոր շնորհակալությունն ու անկեղծ բարեմաղթությունը:

Միրզա Իբրահիմով»:

«Սովետական Հայաստան», № 124

«Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը ազգային մեծ տոն է եղբայրական հայ ժողովրդի համար, և մենք՝ նրա բազմադարյան դրացի եղբայրներս, թաս ենք բարձրացնում նրա հիշատակին:

Իոսեր Գրիշաշվիլի»:

«Սովետական Հայաստան», № 124

«Անձամբ ինձ համար Մեսրոպ Մաշտոցի հոյակապ գործը անհուն հրճվանքի ու պայծառ թախծի աղբյուր է: Չէ՞ որ նրա շնորհիվ ես ճանաչեցի ու սիրեցի Նահապետ Քուչակին, Սայաթ-Նովային, Աբովյանին, Նալբանդյանին, Թումանյանին, Վահան Տերյանին, Ավետիք Իսահակյանին, Չարենցին և իմ սիրելի ժամանակակիցներին:

Վերա Զվյագինցևա»:

«Երևան», № 124

Գ ն ա հ ա տ ա կ ա ն ի խ ո ս ք ե ր ի ց

«Նրանից հետո մենք ունեցանք սևիական ազգային դպրոց ու գրականություն, որ խաղաղ օրերում ճանապարհ է ցույց տվել մեր ազգին դեպի լավագույն ապագան...»:

Հովհաննես Թումանյան»:

«Երևան», № 124

«Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանիով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքները, բայց դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին:

Ավետիք Իսահակյան»:

«Սովետական Հայաստան», № 124

«Մեսրոպ Մաշտոցը իր ժողովրդի մեծությունը զգացող, նրա համար ապրելու և ստեղծագործելու կոչված մի գերմարդկային երևույթ է:

...Մեսրոպը հայ ժողովրդի ստեղծագործող մտքի հաստատումն է, Մեսրոպը՝ ինքը հայ ժողովուրդն է: Ուրեմն մենք նշում ենք ոչ միայն Մեսրոպի, այլև հայ ժողովրդի լուսաշող մտքի հոբելյանը:

Մարտիրոս Սարյան»:

«Երևան», № 124

«Եթե նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատենք Պիպինոսի և նրա զինակից Վինֆրիդի գործունեության հետ, որ նրանք արին գերմանական ժողովրդի համար՝

այս վերջինները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի համեմատությամբ։

Հ. Մարկվարտ»։
«Երևան», № 124

«Հայկական այբուբենի սիստեմը գլուխգործոց է։ Հայկական հնչումը նոթագրվել է մի ինքնահատուկ նշանով, և այս սիստեմը այնքան լավ է հիմնվել, որ հայ ազգին հայթայթեց հնչման վերջնական մի արտահայտություն, որ մինչև հիմա իրեն պահեց առանց որևէ փոփոխություն կրելու, առանց բարեփոխության կարիք զգալու, որովհետև սկզբից կատարյալ էր։

Ա. Մեյե»։
«Երևան», № 124

«Մաշտոցը կազմել է նոր հայկական այբուբենը՝ 36 տառից։ Նա իր աշակերտների հետ հայերեն է թարգմանել Աստվածաշունչը և այլ աշխատություններ ու նպաստել ոչ միայն հայերի, այլև հարևան ժողովուրդների կուլտուրայի զարգացմանը։ Մեսրոպ Մաշտոցի այբուբենը իր ժամանակի ամենակատարյալ հնչնաբանված գիրն է...

Զ. Լուկոտկա, չեխ պրոֆեսոր»։
«Ավանգարդ», № 63

«...Մաշտոցն էր այն մարդը, որ եկավ պատասխանելու մեր ժողովրդի առաջ ծառացած հարցին. «Լի՞նել, թե չլինել»։ Եվ նա ասաց. «Լինել»։

Կիսված էր արդեն մեր հայրենիքը, ճեղքված էր մեր դարավոր բնիկ հողը։ Այդ ճեղքը հետզհետև պիտի խորանալով ու լայնանալով անդնդանար—վեհանար՝ մեր ժողովրդին դնելով ծանր և ապարդյուն կացության մեջ այն մարդու, որ միաժամանակ պիտի նայի երկու աչքի մեջ։

Եվ Մաշտոցն էր այն մարդը, որը

Ջծնվեց ինչ-որ մի մորից.
Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ.
Որ ճեղքը լցնի գեթ ինքն իրենով։
Եվ իսկապես էլ լցրեց այդ ճեղքը.
Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ նա էր միայն, որ իրար բերեց
Ու միավորեց... արդեն մեր մտքում։
Եվ այդ օրից վեր
Ու մինչև այսօր
Այդ միացումը մնում է անխախտ...

Մեզնից արդեն խլել էին մեր պետականությունը, որի վերականգնումը անհնարին էր և անկարելի պիտի մնար դեռ երկար դարեր։ Հայրենի գահը ավել էր մի փլվածք, որի վերանորոգումն անկարելի էր և անհնարին պիտի դառնար դեռ երկար դարեր։ Եվ Մաշտոցն էր այն մարդը, որը

Չծնվեց ինչ-որ մի մորից.
Նա այդ փլվածքից բուսնեց սխրանքով,
Որ այդ փլվածքը ողջանա նորից։

Եվ այդ փլվածքը իրոք ողջացավ. մեր փլուզված պետականության տեղ նա ստեղծեց մի նոր պետություն՝ մի հոգևոր պետություն. մեր թագավորության ապատված տների տեղ նա իրենով սկսեց թագավորական մի նոր հարբատություն—դինաստիա՝

Ոչ թե մեղանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժան,
Մեր անկիսելի,
Երբեք չխլվող հոգիների մեջ։

Պ. Սևակ»

«Սովետական արվեստ», 1962, № 5

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի հրապարակում տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի արձանի բացմանը։ Միտինգը բացում է աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ Ս. Վարդանյանը։ Ելույթ են ունենում Ստ. Զորյանը, Երևանի Կիրովի անվան գործարանի ապարատավարների բրիգադավար Ս. Պետրոսյանը, հանրապետության վաստակավոր ուսուցիչ Գ. Թովմասյանը, լիբանանահայ բանաստեղծ Վահե Վահյանը, Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, Նալբանդյանի անվան դպրոցի աշակերտուհի Ա. Պարսամյանը։ Արձանի հեղինակն է քանդակագործ Ղուկաս Ջուբարյանը։

Ստ. Զորյանի խոսքից

...Մաշտոցը այն երևելի գործիչներից է, որոնց վաստակը երբեք չի մոռացվում։ Նրա գործը միշտ կենդանի է և հանապազօրյա հացի պես սնում է մեզ. սնում է մեր ժողովրդին։ Դպրոցական հասակից մինչև խորին ծերությունը նա մեզ հետ է ամեն օր։

Մեսրոպի գյուտը քաղաքական ու կուլտուրական վիթխարի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։

Եվ այսօր հայ ժողովուրդը հուզումնալից սիրով և խորագույն հարգանքով մեծարում է իր անզուգական զավակին, որ հայոց լեզվի մշտավառ ջահը ձեռքին դարեր շարունակ քայլել է իր հետ, քայլել է բոլոր աղետների ու արհավիրքների միջով և հասել մինչև մեր օրերը»։

«Սովետական Հայաստան», № 124

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ Ադրբեջանի գրողների միությունը կազմակերպում է հոբելյանական երեկո, ուր զեկուցումներ են լսվում Մաշտոցի կյանքի ու գործունեության, հայ գրականության պատմության մեջ նրա դերի մասին։ Գրող Մեհրի Հուսեյնը խոսում է հայ և ադրբեջանական ժողովուրդների մասին։ Սրեկոյին Ադրբեջանի և Հայաստանի բանաստեղծները կարդում են մեծ գիտնականին նվիրված բանաստեղծություններ, ինչպես նաև թարգմանություններ՝ հայ պոեզիայից։

Նշանակալից տարեթվի առթիվ դասախոսություններ են կազմակերպվում Բաքվում, Կիրովաբադում, Շամխորի և Խանլարի շրջաններում։

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը լայնորեն նշվում է Վրաստանում։ Հայ գրողների Թբիլիսիի հայկական բաժանմունքի նախաձեռնությամբ հանրապետությունում տեղի են ունենում հավաքույթներ, զրույցներ, դասախոսություններ։ Վրաստանի գրողների տանը լսվում է պրոֆեսոր. Լ. Մելիքսեթ-բեկի զեկուցումը՝ «Մեսրոպ Մաշտոցը օտարազգի աղբյուրներում»։ Այդ օրերին աշխատավորների բազմաթիվ խմբեր են այցելում Մ. Մաշտոցի դիմանկարը ստեղծող Ստ. Ներսիսյանի գերեզմանը։

«Սովետական Հայաստան», № 124

Մայիսի 27-ին

Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հայ գրերի ստեղծող և դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստ։ Հանդիսավոր նիստը բացում է հոբելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը։ Զեկուցումով հանդես է գալիս ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Ողջույնի խոսք են ասում Կ. Ցելույկոն (Ուկրաինայի ԳԱ լեզվի ինստիտուտ), Գ. Աբգուսահմանովը (Ուզբեկստանի ԳԱ լեզվի և գրականության ինստիտուտ), ակադեմիկոս Ա. Շանիձեն (Վրաստանի ԳԱ), Ա. Վենցլովան (Լիտվայի ԳԱ), Ե. Ռուսևը (Մոլդավիայի ԳԱ պատմության ինստիտուտ), Է. Սվիմպուլ-Սոկոլը (Լատվիայի ԳԱ), Ա. Թուրսունովը (Կիրգիզիայի ԳԱ), Մ. Բակոնը (Տաջիկստանի ԳԱ), Զ. Մուխամեդովան (Թուրքմենիայի ԳԱ), Վ. Մամյաշինը (Էստոնիայի ԳԱ), Արմեն Դարյանը (սփյուռքահայ գրող), պրոֆ. Մանասե Սեվակը (ամերիկահայ բիոքիմիկոս), Վահե Հայկը (ամերիկահայ գրող)։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը հրապարակում է հոբելյանական հանձնաժողովի անունով Միության տարբեր քաղաքներից, գիտական հաստատություններից և գիտության ու գրականության ականավոր գործիչներից ստացած ողջույնի մի շարք հեռագրեր։

Վ. Համբարձումյանի զեկուցումից

«...Մեսրոպի կատարած գործը այն մեծագույն ծառայությունն է, որ կարող էր մատուցել հեռավոր այն ժամանակներում մշակույթի սրեկ գործիչ իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին։ Մեր ժողովուրդը անհուն երախտագիտությամբ, սիրով ու հարգանքով է լցված Մաշտոցի նկատմամբ։ Անսպառ ու հարատև մի զգացմունք է դա, որը եղել է, կա ու միշտ կլինի, քանի կա ու կլինի ինքը հայ ժողովուրդը։

...Եթե անցյալում մեսրոպյան տառերը ծառայել են հայ ժողովրդի միասնության, նրա գոյության պահպանման, նրա մշակույթի ինքնուրույն զարգացման գործին, ապա այսօր, երբ մեր ժողովուրդը ապահով ու հանդիստ ապրում է սովետական ազգերի եղբայրական ընտանիքում, նրանք ծառայում են կոմունիզմի գաղափարների իրագործմանը. ժողովուրդների հե-

տագա մերձեցման և ամբողջ աշխարհի խաղաղության ու առաջադիմության մեծ գործին»։

«Գրական թերթ», № 22

Օշական գյուղի մատույցում տեղի է ունենում Մեսրոպ Մաշտոցին նվիրված հուշարձանի հանդիսավոր բացումը։ Բացման խոսք է ասում աշխատավորների դեպուտատների Աշտարակի շրջանային սովետի գործադիր կոմիտեի նախագահ Գ. Մովսիսյանը։ Ելույթ են ունենում ՀՍՍՀ լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, Օշականի Մաշտոցի անվան դպրոցի ուսուցչուհի Վ. Գյուլնազարյանը, օշականցի կոլտնտեսական Ս. Իսկանդարյանը, լիբանանահայ մանկավարժ ու հասարակական գործիչ Արմեն Ղարիբը, սիրիահայ գրող Կոստան Զարյանը, Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ հայր Եղիա Փիլիկյանը, Հմ. Սիրասը։

Հուշարձանի հեղինակն է քանդակագործ Ջ. Բորոսյանը։

Մոսկվայի Միությունների տան Սյունաղարդ դահլիճում տեղի է ունենում մայրաքաղաքի հասարակայնության հանդիսավոր ժողովը՝ նվիրված հայ այբուբենի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։ Ժողովը բաց է անում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Վ. Կոժևնիկովը։ Զեկուցումով հանդես է գալիս Մարիետա Շահինյանը։ Ելույթ են ունենում Ն. Զարյանը, Մ. Բաժանը, Ս. Կապուտիկյանը, Ա. Լուպանը (Մոլդավիա), Մ. Ռահիմը (Ադրբեջան)։ Բանաստեղծուհի Վ. Զվյագինցևան ընթերցում է Վ. Նորենցի՝ Մեսրոպ Մաշտոցին նվիրված բանաստեղծության իր թարգմանությունը։

Մայիս

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ Հայաստանի հրատարակչությունները լույս են ընծայում Կորյունի «Վարք Մաշտոցի», Լեոյի «Ս. Մեսրոպ» գրքերը, «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածուն, ինչպես նաև Գ. Սևակի «Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը», Սա. Մելիք-Բախշյանի «Մեսրոպ Մաշտոց», Գ. Աբգարյանի «Մատենադարան» ուսումնասիրությունները։

Հունիսի 1-ին

Նշվում է ադրբեջանական նշանավոր գրող Սաբիրի ծննդյան 100-ամյակը։

Հունիսի սկզբներին

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության դրամատուրգիայի խորհրդի նիստը, ուր քննության են առնվում դրամատուրգների վերջին գործերը։ Հաղորդումով հանդես է գալիս Հայաստանի գրողների միության դրամատուրգների սեկցիայի նախագահ Գ. Տեր-Գրիգորյանը։ Հայ դրամատուրգներ Գ. Տեր-Գրիգորյանի «Մեռնող ֆլորան» պամֆլետի, Ս. Կապուտիկյանի «Կռունկ, ո՞ւր ես թռչում», Ն. Զարյանի «Արմաշեն», Գ. Յաղջյանի «Ճշմարտություն», ինչպես նաև Գ. Մահարու, Ա. Արաքսմանյանի, Ա. Պապայանի, Մ. Յուզբաշյանի պիեսների մասին ելույթ են ունենում դրամատուրգ Կ. Ֆինը, Ս. Շատ-

ղովը. Վ. Լյուբիմովան, Լ. Զորինը, Լ. Լենչը, Ն. Զարյանը, Ա. Արաքսմանյանը, քննադատներ և թատերագետներ Ն. Կլադոն, Ա. Անասասսկը, Ի. Վիշնևսկայան, Յու. Զուբկովը, Օ. Զյուբինսկայան, Վ. Ֆրոլովը, Վ. Պիմենովը, «Դրուժբա Նարոդով» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ Հ. Սալախյանը, Լ. Սամվելյանը, Ռ. Սանոյանը։ Եզրափակման խոսք է ասում ՍՍՀՄ գրողների միության քարտուղար, դրամատուրգ Ա. Սալինսկին։

Հունիսի 8-ին

«Գրական թերթը» (№ 23) հաղորդում է, որ 1962 թ. գարնանը Վարշավայում լեհերեն լույս է տեսել «Արարատի և Կազբեկի ներքո» վերնագրով հայկական ու վրացական առասպելների, հանելուկների և առակների հատընտիրը։ Հայկական բաժնի կազմողը և թարգմանիչն է Կրակովի համալսարանի հայոց լեզվի ուսուցիչ, լեհահայ գիտնական Կազիմիր Ռոշքոն։

Հունիսի 9-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված ռումինական դրամատուրգիայի հիմնադիր Կարաջալեի մահվան 60-ամյակին։ Զեկուցում է Գ. Մաճարյանը։

Հունիսի 16-ին

«Լիտերատուրնայա գազետայում» (№ 71) տպագրվում է Մարտիրոս Սարյանի «Արվեստը չի ծերանում» հոդվածը։

Մարտիրոս Սարյանի հոդվածից

«...Ասում են, որ մեր դարը գիտության դար է։ Բայց մի՞թե կարելի է ցույց տալ մարդկության պատմության մեջ որևէ դար, որը գիտության դար չլիներ։ Շոգեքարշը նույնպիսի հրաշք էր իր դարի համար, ինչպես ատոմային էներգիան՝ մեր դարի համար։ Չկա և չի կարող երբևէ լինել գիտության դար և արվեստի դար։ Միայն նրանց միասնությունը, փոխհարաբերակցությունը միշտ կերակել են դարաշրջանի պատկերը։ Այժմ արվեստը մի վիթխարի ուժ է և օգնում է գիտությանը կատարելու մեծ հայտնագործություններ։

...Մեր ժամանակաշրջանում նկարչությունը մեծ սեր և մեծ ժողովրդականություն է վայելում, բան նույնիսկ ամենամոտիկ անցյալում։ Եվ դա օրինաչափ երևույթ է։ Եթե վերածնությունը արվեստի չտեսնված ծաղկում առաջացրեց, ապա դրա պատճառն այն է, որ աշխարհին սիրահարված մարդը ձգտում է ըմբռնել աշխարհը։ Իսկ այսօր այդ ամենը «հարստացվել է» աշխարհը կորցնելու վախով։ Այդ վախը բնորոշ է ժամանակակից արևմտյան արվեստի համար... Մենք՝ սովետական նկարիչներս, նորից ու նորից երևան ենք բերում ընդունակություն՝ ստեղծելու մի առողջ, կենսահաստատ արվեստ, որը միայն կարող է ծնունդ առնել մարդկության վեհ ու երջանիկ ապագայի համար մատնող սոցիալիստական աշխարհում։

«Գրական թերթ», № 25։

Հունիսի 22-ին

«Գրական թերթը» Վրաստանի գրողների միության վարչության օրգան «Լիտերատուրուլի գազետի» թերթից (№ 24) արտատպում է Կոնստանտինե

Գամսախուրդիայի «Առատ գույների սիմֆոնիան» հոդվածը՝ Մհեր Արեղյանի նկարների մասին։

Հունիսի 25-ին

Կահիրեում վախճանվեց նշանավոր հայագետ Արշակ Ալպոյաճյանը (ծնվ. 1879 թ.)։

Հուլիսի 6-ին

Վախճանվեց ամերիկյան նշանավոր գրող Ուիլյամ Ֆոլկները (ծնվ. 1898 թ.)։

Հուլիս

Երևանում մի քանի օրով հյուրընկալվում է ֆրանսիացի ականավոր հրապարակախոս, գրող, Ֆրանսիայի կոմկուսի ավագագույն անդամ Անդրե Վյուրմսերը։

Անդրե Վյուրմսերի խոսքից

«...Պետք է ասեմ, որ սովետական բոլոր հանրապետություններից Հայաստանն է, որին ամենից լավ են ճանաչում իմ հայրենիքում։ Այն վիթխարի փոփոխությունները, որ վերջին տասնամյակների ընթացքում տեղի են ունեցել հայ ժողովրդի կյանքում, մեծ տպավորություն են գործել Ֆրանսիայում։ Ֆրանսիայում ես հայ բարեկամներ շատ ունեմ։

...Մեծ հաճախությամբ եմ ես մեկ գալիս Հայաստանում։ Դրա պատճառը նաև այն է, որ Ֆրանսիան ֆաշիստներից ազատագրելու համար մղվող պայքարին ակտիվորեն մասնակցեցին նաև հայ ժողովրդի զավակները։ Այժմ Ֆրանսիայում դժվար է գտնել այնպիսի մի մարդու, որը չիմանա Միսաք Մանուշյանի խմբի հերոս մարտիկների սխրագործությունները։

Ֆրանսիացիները սրբությամբ են պահում հերոսի հիշատակը։ Նրա անունով է կոչված Կոմունարների պատից քիչ հեռու գտնվող փողոցը։ Ամեն տարի մենք նշում ենք Մանուշյանի հիշատակը։ Լուի Արագոնը Միսաք Մանուշյանի հիշատակին է ձոնել «Կարմիր աֆիշ» կրքոտ բանաստեղծությունը, որի մեջ օգտագործել է այն նամակը, որ գրել է Միսաքը իր կնոջը՝ Մելինեին, գնդակահարվելուց առաջ, և որը հիմա էլ չի կարելի առանց հուզվելու կարդալ»։

«Գրական թերթ», № 3

Օգոստոսի սկզբին

Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանում բացվում է հայ գրողների գրքերի և անձնական իրերի մշտական գործող ցուցահանդես։

Օգոստոսի 17-ին

«Գրական թերթը» (№ 33) հաղորդում է, որ Բեռլինի հրատարակչությունը գերմաներեն լույս է ընծայել Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմությունը»։ Թերթը նաև հաղորդում է, որ ռուսերեն յոթ հրատարակություններից բացի

Ստ. Զորյանի վեպը լույս է տեսել էստոներեն, լիտվերեն, ուկրաիներեն, լեհերեն, չեխերեն, ռումիներեն։

Օգոստոսի 24-ին

«Գրական թերթը» (№ 34) հաղորդում է, որ Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» գիրքը անգլերեն՝ Միշա Գյուտյանի թարգմանությամբ։

Օգոստոսի 27-ին

Վախճանվեց գրականագետ Սարգիս Մարտիրոսի Սարյանը (ծնվ. 1917 թ.)։

Սեպտեմբերի 21-ին

Հրատարակվում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը՝ Ավետ Ավետիսյանին ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհելու մասին։

Սեպտեմբերի 28-ին

«Գրական թերթը» (№ 39) հաղորդում է, որ Լիտվայում լույս է տեսել Գ. Մահարու «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին» եռագրությունը և նովելները «Հին այգու պատմությունը» խորագրով։

Սեպտեմբեր—հոկտեմբեր

Սովետական Հայաստանում մի քանի շաբաթ հյուրընկալվում է անգլիացի հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Չարլզ Դոուսեթը։

Հոկտեմբերի 5-ին

«Գրական թերթում» (№ 40) տպագրվում է հունգար գրականագետ Դյորդ Ռաձդի «Մենք հին բարեկամներ ենք» հոդվածը։

Նույն համարը էջ է նվիրում Երևան այցելած սիրիուրբահայ մշակույթի մի խումբ գործիչներին։ Համարում տպագրվում են գրողներ Կոստան Զարյանի, Անդրանիկ Նառուկյանի, Գևի բանաստեղծություններից և գրականագետ Կ. Փոլատյանի «Ողջույն Հայաստանի գրողներին» խոսքը։

Հոկտեմբերի 5, 12, 19

«Գրական թերթում» (№№ 40, 41, 42) «Յումանիտեից» արտատպվում են հատվածներ ֆրանսիացի հրապարակախոս, գրող Անդրե Վյուրմսերի «Մանուշյանի հայրենիքում» հոդվածաշարից։

Հոկտեմբերի 15-ին

Արտասահմանի հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության գահլիճում տեղի է ունենում սիրիուրբահայ գրականության ու

մշակույթի գործիչների հետ հանդիպում-երեկո։ Երեկոն բաց է անում Հր. Հովհաննիսյանը։ Ստ. Կուրտիկյանը հակիրճ բնութագրական խոսք է ասում ներկա գտնվող ամերիկահայ գրող Շահան Նաթալու, ֆրանսահայ վիպասան, գրականագետ Կարապետ Փոլատյանի, իրանահայ բանաստեղծ ու նկարիչ Մարգար Ղարաբեդյանի (Դև), ամերիկահայ արձակագիր Սուրեն Մանվելյանի, ամերիկահայ թարգմանիչ Տիգրան Բոյաջյանի մասին։ Ելույթներ են ունենում Շահան Նաթալին, Կարապետ Փոլատյանը, Գեղամ Սևանը, Գ. Սարյանը, Ս. Կապուտիկյանը, Ա. Գրաշին, Վ. Նորենցը։

Հոկտեմբերի 20-ին

Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում տեղի է ունենում հանդիպում Մարիետա Շահինյանի հետ։

Հոկտեմբերի 23—30-ը

Հայաստանում անց է կացվում ուզբեկական գրականության և արվեստի շաբաթ։ Հանրապետության թերթերը ամբողջական էջեր են նվիրում մշակույթային այդ իրադարձությանը։ Ուզբեկ արվեստագետները լինում են Երևանում, Լենինականում, Կիրովականում։

Հոկտեմբերի 29-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանում ուզբեկական գրականության և արվեստի շաբաթի եզրափակիչ երեկոն։ Երեկոն բացում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար Է. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ուզբեկստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար, դրամատուրգ Քամիլ Յաշենը, բանաստեղծներ Գաֆուր Գուլյամը, Ուլդունը, Ասկադ Մուխտարը, արձակագիրներ Աբդուլլա Կախխարը, Սերգեյ Բորոդինը։ Բանաստեղծություններ են կարդում Ղ. Ղուլյամը, Գ. Սարյանը, Զուլֆիան, Ս. Կապուտիկյանը։

Հոկտեմբեր

Լայնորեն նշվում է ադրբեջանական ականավոր գրող Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 150-ամյակը։ Հայաստանի գրողների միության վարչությունը և խաղաղության պաշտպանության հայկական կոմիտեն արվեստի աշխատողների տանը կազմակերպում են մեծ երեկո՝ նվիրված Մ. Ֆ. Ախունդովի ծննդյան 150-ամյակին։ Երեկոն բացում է Գ. Սարյանը, զեկուցում է Ա. Երևանլին։

Երևանում տեղի է ունենում հայկական և ադրբեջանական թատերական ընկերությունների միացյալ դիտական ոնսիա՝ նվիրված Մ. Ֆ. Ախունդովին։ Ներածական խոսք է ասում հայկական թատերական ընկերության նախագահ Վ. Վարդանյանը։ Զեկուցում են Ա. Ալիևան («Մ. Ֆ. Ախունդովը և թատրոնը»), Ջ. Միրզոևան («Ախունդովի էսթետիկական հայացքները»), Ս. Հարությունյանը («Մ. Ֆ. Ախունդովը և հայկական կուլտուրան»)։

Նոյեմբերի 2-ին

«Գրական թերթը», (№ 44) էջեր է նվիրում Մ. Ֆ. Ախունդովի ծննդյան 150-ամյակին։ Տպագրվում են Ս. Մանուկյանի «Մեծ գրողն ու քաղաքացին», Ա. Երևանցու «Հայ ժողովրդի բարեկամը», Հր. Մուրադյանի «Աբովյան և Ախունդով» հոդվածները։

Ախունդովի ծննդյան 150-ամյակին էջեր են նվիրում հանրապետության մյուս թերթերն ու պարբերականները։

Նոյեմբերի 12-ին

Գրողների տանը քննարկվում է Խաչիկ Հրաչյանի «Ուրցի Մարան» վեպը։ Զեկուցում է Հր. Մուրադյանը, ելույթներ են ունենում Ն. Զարյանը, Ա. Սահինյանը, Ա. Ինճիկյանը, Խ. Գյուլնազարյանը, Վ. Նորենցը, Ռ. Արամյանը, Ս. Գուլակյանը, Ռ. Թաթիկյանը, Հր. Հովհաննիսյանը։

Նոյեմբերի 16-ին

«Գրական թերթում» (№ 45) տպագրվում է Ս. Մարշակի նամակը՝ Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի բացման առթիվ։

Ս. Մարշակի նամակը

«Հայաստանը հոյակապ պոեզիայի և սքանչելի բանաստեղծների երկիր է։ Բայց, թերևս, 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին տասնամյակի ոչ մի երգչի այնպես չի սազում ժողովրդական բանաստեղծի կոչումը, ինչպես Հովհաննես Թումանյանին։ Նա ունի այն ամենը, ինչով հարուստ է ժողովուրդը՝ բնության նուրբ զգայողություն, խոր իմաստություն և, որ գլխավորն է՝ մեծ սեր կյանքի ու մարդու հանդեպ։ Եվ ժողովուրդը Թումանյանին հատուցում է անկեղծ, տարիների հետ չթուլացող սիրով։

Որպես իսկական ժողովրդական բանաստեղծ, նա հասկանալի է և թանկ է մեր երկրի մյուս ժողովուրդներին, լայնորեն հայտնի է նրա սահմաններից դուրս։

Ես ուրախ եմ, որ կարողացա իմ, թեև փոքր, լուման մուծել Հովհաննես Թումանյանի զմայլելի պոեզիան ռուսերեն թարգմանելու պատասխանատու գործում։ Ես ընդամենը թարգմանել եմ նրա երկու չափածո հեքիաթները, ինչպես նաև առանձին բանաստեղծությունները և կարող եմ ասել՝ չնայած այն դժվարությանը, որը կապված է այդ յուրօրինակ, աղգային հողի հետ ամուր կապված բանաստեղծությունները վերարտադրելու հետ, այնուամենայնիվ Թումանյանի երկերի թարգմանության աշխատանքը ինձ համար իսկական հրճվանք էր։ Յուրաքանչյուր տողի մեջ ես զգում էի հայ մեծ բանաստեղծի ջինջ, բարի ու մանկորեն անարատ հոգին։

Ես հղում եմ նրան, որպես կենդանի մարդու, իմ խոնարհ հարգալիր ողջույնը»։

Նոյեմբերի 23-ին

«Գրական թերթը» (№ 46) «Նոյես Դոյչլանդ» թերթից արտատպում է գերմանացի հայտնի լրագրող և հրապարակախոս Վերներ Գոլդշտայնի «Ճամփորդություն տաղանդների երկրում» ակնարկը՝ Հայաստանի մասին։

Նոյեմբերի 30-ին

Նշվում է Իլյա Ճավճավաձեի ծննդյան 125-ամյակը։

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Լոպե դե Վեգայի ծննդյան 400-ամյակին։ Երեկոն բացում է Վ. Վարդանյանը, ղեկուցում է Լ. Սամվելյանը։

Դեկտեմբերի 5-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության նախագահության նիստը, ուր քննարկվում են Մ. Արմենի և Հ. Սահյանի ստեղծագործական հաշվետվությունները։ Նիստը բացում է Էդ. Թոփչյանը։ Մ. Արմենի և Հ. Սահյանի հաշվետվություններից հետո քննարկմանը մասնակցում են՝ Գ. Մահարին, Հր. Թամրազյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Նորենցը, Հր. Հովհաննիսյանը, Ս. Խանդադյանը, Ստ. Զորյանը, Ս. Այվազյանը, Գ. Սևունցը, Մ. Մարգարյանը, Ա. Դարբինին, Վ. Գրիգորյանը։

Դեկտեմբերի 9-ին

Լայնորեն նշվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրության 50-ամյակը։

Դեկտեմբերի 11-ին

Նշվում է Սուրեն Սպանդարյանի ծննդյան 80-ամյակը։

Դեկտեմբերի 13—15-ը

Երևանի պետական համալսարանում անց են կացվում բրյուսովյան ընթերցումներ։ Բացման խոսք է ասում Ղ. Այվազյանը։ Զեկուցումներ են կարդում՝ Հովհ. Ղանալանյանը («Հայկական պոեզիան և Վ. Բրյուսովը հայ պոեզիայի թարգմանիչ»), Տ. Հախումյանը («Գորկի և Բրյուսով»), Կ. Գերասիմովը («Բրյուսովի գիտական պոեզիան»), Ն. Մոխիրևը («Բրյուսովն ու Տվարդովսկին»)։ Բրյուսովի մասին հուշերով հանդես են գալիս գրական-գեղարվեստական ինստիտուտի նախկին ուսանողուհի Զոյա Յասինսկայան, բանաստեղծի եղբայր Ալեքսանդր Բրյուսովը, բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի դուստր Ա. Հովհաննիսյանը և Մարտիրոս Սարյանը։

Դեկտեմբերի 16-ին

«Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 290) հրապարակվում է հաղորդում այն մասին, որ «խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ 1963 թվականի հոկտեմբերին նշվելու է հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։

Այդ կապակցությամբ ՍՍՀՄ գրողների միության քարտուղարությունը հոբելյանը կազմակերպող և անցկացնող հանձնաժողով է ստեղծում հետևյալ կազմով. Գ. Մարկով (նախագահ), Մ. Կոտով և Էդ. Թոփչյան (նախագահի տեղակալներ), Ի. Աբաշիձե, Ի. Անիսիմով, Պ. Անտոկոլսկի, Մ. Բաժան, Գ. Վլադիկին, Ս. Գայսարյան, Ի. Գրիշաշվիլի, Ս. Դարոնյան, Ն. Զարյան, Վ. Զվյագինցևա, Զուլֆիա, Ս. Կապուտիկյան, Վ. Կոսոլապով, Ն. Լիսյուչևսկի, Վ. Լուկս, Ա. Լուպան, Դ. Լյաշկևիչ, Գ. Մանասյան (պատասխանատու քարտուղար),

Է. Մեժելայտիս, Լ. Նովիչենկո, Վ. Օզերով, Ա. Պրոկոֆև, Մ. Ռահիմ, Ռ. Ռզա, Վ. Սմիրնով, Լ. Սոբոլև, Ա. Սուրկով, Ա. Տվարդովսկի, Ն. Տիխոնով, Պ. Տիչինա, Մ. Շահինյան, Ս. Շչիպալով, Ի. Էրենբուրգ։

Դեկտեմբերի 25-ին

Մաշտոցի անվան Մատենադարանի նիստերի դահլիճում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին։ Նստաշրջանը բացում է Լ. Խաչիկյանը, զեկուցում են Ա. Բաբայանը, Ռ. Իշխանյանը, Յա. Դաշկևիչը (Կիև), Շ. Շահնազարյանը։

Դեկտեմբերի 26—27-ը

ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված սփյուռքահայ գրականության հարցերին։ Նստաշրջանը բացում է ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը։ Զեկուցումներ են կարդում Ստ. Կուրտիկյանը, Մելինե Մանուշյանը, Մ. Բաբլոյանը, Գ. Սևանը, Ս. Աղաբաբյանը։

Դեկտեմբերի 28-ին

Գրողների տանը քննարկվում է Շ. Բաթիկյանի «Նրա ճանապարհը» վեպի 3-րդ հատորը։ Զեկուցում է Հ. Ֆելեքյանը, ելույթ են ունենում Գ. Հովսեփյանը, Լ. Հախվերդյանը, Հր. Թամրազյանը, Հ. Սահյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը։

Դեկտեմբերի 30-ին

Նշվում է Գեղամ Սարյանի ծննդյան 60-ամյակը։ Հանրապետության թերթերը էջեր են նվիրում բանաստեղծի տարելիցին։

ՍՍՀՄ գրողների միության վարչության ողջույնից

«Թանկագին Գեղամ Բաղդասարովիչ.

ՍՍՀՄ գրողների միության վարչությունը սրտագին շնորհավորում է Ձեզ՝ Ձեր ծննդյան վաթսունամյակի կապակցությամբ։ Ավելի քան քառասուն տարի Դուք բեղմնավոր աշխատանք եք կատարում սովետահայ գրականության ասպարեզում... Ձեր ստեղծագործության մեջ, որը սերտորեն կապված է հարազատ ժողովրդի կյանքին, արտացոլված է ժողովրդի հերոսական պայքարը ազատության և անկախության համար, նրա հիանալի հաջողությունները սոցիալիստական շինարարության բնագավառում։ Դուք սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրության խանդավառ երգիչն եք։ Ձեր բանաստեղծությունները և պոեմները լի են իսկական մարդասիրությամբ, նրանք ջերմացած են ձեր աղնիվ սրտի մեծ կրակով»։

«Գրական թերթ», № 52

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Զարյան Ն. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Էմին Գ. — Երկու ճամփա
Էմին Գ. — Ժամացույցի առաջ (ռուսերեն), Մոսկվա
Լուսինց Ա. — Աստղերը կանչում են
Մահարի Գ. — Նախրյան կրակներ (ռուսերեն), Մոսկվա
Մարգարյան Ա. — Հեռաստաններ
Մարգարյան Մ. — Լիրիկա
Զարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 1
Սահյան Հ. — Հայաստանը երգերի մեջ
Միտալ Կ. — Ոսկե հունձ
Ոսկակ Պ. — Հավատարմություն (ռուսերեն), Մոսկվա

Արձակ

Ավետյան Ռ. — Սպարտակ
Ալաջաջյան Ստ. — Փյունիկ
Այվազյան Ս. — Տուր ձեռքդ, կյանք
Անանյան Վ. — Լեռնային լճի գաղտնիքը (ուկրաիներեն), Կիև
Ավագյան Ս. — Պատմվածքներ
Գյուլնազարյան Խ. — Մեր կյանքի օրերը (ուկրաիներեն), Կիև
Դարյան Զ. — Քասախ
Զորյան Ստ. — Երկերի ժողովածու, հ. 5, 6, 7
Թաթիկյան Շ. — Նրա ճանապարհը
Կամարի — Անիծյալ անձրևը
Կարապետյան Բ. — Սեր և սուսեր
Հարությունյան Վլ. — Բողոք լեռներում
Հովսեփյան Բ. — Սերմնացանները չվերադարձան
Հուրունց Լ. — Կարապներ
Ղուկասյան Հովհ. — Ոսկան Երևանցի
Մահարի Գ. — Լռության ձայնը
Մնացականյան Մ. — Մեծ քաղաքի ադամուկը
Նոր-Այր — Լռվա աստղեր
Շահնուր Շ. — Երկեր
Սահինյան Ա. — Խաչուղիներ
Վերդյան Բ. — Լեռների որդին
Տարոնցի Ս. — Նովելներ
Քեշիշյան Գ. — Քեղանից հետո, քեղ հետ
Քոչար Հր. — Մեծ տան դավակները (ռուսերեն), հ. 1, 2

Դրամատուրգիա

Բեռ Գ. — Աշխարհը ինձնով է սկսվում
Մանկական պիեսներ

Պապայան Ա. — Կատակերգություններ
Տեր-Գրիգորյան Գր. — Գարնան անձրև
Օվչիննիկով Մ. — Դժվար անցում (ռուսերեն)

Ժողովածուներ

Գրական Հայաստան (ազրբեջաներեն), հ. 4
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 3
Հայկական նովելներ (ռուսերեն)
Ուսանողի քնար

Դասականներ

Աղայան Ղ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Բաշալյան Լ. — Ընտիր երկեր
Զոհրապ Գ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Զոհրապ Գ. — Նովելներ
Զոհրապ Գ. — Նովելներ (ռուսերեն), Մոսկվա
Խաչատկյան Ավ. — Պատմվածքներ, լեգենդներ
Կոստանդին Երզնկացի — Տաղեր
Կորյուն — Վարք Մաշտոցի
Հովհաննես Կարնեցի — Տաղարան
Մուրացան — Երկերի ժողովածու, հ. 2
Շիրվանզադե — Երկերի ժողովածու, հ. 10
Շիրվանզադե — Քառս (ազրբեջաներեն), Բաքու
Չյոկյուրյան Տ. — Վանքը
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 1
Պռոշյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Բաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, 4
Բաֆֆի — Խենթ (ռուսերեն)
Օտյան Ե. — Երկերի ժողովածու, հ. 4, 5

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Առաքելյան Ա. — Հունական գրականության պատմություն
Բաբայան Ե. — Պերճ Պռոշյան
Գրիգորյան Կ. — Հայաստանը ռուս գրականության և նկարչության մեջ. 18—19-րդ դարի առաջին կեսը
Թամրազյան Հր. — Գրական ուղիներում
Կարինյան Ա. — Գրական-քննադատական հոդվածներ
Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, 2
Լեո — Մեսրոպ Մաշտոց
Մելիք Բախշյան Ս. և Հակոբյան Տ. — Մեսրոպ Մաշտոց (ռուսերեն)
Մեսրոպ Մաշտոց (հոդվածների ժողովածու)
Նազարյան Շ. — Հրաչյա Քոչար
Ոսկերչյան Ա. — Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները

Սահակյան Պ. — Կոնֆլիկտը Շիրվանզադեի «Քաոս» վեպում
Սևակ Գ. — Մեսրոպ Մաշտոց
Փափազյան Վրթ. — Գրականության մասին

Թարգմանություն

Դյումա-որդի Ա. — Քամելիադարդ տիկինը
Իլֆ Ի. և Պետրով Ե. — Տասներկու աթոռ։ Ոսկե հորթը
Մոպասան — Վալտեր Շնաֆսի արկածը
Մորավիա Ա. — Ջոչարա
Պաուստովսկի Կ. — Հեռավոր տարիներ
Պոլենց Վ. — Գյուղացի Բյուտները
Սաբիր Մ. — Հատընտիր
Սերվանտես — Դոն Կիխոտ
Ստելմախ Մ. — Մարդու արյունը ջուր չէ
Ցվեյգ Ստ. — Ամերիգո
Ուրուգվայական պատմվածքներ
Ֆիրդուսի — Սիավուշ

1963

Հունվարի 9-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում նշվում է Ս. Սպանդարյանի ծննդյան 80-ամյակը։

Հունվարի 11-ին

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը լայնորեն նշելու առթիվ ստեղծվում է կառավարական հոբելյանական հանձնաժողով՝ Ա. Քոչինյան (նախագահ), Ի. Աբաշիձե, Գ. Աբով, Հ. Այվազյան, Վ. Ավետիսյան, Հովհ. Բաղդասարյան, Ս. Բայանդուր, Գ. Բորյան, Ի. Գրիշաշվիլի, Ա. Դադուլյան (Գուսան Աշոտ), Մ. Դավթյան, Վ. Դավթյան, Զ. Դարյան, Ն. Զարյան, Ռ. Զարյան, Ստ. Զորյան, Էդ. Թոփչյան, Ռ. Խաչատրյան, Ս. Կապուտիկյան, Ստ. Կուրտիկյան, Մ. Հասրաթյան, Վ. Համբարձումյան, Գ. Հայրյան, Ա. Հարությունյան, Գ. Հովնան, Հր. Մարգարյան, Է. Միրզոյան, Բ. Ներսիսյան, Վ. Նորենց, Հ. Շիրազ, Ռ. Պարսամյան, Ռասուլ Ռզա, Տ. Սաղանդարյան, Վ. Սահակյան, Հ. Սահյան, Գ. Սարյան, Մ. Սարյան, Շ. Սիմոնյան, Վ. Սիրցև, Շ. Տալյան, Ն. Տիխոնով, Պ. Տիշինա, Հր. Քոչար։

Հունվարի 18-ին

Սիամանթոյի ծննդյան 85-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 3) տպագրվում են Գ. Մահարու «Մեր մեծ, մեր սխրալի Սիամանթոն», Պ. Սևակի «Ասպետորեն անկրկնելին...» հոդվածները։

Նշվում է Լ. Հարությունի ծննդյան 50-ամյակը։ Հրապարակվում են ՍՍՀՄ գրողների և Հայաստանի սովետական գրողների միության վարչությունների ողջույնի խոսքերը։

Գրողների տանը քննարկվում է Բ. Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան» վեպը։ Զեկուցում է Ա. Ինճիկյանը, ելույթ են ունենում՝ Ս. Սարինյանը, Ա. Սահինյանը, Լ. Հախվերդյանը, Հր. Թամրազյանը, Կ. Դանիելյանը, Հր. Մուրադյանը, Հր. Հովհաննիսյանը. ընթերցվում է Գ. Էմինի գրավոր խոսքը։

Հունվարի 22-ին

Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերության դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված իրանահայ բանաստեղծ Դեի (Մարգար Ղարաբեգյան) ստեղծագործություններին։ Դեի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցումով հանդես է գալիս Շահե Տատուրյանը։

Հունվարի 23-ին

Թբիլիսիում, Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի կազմակերպած երեկոյում, նշվում է Բագրատ Այվազյանի ծննդյան 100-ամյակը։ Ներածական խոսք է ասում Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի նախագահ Բ. Սեյրանյանը, զեկուցում է Ա. Մխիթարյանը, հուշեր են պատմում Ե. Թորգոմյանը, Գ. Գրիգը, Ս. Ավչյանը, Մ. Ասլանյանը և ուրիշներ։

Մարտի 1-ին

«Գրական թերթում» (№ 9) տպագրվում է Կոնստանտին Գամսախուրդիայի «Մենք հավերժ բարեկամներ ենք» ընդարձակ էսսեն։

Մարտի 3-ին

ՀՍԳ միության կուսակազմակերպության ժողովում լսվում է «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր Ստ. Կուրտիկյանի զեկուցումը՝ ամսագրի ներկա վիճակի և անելիքների մասին։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Զ. Դարյանը, Ս. Խանզադյանը, Մ. Արմենը, Հր. Հովհաննիսյանը, Վ. Նորենցը։

Մարտի 22-ին

Գրողների տանը քննարկվում է Գ. Մահարու «Լռության ձայնը» ժողովածուն։ Զեկուցում է Ս. Արզումանյանը, արտահայտվում են՝ Լ. Հախվերդյանը, Հ. Սահյանը, Վ. Նորենցը, Վ. Աճեմյանը, Ս. Խանզադյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Մարտի 29-ին

Տեղի է ունենում հանրապետության ստեղծագործական մտավորականության ակտիվի ժողովը։ Գրողներից ելույթ են ունենում՝ Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը, Հր. Քոչարը, Հ. Շիրազը, Ստ. Կուրտիկյանը։

Ապրիլի 13-ին

Նշվում է Մ. Արազու ծննդյան 85-ամյակը։

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարության ողջույնը

«Թանկագին ընկեր Արազի։ ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարությունը ջերմորեն ողջունում է Ձեզ՝ Ձեր ծննդյան փառապանծ ութսունհինգամյակի առթիվ։ Ցանկանում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր ուրախություններ։ Ամուր սեղմում ենք Ձեր ձեռքը։

Ֆեդին, Մարկով, Տիխոնով, Վորոնկով, Բաժան, Սուրկով, Տվարդովսկի, Կոժևնիկով»։

«Գրական թերթ», № 15

Ապրիլի 21-ին

Թբիլիսիում Սայաթ-Նովայի շիրիմին այցելության են գալիս հայ գրողներ Ս. Տարոնցին, Վ. Նորենցը, Սարմենը, Հ. Սահյանը, Վ. Դավթյանը, Հր. Հովհաննիսյանը, Ս. Խանզադյանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Բ. Հովսեփյանը, Հովհ. Ղուկասյանը, Զ. Դարյանը, Էդ. Թոփչյանը, Ս. Գրիգորյանը, վրաց բանաստեղծներ Ի. Նոնեշվիլին և Գ. Լեոնիձեն, Թբիլիսիում բնակվող հայ գրողներ, ուսուցիչներ, աշակերտներ։ Էդ. Թոփչյանը և Գ. Լեոնիձեն պատակ են դնում Սայաթ-Նովայի շիրիմին։

Ապրիլի 22-ին

Գրականության բնագավառում լենինյան մրցանակներ են շնորհվում Ջ. Այտմատովին («Լեռների ու տափաստանների վիպակների» համար), Ռ. Հ. Համզատովին («Բարձր աստղեր» բանաստեղծությունների գրքի համար), Ս. Յու. Մարշակին («Ընտիր լիրիկա» բանաստեղծությունների գրքի համար)։

Ապրիլի վերջերին

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում անցկացվող «Թումանյանական ընթերցումներում» լսվում են Ս. Ադաբաբյանի «Թումանյանի գեղագիտական իդեալը և արդիականությունը», Էդ. Ջրբաշյանի «Կոմիկականի առանձնահատկությունները «Պոետն ու մուսան» պոեմում», Գ. Գասպարյանի «Թումանյանը և հայ բառարանագրությունը», Տ. Կարապետյանի «Թումանյանը վրաց գրական մտքի գնահատմամբ», Ռ. Իշխանյանի «Թումանյանը և Տերյանը», Գ. Դանիելյանի «Գիքորի կերպարի հոգեբանական վերլուծությունը» զեկուցումները։

Մայիսի 5-ին

Նշվում է Վ. Ալազանի ծննդյան 60-ամյակը։ Այս առթիվ «Գրական թերթում» (№ 18) տպագրվում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության ողջույնը, Գ. Սարյանի և Վ. Նորենցի ողջույնի խոսքերը։

Մայիսի 7-ին

Մոսկվայում բացվում է երիտասարդ գրողների համամիութենական չորրորդ խորհրդակցությունը։

Մայիսի 10-ին

Գրողների տանը քննարկվում է Խ. Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը» գիրքը։ Զեկուցում է Մ. Շաթիրյանը, ելույթ են ունենում Մ. Կորյունը, Ս. Շահիկյանը, Կ. Դանիելյանը, Ն. Զարյանը։

Մայիսի 14-ին

ՀԿԿ Կենտկոմում տեղի է ունենում սովետահայ գրականության հետագա զարգացման հարցերին նվիրված խորհրդակցություն։

Խորհրդակցությունում գրողներից ելույթ են ունենում Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Ս. Խանզադյանը, Էդ. Թոփչյանը, Մ. Դավթյանը, Քր. Թափալցյանը, Վ. Նորենցը։

Մայիսի 14—15-ը

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Հայաստանի սովետական գրողների միության միացյալ նստաշրջանը՝ նվիրված սովետահայ գրականության արդի վիճակին։ Ներածական խոսք է ասում Էդ. Թոփչյանը, զեկուցումներ են կարդում Վ. Մնացականյանը («1961—62 թթ. սովետահայ պոեզիան»), Զ. Ղուկասյանը («Սովետահայ ժամանակակից վեպը»), Ա. Զաքարյանը («Սովետահայ գրականագիտության և գրական քննադատության արդի վիճակը»), Ս. Արզումանյանը («Սովետահայ պատմվածքը արդի էտապում»), Խ. Գյուլնազարյանը («Սովետահայ մանկական գրականությունը»)։

Մայիսի 17-ին

«Գրական թերթում» (№ 20) տպագրվում է Վրաստանի գրողների միության առաջին քարտուղար Ի. Աբաշիձեի, Ադրբեջանի գրողների միության առաջին քարտուղար Մ. Հուսեյնի և Հայաստանի գրողների միության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանի «Անդրկովկասի ժողովուրդների մեծ երգիչը» հոդվածը՝ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի մոտալուտ տոնակատարության առթիվ։

Մայիսի 29-ին

Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության սրահում տեղի է ունենում հավաքույթ՝ նվիրված Վազգեն Շուշանյանի ծննդյան 60-ամյակին։ Երեկոն բացում է Ստ. Կուրտիկյանը։ Վ. Շուշանյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է կարդում Գեղամ Սևանը։ Հուշերով հանդես են գալիս Շահեն Տատուրյանը և Արման Կոթիկյանը։

Մայիսի 30-ին

Գրողների տանը տեղի է ունենում սովետահայ ժամանակակից վիպագրության հարցերին նվիրված բանավեճ։ Զեկուցումով հանդես է գալիս Ս. Աղաբաբյանը։ Ելույթ են ունենում Լ. Հախվերդյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Արզումանյանը, Զ. Ղուկասյանը, Ն. Զարյանը, Էդ. Թոփչյանը, Ռ. Արամյանը, Հր. Թամրազյանը։

Հունիսի 7-ին

«Գրական թերթը» (№ 23-ում) հաղորդում է, որ Բուլղարիայի «Նարոդնա պրոսվետա» հրատարակչությունը թուրքերեն լեզվով լույս է ընծայել Մ. Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակը։

Հունիս

Լույս է տեսնում «Պիոներ կանչ» թերթի հավելվածը ամենափոքրիկների համար՝ «Ծիծեռնակ» պատկերազարդ հանդեսի առաջին համարը։

Հուլիսի 19-ին

Վ. Մայակովսկու ծննդյան 70-ամյակի կապակցությամբ «Գրական թերթում» (№ 29) տպագրվում են Ն. Զարյանի «Հեղափոխության պոետը և պոեզիայի հեղափոխությունը», Վ. Դավթյանի «Առնական և քնքուշ» հոդվածները,

հատվածներ Վ. Մայակովսկու «Ֆլեյտա-ողնաշար» պոեմից՝ Պ. Սևակի թարգմանությամբ և այլ նյութեր։

Հուլիսի 26-ին

Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի նախագահության որոշումը՝ Վ. Յա. Բրյուսովի ծննդյան 90-ամյակը 1963 թ. դեկտեմբեր ամսին նշելու և այդ կապակցությամբ հոբելյանական հանձնաժողով ստեղծելու մասին։

Հուլիսի 28-ին

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Վլ. Մայակովսկու ծննդյան 70-ամյակին։ Ներածական խոսք է ասում Գ. Հովնանը։ Լսվում են Գ. Բորյանի «Մայակովսկու պոեզիայի ավանդությունները» և Ս. Մելիք-Նուբարովի «Մայակովսկին սոցիալիստական ռեալիզմի քնարերգու» զեկուցումները։

Օգոստոսի 2-ին

Նշվում է Գ. Մահարու ծննդյան 60-ամյակը։ Այս առթիվ հրապարակվում է Հայաստանի սովետական գրողների միության վարչության ողջույնը։ «Գրական թերթում» տպագրվում են Հ. Սահյանի «Սիրելի հոբելյար» ողջույնի խոսքը, Վ. Նորենցի «Նրազ» բանաստեղծությունը, Ս. Աղաբաբյանի «Ուրախ-խուր գրողը» հոդվածը։

Հայաստանի սովետական գրողների միության ողջույնից

«Սիրելի Գուրգեն Մահարի.

Հայաստանի սովետական գրողների միության վարչությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր ծննդյան 60-ամյակը և ողջունում Ձեզ՝ սովետական տաղանդավոր գրողիդ, հայ գրականության վաստակավոր մշակիդ և աղնիվ քաղաքացուդ։

Սովետահայ գրականության մեջ մտնելով նրա սկզբնավորման առաջին իսկ օրերից, դուք Ձեր հարուստ և հյութեղ տաղանդն եք նվիրաբերել նրա զարգացմանը, ստեղծելով ճշմարիտ արվեստի այնպիսի երկեր, որոնք մտել են սովետահայ գրականության գանձարանը, որպես նրա մնայուն արժեքները։

Ձեր սրտագրավ և ջերմ քնարերգությունը, որի մեջ շնչում է հայրենի հողը, նրա գեղեցկությունների քնքուշ սերը, սերը դեպի մարդը, գեղեցիկը, աղնիվը, Ձեր ինքնատիպ, գունեղ, զվարթ հումորով ու աղնիվ տխրությամբ ներթափանցված արձակը, որի մեջ գեղարվեստական հուշիչ պատկերներով տրված են համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հայ ժողովրդի մեծ ողբերգության դրվագները և ապա նոր կյանքը, կենցաղը, վերակառուցվող երկրի պատկերները, լայն ճանաչում են բերել Ձեզ, սիրելի դարձնելով Ձեր անունը ընթերցողների լայն շրջաններում...»։

«Գրական թերթ», № 31

Օգոստոսի 5-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գրող Գուրգեն Գրիգորի Ահեմյանը (Մահարին) սովետական գրականության զարգաց-

մանը մատուցած ծառայությունների համար և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Օգոստոսի 9-ին

Նշվում է Մ. Վեսպերի (Դարբաղյանի) ծննդյան 70-ամյակը։

Սեպտեմբերի 13-ին

Նշվում է Վ. Նորենցի ծննդյան 60-ամյակը։

ՀՍԳՄ վարչության ողջույնի խոսքը

«Հարգելի Վաղարշակ Նորենց.

Հայաստանի սովետական գրողների միության վարչությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր ծննդյան 60-ամյակը և ողջունում Ձեզ՝ սովետահայ գրականության առանցքն մշակիդ, ազնիվ քաղաքացուդ։

Դուք, Ձեր սերնդի գրողներից շատերի նման, կյանքի դժվարին ճանապարհներով եկաք գրականություն։ Թեև դեռ պատանի, բայց կյանքի յուրահատուկ կենսափորձ ունեիք Դուք և այդ կենսափորձն էր, որ արտահայտվեց Ձեր առաջին ստեղծագործություններում, որոնք արժանացան Հովհ. Թումանյանի ուշադրությանն ու խրախուսանքին։

Սովետահայ գրականության առաջին զինվորներից մեկը եղաք դուք և մաքառելով նրա «լիրիկական ֆրոնտում» Ձեր բոլոր ուժերը, բոլոր կարողությունները նվիրաբերեցիք, որպեսզի մարտունակ լինի այդ «ֆրոնտը»։ Ձեր «Սպիտակ տեսիլներ» բանաստեղծությունների գողտրիկ շարքը, Եղիշե Չարենցին ուղղված շափածո նամակը, «Կաքավներ» բալլադը, սովետական մարդկանց մեծագործություններին, հայրենի երկրի բնությանը նվիրված Ձեր շատ բանաստեղծություններ, որ խոհով ու զգացմունքով են ներդաշնակված, սովետահայ պոեզիայի լավագույն նմուշներից են։ Ձեր ստեղծագործությունները միշտ էլ աչքի են ընկել իրենց գաղափարական նպատակասլացությամբ, քաղաքացիական կրքով ու պաթոսով, կյանքի հրատապ հարցերին արձագանքելու ազնիվ միտումով։

Ձեր կյանքում եղել են նաև դժվարին ու ծանր տարիներ, բայց նրանք չեն ընկճել Ձեզ. Դուք անխախտ եք պահել Ձեր հավատը, բարձր եք պահել սովետական գրողի ու քաղաքացու կոչումը։

Ձեր 60-ամյակը Դուք դիմավորում եք վաստակած և ստեղծագործական նոր ուժերով լի։ Ձեր գրական աշխատանքը Դուք սերտորեն առնչում եք հասարակական ակտիվ գործունեության հետ։

Հարգելի Հոբելյար.

Ջերմորեն ողջունելով Ձեր վաստակավոր կյանքի 60-ամյակը, երկար կյանք ու քաջառողջություն ենք ցանկանում Ձեզ, որպեսզի այսուհետև ևս Ձեզ հատուկ նվիրվածությամբ ու ազնվությամբ ծառայեք հայրենի գրականության զարգացմանը»։

«Գրական թերթ», № 37

Սեպտեմբերի 17—19-ը

Գրողների տանը տեղի է ունենում երիտասարդ գրողների հանրապետական խորհրդակցություն։ Բացման խոսք է ասում էդ. Թոփչյանը։ Լսվում են

Ս. Արզումանյանի և Հ. Ֆելեքյանի զեկուցումները երիտասարդական արձակի և պոեզիայի մասին։ Ելույթ են ունենում Ս. Տարոնցին, Վ. Նորենցը, Մ. Արմենը, Լ. Հախվերդյանը, Ն. Միքայելյանը, Լ. Դուրյանը, Վ. Գրիգորյանը, Ա. Սահինյանը, Ս. Վահունին, Հ. Շիրազը և ուրիշներ։

Սեպտեմբերի 19-ին

«Լիտերատուրնայա գազետայում» Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ տպագրվում է Մ. Շահինյանի «Խալխի նամուս քաշեցի...» հոդվածը։

Հ ո դ վ ա ծ ի ց

«Սայաթ-Նովայի ստեղծագործությունն ունի մի նշանավոր յուրահատկություն։ Ծագումով հայ, ծնվելով և գրեթե ամբողջ կյանքն ապրելով Վրաստանում, Սայաթ-Նովան իմացել է անդրկովկասյան երեք լեզուներն էլ, նրբորեն զգացել դրանց յուրահատկությունները, որովհետև հասկանում էր անդրկովկասյան երեք ժողովուրդներից յուրաքանչյուրի ազգային բնավորությունը։ Այստեղից էլ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն գրված նրա բանաստեղծությունների ժանրային հետաքրքրական տարբերությունները։ Ինձ թվում է, որ նրա բանաստեղծություններում կարելի է գտնել ոչ միայն ժանրային տարբերություններ, ինչպես նշել են գրականագետները, այլև այդ ժողովուրդներից յուրաքանչյուրին հատուկ և Սայաթ-Նովային հայտնի գրական տրադիցիաների հետքերը՝ Նիզամու, Ռուսթավելու, Ֆիրդուսու արձագանքները. հայ գրականագետները գտել են նաև Գրիգոր Նարեկացու հոգևոր լիրիկայի հեռավոր հնչյունները։ Այս բոլորը դեռևս կարոտ է հետագա մշակման և ուսումնասիրման։

Առայժմ անվիճելի է մի բան, Սայաթ-Նովայի խորապես մարդկային անհնման և հոգեհույզ բանաստեղծական ժառանգությունը հավասարապես մոտ և հարազատ է թե՛ հայերին, թե՛ վրացիներին և թե՛ ադրբեջանցիներին և այդ երեք ժողովուրդների եղբայրական համերաշխության հզոր օղակն է հանդիսանում։ Սայաթ-Նովայի պոեզիայի ինտերնացիոնալիզմը շատ բանով պարտական է Անդրկովկասի և Մերձավոր արևելքի ժողովուրդների լեզվին հատուկ նրաժշտականությանը, որ միատեսակ սիրելի ու հասկանալի է Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում և որն ստացել է «Արևելյան երաժշտություն» ընդհանուր անվանումը։ Այդ իսկ պատճառով Սայաթ-Նովայի ստեղծագործության ուսումնասիրողները չպետք է մոռանան նրա անմահ պոեզիայի երաժշտական կողմը»։

«Գրական թերթ», № 39

Սեպտեմբերի 20—22-ը

Երևանի հանրապետական մարզադաշտում տեղի է ունենում Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մեծ երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված տոնահանդես։ Տոնահանդեսում ելույթ են ունենում Հայաստանի, Մոսկվայի, Լենինգրադի, Բելոռուսիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Էստոնիայի արվեստի վարպետները։

Սեպտեմբերի 24—25-ը

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Բացման խոսք է ասում ինստիտուտի դիրեկտոր Մ. Նահապետյանը։ Լսվում են Հովհ. Ղանալանյանի («Սայաթ-Նովա»), Գ. Բրուտյանի («Սայաթ-Նովայի աշխարհայացքը»), Հ. Կուսիկյանի («Սայաթ-Նովայի լեզուն և ոճը»), Մ. Հասրաթյանի («Սայաթ-Նովան իր դարաշրջանի բանաստեղծ և գաղափարախոս»), Տ. Հախումյանի («Սայաթ-Նովան սիրո երգիչ») զեկուցումները։

Հոկտեմբերի 4-ին

«Գրական թերթը» (№ 40) տպագրում է Երևանում հյուրընկալվող ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի հետ ունեցած հարցազրույցը։ Ֆր. Ֆեյդին «Գրական թերթին» է թողնում հետևյալ գրությունը. «Մեծ գոհունակությամբ կը տեսնիմ, որ հայոց բազմադարյան գրականությունը միշտ այս եռանդով կը մշակվի և միշտ գլուխգործոցներու ծնունդ կու տա և կը շնորհավորիմ «Գրական թերթին» ընթերցողները իրենց մատենագիտության հանդեպ տածած հետաքրքրության համար»։

Հոկտեմբերի 4—7-ը

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։ Լսվում են Մ. Մկրտչյանի («Սայաթ-Նովայի պոեզիան»), Ս. Պողոսյանի («Սայաթ-Նովայի դարաշրջանը»), Ռ. Հարությունյանի («Լուսավորականության արտահայտությունները Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ»), Վ. Մկրտչյանի («Սայաթ-Նովայի հումանիզմը»), Գ. Նալբանդյանի («Սայաթ-Նովայի գործածած մի շարք պարսկերեն բառերի իմաստի ճշտումը և ստուգաբանությունը»), Մ. Ջավարյանի («Սայաթնովագիտությունը Վրաստանում»), Գ. Թաթոսյանի («Սայաթ-Նովան ռուսերեն») զեկուցումները։ Լսվում է նաև Վ. Թուփուրիայի զեկուցումը Սայաթ-Նովայի վրացերեն բանաստեղծությունների լեզվի մասին։

Հոկտեմբերի 11-ին

«Գրական թերթը» (№ 41) տպագրում է Երևանում հյուրընկալվող ուկրաինացի անվանի բանաստեղծ Լեոնիդ Պերվոմայսկու հետ ունեցած հարցազրույցը։

Լ. Պերվոմայսկու խոսքից

«Հայ առաջին գրողը, որի հետ բախտ եմ ունեցել ծանոթ լինելու՝ եղիշե Չարենցն էր։ 1934 թվականին էր դա, սովետական գրողների առաջին համագումարում։ Ես այն ժամանակ երիտասարդ բանաստեղծ էի, համարյա սկսնակ, իսկ Չարենցը Միության խոշորագույն գրողներից մեկն էր։ ...Իր էրուդիցիայով, համաշխարհային պոեզիայի իմացությամբ, գրականության և հատկապես պոեզիայի ապագայի նկատմամբ ունեցած իր հայացքներով նա վիթխարի ազդեցություն գործեց ինձ վրա, և ես Չարենցին

նվիրված մի բանաստեղծություն գրեցի, որ այն ժամանակ լույս տեսավ «Լիտերատուրնայա գազետայում»։

Հոկտեմբերի 12-ին

Արտասահմանյան երկրների հետ բարեկամության հայկական ընկերության սրահում տեղի է ունենում սփյուռքահայ նշանավոր գրող Շահան Շահնուրի ծննդյան 60-ամյակին նվիրված երեկո։ Բացման խոսք է ասում Ստ. Կուրտիկյանը, զեկուցում է Ստ. Ալաջաջյանը։

Հոկտեմբերի 14—16-ը

Տեղի է ունենում Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Բացման խոսք է ասում ինստիտուտի ռեկտոր Վ. Համազասպյանը. զեկուցումներ են կարդում Մ. Հասրաթյանը («Սայաթ-Նովայի կյանքն ու գործունեությունը»), Ա. Ղարիբյանը («Թբիլիսիի բարբառը Սայաթ-Նովայի երգերում»), Ա. Մկրտչյանը («Սայաթ-Նովայի քնարերգությունը»), Յ. Բրուտյանը («Սայաթ-Նովան ու երաժշտությունը»), Ա. Ղուկասյանը («Սայաթնովագիտությունը»)։

Հոկտեմբերի 19-ին

Սկսվում են Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված հոբելյանական օրերը։ Նույն օրը հանդիսավոր պայմաններում բացվում է մայրաքաղաքի Սայաթ-Նովայի անվան նորակառույց պողոտան։

Հոկտեմբերի 22-ին

Գրողների միության դահլիճում տեղի է ունենում Սայաթ-Նովային նվիրված հոբելյանական երեկո։ Ներածական խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ Հայ հանճարեղ գուսանի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցում է Պարույր Սևակը։ Այնուհետև բանաստեղծներ Ա. Գրաշին, Հ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Կոչևակին և Ա. Գառնակերյանը կարդում են Սայաթ-Նովային նվիրված իրենց գործերը։

Հոկտեմբերի 24-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում Էդ. Միրզոյանը, զեկուցումներ են կարդում Ն. Թահմիզյանը, Ռ. Դրամբյանը, Մ. Ղազարյանը, Մ. Մանուկյանը, Մ. Աղայանը։

Հոկտեմբերի 26-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված բարեկամության մեծ երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Հոբելյանական նիստին մասնակցում են ամերիկյան գրող Ջոն Ստեյնբեքը, դանիացի գրող Կանս Էբսեն և հյուրեր Հնդկաստանից, Չիլիից, Իտալիայից։

Հանդիսավոր նիստը բացում է կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ա. Քոչինյանը։ Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագոր-

ծության մասին զեկուցում է էդ. Բոփչյանը։ Ողջույնի խոսք են ասում Լ. Նովիչենկոն (խաղաղության համաշխարհային խորհրդի, ՍՍՀՄ գրողների միության վարչության և խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անունից), Վ. Ֆյոդորովը (ՌՍՖՍՀ գրողների անունից), Ի. Աբաշիձեն (Վրաստան), Վ. Կոշևոյին (Ուկրաինա), Ս. Ռուստամը (Ադրբեջան), Ն. Պաշկևիչը (Բելոռուսիա), Ջուհրաթը (Ուզբեկստան), Կ. Սատիբալդին (Ղազախստան), Յու. Մաբցինկյավիչուսը (Լիտվա), Ա. Սկալբեն (Լատվիա), Վ. Տելեուկենը (Մոլդավիա), իտալահայ գրող Ար. Սրապյանը, Մ. Սայեդ Աբդուլին (Հնդկաստան), Հ. Ջունուսովը (Կիրգիզիա), Նիկանոր Պարան (Չիլի), Ռ. Ջադեն (Տաջիկստան), Լ. Տիգանեն (Էստոնիա), Ա. Աթաջանովը (Թուրքմենիա)։

Լ. Նովիչենկոյի խոսքից

«Սայաթ-Նովայի հանճարեղ անունը այնքան պես փայլատակում է այն հիանալի գրողների, նկարիչների, լուսավորիչների, դիտականներ բազմաթիվ անունների համաստեղության մեջ, որոնց գործերով հայ ժողովուրդը հարստացրել է մեր հայրենիքի, ամբողջ մարդկության կուլտուրայի գանձարանը։

Սայաթ-Նովան համաշխարհային պոեզիայի մեջ է մտնում իբրև տակավոր հումանիստ-բանաստեղծ, դեմոկրատ-բանաստեղծ, որն իր ստեղծագործությամբ ազդարարեց ֆեոդալական քրիստոնեական դաղափարախոսության շղթաներից անհատի ազատագրումը։ Սայաթ-Նովան Պետերբուրգի արևելյան գրչակիցն ու մրցակիցն է»։

Վ. Ֆյոդորովի խոսքից

«Երբ մենք խոսում ենք բանաստեղծի մասին, պետք է խոսել ժողովրդի մասին։ Չի եղել և չկա այնպիսի հանճար, որի թիկունքին կանգնած չլիներ ժողովուրդը։

Երեկ ես բախտ ունեցա լսելու Սայաթ-Նովայի հայերեն բանաստեղծությունները։ Իմ ուշադրությունը գրավեց հետևյալ նախադասությունը՝ «Սերը սեր կու բերե» ես այն այսպես թարգմանեցի՝ «Սերը սեր կծնի»։ Հիանալի միտք է։ Այն ինձ հիշեցրեց ռուսական հետևյալ առածը՝ «Ինչ ցանես, այն էլ կհնձես»։ Սայաթ-Նովան հենց նրանով է թանկ մեզ համար, որ նա սեր է սերմանում։ Այսօր էլ բանաստեղծները նույն խնդիրն ունեն՝ սեր սերմանել»։

Ի. Աբաշիձեի խոսքից

«Այսօր հիանալի առն են նշում Անդրկովկասի ժողովուրդները, մեր ընդհանուր հոգևոր հայրերից մեկի, մեր ընդհանուր նախորդի, ժողովրդական մեծ դուստն ու բանաստեղծ Սայաթ-Նովայի հոբելյանը։

Սայաթ-Նովային մենք ընկալում ենք ոչ թե որպես մեկ բանաստեղծի, այլ անմիջականորեն մի մարդու անձնավորած երգ բանաստեղծի։ Նա չի բավարարվել մի լեզվով, և իր մտքերն ու զգացմունքները շարադրել է միաժամանակ երգ լեզուներով։

Այսօր տոնելով Սայաթ-Նովայի հոբելյանը մենք մեծարում ենք անընկճելի ու ազատաշունչ պոեզիայի հպարտ ոգին, մենք մեծարում ենք այն

ժողովրդի հանճարը, որը ֆեոդալական մռայլ դարաշրջանում անսահման բարձրության է հասցրել հասարակ մարդու՝ աշխատավորի ու արհեստավորի, բանաստեղծի ու երգչի, դեմոկրատի ու հումանիստի, հայրենասերի ու ինտերնացիոնալիստի անունը»։

Վ. Կոչևսկու խոսքից

«Բարձր ամպամերձ լեռնագագաթի նման հառնում է Սայաթ-Նովան երկու դարաշրջանների սահմանագլխին։ Նա նոր հորիզոններ բացեց անդրկովկասյան ժողովուրդների պոեզիայում, իր բանաստեղծական սիրանքով նախապատրաստեց այնպիսի հսկաների մուտքը հայ գրականության մեջ, ինչպես Խաչատուր Աբովյան և Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան ու Եղիշե Չարենց։ Մեծ աշուղը կանգնում է մեր առջև որպես մի հանճարեղ քնարերգու, հումանիստ ու դեմոկրատ, որը չնայած իր մռայլ ու դաժան ժամանակաշրջանի արդյունքը հանդիսացող ներքին հակասություններին, մնում է որպես խելացի, բարի, հավերժական ու սիրելի ուսուցիչ, մարդկության դարնան քաղցրաձայն սոխակ»։

Հնդիկ գրող Մալիք Սայիդ Աբդուլի խոսքից

«Սայաթ-Նովայի կյանքը նվիրված է եղել մարդկության ազատագրմանը։ Եվ նա զովերգել է մարդկային ազատագրված հոգու գեղեցկությունը։ Նա պատկանում էր ժողովրդին, պայքարել ու մեռել է ժողովրդի համար։ Այսօր էլ շատ երկրների միլիոնավոր մարդիկ պայքարում են անկախության համար։ Այդպիսի ժողովուրդների և բովանդակ մարդկության համար Սայաթ-Նովան հսկայական ոգեշնչության աղբյուր է։ Նա Հայաստանի բանաստեղծն է եղել, բայց նա գրել է նաև ամբողջ Կենտրոնական Ասիայի ժողովուրդների համար։ Նա պատմականորեն իր տեղն է գրավել աշխարհի առավել նշանավոր բանաստեղծների շարքում։ Մենք, հնդիկ գրողներս, միանում ենք ձեզ և Հնդկաստանի ժողովուրդների անունից հարգանքի տուրք ենք մատուցում մեծ բանաստեղծ Սայաթ-Նովային»։

Չիլիացի գրող Նիկանոր Բարրայի խոսքից

«Այժմ ես վերջնականապես համոզվեցի, որ սովետների երկրում կատարած իմ ճանապարհորդությունների մեջ Հայաստանը ինձ համար կդառնա ամենանշանակալից ու ամենախոր ապրումների աղբյուր։ Եթե ինձ հարկ լիներ ընտրել երկրորդ հայրենիք, ես կընտրեի Հայաստանը, Սայաթ-Նովայի Հայրենիքը։ Ես Հայաստանը կընտրեի, որովհետև այստեղ լեռները ձյունապատ են այնպես, ինչպես Չիլիում, որովհետև նրա աշունը մեղմ է, բարիբեր, ինչպես Չիլիի աշունը, որովհետև նրա խաղողը կարմրաթուշ է և քաղցրահամ, ինչպես Չիլիի խաղողը, որովհետև Հայաստանի բնանկարները Չիլիի բնանկարներն են, իսկ նրա մարդկանց երակներում հոսում է նույնպիսի տաք արյուն։ Հայաստանը ճակատագրի բերումով նախանշված էր ունենալու այնպիսի մի բանաստեղծ, ինչպիսին է Սայաթ-Նովան»։

«Գրական թերթ», № 44

Հոկտեմբերի 27-ին

Տեղի է ունենում աշխատավորների բազմահազարանոց միտինգ՝ նվիրված Սայաթ-Նովայի հուշարձանի (հեղինակ՝ Արա Հարությունյան) բացմանը։

Հոկտեմբերի 28-ին

Թբիլիսիում, Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության երգիչ Սայաթ-Նովայի շիրիմի մոտ, ս. Գեորգ եկեղեցու բակում տեղի է ունենում բազմամարդ միտինգ։ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված միտինգը բաց է անում Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Գ. Գոշաձեն։ Ելույթ են ունենում վրաց բանաստեղծ Իոսիբ Նոնեշվիլին, գրականագետ Վ. Մնացականյանը։ Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծություններ են կարդում ժողովրդական բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, վաստակավոր դերասան Պահարին և ուրիշներ։

Նույն օրը երեկոյան Զ. Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ։ Բացման խոսք է ասում Վրաստանի գրողների միության առաջին քարտուղար, ակադեմիկոս, բանաստեղծ Իրակլի Աբաշիձեն։ Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում են Կ. Կալաձեն, Ի. Նոնեշվիլին։

Հոկտեմբերի 30-ին

Բաքվում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր երեկո՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է կարդում Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Հ. Արասլին։ Հանդես են գալիս ռուս բանաստեղծ Վ. Ֆյոդորովը, Հր. Հովհաննիսյանը, վրաց բանաստեղծ Կ. Կալաձեն, Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Ռասուլ Ռզան և ուրիշներ։

Հոկտեմբերի 31-ին

Միությունների տան Սյունաղարդ դահլիճում տեղի է ունենում մոսկովյան հասարակայնության հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Բացման խոսք է ասում Ա. Սուրկովը, որը հրապարակում է հետևյալ ուղերձը. «ՍՍՀՄ գրողների միությունը, խաղաղության համաշխարհային խորհուրդը խնդրում են Սայաթ-Նովայի հոբելյանի հանդիսավոր նիստի ներկաներին հաղորդել այս ուղերձը. Ամբողջ աշխարհի խաղաղասեր մարդիկ նշելով Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը, բարձր են գնահատում նրա մեծ ավանդը ժողովուրդների միջև եղբայրական համագործակցությունը զարգացնելու գործում։ Այդ ականավոր հումանիստը հավերժ կապրի ժողովուրդների սրտերում որպես ժողովուրդների միջև խաղաղության պահպանման մարտիկի օրինակ, հանուն մարդկության երջանկության և առաջադիմության»։

Այնուհետև ելույթ են ունենում Ս. Հարությունյանը, Ադրբեջանի ժողովրդական գրող Մ. Իբրահիմովը, ակադեմիկոս Ա. Բարամիձեն, Ուկրաինայի ավագագույն գրող Ի. Լենը։ Ընթերցվում է նաև Տիխոնովի գրավոր ողջույնի խոսքը։ Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծություններ են կարդում Մ. Ռահիմը, Ի. Նոնեշվիլին, Վ. Պոտապովան, Վ. Սոկոլովը։ Վերջում ելույթ է ունենում Ս. Կապուտիկյանը։

Տոնակատարության նախօրեին Սայաթ-Նովային նվիրված մեծ ցուցահանդես է բացվում Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան գրադարանում։

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին հոբելյանական համարներ են նվիրում «Գրական թերթը», «Սովետական Հայաստան», «Коммунист» (Երևան), «Ավանգարդ», «Երևան» թերթերը, «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ» ամսագրերն ու այլ պարբերականներ։ Սայաթ-Նովայի մասին տպագրվում են նշանավոր գրողների, արվեստագետների, գիտնականների ասույթներ, մեծարանքի ու գնահատականի խոսքեր, հոդվածներ, բանաստեղծություններ և բազմաթիվ այլ բնույթի նյութեր։

Նյութերից

«...Եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած հայի հոգուն... Հայի հանճարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում, թեև նա ինքը՝ հայը միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա միշտ էնպես, ինչպես մի Սայաթ-Նովա...»։

Հովհ. Թումանյան

«Ավելի քան 250 տարի նա կանգնել է մեր զարգացման ճանապարհի հանգույցներից մեկի գլխին և իր քնարով ներշնչում է մեզ—աղքատ սիրել, գիր սիրել։ Նա մեր մթնոլորտն է, մեր սերը, մեզ ուրախություն և թախիծ ավողը... Մեզ հետ է միշտ մեր ուրախության և վշտի պահերին...»։

Ավ. Իսահակյան

«Սայաթ-Նովան մեկն է այն առաջնակարգ բանաստեղծներից, որոնք իրենց հանճարի ուժով դաղարում են մի առանձին ժողովրդի պատկանելուց և դառնում են ամբողջ մարդկության սիրելին»։

Վ. Բրյուսով

«Սայաթ-Նովան աշխարհի մեծագույն, ինքնատիպ և անկեղծ լիրիկներից մեկն է։ Խորին հարգանք եմ հղում հայ ժողովրդին, որը ծնել է այդպիսի հանճարեղ զավակ»։

Մաքսիմ Ռիլսկի

Մեզ հետ է կանգնել քյամանչով բոցե
Եվ Սայաթ-Նովան, հանճարը երգի,
Երեք սրով է նա չարին խոցել
Զարկել ոսոխին թափով եռակի...

Իոսիֆ Գրիշաշվիլի

«...Աշուղների դարաշրջան էր դա։ Եվ աշուղների աշուղն էր Սայաթ-Նովան։ Մեծ էր նա իր քնարական արտասովոր տաղանդով։ Զարմանալի չգերազանցված մի վարպետ, որ փայլում էր զարմանալի երաժշտական ու անզուգական մի պոետիկայի պատկերավորության բոլոր գույներով։ Նա կարող էր գրել այնպես, որ բանաստեղծական մի աղբյուր լինի վրացիներն, մյուսը ադրբեջանցիներն, երրորդը՝ հայերն։ Եվ այս միացումը ապրում է պոետական ամբողջական կյանքով։

Նա մտավ համաշխարհային բանաստեղծների շարքը, որպես մի անկրկնելի ժողովրդական աշուղ»։

Ն. Տիխոնով

«Բարեկամների հավաքույթում խոսք ասող աշուղը չի հոգնի։

Ժողովուրդների բարեկամության գրքին նոր երգեր, բանաստեղծություններ ավելացնող արվեստագետը չի մոռացվի։

Բարեկամության ճամփաներով քայլող ճամփորդի սիրտը միշտ երիտասարդ կմնա։

Սայաթ-Նովան իմ աչքում այսպիսի մի բանաստեղծ է»։

Սուլեյման Ռուստամ

«...Սայաթ-Նովան վիշտ է երգում, վառվում է, բայց չի մոխրանում, արտակարգ շռայլությամբ ծախսում է գույներն ու մեղեդիները, բայց նրա սիրը և վերաբերմունքը աշխարհի հանդեպ խիստ են ու ողջախոհ։

Սիրեցի ես Սայաթ-Նովային ոչ թե փայլուն (անդերազանց) ձևի, ոչ թե բազմազան երաժշտության համար, այլ բազում տարիների միջով դեպի մեզ եկող բոցավառ, բարի, ազատասեր մարդկային հոգու համար։

Տարօրինակ բան. ամենևին իրար նման չեն Սայաթ-Նովան ու Չարենցը, իսկ իմ հիշողության մեջ մնացել է այն զգացողությունը, որ ունեցել եմ ես այս երկու բանաստեղծների գործերը թարգմանելիս, դա կարծես բարձր ջերմաստիճանի զգացողություն լինի՝ թե փոխաբերական և թե բառացի իմաստով։ Խոսքի մեջ զգացմունքի շիկացածությունը Չարենցի մոտ ճիշտ այնպես է, ինչպես Սայաթ-Նովայի մոտ»։

Վերա Զվյագինցևա

«Կան անուններ, որոնք սրբազան են, նրանք կարևոր դեր են կատարում ժողովրդի կյանքում, որովհետև այս կամ այն իմաստով դառնում են խորհրդանշական։ Ամեն մարդ կարող է յուրովի ընկալել այդ անունները, իր սեփական սիրան ու միտքը դնել նրանց մեջ, բայց կարևորն այն է, որ այդ անունները ունեն իրենց համաժողովրդական նշանակությունը։

Այդպիսի անուններից է Սայաթ-Նովան։

...Սայաթ-Նովան մեծ է, որովհետև ավելին է, քան բանաստեղծ ու երգիչ։ Նա հայ ժողովրդի հարազատ զավակն է սկզբից մինչև վերջ, իր էության բոլոր մասնիկներով։ Նրա երգը մշտապես սնվել է իր ժողովրդի անսպառ աղբյուրից և ստացել կենդանի գույն ու երանգ, ուստի և հավիտենական կյանք։ Սայաթ-Նովայի երգը հարազատ հոգի ուժ ունի և դա է նրա մեծության ու անմահության գաղտնիքը»։

Մ. Սարյան

«...Սայաթ-Նովան իրոք մեր ազգային փառքերից մեկն է, և այս հոբելյանը ապրի կդառնա, որպեսզի մեր ժողովուրդը, որ սիրում է իր սրտալի դուստրին, ավելի ճանաչի նրան և ավելի խորանա նրա ստեղծագործության մեջ»։

Սա. Զորյան

«Արևելքն Արևելք է, Արևմուտքն՝ Արևմուտք, և իրար երբեք չեն հանդիպելու»,— ոչ թե հավատացնում, այլ պնդում է բրիտանական հռչակավոր

բանաստեղծ Կիպլինգը՝ առածանման այս տողը դարձնելով մի անանցանելի սահման Արևելքի և Արևմուտքի միջև։

Կիպլինգը և իրավ է, և ոչ։

Կիպլինգն իրավ է՝ որքանով որ Արևմուտքի բազմալեզու և բազմահարուստ գրականությունը դժվար թե կարենա մատնանշել, օրինակի համար մի այնպիսի երևույթ, որպիսին Սայաթ-Նովան է։ Թերևս միայն Արևելքի բնությունը, անկարգության հասնող իր շռայլությամբ ու քմայքով, կարող էր մարդուն պարգևել այնպիսի ունակություններ, որոնցով հնարավոր էր ակնավոր դարձնել առնվազն վեց երջանիկ մարդու. մեկին՝ իբրև կախարդ երգիչ, մյուսին՝ իբրև զմայլելի նվագածու, երրորդին՝ իբրև անմոռանալի երգաստեղծ-կոմպոզիտոր, իսկ մնացած երեքին՝ իբրև այնպիսի բանաստեղծներ, որոնցից յուրաքանչյուրը պիտի հպարտություն պատճառեր այն ազգին, որի լեզվով բանաստեղծելիս լիներ։ Բայց Արևելքի շքեղ բնությունը շնորհների այսպիսի մի բազմազանություն լցրել էր մեկ հոգու մեջ, շռայլել մեկ սրտի, կապել մեկ անվան, որ պատանության տարիներին հնչում էր «Արութին», իսկ հետագայում և ընդմիշտ՝ «Սայաթ-Նովա»։

...Սայաթ-Նովան բալլող Ազնվությունն էր և շրջող Անկեղծությունը։ Նրա հոգևկան լիճը մաքուր ու խորն էր՝ իր հայրենի Սևանի պես, և նրա հոսքը սրընթաց ու մաքրահատակ էր՝ իր հայրենի Ազատ գետի նման։ Նրա մակերևսի վրա արտանկարվում էին հատակի գլաքարիկներն ու մանրավազն անդամ։ Իր իսկ ջրավազանին թեքված՝ նա կարող էր տեսնել իր կատարյալ կերպարանքը, բոլորովին զերծ այն ախտից, որ կապված է Նարգիզ-Նարցիսի անվան հետ։

Եվ այսօր էլ նրանից սովորում ենք ամենադժվար գիտությունը՝ ազնվորեն ապրելը, և դժվարագույն արվեստը՝ բոլորանվեր սիրելը...»։

Պ. Սևակ

«Մեծ սրտագետի՝ Սայաթ-Նովայի հոբելյանը, վրաց-հայ-ադրբեջանական եղբայրության Ծաղկի տոնն է։ Սայաթ-Նովան՝ հայ ազգի հանճարը, Թբիլիսիի սոխակը, հայկական գուսանական արվեստի թագն ու պսակը, մեծ հարստություն է մատրել նաև վրաց պոեզիայի գանձարանը։ Նա հոգու անեման նկարիչ է, բանաստեղծական խոսքի կախարդ, համաշխարհային քնարերգու և մեծ հումանիստ։ Նա իր հոգուց բխած կարկաչահոս երգով հավերժորեն շաղկապում, կամրջում է երեք ազգերի։ Նա անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության խորհրդանիշն է»։

Գեորգի Լեոնիձե

«Մեծ բանաստեղծի անմահ ստեղծագործությունը անսահմանորեն թանկ է մեզ համար՝ իր ժողովրդայնությամբ, չգերազանցված գեղեցկությամբ և բանաստեղծական խոսքի խոր գաղափարայնությամբ։

...Սայաթ-Նովայի պոեզիան անմահ է։ Այդ պոեզիան, ինչպես և 250 տարի առաջ, մարդկանց բերում է ուրախություն, բերկրանք, ծառայում է երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակության գործին»։

Ա. Զուկովսկի

«Իմ խորունկ համոզմամբ Սայաթ-Նովան համաշխարհային գեմք է՝ իր արվեստի ուժով ու չափերով։ Եթե այսօր խաղաղության համաշխարհային

խորհրդի որոշմամբ ամբողջ առաջավոր մարդկությունը տոնում է մեր մեծ բանաստեղծ-երաժշտի ծննդյան 250-ամյակը, դրանով արժանին է մատուցվում նրա հանճարին։ Բայց, դուցե, որոշ իմաստով այս հոբելյանը կարելի է համարել սկիզբը Սայաթ-Նովայի արժեքի իսկական համաշխարհային ճանաչման»։

Արամ Խաչատրյան

Հոկտեմբերի 28-ին

Վիեննայում վախճանվեց ականավոր բանաստեղծ Ներսես Ակինյանը (ծնվ. 1883 թ.)։

Հոկտեմբերի 31-ին

Երևանում բացվում է Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը։ Բացման խոսք է ասում ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ս. Գասպարյանը։ Հայաստանի գրողների միության անունից ելույթ է ունենում Ստ. Զորյանը։

Նոյեմբերի 7-ին

«Գրական թերթը» (№ 45) տպագրում է հարցազրույց՝ Սայաթ-Նովայի հոբելյանի տոնակատարության օրերին Երևանում հյուրընկալվող չիլիացի նշանավոր բանաստեղծ Նիկանոր Բարրայի հետ։

Ն. Բարրայի խոսքից

«Ես Հայաստանում սիրեցի Հայաստանը։ Սիրեցի ձեր հյուրընկալ ժողովուրդը, ձեր Մատենադարանը, թանգարանները, ձեր երիտասարդ նկարիչներին, Մարտիրոս Սարյանին, Էջմիածինը։ Կրկնակի սիրեցի Սայաթ-Նովային, սիրո մեջ իմ բախտակցին։ Բայց այդ չէր կարևորը։ Սայաթ-Նովան ինձ համար մեծ է մանավանդ նրանով, որ նա եղել է ժողովրդի մարդ։ Բանաստեղծը պետք է զանգվածների համար գրի։ Մի ժողովուրդ, որ տվել է Սայաթ-Նովա, Սարյան, Խաչատրյան, Համբարձումյան, արժանի է համաշխարհային հարգանքի»։

Հոկտեմբեր—Նոյեմբեր

Երևանում երկու շաբաթ անընդմեջ համերգներով հանդես է գալիս Արամ Խաչատրյանը։ Կոմպոզիտորի ծննդյան 60-ամյակի առթիվ հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում մեծարման երեկո։ Բացման խոսք է ասում Ս. Գասպարյանը։ Ողջույնի խոսք են ասում Հ. Խանջյանը, Էդ. Միրզոյանը, Գ. Էմինը, Ղ. Սարյանը, Վ. Բալյանը, Մ. Աբեղյանը, Թ. Ալիխանյանը, Ռ. Զարյանը և ուրիշներ։ Շնորհակալական խոսք է ասում Ա. Խաչատրյանը։

Նոյեմբերի 8-ին

Բուխարեստում վախճանվեց ռումինացի անվանի գիտնական, հայագետ Վլադ Բընբոյեանուն։ Համաձայն իր ցանկության՝ Վ. Բընբոյեանուն թաղվեց Բուխարեստի հայկական գերեզմանոցում։

Նոյեմբերի 25—27-ը

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում տեղի է ունենում ժողովուրդների բարեկամությանը նվիրված գիտական նստաշրջան,

որին մասնակցում են Հայկական, Ադրբեջանական և Վրացական ՍՍՀ պատմաբաններն ու գիտնականները։ Բացման խոսք է ասում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը։ Զեկուցումներ են կարդում ՍՄԿԿ Կենտկոմի Անդրկովկասի բյուրոյի նախագահ Գ. Բոչկարյովը, Գ. Գալոյանը, Զ. Անջափարիձեն, Ի. Հուսեյնովը, Մ. Աղայանը, Ա. Հակոբյանը, Գ. Ղարիբջանյանը, Ա. Կարինյանը, Ի. Էֆենդիևը, Գ. Բրիգաձեն, Մ. Դադաշզադեն, Ս. Արեշյանը, Կ. Ուդումյանը։ Գիտական նստաշրջանի արդյունքները ամփոփում է ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Մ. Կիմը։

«Գրական թերթ», № 48

Նոյեմբերի 26-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված ադրբեջանական բեմի մեծ վարպետ Աբբաս Շարիֆզադեի ծննդյան 70-ամյակին։

Նոյեմբեր

«Լիտերատուրնայա Գրուզիա» ամսագրի համարը ամբողջությամբ նվիրված է Սովետական Հայաստանին։

Լայնորեն նշվում է ռուսական էպոսի՝ «Ասքի» 775-ամյակը։

Դեկտեմբերի 7-ին

Գրողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Վ. Յա. Բրյուսովի ծննդյան 90-ամյակին։ Երեկոն բացում է Վ. Նորինցը։ «Հայ պոեզիան և Վ. Բրյուսովը» թեմայով զեկուցում է Հովհ. Ղանալանյանը։ Հուշեր է պատմում Երևան ժամանած բանաստեղծի եղբայր Ալեքսանդր Բրյուսովը։

Դեկտեմբեր

Լայնորեն նշվում է հայ ականավոր նկարիչ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պոեզիա

Բաբայան Վ.— Քեզ հետ և առանց քեզ
Գրիգորյան Ս. — Կրակներ (ռուսերեն), Մոսկվա
Դաշտենց Խ. — Լեռան ծաղիկներ
Դավոյան Ռ. — Իմ աշխարհը
Զարյան Ն. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Զարյան Ն. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Էմին Գ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Թորոսյան Շ. — Պատանության հովտից
Խարազյան Ս. — Բանաստեղծի աշխարհը
Կապուտիկյան Ս. — Մտորումներ ճանապարհի կեսին (ռուսերեն), Մոսկվա
Կապուտիկյան Ս. — Ապրում եմ սրտով (ռուսերեն)
Կորյուն Մ. — Արծաթե սրինգ (ուկրաիներեն), Կիև
Հարությունյան Միք.— Օրեր և խոհեր
Միքայելյան Ն. —Կապույտ կրակներ

Նորենց Վ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Պողոսյան Հռ. — Աստղային ճամփորդը
Զարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 2
Սարմեն — Կենաց բաժակ
Սարյան Ա. — Աշխարհի ճամփաներով
Սեակ Պ. — Մարդը ափի մեջ

Արձակ

Ալաջաջյան Ստ. — Առանց հայրենիքի
Աղավնի — Շիրակ, գիրք 1
Այվազյան Ս. — Տուր ձեռքդ, կյանք (ռուսերեն)
Անանյան Վ. — Անձրև
Անանյան Վ. — Հովազաձորի գերիները (ռուսերեն), Նովոսիբիրսկ
Ավագյան Ա. — Բենդ գյուղի վերջին մարդը
Արազի Մ. — Իսրայել Օրի
Արամյան Ռ.— Չթամբած ձիեր
Արշակյան Գ. — Բրաշուշաններ
Բեռ Գ. — Նովելներ
Դարյան Արմեն — Կարոտ և կյանք
Դարյան Զ. — Սայաթ-Նովա, գիրք 2
Դաբեսյան Վ. — Արևոտ ուղիներում
Դեմիրճյան Դ. — Երկերի ժողովածու, հ. 8
Զարյան Կ. — Նավը լեռան վրա
Զեյթունցյան Պ. — Մեղանից հետո
Զարյան Ն. — Հայցավան (վրացերեն), Թբիլիսի
Զորյան Ստ. — Երկերի ժողովածու, հ. 8, 9
Թափալչյան Քր. — Հայրենաշեն
Խալափյան Զ. — Հեղեղ
Խանդամուրյան Հ. — Եղովպոս, խիկար
Խանզադյան Ս. — Մխիթար սպարապետ (2-րդ հրատ.)
Խերանյան Մ. — Շիտոնց Միհրան
Հրաչյա Խ. — Ռոմանտիկները
Պետրոսյան Վ. — Անավարտ դիմանկարներ
Սարգսյան Մ. — Կյանքը կրակի տակ
Սեյրանյան Բ. — Աստղաձոր
Ստեփանյան Ա. — Ամառնամուտ (ռուսերեն), Մոսկվա
Սեռնց Գ. — Գերիներ (Ուկրաիներեն), Կիև
Սեռնց Գ. — Երկեր, հ. 1, 2
Վեսպեր — Արձակ էջեր
Տոնոյան Կ. — ...Եվ կյանքը թվում է սխալ
Ուլուբաբյան Բ. — Թարթառ

Դրամատուրգիա

Բարսեղյան Ա. — Պլլը Պուղի
Բորյան Գ. — Երեք դրամա
Գուլակյան Ա. — Պիեսներ

Ժողովածուներ

Գրական Հայաստան (Հայաստանում ապրող ազգությունների գրողներ)— (ազգությունների)
Ժողովրդի քնարը։ Ինքնուս ստեղծագործողներ
Ծաղկեփունջ (Հայ գրողները քրդերի մասին)
Հայաստանի պոեզիան Վ. Բրյուսովի թարգմանությամբ և գնահատմամբ (ռուսերեն)

Դասակարգեր

Աղայան Ղ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Գրիգորիս Աղթամարցի — Տաղեր
Խաչատրյան Ա.Վ. — Արձակ էջեր
Հովհաննիսյան Հովհ. — Լիրիկա (ռուսերեն), Մոսկվա
Մուրացան — Երկերի ժողովածու, հ. 3, 4, 7, 6
Մուրացան — Գևորգ Մարզպետունի (ռուսերեն), Մոսկվա
Որբերյան Ռ. — Երկեր
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 1
Պռոշյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4, 5
Սայաթ-Նովա — Հայերեն, վրացերեն, ազգությունների խաղերի ժողովածու
Սայաթ-Նովա—խաղեր, նմանահանություն
Սայաթ-Նովա — Լիրիկա (ռուսերեն), Մոսկվա
Սայաթ-Նովա — (եվրոպական լեզուներով)
Սայաթ-Նովան Բրյուսովի թարգմանությամբ (ռուսերեն)
Սայաթ-Նովա — Բանաստեղծություններ (քրդերեն)
Սայաթ-Նովա — Բանաստեղծություններ (ազգությունների), Բաքու
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 3
Բաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 5, 6
Օտյան Եր. — Երկերի ժողովածու, հ. 6

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աղաբաբյան Ս. — Ակսել Բակունց
Աղաբաբյան Ս. — Արձագանքներ
Ավետիսյան Արմ. — Գևորգ Ախվերդյան
Վ. Բրյուսով — Հայաստանի և հայկական մշակույթի մասին (ռուսերեն)
Բաղդասյան Ս. — Սովետահայ երգիծանքը քսանական թվականներին
Գասպարյան Հ. — Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ
Գյուլնազարյան Խ. — Վախթանգ Անանյան
Թոփչյան Սա. — Շիրվանզադեի էսթետիկան
Թումանյան Հովհ. — Սայաթ-Նովա
Ժամանակակից գրականության հարցեր
Լևոնյան Գ. — Երկեր (գրաքննադատական)

Խանզադյան Ց. — Հոդվածների ժողովածու
Հայ պարբերական մամուլի պատմությունից, հ. 1
Հարությունյան Ս. — Երգի հանճարը։ Սայաթ-Նովա
Հովհաննիսյան Գ. — Ավետիք Իսահակյանի արձակը
Ղանալանյան Ա. — Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները
Մանուկյան Ս. — Պերճ Պռոշյան
Մկրտչյան Լ. — Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը (ռուսերեն)
Մուրադյան Հր. — Խաչատուր Աբովյան
Մուրադյան Հր. — Սայաթ-Նովա
Շարուրյան Ս. — Սրբուհի Տյուսաբ
Զուգասզյան Բ. — Հայ-իրանական գրական առնչություններ (5—18-րդ դդ.)
Պարսիզունի Վ. — Գրականության ուժն ու հմայքը
Սայաթ-Նովա (Հոդվածների ժողովածու)
Սարգսյան Խ. — Սայաթ-Նովա
Ստեփանյան Գ.— Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1
1962 թվականի բրյուսովյան ընթերցումները (ռուսերեն)

Թարգմանություն

Ադամյան Նորա—Երեք վիպակ
Արաբական պատմվածքներ
Գիլգամեշ (Հին արևելքի դյուցազնավեպ)
Գյոթե — Ֆաուստ, մաս 1
Գոնչարով Ի. — Սովորական պատմություն
Զոլա Է. — Փողը
Ընտիր էջեր ռուս սովետական պոեզիայի
Իրանական պատմվածքներ
Լոնդոն Ջ. — Ծովագայլը
Լոպե դե Վեգա — Վալենսիացի այրին
Խայաթի Ֆ. — Վեց պատմվածք
Մայակովսկի Վ. — Հատընտիր
Շելլի Պ. — Ընտիր տողեր
Պաուստովսկի Կ. — Ոսկե վարդը
Ռեմարկ Է. — Ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը
Սարոյան Վ. — Իմ սիրտը լեռներում է
Սթոուն Իր. — Նավաստին թամբի վրա
Վեռն Ժյուլ — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, 4
Տուրգենև Ի. — Ծուխ

1964

Հունվարի 7—8-ը

Տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIII համագումարը։ Գրողներից կլույթ է ունենում Էդ. Թոփչյանը։

Հունվարի 20-ին

Գրողների տանը կազմակերպվում է հանրապետության երիտասարդ գրողների մեկ բանաստեղծության և մեկ պատմվածքի մրցանակաբաշխության առաջին երեկոն։ Մրցանակներ են ստանում երիտասարդ գրողներ Յուրի Սահակյանը, Ռոբերտ Պետրոսյանը, Հովհաննես Գրիգորյանը, Նանսեն Միքայելյանը, Ռոբերտ Բաբլոյանը, Մանուկ Մնացականյանը և Գուրգեն Գալստյանը։

Հունվարի 24-ին

«Գրական թերթը» (№ 4) տպագրում է Գ. Մահարու «Մնայուն հաղթանակներ և ժամանակավոր պարտություններ» ընդարձակ գրախոսականը՝ Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» (1963 թ.) գրքի մասին։

Հունվարի 31-ին

«Գրական թերթում» (№ 5) տպագրվում է 1963 թ. Հայաստան այցելած ամերիկյան նշանավոր գրող Ջոն Սթեյնբեքի նամակը՝ ուղղված հայ գրողներին։

Ն ա մ ա կ ից

«...Ազնվությունը ինտերնացիոնալ է, միջցեղային։

Ազնվության համար լեզու անհրաժեշտ չէ, որովհետև ինքը մի լեզու է։

Ո՞չ, տարբեր չեն մեր եղձերն ու կարիքները։ Ի՞նչ են դրանք. խաղաղություն, բարեկամություն, բավարար բարեկեցություն, ավայտանքը հետու պահելու մեղանից, ապա իրավասություն, ժամանակ և կամք բոլոր մարդկանց համար, որպեսզի ապրեն ու ձգտեն իրենց կարողությունների բարձրագույն գագաթին։

Այդ ենք ուզում մենք և դուք... Բարեբեր մի աշխարհ, որ չազճատվի չարամտությամբ կամ տգեղատալից աղմուկով, զենքաց աշխարհ, ուր երեխաները կարողանան արտաքնապես ծիծաղկոտ մեծանալ և ներքնապես՝ ոչ վիրավորված, ոչ էլ խոժոռ։

Եվ եթե այս ամենով մենք նման ենք իրար, էլ ինչո՞ւ զարմանալ, որ մենք սիրալիր ընդունելության ու վերաբերմունքի արժանացանք Երևանում։

Հայաստանն իր հետքը դրոշմեց մեզ վրա։ Հարուստ և չքնաղ մի երկիր է նա։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ զրգռել է ներխուժողների ագահությունը։ Սակայն, եթե Հայաստանը մի բարեբեր երկիր է, ապա նաև բախտավոր է, որ ունի մի ժողովուրդ, որ կրքոտությամբ գիտակցում է նրա գեղեցկությունը

և իր սերն է խփել հրեն ու ցասումնալի դարերի փորձաքարին։

Այդ երկաթյա սերն է Հայաստանի ուժը, այնպես, որ երկիրն օրհնված է իր ժողովրդից և ժողովուրդը՝ իր երկրից։

Այս զգացումը մենք վերցրինք Ձեզանից և շնորհակալ ենք դրա համար, որովհետև գիտենք, թե էլ երբեք օտարներ չենք լինելու Հայաստանում»։

Փետրվարի 12-ին

Նշվում է Ռուբեն Որբերյանի ծննդյան 90-ամյակը։

Փետրվարի 15-ին

Գրողների տանը քննարկվում է Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» ժողովածուն։ Ելույթում է Ս. Սարինյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Գ. Շահնազը, Լ. Հախվերդյանը, Կ. Դանիելյանը, Ա. Մնացականյանը, Վ. Առաքելյանը, Ս. Կապուտիկյանը։ Վերջում ելույթ է ունենում Պ. Սևակը։

Փետրվարի 27—28-ը

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության ընդլայնված նիստը, քննության է առնվում ՍՍՀՄ գրականությունների փոխադարձ կապերի հետագա ամրապնդման հարցը։ Ելույթում է Գ. Մուսրեպովը, արտահայտվում են՝ Ս. Բարուզդինը, Մ. Հուսեյնը, Ա. Լուպանը, Վ. Կոժևնիկովը, Է. Մեժելայտիսը, Գ. Գուլիան, Ա. Զակովսկին և ուրիշներ։

Փետրվարի վերջերին

Նշվում է գրականագետ Տիգրան Հախումյանի ծննդյան 70-ամյակը։

Մարտի 2-ին

Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան հայկական թատրոնի դահլիճում նշվում է Բենիկ Սեյրանյանի ծննդյան 50-ամյակը։

Մարտի 10-ին

«Սովետական Հայաստան» թերթը էջեր է (№ 59) նվիրում Տարաս Շևչենկոյի ծննդյան 150-ամյակին։ Համարում տպագրվում են Գ. Բորյանի «Ուկրաինական Պրոմեթեոսը», Հր. Հովհաննիսյանի «Մեծ կորզարը» հոդվածները և այլ նյութեր։

Նույն օրը օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում Շևչենկոյի 150-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ, որ բացում է կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ն. Զարյանը։ Ելույթում հանդես է գալիս Գեղամ Սարյանը։

Մարտի 13-ին

«Գրական թերթը» (№ 11) նվիրվում է Տարաս Շևչենկոյի ծննդյան 150-ամյակին։ Համարում տպագրված են Ստ. Զորյանի «Հարազատ Շևչենկոն» խոսքը, Ն. Զարյանի «Ուկրաինական Պրոմեթեոսը», Գ. Սարյանի «Ազատության երգիչը» հոդվածները և բազմաթիվ այլ նյութեր։

Ստ. Զորյանի խոսքը

«Մեծ արվեստագետները, հատկապես մեծ պոետները չեն պատկանում միայն իրենց ժողովրդին, նրանք դուրս են գալիս ազգային սահմաններից և իրենց հուզական ու անմիջական խոսքով սրտեր գրավում ամեն տեղ։

Այդպես է Շևչենկոն։

...Շևչենկոն Ուկրաինայի մեծ սիրտն է, նրա հին վշտերի ու տենչերի մեծագույն երգիչը։ Նրա ջերմ, հուզառատ երգերը միշտ էլ արձագանք են գտել անազատ ու ճնշված ժողովուրդների մեջ և սիրվել նրանց կողմից։ Այդպես էլ Հայաստանում։

Եվ ահա այսօր, երբ երախտապարտ Ուկրաինան տոնում է իր մեծ զավակի ծննդյան 150-ամյակը, ես իմ հեռավոր հայրենիքից գլուխ եմ խոնարհում նրա հալածված, բայց միշտ պայծառ ու անմահ ոգու առաջ»։

Մարտի 16—17-ը

Գրողների տանը տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության V պլենումը։ Պլենումը ներածական խոսքով բացում է Հր. Հովհաննիսյանը։ «Մեր ժամանակը և նրա արտացոլումը գրականության մեջ» թեմայով զեկուցում է Էդ. Թոփչյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Սարինյանը, Շ. Թաթիկյանը, Ս. Արզումանյանը, Լ. Միքայելյանը, Մ. Մնացականյանը, Մ. Մարգարյանը, Քր. Թափալցյանը, Մ. Սարգսյանը, Վ. Նորենցը, Ն. Զուկովսկին (Մոսկվա), Գ. Էմինը, Ս. Խանզադյանը, Հ. Շիրազը, Հ. Ֆելեքյանը, Գ. Սևակը, Հովհ. Բաղդասարյանը։

Մարտի 18-ին

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ գիտական նստաշրջանը՝ նվիրված ռուսական տպագրության 400-ամյակին։ Ներածական խոսք է ասում Վ. Համբարձումյանը, զեկուցումներ են կարդում Ա. Կարինյանը («Ռուսական տպագրության 400-ամյակը») և Ա. Բաբայանը («Ռուսաստանի առաջին հայկական տպարանները»)։

Մարտի 20-ին

Բեռլինում տեղի է ունենում Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետի 100-րդ ներկայացումը։

Մարտի 27-ին

Նշվում է ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակը։ Այս առթիվ «Գրական թերթում» (№ 13) տպագրվում են Ստ. Զորյանի «Թորամանյանը» հուշագրությունը, Տ. Մարությանի «Մեծ ճարտարապետ-գիտնականը» հոդվածը։

Ապրիլի սկզբին

Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը նշելու համար ՍՍՀՄ Մինիստրների սովետը կազմում է համամիութենական հոբելյանական հանձնաժողով, որի կազմի մեջ հայ գրողներից մտնում է Գ. Բորյանը։

Ապրիլի 10-ին

Նշվում է Համո Սահյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» տպագրվում են ՀՍԳՄ ողջույնը, Գ. Մահարու «Բանաստեղծի կնոջ դարը», Գ. Հայրյանի «Երգը նման է իր ստեղծողին» հոդվածները։

ՀՍԳ Միության վարչության ողջույնը

«Հարգելի Համո Սահյան.

Հայաստանի սովետական գրողների միության վարչությունը ջերմորեն ողջունում է Ձեզ՝ ժամանակակից հայ պոեզիայի լավագույն ներկայացուցիչներից մեկին, տաղանդավոր, ինքնատիպ ու հայրենասեր բանաստեղծին և շնորհավորում է Ձեր ծննդյան 50-ամյակը։

Քառասնական թվականներին մտնելով հայրենի գրականության մեջ, Դուք Ձեր ստեղծագործություններով բերիք հոգևոր մի հարուստ ու գեղեցիկ աշխարհ, բանաստեղծական անկեղծ մի սիրտ, որ սիրով է լի դեպի մարդը, հայրենի հողը, դեպի հայրենի բնության հրաշալիքները։

Հավատարիմ մեր դասական գրականության լավագույն ավանդներին, Դուք նոր, թարմ ու մտերիմ խոսքեր գտաք երգելու մեր օրերի մարդուն՝ խաղաղության մեծ գաղափարին, մարդասիրությանը, բարուն ու գեղեցկին զինվորագրված մարդուն։ Մեր օրերի մթնոլորտով ու շնչով են պարուրված Ձեր լավագույն ստեղծագործությունները։ Դրանք բանաստեղծական խոհեր են հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի ու վերածնության մասին, հայրենի բնության ու սիրո գունեղ, քնքուշ երգեր են, բաղաքացիական կրքով գրված բարձրարվեստ բանաստեղծություններ, որոնք խոր հավատով են տոգորված սովետական մարդու և նրա բարոյական ուժերի նկատմամբ։

Հարգելի հոբելյար.

Արդասավոր ու իմաստավոր է եղել Ձեր անցած գրական ճանապարհը և ազնիվ այն վաստակը, որով Դուք հարստացրել եք հայրենի գրականությունը։ Հասուն տաղանդով և կենսական փորձով ծանրաբեռ, Դուք թևակոխում եք Ձեր կյանքի վեցերորդ տասնամյակը։ Դուք դեռ ստեղծագործական մեծ ճանապարհ ունեք գնալու։ Թող բարի լինի այդ ճանապարհը և նույնքան արդասավոր, որքան այն ուղին, որ անցել եք Դուք մինչև այժմ, հայրենի գրության մատյաններին զումարելով Ձեր հայրենաշունչ երգը։

Քաջառողջություն, երկար տարիների կյանք և ստեղծագործական նոր հաջողություններ ենք ցանկանում Ձեզ»։

Ապրիլի 13-ին

Ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Համո Սահյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Ապրիլի 22-ին

Գրականության և հրապարակախոսության ասպարեզում լենինյան մրցանակներ են շնորհվում Ա. Տ. Գոնչարին («Տրոնկա» վեպի համար) և Վ. Մ. Պիսկովին («Ցողապատ ճանապարհով» գրքի համար)։

Ապրիլի 25-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Վ. Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Հովհ. Մամիկոնյանը։ Նյութ են ունենում Ն. Զարյանը, Գ. Ջանիբեկյանը, Ռ. Զարյանը։ Ցուցադրվում է «Օթելլոյի» 3-րդ գործողությունը, ուր հանդես են գալիս Վ. Փափազյանը և Ա. Ավետիսյանը։

Ապրիլի վերջերին

Նշվում է Վարուժանի ծննդյան 80-ամյակը։ Այս առթիվ «Գրական թերթը» (№ 18) տպագրում է Վ. Նորենցի «Հզոր տաղանդ», Վ. Դավթյանի «Շքեղ բոնկում» հոդվածները և այլ նյութեր։

Մայիսի 6-ին

Վախճանվեց գրականագետ Հրայր Մուրադյանը (ծնվ. 1907 թ.)։

Մայիսի 8-ին

«Գրական թերթը» սկսում է տպագրել Սուրեն Աղաբաբյանի «Կյանքը և պատմվածքը» հոդվածաշարը (№№ 19, 21, 23, 24, 26, 28)։

Մայիսի 16-ին

Վախճանվեց բանաստեղծ, թատերագետ Վահրամ Թերզիբաշյանը (ծնվ. 1899)։

Մայիսի 25-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյակին։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ «Պարոնյանը և մեր օրերը» թեմայով զեկուցում է Գր. Տեր-Գրիգորյանը։

Մայիսի 28-ին

Հ. Պարոնյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում Գ. Հովնանը, զեկուցումներ են կարդում Հ. Մարգարյանը («Պարոնյանի գեղագիտական իդեալը»), Գ. Սահակյանը («Պարոնյանի անհայտ մնացած գործերի մասին»), Ա. Ղանալանյանը («Հակոբ Պարոնյանի երգիծանքի արվեստը)։

Մայիսի 30-ին

Էստոնիայում, Տալլինի «Կալև» սպորտային դահլիճում, տեղի է ունենում հայ գրականության և արվեստի շաբաթի բացումը։

Մայիս

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը ռուսերեն լույս է ընծայում գրականության ինստիտուտի կազմած Վալերի Բրյուսովի հոդվածների, նամակների և բանաստեղծությունների ժողովածուն Հայաստանի ու հայ մշակույթի մասին։

Այս կապակցությամբ «Գրական թերթում» (№ 23) տպագրվում է Պարույր Սևակի «Շնորհակալիքն ասենք մինչև վերջ» հոդվածը։

Հունիսի 3-ին

Տալլինի գրողների տանը տեղի է ունենում հայ գրականությանը նվիրված երեկո, ուր սովետահայ գրականության արդի վիճակի մասին զեկուցում է Գր. Տեր-Գրիգորյանը։ Իրենց բանաստեղծություններն են կարդում Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Ա. Գրաշին։

Հունիսի 8-ին

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակը նշելու կապակցությամբ Հայաստանի սովետական գրողների միությունում տեղի է ունենում խորհրդակցություն՝ «Երուժբա նարոդով» ամսագրի աշխատակից Ե. Օսեորովի մասնակցությամբ։ Վերջինիս հաղորդումից հետո ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, Վ. Բալասանը, Ստ. Կուրտիկյանը, Արաքսը, Ա. Արաքսմանյանը, Վ. Պետրոսյանը, Վ. Նորենցը, Վ. Մնացականյանը։

Հունիսի 10-ին

Ռումինական դասական բանաստեղծ Մ. Էմինեսկուի մահվան 75-ամյակի տոնակատարություններին մասնակցելու համար սովետական պատվիրակության հետ Ռումինիա է մեկնում նաև Գ. Բորյանը։ Գ. Բորյանի թարգմանությամբ Հայպետհրատը լույս է ընծայում «Ռումինական քնար» ժողովածուն։

Հունիսի 12-ին

«Գրական թերթը» (№ 24) հաղորդում է, որ Փարիզում ֆրանսերեն թարգմանությամբ լույս է տեսել «Սասունցի Դավիթ» էպոսը։ Հաղորդման մեջ ասվում է, որ էպոսի թարգմանիչը՝ Փարիզի արևելյան կենդանի լեզուների ազգային դպրոցի դասախոս պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին, հայ ժողովրդական էպոսի թարգմանությանը ձեռնարկել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի և Սովետական Միության ազգային հանձնաժողովի միջև կայացած համաձայնության հիման վրա։

Հունիսի 13-ին

Գորիսում տեղի է ունենում Ակսել Բակունցի հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը։ Ելույթ են ունենում Գորիսի շրջսովետի գործկոմի նախագահ Ա. Հարությունյանը, Ս. Խանզադյանը, Ս. Աղաբաբյանը, Վ. Նորենցը, ժողովրդական նկարիչ Է. Իսաբեկյանը, վաստակավոր ուսուցիչ, Բակունցի դասընկեր Ռ. Պետրոսյանը և ուրիշներ։

Հունիսի 18-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում Եղիշե Չարենցին նվիրված հուշ-երեկո։ Երեկոն բացելուց հետո հուշեր է պատմում Հռ. Պողոսյանը։ Բանաստեղծի դուստր Անահիտ Չարենցը ներկաներին ծանոթացնում է մեծ բանաստեղծի արխիվային նյութերին, կարդում նրա նամակներից ու անտիպ բանաստեղծություններից։

Հունիսի 19-ին

«Գրական թերթում» (№ 25) տպագրվում է 1902 թ. Ավ. Իսահակյանի գրած «Իմ երազը» անտիպ արձակ պոեմը։

Հունիսի 20-ին

Մխիթար Գոշի մահվան 750-ամյակի կապակցությամբ Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում Լ. Խաչիկյանը, լսվում են Աշ. Հովհաննիսյանի («Մխիթար Գոշի մատենագիտության պատմական արժեքը»), Ա. Թումանյանի («Անձի քրեական-իրավական պաշտպանության հարցերը ըստ Գոշի դատաստանագրքի»), Աս. Մնացականյանի («Մխիթար Գոշի դատաստանագրքի ստեղծման պատմությունից»), Ի. Էլլարյանի («Նոր Գետիկի վանքը և Մխիթար Գոշը»), Է. Պիվազյանի («Մխիթար Գոշի առակները»), Խ. Թորոսյանի («Մարդու և անձի պրոբլեմը Գոշի դատաստանագրքում») զեկուցումները։ Մատենադարանի գիտական նստաշրջանը մասնակի փոփոխությամբ կրկնվում է Իջևան քաղաքում։

Հունիսի 24-ին

Սովետական գրականության զարգացմանը մատուցած ծառայությունների համար և ծննդյան հինգամյակի կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հովհաննես Շիրազը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հունիսի 28-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում 800-րդ անգամ բեմադրվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան։ Դերերում հանդես են գալիս Գ. Գասպարյանը (Անուշ), Ա. Պետրոսյանը (Սարո), Վ. Գրիգորյանը (Մոսի)։

Հուլիսի 17-ին

«Գրական թերթը» (№ 28) հաղորդում է, որ Պրագայում չեխերեն լույս է տեսել Լուդմիլա Մոտալովայի «Հայ գրականության պատմության ակնարկ» ուսումնասիրությունը։

Հուլիսի 24-ին

Վախճանվեց ուկրաինական ականավոր գրող Մաքսիմ Ռիլսկին (ծնվ. 1895 թ.)։

Հուլիսի վերջերին

Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը կոչվում է Հրաչյա Աճառյանի անունով։

Սեպտեմբերի 4-ին

«Գրական թերթում» (№ 36) հրատարակվում են 1934 թ. Ալեքսանդր Գատովին ուղղված Եղիշե Չարենցի անտիպ նամակներից։

Սեպտեմբերի 11-ին

Երևանում սկսվող էստոնական արվեստի և գրականության շաբաթի կապակցությամբ «Սովետական Հայաստան», «Коммунист», «Գրական թերթ» և այլ թերթերը ամբողջական համարներ են նվիրում։

Սեպտեմբերի 12-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում էստոնական արվեստի շաբաթի բացմանը։ Ներածական խոսք է ասում Յա. Զարոբյանը, ողջունում է Գ. Էմինը։ Պատասխան խոսքով հանդես է գալիս էստոնական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Լ. Լենցմանը.

Լ. Լենցմանի խոսքից

«Թեև մեզ հազարավոր կիլոմետրեր են բաժանում, բայց մեր ժողովուրդների ճակատագրում մոտիկ ընդհանուր շատ բան կա։ Մի՞թե սիմվոլիկ չէ, օրինակ, այն փաստը, որ հայ ժողովրդի զավակները՝ Խաչատուր Աբովյանի գլխավորությամբ, եղել են Տարտուի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի և նրա ուղեկիցների առաջնորդները, երբ 135 տարի առաջ նրանք բարձրացան Արարատի գագաթը։ Արդյոք սիմվոլիկ չէ՞ նաև որ էստոնիայում՝ Տարտուում կրթություն ստացավ Խաչատուր Աբովյանը, ինչպես նաև առաջադեմ ուրիշ շատ գործիչներ, որոնք մեծ դեր խաղացին հայ կուլտուրայի զարգացման գործում։ Սովետական ժողովուրդները թանկ են գնահատում բարեկամության և համագործակցության տրադիցիաները, որոնք ծնունդ առնելով հեռավոր անցյալից, այնպես փարթամորեն ծաղկեցին սովետական կարգերի օրոք։

Հպարտությամբ և ուրախությամբ վերհիշելով այդ անցյալը, տարտուցիները վերջերս քաղաքի կենտրոնի փողոցներից մեկը կոչեցին Խաչատուր Աբովյանի անունով։ Հայ գրականության մյուս վարպետների երկերի հետ միասին, Աբովյանի ստեղծագործությունը ամուր տեղ է գրավում Սովետական էստոնիայի ընթերցողների գրադարանում։ Մենք խոր հուզմունքով ենք կարդում նրա «Վերք Հայաստանի» վեպը, բոցաշունչ հայրենասիրի կրակոտ խորհրդածությունները իր երկրի և ժողովրդի բախտի մասին։

«Գրական թերթ», № 38

Հայաստանի գեղարվեստական ֆոնդի դահլիճում բացվում է «Հայաստանի նկարիչները էստոնիայում» ցուցահանդեսը։

Սեպտեմբերի 13-ին

Էստոնացի գրողները հանդիպում են ունենում Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի հետ։ Հյուրերին ողջունում է ինստիտուտի ռեկտոր Կ. Ուղումյանը։ Հայ և էստոն ժողովուրդների բարեկամության ու մշակութային կապի մասին խոսում է Վ. Պարտիզունին։ Սրտաբուխ խոսք է ասում էստոնացի գրող Ադու Հինտը։ Հինտը ինստիտուտին է նվիրում «Վիիրիսնորկ» («Հնգաթև աստղ») ամսագրի 1964 թ. մարտ ամսվա համարը, որը նվիրված է հայ գրականությանը։ Ապա էստոնացի հյուրերին ողջունում են Ս. Խանզադյանը և Հր. Հովհաննիսյանը։

Սեպտեմբերի 14—19-ը

Էստոնացի գրողները լինում են Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Հովհաննիսյանի տուն-թանգարաններում, Մատենադարանում, Զվարթնոցում, Էջմիածնում, Սևանա լճում, Լենինական, Կիրովական, Հոկտեմբերյան քաղաքներում։

Սեպտեմբերի 20-ին

Քանաքեռում Խ. Աբովյանի տուն-թանգարանի մոտ՝ էստոնական արվեստի շաբաթի կապակցությամբ տեղի է ունենում հանդիսավոր միտինգ՝ նվիրված բարեկամության աղբյուր-հուշարձանի բացմանը։ Նույն օրը օպերայի և բալետի պետական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Հայաստանում էստոնական արվեստի շաբաթի ավարտին։

Սեպտեմբերի 22-ին

Վեդիի շրջանի Սովետաշեն գյուղում տեղի է ունենում Պարույր Սևակի հանդիպումը համագյուղացի ընթերցողների հետ։ «Մարդը ափի մեջ» գրքի քննարկմանը մասնակցում են նաև հարևան գյուղերի ընթերցասերները։ Ղեկուցում է դպրոցի դիրեկտոր Վ. Գրիգորյանը։

Սեպտեմբերի 25-ին

Նշվում է Մանուկ Աբեղյանի մահվան 20-ամյակը։ Այս կապակցությամբ «Գրական թերթում» (№ 39) տպագրվում են Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Օրբելու, Ստ. Զորյանի, Հ. Շիրազի ասույթները Մ. Աբեղյանի մասին և Ա. Ղանալանյանի «Հայագիտության վիթխարի կաղնին» հոդվածը։

Հոկտեմբերի 9-ին

Միխայիլ Սվետլովի մահվան կապակցությամբ «Գրական թերթում» (№ 41) տպագրվում է «Բանաստեղծը, բարեկամը, ընկերը» հրաժեշտի խոսքը՝ Հր. Հովհաննիսյան, Գ. Մահարի, Վ. Նորենց, Գ. Սարյան, Հ. Սահյան, Պ. Սևակ, Ս. Տարոնցի ստորագրությամբ։

Հոկտեմբերի 15-ին

Լայնորեն նշվում է Միխայիլ Լերմոնտովի ծննդյան 150-ամյակը։ Հանրապետական թերթերն ու ամսագրերը էջեր են հատկացնում նշանավոր տարեդարձին։

Հոկտեմբերի 16-ին

«Գրական թերթում» (№ 42) տպագրվում է հաղորդում այն մասին, որ Իտալիայում Մխիթարյանների միաբանությունը իտալերեն լույս է ընծայել Սայաթ-Նովայի ընտիր երկերի ժողովածուն։

Հոկտեմբերի 28-ին

Էջմիածնի շրջանային կուլտուրայի պալատում տեղի է ունենում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսք է ասում Գ. Հովնանը։ Լսվում են Գ. Հովսեփյանի («Հովհաննես Հովհաննիսյա-

նի պոեզիան»), Ն. Մուրադյանի («Հովհաննես Հովհաննիսյանը և համաշխարհային գրականությունը»), Ս. Ամիրյանի («Հովհ. Հովհաննիսյանը և Պավլո Տիչինան»), Գ. Աղնավուրյանի («Նորահայտ էջեր Հովհ. Հովհաննիսյանի ժառանգությունից»), Ա. Հովհաննիսյանի («Հովհ. Հովհաննիսյանի գրական-հասարակական գործունեությունը») զեկուցումները։

Վախճանվեց արձակագիր Մարգար Դավթյանը (ծնվ. 1909 թ.)։

Նոյեմբերի 6-ին

Նշվում է գյուղագիր Հարություն Ճուղուրյանի ծննդյան 100-ամյակը։

Նոյեմբերի սկզբին

Մոսկվայում, գրողների կենտրոնական տանը, տեղի է ունենում Շեքսպիրի թարգմանություններին նվիրված տեսական կոնֆերանս։ Այլ հոլովների շարքում լսվում է նաև Խ. Դաշտենցի հաղորդումը։ Կոնֆերանսում բարձր գնահատական է տրվում Շեքսպիրի հայերեն թարգմանություններին։

Երևանում հյուրընկալվում է ամերիկացի նշանավոր գրող Ջոն Ապդայկը։

Նոյեմբերի 23-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դահլիճում տեղի է ունենում Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստ։ Բացման խոսք է ասում կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ստ. Զորյանը, զեկուցում է Ա. Ինճիկյանը։

Ստ. Զորյանի բացման խոսքից

«Հովհաննես Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը մենք այսօր նշում ենք հատուկ հարգանքով ու երախտագիտությամբ, որովհետև մեր գրականության պատմության մեջ Հովհաննիսյանը սկզբնավորում է մի ամբողջ դարաշրջան, որից արդեն սկսվում է մեր նոր բանաստեղծության բարձր շենքը։

Անցյալ դարի 80-ական թվականներին, երբ մեր երախտավոր ավագ բանաստեղծներ Ալիշանն ու Պեշիկթաշլյանը, Պատկանյանն ու Շահազիզը ավարտել էին իրենց ազգային-հրապարակախոսական պոեզիան և գրեթե լռել, մեր գրականության մեջ ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, ինչպիսին լինում է բնության մեջ գարնանը, երբ հողը, ցանքսերն ու բույսերը, ծարավից նեղվելով, սպասում են անձրևի, մի կենարար անձրևի... և երբ գալիս է այդ բարեբեր անձրևը—բնությունը լիանում է, թարմանում և աճում փարթամորեն։

Հովհաննիսյանի պոեզիան 80-ական թվականներին հայ գրականության համար եղավ գարնան անձրև, որ ջերմ ընդունելություն գտավ և շատ ծարավներ հագեցրեց՝ իր մարդկային սրտագրավ մոտիվներով, մարդկային անմիջական հույզերով ու ապրումներով։ Եվ, ամենից կարևորը, Հովհաննիսյանը առաջինը եղավ, որ մեր թափառական պոեզիան դաղութներից բերեց հայրե-

նիք և ազգայնացրեց, նկարագրելով հայրենի իրականությունը, տալով մայրենի երկրի հարազատ հնչյուններ, գույներ, հայ շինականի սերն ու վիշտը, վերջապես, ժողովրդի կենդանի լեզու։ Բերեց դրանց հետ նաև պոետիկական բարձր կուլտուրա, պոետիկական տարբեր ձևեր, միաժամանակ՝ բարձր ոճերի պայծառ օրինակներ ու, պարզապես, ոճի հասկացողություն, և, այսպիսով դարձավ բանաստեղծների նոր սերնդի ուսուցիչը։

Հովհաննիսյանից հետո այլևս անկարելի եղավ գրել հին ձևերով ու ոճերով։

Հովհաննիսյանի շնորհիվ հայ պոեզիան կատարեց մի մեծ թռիչք»։

«Գրական թերթ» № 48։

Նոյեմբերի 26-ին

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական նստաշրջանը՝ նվիրված բազմավաստակ հայագետ Երվանդ Լալայանի ծննդյան 100-ամյակին։ Զեկուցումներ են կարդում Կ. Զաֆաղարյանը, Կ. Մելիք-Փաշայանը, Ա. Նազինյանը։ Հուշերով հանդես են գալիս Կ. Մելիք-Օհանջանյանը, Մ. Հասրաթյանը։

Դեկտեմբերի 1-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված լեհ նշանավոր գրող Ստեֆան Ժերոմսկու ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բացում է սովետա-լեհական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ Գ. Տեր-Գրիգորյանը, զեկուցում է Վ. Հարությունյանը։

Դեկտեմբերի 4-ին

«Գրական թերթը» (№ 49) հաղորդում է, որ Թեհրանում պարսկերեն թարգմանությամբ լույս է տեսել Գր. Զոհրապի նովելների ժողովածուն՝ «Տատնյոր պատմվածք» խորագրով։

Դեկտեմբերի 8-ին

«Սովետական Հայաստան» (№ 287) օրաթերթը հաղորդում է, որ Բելոռուսիայում լույս է տեսել հայ գրողների նովելների ժողովածուն՝ «Արարատի ծաղիկները» խորագրով։

Դեկտեմբերի 9-ին

Վախճանվեց գրականագետ Ասատուր Ասատրյանը (ծնվ. 1903 թ.)։

Դեկտեմբերի 16—17-ը

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում Հայաստանի նկարիչների VIII համագումարը։

Դեկտեմբերի 21-ին

Վախճանվեց սովետահայ անվանի գրող Արագին (Մովսես Մելիքի Հարությունյան, ծնվ. 1878 թ.)։

Դեկտեմբերի 23-ին

«Սովետական Հայաստան» (№ 300) օրաթերթում տպագրվում է «Դեպի հայ գրականության և արվեստի նոր հաջողություններ» առաջնորդող հոդվածը։

Կիրովականում հայրենադարձ հայերի համար կազմակերպվում է գրական երեկո։ Երեկոն բացում է Մ. Մարգարյանը, ողջույնի խոսք է ասում Հ. Սահյանը։ Արտիստներ Մ. Սիմոնյանը, Բ. Ներսիսյանը, Մ. Մկրտչյանը, Ժ. Էլոյանը կարդում են Սայաթ-Նովայի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի և սովետահայ այլ բանաստեղծների գործերից։

Վեդու շրջանային կուլտուրայի տանը տեղի է ունենում ընթերցողների հանդիպում Հ. Շիրազի հետ։

Նշվում է Լևոն Մանվելյանի ծննդյան 100-ամյակը։

Դեկտեմբերի 28-ին

Վախճանվեց ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Հովսեփ Կուսիկյանը (ծնվ. 1891)։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Դավթյան Վ. — Ամառային ամպրոպ
Չարյան Ն. — Երկերի ժողովածու, հ. 6
Թումանյան Հենր.— Երգում հավատարմության
Կապուտիկյան Ս. — Լիրիկա (ռուսերեն), Մոսկվա
Կարապետյան Բ. — Արևը լեռան վրա
Կորյուն Մ. — Առակներ
Հարությունյան Ս. — Արև և ծով
Հովհաննիսյան Հր.— Ծովի լռությունը
Մուրադյան Ս. — Բարեկամության ծաղկաթումբ (ուկրաիներեն), Կիև
Շիրազ Հ. — Քնար Հայաստանի, գիրք 2
Ջալիկյան Գ. — Խաղաղ ամպեր
Չարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 4
Չարենց Ե. — Երկիր Նաիրի (ռուսերեն), Մոսկվա
Սահակյան Ար.— Մենք միասին ենք...
Սահյան Հ. — Մայրամուտից առաջ
Սարմեն — Ծաղկավոր ձմեռ
Սարյան Գ. — Սայաթ-Նովա
Տալյան Վ. — Հրաշալի պարտեզ
Տարոնցի Ս. — Երկեր, հ. 1

Արձակ

Աթայան Ռ. — Մրրիկի թևով
Աղավնի — Շիրակ (ռուսերեն), գիրք 2, Մոսկվա
Աղավնի — Շիրակ, գիրք 2
Այվազյան Ս. — Բարի առավոտ
Արամյան Վ. — Ընկած ծառը
Դրաքսմանյան Ա. — Ճամփաներ, ճամփաներ...
Արմեն Մ. — Պատվիրեցին հանձնել ձեզ
Բակունց Ա. — Երկեր, հ. 1, 2
Գյուլնազարյան Խ. — Ոսկի որոնողները
Դեմիրճյան Դ. — Հանուն կյանքի (ռուսերեն), Մոսկվա
Ջորյան Ստ. — Երկերի ժողովածու, հ. 10
Թաթիկյան Շ. — Նրա ճանապարհը, հ. 1
Խանդաղյան Ս. — Կորած արահետներ
Կապուտիկյան Ս. — Քարավանները դեռ քայլում են
Մահարի Գ. — Սև մարդը
Պետրոսյան Վ. — Մամա, ես արդեն մեծացել եմ (ռուսերեն), Մոսկվա
Պետրոսյան Վ. — Քաղաքի կիսաբաց լուսամուտները
Սարգսյան Մ. — Կյանքը կրակի տակ (ռուսերեն)
Սեկոյան Ա. — Գարունը ձյան տակ
Սիրաս Հմ. — Անտանիա
Ստեփանյան Ա. — Անծանոթ ծանոթներ
Սևան Գ. — Ծիծեռնակները ցածին անցան
Սևունց Գ. — Երկեր, հ. 3
Ռուչար Հր. — Երկերի ժողովածու, հ. 1

Դրամատուրգիա

Բորյան Գ. — Կամուրջի վրա (ռուսերեն), Մոսկվա

Ժողովածուներ

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4

Դասականներ

Ատրպետ — Երկեր
Հովսեպ Սեբաստացի — Բանաստեղծություններ
Հովհաննիսյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 2
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 2, 3
Պռոշյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 6, 7
Վարուժան Դ. — Հացին երգը
Բաֆֆի — Երկերի ժողովածու, հ. 7, 8, 9

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Ախվերդյան Գ. — Նամակներ
Գաբրիելյան Վ. — Ռուբեն Որբերյան
Գրիգորյան Ա. — Սոցիալիստական ռեալիզմի ակունքների մոտ (ռուսերեն)
Դանիելյան Ս. — Ազարիա Ադելյան
Թամրազյան Հր. — Սիամանթո
Թերզիբաշյան Վ. — Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 2
Թումանյան (Ուսումնասիրություններ և հրապարակումներ), հ. 1
Ժամանակակից գրականության հարցեր
Հախվերդյան Լ. — Երկեր և կերպարներ
Համբարձումյան Հ. — Մտորումներ Հոմերոսի մասին
Հայ նոր գրականության պատմություն, հ. 3
Հակոբյան Գր. — Ներսես Շնորհալի
Հյուսյան Մ. — Գրիգոր Զոհրապի արվեստը
Հովհաննիսյան Ռ. — Լև Տոլստոյը և հայ գրական կյանքը
Հունանյան Ա. — Արդի հայ դրամա
Ղուկասյան Զ. — Ժամանակակից սովետահայ վեպը
Ղանալանյան Հ. — Ակնարկներ 19—20-դարերի հայ պոեզիայի (ռուսերեն)
Մարգարյան Հ. — Տիգրան Կամսարական
Մելիքսեթ-Բեկ — Հայ գրողները և Վրաստանը
Մուրադյան Նշ. — Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը
Զրբաշյան Էդ. — Թումանյանի պոեմները
Սալախյան Հ. — Ջինված մարգարեն
Սահակյան Հ. — Երեմիա Քյոմուրճյան
Սարինյան Ս. — Գրական դիտողություններ
Սարյան Ս. — Սովետահայ գրականություն (1941—1960) (ռուսերեն)
Ստեփանյան Գ. — Հակոբ Պարոնյան
Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում
Փափազյան Վահրամ — Իմ Օթելլոն

Թարգմանություն

Ակուտագավա — Թավուտում
Ասք Իգորի ճակատամարտի մասին
Բարել Իս. — Օդեսյան պատմվածքներ
Բալզակ Օ. — Շագրենի կաշին
Բեդնի Դ. — Բանաստեղծություններ, առակներ, պոեմներ
Բյոլլ Հ. — Իմ թանկ ոտքը
Գոգոլ Ն. — Տարաս Բուլբա
Դյումա Ա. — Քսան տարի անց
Զադոնսկի Ն. — Դենիս Դավիդով
Զոլա Է. — Թերեզ Ռաքեն

Էստոնիայի երգը
Էրազմ Ռոտերդամցի — Գովք հիմարության
Իլֆ Ի. և Պետրով Ն. — Միհարկանի Ամերիկան
Լեմ Ստ. — Մագելանի ամպը
Նագիբին Յու. — Պատմվածքներ
Շեքսպիր Վ. — Աֆորիզմներ
Շեքսպիր Վ. — Ընտիր երկեր, հ. 1, 2
Շոլոմ-Ալեյխեմ — Վիպակներ և պատմվածքներ
Պետրարկա — Սոնետներ և կանցոններ
Սկանդինավյան պատմվածքներ
Վեռն Ժյուլ — Երկերի ժողովածու, հ. 5, 6, 7, 8
Վերֆել Ֆ. — Մուսա լեռան քառասուն օրը
Օստրովսկի Ն. — Ինչպես էր կոփվում պողպատը
Ֆիրդուսի — Զալ և Ռուդաբե («Շահնամեից»)
Ֆրանկ Բ. — Սերվանտես

1965

Հունվարի 8-ին

Լևհական «Պշիյաղն» («Բարեկամություն») հանդեսից «Գրական թերթում» (№ 2) արտատպվում է Անջեյ Դրավիչի «Աշտարակցի Գևորգը, թաքնված հարստություններ որոնողը» հոդվածը՝ նվիրված Գևորգ Էմինի պոեզիային։

Նշվում է Նիկողայոս Մառի ծննդյան 100-ամյակը։

Նշվում է թատերագիր Արշավիր Ղարագյուլյանի ծննդյան 80-ամյակը։

Հունվարի 9-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սողոմոն Տարոնցին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվարի 13-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Աշոտ Շայբոնը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվարի 29-ին

Նշվում է Սուրեն Այվազյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության մարտի 27-ի հրամանագրով նա պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվարի 31-ին

«Սովետական Հայաստան» օրաթերթը (№ 25) էջ է նվիրում Կիրովականի գրական կյանքին։

Փետրվարի 3-ին

Վախճանվեց գրականագետ, պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանը (ծնվ. 1880 թ.)։

Փետրվարի 4-ին

«Սովետական Հայաստան» օրաթերթը (№ 28) հաղորդում է Մոսկվայի Երմոլովի անվան թատրոնում Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» թատերության բեմադրման մասին։

«Գրական թերթը» (№ 6) տպագրում է Ավետիք Իսահակյանի՝ 1947 թ. Հայպետհրատի դիրեկտորին ուղղած խոսքը Ֆրանց Վերֆելի և նրա «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի մասին։

Փետրվարի 5-ին

«Գրական թերթում» (№ 6) «Լոս-Անջելոս թայմս» թերթից արտատպվում է Ռոբերտ Քըրշի հոդվածը հայկական էպոսի մասին։

Նշվում է թատերագիր Լևոն Սաղաթելյանի ծննդյան 60-ամյակը։

Փետրվարի 12-ին

«Գրական թերթը» (№ 7) «Ազիա ի Աֆրիկա սեգոդնյա» հանդեսից (№ 1, 1965) արտատպում է Արման Գասպարի «Նոյան տապանի երկիրը» հոդվածը։

Փետրվարի 19-ին

«Գրական թերթում» (№№ 8, 10, 12, 14, 18) Ս. Աղաբաբյանի «Ժամանակը և պոեզիան» հոդվածաշարով սկսվում է բանավեճ ժամանակակից հայ բանաստեղծության զարգացման ուղիների մասին (տե՛ս նաև «Գրական թերթ» №№ 28, 37, 41, 42)։

Օրենբուրգում նշվում է Վահան Տերյանի ծննդյան 80-ամյակը։ «Վահան Տերյանը Օրենբուրգում» թեմայով զեկուցում է կարդում Օրենբուրգի մարզային գավառագիտական թանգարանի գիտական խորհրդի անդամ Լ. Բոլշակովը։ Այդ առթիվ Օրենբուրգի հեռուստատեսային ստուդիան թողարկում է «Հեռվից էր նա եկել այս տափաստանը» վերնագրով հեռուստատեսային ակնարկ։

Նշվում է Անդրանիկ զորավարի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 8) տպագրվում է Հր. Հովհաննիսյանի «Այսպիսին է եղել Անդրանիկը», իսկ «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1) Ա. Հարությունյանի «Անդրանիկը որպես մարտիկ և զորավար» հոդվածները։

ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին։ Զեկուցում է գիտաշխատող, մուսալեռցի Ալ. Փաշայանը։

Փետրվարի 26-ին

Ռուբեն Սևակի ծննդյան 80-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 5) տպագրվում է Վ. Նորենցի «Ռուբեն Սևակ», իսկ «Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 48)՝ Էդ. Ջրբաշյանի «Ռուբեն Սևակ» հոդվածները։

Մարտի 3-ին

Բացվում է ՌՍՖՍՀ գրողների երկրորդ համագումարը։

Մարտի 8-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանին շնորհվում է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, նրան հանձնելով Լենինի շքանշան և «Մուրճ ու մանգաղ» ոսկի մեդալ։

Մարտի 9-ին

Վ. Տերյանի ծննդյան 80-ամյակի առթիվ հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո։ Երեկոն բաց է անում Գ. Էմինը։ Խոսք է ունենում բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Տերյանը։

Մարտի 11-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր, գրականագետ, թարգմանիչ Գեորգ Աբովը (Աբովյան, ծնվ. 1897 թ.)։

Մարտի 19-ին

Հայկական մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 12) տպագրվում է Հայաստանի գրողների միության վարչության բաց նամակը՝ ուղղված Հայաստանի աշխատավորներին, երիտասարդությանը, դպրոցականներին։

«Գրական թերթը» (№ 12) տպագրում է Գուրգեն Մահարու «Պատիվ ըրեք վսեմական քերթողին...» վերնագրով հոդվածը՝ նվիրված Դանիել Վարուժանի մահվան 50-ամյակին։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ են ընտրվում Ստեփան Զորյանը, Կարո Մելիք-Օհանջանյանը, թղթակից-անդամ՝ Արամ Ղանալանյանը։

Մարտի 26-ին

«Գրական թերթում» (№ 13) հրապարակվում են Կոմիտասի 1914—1916 թթ. գրած անտիպ նամակներից մի քանիսը։

Մարտ

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1) մեծ եղեռնի 50-ամյակի կապակցությամբ տպագրվում են մի շարք նյութեր. այդ թվում Մարտիրոս Սարյանի «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» և Վիկտոր Համբարձումյանի «Մեծ եղեռնը» հոդվածները։ Մկրտիչ Ներսիսյանը հրապարակում է նոր նյութեր հայկական կոտորածների մասին։

Ապրիլի 8-ին

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի փոքր դահլիճում տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և ՀՍԳ միության համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված Վահան Տերյանի ծննդյան 80-ամյակին։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ «Վ. Տերյանը և հայ գրականության գալիք օրը» թեմայով զեկուցում է Վ. Պարտիզունին։ Վ. Տերյանի քաղաքական և պետական գործունեության մասին զեկուցում է Ս. Ալիխանյանը։

Ապրիլի 9-ին

Նշվում է Վահան Տերյանի ծննդյան 80-ամյակը։ Երևանում, բանաստեղծի անունը կրող դպրոցի առջև բացվում է նրա հուշարձանը։

Ապրիլի 16-ին

Նշվում է Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը։ Այդ առթիվ Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում հուշ-երեկո։ Զեկուցում է Վ. Նորենցը։ Ելույթ են ունենում Վ. Դավթյանը, Ա. Պատրիկը և ուրիշներ։

Ապրիլի 17-ին

Նշվում է Ղազարոս Աղայանի ծննդյան 125-ամյակը։

Ապրիլի 20-ին

Երևանի պետական համալսարանի դահլիճում տեղի է ունենում գիտությունների ակադեմիայի և պետական համալսարանի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված հայկական եղեռնի 50-ամյակին։ Ներածական խոսք է ասում Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներ են կարդում Ա. Նասյանը («Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ և միջազգային իմպերիալիզմը»), Ե. Սարգսյանը և Ռ. Սահակյանը («Եղեռնի պատմության ենթադրությունը թուրքական պատմագրության մեջ»), Գ. Գալոյանը («Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի վերածնունդը») և ուրիշներ։

Երևանի լուսավորության աշխատողների տանը տեղի է ունենում գրական երեկո՝ նվիրված 1915 թ. եղեռնի զոհ դարձած հայ գրողների հիշատակին։ Երեկոն բաց է անում Ռ. Նանումյանը։ Զեկուցումներ են կարդում Ա. Մանուկյանը, Մ. Սաղյանը, Ա. Սրապյանը, Ա. Մինասյանը, Գ. Աղնավուրյանը, Ա. Զաքարյանը և Լ. Կարապետյանը։

Ապրիլի 23-ին

ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ գրականության և արվեստի հետագա զարգացման համար սահմանվում են ՀՍՍՀ պետական վեց մրցանակներ։

Ապրիլի 24-ին

Լրանում է հայկական եղեռնի 50 տարին։

«Պրավդա» թերթի ապրիլի 24-ի համարում տպագրվում է Մ. Ներսիսյանի և Ն. Ուշակովի «Գենոցիդը ամենածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ» հոդվածը։

Ապրիլի 30-ին

Հայկական մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 18) «Յումանիտեի» ապրիլի 23-ի համարից արտատպվում է «Ո՞վ է հիշում հայոց եղեռնը» հոդվածը։

Մայիսի 3-ին

Վախճանվեց արձակագիր Հրաչյա Քոչարը (Գաբրիելյան, ծնվ. 1909 թ.)։

Մայիսի 12-ին

Լրանում է Դանթեի ծննդյան 700-ամյակը։ «Գրական թերթը» (№ 20) տպագրում է Ա. Տայանի «Նոր ժամանակների առաջին բանաստեղծը» հոդվածը։

Մայիսի 14-ին

Նշվում է գրականագետ Վաչե Պարտիզունու ծննդյան 50-ամյակը։

Գրականության բնագավառում 1965 թ. լենինյան մրցանակը շնորհվում է գրող Սերգեյ Սմիրնովին՝ «Բրեստի ամրոցը» վեպի համար։

Մայիսի 21-ին

Նշվում է Ալեքսանդր Սատուրյանի ծննդյան 100-ամյակը։

Նշվում է Մ. Աբեղյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ տեղի է ունենում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Ներածական խոսք է ասում Վ. Համբարձումյանը։ «Աբեղյանը որպես բանագետ-գրականագետ» թեմայով զեկուցում է Կ. Մելիք-Օհանջանյանը, Աբեղյանի լեզվաբանական ժառանգության մասին՝ Էդ. Աղայանը։

Մայիսի 25-ին

Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ։ Նիստը բաց է անում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Մ. Աբեղյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում է Ա. Ղանալանյանը։

Ծննդյան 100-ամյակի առթիվ Մանուկ Աբեղյանի ապրած տան առջև կանգնեցվում է հուշասյուն։

Մայիսի 27-ին

Երևանում տեղի է ունենում ռուսական երաժշտության տասնօրյակի հանդիսավոր բացումը։ «Գրական թերթը» (№ 23) այդ առթիվ տպագրում է մի շարք նյութեր և հարցազրույց՝ Դմիտրի Շոստակովիչի, Տիխոն Խրենիկովի, Մստիսլավ Ռոստրոպովիչի, Գալինա Վիշնևսկայայի և Արկադի Ռայկինի հետ։

Մայիսի 28-ին

Նշվում է Միխայիլ Շոլոխովի ծննդյան 60-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 22) տպագրում է ՀՍԳ միության վարչության ողջույնի խոսքը և մի շարք հոդվածներ։

ՀՍԳ միության վարչության ողջույնի խոսքից։

«Թանկագին Միխայիլ Ալեքսանդրովիչ.

Հայաստանի գրողները ի սրտե, ամենաջերմ, ամենաանկեղծ շնորհավորանքներն են հղում Ձեզ՝ Ձեր վաթսունամյակի օրը։ Ձեր հոբելյանը սովետական բազմազգ գրականության տոնն է։ Ձեր անունը թանկ է մեր հայրենիքի

բոլոր ժողովուրդների համար։ Այն, ինչպես ամենուրեք, Հայաստանում ևս արտասանվում է հսկայական սիրով ու հարգանքով։ Հայի սրտում անմար են Ձեր հզոր տաղանդով ստեղծված անմահ կերպարները»։

Միխայիլ Շոլոխովը «Խաղաղ Դոն» վեպի համար արժանանում է Նոբելյան մրցանակի։ Ստոկհոլմում Մ. Ա. Շոլոխովի արտասանած ճառը տպագրված է «Գրական թերթի» № 51-ում։

Տեղի է ունենում ՀՍԳ միության նախագահության նիստը։ «Արդիականությունը «Սովետական գրականություն» ամսագրում» թեմայով զեկուցում է ամսագրի գլխավոր խմբագիր Ստ. Կուրտիկյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը, Ս. Խանզադյանը Գ. Սևունցը, Գ. Բորյանը, Ստ. Ալաջաջյանը և Վ. Խեչումյանը։

Հունիսի 4-ին

Ա. Կ. Ջիվելեգովի ծննդյան 90-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 23) տպագրվում է Ռ. Զարյանի «Այդպիսին էր Ջիվելեգովը» հոդվածը։

Հունիսի 11-ին

Նշվում է «Պիոներ կանչ» թերթի հիմնադրման 40 տարին։

Հունիսի 12-ին

Երևանում բացվում է Ավետիք Իսահակյանի արձանը։ Այդ առթիվ տեղի է ունենում միտինգ։ Ելույթ են ունենում Դեղամ Սարյանը, Արա Սարգսյանը և ուրիշներ։

Հունիս

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2) Ե. Տեր-Մինասյանը հրապարակում է Հր. Աճառյանի անտիպ նամակները «Արմատական բառարանի» տպագրության մասին։

Հուլիսի 2-ին

Նշվում է Գուրգեն Բորյանի ծննդյան 50-ամյակը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության օգոստոսի 3-ի հրամանագրով Գ. Բորյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Բեյրութում արաբերեն լույս է տեսնում Սայաթ-Նովայի բանաստեղծությունների հատընտիրը (թարգմանիչներ՝ Ռաֆիֆ Խուրի, Միշել Սլեյման, Արմեն Դարյան)։ Միաժամանակ, Բեյրութի «Գրական շրջանակը» կազմակերպում է երեկո՝ նվիրված Սայաթ-Նովայի ստեղծագործությանը։ Երեկոն վարում է Գառնիկ Ադդարյանը։ Ելույթ են ունենում Մորուս Հասրաթյանը և Վարուժան Թորոսյանը։

Հուլիսի 16-ին

Նշվում է Գրիգոր Զոհրապի մահվան 50-ամյակը։

Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, ինստիտուտին կից ստեղծվում է շեքսպիրագիտական խումբ՝ Ռ. Զարյանի ղեկավարությամբ։

Թեհրանում պարսկերեն հրատարակվում է Վ. Բոթվինիկի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը (թարգմանիչ՝ Հարութիկ Թամրազյան)։

Հուլիսի 30-ին

Նշվում է Երուխանի մահվան 50-ամյակը։

Հուլիսի 31-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով բանաստեղծ Վահան Գրիգորյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Մոսկվայում վախճանվեց գրականագետ, գրող, թարգմանիչ Սաքո Սուքիասյանը։

Հուլիս

«Սովետական գրականություն» ամսագիրը (№ 7) էջեր է նվիրում վրացական գրականությանը (Ի. Նոնեշվիլի, Խ. Բերուլավա, Մ. Փոցխիշվիլի, Մխարգձելի, Կ. Գամսախուրդիա)։

Օգոստոսի 1-ին

Լույս է տեսնում սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի առաջին համարը։ Հրապարակվում են «Սովետական Հայաստան» օրաթերթի և ամսագրի խմբագրությունների, ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանի, Ն. Սիսակյանի, Է. Հասրաթյանի, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանի, գրող Գուրգեն Մահարու և Հայաստանի գրողների միության վարչության ողջույնի խոսքերը։

ՀՍԳ միության վարչության ողջույնը.

«Հայաստանի գրողների միության վարչությունը ջերմորեն ողջունում է «Հայրենիքի ձայն» թերթի ծնունդը։ Թող նա բարձրակամար կամուրջ դառնա հայրենիքի և սփյուռքահայության միջև, Սովետական Հայաստանի ձայնը հասցնի աշխարհով մեկ ցրված հայերի կարոտած սրտերին։ Թող նրա հայրենաբաղ խոսքը հայրենի հողի ու մայրենի լեզվի սերն անմար պահի հայության սրտում, վահան դառնա ուծացման դաժան վտանգի դեմ։

Ջնգուն, ամենուր հասնող զողանջ ենք ցանկանում «Հայրենիքի ձայնին»։

Թերթի առաջին համարում հրապարակվում են անտիպ նյութեր Ավ. Իսահակյանից և Ե. Չարենցից, տպագրվում են հարցազրույց Ստ. Զորյանի հետ, մի հատված Պ. Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմից և այլ նյութեր։

Պրագայում վախճանվեց չեխ հայագետ, դոկտոր Յարոմիր Եդլիչկան (ծնվ. 1901 թ.)։

Օգոստոսի 13-ին

Նշվում է Վախթանգ Անանյանի ծննդյան 60-ամյակը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության օգոստոսի 30-ի հրամանագրով Վ. Անանյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Օգոստոսի 27-ին

«Գրական թերթում» (№ 35) տպագրվում է Մ. Շահինյանի «Մարտիրոս Սարյանի գաղտնիքը» հոդվածը։

Սեպտեմբերի 10-ին

Նշվում է լատիշ գրականության դասական Յան Ռայնիսի ծննդյան 100-ամյակը։

Ռումինիայում հրատարակվում է «Սասունցի Դավիթ» ազգային դյուցազներգությունը (թարգմանիչ՝ Նիկոլայ Թեյքի)։

Սեպտեմբերի 17-ին

Նշվում է Ստեփան Զորյանի ծննդյան 75-ամյակը։

Սեպտեմբերի 24—26-ը

Նշվում է Լենինականի Մոռավյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնադրման 100-ամյակը։ Այդ առթիվ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով թատրոնը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հոկտեմբերի 3-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վարդան Աճեմյանին շնորհվում է ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում։

Բելգրադում արաբերեն լույս է տեսնում Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակը (թարգմանիչ՝ Նիզար Խալիլի)։

Հոկտեմբերի 8-ին

Նշվում է Սերգեյ Եսենինի ծննդյան 70-ամյակը։

Հոկտեմբերի 15-ին

Նշվում է Վազգեն Մնացականյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության դեկտեմբերի 30-ի հրամանագրով Վ. Մնացականյանը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հոկտեմբերի 29-ին

Նշվում է Լազարյան ճեմարանի հիմնադրման 150-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 44) տպագրվում է Պ. Հակոբյանի «Հայ կուլտուրայի հնագույն օջախը Մոսկվայում» հոդվածը։

Հոկտեմբերի 29—30-ին

Նշվում է Ավետիք Իսահակյանի ծննդյան 90-ամյակը։

Լենինգրադի գրողների տանը տեղի է ունենում Ավետիք Իսահակյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկո։ Ներածական խոսք է ասում Պ. Բերկովը, «Հայ մեծ բանաստեղծը» թեմայով զեկուցում է Կ. Գրիգորյանը։

Նոյեմբերի 12-ին

Նշվում է Դրասամատ Տեր-Սիմոնյանի ծննդյան 70-ամյակը։

Վախճանվեց ՍՍՀՄ գրողների միությանը կից հայ գրականության խորհրդի նախագահ, գրող Նիկոլայ Կորնեևիչ Զուկովսկին։

Նոյեմբերի 17—18-ը

Հայաստանի գրողների տանը տեղի է ունենում հանրապետական խորհրդակցություն՝ նվիրված գեղարվեստական թարգմանության հարցերին։

Նոյեմբերի 22-ին

Վախճանվեց երգիծաբան Լեո Կամսարը (Արամ Թովմասյան, ծնվ. 1888 թ.)։

Նոյեմբերի 29-ին

Հայաստանի պետական մրցանակները շնորհվում են Հրաչյա Քոչարին («Նահապետը» վիպակի համար), Արամ Խաչատրյանին, Կոմիտասի անվան կվարտետին, Մարտիրոս Սարյանին և Գոհար Գասպարյանին։

Նոյեմբեր

Երևանում բացվում է Միքայել Նալբանդյանի արձանը։

Բուլղարիայում անց է կացվում հայ արվեստի տասնօրյակ։

«Սովետական գրականություն» ամսագրի նոյեմբերյան համարը էջեր է տրամադրում մոլդավական գրականությանը։

Մոսկվայում, ՍՍՀՄ գրողների միության հայ գրականության խորհրդում, քննարկվում է Հայաստանի գրողների միության վարչության օրդան «Վիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագրության գործունեության և աշխատանքային պլանների հարցը։

Դեկտեմբերի 3-ին

Նշվում է Սերո Խանզադյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 49) տպագրվում է ՍՍՀՄ գրողների միության և Հայաստանի գրողների միության վարչությունների քարտուղարությունների ողջույնը։ ՍՍՀՄ գրողների միության վարչության ողջույնից.

«Թանկագին Սերո Նիկոլաևիչ.

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարությունը, հայ գրականության խորհուրդը սրտագին ողջունում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 50-ամյակի առթիվ։ Թանկագին բարեկամ, մենք լավ գիտենք Ձեր ստեղծագործությունը և խորապես հարգում ենք Ձեզ որպես Հայաստանի տաղանդավոր և նշանավոր գրողներից մեկի։ Ձեր ստեղծագործությունները՝ վեպերը, վիպակները, պատմվածքները մեծ ավանդ են ժամանակակից սովետահայ գրականության մեջ»։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության դեկտեմբերի 2-ի հրամանագրով Սերո Խանզադյանը պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Դեկտեմբերի 10-ին

«Գրական թերթում» (№ 50) Վ. Դավթյանի «Ժամանակակից պոեզիան և «ռեալիզմի նախահիմքերը» հոդվածով բանավեճ է սկսվում՝ նվիրված ժամանակակից բանաստեղծության հարցերին։ Բանավեճին մասնակցում են Պ. Սևակը՝ «Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքեր»-ի (1966, № 2), Մ. Մարգարյանը՝ «Դարի՞ հետ, թե՞ դարի աղմուկի հետ» (1966, № 4), Գ. Հովհաննիսյանը՝ «Նորից հանուն և նորից ընդդեմ» (1966, № 5), Ն. Ադալյանը՝ «Մի հետադարձ հայացք» (1966, № 6), Ա. Մխիթարյանը՝ «Իհարկե, հանուն» (1966, № 7), Ա. Կոստանյանը՝ «Այո՝ հանուն, բայց ինչո՞ւ ընդդեմ» (1966, № 9)։ Բանավեճն ամփոփում է Հր. Թամրազյանը՝ «Խոսք պոեզիայի ճանապարհի մասին» հոդվածով (1966, №№ 16, 17)։

Դեկտեմբերի 24-ին

Նշվում է Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակը։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ։ «Գրական թերթում» (№ 52) տպագրվում է Վահրամ Փափազյանի «Հովհաննես Աբելյան» հոդվածը։ Հոդվածներ են տպագրվում նաև «Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 305)։

Դեկտեմբերի 27—28-ին

Տեղի է ունենում Հայաստանի գրողների միության վարչության հերթական պլենումը։ Քննարկվում են սովետահայ գրականության վաղվա օրվա, երիտասարդ գրողների հետ տարվող աշխատանքի, գրականության մեջ կյանքի խոր ու բազմակողմանի պատկերման հարցերը։ Բացման խոսք է ասում Էդ. Թոփչյանը, զեկուցում է Հր. Հովհաննիսյանը, ելույթ են ունենում Կ. Սիմոնյանը, Հմ. Սիրասը, Գ. Էմինը, Վ. Մնացականյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Պետրոսյանը, Գ. Սևունցը, Ա. Սահինյանը, Ստ. Կուրտիկյանը, Մ. Սարգսյանը, Ռ. Դավոյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Հ. Բաղդասարյանը։

Դեկտեմբերի 28-ին

Հայկական ՍՍՀ ԳԱ նիստերի փոքր դահլիճում անց է կացվում Գարեգին Սրվանձտյանցի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում Բ. Առաքելյանը։ Զեկուցումներ են կարդում Ա. Ղանալանյանը («Հայ բանագիտության մեծ երախտավորը») և Վ. Բդոյանը («Գ. Սրվանձտյանցը ազգագրագետ»)։ «Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 306) տպագրվում է Ա. Նազինյանի «Հայ բանահյուսության ու ազգագրության վաստակաշատ մշակը» հոդվածը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ալիքյան Ա. — Բարեհուսո հրվանդան
Արման Ա. — Քերթվածներ
Գրաշի Ա. — Երկեր, հ. 1, 2
Գրիգորյան Ա. — Թող այսպես լինի
Զարիֆյան Մ. — Երգեր

Զարյան Կ. — Տատրագոմի հարսը
Զարյան Ն. — Դու ինձ կինարես
Իսաջանյան Ա. — Մաղկի կամուրջ
Կոթիկյան Ա. — Ակոսներում
Հարությունյան Մ. — Կորսոիից հետո
Մարգարյան Մ. — Ընհալից հետո
Զարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 3
Սարյան Գ. — Ընտրված էջեր
Սիպիլ — Երկեր
Տարոնցի Ս. — Երկեր, հ. 2

Սրձակ

Ադալյան Ն. — Շոգ ամառ
Առաքելյան Գ. — Օվկիանոսն ու նավապետը
Ավագյան Աբ. — Պատմվածքներ
Ատրյան Վ. — Կարմիր ձիավոր
Արամյան Վ. — Ընկած ծառը
Արամունի Վ. — Հատմիկ, նեբիր ինձ
Արաբս — Երկեր
Արմեն Մ. — Ինձ փնտրող աղջիկը
Գեա Գ. — Որդու վերադարձը (ուկրաիներեն), Կիև
Դավթյան Մ. — Հավերժական կատակ
Դարյան Զ. — Արծիվ Վասպուրականի
Զարյան Ն. — Երկերի ժողովածու, հ. 7 (լրացուցիչ)
Զարյան Ն. — Հայտվան (ռուսերեն), Մոսկվա
Զեյթունցյան Պ. — Փարիզի հանգը
Թամիկյան Շ. — Նրա ճանապարհը, հ. 2
Թափալցյան Ք. — Պատերազմ, հ. 4
Բորգոմյան Ծ. — Ալեկոծ ծովը
Լեո Կամսար — Մարդը տանու շրջանում
Խանզադյան Ս. — Այրված տունը
Խերանյան Մ. — Երկար, երկար մի ճանապարհ...
Հովսեփյան Բ. — Սերմնացանները չվերադարձան (ռուսերեն), Մոսկվա
Հովսեփյան Ռ. — Որոնումներ
Հրաչյան Խ. — Չորրորդ հարկի պատուհանից
Հուրունց Լ. — Աղմկում է Որոտանը
Հուրունց Լ. — Արձանագրություն քարի վրա (ռուսերեն), Մոսկվա
Ղուկասյան Հ. — Ոսկան Երևանցի
Նոր-Այր — Նվիրական սրտեր
Շայբոն Ա. — Անսովոր պատմություն
Գշտունի Գ. — Ջուդիթ
Սահինյան Ա. — Ուշացած ժամադրություն
Սարգսյան Մ. — Տիրամոր պատկերի առաջ

Սեյրանյան Բ. — Այն աղմկոտ գարնան
Սիմոնյան Կ. — Սիցիլիական պաշտպանություն
Սիրաս Հմ. — Նախօրեին (ռուսերեն), Մոսկվա
Սևունց Գ. — Երկեր, հ. 4, 5
Վերդյան Բ. — Լեոնների որդին (ռուսերեն), Մոսկվա
Քալանթարյան Ա. — Խղճի գիշերային այցը
Քոչար Հ. — Երկերի ժողովածու, հ. 2, 3
Քոչար Հ. — Սպիտակ գիրքը

Դրամատուրգիա

Հարությունյան Վ. — Դրամաներ
Պապայան Ա. — Ծիծաղ

Ժողովածուներ

Գրական Հայաստան, գիրք 7 (ադրբեջաներեն)
Թանկագին անուններ, սիրելի էջեր, բանաստեղծություններ և նովելներ (1915 թ. զոհված հայ գրողներ, ռուսերեն)
Հայկական ժողովրդական հեքիաթներ (ռուսերեն)
Հարություն Ս. — Հայ ժողովրդական հանելուկներ
Փորքշեյան Խ. — Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը

Դասականներ

Երուխան — Նովելներ
Թաղիադյան Մ. — Գեղարվեստական երկեր
Հովհաննիսյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 3
Մկրտիչ Նաղաշ — Բնագրեր, ուսումնասիրություն
Մուրացան — Երկերի ժողովածու, հ. 7
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 4, 5
Պարոնյան Հ. — Ընտիր երկեր (ռուսերեն)
Վարուժան Դ. — Նամականի
Տերյան Վ. — 80 (բանաստեղծություններ)

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աղաբաբյան Ս. — Արդիականություն և գրականություն
Արզումանյան Ս. — Ջապել Եսայան
Գյուլնազարյան Խ. և Մանուկյան Ս. — Հակոբ Հակոբյանի կյանքի և գործունեության տարեգրություն
Գրիգորյան Գ. — Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային ոանահյուսությունը

Գրիգորյան Կ. — Յան Ռայնիս
Զարյան Ռ. — Ադամյանի Շեքսպիրը
Թոփչյան Էդ. — Հոկտեմբերը և հայ ժողովրդի ճակատագիրը
Իշխանյան Ռ. — Բակունցի լեզվական արվեստը
Ավետիք Իսահակյանի տուն թանգարան (հուշագրքույկ այցելուների համար)
Հայրյան Գ. — Նոր հերոսի որոնման ճանապարհին
Հյուսյան Մ. — Մեծ եղեռնի զոհ գրողները
Հովհաննես Թումանյանի տուն թանգարան (հուշագրքույկ այցելուներին համար)
Հովհաննիսյան Հ. — Վիլյամ Շեքսպիր
Ղանալանյան Հովհ. — Մտերիմ դեմքեր
Մակարյան Ա. — Երվանդ Օտյան
Մելիքսեթյան Ս. — Մտերմական Շիրվանզադեն (հուշեր)
Մկրտչյան Լ. — Բանաստեղծությունների և թարգմանությունների մասին (ռուսերեն)
Մուրադյան Հր. — Գրա-քննադատական ակնարկներ
Պատրիկ Ա. — Դանիել Վարուժանն իմ հուշերում
Ջնդի Հ. — Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ
Ջրբաշյան Էդ. — Ռուբեն Սևակ
Սիմոնովա Ա. — Ա. Մ. Գորկի (կյանքը և ստեղծագործությունը)
Սողոմոնյան Ս. — Ժամանակակից հայ բանաստեղծներ, հ. 1
Սովետահայ գրականության պատմություն, հ. 2
Սուքիասյան Ա. — Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը»
Վահան Տերյանը ռուսերեն (թարգմանությունների և քննադատական հոդվածների մատենագիտություն)
Ֆելիքյան Հ. — Ալեքսանդր Մատուրյան

Թարգմանություն

Այթմատով Չ. — Երեք վիպակ
Բայրոն Ջ. — Երկերի ժողովածու
Բյոլլ Հ. — Անտերունչ տունը
Բրեխտ Բ. — Հերետիկոսի թիկնոցը
Գրանին Դ. — Ամպրոպ եմ սանձում
Գրեկովա Ի. — Կանանց վարսավիրը
Գրիմմ եղբայրներ — Հենզելն ու Գրետելը
Դյուրենմատ Ֆ. — Վթար
Դոստոևսկի Ֆ. — Ապուշը
Ժամանակակից հույն գրողների պատմվածքներ
Լեմ Ստ. — Սոլարիս
Լերմոնտով Մ. — Երկերի ժողովածու, հ. 1
Լբսաժ Ա. Ռ. — Կաղ սատանան
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3
Լորկա Ֆ. Գ. — Մեղրի երգը
Խաքանի — Քառյակներ և բանաստեղծություններ

Կազանձակիս Ն. — Քրիստոսը կրկին է խաչվում
Կոնան-Դոյլ Ա. — Մարաքոսի անդունդը
Ճապոնական հոքուներ և թանկաներ
Մեժելայտիս Էդ. — Մարդը
Մոեմ Ս. — Սարկություն մարդկային
Մորավիա Ա. — Տգնապ
Մորուա Ա. — Երեք Դյումա
Պաուստովսկի Կ. — Սպիտակ ծիածանը
Պրեվեր Ժ. — Արյուն և փետուր
Ռիբակով Ա.— Սուսերն Բրոնզե Թռչուն
Ռիլսկի Մ. — Սև աստղեր
Սարոյան Ռ. — Վեսլի Ջեկսոնի արկածները
Վեռն Ժ. — Երկերի ժողովածու, հ. 10
Վիյոն Ֆ. — Բալլադներ
Տոլստոյ Լ. — Հարություն
Տրիոլե Է. — Ավինյոնի սիրահարները
Օթերո Բլաս դե — Քեզ համար թախծելիս
Ֆոլկներ Ու. — Լրիվ շրջադարձ

1966

Հունվարի 4—5-ը

Տեղի է ունենում միջնակարգ դպրոցների 9—11-րդ դասարանների հայ գրականության ուսուցիչների հանրապետական խորհրդակցություն՝ նվիրված գրականության դասավանդման հարցերին։ Զեկուցումներով հանդես են գալիս էդ. Ջրբաշյանը և Թ. Ջուհարյանը։

Հունվարի 14-ին

Նշվում է Միսաք Մեծարենցի ծննդյան 80-ամյակը։

Հունվարի 20-ին

Վախճանվեց բանաստեղծ Վահան Արամունին (ծնվ. 1914 թ.)։

Հունվարի 21-ին

Նշվում է Ռոմեն Ռոլանի ծննդյան 100-ամյակը։

Փետրվարի 9-ին

Նշվում է Պավլո Տիչինայի ծննդյան 75-ամյակը։

Նշվում է Ալեքսանդր Մյասնիկյանի ծննդյան 80-ամյակը։ «Գրական թերթում» (№ 7) տպագրվում է Լեոյի «Ալեքսանդր Մյասնիկյանի հավերժ հիշատակին» հուշը։ «Սովետական Հայաստան» օրաթերթը (№ 33) էջ է հատկացնում Ալ. Մյասնիկյանի կյանքին և գործունեությանը։

Փետրվարի 18-ին

Նշվում է հրապարակախոս-քննադատ Հայկ Գյուլիքևխյանի ծննդյան 80-ամյակը։

Փետրվար

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված միջնադարյան հայ բանաստեղծ և նկարիչ Նաղաշ Հովնաթանին։ Զեկուցում է Մ. Մկրտչյանը։

Մարտի 3-ին

Բացվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարը։ Գրողներից «Ժամանակը և գրականությունը» թեմայով ելույթ է ունենում էդ. Թոփչյանը (տե՛ս «Գրական թերթ», № 11)։

Մարտի 18-ին

Նշվում է Հրաչյա Աճառյանի ծննդյան 90-ամյակը։

Մարտի 19-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով թատերագիր Գրիգոր Տեր-Գրիգորյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Մարտի 21—22-ը

ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Հրաչյա Աճառյանի ծննդյան 90-ամյակին։ Նստաշրջանը ներածական խոսքով բաց է անում Գ. Ջահուկյանը։ Աճառյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցում է Էդ. Աղայանը։ Նստաշրջանում հայագիտական թեմայով լսվում են 10 գիտական զեկուցումներ։

Մարտի 29-ին

Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատում, իր աշխատանքն է սկսում Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարը։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցմամբ հանդես է գալիս ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Լ. Ի. Բրեժնևը։

Գրողներից ելույթ է ունենում Մ. Շոլոխովը (տե՛ս, «Գրական թերթ», № 15)։

ՍՄԿԿ XXIII համագումարի ընտրած ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար է ընտրում Լ. Ի. Բրեժնևին։

Մարտ

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված արևմտահայ գրականությանը։ «Արևմտահայ գրականությունը և Լևոն Շանթը» թեմայով զեկուցում է գրականագետ Հր. Գրիգորյանը։

«Սովետական գրականություն» (անգլերեն, իսպաներեն, գերմաներեն, լեհերեն) հանդեսի 3-րդ համարն ամբողջությամբ նվիրվում է Սովետական Հայաստանի գրականությանը և արվեստին։

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1) Էդ. Ջրբաշյանը հրապարակում է անտիպ էջեր Հովհաննես Թումանյանի ինքնակենսագրական գրառումներից։

Ապրիլի 8-ին

ՀՍԳ միությունում քննարկվում է Աբիգ Ավագյանի «Պատմվածքներ» ժողովածուն։ Զեկուցում է Ս. Արզումանյանը։ Ելույթ են ունենում Ա. Սահինյանը, Հր. Թամրազյանը, Ս. Այվազյանը։ Քննարկումն ամփոփում է Հր. Հովհաննիսյանը։

Ապրիլի 12-ին

Նշվում է Միքայել Նալբանդյանի մահվան 100-ամյակը։ Այդ առթիվ Հայաստանի գրողների տան դահլիճում տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը։

Բացման խոսք է ասում Վ. Նալբանդյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Խ. Սարգսյանը («Ազատության դաղափարը Նալբանդյանի աշխարհայեցողության մեջ»), Ս. Դարոնյանը («Նոր տվյալներ Նալբանդյանի և ռուս հեղափոխական դեմոկրատների կապերի մասին»), Մ. Նահապետյանը («Նալբանդյանի կերպարը Բաֆֆու ստեղծագործություններում»), Ա. Ինճիկյանը («Նալբանդյանի անհայտ երկերը և անկատար մտահղացումները») և Մ. Ավդալբեկյանը («Հայ հին գրականությունը Նալբանդյանի գնահատմամբ»)։

Մ. Նալբանդյանի 100-ամյակը նշվում է հանրապետական մամուլի էջերում («Սովետական Հայաստան» օրաթերթ, № 85, «Գրական թերթ», № 16), «Սովետական գրականություն» (№ 4) և այլն։

«Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրում (№ 4) տպագրվում է Նահապետ Աթանասյանի հիշողությունները Նալբանդյանի մասին և «Օշական» բանաստեղծության տեքստը, որ Նալբանդյանը նվիրել է Աթանասյանին։

Դոնի-Ռոստովում տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Մ. Նալբանդյանի մահվան 100-ամյակին։ Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում է գրող Միքայել Անդրիասյանը։

Ապրիլի 22-ին

Արվեստի բնագավառում լենինյան մրցանակ է շնորհվում Զարուհի Դոլուխանյանին։

Ապրիլի 23-ին

Լրանում է Վիլյամ Շեքսպիրի մահվան 350-ամյակը։ Այդ առթիվ Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Նիստը բաց է անում Վ. Փափազյանը։ «Շեքսպիրը և հայ իրականությունը» թեմայով զեկուցում է Ռ. Զարյանը։

Ապրիլի 28-ին

Նշվում է Վրթանես Փափազյանի ծննդյան 100-ամյակը։ «Գրական թերթում» (№ 18) տպագրվում են Արտ. Քալանթարյանի «Աղնիվ գրողը» և Վ. Խեչումյանի «Խոսք հարյուրամյակի», «Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 98) Ս. Սարգսյանի «Մի ամբո՞ղջ դար...», «Սովետական գրականություն» ամսագրում (№ 4) Ռ. Նանումյանի «Վրթանես Փափազյան» հոդվածները։

Մայիսի 6-ին

«Գրական թերթում» (№ 19) տպագրվում է Հ. Դասպարյանի հաղորդումը՝ Վիկտոր Հյուգոյի նամակներից մեկի հայտնաբերման մասին։ Նամակը ուղղված է եղել «Թշվառներ» վեպի թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրյանին։ Նամակի տպագիր տարբերակը վաղուց հայտնի էր գրական հասարակայնությանը, որի ճշտությունը հաստատվում է հայտնաբերված ձեռագրով։ Ահա այն.

«Հոթվիլ Հաուս, 12 դեկտեմբերի, 1868 թ.

Պարոն,

Ձեր առաջին նամակն ինձ չի հասել, իսկ երկրորդը ստացա, երբ վերադարձա երկար բացակայությունից հետո։ Դա է պատասխանիս ուշացման պատճառը։

Ես ձեր հնամենի լեզուն չգիտեմ, բայց սիրում եմ այն։ Նրա մեջ ես զգում եմ Արևելքը և նշմարում դարերը։ Նրա մեջ ես տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի ճառագայթումը։

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելս։ Երախտագիտությամբ ընդունում եմ Ձեր ազնիվ ձոնը և շնորհակալություն եմ հայտնում։

Վիկտոր Հյուգո»

Մայիսի 17-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր Վահրամ Ալազանը (Գաբուզյան, ծնվ. 1901 թ.)։

Մայիսի 24-ին

Երևանում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում բուլղարական մշակույթի տասնօրյակի հանդիսավոր բացումը։

Բացման խոսք է ասում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը։ Ելույթ են ունենում ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Հ. Բաղդասարյանը, բուլղարական պատվիրակության ղեկավար Ի. Պալիյսկին։

Բուլղարական մշակույթի տասնօրյակի մասնակից մի խումբ գրողներ՝ Էմիլ Կորալովը, Լադա Գալինան և Անաստաս Ստոյանովը այցելում են ՀՍԳ միություն։ Հյուրերին ողջունում է Է. Թոփչյանը։ Հանդիպման ժամանակ, որին ներկա էին Ստ. Զորյանը, Հր. Հովհաննիսյանը, Աղավնին, Գ. Բորյանը, Հա. Պողոսյանը, Վ. Նորենցը, Մ. Մարգարյանը և ուրիշներ, զրույց է ծավալվում հայ և բուլղար ժողովուրդների գեղարվեստական գրականության արդի հարցերի շուրջը։

Բուլղարական մշակույթի տասնօրյակի առթիվ «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայում «Բուլղարական պատմվածքներ» ժողովածուն։

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 5) տպագրվում են նյութեր բուլղարական գրականությունից։

Մայիսի 27-ին

Նշվում է պատմիչ Եղիշեի մահվան 1500-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 22) տպագրել է Գ. Հակոբյանի «Եղիշե» հոդվածը։

Վրացերեն հրատարակվում է Բաֆֆու «Խենթը» վեպը (թարգմանիչ՝ Լևոն Ասատրյան)։

Հունիսի 6-ին

Մոսկվայում, Չայկովսկու անվան համերգային դահլիճում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Հակոբ Հակոբյանի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բաց են անում Ա. Սուրկովը և Հ. Սալախյանը։ Ելույթ են ունենում Ա. Բեզիմենսկին, Ա. Միրցխուլավան, Մ. Ռահիմը, Վ. Զվյագինցևան, Ս. Շերվինսկին։

Հունիսի 10-ին

Նշվում է Վահան Թոթովենցի ծննդյան 70-ամյակը։

Հունիսի 15-ին

Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Հակոբ Հակոբյանի ծննդյան 100-ամյակին։

Նիստը բաց է անում Ն. Զարյանը։ Հ. Հակոբյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Հ. Մկրտչյանը։ Ելույթ են ունենում բանաստեղծներ Վ. Նորենցը և Հռ. Պողոսյանը։

Հունիս

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2) տպագրվում է Գ. Սևակի «Երբ է ծնվել Սայաթ-Նովան» բանավիճային հոդվածը։

Հուլիսի 2-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վարդան Ատրյանը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հուլիսի 15-ին

Նշվում է Տիգրան Կամսարականի ծննդյան 100-ամյակը։

Օգոստոս

Սպիտակի շրջանի Խնկոյան գյուղում բացվում է Աթաբեկ Խնկոյանի արձանը։ Արձանի բացմանը նվիրված միտինգի ժամանակ ելույթ են ունենում Հ. Շիրազը և Ս. Խանզադյանը։

Սեպտեմբերի 2-ին

Նշվում է Միսաք Մանուշյանի ծննդյան 60-ամյակը։

Սեպտեմբերի 17-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում Հայաստանում չեխոսլովակյան մշակույթի տասնօրյակի հանդիսավոր բացումը։

Սեպտեմբերի 21-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակին։ Բացման խոսք է ասում Գ. Սարյանը։ Զեկուցում է Ն. Զարյանը։

Սեպտեմբեր

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 9) տպագրվում են նյութեր չեխոսլովակյան գրականությունից։

Հոկտեմբերի 14-ին

Նշվում է արձակագիր Միքայել Շաթիրյանի ծննդյան 50-ամյակը։

Հոկտեմբերի 19-ին

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում բացվում է եվրոպական պոեզիայի համաժողով։ 18 երկրներից համաժողովին մասնակցում են 120 պատվիրակներ։ Սովետական Միության պատվիրակության կազմում էդուարդաս Մեժելայտիսի, Կոնստանտին Սիմոնովի, Լեոնիդ Մարտինովի և ուրիշների հետ համաժողովին մասնակցում է նաև Պարույր Սևակը, որի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Անձրևային սոնատ» վերնագրով այդ օրերին հրատարակվում է Հունգարերեն։

Հոկտեմբերի 21-ին

Չեխոսլովակիայում բացվում է հայկական մշակույթի տասնօրյակը։ Այն միաժամանակ սկսվում է Պրագայում և Բրատիսլավայում։

Հոկտեմբերի 28-ին

«Գրական թերթում» (№ 44) 1911 թ. Կ. Պոլսի պարբերական մամուլից արտատպվում է Ավ. Իսահակյանի «Ողբում եմ» արձակ բանաստեղծությունը, որը դուրս է մնացել բանաստեղծի բոլոր ժողովածուներից։

Նշվում է Արման Կոթիկյանի ծննդյան 70-ամյակը։

Հոկտեմբերի 29-ին

ՀՍԳ Միությունում տեղի է ունենում Խ. Գյուլնազարյանի «Ինչ-որ տեղ վերջանում էր հորիզոնը» գրքի քննարկումը։ Զեկուցում է Վ. Մնացականյանը։ Ելույթ են ունենում Ս. Հարությունյանը, Ս. Սարինյանը, Մ. Շաթիրյանը և Ն. Զարյանը։

Հոկտեմբեր

Ճապոնիայում լույս տեսնող «Սին Նիհոն Բունգակու» («Ճապոնական նոր գրականություն») ամսագրի հոկտեմբերյան համարը էջեր է տրամադրում հայ բանաստեղծներին։ Մինոուրա Տացուձիի սեղմ ներածականով և թարգմանությամբ ներկայացվում են Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Հակոբյանի, Ե. Չարենցի, Ն. Զարյանի, Գ. Էմինի և Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունները։

Վենետիկում իտալերեն հրատարակվում է Սայաթ-Նովայի ընտիր երգերի ժողովածուն (թարգմանիչ՝ Մեսրոպ Ջանազյան)։ Այդ կապակցությամբ իտալացի գրաքննադատ Ֆեդերիկո Բենակին Սայաթ-Նովայի և նրա ժողովածուի մասին գրել է.

«Մեծահամբավ այդ բանաստեղծի սիրային քնարերգությունը նույնանում է հայկական ժողովրդական երգերի հետ, հասնելով արվեստի գերագույն աստիճանին։ Կարդալով այդ երգերը, մարդ մոռանում է նրանց չափը, հանգերը և կառուցվածքը, որովհետև բանաստեղծի զորովը և պատկերները

այնպիսի ուժ ունեն, որ ընթերցողին ձգում, տանում են մի այլ աշխարհ՝ հավերժ ջերմ ու դյուրթական սիրո աշխարհը։ Այդ երգերում նրբորեն թրթռում են երազային տեսիլները։ Բանաստեղծական բացատրություններն այնքան բարախուն են, այնքան մարդկային ու հավիշտակիչ, որ ընթերցողի սիրտը սկսում է բանաստեղծի հետ միասին նվագել նույն լարի վրա։ Սայաթ-Նովայան սերը, բխելով ճշմարիտ զգացումից, արձագանք է գտնում ընթերցողի սրտում։ Այս երգերում, որոնք, ի դեպ, սքանչելիորեն են թարգմանված, թվում է լսում ես մի ամբողջ ժողովրդի, որը երգում է, տարվում զեղեցկությամբ երազով և արբենում իր սիրած էակի թովչանքով։ Մենք՝ իտալացիներս, որ մինչև վերջերս բնավ չէինք լսել սիրո այդ անմահ երգչի անունը, այժմ մեր ձեռքի տակ ունենք նրա սքանչելի երգերը, որոնք դառնում են նաև մեր սեփականությունը»։

«Գրական թերթ», № 43

Լեհական «Պիվ» հրատարակչությունը լույս է ընծայում Գ. Էմինի «Բանաստեղծություններ» գիրքը։

Նոյեմբերի 7-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նիստերի դահլիճում բացվում է Հայաստանի գրողների հինգերորդ համագումարը հետևյալ օրակարգով.

1. Հայաստանի գրողների միության վարչության հաշվետու զեկուցումը (զեկուցող ՀՍԳ միության առաջին քարտուղար էդ. Ս. Թոփչյան)։ Հարակից զեկուցումներ. սովետահայ արձակը (Ս. Աղարաբյան), սովետահայ պոեզիան (Հր. Թամրազյան)։

2. Հայաստանի գրողների միության վարչության վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը (զեկուցող Ա. Դարբինի)։

3. Հայաստանի գրողների միության զեկավար օրգանների և ՍՍՀՄ գրողների IV համագումարի պատգամավորների ընտրություններ։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցումներից հետո կարճ է ունենում՝ Վ. Նորենցը, Յու. Յակովլևը (Ռուսաստան), Գ. Սևունցը, Վ. Կոչեսկին (Ուկրաինա), Վ. Մնացականյանը, Ա. Զակովսկին («Լիտերատուրնայա գազետա» թերթի գլխավոր խմբագիր), Լ. Մոտալովան (Չեխոսլովակիա), Կ. Գամսախուրդիան (Վրաստան), Մ. Պոպլիգովիչը (Բելոռուսիա), Մ. Առգուստակալնան (Լատվիա), Ս. Արզումանյանը, Պ. Սևակը, Տ. Տուլեպ Բերգենովը (Ուզբեկստան), Հ. Շիրազը, Ստ. Ալաջաջյանը, Վ. Պետրոսյանը, Ստ. Կուրտիկյանը, Գ. Էմինը, Ն. Զարյանը, Ա. Սահինյանը, Հ. Մալախյանը, Գ. Ադդարյանը (Լիբանան), Կ. Զաչանին։

Ստեփան Զորյանի բացման խոսքից

«Հարգելի ընկերնե՛ր, բարեկամնե՛ր, հյուրե՛ր։

Այսօր մեր գրականության համար նշանակալից օր է. սկսում ենք Սովետական Հայաստանի գրողների V համագումարը։

Հայ գրականությունը դարերի ընթացքում, իր սկզբնավորության օրերից, V դարից, մեր ժողովրդի համար եղել է հայրենիքի նման նվիրական սրբություն, քանի որ ժողովուրդը նրա մեջ տեսել է իր վշտերի և ուրախությունների, իր հույզերի ու հույսերի և ինքնաճանաչման արտահայտությունը, ու հաճախ

մեծ հեղինակներին համարել է մարգարեներ, ոմանց նույնիսկ սրբացրել, ինչպես Խորենացուն, Եղիշեին, Նարեկացուն։

...Ես գիտեմ՝ արվեստի համար չկա հին ու նոր նյութ, բայց ցանկալի է այսօրվա գրական երկերում ավելի տեսնել մեր ներկա իրականության զեղարվեստական պատկերը, մեր այսօրվա մարդուն՝ իր հոգեբանությամբ ու ձգտումներով։ Այդ մարդը սակավ է երևում։ Ավելին. մեր նոր գրականության մեջ պակասում է հարուստ ներաշխարհով և հարուստ մտավորով լիարյուն մարդը։

...Այժմ մենք ունենք, իհարկե, լավ գրողներ, շնորհալի հուսատու երիտասարդներ։ Սակայն պետք է ձգտենք ունենալ գրող-արվեստագետներ։ Ոչ թե հետաքրքիր դեպքեր ու մոտիվներ շարադրողներ, այլ արվեստի խորաթափանց վարպետներ, որ բավարարեն ոչ միայն ամենապահանջկոտ ընթերցողներին, այլև բարձր, խստապահանջ ճաշակները, ոչ միայն մեր հայրենակիցներին, այլև օտարներին։

Եվ հուսով եմ, որ այդ օրը հեռու չէ»։

Պարույր Սևակի ելույթից

«...Ազգային սնապարծությունը մեզ մոտ արտահայտվում է տարբեր ձևերով և վնասում է մեր ընդհանուր գործին։ Գուցե տաղնապ կա իմ խոսքի մեջ։ Թերևս, բայց դա տաղնապ է և ոչ թե խուճապ, ոչ թե ահաբեկվածություն։ Դա այն տաղնապն է, որ ունենում է գնացքից կամ օդանավից ուշացողը։ Մենք իրավունք չունենք ուշանալ պատմության գնացքից կամ օդանավից։ Մենք պիտի շահենք շախմատային մեր այն խաղը, որն սկսել ենք ոչ թե մենք այլ Մեսրոպ Մաշտոցը։ Ահա այս հարցն է, որ պիտի լրջորեն մտահոգի մեզ՝ հայ գրականության մշակներիս։ Այս բարձունքից մենք պետք է նայենք մեր գրական բոլոր վիճակներին։

...Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է։ Ես, որպես հայ ժողովրդի բանաստեղծ, ինձ վիրավորված կզգամ, եթե իմանամ, որ որևէ հայ պատմաբան աղավաղում է մի այլ ժողովրդի պատմությունն ի վնաս մյուս ժողովրդի, որևէ հայ երկրաբան պայթեցումներ է կատարում հարևանի հինավուրց եկեղեցու պատերի տակ, իսկ հաճախ ուրիշներն աղավաղում են մեր պատմությունը և մենք չենք կարողանում նրանց ձեռքը բռնել»։

«Գրական թերթ», № 51

Գառնիկ Ադգարյանի ելույթից

«Հայ գրականության մայր երակը նախ և առաջ Սովետական Հայաստանում է բաբախում, դուք եք, որ հիմնավորապես շարունակում եք Նարեկացիների, սայաթ-նովաների, աբովյանների, պարոնյանների գրականությունը և հայրենի հողից հեռու գտնվող սիրուքահայ գրողների ճիգերը պայմանավորված են ձեր իսկ հաջողություններով...»։

«Գրական թերթ», № 48

Համագումարը ընդունում է բանաձև (տե՛ս, «Գրական թերթ», № 50)։

Համագումարի ընթացքը արտացոլված է «Գրական թերթի» №№ 47, 48, 49, 50-ում։

Հարակից զեկուցումները՝ Ս. Ադաբաբյանի «Ժամանակակից արձակի խնդիրներից» և Հր. Թամրազյանի «Ժամանակակից հայ պոեզիայի զարգաց-

ման մի քանի խնդիրները» տպագրվում են «Սովետական գրականություն» ամսագրում (№№ 1, 2, 3)։

Նոյեմբերի 27-ին

Նյու-Յորքում, ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյի ժամանակ, հանկարծամահ է լինում հայ ականավոր գրող Համաստեղը (Համբարձում Կելենյան, ծնվ. 1896 թ.)։

Նոյեմբերի 28—30-ը

Երևանում անց են կացվում համամիութենական «Բրյուսովյան օրեր»։

Նոյեմբերի 30-ին

Երևանում Վ. Յա. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի շենքի առջև բացվում է Վալերի Բրյուսովի հուշարձանը։

Դեկտեմբերի 2-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Նիկոլայ Տիխոնովին շնորհվում է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում՝ նրան հանձնելով Լենինի շքանշան և «Մուրճ ու մանգաղ» ոսկի մեդալ։

Դեկտեմբերի 9-ին

Նշվում է Դերենիկ Դեմիրճյանի մահվան 10-ամյակը։

Դեկտեմբերի 15-ին

Նշվում է Վիգեն Խեչումյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ կապակցությամբ նա պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Դեկտեմբերի 23-ին

«Գրական թերթը» (№ 52) արտասահմանյան մամուլից քաղվածքներ է տպագրում «Սասնա ծռերի» մասին.

«Աշխարհի մեծագույն ազգային էպոսներից մեկի փայլուն և զգայացունց թարգմանությունը գրական և պատմական արժեքներով բաղդատելի է Գիլգամեշի, Բեոուլֆի, էլ Սիդդի և Ռոլանդի երգի հետ։ Այն կատարված է հավատքով, սիրով, ըմբռնումով և հմտությամբ։ Պարոն Սյուրմելյանը գործել է մի սխրանք, որ շատ քիչ գրողների է հաջողվում անթերի կատարել։ Նա անգլերեն լեզվի գրականության մեջ մուծել է մի ճոխ և տոկուն էպիկական փորձ»։

(«Լոս-Անջելոս թայմս». Ռոբերտ Ռ. Քերշ)

«Ես անսահման վայելք զգացի «Սասնա ծռերը» կարդալով։ Պատումները առույգ են, կենսախնդ և անմիջական։ Դա գեղեցիկ և լուսավոր գիրք է։ Նա զորացնում է հավատը մարդու մեջ ազատության, սիրո և կյանքի նկատմամբ»։

(«Լոս-Անջելոս Ֆրի պրեսս». Անաիս Նին)

«Թեպետ «Սասնա ծռերը» հայկական ազգային էպոսի թարգմանությունն է Լևոն Սյուրմելյանի կողմից, նրա կոչումը սակայն չպետք է սահմանափակվի այդ ծագմանը պատկանող ժողովրդով։

Պարզ ու պատկերավոր կերպով Սյուրմելյանը շարադրում է ազատության համար մղվող պայքարի վեպը, որ հայ գուսան-բանաստեղծները բեր-

ներբերան հաղորդել են դարերով։ Չորս ճյուղերով Սյուրմելյանը ասպարեզ է բերում հերոսների մի շարան, որոնց հաստաբետ պարանոցները անխոցելի են բռնակալի սրերի առաջ։

(«Քլիվլենդ Պրես». Բարբարա Ուեյս)։

«Ես այդ գիրքը կարդացի ոչ միայն մեծ հաճույքով, այլև իբրև մեծ հրահանգ։ Սյուրմելյանի ներածությունը մեկնաբանության տիպար է, իսկ էպոսը ինքնին կախարդիչ է։ Դա ինձ ամբողջապես անծանոթ մի աշխարհ էր, և հավայելեցի գերագույն հաճույքի երկու երեկո»։

(Մարկ Սչորեր՝ Կալիֆորնիայի համալսարան)։

Նշվում է գրականագետ, արձակագիր, թարգմանիչ Արշալույս Արշարունու ծննդյան 70-ամյակը։

Նշվում է գրականագետ, մանկավարժ Արշալույս Բաբայանի ծննդյան 60-ամյակը։

Դեկտեմբերի 29-ին

Վախճանվեց գրականագետ Սալոմե Արեշյանը (ծնվ. 1913 թ.)։

Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում կազմակերպվում է երեկո՝ նվիրված ֆրանսիացի հայագետ-Անտուան Մեյեի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բաց է անում Դ. Սևակը։ «Ա. Մեյեի կյանքն ու գործունեությունը» թեմայով զեկուցում է Էդ. Աղայանը։

Դեկտեմբեր

Նշվում է Արսեն Բագրատունու մահվան 100-ամյակը։

Թեհրանում պարսկերեն հրատարակվում է Մ. Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակը (թարգմանիչ՝ Երվանդ Փափազյան)։

Պրագայում չեխերեն հրատարակվում է Գ. Արշակյանի «Թրաշուշաններ» վեպը (թարգմանիչ՝ Լ. Մոտալովա)։

Մոսկվայի «Նաուկա» հրատարակչությունը լույս է ընծայում «Սովետահայ գրականության պատմություն» աշխատությունը, որը տպագրության էին պատրաստել Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության և ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտները։ Գիրքը բացվում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի, նրա հարուստ մշակույթի զարգացման վերաբերյալ ներածական հոդվածով։ Ապա հաջորդականությամբ շարադրված են 20 և 30-ական թվականների, Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի և նախապատերազմյան սովետահայ գրականության պատմությունը։ Առանձին գլուխներ են նվիրված Հ. Հակոբյանի, Մ. Արազու, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Գ. Մահարու, Ն. Զարյանի, Գ. Սարյանի գրական գործունեությանը։

Գիրքն ունի նաև «Գրական կյանքի համառոտ լրատու» բաժինը, որի մեջ պատմվում է Սովետական Հայաստանի գրական կյանքի առավել նշանակալի իրադարձությունների մասին։

Աշխատության վերջում զետեղված է նաև սովետահայ գրողների ճանաչում գտած ստեղծագործությունների թարգմանությունների համառոտ մատենագիտությունը։

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 4) տպագրվում է Ա. Ինճիկյանի «Նալբանդյանի անհայտ երկերն ու անկատար մտահղացումները» հոդվածը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Բորյան Գ. — Ընտիր երկեր
Դավթյան Վ. — Գինու երգը
Կապուտիկյան Ս. — Յոթ կայարաններ
Հակոբյան Հ. — Բանաստեղծություններ, պոեմներ
Հակոբյան Հ. — Ընտիր բանաստեղծություններ և պոեմներ (ադրբեջաներեն), Բաքու
Հակոբյան Մ. — Անծանոթ երազ
Մահարի Գ. — Երկերի ժողովածու, հ. 1
Շերվինսկի Ս. — Նմուշներ հայկական պոեզիայից (ռուսերեն)
Չարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 5
Չարենց Ե. — Պոեմներ
Սահակյան Յու. — Արևը քո դեմքին
Սեմա Ա. — Երկեր
Սարմեն — Երկեր, հ. 1
Սևակ Պ. — Անլռելի զանգակատուն

Արձակ

Աթայան Ռ. — Արթնացում (ռուսերեն), Մոսկվա
Ալաջաջյան Ստ. — Եղեգները չխոնարհվեցին, գիրք Ա
Այվազյան Ս. — Ճակատագիրն հայոց
Անանյան Վ. — Որսորդական պատմվածքներ, պրակ 6
Ավագյան Աբ. — Պատմվածքներ
Ավագյան Էդ. — Միածան
Արմեն Մ. — Երկեր, հ. 1
Արշակյան Գ. — Սև ու սպիտակ կարապներ
Գյուլնազարյան Խ.— Ինչ-որ տեղ վերջանում է հորիզոնը
Գրիգորյան Վ. — Բոլոր օրերի ոռնաձայները
Եսայան Զ. — Բարպա Խաչիկ
Զարյան Ն. — Սասնա Դավիթ
Թոթովենց Վ. — Ազավնիներ
Թոթովենց Վ. — Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա
Խալափյան Զ. — Որտե՞ղ էիր, մարդ ասածո
Խանդամուրյան Հ. — Մանկության ընկերուհին
Խանզադյան Ս. — Մատյան եղելության
Խեչումյան Վ. — Գիրք լինելության, գիրք 1
Գուրտիկյան Ստ. — Անդալուզյան լեռներում

Հարությունյան Ս. — Կյանքը սկուտեղի վրա
Ղուկասյան Հ. — 13 պատմվածք
Մահարի Գ. — Այրվող այգեստաններ
Մահարի Գ. — Մանկություն, Պատանեկություն, Երիտասարդության սեմին (ռուսերեն), Մոսկվա
Նոր-Այր — Անապատի առավոտը
Շուշանյան Վ. — Երկիր հիշատակաց
Սեան Գ. — Բյուրեղյա գղյակ (ռուսերեն), Մոսկվա

Դրամատուրգիա

Տեր-Գրիգորյան Գր.— Պիեսներ (ռուսերեն), Մոսկվա

Ժողովածուներ

Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (ռուսերեն)
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5

Դասականներ

Ագայան Ա. — Երկեր
Բաշինջաղյան Գ. — Երկեր
Թլկատինցի — Գյուղին կյանքը
Թումանյան Հովհ. — Փարվանա
Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի (չեխերեն), Պրագա
Մամուրյան Մ. — Երկեր
Մուրացան — Գևորգ Մարզպետունի (ռուսերեն)
Շիրին — Տաղարան
Չոպանյան Ա. — Երկեր
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Բաֆֆի — Հարեմ և ուրիշ պատմվածքներ (ռուսերեն)

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 1
Ամալյան Հ. — Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները
Բաղյան Ս. — Աբովյանի գրական ժառանգությունը
Գաբրիելյան Ռ. — Մ. Նալբանդյանը և բնագիտությունը
Գալստյան Գ. — Դիցաբանական անունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարան
Գյուլբուդաղյան Ս. — Շիրվանզադեի լեզվական մշակույթը
Լևո — Երկերի ժողովածու, հ. 1
Կարապետյան Լ. — Թլկատինցի
Հախվերդյան Լ. — Թումանյանի աշխարհը
Հայ սովետական գրականության պատմություն (ռուսերեն), Մոսկվա
Ճինդոյան Կ. — Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից (19-րդ դար)

Մամիկոնյան Հ. — Մարդը և նրա կերպարը գրականության մեջ
Մխիթարյան Ա. — Վրաստանի սովետահայ գրականություն
Մկրտչյան Վ. — Ռաֆայել Պատկանյան
Մնացականյան Ա. — Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը
Մուրադյան Պ. — Հայ-վրացական գրական առնչությունները 18-րդ դարում (ռուսերեն)
Շահսուվարյան Ա. — Ռուսթավելին և Արևելքը
Շեքսպիրական (հայկական շեքսպիրյան տարեգիրք), հ. 1
Ոսկերչյան Ա. — Յու. Լերմոնտով
Ջուհարյան Թ. — Հայ գրականության մեթոդիկա
Սարգսյան Գ. — Հակոբ Հակոբյանի կյանքը
Սարգսյան Գ. — Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին
Սարգսյան Խ. — Տասնամյակների միջով
Սարինյան Ս. — Հայկական ռոմանտիզմ
Վարդանի Լ. — Ռաֆայել Պատկանյանի մանկավարժական գործունեությունը

Թարգմանություն

Աբաշիձե Ի. — Պաղեստին։ Ռուսթավելու հետքերով
Բուլղարական պատմվածքներ
Գրոսման Վ. — Բարին ընդ ձեզ
Դյումա Ա. — Կոմս Մոնտե Քրիստո, հ. 1, 2
Դրայզեր Թ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Լերմոնտով Յու. — Երկերի ժողովածու, հ. 2, 3
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 4, 5, 6
Խրատք Նուշիրուանի
Կերամ Կ. — Ասոլածներ, դամբարաններ, գիտնականներ
Հագգարդ Հ. — Դեղեցկուհի Մարգարետը
Հաղար ու մի սիրու ժողովածու աշխարհի բանաստեղծների, հ. 2
Հեմինգուեյ Է. — Տոն, որը միշտ քեզ հետ է
Ճապոնական ծաղկեփունջ
Մորավիա Ա. — Արհամարհանք
Շեքսպիր Վ. — Համլետ
Չեխոսլովակյան պատմվածքներ
Չեխ և սլովակ բանաստեղծներ
Պրևո Ա. — Մանոն Լեսկո
Ռիբակով Ա. — Կրոշի արկածները
Ռոլան Ռ. — Ժան Քրիստոֆ, հ. 1
Ռուսթավելի Շ. — Ընձեռնավոր
Սմիրնով Ս. — Բրեստի ամրոցը
Տվեն Մ. — Հեքլբերի Ֆիննի արկածները
Ուսպիտ Ա. — Ջամշելու գյուղի տղաները
Օլիվյե Ժ. — Վիկինգների արշավանքը

1967

Հունվարի 13-ին

«Գրական թերթում» (№ 3), Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակի առթիվ, տպագրվում են մի շարք անտիպ բանաստեղծություններ (տե՛ս նաև «Գրական թերթ» № 20)։

Հունվարի 21-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Մկրտիչ Արմենը ծննդյան 60-ամյակի առթիվ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվար

Հայաստանի սովետական գրողների միության բանաստեղծների մասնաճյուղը Էդ. Թոփչյանի, Գ. Էմինի, Ն. Չարյանի և ուրիշների մասնակցությամբ քննարկում է այն խնդիրները, որոնք Հայաստանի գրողների V համագումարը դրեց գրողների միության ստեղծագործական բոլոր մասնաճյուղերի առջև։

Սկսում է լույս տեսնել «Գարուն» գրական-գեղարվեստական, հասարակական, քաղաքական ամսագիրը։ Առաջին համարը բացվում է Պ. Սևակի բանաստեղծություններով։

Փետրվարի 10-ին

Վախճանվեց թարգմանիչ Վահե Միքայելյանը (Թերլեմեզյան, ծնվ. 1900 թ.)։

Փետրվարի 21-ին

ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի է ունենում ակադեմիկոս Արտաշես Կարինյանի ծննդյան 80-ամյակին նվիրված մեծարման երեկո։ Երեկոն բաց է անում Վ. Համբարձումյանը։ Ա. Կարինյանի կյանքի ու գործունեության մասին զեկուցում է Ե. Աղայանը։

Նշվում է գրող, ժողովրդական արտիստ Միքայել Սանվելյանի ծննդյան 90-ամյակը։ Այդ առթիվ Արտաշատի Ա. Խաչատրյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի է ունենում երեկո։ Զեկուցում է արվեստագետ Ս. Սարգսյանը։ Հուշեր են պատմում Ս. Տարոնցին, դերասան Օ. Բունիաթյանը։

Փետրվար

ՀՍԳ միության արձակագիրների մասնաճյուղում քննարկվում է Ա. Այվազյանի «Մեր տան հին իրերը» և «Կովարարներ» պատմվածքները։ Ելույթ

են ունենում Ա. Քալանթարյանը, Ռ. Հովսեփյանը, Մ. Մնացականյանը, Հ. Մելքոնյանը և ուրիշներ։

Սոֆիայում բուլղարերեն լույս է տեսնում Վ. Անանյանի «Հովազածորի գերիները» վիպակը (թարգմանիչ՝ Մ. Դրակովա)։

Մարտի 7-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Կոստան Զարյանի մեծարման երեկոն։ Երեկոն բաց է անում Գ. Էմինը, զեկուցում է Լ. Ներսիսյանը։ Ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը և Ստ. Ալաջաջյանը։

Մարտի 17-ին

Սղիշև Զարենցի ծննդյան 70-ամյակի անցկացման կապակցությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ստեղծում է հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ն. Հարությունյան (նախագահ), Ի. Աբաշիձե, Ստ. Ալաջաջյան, Ս. Առաքելյան, Հ. Բաղդասարյան, Գ. Բորյան, Ս. Գասպարյան, Վ. Դավթյան, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Գ. Էմին, Էդ. Թոփչյան, Վ. Լիդին, Ռ. Խաչատրյան, Ա. Խաչիկյան, Ս. Կապուտիկյան, Ջ. Կիրակոսյան, Ստ. Կուրտիկյան, Վ. Համբարձումյան, Հ. Հասանով, Գ. Հասրաթյան, Վ. Հասրաթյան, Խ. Հովակիմյան, Հր. Հովհաննիսյան, Գ. Վարիքջանյան, Լ. Վարիքջանյան, Գ. Մահարի, Մ. Մարգարյան, Հ. Մարտիրոսյան, Է. Միրզոյան, Վ. Նալբանդյան, Մ. Ներսիսյան, Վ. Նորենց, Մ. Շաթիրյան, Հ. Ոսկանյան, Պ. Պապյան, Հ. Պողոսյան, Ս. Պողոսյան, Ս. Պետրոսյան, Ռ. Մամեդ, Հ. Սահյան, Գ. Սարյան, Մ. Սարյան, Պ. Սևակ, Շ. Սիմոնյան, Վ. Սիրցև, Յա. Սմելյակով, Լ. Ստեփանյան, Ա. Սուրկով, Ս. Վարդանյան, Ն. Տիխոնով։

«Գրական թերթ», № 12

Մարտ

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Շուշանիկ Կուրղինյանի ծննդյան 90-ամյակին։ Երեկոն բաց է անում Հռ. Պողոսյանը, զեկուցում է Մ. Մկրտչյանը։ Ելույթ են ունենում Ջ. Միրզաբեկյանը և բանաստեղծի դուստր Ա. Ասլանյանը։

Ապրիլի սկզբին

Երևանում անց է կացվում մանկական գրքի շաբաթ։

Շաբաթի եզրափակիչ նիստը տեղի է ունենում Գ. Սունդուկյանի անվան թատրոնում։ Նիստը ներածական խոսքով բաց է անում Է. Թերլեմեզյանը, ապա ելույթ են ունենում Ստ. Ալաջաջյանը, Վ. Անանյանը, Գ. Էմինը և Ա. Դարբինը։

Ապրիլի 21-ին

«Գրական թերթում» (№ 17) տպագրվում է Էդ. Թոփչյանի «Միքայել Նալբանդյանի նորահայտ վիպակը» հոդվածը և Մ. Նալբանդյանի «Մինին խոսք, մյուսին՝ հարսն» վիպակի սկիզբը։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակ է շնորհվում բանաստեղծ Միխայիլ Սվետլովին՝ «Վերջին տարիների բանաստեղծություններ» գրքի համար։

Ապրիլի 27-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սամվել Գրիգորյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Ապրիլ

Սկսում է լույս տեսնել «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ) քառամսյա հանդեսը։

Հանդեսի առաջին համարում էդ. Աղայանը հրապարակում է Հր. Աճառյանի «Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ» հոդվածը, իսկ Ա. Շարուրյանը՝ նոր նյութեր Պ. Դուրյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ։

Մոսկվայում տեղի են ունենում երիտասարդական պոեզիայի համամիութենական օրեր։ Հայաստանից մասնակցում են Ռ. Դավոյանը և Ա. Սահակյանը։

«Վիտերատուրնայա Արմենիա» ամսագրի ապրիլյան համարում հրապարակվում է ԱՊՆ-ի թղթակից Ա. Մելիք-Սիմոնյանի «Եթովպիայի հայկական գաղութը» հոդվածը։

Մայիսի 5—6-ը

Տեղի է ունենում Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ պլենումը՝ նվիրված սովետահայ մանկական գրականության զարգացման խնդիրներին։ Բացման խոսք է ասում էդ. Թոփչյանը։ Մանկական գրականության արդի վիճակի և նրա հեռանկարների մասին զեկուցում է «Պիոներ» ամսագրի խմբագիր Ս. Հարությունյանը։ Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցում են Մ. Կորյունը, Ա. Ղուկասյանը, Ս. Կապուտիկյանը, Ան. Սահինյանը, Ռ. Արամյանը, Վ. Տալյանը, Խ. Գյուլնազարյանը, Ա. Դորոխովը, Ն. Զարյանը, Կ. Սիմոնյանը և ուրիշներ։

Մայիսի 12-ին

Վախճանվեց բանաստեղծ, թարգմանիչ Համբարձում Մազմանյանը (ծնվ. 1892 թ.)։

Մայիսի 17-ին

Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի քննարկումը։ Վեպի մասին զեկուցում է Գ. Անանյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ռ. Արամյանը, էդ. Ջրբաշյանը, Հր. Թամրազյանը, Մ. Մկրյանը, Աբաս Խաչակյանը, Հ. Դարբինյանը, Ա. Սոլոխյանը։ Զեկուցման և ելույթների սեղմ շարադրանքը հրապարակվում է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 2)։

Մայիսի 20-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ՍՍՀՄ գրողների միությունը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Մայիսի 22-ին

Մոսկվայում, Կրեմլի մեծ պալատում, իր աշխատանքն է սկսում ՍՍՀՄ գրողների IV համագումարը։

Համագումարի օրակարգը.

1. «Սովետական գրականությունը կոմունիստական հասարակարգի կառուցման գործում». ներածական խոսք Կ. Ա. Ֆեդինի։ Զեկուցողներ՝ Գ. Ա. Մարկով (արձակի մասին), Մ. Դուդին (պոեզիայի մասին), Ա. Սալինսկի (դրամատուրգիայի մասին), Լ. Ն. Նովիչենկո (գրականագիտության և քննադատության մասին), Ս. Միխալկով (մանկապատանեկան գրականության մասին), Կ. Վ. Վորոնկով (միության կազմակերպական-ստեղծագործական գործունեության մասին)։

2. ՍՍՀՄ գրողների միության կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը (զեկուցող՝ Գ. Գուլիա)։

3. Զեկուցում ՍՍՀՄ գրողների միության կանոնադրության փոփոխությունների մասին (զեկուցող՝ Պ. Բրովկա)։

4. Ղեկավար օրգանների ընտրություններ։

Հայաստանի գրողների անունից խոսք է ունենում Էդ. Թոփչյանը (տե՛ս «Գրական թերթ», № 24)։

ՍՍՀՄ գրողների IV համագումարին հայ գրողներից մասնակցում են 21 պատգամավոր (Աղավնի, Արմեն Մ., Բորյան Գ., Դավթյան Վ., Զարյան Ն., Զորյան Ստ., Էմին Գ., Թոփչյան Էդ., Խանզադյան Ս., Կապուտիկյան Ս., Հովհաննիսյան Հր., Մահարի Գ., Նորենց Վ., Շիրազ Հ., Սարյան Գ., Սահինյան Ա., Սահյան Հ., Սիմոնով Կ., Սևակ Պ., Սևունց Գ., Տեր-Գրիգորյան Գր.)։

Կ. Ա. Ֆեդինի բացման խոսքից

«Հնուց ի վեր գիր ու գրականություն ունեցող ժողովուրդները գիրքը դիտնականների, հոգևորականության, արտոնյալ դասակարգերի ներփակ սեփականությունից դարձրին համաժողովրդական հարստություն։ Բոլոր սովետական հանրապետություններում, անկախ այն բանից, թե նրանց տպագիր խոսքի կուլտուրան հնո՞ւց է գալիս, թե՞ ստեղծվել է առաջին տպագիր այբբենարաններից հետո, անցած տասնամյակներում ստեղծվել են սովետական մտավորականության անհամար բանակներ և դրանց հետ ազգային գրականություններ։ Ամենուրեք ստեղծվում, ապրում և կյանքը կառուցելուն օգնում է գի՛րքը, գի՛րքը, գի՛րքը։

Ազգային լեզուն այն առավել զորեղ հաղորդակն է, որը մարդու գիտակցության վրա ներազդելու ուժով ընդունակ է բացահայտելու հեղափոխական շարժման իմաստը և մարդկանց արթնացնելու նոր աշխարհի կառուցմանը մասնակցելու համար։ Որքան էլ տարբեր լինեն գեղարվեստական խոսքի ազգային ավանդները գրականությունների մեջ՝ թող դրանց մի մասում գեղակշռի երգը, մյուսում լեգենդը, ստեղծագործությունների միավորիչ ուժը միշտ էլ մնում է դրանց սոցիալիստական ներշնչանքը։

Այդ հակիրճ դատողությունները այնքան շատ չեն ծավալված, որպեսզի, հետևություններ անելով, դրանք արդեն համարենք սովետական գրականության գծեր, որոնք ստեղծվել են նրա պատմության ընթացքում։ Սակայն իրավացի կլինի խոսել այդպիսի գծերի մասին։

Սովետական մտավորականության բախտը, արդի սոցիալիստական շինարարության մեջ նրա դերը, կոմունիզմի կառուցման խնդիրներին և այդ նպատակով չափազանց բարդ գիտական ու նյութական բազա ստեղծելու խնդիրներին նվիրվածությունը՝ այս ամենը նախատեսել էր Լենինը, որը դրեց ընդհանուր գրագիտության և սոցիալիզմի մտավորականության ձևավորման սկիզբը։

Սովետական գրականությունը այդ պրոցեսի օրգանական մասն է, քանի որ նրա գլխավոր հերոսն էլ ժամանակակից մարդու հոգևոր կյանքի նոր կերտվածքին է պատկանում։

Իրականությունը արվեստագետի գիտակցության այն հիմքն է, որը երևակայության շարժիչի հենակետն է։ Ստեղծագործության բովանդակությունը մեն-մենակ ընդունակ է նորացնելու ձևերի ամբողջ բազմազանությունը, գեղարվեստական գրականության ժանրերի ամբողջ բազմազանությունը»։

«Գրական թերթ», № 22

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության համագումարի կողմից ընտրված նոր վարչության պլենումը։

ՍՍՀՄ գրողների միության վարչության առաջին քարտուղար է ընտրվում Կ. Ա. Ֆեդինը։

Մայիս

Ֆրանսիայի Նիցց քաղաքում վախճանվեց բանաստեղծ, հասարակական գործիչ Վահան Մալեզյանը (ծնվ. 1871 թ.)։

Հունիսի 16-ին

Նշվում է Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակը։

Հունիսի 23-ին

Նշվում է Նար-Դոսի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 26) տպագրվում են Կ. Դանիելյանի «Ներքին բնական աշխարհի գրողը», Պ. Հովվյանի «Նար-Դոս» հոդվածները և ասույթներ գրողի մասին։ Նար-Դոսի կյանքին և գործունեությանը անդրադառնում է նաև «Սովետական Հայաստան» օրաթերթը (№ 211) և հանրապետական մամուլի մյուս օրգանները։

Հունիսի 24-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության պլենումը՝ նվիրված ՍՍՀՄ գրողների IV համագումարի արդյունքներին։ Զեկուցումով հանդես է գալիս Էդ. Թոփչյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Հալությունյանը, Ստ. Կուրտիկյանը, Շ. Թորոսյանը, Ս. Խանդադյանը, Ռ. Արամյանը և ուրիշներ։ Պլենումի արդյունքները ամփոփում է Հր. Հովհաննիսյանը։

Հուլիսի 2-ին

ՍՍՀՄ գրողների միության քարտուղարությունը որոշում է ստեղծել Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակի նախապատրաստման և անցկացման հանձնաժողով հետևյալ կազմով. Ա. Ա. Սուրկով (նախագահ), Ի. Վ. Աբաշիձե, Պ. Գ. Անտոկոլսկի, Մ. Պ. Բաժան, Մ. Ա. Դուդին, Ս. Վ. Եվգենով, Ն. Ե. Զարյան, Վ. Կ. Զվյագինցևա, Զուլֆիա, Ա. Գ. Թաժիբաև, Մ. Ա. Իբրահիմով, Ն. Վ. Լեսյուչևսկի, Վ. Դ. Լիդին, Ա. Պ. Լուպան, Դ. Ե. Լյաշկևիչ, Վ. Յա. Կիրպոտին, Ռ. Գ. Համզատով, Գ. Հ. Մանասյան (պատասխանատու քարտուղար), Էդ. Բ. Մեժելայտիս, Ս. Վ. Միխալկով, Մ. Ա. Մելքումյան, Մ. Ս. Շահինյան, Ա. Բ. Զակովսկի, Վ. Օ. Պերցով, Կ. Մ. Սիմոնով, Պ. Ռ. Սևակ, Հ. Ն. Սալախյան, Յա. Վ. Սմելյակով, Յու. Յու. Սմուլ, Ա. Վեյան, Ա. Ա. Վոզնեսենսկի, Վ. Դ. Ֆյոդորով։

«Սովետական Հայաստան», № 153

Եղիշե Չարենցի հիշատակը հավերժացնելու նպատակով, ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, ՀՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է Երևան քաղաքում կանգնեցնել նրա արձանը։

Հուլիսի 7-ին

Նշվում է գրականագետ-քննադատ Հարություն Սուրխաթյանի ծննդյան 85-ամյակը։

Հուլիսի 6—18-ը

Լեհաստանում անց են կացվում հայկական մշակույթի օրեր։ Գրողներից մասնակցում է Գ. Էմինը։

Հուլիսի 22-ին

Մոսկվայում գործող գրքի միջազգային ցուցահանդեսում տեղի է ունենում Հայաստանի օրվա հանդիսավոր բացումը։ Ողջույնի խոսք է ասում ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի նախագահ Ն. Միխայլովը։ Ելույթ են ունենում ՀՍՍՀ մամուլի կոմիտեի նախագահ Հ. Ուլիմազյանը և գրող Մ. Շաթիրյանը։ Տպավորությունների գրքում արվում են բազմաթիվ գրառումներ։ Ահա դրանցից մի քանիսը.

Միրզո Թուրսուն-Զադե. «Փառք եղբայրական հայ ժողովրդին, որը աշխարհին տվել է համաշխարհային գլուխ-գործոցներ, և մենք՝ սովետական տաջիկներս, մեծ հիացմունք ու շնորհակալություն ենք հայտնում նրան»։

Էմանուիլ Սեդեդֆա (ուսանող Նիգերիայից). «Խորապես ցնցված եմ արվեստին ու կուլտուրային նվիրված գրքերից, որոնք ես տեսա հայկական էքսպոզիցիայում»։

Լևոն Շահումյան (պրոֆեսոր). «Հայկական տպագրական խոսքը, որն այնքան լավ է ներկայացված ցուցահանդեսում, սքանչելիորեն պահպանել է մինչև մեր սովետական օրերը իր փառապանծ հնադարյան տրադիցիաները, գեղարվեստական հմայքը, գիտական խորությունը։ Մեծ շնորհակալություն ցուցահանդեսը կազմակերպողներին»։

Հովհաննես Բաղրամյան (Սովետական Միության մարշալ). «Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն է իր հարուստ կուլտուրա-

յով և հիանալի տրադիցիաներով։ Նա կարող է հպարտանալ իր կուլտուրայի հուշարձաններով։ Գրքի ցուցահանդեսը հայ ժողովրդի պատմական ծառայությունների պերճախոս ապացույցն է, այն մեծ ուժով արտացոլում է մեր ժողովրդի կուլտուրայի հարստությունը։ Ուզում եմ ամենանկեղծ երախտագիտություն հայտնել այդ ցուցահանդեսի կազմակերպիչներին»։

«Սովետական Հայաստան», № 171

Հուլիս

Բուլգարիայում հրատարակվում է Ավետիք Իսահակյանի ընտիր բանաստեղծությունների ժողովածուն (թարգմանիչ՝ Դ. Բոյչարով)։

Օգոստոսի 31-ին

Վախճանվեց սովետական ականավոր գրող, ՍՍՀՄ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր Իլյա Էրենբուրգը։

Օգոստոս

«Ջնամյա» ամսագրի օգոստոսյան համարը էջեր է տրամադրում հայ բանաստեղծներին (Հ. Շիրազ. Ս. Կապուտիկյան, Վ. Դավթյան, Հ. Սահյան, Ա. Գրաշի, Գ. Էմին, Ա. Ալիքյան, Հր. Հովհաննիսյան, Ռ. Դավոյան, Ա. Սահակյան և Բ. Կարապետյան)։

Օգոստոս—Սեպտեմբեր

«Գարուն» ամսագրի օգոստոս—սեպտեմբերյան միացյալ համարում Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակի առթիվ տպագրվում են անտիպ բանաստեղծություններ, նոր հուշեր և Չարենցի նորահայտ մի ելույթը, որը բանաստեղծը արտասանել է Բաքվում, 1936 թ. հունիսի 4-ին, Ադրբեջանական ՍՍՀ կազմավորման 15-ամյակի տոնակատարությունների ժամանակ։

Սեպտեմբերի 1-ին

Նշվում է գրականագետ Սողոմոն Սողոմոնյանի ծննդյան 60-ամյակը։

«Գրական թերթում» (№ 36) տպագրվում է Ա. Բակունցի «Մաթվեյ Մաթվեևիչը» ֆելիետոնը, որն առաջին անգամ 1915 թվականին տպագրվել էր Շուշի քաղաքի «Փայլակ» թերթում և այնուհետև մնացել անհայտ։

Սեպտեմբերի 8-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական համերգավոր նիստ՝ նվիրված Նար-Դոսի ծննդյան 100-ամյակին։ Նիստը բաց է անում էդ. Թոփչյանը։ «Նար-Դոսի ստեղծագործությունը» թեմայով զեկուցում է Ս. Սարինյանը։

Սեպտեմբերի 6—10-ը

Երևանում տեղի է ունենում ՀՍՍՀ և ՈՒՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտների կազմակերպած գիտական նստաշրջանը՝ նվիրված հայ-ուկրաինական կապերին։ Կարդացվում են 40-ից ավելի զեկուցումներ և հաղորդումներ։

Սեպտեմբերի 20—21-ին

Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակի առթիվ տեղի է ունենում ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հոբելյանական նստաշրջանը։ Բացման խոսք է ասում Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Պ. Սևակը («Չարենցը և արդիականությունը»), Ս. Ազարաբյանը («Չարենցի վաղ շրջանի քնարը»), Ս. Արզումանյանը (Հոկտեմբերյան հեղափոխությունը և Չարենցի ստեղծագործությունը»), Ա. Զաքարյանը («Երկիր Նաիրի» վեպը»), Հր. Գրիգորյանը («Չարենցը և Մայակովսկին»), Ա. Չարենցը («Չարենցի անտիպ ժառանգությունը»)։

Սեպտեմբերի 25-ին

Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակին։ Նիստը ներածական խոսքով բաց է անում Ն. Հարությունյանը։ Չարենցի կյանքի և գործի մասին զեկուցում է Պ. Սևակը։ Ելույթ են ունենում ՍՍՀՄ գրողների միության քարտուղար Ա. Սուրկովը, ՌՍՖՍՀ գրողների միության քարտուղար Վ. Ֆյոդորովը, Վ. Կոչևսկին (Ուկրաինա), Մ. Խվեդորովիչը (Բելոռուսիա), Կ. Կալաձին (Վրաստան), Ջ. Մամեդովը (Ադրբեջան), Ի. Մացյավիչյուսը (Լիտվա), Պ. Բոցուն (Մոլդավիա), Շ. Բեյշենալիևը (Կիրգիզիա), Բ. Քերբաբաևը (Թուրքմենիա), «Սովետսկի պիսատել» հրատարակչության դիրեկտոր Ն. Լեսյուչևսկին, Հ. Շիրազը, Խ. Ռադևսկին (Բուլղարիա), Լ. Կոշուտը (ԳԴՀ), Ա. Մենձեժեցկին (ԼԵՀասատան), Ն. Ստոյանը (Ռումինիա), Ի. Տաուֆերը (Չեխոսլովակիա), Հ. Հուպերտը (Ավստրիա), Լ. Ռաբելը (Ֆրանսիա), Գ. Ադդարյանը (Լիբանան), Հր. Հովհաննիսյանը։

Տեղի է ունենում Եղիշե Չարենցի արձանի հիմնաքարի հանդիսավոր բացումը։ Այդ առթիվ տեղի է ունենում միտինգ. ելույթ են ունենում Էդ. Թոփչյանը, Ա. Սուրկով և ուրիշներ։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի դահլիճում Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակի առթիվ տեղի է ունենում հեղափոխական պոեզիայի հարցերին նվիրված հոբելյանական գիտաժողով։ Բացման խոսք է ասում Ս. Կապուտիկյանը։ Ընդարձակ ելույթով հանդես է գալիս ՍՍՀՄ գրողների միության քարտուղար Ա. Սուրկովը։ Ելույթ են ունենում Վ. Օգնևը, Լ. Մկրտչյանը, Ա. Սաֆրոնովը, Վ. Կոչևսկին։ Հ. Սալախյանը առաջարկում է ամեն տարի անցկացնել «Չարենցյան» գիտական նստաշրջաններ։

Սեպտեմբերի 27-ին

Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում երեկույթ՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին։ Ելույթ են ունենում Կ. Զարյանը, Ս. Օստրովոյը, Ս. Հարությունյանը, Ե. Նիկոլաևսկայան, Ա. Սարոյանը, Հ. Շիրազը, Սարմենը, Ա. Սաֆրոնովը, Վ. Ֆյոդորովը, Վ. Լիֆշիցը, Վ. Կոչևսկին, Ա. Տարկովսկին։

Սեպտեմբեր

«Լիտերատուրնի Ադրբեջան» ռուսերեն ամսագրի սեպտեմբերյան համարը նվիրվում է Սովետական Հայաստանին։ Գրական բաժնում տպագրվում են

Ս. Այվազյանի, Ս. Հարությունյանի, Ս. Խանզադյանի, Հ. Ղուկասյանի, Մ. Շաթիրյանի, Հր. Մաթևոսյանի, Ռ. Արամյանի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Հռ. Պողոսյանի, Պ. Սևակի, Հր. Հովհաննիսյանի, Վ. Դավթյանի, Ա. Գրաշու, Գ. Էմինի, Գ. Բորյանի, Մ. Մարգարյանի, Ա. Դարբնու, Ռ. Դավոյանի պատմվածքներն ու բանաստեղծությունները։

Հոկտեմբերի 9-ին

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում հայ-վրացական կաբինետի հանդիսավոր բացումը։ Բացման առթիվ ելույթ են ունենում Երևանի համալսարանի պրոռեկտոր Կ. Խաչատրյանը, Թբիլիսիի համալսարանի Ռուսթավելու անվան կաբինետի ղեկավար Լ. Մենաբդեն, Գ. Սևակը։

Հոկտեմբերի 14-ին

Վախճանվեց արձակագիր, ակադեմիկոս Ստեփան Զորյանը (Առաքելյան, ծնվ. 1890 թ.)։ Այդ առթիվ էջեր են հատկացնում «Սովետական Հայաստան» օրաթերթը (№ 245, 246)։ «Գրական թերթը» (№ 43) և հանրապետական մամուլի մյուս օրգանները։

Հոկտեմբերի 21-ին

Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատում, տեղի է ունենում ՍՍՀՄ և ՌՍՖՍՀ ստեղծագործական միությունների և կազմակերպությունների վարչությունների միացյալ հոբելյանական պլենումը՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին։ Ներածական խոսք է ասում ՍՍՀՄ գրողների միության վարչության առաջին քարտուղար Կ. Ֆեդինը։ Ելույթ են ունենում Ս. Սոբոլևը, Ա. Կուլիջանովը, Տ. Խրենիկովը, Բ. Բուրկովը, Ե. Բալաշովան, Գ. Օլովը և ուրիշներ։

Հոկտեմբերի 27-ին

Նշվում է Ավետիք Իսահակյանի մահվան 10-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 44) տպագրում է Ավ. Իսահակյանի անտիպ գրառումներից որոշ հատվածներ։

Հոկտեմբերի 28-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Պ. Սևակը, Վ. Թևեքելյանը, Էդ. Թոփչյանը պարգևատրվում են Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, իսկ Հ. Ղուկասյանը՝ «Աշխատանքային արիության համար» մեդալով։

Հոկտեմբերի 30-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի շենքում տեղի է ունենում Հայաստանի ստեղծագործական միությունների համատեղ պլենումը՝ նվիրված Մեծ Հոկտեմբերի 50-ամյակին։ Ներածական խոսք է ասում Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Էդ. Միրզոյանը, Մհեր Աբեղյանը, Խ. Հովակիմյանը, Վ. Հարությունյանը, Ֆ. Դավլաթյանը, Հր. Ղափլանյանը, Հ. Բաղդասարյանը և ուրիշներ։

Նոյեմբերի 2-ին

Վախճանվեց արձակագիր Քրիստափոր Թափալչյանը (ծնվ. 1910 թ.)։

Նոյեմբերի 6-ին

Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի համատեղ հանդիսավոր նիստը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։ Հայ գրողների անունից ելույթ է ունենում Գեղամ Սարյանը։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակները շնորհվում են բանաստեղծական գիտությունների դոկտոր Բրակլի Անդրոնիկովին («Լերմոնտով։ Հետազոտություններ և հայտնաբերումներ» գրքի համար), Միրզա Քեմպիին («Ակնթարթների հավերժությունը» բանաստեղծական ժողովածուի համար), Յարոսլավ Սմելյակովին («Ռուսաստանի օրը» բանաստեղծական ժողովածուի համար)։

Նոյեմբերի 26-ին

Երևանում բացվում է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը։

Նոյեմբերի 29-ին

Երևանում, Միծևնակաբերդի բարձունքում, տեղի է ունենում 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի բացումը։

Դեկտեմբերի 5-ին

Հայկական ՍՍՀ պետական մրցանակի է արժանանում Պ. Սևակը՝ «Անլռելի զանգակատուն» պոեմի համար։

Դեկտեմբերի 21-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Մկրտիչ Մկրյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Դեկտեմբերի 22-ին

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դահլիճում տեղի է ունենում սփյուռքահայ բանաստեղծ և հասարակական գործիչ Վահե Վահյանի ծննդյան 60-ամյակին նվիրված երեկո։

Դեկտեմբերի 25-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով Վ. Զվյագինցևային և Ս. Շերվինսկուն սովետահայ գրականության պրոպագանդման գործին մատուցած ծառայությունների համար շնորհվում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Ավետ Ավետիսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում մեծարման երեկո։ Ելույթ է ունենում թատերագետ Գ. Զարեյանը։

Լեհերեն լույս է տեսնում «Սասնա ծռեր» էպոսի Դավթի ճյուղը (թարգմանիչ՝ Իգոր Սիկիրիցկի)։

Դեկտեմբերի 30-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով սովետական մշակույթին մատուցած ծառայությունների համար ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում Գուրգեն Առաքելյանին, Ազավնուն, Խաչիկ Դաշտենցին, Գարեգին Սևունցին, Պատրիկ Սելյանին, Սուրեն Սերոբյանին («Սովետական Հայաստան» թերթի աշխատակից) և Վենիամին Սիրցևին («Կոմունիստ» թերթի խմբագիր)։

Դեկտեմբեր

1967 թ. «Դրուժբա նարոդով» ամսագրի առաջին մրցանակին են արժանանում Հրանտ Մաթևոսյանը՝ պատմվածքաշարի և Գրիգորի Վիերուն՝ բանաստեղծությունների համար։ Երկրորդ մրցանակի արժանացածների թվում է Անահիտ Բալանդուրը՝ Հր. Մաթևոսյանի պատմվածքների թարգմանության համար։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Այվազյան Ա. — Հողի և խաղողի երգեր
Դաշտենց Ա. — Ֆայտոն Ալեքը
Դավոյան Ռ. — Սավերների միջով
Գուրյան Լ. — Ճամփորդ չեմ միայն
Թերզյան Ա. — Բանաստեղծություններ
Թումանյան Հեն. — Սիրտ հրաշքը
Զարենց Ե. — Ընտիր երկեր (ռուսերեն)
Զարենց Ե. — Ես իմ անուշ Հայաստանի... (13 լեզուներով)
Զարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 6
Զարենց Ե. — Ժողովածու
Սարմեն — Երկեր, հ. 2
Սահյան Հ. — Բանաստեղծություններ, հ. Ա

Արձակ

Ադալյան Ն. — Արագածի ձյունները
Ալազան Վ. — Հուշեր
Ալաջաջյան Ստ. — Եղեգները չխոնարհվեցին, գիրք Բ
Արմեն Մ. — Երկեր, հ. 2, 3
Արմեն Մ. — Ժիրայր Գլենց
Բեռ Գ. — Այրված վշտեր
Գրիգորյան Վ. — Փրկություն
Դարյան Զ. — Վերջին թռիչքը
Զորյան Ստ. — Առաջին օրեր

Զորյան Ստ. — Պապ թագավոր (ռուսերեն)
Զորյան Ստ. — Վարազդատ
Թորգոմյան Ս. — Անմոռաց օրեր
Խանզադյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 1, 2 (գիրք 1, 2)
Խաչատրյան Հ. — Տիգրան Մեծ
Մաթևոսյան Հր. — Օգոստոս
Մահարի Գ. — Երկերի ժողովածու, հ. 2
Մավյան Վ. — Հայու բեկորներ
Շաթիրյան Մ. — Ասք արմավենու մասին
Որբունի Զ. — Եվ եղև մարդ
Սարգսյան Մ. — Ճակատագրով դատապարտվածները
Սեզա — Մեղավորուհին
Սիրաս Հմ. — Արարատ
Սևան Գ. — Հայոց թաղը
Սևունց Գ. — Պետական գաղտնիք
Քալանթարյան Ա. — Պատմվածքներ
Քոչար Հ. — Երկերի ժողովածու, հ. 4

Դրամատուրգիա

Սարյան Գ. — Գրիգոր Դերենն

Ժողովածուներ

Բալլադներ Լենինի մասին
Բարեկամների աչքերով (ռուս սովետական գրողները Հայաստանի մասին, ռուսերեն)
Բրյուսով Վ. — Հայաստանի և հայ կուլտուրայի մասին
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 10
Հոկտեմբերյան քնարը Հոկտեմբերը հայ բանաստեղծների երկերում
Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում

Դասականներ

Դուրյան Պ. — Տաղեր
Մալխասյան Հ. — Երկեր
Մուրացան — Գևորգ Մարզպետունի (ռուսերեն)

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 2
Ասատրյան Ա. — Հարություն Սրվանձյան
Արզումանյան Ս. — Սովետահայ վեպը
Բաբայան Ա. — Չարենցը և հոկտեմբերը
Գրիգորյան Գ. — Հայ ժողովրդական բանահյուսություն
Դաշտենց Խ. — Ըղձյալ այգաբացի երգիչը
Զարյան Ռ. — Շեքսպիրը և հայերը
Էսթետիկայի հարցեր (հոդվածների ժողովածու)

Ինճիկյան Ա. — Մտերիմներ և մտորումներ (էջեր հայ գրականության պատմությունից)
Լեո — Երկերի ժողովածու, հ. 2
Խաչատրյան Ա. — Ժամանակակից գյուղը և վիպագրությունը
Հակոբյան Պ. — Խաչատուր Աբովյան (կյանքը, գործը, ժամանակը։ 1809—1836)
Հայրյան Գ. — Կյանք և գրականություն
Հարությունով Լ. — Չարենց. ստեղծագործության էվոլյուցիան (ռուսերեն)
Հոկտեմբերը և հայ գրականությունը (հոդվածների ժողովածու)
Հովհաննիսյան Հր. — Սոսիկն ու հեռուն (ակնարկներ, հոդվածներ, դիմանկարներ)
Ղանալանյան Հովհ. — Հայաստանը ռուս բանաստեղծների ստեղծագործության մեջ (ռուսերեն)
Շահսուվարյան Ա. — Շահնամեն և հայկական աղբյուրները
Շարաբխանյան Պ. — Դրաբարի ուղեցույց
Շեքսպիրական (հայկական շեքսպիրյան տարեգիրք), հ. 2
Շտիկյան Ս. — Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը
Զոպանյան Ա. — Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը
Ջրբաշյան Էդ. — Աշխարհայացք և վարպետություն
Ջրբաշյան Էդ. — Գրականության տեսություն
Սալախյան Հ. — Ժամանակիդ շունչը դարձիր...
Սողոմոնյան Ս. — Ժամանակակից հայ բանաստեղծներ, հ. 2

Թարգմանություն

Ամադու Ժ. — Կարմիր ծիլեր
Բաբել Ի. — Հեծյալ բանակը
Գյոթե Վ. — Ֆաուստ, մաս 2
Դրայզեր Թ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Դունաևսկի Ա. — Գայի հետքերով
Լաքսնես Հ. — Ինքնուրույն մարդիկ
Լևսկով Ն. — Ընտիր երկեր
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 7
Կիրակոսյան Ս. — Արմատ և էություն
Կոշևսկի Վ. — Հասկեր և աստղեր
Համզատով Ռ. — Դաղստանի աստղը
Հյուգո Վ. — Լուկրեցիա Բորջա
Պուշկին Ա. — Արձակ էջեր
Ռայմոն Բ. — Մուտք դեպի առորյան
Ռոլան Ռ. — Ժան Քրիստոֆ, հ. 2
Սենտ-Էքսյուպերի Ա. դը — Փոքրիկ իշխանը
Սյուսակու Է. — Ծով և թույն
Վինոգրադով Ա. — Պագանինիի դատապարտումը
Ֆիրդուսի — Ռոստամ և Սոհրաբ
Ֆրանս Ա. — Սիլվեստր Բոննարի ոճիրը
Ֆուրմանով Դ. — Չապաև

1968

Հունվարի 5-ին

«Գրական թերթը» (№ 2), տեղեկացնում է, որ ռումինացի հայագետ Յոն Պոպեսկոն Ռումինիայի Գեորգիա քաղաքում հայտնաբերել է հայատառ ռումիներեն ձեռագիր։

Տեղի է ունենում սովետահայ գրողների և Երևանի կայազորի զինծառայողների հանդիպում։ «Գրականությունը և սովետական բանակը» թեմայով զեկուցում է Մ. Շաթիրյանը։ Ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը, Հմ. Սիրասը, Գ. Էմինը։

Նշվում է Սիամանթոյի ծննդյան 80-ամյակը։

Հունվարի 9-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության ընդլայնված նիստը։ Կիրովականի գրական միավորման աշխատանքների մասին զեկուցում է միավորման նախագահ Նոր-Այրը։ Զեկուցման շուրջ ելույթ են ունենում Ս. Հարությունյանը, Վ. Նորենցը, Ա. Դարբինին և էդ. Թոփչյանը։ Որոշվում է առաջիկայում կայանալիք երիտասարդ գրողների խորհրդակցությունը անցկացնել Կիրովականում։

Հունվարի 22-ին

Հայաստանի գրողների տանը տեղի է ունենում ակադեմիկոս Ա. Շահինյանի հանդիպումը գրողների հետ։ Գրողներից ելույթ է ունենում Ս. Կապուտիկյանը։

Հունվարի 26-ին

Նշվում է Մերուժան Թորոսյանի ծննդյան 70-ամյակը։

Նշվում է Գարեգին Սրվանձտյանի մահվան 75-ամյակը։

Հունվարի 30-ին

ՀՍԳ միության կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովում քննարկվում են Հայաստանի ռադիոյի գրական-դրամատիկական և արտասահմանյան հաղորդումների գլխավոր խմբագիրներ Գ. Աբաջյանի և Շ. Ծիրատուրյանի զեկուցումները։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են էդ. Թոփչյանը, Հմ. Սիրասը, Վ. Նորենցը և ուրիշներ։

Հունվարի 31-ին

Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում հնչում է պետական մրցանակի արժանացած Պ. Սևակի «Անլռելի զանգակատունը» պոեմի գրական երաժշտական կոմպոզիցիան (հեղինակ՝ Թ. Դեմուրյան)։

Հունվար

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշում են 1968 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին տոնել Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակը։ Ստեղծվում է հոբելյանական հանձնաժողով։

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ անցկացված ժամանակակից և պատմա-հեղափոխական թեմատիկայով դրամատիկական, երաժշտական լավագույն բեմադրությունների հանրապետական ստուգատեսում առաջին կարգի դիպլոմ և դրամական մրցանակ է շնորհվում Ա. Պապայանի «Աշխարհն, այո շուտ է եկել» ներկայացման բեմադրող-ռեժիսոր Վ. Աճեմյանին։

Փետրվարի 6-ին

Գրողների տանը տեղի է ունենում բանաստեղծների մասնաճյուղի պարապմունքը։ «Եվրոպական ժամանակակից բանաստեղծությունը» թեմայով զեկուցում է Կ. Զարյանը։ Որոշվում է ամեն տարվա հոկտեմբերի 12-ը՝ հայ գրերի գյուտի օրը, դարձնել բանաստեղծության ավանդական տոն։

Փետրվարի 9-ին

Նշվում է Զապել Եսայանի ծննդյան 90-ամյակը։

Փետրվարի 10-ին

Վախճանվեց թարգմանիչ, գրականագետ Լևոն Մարությանը (ծնվ. 1904 թ.)։

Փետրվարի 22-ին

Գրողների տանը տեղի է ունենում հանրապետության շրջաններից Երևան ժամանած մի խումբ ուսուցիչների հանդիպում-զրույց գրողների հետ։ Ելույթ են ունենում Պ. Սևակը, Գ. Սարյանը, Վ. Նորենցը, Ա. Սահինյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Խեչումյանը և մի քանի ուսուցիչներ։

Փետրվարի 23-ին

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն որոշում է 1969 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանդիսավորությամբ նշել հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ ստեղծվում է հանրապետական հոբելյանական կառավարական հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Ե. Քոչինյան (հանձնաժողովի նախագահ), Լ. Ա. Ստեփանյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ), Էդ. Ս. Թոփչյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ), Գ. Գ. Աբաշիձե, Մ. Մ. Աբեղյան, Վ. Մ. Աճեմյան, Ստ. Ս. Ալաջաջյան, Ս. Վ. Առաքելյան, Ս. Տ. Ասլանյան, Խ. Հ. Բարսեղյան, Գ. Մ. Բորյան, Բ. Ա. Գյոզալյան, Օ. Տ. Գոնչար, Ֆ. Վ. Դովլաթյան, Ն. Ե. Զարյան, Հ. Վ. Թարջումանյան, Ա. Հ. Թումանյան, Ա. Մ. Ինճիկյան, Մ. Ա. Իբրահիմով, Ս. Ն. Խանդադյան, Ռ. Հ. Խաչատրյան, Ա. Վ. Խաչիկյան, Ջ. Ս. Կիրակոսյան, Կ. Կուլիև, Ստ. Մ. Կուրտիկյան, Գ. Ա. Հայրյան, Վ. Ե. Համազասպյան, Վ. Հ. Համբարձումյան, Ս. Գ. Հարությունյան, Գ. Հ. Հասրաթյան, Լ. Հ. Հախվերդյան,

Ռ. Գ. Համզաթով, Ե. Հ. Հովակիմյան, Ա. Գ. Հովհաննիսյան, Հր. Կ. Հովհաննիսյան, Է. Ս. Հովհաննիսյան, Գ. Բ. Ղարիբջանյան, Լ. Պ. Ղարիբջանյան, Հր. Ն. Ղափլանյան, Բ. Գ. Մարտիրոսյան, Ս. Ա. Մելքումյան, Մ. Մ. Մկրյան, Էդ. Մ. Միրզոյան, Վ. Ս. Նալբանդյան, Մ. Գ. Ներսիսյան, Վ. Տ. Նորենց, Մ. Ա. Շաթիրյան, Էդ. Մ. Ջրբաշյան, Գ. Բ. Սարյան, Մ. Ա. Սարյան, Պ. Ռ. Սևակ, Կ. Մ. Սիմոնով, Շ. Ս. Սիմոնյան, Վ. Ա. Սիրցև, Ս. Հ. Վարդանյան, Կ. Բ. Ուդումյանը, Հ. Մ. Ուլմազյան, Ս. Ա. Քոչարյան։

«Գրական թերթ», № 5

Փետրվարի 25-ին

Վիեննայում վախճանվեց հայ դասական բանաստեղծության նշանավոր դեմքերից մեկը՝ Համազասպ Ոսկյանը (ծնվ. 1895 թ.)։

Սովետական բանակի կազմավորման 50-ամյակի կապակցությամբ գրողներ Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Հովհ. Ղուկասյանը, Յու. Մարյանը Լենինական քաղաքում հանդիպումներ են ունենում սովետական բանակի մարտիկների ու սպաների հետ։

Մոսկվայում վախճանվեց բանաստեղծ Խորեն Ռադիոն (Աճեմյան, ծնվ. 1907 թ.)։

Մարտի 11-ին

Վախճանվեց արձակագիր Գաբրիել Արևյանը (Ալավերդյան, ծնվ. 1914 թ.)։

Մարտ

Շվեդական Ակադեմիան գրականության ասպարեզում 1967 թվականի Նոբելյան մրցանակը շնորհում է լատինա-ամերիկյան ականավոր վիպասան Միգել Աստուրիասին։

Վախճանվեց Աշխեն Թումանյանը՝ Հովհաննես Թումանյանի դուստրը (ծնվ. 1891 թ.)։

Մարտի 22-ին

Նշվում է Մովսես Արազու ծննդյան 90-ամյակը։

«Գրական թերթը» (№ 12) տպագրում է հաղորդում, ըստ որի Հորդանանում, Երուսաղեմի մոտ գտնվել է մ. թ. ա. VI դարի ձեռագիր, որի տառերը հայերեն են։ Այդ հաղորդագրությունը տպագրվել է Բուլղարիայի գրողների և նկարիչների միության «Կարտիննայա գալերեյա» գրական-գեղարվեստական հանդեսի 1967 թվականի 9-րդ համարում։

Ահա այն.

«Վերջերս Հորդանանում, Երուսաղեմից հյուսիս-արևելք, հոլանդացի հնաբանները հայտնագործել են ձեռագիր, որոնք թվագրված են 6-րդ դար, մ. թ. ա.։ Դրանք գրված են մի լեզվով, որը մինչև այժմ ոչ ոք չի կարողանում վերծանել։ Մասնագետները գտնում են, որ դա հայկական ինչ-որ անհայտ

բարբառ է։ Ձեռագրերի տառերը հայերեն են։ Նման նշանագրեր հանդիպում են նաև այդ վայրերում հայտնաբերված խեցեգործական առարկաների վրա։ Գտնված ձեռագրերը այդ բնագավառում մեծագույն հայտնագործություններից են համարվում, սկսած այն ժամանակներից, երբ հայտնաբերվեցին Մեսոպոտամիայի ծովի այսպես կոչված մագաղաթագալարները»։

Մարտի 26-ին

ՀՍԳ միության նախագահության նիստում լսվում է գրողների միության Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար Շ. Թորոսյանի զեկուցումը՝ բաժանմունքի աշխատանքների մասին։ Զեկուցման շուրջ ելույթ են ունենում Պ. Սևակը, Էդ. Թոփչյանը, Գ. Սարյանը, Գ. Էմինը և Վ. Նորենցը։

Մարտի 28-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Ա. Մ. Գորկու ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բաց է անում Էդ. Թոփչյանը։ Զեկուցումով հանդես է գալիս Ն. Զարյանը։ Գորկու կյանքից հուշեր է պատմում Տ. Հախումյանը։

Կրեմլի համագումարների պալատում տեղի է ունենում Ա. Մ. Գորկու ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։ Բացման խոսք է ասում Կ. Ֆեդինը։ Գորկու մասին խոսք են ասում Լեոնիդ Լեոնովը, Լեոնիդ Սոբոլևը և ուրիշներ։

Ապրիլի 5-ին

Նշվում է Մարիետա Շահինյանի ծննդյան 80-ամյակը։ Այդ առթիվ ՀՍԳ միության վարչության խոսքում ասված է.

«Սիրելի Մարիետա Սերգեևնա.

Մենք առանձնապես հպարտ ենք այն գիտակցությամբ, որ Դուք, լինելով Ձեր ժողովրդի արժանավոր զավակը, մշտապես հանդես եք գալիս որպես համոզված ինտերնացիոնալիստ։ Ձեր ողջ ստեղծագործությունը ներթափանցված է ժողովուրդների բարեկամության մեծ գաղափարով։

Դուք ծնվել եք Հայրենիքից հեռու, դաստիարակվել ռուսական միջավայրում և դարձել ռուս գրող։ Բայց երբեք չեք կտրել Ձեր կապերը մայր Հայրենիքի հետ։ Հայկական հողը և հարազատ ժողովուրդը Ձեզ համար հաճախ են դարձել ստեղծագործական ոգեշնչման աղբյուր։

Ձեր ակնարկները մեծ դեր են խաղացել ոչ միայն նոր Հայաստանի առաջընթացը պրոպագանդելու համար, այլև գործնականորեն օգնել են նրա տնտեսության ամրապնդմանը։ Մեծ է Ձեր ավանդը Հայաստանի կուլտուրական շինարարության գործում։ Ձեր «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գիրքը, որը թարգմանվել է շատ լեզուներով, մի ինքնատիպ հանրագիտարան է և հրաշալի ձևով պրոպագանդում է Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները։

Թանկագի՛ն Մարիետա Սերգեևնա։

Դուք Ձեր ութսունամյակը թեակոխում եք բազմաժանր ստեղծագործության մի այնպիսի անգնահատելի գանձով, որ մի քանի գրողներ հազիվ կա-

ղող էին ստեղծել. Ձեր ամբողջ կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը բարձր քաղաքացիության, անձնվիրության, խոր գաղափարայնության և կոմունիստական իդեալին նվիրվածության, արժանի, ուսանելի օրինակ է։

Մենք բարձր ենք գնահատում Ձեր խիզախությունը կյանքում։ Մենք օրինականորեն հպարտ ենք Ձեզանով։ Մենք անսահմանորեն սիրում ենք Ձեզ։

Մենք Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք և ստեղծագործական բեղուն գործունեություն՝ ի փառս Սովետական Հայրենիքի, ի փառս սովետական մշակույթի, ի փառս Սովետական Հայաստանի»։

Ապրիլի 6-ին

Վախճանվեց դրամատուրգ Լևոն Սաղաթելյանը (ծնվ. 1884 թ.)։

Ապրիլի 12-ին

Նշվում է նշանավոր ազգագրագետ, բանահավաք ու մանկավարժ Սահակ Մովսիսյանի (Բենոն) ծննդյան 100-ամյակը։

Ապրիլի 16-ին

Երևանի համալսարանում բացվում է «Գորկին և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը» թեմայով համամիութենական կոնֆերանս։ Ներածական խոսք է ասում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Զեկուցում են Վ. Շչեգրինան (Մոսկվա)՝ «Մ. Գորկին և արդիականությունը» թեմայով, Գ. Լոմիձեն (Մոսկվա), Կ. Զելինսկին (Մոսկվա), Մ. Մկրյանը («Գեղեցիկի իդեալը Գորկու ստեղծագործության մեջ»)։

Ապրիլի 18—19-ը

Երևանում, պետական համալսարանի նախաձեռնությամբ և Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ու ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի մասնակցությամբ տեղի է ունենում գիտական կոնֆերանս՝ նվիրված Մաքսիմ Գորկու ծննդյան 100-ամյակին։ Կոնֆերանսին մասնակցում են 80 հյուրեր Սովետական Միությունից և արտասահմանից։ Ընթերցվում են 73 զեկուցումներ։

Ապրիլ

Հայաստանի գրողների միության գրամատուրգների մասնաճյուղի բյուրոն քննարկում է Սաղաթել Հարությունյանի «Միայն մարդն է ուղիղ քայլում» դրաման։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Գ. Բեսը, Աղավնին, Էդ. Թոփչյանը, Գ. Էմինը, Ա. Դարբինին, Վ. Հարությունյանը, Վ. Նորենցը, Ռ. Արամյանը, Ս. Սարգսյանը, Հովհ. Ղուկասյանը, Ա. Շահինյանը, Գր. Տեր-Գրիգորյանը։

Մայիսի սկզբներին

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարության ընդլայնված նիստում քննարկվում են գրողների միության խնդիրները՝ կապված ՍՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումի որոշումների հետ։

Մայիսի 15-ին

Բուդապեշտի Մադաչի անվան թատրոնում տեղի է ունենում հայկական մշակույթի տասնօրյակի հանդիսավոր բացումը։

Մայիսի 17-ին

Նշվում է Գուրգեն Ջանիբեկյանի ծննդյան 70-ամյակը։ «Գրական թերթը» տպագրում է ՀՍԳ միության վարչության ողջույնը։

Մայիսի 25-ին

Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակի առթիվ Հոկտեմբերյանի շրջանում բացվում է ազգային հերոսամարտը հավերժացնող գրոսայդի-հուշարձան։ Տեղի է ունենում միտինգ, ուր գրողներից ելույթ է ունենում Ե. Չարյանը։

Մայիսի 29—31-ը

Բաքվում գումարվում է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի քննադատների ու գրականագետների խորհրդակցություն՝ նվիրված ժամանակակից գրական քննադատության հարցերին։ Սովետական գրականագիտության ու քննադատության արդի վիճակի ու խնդիրների մասին զեկուցում է ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Վ. Ե. Օգերովը։ Ժամանակակից գրական քննադատության զարգացման խնդիրների մասին զեկուցում են Ս. Աբգուլաևը (Ադրբեջան), Վրաստանի գրողների միության վարչության քարտուղար Բ. Ժվենտին («Գրական քննադատության մեջ գաղափարական և գեղագիտական չափանիշների միասնության մասին»), Ս. Սարինյանը («Գրաքննադատության մեթոդոլոգիայի հարցերից»)։ Ելույթ են ունենում Ա. Շարիֆը, Լ. Յակիմենկոն, Յու. Սուրովցևը, Ս. Դարոնյանը, Ստ. Բոփչյանը, Ա. Գրիգորյանը և ուրիշներ։

Մայիս

ՀՍԳ միությունում տեղի է ունենում Ստ. Ալաջաջյանի «Եղեղները չխոնարհվեցին» վեպի քննարկումը։ Զեկուցում է Ս. Արզումանյանը։ Մարքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Հարությունյանը, Մ. Շաթիրյանը, Վ. Նորենցը և ուրիշներ։ Երեկոն ամփոփում է Պ. Սևակը։

Հունիսի 5-ին

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, գրող Վահրամ Փափազյանը (ծնվ. 1888)։

Հունիսի 14-ին

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է ընդունում սովետահայ անվանի արձակագիր Ստեփան Զորյանի հիշատակը հավերժացնելու մասին (1970—75 թթ. լույս ընծայել նրա երկերի լիակատար ժողովածուն, Ստ. Զորյանի անունով կոչել դպրոց և փողոց Երևանում ու Կիրովականում)։

Հունիսի 22-ին

Վաղարշապատում սկսվում է հայկական արվեստի և գրականության տասնօրյակը։ Տասնօրյակի գրական մասի հանդիսավոր բացումը տեղի է ունե-

նում Մ. Աուեզովի անվան դրամատիկական թատրոնում։ Այդ առթիվ Ղազախստանում տպագրվում են «Լուսնի երկիր» վերնագրով բանաստեղծությունների և «Սևանի ղեկչու

Վագիֆի ծննդյան 250-ամյակի առթիվ ստեղծվում է հանրապետական հոբելյանական հանձնաժողով։

Սեպտեմբերի 13-ին

«Գրական թերթը» (№ 37) Ն. Բարաթաշվիլու ծննդյան 150-ամյակի առթիվ էջ է նվիրում նրա ստեղծագործությանը։

Սեպտեմբերի 10—18-ը

Ուլյանովսկում անցկացվում են հայկական մշակույթի օրեր։ Ուլյանովսկի կենտրոնական գրախանութում տեղի է ունենում Վ. Պետրոսյանի, Ս. Խանզադյանի, Լ. Մկրտչյանի և ուրիշների հանդիպումը ընթերցողների հետ։

Սեպտեմբերի 17-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վիկտոր Համբարձումյանին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ շնորհվում է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Սեպտեմբերի 20-ին

Նշվում է խաժակ Գյուլնազարյանի ծննդյան 50-ամյակը։

Սեպտեմբերի 27-ին

Նշվում է Վիլյամ Սարոյանի ծննդյան 60-ամյակը։

Սեպտեմբեր

«Սովետական գրականություն» ամսագիրը (№ 10) ամբողջությամբ նվիրվում է Երևանի 2750-ամյակին։

Սկսում է լույս տեսնել ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտեի «Գրքերի աշխարհ» ամսաթերթը։

Հոկտեմբերի 1-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանում զաղափարական արվեստի և գրականության շաբաթի հանդիսավոր բացումը։ Հայ գրողների անունից ելույթ է ունենում Ս. Կապուտիկյանը։

Հոկտեմբերի 3-ին

Վախճանվեց ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, գրող Արման Կոթիկյանը (ծնվ. 1896 թ.)։

Հոկտեմբերի 4-ին

«Գրական թերթում» (№ 40) տպագրվում է Խ. Սարգսյանի «Մարդու որոնումը» հոդվածը՝ նվիրված Լևոն Շանթի ստեղծագործությանը։

Հոկտեմբերի 11-ին

ՀՍՍՀ ԳԱ պատմության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտները անց են կացնում համատեղ գիտական նստաշրջան՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Զեկուցումներ են կարդում Բ. Առաքելյանը, Մ. Իսրաելյանը, Գ. Սարգսյանը, Վ. Դիլոյանը և Կ. Կոզմոյանը։

Հոկտեմբերի 14-ին

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Ստեփան Շահումյանի ծննդյան 90-ամյակին։

Հոկտեմբերի 15-ին

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Նստաշրջանը ներածական խոսքով բաց է անում համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանը։ Զեկուցումներ են կարդում Ռ. Հակոբյանը, Ա. Աբրահամյանը և Վ. Պարսամյանը։

Հայաստանի գրողների միությունում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված ուզբեկ ականավոր բանաստեղծ Ալիշեր Նավոյի ծննդյան 525-ամյակին։ Երեկոն ներածական խոսքով բաց է անում Պ. Սևակը։ Զեկուցում է Էդ. Աղայանը։

Հոկտեմբերի 16-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Ժողովը ներածական խոսքով բաց է անում Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներ են կարդում Բ. Պիոտրովսկին, Ս. Երեմյանը և Ա. Սիմոնյանը։

Արվեստի աշխատողների տանը կայանում է հուշ-երեկո՝ նվիրված ամերիկահայ նշանավոր նկարիչ Արշայլ Գորկուն (Ոստանիկ Ադոյան)։

Հոկտեմբերի 17-ին

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Նստաշրջանը բաց է անում Լ. Խաչիկյանը։ Զեկուցումներ են կարդում Ա. Մնացականյանը, Մ. Դարբինյանը, Վ. Գրիգորյանը, Ն. Թահմիզյանը և Ա. Մաթևոսյանը։

Հոկտեմբերի 19-ին

Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Սիսյուռքահայ գրողների անունից ելույթ է ունենում Կարապետ Սիսալը։

Հոկտեմբերի 23-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում պոեզիայի երեկո՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյա հոբելյանին։ Երեկոն բաց է անում Պ. Սևակը։ Բանաստեղծություններ են կարդում Գ. Էմինը, Հ. Շիրազը, Ս. Կապուտիկյանը, Վ. Կոչևակին, Ա. Գրաշին, Ա. Սարոյանը, Վ. Կարենցը և ուրիշներ։

Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարությունը Հայաստանի գրողների միությանը հեռագիր է ուղարկում հետևյալ բովանդակությամբ.

«Ամբողջ սրտով ողջունում ենք Ձեզ՝ ուրախալի իրադարձության՝ Ձեր սքանչելի մայրաքաղաք Երևանի 2750-ամյակի և Հայաստանը երկրորդ անգամ Լենինի շքանշանով պարգևատրելու առթիվ։

Ձեզ հետ միասին հպարտանում ենք եղբայրական Հայաստանի աշխատանքային մեծ հաղթանակների համար։ Ցանկանում ենք Ձեզ ստեղծագործական նոր խիզախումներ՝ ի փառս մեր հայրենիքի բազմազգ մշակույթի։ Թող էլ ավելի ամրապնդվի մեր երկրի ժողովուրդների մեծ եղբայրությունը»։

Հոկտեմբերի 25-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանում հունգարական արվեստի և գրականության օրերի հանդիսավոր բացումը։

Հոկտեմբերի 30-ին

Վախճանվեց արձակագիր Անդրանիկ Հովսեփյանը (ծնվ. 1914 թ.)։

Նոյեմբերի 5-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում ռուս մեծ գրող Իվան Սերգեևիչ Տուրգենևի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։ Նիստը բացում է հոբելյանական հանձնաժողովի նախագահ Հմ. Սիրասը։ Ի. Ս. Տուրգենևի կյանքի և գործունեության մասին զեկուցում է Ռ. Հովհաննիսյանը։

Վախճանվեց արտիստ, բանաստեղծ Պահարեն (Հայկ Պետրոսյան, ծնվ. 1895 թ.)։

Նոյեմբերի 12-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում նշվում է Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակը։

«Գարուն» ամսագրի խմբագրատանը տեղի է ունենում «Գրական թերթի» և «Գարուն» ամսագրի համատեղ խորհրդակցությունը՝ նվիրված երիտասարդական գրականության հարցերին։ Ելույթ են ունենում Սա. Կուրտիկյանը, Ա. Սահինյանը, Մ. Սարգսյանը, Գ. Արշակյանը, Խ. Գյուլնազարյանը, Մ. Շաթիրյանը և Վ. Պետրոսյանը։

Նոյեմբերի 15-ին

Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունենում Ի. Ս. Տուրգենևի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։ Նստաշրջանը բաց է անում Մ. Մկրյանը։ «Տուրգենևի դերը ռուս գրականության մեջ» թեմայով զեկուցում է Ռ. Հովհաննիսյանը։

Նոյեմբերի 21—22-ին

Կիրովականում անց է կացվում երիտասարդ և սկսնակ գրողների հանրապետական խորհրդակցություն։ Բացման խոսք է ասում Ստ. Ալաջաջյանը։ «Երիտասարդական ժամանակակից պոեզիան» թեմայով զեկուցում է Վ. Մնացականյանը, «Երիտասարդական արձակը» թեմայով՝ Ս. Արզումանյանը։ Ելույթ են ունենում Ն. Զարյանը, Ստ. Կուրտիկյանը, Ս. Հարությունյանը, Ան. Սահինյանը, Վ. Պետրոսյանը և ուրիշներ։

Նոյեմբերի 23-ին

Տեղի է ունենում Կիրովականի գրական նորաստեղծ բաժանմունքի հիմնադիր ժողովը։ Բաժանմունքի պատասխանատու քարտուղար է ընտրվում գրող Նոր-Այրը։

Նոյեմբերի 25-ին

Վախճանվեց բանաստեղծ Աղասի Վարդանյանը (ծնվ. 1891 թ.)։

Նոյեմբերի 27-ին

Գրողների տան դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ադրբեջանցի բանաստեղծ Վագիֆի ծննդյան 250-ամյակին։ Երեկոն բաց է անում հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ստ. Ալաջաջյանը, Վագիֆի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Ս. Արզումանյանը, ելույթ է ունենում Ն. Զարյանը։

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ստեղծվում է հոբելյանի նախապատրաստման և անցկացման համամիութենական կոմիտե։

Կոմիտեի կազմը.

Ա. Ա. Սուրկով (նախագահ), Ս. Ա. Բարուզդին (նախագահի տեղակալ), Ռ. Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Գ. Գ. Աբաշիձե, Տ. Ա. Աբդումոմունով, Պ. Պ. Բոցու, Ա. Տ. Գոնչար, Դ. Ա. Գրանին, Ն. Ե. Զարյան, Վ. Կ. Զվյագինցևա, Մ. Տ. Թուրսուն-Զադե, Էդ. Ս. Թոփչյան, Մ. Ա. Իբրահիմով, Ն. Վ. Լեսյուչևսկի, Վ. Գ. Լիդին, Ա. Ի. Խաչատրյան, Ս. Բ. Կապուտիկյան, Վ. Ա. Կոսոլապով, Մ. Պ. Կոտով, Հր. Կ. Հովհաննիսյան, Գ. Մ. Մարկով, Ա. Ն. Մեսյացև, Ա. Ի. Միկոյան, Ն. Ս. Միխայլով, Ս. Ա. Մելքումյան, Էդ. Բ. Մեժելայտիս, Ս. Վ. Միխալկով, Ա. Ի. Յանսոնս, Ք. Ն. Յաշին, Տ. Ն. Նիկոլաևա, Ա. Շ. Շարիպով, Մ. Ս. Շահինյան, Ա. Պ. Շապոշնիկովա, Վ. Ֆ. Շաուրո, Ա. Բ. Զակովսկի, Հ. Ս. Սահյան, Ս. Վ. Սարտակով, Մ. Ս. Սարյան, Պ. Ռ. Սեակ, Ն. Տ. Սիզով, Կ. Մ. Սիմոնով, Լ. Ս. Սոբոլև, Յու. Ի. Սմուսլ, Բ. Լ. Սուչկով, Կ. Կ. Վորոնկով, Մ. Տանկ (Ե. Ի. Սկուրկո), Լ. Կ. Տատյանիչևա, Ե. Մ. Տյա-

ժելնիկով, Բ. Մ. Քերբաբաև, Ա. Ե. Քոչինյան, Վ. Մ. Օզերով, Ե. Ա. Ֆուրցևա, Գ. Հ. Մանասյան (կոմիտեի քարտուղար)։

«Գրական թերթ», № 48

Նշվում է Հակոբ Պարոնյանի ծննդյան 125-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 42) տպագրվում են Հ. Պարոնյանի անտիպ էջերից մի քանիսը։

Դեկտեմբերի սկզբին

Նշվում է Վահան Միրաքյանի ծննդյան 100-ամյակը։

Դեկտեմբերի 3-ին

Երևանում տեղի է ունենում Ա. Ս. Գրիբոյեդովի արձանի հիմնադրման արարողությունը։

Դեկտեմբերի 5-ին

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը որոշում է 1969 թ. նոյեմբերին հանդիսավորությամբ նշել հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ ստեղծվում է հանրապետական կառավարական հոբելյանական հանձնաժողով։

Դեկտեմբերի 6-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում լեհական երաժշտության տասնօրյակի բացումը։

Դեկտեմբերի 13-ին

Նշվում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ կապակցությամբ «Գրական թերթում» (№ 50) տպագրվում է Պ. Սեակի «Հայ նոր քնարերգության հիմնադիրն ու առաջին դասականը» հոդվածը։

Դեկտեմբերի 17-ին

Ստ. Կուրտիկյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Դրվեսի աշխատողների տանը տեղի է ունենում Ստ. Կուրտիկյանի մեծարման երեկո։ Երեկոն բաց է անում Գ. Բորյանը, զեկուցում է Շ. Տատուրյանը։

Դեկտեմբերի 27-ին

ՍՍՀՄ պետական մրցանակները շնորհվում են արձակագիրներ Զինովի Այթմատովին («Մնաս բարով, Գյուլսարի» վիպակի համար), Ս. Զալիգինին («Աղային կիրճ» վեպի համար) և «Մոր սիրար» վիպակի ու կինոսցենարի հեղինակ Զ. Վոսկրեսենսկայային։

Դեկտեմբեր

Լոնդոնում և Լոս Անջելոսում միաժամանակ անգլերեն լույս է տեսնում հայկական հեքիաթների հատընտիրը՝ «Անմահական խնձոր» վերնագրով (Թարգմանիչ՝ Լևոն Զավեն Սյուրմելյան)։

Միլանում, իտալերեն, «Բոլոր ժամանակների մեծ բանաստեղծները» մատենաշարով լույս է տեսնում Ե. Չարենցի 28 բանաստեղծությունների ժողովածուն՝ Մարիո Վերդոնեի թարգմանությամբ։

Թեհրանում, պարսկերեն լույս է տեսնում Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի», պոեմը (թարգմանիչ՝ Ա. Խաչատրյան)։

Լատվիայում «Զեռքեր» խորագրով լույս է տեսնում Պ. Սևակի բանաստեղծությունների ժողովածուն (թարգմանիչներ՝ Խ. Զիդոնիս, Ռ. Լեյմերա)։

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 4) Ա. Ինճիկյանը հրապարակում է Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի նախնական տարբերակը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ադգարյան Գ. — Ապրիմ-մեռնիմ
Ալիքյան Ա. — Աչքեր
Ավագյան Ա. — Օրերի հայտնությունը
Գրաշի Ա. — Ո՞ւր ես, սիրո մոլորակ
Զարյան Ն. — Սպասում եմ քեզ
Էմին Գ. — Այս տարիքում
Կապուտիկյան Ս. — Իմ էջը
Հովհաննիսյան Հր. — Վայրի վարդ
Նորենց Վ. — Դարերի ավանդ
Շիրազ Հ. — Հուշարձան մայրիկիս
Չարենց Ե. — Երկերի ժողովածու, հ. 4
Սահյան Հ. — Քարափների երգը
Սարյան Գ. — Քրիզանթեմ

Արձակ

Այվազյան Ա. — Ընտանիքի հայրը
Անանյան Վ. — Երկեր, հ. 1, 2
Առաքելյան Գ. — Հանդիպում
Գյուլնազարյան Խ. — Մեռած աշխարհի ակամա բնակիչները
Զեյթունցյան Պ. — Կլոդ Ռոբերտ Իզերլի
Խաչատրյան Հ. — Էրեբունի
Խանզադյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 3 (գիրք 1, 2), 4
Խեչումյան Վ. — Գիրք մաքառման
Ղուկասյան Ա. — Կյանքի էջեր
Սեյրանյան Բ. — Ճամփաներ և ճակատագրեր
Քոչար Հր. — Երկերի ժողովածու, հ. 5

Դրամատուրգիա

Զարյան Ն. — Արա Գեղեցիկ
Պապյան Ա. — Աշխարհն, այո՛, շուռ է եկել

Ժողովածուներ

Գորկին և Հայաստանը (հոդվածներ, նամակներ, հիշողություններ)
Մաքսիմ Գորկի 1868—1968 (նյութերի ժողովածու)
Նյութեր արտասահմանյան գրականության նոր շրջանի պատմությունից, գիրք I
Սունի երկիր (հայ սովետական բանաստեղծության ժողովածու, զաղափարներն), Ալմա-Ատա
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 9
Սևանի գեղեցիկը (հայ գրողների պատմվածքների ժողովածու, զաղափարներն), Ալմա-Ատա

Դասականներ

Աղայան Ղ. — Հեքիաթներ
Թումանյան Հովհ. — Քառյակներ (ռուսերեն)
Իսահակյան Ավ. — Առակներ
Իսահակյան Ավ. — Լիրիկա
Հովհաննիսյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 4
Ճուղուրյան Հ. — Մոռացված աշխարհ
Միրաքյան Վ. — Լալվարի որսը
Նահապետ Քուչակ — Հայրեններ (ռուսերեն)
Նար-Դոս — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3
Ներսես Շնորհալի — Յաղագս երկնի և զարգուց նորա։ Հանելուկներ։ Ողբ Եդեսիոյ
Շանթ Լ. — Ընտիր երկեր
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 6
Պողոսյան Պ. — Հայի խնդիր

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 3
Ադալյան Ն. — Սովետահայ պատմվածքը
Առաքելյան Ա. — Հունական գրականության պատմություն
Գյուլնազարյան Խ. — Ամբարձում Խնկոյան
Դանիելյան Ս. — Արշակ Ազատյան
Թումանյան Ն. — Հովհաննես Թումանյանի մանկությունն ու պատանեկությունը (ռուսերեն)
Հովնան Գ. — Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան
Հովսեփյան Ն. — Պարույր Սևակ։ Կենսամատենագիտություն
Մահարի Գ. — Զարենց-Նամե
Մկրտչյան Ա. — Հինգերորդ դարի հայ գրքությունը

Մկրտչյան Վ. — Գրողը աշխարհի արձագանքն է
Մնացականյան Վ. — Ժամանակի հետ
Յուզբաշյան Բ. — Գորկին և գրականության մի քանի հարցեր
Ոսկերչյան Ա. — Քննադատություն և հրապարակախոսություն
Պարտիզունի Վ. — Վահան Տերյան
Սևան Գ. — Վազգեն Շուշանյան

Թարգմանություն

Ազնավուր Շ. — Սեր սրտի չափով
Այթմատով Չ. — Մնաս բարով, Գյուլսարի
Անգլիական հումոր
Անդրեև Կ. — Արկած որոնողները
Բարաթաշվիլի Ն. — Հատընտիր
Բլոկ Ա. — Լիրիկա
Բլոկ Ա. — Տասներկուսը
Բյոլլ Հ. — Մաղրածուի աչքերով
Գամսուն Պ. — Փետրավոր օձի գաղտնիքը: Տրիկուարի գանձը
Գորկի Մ. — Պատմվածքներ
Դյումա Ա. — Սև կակաչ
Դրայզեր Ռ. — Երկերի ժողովածու, հ. 5, 6
Իբսեն Հ. — Պիեսներ
Իմաստության քարավան (Միջին Ասիայի ժողովուրդների առածներ և ասացվածքներ)
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 8
Կուպրին Ա. — Պատմվածքներ
Համզատով Ռ. — Դաղստանի աստղը
Ղազախական պատմվածքներ
Ղազախ բանաստեղծներ
Մայակովսկի Վ. — Ստորջրյա հոսանք
Նավոի Ա. — Գազելներ
Շելլի Պ. —Ազատագրված Պրոմեթեոս
Ջոնսոն Պ. — Քրիստին
Ռոժդեստվենսկի Ռ. — Սիրտը ձեռքի մեջ
Սիմենոն Ժ. — «Մաժեստիկ» հյուրանոցի նկուղներում
Վոլինսկի Լ. — Անդրկովկասի գույները
Տոլստոյ Լ. — Կոզակներ: Հաջի Մուրադ
Տուրգենև Ի. — Արձակ բանաստեղծություններ

1969

Հունվարի 13-ին

Վախճանվեց արձակագիր Գարեգին Սեւունցը (Գրիգորյան, ծնվ. 1911 թ.)։

Հունվարի 21-ին

Նշվում է Ս. Կապուտիկյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո, որը բաց է անում Ռ. Զարյանը։ Բանաստեղծուհուն ողջույնի խոսք են հղում և՛ ՀՍԳ միության, և՛ ՍՍՀՄ գրողների միության վարչությունների քարտուղարություններն ու հայ գրականության խորհուրդը։

ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարության և հայ գրականության խորհրդի ողջույնից.

«Թանկագին Սիլվա Կապուտիկյան.

Ջերմորեն, սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր ծննդյան օրվա առթիվ։ Մենք ողջունում ենք խոշոր բանաստեղծին, որի ստեղծագործությունը իրավամբ արժանացել է ընթերցող լայն հասարակության ուշադրությանը։ Երեսուն տարի է, ինչ Դուք ստեղծագործում եք, և այդ ընթացքում որքա՜ն ներդրում ունեք մեր պոեզիայում, բազմադարյան հայ գրականության հիանալի ավանդները շարունակելու և զարգացնելու գործում։ Ընթերցողները և առաջին հերթին երիտասարդությունը, որ հատկապես սիրում է Ձեր պոեզիան, միշտ էլ ուրախությամբ է դիմավորել բանաստեղծությունների Ձեր նոր ժողովածուները...»։

Հունվար

Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում անցկացվում է հայ գրականության շաբաթ։ Մասնակցում են լիբանանահայ նշանավոր գրողներ ու գրականագետներ Վ. Վահյանը, Ս. Դարյանը, Գ. Ադդարյանը, Գ. Աճեմյանը և ուրիշներ։

Նշվում է արևմտահայ ականավոր նովելիստ Լևոն Բաշալյանի ծննդյան 100-ամյակը։

«Գարուն» ամսագրի հունվարյան համարում տպագրվում է ամսագրի խմբագիր Վ. Պետրոսյանի և արխիվային վարչության պետ, պատմաբան Ս. Հարությունյանի «Անդրանիկ զորավարը պատմական փաստերի վկայությամբ» հոդվածը։

Փետրվարի 7-ին

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի կոմիտեն և ՀՍԳ միությունը հայտարարում են մրցանակաբաշխություն՝ լենինյան թեմայով գրված լավագույն վիպակի, պոեմի, բանաստեղծության և պատմվածքի համար։

Փեբրվարի 21-ին

Նշվում է Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակը։

Փեբրվարի 28-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված Միսաք Մանուշյանի մահվան 25-ամյակին։

Նշվում է Գառնիկ Ստեփանյանի ծննդյան 60-ամյակը։

Նշվում է Տիգրան Հախումյանի ծննդյան 75-ամյակը։

Փեբրվար

Նշվում է Ի. Ս. Կռիլովի ծննդյան 200-ամյակը։ Այդ կապակցությամբ հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի է ունենում հոբելյանական երեկո։ Երեկոն բաց է անում Ա. Դարբինին, ղեկուցում է Ս. Դարոնյանը։

Մարտի 8-ին

Երևանում բացվում է դրամատիկական թատրոն։ Առաջինը բեմադրվում է Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը։

Մարտի 10—11-ը

Մոսկվայում գումարվում է ռազմա-հայրենասիրական գրականության հարցերին նվիրված խորհրդակցություն։

Մարտի 19-ին

Տեղի է ունենում մի խումբ հայ գրողների (Պ. Սևակ, Գ. Էմին, Հմ. Սիրաս, Ս. Կապուտիկյան, Մ. Շաթիրյան, Հ. Մկրտչյան և ուրիշներ) հանդիպումը ՀՍՍՀ ներքին գործերի մինիստրի հետ։

Մարտ

Սովետական գրականությունը արտասահմանին ներկայացնող Մոսկվայում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Ստեղծագործություններ և կարծիքներ» ամսագրի մարտյան համարը նվիրվում է սովետահայ գրականությանը։

Ապրիլի 3-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության 5-րդ պլենումը։ Էդ. Թոփչյանի բացման խոսքից հետո սովետահայ պոեզիայի արդի խնդիրների մասին զեկուցում է Գ. Էմինը։

Մաքերի փոխանակությանը մասնակցում են Պ. Սևակը։ Վ. Մնացականյանը, Ս. Աղարաբյանը, Հ. Շիրազը, Խ. Բարսեղյանը, Ա. Գրաշին, Կ. Դանիելյանը, Ռ. Արամյանը և ուրիշներ։ Նյութերը հրապարակված են «Գրական թերթի» №№ 14, 15, 16-ում։

Ապրիլի 11-ին

ՍՄԿԿ Կենտկոմը քննության է առնում «Սովետական մանկական գրականության հետագա զարգացման միջոցառումների մասին» հարցը։ Այդ հարցի

առթիվ ընդունված որոշման մեջ նշվում է, որ մանուկների համար ստեղծված է բարձր որակի գրականություն։ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում են 1970 թվականից մանկական գրականության առավելապես աչքի ընկնող ստեղծագործությունների համար սահմանել մեկ ՍՍՀՄ պետական մրցանակ և ի լրումն գոյություն ունեցող մրցանակների՝ մեկ լենինյան մրցանակ։

Ապրիլի 18-ին

Նշվում է Դանիել Վարուժանի ծննդյան 85-ամյակը։

Ապրիլի 19-ին

Վախճանվեց գրականագետ Հրաչյա Գրիգորյանը (ծնվ. 1907 թ.)։

Ապրիլ

ՍՍՀՄ գրողների միության հայ գրականության խորհուրդը Մոսկվայում քննարկում է «Գրական թերթի» վերջին տարիների աշխատանքները։ Քննարկումը ղեկավարում է հայ գրականության խորհրդի նախագահ Վ. Լիդինը։ Զեկուցումով հանդես է գալիս թերթի խմբագիր Մ. Շամիրյանը։

Մայիսի սկզբին

Թաթուլ Հուրյանին համահու շնորհվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի, ՍՍՀՄ գրողների միության և «Մոլոդայա գվարդիա» հրատարակչության սահմանած Ն. Օստրովսկու անվան մրցանակը։

Մայիսի 9-ին

Վախճանվեց դրամատուրգ, թարգմանիչ Արշավիր Ղարագյուլյանը (ծնվ. 1883 թ.)։

Մայիսի 15—17-ը

Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում անց է կացվում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված համամիութենական միջհամալսարանական գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։ Զեկուցում են Մ. Մկրյանը («Հայ ժողովրդի բանաստեղծը»), Տ. Հախումյանը («Հ. Թումանյանը ժողովուրդների բարեկամության երգիչ»), Գ. Սևակը («Թումանյանի լեզվի ժողովրդայնության հարցի շուրջը»), Հր. Թամրազյանը («Թումանյանը քննադատ»), Էդ. Ջրբաշյանը («Թումանյանը և ժողովրդայնության պրոբլեմը»), Օ. Կովալը և Վ. Կոպալիովը խոսում են Թումանյանի բանաստեղծությունների ուկրաիներեն թարգմանությունների, Ի. Շիկալաձեն և Ս. Խուցիշվիլին՝ Թումանյանի և վրաց գրականության մասին։ Հայ-ռուսական, հայ-ուզբեկական, հայ-ղազախական, հայ-բելոռուսական և հայ-բրդական գրական կապերի մասին են զեկուցում Ի. Հովհաննիսյանը (Երևան), Ի. Ինոզամովը (Տաշքենդ), Տ. Կակիշևը (Ալմա-Ատա), Կ. Խրոմչենկոն (Մինսկ), Ա. Շամիլովը (Երևան)։ Նյութ են ունենում նաև ուրիշները։ Կոնֆերանսի նյութերը 1969 թ. Երևանում հրատարակվում են

ռուսերեն «Հովհաննես Թումանյան. համամիութենական միջհամալսարանական գիտական կոնֆերանսի նյութեր» վերնագրով։

Մայիսի 23-ին

Նշվում է բանաստեղծուհի Հռիփսիմե Պողոսյանի ծննդյան 70-ամյակը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 29-ի հրամանագրով Հռ. Պողոսյանը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Մայիս

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության գեղարվեստական թարգմանության խորհրդի պլենումը, ուր քննարկվում են թարգմանիչների համամիութենական 3-րդ խորհրդակցության և սովետական գրականության թարգմանիչների միջազգային երկրորդ հանդիպման նախապատրաստման հարցերը։

Տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության թարգմանիչների մասնաճյուղի ընդլայնված նիստը։ Մասնաճյուղի նախագահ Ս. Վահունին հաղորդում է անում ՍՍՀՄ գրողների միության գեղարվեստական թարգմանության խորհրդի պլենումի աշխատանքների մասին։

Մայիսի 28-ին

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հրաչյա Քոչարի ծննդյան 60-ամյակին։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է Ս. Սողոմոնյանը։ Ելույթ են ունենում Ա. Հովհաննիսյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Ջնդին։

Մայիսի 30-ին

Նշվում է Մկրտիչ Խերանյանի ծննդյան 70-ամյակը։

Հունիսի 10-ին

Վախճանվեց գրող Վարդգես Թևեքելյանը (ծնվ. 1902 թ.)։

Հունիսի 18-ին

Նշվում է Ակսել Բակունցի ծննդյան 70-ամյակը։ Այդ առթիվ Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Բացման խոսք է ասում Ս. Խանդաղյանը, զեկուցում է Ս. Աղաբաբյանը։ Ելույթ են ունենում Մ. Հասրաթյանը, Վ. Նորենցը և ուրիշներ։

Հունիսի 21—29-ը

Մոլդավիայում անցկացվում են հայկական արվեստի և գրականության օրեր։ Գրողներից միջոցառումներին մասնակցում են Հր. Հովհաննիսյանը, Վ. Պետրոսյանը, Սարմենը և Ս. Հարությունյանը։

Հունիսի 23—27-ը

Երևանում անցկացվում է արաբագետների համամիութենական կոնֆերանս։ Կոնֆերանսին մասնակցում են Մոսկվայի, Լենինգրադի, Անդրկովկասի և Միջին Ասիայի հանրապետությունների գիտնականներ։

Հունիսի 30-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Նստաշրջանը բաց է անում ճարտարապետ Մ. Մազմանյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Լ. Հախվերդյանը («Թումանյանի գեղագիտության հարցերից»), Բ. Հովակիմյանը («Թումանյանը և հայ թատրոնը»), Մ. Ղազարյանը («Թումանյանը և հայ կերպարվեստը»), Ս. Հասմիկյանը («Թումանյանը հայ կինոարվեստում»), Լ. Տեր-Մինասյանը («Անուշի» երաժշտական մարմնավորումը»)։

Հուլիսի 11-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր, թատերագիր Նաիրի Զարյանը (Հայաստան Եղիազարյան, ծնվ. 1900 թ.)։

Հուլիսի 16-ին

Պալանգայում (Լիտվա) վախճանվեց բանաստեղծ և արձակագիր Գուրգեն Մահարին (Ահեմյան, ծնվ. 1903 թ.)։

Հուլիսի 18—24-ը

Մեկ շաբաթ Հայաստանում հյուրընկալվում է Սիրիայի Արաբական Հանրապետության մշակույթի գործիչների պատվիրակությունը։

Հուլիսի 28-ին

Վախճանվեց բանաստեղծ Լևոն Թորոսյանը (ծնվ. 1934 թ.)։

Հուլիս

Դոնի Ռոստովի Մյասնիկյան ավանի Սուրբ Խաչ եկեղեցու մոտ հիմնադրվում է Մ. Նալբանդյանի հուշարձան-թանգարանը։

«Գարուն» ամսագրի հուլիսյան համարում տպագրվում է «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազներգության մի նոր պատում (ասացող՝ Կակո բիձա, ծնունդով Մոկացի, Ղուկասավան գյուղի բնակիչ)։

Օգոստոս

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 4) Ն. Տերյանը հրատարակում է Վ. Տերյանի անտիպ նամակներից մի քանիսը։

«Հայաստան» հրատարակչությունը առանձին լույս է ընծայում Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների հատընտիրը՝ Նաում Գրիգորևի թարգմանությամբ։

Նշվում է Աղասի Վշտունու ծննդյան 75-ամյակը։

Նշվում է Ղևոնդ Կոմունու ծննդյան 60-ամյակը։

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միությանը կից Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի նախապատրաստման և անցկացման

հոբելյանական կոմիտեի նիստը՝ բանաստեղծ Ա. Սուրկովի նախագահությամբ։ Հոբելյանի նախապատրաստման և անցկացման աշխատանքների մասին ելույթ են ունենում Կ. Պողոսյանը, Մ. Շաթիրյանը, Ի. Նոնեշվիլին (Վրաստան), Վ. Կոչևսկին (Ուկրաինա), Դ. Գրանինը (Լենինգրադ), մամուլի պետական կոմիտեի ներկայացուցիչ Զլոբինը և ուրիշներ։ Նիստը ամփոփում է Ա. Սուրկովը։

Սեպտեմբերի 1-ին

Վախճանվեց գրականագետ Հակոբ Սալախյանը (ծնվ. 1922 թ.)։

Սեպտեմբերի 9-ին

Նշվում է ուկրաինական գրականության դասական Իվան Կոտլյարևսկու ծննդյան 200-ամյակը։

Սեպտեմբերի 11—12-ին

Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Նստաշրջանը բաց է անում ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներ են կարդում Ս. Աղաբաբյանը («Թումանյանը և արդիականությունը»), Ա. Ղանալանյանը («Ժողովրդի բանաստեղծը և ժողովրդական բանաբվեստը»), Գ. Ցիցիշվիլին (Թբիլիսի, «Թումանյանի հասարակական-գրական կապերը Վրաստանի հետ»), Խ. Սարգսյանը («Աշխարհը և մարդը Թումանյանի ստեղծագործություններում»), Լ. Կարապետյանը («Թումանյանը ժամանակակիցների հուշերում»), Թ. Ահմեդովը (Բաքու, «Թումանյանի ադրբեջաներեն թարգմանությունները»), Կ. Դանիելյանը («Թումանյանի արձակի առանձնահատկությունները»), Պ. Սևակը («Թումանյանի մեծությունը»), Բ. Արվելաձեն (Թբիլիսի, «Թումանյանի վրացերեն թարգմանությունները»), Ա. Ինճիկյանը («Թումանյանի դրամատուրգիական փորձերը»), Մ. Ավդալբեկյանը («Թումանյանը և հայ հին գրականությունը»), Էդ. Ջրբաշյանը («Թումանյանի ռեալիզմը»)։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի բացման խոսքից.

«Թումանյանը եկավ, ասես, ի մի բերելու հայ գրականության ստեղծագործական մեծ նվաճումները Խորենացուց, Նարեկացուց և Սայաթ-Նովայից մինչև Աբովյան ու Րաֆֆի...

...Թումանյանի ստեղծագործությունը հայ ժողովրդի հոգևոր աշխարհի հայելին է, նրա կուլտուրական մեծության ամենահոյակապ վկայականներից մեկը աշխարհի և մարդկության առջև։

Կարճ ժամանակամիջոցում Թումանյանը դարձավ ժողովրդի ամենահարգված դրողը։ Կարդալով Թումանյանին, ժողովուրդը ճանաչեց ինքն իրեն։ Եվ ժողովուրդը սիրեց նրան անսահման սիրով։

Թումանյանն իր հետ բերեց հայ բանաստեղծական խոսքի, ամբողջ գրականության ժողովրդայնության ու ռեալիզմի նոր չափանիշներ։ Նա շատ ավելի մոտեցրեց մեր արվեստը կյանքին, ժողովրդին, իրականության ամենա-

հասարակ երևույթների մեջ տեսավ պոեզիայի անսպառ աղբյուր։ Նրա պոեզիան արմատական մերժումն է արհեստականի ու անբնականի և հաղթանակը՝ իրական անկեղծ բանաստեղծության։ Ահա թե ինչու Թումանյանից հետո հայ գրականության ողջ զարգացումը ամուր կերպով կապված է եղել և միշտ կապված կմնա նրա ավանդների հետ։ Ժամանակը չի հնացնում, այլ նոր փայլ ու նշանակություն է տալիս նրանց։

Հաճին Թումանյանի հայ ժողովուրդն ունի մի բանաստեղծ, որի անունը, իրավամբ, դրվում է համաշխարհային գրականության մեծերի կողքին։

Թումանյանն իր կյանքով ու գործունեությամբ ներկայացնում է քաղաքացիական ոգու մեծության, ազնվության և անձնազոհության մի պայծառ օրինակ։ Նա իր հանճարը անբաժան կերպով նվիրեց հարազատ ժողովրդին՝ ոչ միայն գեղարվեստական երկերի մեջ, այլև անձնվեր աշխատանքով՝ բաղաքական-հասարակական, գրական-կուլտուրական առավել սուր, կենսական հարցերի լուծման համար։ Հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջանում՝ մեր դարի առաջին տասնամյակներին, երբ դրված էր նրա բուն ֆիզիկական գոյության հարցը, Թումանյանը տառապյալ այրվեց հայրենիքի ճակատագրով։ Նա հայկական կյանքի իսկական կենտրոնն էր, նրա տենդահեղինակավոր դեմքը, մեկը մեր ժողովրդի այն մեծ զավակներից, որոնք միշտ պատմական հեռանկարի մեջ տեսավ Հայաստանի ապագան։

«Լրաբեր հասարակական գիտությունների», № 9

Սեպտեմբերի 20-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի դահլիճում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության և Հայկական ՍՍՀ գրողների միության վարչությունների միացյալ պլենումը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Պլենումը բաց է անում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ս. Ա. Բարուզդինը։ Զեկուցումներ են կարդում ՍՍՀՄ գրողների միության Մոսկվայի կազմակերպության վարչության քարտուղար Ս. Ս. Նարովչատովը, Հայկական ՍՍՀ գրողների միության վարչության քարտուղար Հր. Հովհաննիսյանը։ Ելույթ են ունենում Գ. Աբաշիձե (Վրաստան), Օ. Սարիվելլին (Ադրբեջան), Յու. Օ. Զբանացկին (Ուկրաինա), Մ. Շահինյանը, Էդ. Մեժելայտիսը (Լիտվա), Ա. Զեբոտարուն (Մոլդավիա), Յանոշ Գերեն (Հունգարիա), Էդ. Զբրաշյանը, Ի. Շամյակինը (Բելոռուսիա), Ա. Մուխթարովը (Ուզբեկստան), Կ. Սվենինդը (Շվեդիա), սփյուռքահայ գրող Վ. Վահյանը, Կ. Կուլինը (Կաբարդինո-Բալկարական ԻՍՍՀ), Յ. Զագորսկին (Հարավսլավիա), Բուլղարիայի «Երևան» թերթի խմբագիր Բ. Թյուֆենքչյանը, Ս. Մուկանովը (Ղազախստան), Օ. Շեստինսկին (Լենինգրադ), Հ. Գրիֆինը (Կանադա)։ Պլենումը փակում է Ուկրաինայի գրողների միության առաջին քարտուղար Օ. Տ. Գոնչարը։

Ս. Ս. Նարովչատովի զեկուցումից

«...Թումանյանի անվան հետ առնչվող երևույթը որքան բարդ, նույնքան էլ հասարակ է իր սկզբնավորման պահին։ Այդ երևույթի արմատները տեսանելի կդառնան, եթե համաձայնենք այն մտքին, որ պոեզիայի մեջ տեղի է ունենում ժողովրդի ինքնագիտակցումը։ Հովհաննես Թումանյանի ստեղծագոր-

ծության մեջ Հայաստանի ժողովուրդը ճանաչեց, իմացավ և վերաճանաչեց ինքն իրեն։

...Թումանյանի պոեզիայի մոնումենտալիզմի խարիսխը այն դասական կենսազգացողությունն է, որ ունեցել են համաշխարհային էպոսի բոլոր կերտողները։ Այդ մոնումենտալիզմը աչքի է ընկնում աշխարհընկալման ամբողջականությամբ, ընդհանուրի և մասնավորի ներդաշնակությամբ, պրոբլեմատիկայի մասշտաբայնությամբ, համապարփակ ժողովրդայնությամբ։ Թումանյանի ինտելեկտուալ լայն հորիզոնը իր եզրերով հենված է հենց այդպիսի կենսազգացողության վրա։ Եվ ինչպես որ Հոմերոսի «Իլիականը» հելլենական աշխարհի գիտելիքների հավաքածուն էր, ինչպես որ Դանթեի «Աստվածային կատակերգությունը» իտալական ոգու աստվածաշունչն էր, ինչպես որ Պուշկինի «Եվգենի Օնեգինը» 19-րդ դարի ռուսաց կյանքի հանրագիտարանն էր, այնպես էլ Թումանյանի ստեղծագործությունը դարձավ քնարա-էպիկական հանրագիտարանը մեր ժամանակներում։

Դասական կենսազգացողությունը ամենևին էլ չի ենթադրում անդորրություն և հաշտություն։ Այդ անեզր ծովն ունի իր մակընթացությունները ու տեղատվությունները, սրընթաց հոսանքները, բուռն ջրապտույտները։ Նրա անծայրածիր լայնքերում մոլեգնում են այնպիսի փոթորիկներ, որ լճերի մեջ պարզապես անկարելի է տեղավորել։ Ինչ հաշտության մասին կարող է խոսք լինել Դանթեի «Դժոխքի» կամ Գյոթեի «Վալպուրգյան գիշերի» մեջ։ Ռոմանտիկական, ֆանտաստիկական, էքսպրեսիվ մոտիվները օրգանական ներդաշնակություն են կազմում ամբողջի հետ, կոնտրապունկտի՝ ձայնակարգության մեջ միանալով ընդհանուր սիմֆոնիային։ Եվ երբ մենք այսուհետև անդրադառնանք Թումանյանի այնպիսի պոեմների, ինչպիսիք են «Լոռեցի Սաքոն» կամ «Թմկաբերդի առումը», ուր այդ տարրերը տարբեր ձևով, բայց բավականաչափ ուժգնությամբ են ի հայտ գալիս, մենք կհիշենք բանաստեղծի տաղանդի սիմֆոնիկ ներդաշնակության մասին։

...Պայծառ, լայնահուն, հիասքանչ է Թումանյանի բանաստեղծական աշխարհը, և եթե նրա երկինքը պատվում է թուխպերով ու թվում է, թե խավարը սպառնում է կլանել այդ աշխարհը, նա սկսում է ներքուստ լուսավորվել ջինջ ու համաչափ ճաճանչումով։ Թումանյանի պոեզիայի պայծառ աշխարհը նրա ժողովրդի աշխարհն է, նրա ազգային բնավորության էությունը, նրա հույսերի վերջնական հաղթանակը։ Ազգի պատմական լավատեսությունն իր երանգները տարածել է Թումանյանի բովանդակ ստեղծագործության վրա, և թախծի ու վշտի թանձր ստվերները միայն առավել ցայտուն են դարձնում այդ դերակշիռ պայծառությունը։

Այդ տեսանկյունից նայեցեք Թումանյանի պոեզիային և նրա ամենաէրերական գործերում, ինչպես, ասենք, «Անուշ», «Թմկաբերդի առումը» պոեմներում դուք կտեսնեք ժողովրդական ոգու անմար շողարձակումը։

...Թումանյանի ստեղծագործությունը վաղուց է դուրս եկել ազգային սահմաններից և դարձել համամարդկային սեփականություն։ Դա լուսավոր ճակատագիրն է այն բանաստեղծների, որոնք, մնալով հայրենի հողի վրա, իրենց հանճարով ընդգրկում են ամբողջ հողագունդը։ Թումանյանը իրավամբ մտնում է 20-րդ դարի սկզբի մեծ հումանիստ գրողների կոհորտան, որը բացվում է Գորկու վիթխարի կերպարանքով և իր մեջ ընդգրկում Ռոմեն Ռոլանին

և Անատոլ Ֆրանսին, Թոմաս Մաննին և Բեռնարդ Շոուին, Ռաբինդրանաթ Տագորին և Թեոդոր Դրայզերին»։

«Գրական թերթ», № 39

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում ինտերնացիոնալ պոեզիայի մեծ երեկո՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն ներածական խոսքով բաց է անում Գ. Էմինը։ Բանաստեղծություններ են կարդում Ս. Կիրսանովը, Ս. Բարուզդինը, Ս. Նարովչատովը, Եվ. Եվտուշենկոն, Մ. Ռումյանցևան, Վ. Տորոպիգինը, Ի. Նոնեշվիլին, Մ. Ռահիմը, Լ. Պերվոմայսկին, Դ. Պավլիչկոն, Մ. Տանկը, Մ. Միրշաքարը, Էդ. Մեժելայտիսը, Ա. Չեբոտարուն, Մ. Քարիմը, Ա. Վայլենը, Կ. Կուլիևը և արտանահմանյան շատ բանաստեղծներ։

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում պոեզիայի երեկո։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ Թումանյանի պոեզիայի մասին խոսում է Բ. Պոլևոյը։ Իրենց բանաստեղծություններն են կարդում Օ. Շեստինսկին, Ս. Օլովը, Ա. Սմերդովը, Ջ. Նուրին, Հ. Ռեզիստանը, Ռ. Ռոժդեստվենսկին, Ի. Յուսուպովը, Ա. Գրաշին, Ս. Կապուտիկյանը, Ռ. Դավոյանը։ Թումանյանից կատարած իրենց թարգմանություններն են կարդում Ա. Մարտինովը և Բ. Ահմադուլինան։

Սեպտեմբերի 21-ին

Երևանում տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի նոր ցուցանմուշների և բանաստեղծի բարձրաքանդակի հանդիսավոր բացումը։ Ներածական խոսք է ասում Կ. Ուզումյանը։ Ելույթ են ունենում Լ. Կարելինը (Մոսկվա), Վ. Նոյբերթը (ԳԴՀ), Ստ. Ալաջաջյանը, Գ. Մուրովեն (Լիբանան), Մ. Գյուտյանը (Անգլիա)։

Նկարչի տանը բացվում է Հովհաննես Թումանյանին նվիրված հոբելյանական ցուցահանդես։ Ցուցահանդեսը ներածական խոսքով բաց է անում Գ. Բոբյանը։ Ելույթ են ունենում նկարիչ Գ. Խանջյանը, ասա բանաստեղծ, թարգմանիչ Ս. Շերվինսկին, Լիբանանի գրողների պատվիրակության ղեկավար Մուհամմեդ Յուսեֆ Նաջմը, ՀՍԳ միության վարչության քարտուղար Մ. Շաթիրյանը։ Ցուցահանդեսում ներկայացվում են 160 նկարչի 350 ստեղծագործություն։

Սեպտեմբերի 22-ին

Հովհաննես Թումանյանի 100-ամյակին նվիրված տոնակատարություններ են տեղի ունենում բանաստեղծի ծննդավայրում՝ Դսեղում։ Հոբելյանական հանդեսի ժամանակ ելույթ են ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Բ. Պոլևոյը, Գ. Էմինը, Վ. Կոչևակին (Ուկրաինա), Բ. Ժդենին (Վրաստան), Ս. Դաշդոնդոգին (Մոնղոլիա), Տ. Ուտանը (Ռումինիա), Փարիզի «Աշխարհ» թերթի խմբագիր Ա. Ալիքսանյանը, բանաստեղծի թոռ Օ. Թումանյանը։ Դսեղում բացվում է Հովհաննես Թումանյանի արձանը։

Սեպտեմբերի 24-ին

Երևանում Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ

Գերագույն սովետի նախագահության և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Թումանյանի կյանքին և գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես է գալիս Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ս. Սարգսյանը (ՍՍՀՄ գրողների միության վարչության անունից), Հովհաննես Թումանյանի հորեղբայրի անցկացման համամիութենական կոմիտեի նախագահ Ա. Սուրկովը, ՌՍՖՍՀ գրողների միության վարչության նախագահ Լ. Սոբոլևը, Մոսկվայի պատվիրակության ղեկավար Յու. Վերշինինը, Լենինգրադի պատվիրակության ղեկավար Բ. Անդրեևը, Ուկրաինական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Օ. Գոնչարը, Բելոռուսական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Մ. Տանկը, Ուզբեկստանի գրողների միության վարչության նախագահ Ք. Յաշենը, Ղազախական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, հանրապետության գրողների միության վարչության քարտուղար Ջ. Մուլդազալիևը, Վրացական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Օ. Լոլաշվիլին, Ադրբեջանական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Ջ. Ջաֆարովը, Լիտվական ՍՍՀ պատվիրակության անդամ Յա. Նարկևիչյուսը, Մոլդավական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Լ. Կուլյուկը, Լատվիական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Լ. Գորիսը, Կիրգիզական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, հանրապետության գրողների միության վարչության քարտուղար Ժ. Մավլյանովը, Տաջիկական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Մ. Միրշաքարը, Թուրքմենական ՍՍՀ պատվիրակության ղեկավար Բ. Սեյտակովը, Էստոնիայի կուլտուրայի մինիստր Ա. Լաուսը։ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Կ. Ուղումյանը հրապարակում է խաղաղության համաշխարհային խորհրդի ողջույնը։ Ելույթ են ունենում նաև Բուլղարիայի ժողովրդական բանաստեղծ. Լ. Մադինովը, Լեհաստանի ներկայացուցիչ Յ. Գիսգեսը, Կուբայի ներկայացուցիչ Ն. Գիլլենը, ԱՄՀ-ի ներկայացուցիչ Լ. Էլ Զայաթը, Իրանի ներկայացուցիչ Զ. Դուստարը, Սիրիայի ներկայացուցիչ, հայագետ Ն. Խալիլին, Ֆրանսիայի ներկայացուցիչ Մ. Բրոնը, Փարիզի, «Աշխարհ» թերթի խմբագիր Ա. Ալիքսանյանը, Հովհ. Թումանյանի 100-ամյակի նախապատրաստման և անցկացման հանձնաժողովի քարտուղար Լ. Հախվերդյանը։

Էդ. Թոփչյանի զեկուցումից

«...Ամեն մի ժողովրդի հոգևոր զարգացման ընթացքում հանդես է գալիս մի բանաստեղծ, որ ավելի ամբողջական ձևով, քան իր նախորդները, ընդհանրացնում է ժողովրդի պատմական կեցությունը, նրա ներկան ու գալիքը։ Համադրելով ազգայինն ու համամարդկայինը նա հառնում է ամբողջ մարդկության առջև իբրև իր ժողովրդի խոհերի ու ձգտումների ճշմարիտ մարմնացում։ Գյոթե, Պուշկին, Ռուսթավելի, Նիզամի, Շևչենկո...։ Հ. Թումանյանը պատկանում է մեծ բանաստեղծների այդ համաստեղությանը»։

«Գրական թերթ», № 44

Խաղաղության համաշխարհային խորհրդի ողջույնը

«Խաղաղության համաշխարհային խորհուրդը ողջունում է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի մասնակիցներին։

Հայ ժողովրդի առաջադեմ զավակի անունը, որ իր բազմահարուստ, հիանալի ստեղծագործության մեջ արտացոլել է մարդասիրության, սոցիալական արդարության, ժողովուրդների իրավահավասարության ու եղբայրության լուսավոր իդեալները, թանկ է բոլոր առաջադեմ մարդկանց, բոլոր նրանց համար, ովքեր պայքարում են հանուն խաղաղության և մարդկության առաջադիմության։

Հոբելյան Հովհաննես Թումանյանի 100-ամյա հոբելյանը, խաղաղության համաշխարհային խորհուրդը ամենախորին հարգանքի տուրք է մատուցում առաջադեմ հայ գրողի ստեղծագործական ժառանգությանը, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդի երջանկության և ազատության պայքարի ազնիվ գործին»։

Սեպտեմբերի 25-ին

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը ընդունելություն է կազմակերպում Հովհ. Թումանյանի 100-ամյակի առթիվ ժամանած արտասահմանյան հյուրերի պատվին։ Ընդունելության ժամանակ ելույթ են ունենում ֆրանսահայերի մշակութային միության պատվավոր նախագահ, ՀՍՍՀ ԳԱ օտարերկրյա անդամ Ջ. Խանդադյանը, հունգար գրող Յ. Քերեն, Ուրուգվայի «Արմենիա» ռադիոհաղորդումների անօրեն Հ. Ռուբինյանը, արաբ գրող Լ. Արդելը, Կանադայի գրող Հ. Գրիֆինը, հարավսլավացի թարգմանիչ Յ. Զագորսկին, Կուբայի ժողովրդական բանաստեղծ Ն. Գիլյենը, անգլիահայ գրող և թարգմանիչ Մ. Գյուտյանը և ուրիշներ։

Սեպտեմբերի 26-ին

Թբիլիսիում Հովհաննես Թումանյանի գերեզմանի առջև տեղի է ունենում միտինգ։ Միտինգը բաց է անում Թբիլիսիի քաղկոմի քարտուղար Շ. Կարկարաշվիլին։ Ելույթ են ունենում Ի. Աբաշիձեն, Ս. Բարուզդինը, Մ. Շաթիրյանը, Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի նախագահ, ճարտարապետ Ռ. Աղաբաբյանը։

Թբիլիսիի Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։ Ներածական խոսք է ասում Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահ Շ. Բուխարաշվիլին։ Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Վրաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Գ. Աբաշիձեն։ Ելույթ են ունենում Ս. Բարուզդինը, Լ. Սորոկը։

Սեպտեմբերի 30-ին

Բաքվի գիտությունների ակադեմիայի դահլիճում տեղի է ունենում Թումանյանական տասնօրյակի հանդիսավոր փակումը և հոբելյանական երեկոն։ Երեկոն բաց է անում Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Սուլեյման Ռուստամը։ Ժողովրդական գրող Միրզա Իբրահիմովի զեկուցումը հրապարակում է բանաստեղծ Մամեդ Իբրահիմը։ Ելույթ են ունենում Մամեդ Ռահիմը, Մ. Շաթիրյանը, Ա. Գրաշին, Ս. Գրիգորյանը և ադրբեջանցի մի շարք գրողներ։

Կիևի ճարտարապետների տան դահլիճում տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկո։ Երեկոն ներածական խոսքով բաց է անում Ուկրաինայի գրողների միության նախագահ Օլես Գոնչարը։ Զեկուցում է Վ. Կոչեսկին, ելույթ են ունենում Հ. Ղուկասյանը, Դ. Պավլիշկոն և ուրիշներ։

Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, որը հրավիրել էին ՍՍՀՄ ԳԱ համաշխարհային գրականության և ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտները։

Նստաշրջանը բաց է անում ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Բ. Սուչկովը։ Զեկուցում են Ն. Տիխոնովը, Ս. Շերվինսկին, Ս. Աղաբաբյանը, Խ. Սարգսյանը, Էդ. Ջրբաշյանը, Ա. Դիմշիցը, Գ. Ցիցիշվիլին, Ա. Ինճիկյանը, Մ. Աթաբեկյանը, Ի. Սաֆրազբեկյանը և Լ. Հախվերդյանը։

Մոսկվայում, Պ. Լումումբայի անվան համալսարանում տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո։ Երեկոն բաց է անում Ս. Բարուզդինը, ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը և Ս. Շերվինսկին։

Սեպտեմբեր

«Գարուն» ամսագրում (№ 9) տպագրվում է Պ. Սևակի «Թումանյանի հետ» հոդվածը։

Հոկտեմբերի 2-ին

Մոսկվայի գրողների կենտրոնական տանը տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո։ Զեկուցում է Գ. Բորյանը։ Ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը, Ս. Շերվինսկին, Գ. Էմինը, Ն. Գրեբենը, Ա. Գրաշին, Մ. Գյուտյանը և ուրիշներ։

Հոկտեմբերի 3-ին

Մոսկվայում, Մեծ թատրոնում, տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։ Բացման խոսք է ասում Ա. Սուրկովը։ Զեկուցում է Ռ. Խաչատրյանը։ Ելույթ են ունենում Ն. Տիխոնովը, Գ. Ցիցիշվիլին, Լ. Պերվոմայսկին, Գ. Գուլյամը։

Դահլիճում էին ընկ. ընկ. Լ. Ի. Բրեժնևը, Ա. Պ. Կիրիլենկոն, Կ. Տ. Մազուրովը, Ն. Վ. Պոդգորնին, Դ. Ս. Պոլյանսկին, Ա. Ն. Շելեպինը, Վ. Վ. Գրիշինը, Պ. Ն. Դեմիչևը, Ի. Վ. Կապիտոնովը, Ֆ. Դ. Կուլակովը, Բ. Ն. Պոնոմարյովը։

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Մոսկվայի Դիմիտրովսկ խճուղու և Սելիգերսկայա փողոցի վրա գտնվող «Երևան» կինոթատրոնի դիմացի հրապարակը կոչվում է Թումանյանի անունով։

Հոկտեմբերի 5-ին

Լենինգրադում, գրողների տանը հանդիսավորապես նշվում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը։ Ներածական խոսքով երեկոն բաց է ա-

նում ԻՍՖՍՀ գրողների միության Լենինգրադի բաժանմունքի վարչության առաջին քարտուղար Դանիել Գրանինը։

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առնչությունները, միջոցառումներին նվիրված նյութերը, բազմաթիվ զեկուցումներն ու նյութերը առանձին գրքով հրատարակվեցին 1972 թ. «Թումանյան 100. հոբելյանական տարեգրություն» վերնագրով։

Հոկտեմբերի 17-ին

Նշվում է Ալեքսեյ Սուրկովի ծննդյան 70-ամյակը։

Հոկտեմբերի 20-ին

Դրամատիկական թատրոնում տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված Վ. Վաղարշյանի ծննդյան 75 և մահվան 10-ամյակներին։ Երեկոն բաց է անում Ռ. Զարյանը, զեկուցում է Լ. Հախվերդյանը։

Հոկտեմբերի 24-ին

Նշվում է Գեորգ Էմինի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո։ Ներածական խոսք է ասում Ս. Կապուտիկյանը։ Հոբելյարին ողջույնի խոսք են հղում ՀՍԳ միության վարչությունը և ՍՍՀՄ գրողների միության քարտուղարությունն ու հայ գրականության խորհուրդը, որի մեջ ասված է.

«Թանկագին Գեորգ Գրիգորևիչ.

Սրտանց ու ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ։

Հանձին Ձեզ, մենք ողջունում ենք սովետական նշանավոր բանաստեղծ-ազնարկագրին, որի ստեղծագործությունը արժանի կերպով լայն տարածում է գտել մեր երկրում և նրա սահմաններից դուրս։

Ձեր առաջին իսկ գրքերով՝ «Նախաշավիղով», «Խաղաղության ծիածանով», «Նորքով», որոնք լույս տեսան քսան տարի առաջ, Դուք հատատապես մուտք գործեցիք սովետահայ գրականության մեջ՝ որպես մեր ժամանակակիցների խոհերն ու ձգտումներն արտահայտող տաղանդավոր բանաստեղծ։

Մեծ է Ձեր ավանդը հայ ժամանակակից պոեզիայում։ Դուք Ձեր բանաստեղծություններով վարպետորեն զարդարում եք հայրենի երկիրը, հպարտանում հայ ժողովրդի բազմադարյան պատմությամբ, բայց է՛լ ավելի եք հպարտանում նրա երջանիկ ներկայով՝ մեր մեծ Հայրենիքի եղբայրական ժողովուրդների ընտանիքում»։

Հոկտեմբերի 28-ին

Վախճանվեց ոուս նշանավոր գրող, հայ գրականության հմուտ թարգմանիչ Կորնեյ Չուկովսկին։

Հոկտեմբերի 31-ին

Նշվում է առաջին հայ պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայման 175-ամյակը։

Նոյեմբերի 7-ին

Նշվում է Աբիգ Ավագյանի ծննդյան 50-ամյակը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության դեկտեմբերի 6-ի հրամանագրով Ա. Ավագյանը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

ՍՍՀՄ պետական մրցանակի է արժանանում նկարիչ Գրիգոր Խանջյանը։

Երևանի № 56 դպրոցը կոչվում է Ստեփան Զորյանի անունով։

Նոյեմբերի 17—18-ը

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Հայաստանի կոմպոզիտորների միության միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանին։ Նստաշրջանը բաց է անում ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Այնուհետև ընթերցվում են բազմաթիվ զեկուցումներ։

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Երևանում անց է կացվում խմբերգային երաժշտության համամիութենական փառատոն։

Նոյեմբերի 21-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստ։ Նիստը ներածական խոսքով բաց է անում ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ն. Հարությունյանը։ Այնուհետև ելույթ են ունենում Դ. Կոբալևսկին, Գ. Շիրման, Ա. Ջաբարովը, Ն. Ռահմադիևը, Ա. Բալանչիվաձեն, Ա. Շարիֆովը և ուրիշներ։

Նույն օրվա «Գրական թերթում» (№ 45) տպագրվում են Կոմիտասին նվիրված Հրաչյա Աճառյանի, Պարույր Սևակի, Գոհար Գասպարյանի, Հովհաննես Չեքիջյանի, Սիլվա Կապուտիկյանի, Ռաֆայել Արամյանի, Մարգարիտ Բաբայանի հոդվածները։

Հոբելյանական փառատոն և երեկոներ են տեղի ունենում նաև Հայաստանի այլ վայրերում, եղբայրական հանրապետություններում, Սփյուռքում։

Նոյեմբերի 23-ին

Փարիզի «Պլեյել» դահլիճում տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին։ Հայաստանից ժամանած պատվիրակությունը գլխավորում է բանաստեղծ Հր. Հովհաննիսյանը։ Կոմիտասի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է երաժշտագետ Միշել Հոֆմանը։

Նոյեմբեր

«Գարուն» ամսագրի նոյեմբերյան համարում տպագրվում է Հարցազրույց Պ. Սևակի հետ՝ «Իմ Կոմիտասը» վերնագրով։

Դեկտեմբերի 3-ին

Մոսկվայում, Միությունների տան սյունադարդ դահլիճում, տեղի է ունենում Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Բացման խոսք է ասում համամիութենական հորելյանական հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տ. Խրենիկովը։ Զեկուցումով հանդես է գալիս ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Խաչատրյանը։ Ելույթ են ունենում Բ. Զայկովսկին, Ա. Շտոգարենկոն, Օ. Բաբաջանիշվիլին, Ա. Ջաբարովը, Ս. Ռուստամը և Էդ. Միրզոյանը։

Դեկտեմբերի 4-ին

Բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Դեկտեմբերի 5-ին

Նշվում է Ռուբեն Զարյանի ծննդյան 60-ամյակը։ Այդ առթիվ արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո։ Ռ. Զարյանի գրական-գիտական գործունեության մասին զեկուցում է Գ. Էմինը։

Դեկտեմբերի 10—11-ը

Մոսկվայում, Միությունների տան սյունադարպ դահլիճում բացվում է ՍՍՀՄ ստեղծագործական միությունների միացյալ պլենումը, որի օրակարգն էր՝ «Կուսակցականության և ժողովրդականության լենինյան սկզբունքների մարմնավորումը սոցիալիստական գրականության և արվեստի մեջ»։ Պլենումը բաց է անում Կ. Ֆեդինը, այնուհետև սկսվում է զեկուցումների ընթերցումն ու մրցքերի փոխանակությունը։

Դեկտեմբերի 11-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր Կոստան Զարյանը (ծնվ. 1885 թ.)։

Դեկտեմբերի 29-ին

Երվանդ Օտյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Հայֆիլհարմոնիայի Համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո։ Երեկոն բաց է անում Ստ. Ալաջաջյանը։ Ելույթ են ունենում Ստ. Կուրտիկյանը, Դր. Տեր-Գրիգորյանը։

Դեկտեմբեր

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 3) Գ. Ազնավուրյանը տպագրակում է անհայտ էջեր Դ. Վարուժանի գրական ժառանգությունից։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Բանդուրյան Գ. — Կյանքը մահվան դեմ
Դավթյան Վ. — Ծուխ ծխանի
Դավոյան Ռ. — Ռեքվիեմ
Դարբնի Ա. — Աղվեսը դրախտում
Սահյան Հ. — Բանաստեղծություններ, հ. Բ

Սարյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Սևակ Պ. — Եղիցի լույս

Արձակ

Անանյան Վ. — Երկեր, հ. 2, 3
Ատրյան Վ. — Պատմվածքներ
Արամյան Ռ. — Ո՞վ գարմանալի
Զեյթունցյան Պ. — 20-րդ դարի լեգենդը (ռուսերեն)
Զորյան Ստ. — Հին ծանոթներ
Զորյան Ստ. — Մի կյանքի պատմություն (ուկրաիներեն), Կիև
Էմին Գ. — Յոթ երգ Հայաստանի մասին (լատիշերեն), Ռիգա
Թաթիկյան Շ. — Ի՞նչ գույնի են լինում ճայերը
Խանզադյան Ս. — Անձրևից հետո
Խանզադյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 4
Կուրտիկյան Ստ. — Պրոլոմյան հովտաշուշաններ
Պետրոսյան Վ. — Հայկական էսքիզներ
Ղազանչյան Ռ. — Օտար մանրիմներ
Մաթևոսյան Հր. — Ալխո (ռուսերեն)
Մաթևոսյան Հր. — Նարնջագույն երամակ (լիտվերեն), Վիլնյուս
Մանուկյան (Գալշոյան) Մ. — Կոռնկ
Մկրտչյան Հ. — Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք 1-ին
Սարգսյան Մ. — Զինվորներ և սիրահարներ
Քալանթարյան Ա. — Մարաթոն

Դրամատուրգիա

Բորյան Գ. — Անտառի փնտացուն
Դարյան Զ. — Զմռան մի գիշեր
Տեր-Գրիգորյան Գր. — Տասը տարի

Ժողովածուներ

Անուն քաղցր ու վանմ (բանաստեղծություններ նվիրված Լենինին)
Արևելքի ժողովուրդների առածներ ու ասացվածքներ
Գարուն ա... (բանաստեղծությունների ժողովածու Կոմիտասի մասին)
Թումանյանը ժամանակակիցների հուշերում
Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, գիրք 2
Հովհաննես Թումանյան. Համամիութենական միջհամալսարանական գիտական կոնֆերանսի նյութեր (ռուսերեն)
Հազար ու մի խաղ (ժողովրդական երգարան)
Ղանալանյան Ա. — Ավանդապատում

Դասականներ

Ալիշան Ղ. — Նամականի
Ատրպետ — Տժվժիկ

Գրիգոր Նարեկացի — Բանաստեղծություններ։ Մատյան ողբերգության, հատվածներ (ռուսերեն)
Թումանյան Հովհ. — Աղավնու վանքը (հունգարերեն), Բուդապեշտ
Թումանյան Հովհ. — Աղթամար (14 լեզուներով)
Թումանյան Հովհ. — Անուշ (արաբերեն), Հալեպ
Թումանյան Հովհ. — Ասույթներ, թեավոր խոսքեր
Թումանյան Հովհ. — Արվեստի մասին
Թումանյան Հովհ. — Բանաստեղծություններ և հեքիաթներ (անգլերեն), Նյու-Յորք
Թումանյան Հովհ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Լենինգրադ
Թումանյան Հովհ. — Բանաստեղծություններ և պոեմներ (վրացերեն), Թբիլիսի
Թումանյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, 4
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր, հ. 1, 2, 3 (ռուսերեն)
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր (անգլերեն), Մոսկվա
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր (ուկրաիներեն), Կիև
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր (ֆրանսերեն), Մոսկվա
Թումանյան Հովհ. — Հայոց լեռներում (14 լեզուներով)
Թումանյան Հովհ. — Լուսաբացին (ռուսերեն), Մոսկվա
Թումանյան Հովհ. — Հատընտիր (Բեյրութ)
Թումանյան Հովհ. — Հատընտիր (ռուսերեն)
Թումանյան Հովհ. — Հատընտիր (ադրբեջաներեն), Բաքու
Թումանյան Հովհ. — Հատընտիր
Թումանյան Հովհ. — Շեքսպիրի մասին
Թումանյան Հովհ. — Ռուսաստանի և ռուսական կուլտուրայի մասին (ռուսերեն)
Թումանյան Հովհ. — Սասունցի Դավիթ (արաբերեն), Հալեպ
Թումանյան Հովհ. — Քառյակներ
Թումանյան Հովհ. — Քարաքաղնիս (կիրգիզերեն), Ֆրունզե
Թումանյան Հովհ. — Քնարերգություն (բելոռուսերեն), Մինսկ
Թումանյան Հովհ. — Քնարերգություն (ռուսերեն), Մոսկվա
Խաչատրյան Ավ. — Լիրիկա
Խաչատրյան Ավ. — Մեր գրի անմահ փառքը
Տերենց — Թորոս Լևոնի (ռուսերեն)
Կոմիտաս — Բանաստեղծություններ
Մովսես Կաղանկատվացի — Պատմություն Աղվանից աշխարհի
Եղազարյան Ստ. — Նամակների
Նար-Դոս — Երկերի ժողովածու, հ. 4
Շերամ — Երգեր
Պարոնյան Հ. — Երկեր
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 7
Սայաթ-Նովա — Խաղեր
Վարուժան Դ. — Երկեր
Քաֆֆի — Խնթիր

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Արվելաձե Բ. — Հովհաննես Թումանյանը և Վրաստանը (վրացերեն), Թբիլիսի

Բաբայան Ա. — Հովհաննես Թումանյան։ Մատենագիտություն ռուսերեն թարգմանությունների (ռուսերեն)

Բալագյան Լ. — Սովետահայ մանկա-պատանեկան գրականություն (20-ական թթ.)

Գաբրիելյան Վ. — Լենինի կերպարը հայ գրականության մեջ

Գրիգորյան Գ. — Լենինը և Հոկտեմբերը հայ բանաստեղծության մեջ

Գրիգորյան Կ. — Հովհաննես Թումանյան (ռուսերեն)

Գրիգորյան Շ. — Հովհաննես Թումանյան

Դեմիրճյան Դ. — Թումանյանի հետ

Երզնկյան Ա. — Դարավոր կաղնին (հուշեր)

Զորյան Ստ. — Իմ Թումանյանը

Թամրազյան Հր. — Սիամանթո

Թումանյան Ն. — Հուշեր և զրույցներ

Ինճիկյան Ա. — Հովհաննես Թումանյան։ Կյանքի և ստեղծագործության պատմությունը

Լևո — Երկերի ժողովածու, հ. 3 (գիրք 1)

Խաչատրյան Պ. — Հայ միջնադարյան ողբեր

Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան (ուղեցույց)

Կարապետյան Տ. — Լուսավոր հայացքով

Հախվերդյան Լ. — Թումանյան։ Ակնարկ կյանքի և ստեղծագործության

Հախվերդյան Լ. — Թումանյան։ Ակնարկ կյանքի և ստեղծագործության (անգլերեն)

Հախվերդյան Լ. — Թումանյան։ Ակնարկ կյանքի և ստեղծագործության (գերմաներեն)

Հախվերդյան Լ. — Թումանյան։ Ակնարկ կյանքի և ստեղծագործության (ռուսերեն)

Հախվերդյան Լ. — Թումանյան։ Ակնարկ կյանքի և ստեղծագործության (ֆրանսերեն)

Հախվերդյան Լ. — Թումանյանի աշխարհը (ռուսերեն), Մոսկվա

Հախվերդյան Լ. — Թումանյանի կյանքը

Հայրյան Գ. — Գրականության գլխավոր պրոբլեմը

Հովհաննիսյան Ա. — Հուշեր և բնութագրումներ

Հովհաննիսյան Գ. — Իսահակյանի ստեղծագործական աշխարհը

Հովսեփյան Գ. — Չարենցի պոեզիան

Ղանալանյան Հ. — Հայոց բանաստեղծության կախարդը (ռուսերեն)

Մանուկյան Ս. — Լևոն Բաշալյան

Մելքոնյան Ս. — Հ. Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը

Մելքումյան Մ. — Հ. Թումանյանը կրթության և դաստիարակության մասին

Մադոյան Գ. — Գևորգ Ախվերդյան

Մկրյան Մ. — Մովսես Խորենացի (ռուսերեն)
Նազարյան Շ. — Պետրոս Ղափանցի
Ջանփոլադյան Մ. — Թումանյանը և ժողովրդական էպոսը
Ջրբաշյան Էդ. — Թումանյանի բալլադները
Ջրբաշյան Էդ. — Թումանյանի պոեզիան (ռուսերեն), Մոսկվա
Սրապյան Ա. — Հայ միջնադարյան գրույցներ
Սևակ Պ. — Սայաթ-Նովա
Քարամիշվիլի Ե. — Հ. Թումանյան (վրացերեն), Թբիլիսի
Օհանյան Ա. — Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը

Թարգմանություն

Դանթե Ա. — Աստվածային կատակերգություն
Դյուրենմատ Ֆ. — Դատավորը և դահիճը
Իբսեն Հ. — Պեր Գյունտ
Լոնգֆելլո Հ. — Բանաստեղծություններ
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 9
Կոբո Ա. — Ջորջորգ սառցադաշտային ժամանակաշրջանը
Կոչլով Ի. — Առակներ
Կուլիև Կ. — Վիրավոր քարը
Պոլևոյ Բ. — Պատմություն իսկական մարդու մասին
Ռոլան Ռ. — Ժան Քրիստոֆ, հ. 3

1970

Հունվարի սկզբին

Կիևում տեղի է ունենում համամիութենական գիտական կոնֆերանս՝ «Լենինիզմը և սոցիալիստական ռեալիզմի զարգացումը ՍՍՀՄ ժողովուրդների գրականության մեջ» թեմայով։ Կոնֆերանսին մասնակցում են Մոսկվայի, Լենինգրադի և միութենական հանրապետությունների գրականագետներ ու փիլիսոփաներ։ Հայաստանից «Հայ գրականության գեղագիտական նոր որակը» զեկուցմամբ հանդես է գալիս Ս. Աղաբաբյանը։

Հունվարի 23-ին

Գրող Հովհաննես Ղուկասյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվարի 30-ին

Նշվում է Գարեգին Բեսի ծննդյան 60-ամյակը։

Հունվար-Փետրվար

«Գարուն» ամսագրի հունվարյան և փետրվարյան համարներում տպագրվում են սովետահայ և սփյուռքահայ արձակագիրների պատասխանները խմբագրության առաջարկած «Վեպը՝ վիպասանի տեսանկյունից» հարցաթերթիկին։ Տպագրվում են Գ. Մահարու, Հ. Մնձուրու, Մ. Արմենի, Ա. Տատրյանի, Ռ. Հովսեփյանի, Ս. Փանոսյանի, Ս. Շահրազի, Կ. Սիմոնյանի (№ 1), Ս. Խանզադյանի, Զ. Որբունու, Զ. Խալափյանի, Ա. Տատուրի, Գ. Քեշիշյանի, Ս. Վահագնի, Գ. Սևանի, Հ. Գանդրունու (№ 2) պատասխանները։ Հարցաշարադրությունն ամփոփում է Ս. Աղաբաբյանը՝ «Ժամանակակից վեպի հարցերը «կլոր սեղանի շուրջը» հոդվածով (№ 2)։

Փետրվարի 6-ին

Նշվում է Արշավիր Դարբնու ծննդյան 60-ամյակը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության փետրվարի 10-ի հրամանագրով Ա. Դարբինուն շնորհվում է «Պատվո նշան» շքանշան։

Նշվում է Հովհաննես Ղուկասյանի ծննդյան 50-ամյակը։

Փետրվարի 17-ին

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում հոբելյանական գիտական նստաշրջան։ Նստաշրջանը բաց է անում Մ. Նահապետյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Ս. Սարինյանը («Լենինը և գրականագիտության մեթոդոլոգիայի մի քանի հարցեր»), Ս. Աղաբաբյանը («Վ. Ի. Լենինը և սոցիալիստական գրականության հարցերը»),

Ս. Գարոնյանը («Վաթսունականները Վ. Ի. Լենինի և հայ մարքսիստների գնահատմամբ»), Ս. Մանուկյանը («Վ. Ի. Լենինի կերպարը հայ գրականության մեջ») և Զ. Ղուկասյանը, որը խոսում է Անդրկովկասի ժողովուրդների վրա Գորկու ստեղծագործության թողած մեծ ազդեցության մասին։

Փետրվարի 22-ին

Վախճանվեց հայագետ, բանասեր, բանաստեղծ Կարապետ Մելիք-Օհանջանյանը։

Փետրվարի 28-ին

Նշվում է Մարտիրոս Սարյանի ծննդյան 90-ամյակը։ Այդ առթիվ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Մարտի սկզբին

Բեյրութում հայկական մշակութային միությունը կազմակերպում է գրական երեկո՝ նվիրված Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի և Հր. Հովհաննիսյանի ստեղծագործություններին։ Զեկուցումներ են կարդում Վ. Վահյանը, Պ. Սիմոնյանը և Շ. Մոլոյանը։

Մարտի 18-ին

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում պլենար նիստ՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսք է ասում Մ. Ներսիսյանը, զեկուցումներով հանդես են գալիս Մ. Մելիքյանը, Հ. Գաբրիելյանը, Զ. Բաշինջաղյանը, Էդ. Ջրբաշյանը։

Մարտի 20-ին

Նշվում է Հակոբ Սիրունու ծննդյան 80-ամյակը։

Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Մերուն Թորգոմյանը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Մարտի 24-ին

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ «Վ. Ի. Լենինը և բնագիտությունը» թեմայով զեկուցում է Վ. Համբարձումյանը։

Մոսկվայում, Կրեմլի մեծ պալատում, բացվում է ՌՍՖՍՀ գրողների III համագումարը։

Մարտի 25-ին

Երևանում սկսվում են Անդրկովկասի հանրապետությունների պոեզիայի օրերը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ Այդ առթիվ Գ. Սուն-

դուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում երեկո։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ Իրենց ստեղծագործություններն են կարդում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի մի շարք բանաստեղծներ։

«Սովետական գրականություն» ամսագրի մարտյան համարը նվիրվում է Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։

Մարտ

Փարիզում, ֆրանսահայ գրողների միության նախաձեռնությամբ, կազմակերպվում է գրական երեկո՝ նվիրված Գ. Էմինին։ Երեկոն բաց է անում Մ. Աբմաճյանը, զեկուցում է Ա. Տատրյանը, ելույթ է ունենում ֆրանսիացի հայագետ Ֆ. Ֆեյդին։

Ապրիլի 4-ին

Վախճանվեց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խորեն Սարգսյանը (ծնվ. 1891)։

Ապրիլի 14-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը Լենինի շքանշան հանձնելուն։

Ապրիլի 16-ին

Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՀՍՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ Գրողներից ելույթ է ունենում Վ. Դավթյանը։

Ապրիլի 20-ին

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Հայաստանի ստեղծագործական միությունների համատեղ պլենումը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսք է ասում Վ. Նորենցը, զեկուցում է Էդ. Թոփչյանը, ելույթ են ունենում Էդ. Միրզոյանը, Ս. Սաֆարյանը, Լ. Վաղարշյանը և ուրիշներ։

Ապրիլի 21-ին

Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատում, տեղի է ունենում ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ Գերագույն սովետի համատեղ հանդիսավոր նիստը՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։ Ներածական ճառով նիստը բացում է Ն. Վ. Պոդգորնին։ «Լենինի գործը ապրում է և հաղթանակում» զեկուցումով հանդես է գալիս Լ. Ի. Բրեժնևը։ Ելույթ

Լեն ունենում Ա. Ն. Կոսիգինը, Վ. Կ. Գովորուշկինը, Վ. Գոմուլկան, Վ. Ուլբրիխտը, Ժ. Դյուկլոն, Գ. Հուսակը, Տ. Ժիվկովը, Մ. Վ. Կելդիշը, Ե. Մ. Տյաժելնիկովը, արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պ. Ժանսոնը։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակներ են շնորհվում Սերգեյ Միխալկովին (վերջին տարիների մանկական բանաստեղծությունների համար), Նիկոլայ Տիխոնովին («Վեց շարաբան» գրքի համար), Դավիթ Գուլյամին (նոմահու, վերջին տարիների բանաստեղծությունների համար)։

Մայիսի 19—20-ը

Մոսկվայում, Արվեստի աշխատողների կենտրոնական տանը, տեղի է ունենում ռազմա-հայրենասիրական գրականության հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցություն, որը հրավիրել էին ՍՍՀՄ գրողների միությունը և սովետական բանակի ու ռազմածովային նավատորմի գլխավոր քաղաքական վարչությունը։

Մայիսի 20-ին

ՀԽԳ միության նախագահության նիստում քննության է առնվում Հայաստանի 50-ամյակին նախապատրաստվելու հարցը։ Կատարվելիք միջոցառումների մասին խոսում է Էդ. Թոփչյանը։

Մայիսի 21-ին

Աշոտ Գրաշին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Մայիսի 27-ին

Վախճանվեց ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Օլգա Գուլազյանը (ծնվ. 1866 թ.)։

Մայիս

«Սովետական գրականություն» ամսագիրը (№ 5) նյութեր է տպագրում Սովետական Ադրբեջանի 50-ամյակի առթիվ։

Հունիսի սկզբին

Նշվում է Չարլզ Դիկենսի մահվան 100-ամյակը։

Հունիսի 23-ին

Մոսկվայում տեղի է ունենում գեղարվեստական թարգմանության հարցերին նվիրված համամիութենական երրորդ խորհրդակցությունը։ Հայաստանից ելկուցումով հանդես է գալիս Լ. Մկրտչյանը։

Հունիսի 27-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր Մկրտիչ Խերանյանը (ծնվ. 1899 թ.)։

Հուլիսի 10-ին

Հայ գրականության թարգմանության գործին և հայ մշակույթի մասսայականացմանը մատուցած ծառայությունների համար ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում Ա. Լ. Դիմշիցին, Վ. Վ. Կոշևսկուն, Ա. Ա. Սուրկովին, Մ. Ս. Պետրովիխին, Մ. Ա. Ռահիմին, Ն. Ս. Տիխոնովին։

Հուլիսի 13-ին

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը քննարկում է ՍՄԿԿ հերթական XXIV համագումարի հրավիրման հարցը։ Այդ հարցի մասին զեկուցումով հանդես է գալիս ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը։ Կենտկոմի պլենումն ընդունում է համապատասխան որոշում։

Հուլիսի 21-ին

Գրող Մերուն Թորգոմյանին շնորհվում է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում։

Հուլիս

Նշվում է Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակը։

Օգոստոսի 21-ին

Ստ. Ալաջաջյանին, Վ. Դավթյանին, Լ. Թաշչյանին, Էդ. Թոփչյանին, Ա. Թումանյանին (Դսեղ գյուղի Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի դիրեկտոր), Թ. Թումանյանին (Երևանի Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի դիրեկտոր), Ս. Կապուտիկյանին, Հ. Սահյանին շնորհվում է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Օգոստոսի 28-ին

Ստ. Կուրտիկյանի «Խստապահանջություն, առավել հոգատարություն» հոդվածով «Գրական թերթում» (№№ 35 և 36) ծավալվում է բանավեճ՝ նվիրված երիտասարդական պոեզիայի հարցերին։ Այդ առթիվ հանդես են գալիս՝ Ա. Մարտիրոսյանը. «Առողջ որոնումների ճանապարհին» (№ 41), Հ. Գրիգորյանը՝ «Թե ինչպես «անհետացավ» բանաստեղծությունը» (№ 45), Ս. Աթաբեկյանը՝ «Զապրված զգացումների հորձանուտում» (№ 50), Գ. Հատիսյանը՝ «Մի քանի էական ճշտումներ» (1971, № 2), մի շարք ընթերցողներ (1971, № 3), Ս. Արզումանյանը՝ «Հայրենական ավանդները և երիտասարդական պոեզիան» (1971, № 5)։ Բանավեճը ամփոփում է Ս. Հարությունյանը՝ «Քաղաքացիական պարտքի գիտակցմամբ» հոդվածով (1971, № 13)։

Օգոստոս

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 2) Ա. Ինճիկյանը հրապարակում է անտիպ էջեր Ավ. Իսահակյանի և Ա. Ջոպանյանի նամակագրությունից։

Սեպտեմբերի 18-ին

Նշվում է Ստեփան Զորյանի ծննդյան 80-ամյակը։ Այդ կապակցությամբ «Սովետական գրականություն» ամսագրում (№ 9) տպագրվում են Խ. Սարգսյանի հուշերը։ «Գրական թերթը» Ստ. Զորյանից տպագրում է մի քանի անտիպ էջեր (№ 38)։

Գորիսում բացվում է Ակսել Բակունցի տուն-թանգարանը։

Սեպտեմբերի 25-ին

Նշվում է Երուխանի ծննդյան 100-ամյակը։

Սեպտեմբեր

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կուլտուրայի պալատում նշվում է Ստեփան Զորյանի ծննդյան 80-ամյակը։ Ներածական խոսք է ասում էդ. Բոփչյանը։ Զորյանի կյանքի և գործի մասին զեկուցում է Ս. Աղաբաբյանը։ Ելույթներ են ունենում Ռ. Զարյանը, Վ. Մնացականյանը, Նոր-Այրը և ուրիշներ։

«Գարուն» ամսագրի սեպտեմբերյան համարում Նվարդ Տերյանը հրապարակում է Վահան Տերյանի նորահայտ նամակները։

Հոկտեմբերի 9-ին

Նշվում է Սերգեյ Եսենինի ծննդյան 75-ամյակը։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սուրեն Վահունին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Հոկտեմբերի 23-ին

Նշվում է Ի. Ա. Բունինի ծննդյան 100-ամյակը։

Նշվում է Աթաբեկ Խնկոյանի ծննդյան 100-ամյակը։

Փարիզի գեկորատիվ արվեստի թանգարանում բացվում է «Հայկական արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսը, որը կազմակերպել էր Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը։ Այն տևում է մինչև 1971 թ. հունվար ամիսը։

Հոկտեմբերի 30-ին

Վախճանվեց գրականագետ, գիտության վաստակավոր գործիչ Հովհաննես Մամիկոնյանը (ծնվ. 1907 թ.)։

Նոյեմբերի 3-ին

Մոսկվայում, Գրողների կենտրոնական տանը, տեղի է ունենում պլենում՝ նվիրված դրամատիկական ստեղծագործությունների գաղափարայնության և գեղարվեստական վարպետության պրոբլեմներին։ Բացման խոսք է ասում

Կ. Ֆեդինը, զեկուցում է Ա. Սալինսկին։ Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը Հայաստանից մասնակցում է Գ. Բորյանը։

Նոյեմբերի 11-ին

Սկսվում են Հայաստանի մշակույթի օրերը Ադրբեջանում։

Նոյեմբերի 13-ին

ՍՍՀՄ պետական մրցանակը գրականության բնագավառում շնորհվում է Ս. Սարտակովին «Բարբինյան պատմվածքներ» եռագրության համար։

«Գրական թերթը» (№ 46) էջ է նվիրում Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը։ Տպագրվում են Էդ. Մեժելայտիսի, Լև Օզերովի, Ս. Ռասսադինի, Ա. Դեյչի հոդվածները և Ա. Մելիքովի և Գ. Ն[illegible]ի ասույթները։

Նոյեմբերի 14-ին

Երևանում, Պալիաշվիլու անվան ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին։

Նոյեմբերի 24-ին

Գումարվում է ՀՍԳ միության վարչության հոբելյանական պլենումը՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին։ Ներածական խոսք է ասում Էդ. Թոփչյանը։ «Սովետահայ գրականության կես դարը» զեկուցումով հանդես է գալիս Հր. Հովհաննիսյանը։ Ելույթ են ունենում Հմ. Սիրասը, Ս. Աղաբաբյանը, Ստ. Կուրտիկյանը, Վ. Պետրոսյանը։

Նոյեմբերի 27-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրվում է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

Նոյեմբերի 29-ին

Տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի համատեղ հոբելյանական հանդիսավոր նիստը՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին։ Հանդիսավոր նիստում մեծ ճառով հանդես է գալիս ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը։

Լ. Ի. Բրեժնևի ճառի մեջ մասնավորապես պիտության ու մշակույթի վերելքի մասին ասված է.

«Հեշտ ու հասարակ չի եղել հայ ժողովրդի ուղին դեպի սոցիալիզմ և ազգային աղատագրություն։ Մանր ձախորդություններ քիչ չեն վիճակվել Հայաստանի աշխատավորներին։ Տակավին վաղնջական ժամանակներում մշա-

կության հայկական նմուշներ կերտած հայ ժողովուրդը դարեր շարունակ հարկադրված է եղել զենքը ձեռքին պաշտպանել իր աշխատանքի արդյունքները և գոյատևման իր իրավունքը։ Օտար զավթիչների ամեն մի արշավանքից հետո նա փլատակներից վերականգնել է ավերված քաղաքներն ու գյուղերը, մշակույթի անգնահատելի հուշարձանները և ընթացել առաջ, հաստատ հավատալով իր ապագային։

Սովետական Հայաստանն այսօր առաջավոր գիտության, բազմակողմանի զարգացած սոցիալիստական մշակույթի հանրապետություն է։

Հայկական ազգային մշակույթը վաղեմի ավանդույթներ ունի։ Նշանակալից է այն ավանդը, որ հայ ժողովուրդը ներդրել է համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ։

Դարեր կանցնեն, բայց չի թուլանա հայկական ժողովրդական բանաստեղծության մի այնպիսի գլուխգործոցի ներգործուն հզոր ուժը, ինչպիսին է «Սասունցի Դավիթի» հերոսական էպոսը։ Թարմությունը չեն կորցնում մեծ բանաստեղծ ու երգիչ Սայաթ-Նովայի ավելի քան 200 տարի առաջ գրած տողերը։ Առաջվա նման նրանք, ովքեր այցելում են ձեր հրաշալի երկիրը, հիանում են հայ ճարտարապետների մեծ վարպետությամբ, պատմական հին հուշարձանների անկրկնելի գեղեցկությամբ։

Երևանցիների օրինական հպարտության առարկաներից մեկն է հռչակավոր Մատենադարանը՝ հին հայկական ձեռագրերի հրաշալի գանձարանը։ Այնտեղ մարդ ասես անմիջականորեն հաղորդակցվում է հայ ժողովրդի հազարամյա պատմությանը։ Եվ որքան շատ ես խորհում այդ պատմության դասերի վրա, այնքան մեծ հպարտությամբ կարող ես ասել. այո, սովետական իշխանության հաղթանակը փրկեց հայ ազգի հնամենի մշակույթը, սոցիալիզմի հաղթանակը վերածնեց այդ տաղանդավոր ժողովրդի հոգևոր կյանքը, լավագույն պայմաններ ստեղծեց նրա բազմակողմանի ծաղկման համար։

Եվ իրոք, այսօր անհավատալի է թվում, որ հին մշակույթի տեր ժողովուրդը, որը տակավին չորրորդ դարում ստեղծել է իր գրությունը, հեղափոխությունից առաջ ավելի քան 90 տոկոսով անգրագետ էր։ Եվ ահա այդ ժողովուրդը, հասարակ հայ աշխատավորները, հովիվներն ու հողագործները, որմնադիրներն ու արհեստավորները սերնդե-սերունդ փոխանցել են հին մատյանների ու ձեռագրերի էջերը։ Նրանք այդ էջերը պահպանել են որպես ամենաթանկագին մասունք, բայց նույնիսկ չէին կարողանում դրանք կարդալ։

Միայն սովետական իշխանությունը նրանց այդպիսի հնարավորություն ընձեռեց, հայ աշխատավորներին փրկեց հավիտենական խավարից՝ անգրագիտությունից, ժողովրդի սեփականությունը դարձրեց ոչ միայն այդ ձեռագրերը, այլև Հայաստանի ամբողջ բազմահարուստ մշակույթը։

Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո Հայաստանում բացվեց հանրապետության առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը։

Եթե առաջներում հայ ժողովրդի միայն սակավաթիվ ներկայացուցիչներին էր հաջողվում բարձրագույն կրթություն ստանալ և այն էլ բացառապես Հայաստանի սահմաններից դուրս, ապա այժմ գիտելիքներ առանալու համար հանրապետություն են գալիս ուրիշ շատ երկրների պատանիներ ու աղջիկներ։ Հազար բնակչին ընկնող ուսանողների թվով Հայկական Սովետական

Սոցիալիստական Հանրապետությունը շատ առաջ է անցել բազմաթիվ զարգացած կապիտալիստական երկրներից։

Հենվելով սոցիալիզմի ստեղծած հասարակական նոր հիմքի վրա, սովետական եղբայր ժողովուրդների օգնության վրա, հայ ժողովուրդը հիանալի հաջողությունների է հասել գիտության զարգացման ասպարեզում։ Հայաստանում այժմ գործում է մոտավորապես 100 գիտական հիմնարկություն։ Այստեղ հաջողությամբ մշակվում են տեսական մեխանիկայի, քիմիայի ու երկրաբանության հրատապ պրոբլեմները, գիտության այնպիսի ժամանակակից ուղղություններ, ինչպիսին են բիոֆիզիկան և կիբեռնետիկան։

Սովետական Հայաստանը և մեր ամբողջ երկիրը իրավամբ հպարտանում են հանրապետության բազմաթիվ գիտական կոլեկտիվների և ամենից առաջ Բյուրականի աստղադիտարանի նվաճումներով։ Այդ հիանալի գիտական կենտրոնը գլխավորում է ականավոր գիտնական, սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընկեր Համբարձումյանը։ Ի դեպ, վերջերս նա վերընտրվեց գիտական միությունների միջազգային խորհրդի պրեզիդենտի պոստում։ Եթե որոշ տերմիններ փոխ առնենք նրա սիրած աստղագիտությունից, ապա կարելի է Համբարձակորեն ասել, որ սովետական ու համաշխարհային գիտության երկնակամարում ակադեմիկոս Համբարձումյանի անունը շողում է որպես առաջին մեծության աստղ։

Հայկական սոցիալիստական մշակույթի բարձունքների պերճախոս վկայությունն են նաև հանրապետության բազմաթիվ ականավոր նկարիչների, գրողների, արտիստների անունները։

Այստեղ բավական է հիշատակել ժամանակակից գեղանկարչության նշանավոր վարպետ Մարտիրոս Սարյանի անունը։ Նա, ով լինում է այդ զարմանահրաշ նկարչի ցուցահանդեսներում, մեկընդմիշտ իր հետ տանում է իսկական արվեստի հետ հանդիպման տոնի զգացողությունը, արվեստ, որը փառաբանում է վեհապանծ, առնական ու քնքուշ երկրամասը՝ Սովետական Հայաստանը։

Թերևս դժվար է այսօր մեր անծայրածիր երկրում գտնել մի անկյուն, որտեղ չհնչեր Արամ Խաչատրյանի կրակոտ, խորապես ազգային և միևնույն ժամանակ սովետական ու համաշխարհային երաժշտական մշակույթի առաջավոր նվաճումներն իր մեջ ներծծած երաժշտությունը։

Մեր կուսակցությունը միշտ էլ մեծ հարգանքով է վերաբերվել և վերաբերվում է սովետական ստեղծագործական մտավորականությանը։ Նա բարձր է գնահատում գրականության ու արվեստի այն գործիչներին, որոնք խորապես գիտակցում են իրենց դերը հասարակության մեջ և պատասխանատվությունը նրա հանդեպ, ըստ արժանվույն են ներկայացնում մեր առաջավոր սոցիալիստական արվեստը, իրենց ամբողջ ստեղծագործությամբ հաստատում են կոմունիստական իդեալները։ Ձեով ազգային նրանց լավագույն ստեղծագործությունները միշտ աչքի են ընկել աշխարհը դասակարգայնորեն տեսնելու հստակությամբ, կուսակցականությամբ ոգորված սոցիալիստական խոր բովանդակությամբ։

Հենց այդպիսի ստեղծագործություններն են դառնում, ընկերներ, իրոք, ժողովրդական, ճանապարհ գտնում դեպի բոլոր սովետական մարդկանց սրտերը, նրանց կողմից գնահատվում որպես անանց արժեքներ, մեր երկրի

բոլոր ժողովուրդների ընդհանուր սեփականություն։ Գործնականում հենց այդպիսի ստեղծագործություններն են հարստացնում Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մշակույթը։

Սովետական Հայաստանի պատմական փորձը կրկին ու կրկին համոզում է, որ ազգի իսկական ծաղկումը ձեռք է բերվում ոչ թե ազգային պարփակման ու մեկուսացման ուղիներով, այլ սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ փոխադարձաբար միմյանց հարստացնող ներդաշնակ զարգացման շնորհիվ։

Հայկական սոցիալիստական պետականության ստեղծումը, Սովետական Հայաստանի տնտեսական ու հոգևոր կյանքի բազմակողմանի ծաղկումը սոցիալիզմի, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսահաստատ ուժի վառ ապացույցն են։

Ասում են, թե, երբ ձեր հանրապետությունն են այցելում արտասահմանցի հայրենակիցները, որոնք տակավին հիշում են նախասովետական Հայաստանը, ապա նրանք չեն կարողանում թաքցնել իրենց հիացմունքը հայ ժողովրդի կյանքում կատարված վերափոխումների առթիվ։ Ընդ որում, այդպիսի զգացմունքներ են արտահայտում նույնիսկ նրանք, ում այնքան էլ դուր չի գալիս սովետական իշխանությունը։ Դե, ինչ արած, եթե նույնիսկ այդ մարդիկ ստիպված են խոստովանելու Սովետական Հայաստանի աչքի ընկնող հաջողությունները, ուրեմն ձեր գործերն ընկերնե՛ր, իսկապես որ վատ չեն գնում, լավ են գնում։

«Գրական թերթ», № 49

Դեկտեմբերի 21-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Երևանի պետական համալսարանը հիմնադրման 50-ամյակի առթիվ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Դեկտեմբերի 30-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պատմաբան, թարգմանիչ Հարությունն Թուրշյանը՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

ՀՍՍՀ պետական մրցանակը շնորհվում է Գուրգեն Բորյանին՝ «Սարոյան եղբայրներ» սցենարի համար։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Խաչիկ Դաշտենցը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Միշա Գյուտյանի թարգմանությամբ անգլերեն լույս է տեսնում «Սասունցի Դավիթ» գյուղագնահատությունը։ «Թայմս» թերթի «Դաստիարակչական հավելվածը» գրախոսական է տպագրում «Սասունցի Դավթի» անգլերեն թարգմանության առթիվ, որի մեջ ասված է. «Սասնա լեգենդը՝ հայկական ժո-

ղովրդական այս չափազանց հետաքրքիր դյուցազներգությունը, թարգմանված է շատ սահուն և ընթերցվում է մեծ հաճույքով»։

Մի այլ թերթ՝ «Դեյլի տելեգրաֆը», այսպես է գնահատում Մ. Գյուտյանի կատարած աշխատանքը. «Սասնա լեգենդի Միշա Գյուտյանի մշակումը գրավիչ է ոչ միայն այն պատճառով, որ հայկական այս դյուցազնավեպը անծանոթ է մեզ, այլև իր շրջող ու հստակ գրելաձևով, որն ունի բիբլիական հնչեղություն»։

«Գրական թերթ», № 17

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Այվազյան Ա. — Կապույտ աղբյուր
Դուրյան Լ. — Դառնամ փառաբանեմ
Էմին Գ. — Քսաներորդ դար
Հաճյան Վ. — Հալչող արծաթներ
Հովհաննիսյան Հր. — Հրաշալի այգեպանը (ռուսերեն)
Հովհաննիսյան Հր. — Սուրը դափնու վրա
Հուրյան Ռ. — Հուշարձան, Բաքու
Միրիջանյան Լ. — Ծովի կարոտ (ռուսերեն), Մոսկվա
Շիրազ Հ. — Սիամանթո և խջեզարն
Սահյան Հ. — Տարիներս (ռուսերեն)
Սարյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 3

Արձակ

Ալաջաջյան Ստ. — Եղեգները չիոնարհվեցին
Անանյան Վ. — Երկեր, հ. 4, 5
Ավագյան Էդ. — Մարդը մարդուն
Արամյան Ռ. — Մեռած քաղաքի պարիսպների տակ
Արամյան Վ. — Մի՞թե բոլորը հող դարձան
Գյուլնազարյան Խ. — Պատվո քարը
Գրիգորյան Վ. — Կատակասեր աստվածները
Ջեյթունցյան Պ. — Կլոդ Ռոբերտ Իգերլի. 20-րդ դարի լեգենդը (լիտվերեն), Վիլնյուս
Էմին Գ. — Յոթ երգ Հայաստանի մասին (ռուսերեն)
Խանզադյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 5
Կապուտիկյան Ս. — Քարավանները դեռ քայլում են (ռուսերեն)
Հարությունյան Վ. — Վայրց ձոր, գիրք Ա
Հովսեփյան Ռ. — Երկու վիպակ
Հրահան Հր. — Խոսում են անմահները
Պետրոսյան Վ. — Ապրած և չապրած տարիներ
Սաքզսյան Մ. — Ճանապարհ։ Կանգառ նահանջի ճանապարհին։ Սերժանտ Կարոն
Սեկոյան Ա. — Եթե Որոտանը խոսեր
Քեշիշյան Գ. — Կղզի նման չիք մեր Կիպրիա

Ժողովածուներ

Գիտե՞ք երկիրն այս... (բանաստեղծություններ նվիրված Հայաստանին)
Գորկին և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը (ռուսերեն)
Խոսք սիրո և հավատարմության (սովետահայ գրողների պատմվածքներ ու ակնարկներ նվիրված Լենինին)
Հայաստանի և հայկական մշակույթի մասին (ռուսերեն)
Նմուշներ հայ ժողովրդական բանաստեղծությունից (ռուսերեն)
Ողջույն քեզ Հայաստան. Աշխարհի բանաստեղծները Սովետական Հայաստանի մասին

Դասականներ

Գրիգոր Նարեկացի — Մատյան ողբերգության (ծաղկաքաղ)
Եզնիկ Կողբացի — Եղծ աղանդոց
Թեքեյան Վ. — Հատընտիր
Իսահակյան Ավ. — Բանաստեղծություններ (ուկրաիներեն), Կիև
Իսահակյան Ավ. — Երկեր
Իսահակյան Ավ. — Հատընտիր (ռուսերեն), Մոսկվա
Մուրացան — Երկեր, գիրք 1
Նալբանդյան Մ. — Երկեր, հ. 2 (ռուսերեն)
Նար-Դոս — Երկերի ժողովածու, հ. 5
Շիրվանզադե — Քառս (վրացերեն), Թբիլիսի
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 6
Տերյան Վ. — Չհրապարակված նամակներ (ռուսերեն)
Բաֆֆի — Խենթը։ Հարեմ։ Ոսկի աքաղաղ։ Պատմվածքներ

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 4
Ամիրբեկյան Վ. — Հայաստանի մամուլը Հայրենական պատերազմի տարիներին
Անանյան Գ. — Սովետահայ գրականության կենդարյա ուղին
Բոդոսյան Ս. — Տասնամյակի քնարերգությունը (ռուսերեն)
Գրիգորյան Հր. — Վլադիմիր Մայակովսկի
Գրիգորյան Ռ. — Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր
Դավթյան Ա. — Յու. Վեսելովսկին և հայ գրականությունը (ռուսերեն)
Հարությունյան Ս. Բ. — Մանուկ Աբեղյան
Հովհաննիսյան Ս. — Երուխան
Ղուկասյան Զ. — Գրականության կուսակցականության լենինյան ուսմունքը և հայ գրականագիտությունը
Մկրյան Մ. — Մովսես Խորենացի
Նալբանդյան Վ. — Գրողը և պատմությունը

Նարովչատով Ս. — Մեծ բանաստեղծն ու քաղաքացին
Շեքսպիրական (հայկական շեքսպիրյան տարեգիրք), հ. 3
Պապոյան Ա. — Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը
Պապոյան Ա. — Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը
Ռշտունի Հ. — Սիամանթո
Սուրխաթյան Հ. — Գրականության հարցեր
Վարդանյան Վ. — Հայ գրականությունը VII դարում

Թարգմանություն

Ապոլիներ Գ. — Բլուրներ
Բիլինաներ, ռուսական ժողովրդական դյուցազներգություններ
Գրին Է. — Ուրիշ ճանապարհ
Դոստոևսկի Ֆ. — Կարամազով եղբայրներ, հ. 1, 2
Դրուցն Ի. — Տխրության տերևներ
Լեսսինգ Գ. — Դրամաներ
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 10
Լուտս Օ. — Գարուն
Մոլդավական նովելներ և պատմվածքներ
Շահինյան Մ. — Առաջին «համառուսականը»
Շեքսպիր Վ. — Լիր արքա
Պուշկին Ա. — Փոքրիկ տղբերգություններ
Ռուժևիչ Թ. — Սաթե թռչուն
Սրտի ձայն (վրաց բանաստեղծները Հայաստանին և հայերին)
Վագիֆ — Հատընտիր
Ուկրաինկա Լ. — Լիրիկա
Քսենոփոն — Անաբասիս
Ֆեդին Կ. — Քաղաքներ և տարիներ

1971

Հունվարի 15-ին

Նշվում է Արամ Ինճիկյանի ծննդյան 60-ամյակը։

Հունվարի 20-ից փետրվարի 1-ը

Երևանում անց է կացվում Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրների սփյուռքահայ առաջադեմ երիտասարդական միությունների ղեկավարների հանդիպում։ Հանդիպման մասնակիցները ընդունում են սփյուռքահայ երիտասարդությանն ուղղված կոչ, որի մեջ ասված է.

«Սիրելի սփյուռքահայ երիտասարդներ.

Մենք բախտն ու պատիվը ունեցանք մեկ շաբաթ վայելելու վերածնված ու վերածաղկող մեր մայրաքաղաքի սերն ու հյուրընկալությունը։

Այդ անմոռաց շաբաթը մայր Հայրենիքի հիսնամյա անցած ճանապարհը իրապես զգալու, տեսնելու և գնահատելու ժամանակ եղավ մեզի համար։ Այն մակարդակին և այն արդյունքներուն, որոնց հասած են մեր եղբայրները Սովետական Հայաստանի կես դարուն, մեր սիրաը լեցուցին հպարտության և երախտագիտության ջերմ զգացումներով։

Այդ օրերը ջերմ հանդիպումներու, մտքերու ազնիվ փոխանակման և հույսի օրեր եղան մեզի համար։ Առաջին անգամ ըլլալով, շնորհիվ մեր մայր Հայրենիքի նախաձեռնության, մենք մեկտեղվեցանք բաղաքամայր Երևանի մեջ, խոսելու և խորհելու համար բազմաթիվ հարցերու շուրջ։

Իսկ մեր հարցերը, իսկապես, որ շատ են ու բախտորոշ։

Հայ սփյուռքի գոյությունն այսօր մեծապես պայմանավորված է արտասահմանի մեջ ապրող հայ նոր սերունդի դիրքորոշումով, սերունդ՝ զոր ներկայացնելու պատիվն ու պատասխանատվությունն ունեցանք մենք։ Ուծացման, այլասերումի վտանգին առջև, զոր կզգանք ամեն օր և ամեն ժամ, անհրաժեշտ է, որ մենք միացնենք մեր ջանքերը, ստեղծենք միակամորեն ու միասնականությամբ գործելու հնարավորություններ, չզբաղինք մանրուքներով և անիմաստ տարաձայնություններով։

Ապահովել ու երկարաձգել հայ սփյուռքին գոյատևումը, հայ պահել սփյուռքի նոր սերունդը՝ զայն համախմբելով մայր Հայրենիքի լուսապայծառ իրականության շուրջ, այս է ու այս պետք է ըլլա մեր պարտականությունը, մեր ժողովուրդի անցյալի պատմության, անոր այսօրվա և վաղվան սերունդներուն առջև։ Մեր այս պարտականության, մեզի վստահված առաքելության հզորագույն պատվանդանը մեր այսօրվա Հայաստանն է, մեր իրական, մեր հարազատ ու մեր ծաղկուն Հայրենիքը։ Մեր մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, պետք է իր առանձնահատուկ տեղն ունենա մեր բոլոր մտքերուն ու գործերուն մեջ։ Մեր մայր Հայրենիքի ստինքնող իրականության շուրջը մեր ունեցած վերաբերումով պետք է որ գնահատվի մեր հավատարմությունը՝ հանդեպ մեր հնադարյան ժողովուրդին։

«Գարուն», Ա 4

Հունվարի 22—23-ը

Մոսկվայում, գրականության պետական թանգարանի դահլիճում, անցկացվում են «Բրյուսովյան» հերթական՝ չորրորդ ընթերցումները։ Նախորդ երեք ընթերցումները անց էին կացվել Երևանում։ Հայաստանից Երևանի մանկավարժական ինստիտուտի դոցենտ Մ. Միրզա-Ավագյանը ներկաներին ծանոթացնում է Բրյուսովի չհրապարակված նամականիին։

Հունվարի 26—29-ը

Մոսկվայում տեղի է ունենում սոցիալիստական 11 երկրների գրողների միությունների ղեկավարների 8-րդ հանդիպումը։

Հունվարի 28—29-ը

Կիրովականում տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության 8-րդ պլենումը, որի օրակարգն էր՝ «Աշխատանքը և աշխատանքի մարդը սովետահայ արձակում»։ Այդ թեմայով զեկուցում է Ս. Արզումանյանը (տե՛ս «Գրական թերթ» № 6)։ Պլենումի աշխատանքն ամփոփում է Էդ. Թոփչյանը։

Հունվարի 29-ին

Նշվում է Պավլո Տիչինայի ծննդյան 80-ամյակը։

Նշվում է Հովհաննես Ղանալանյանի ծննդյան 60-ամյակը։

Փետրվարի 12-ին

Նշվում է Գարեգին Սևունցի ծննդյան 60-ամյակը։

Փետրվարի 15-ին

«Լիտերատուրնայա գազետա» թերթը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Փետրվարի 16-ին

Ն. Զարյանի ծննդյան 70-ամյակի և Երևանի № 130 դպրոցը նրա անվամբ կոչելու կապակցությամբ՝ դպրոցի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո։ Ն. Զարյանի մասին խոսք են ասում Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Մ. Մարգարյանը, Ստ. Ալաջաջյանը և Ա. Սարոյանը։

Փետրվարի 22-ին

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված Լեսյա Ուկրաինկայի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բաց է անում Ս. Կապուտիկյանը, զեկուցում է Գ. Թաթոսյանը։

Փետրվարի 23-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության կուսակազմակերպության ժողովը, ուր քննարկվում են հետևյալ հարցերը.

1. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թթ. հնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվների նա-

խագիծը (զեկուցող Ա. Սարոյան)։ 2. «Գարուն» ամսագրի խմբագրության հաշվետվությունը (զեկուցող Վ. Պետրոսյան)։

Փետրվարի 24-ին

Վախճանվեց գրականագետ Ռուսեթ Հովհաննիսյանը (ծնվ. 1907 թ.)։

Փետրվարի 25-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերի դահլիճում իր աշխատանքն է սկսում Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարը։ Գրողներից ելույթ է ունենում Հր. Հովհաննիսյանը (տե՛ս «Գրական թերթ», № 10)։

Փետրվար

«Սովետական գրականություն» ամսագիրը տպագրում է Պ. Սևակի բանաստեղծությունները և Ա. Կրիստակևյանի հարցազրույցը նրա հետ։

«Գարուն» ամսագրի փետրվարյան համարը էջեր է նվիրում Բուլգարիայի երիտասարդ գրողներին։

Մարտի 5-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով բանաստեղծ Սարմենը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Մարտի կեսերին

ՀՍԳ միության կուսակազմակերպության ժողովում «Հայաստանի կոմկուսի XXV համագումարի արդյունքները և սովետական գրողների խնդիրները» թեմայով զեկուցում է Հր. Հովհաննիսյանը։

Մարտի 19-ին

Նշվում է Նաիրի Զարյանի ծննդյան 70-ամյակը։ Այդ առթիվ Սունդուկյանի անվան թատրոնում տեղի է ունենում հոբելյանական երեկո։

Մարտի 23-ին

Նշվում է Աղասի Խանջյանի ծննդյան 70-ամյակը։ Այդ առթիվ Սունդուկյանի անվան թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Ա. Խանջյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում է Ջ. Կիրակոսյանը։

Մարտի 30-ից ապրիլի 9-ը

Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատում, տեղի է ունենում ՍՄԿԿ XXIV համագումարը։ Համագումարը ներածական ճառով բաց է անում ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Վ. Պոդգորնին։

Հաստատվում է համագումարի հետևյալ օրակարգը՝

1. ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը. զեկուցող՝ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնև։

2. ՍՄԿԿ Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը. զեկուցող՝ Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Գ. Ֆ. Սիդով։

3. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թթ. հրնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները։ Զեկուցող՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգին։

4. Կուսակցական կենտրոնական մարմինների ընտրություններ։

Լ. Ի. Բրեժնևի զեկուցումից

«...Կոմունիստական շինարարության ուղիով մեր հասարակության առաջընթացի համեմատ աճում է գրականության և արվեստի դերը՝ սովետական մարդու աշխարհայացքի, նրա բարոյագիտական համոզմունքների և հոգևոր կուլտուրայի ձևավորման մեջ։ Ուստի բնական է, որ կուսակցությունը մեծ ուշադրություն է նվիրել և նվիրում մեր գրականության և մեր արվեստի գաղափարական բովանդակությանը, այն դերին, որ նրանք խաղում են հասարակության մեջ։ ...Մեծ գոհունակություն է պատճառում այն փաստը, որ գրականության և արվեստի բեղմնավոր զարգացում է տեղի ունենում մեր բոլոր հանրապետություններում, ՍՍՀՄ ժողովուրդների տաղանդավոր լեգուներով, ազգային ձևերի վառ բազմազանությամբ։

...Սակայն չի կարելի ասել, թե գեղարվեստական ստեղծագործության բոլոր բնագավառներում ամեն ինչ բարեհաջող է, մանավանդ՝ ստեղծվող երկերի որակի առումով։

...Գրականության և արվեստի գործիչները գտնվում են գաղափարական սուր պայքարի տեղամասերից մեկում։ ...Եթե գրողը զրպարտում է սովետական իրականությունը, մեր գաղափարական հակառակորդներին օգնում է պայքարելու սոցիալիզմի դեմ, ապա նա արժանի է լոկ մեկ բանի՝ հասարակական արհամարհանքի։

...Մենք կողմնակից ենք ուշադիր վերաբերմունքին ստեղծագործական որոնումների նկատմամբ, ձիրքերի և տաղանդների անհատականության լիակատար բացահայտմանը, սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հիման վրա մշակվող ձևերի ու ոճերի բազմազանությանն ու հարստությանը»։

«Գրական թերթ», № 14

Համագումարում ճառերով հանդես են գալիս գրողներ Մ. Շոլոխովը և Ա. Զակովսկին։

Մ. Շոլոխովի ճառից

«...Մեր գրականությունը ամենագաղափարական գրականությունն է... Մեր գրականության մեջ ներկայումս շատ է խոտանը։ Իսկ ո՞վ, եթե ոչ հրատարակչության կամ ամսագրի աշխատողը պետք է լինի վատ գրքի ճանապարհը փակող առաջին արգելակը։ Գրական քննադատությունը պետք է վերջ տա լռելու պրակտիկային։ Եթե հրապարակ է գալիս վատ ստեղծագործություն՝ նրա ուղղակի պարտքն է վերլուծել և տալ գործի իսկական գնահատականը»։

«Գրական թերթ», № 15

ՍՄԿԿ XXIV համագումարի ընտրած ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը, որ տեղի է ունենում ապրիլի 9-ին, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար է ընտրում Լ. Ի. Բրեժնևին։

Մարտ

Հայաստանի գրողների VI համագումարի առթիվ «Սովետական գրականության» ամսագրի էջերում «նախահամագումարյան ամբիոն» բաժնում հանդես են գալիս Ռ. Արամյանը, Կ. Սիմոնյանը, Լ. Դուրյանը, Ն. Ադալյանը, Բ. Հովսեփյանը, Ստ. Թոփչյանը (№ 3) Ս. Խանզադյանը, Ա. Արաքսմանյանը, Մ. Մանուկյանը, Շ. Տատուրյանը, Ա. Սարոյանը, Ռ. Աթայանը (№ 4), Գ. Բորյանը, Ստ. Ալաջաջյանը, Ա. Սահինյանը, Լ. Հուրունցը (№ 5)։

«Գարուն» ամսագրի մարտյան համարը նվիրվում է ուկրաինական գրականությանը։

Հայկական ՍՍՀ պետական մրցանակները շնորհվում են Գեղամ Սարյանին՝ «Քրիզանթեմ» ժողովածուի համար և Վախթանգ Անանյանին՝ մանկապատանեկան ստեղծագործությունների համար։

Ապրիլի 5-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ս. Հարությունյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Ապրիլի 14-ին

Վախճանվեց բանաստեղծ և թատերագիր Գուրգեն Բորյանը (ծնվ. 1915 թ.)։

Ապրիլի կեսերին

ՀՍԳ միությանը կից քննադատների բաժանմունքի նիստում ծավալվում է բանավեճ Ս. Աղաբաբյանի՝ «Գարուն» (1970, № 10) և «Դրուժբա նարոդով» ամսագրերում տպագրված «Քննադատությունը հայելու առաջ» հոդվածի շուրջը, որին մասնակցում են Հ. Մկրտչյանը, Շ. Թորոսյանը, Հր. Թամրազյանը, Լ. Հախվերդյանը և ուրիշներ։

Լենինականում տեղի է ունենում քաղաքի և մոտակա գյուղերի սկսնակ ու երիտասարդ գրողների փնջային միավորման առաջին խորհրդակցությունը։ Խորհրդակցությունը բացում է Շ. Թորոսյանը։ «Գրականության քաղաքացիականությունը» թեմայով զեկուցում է Ստ. Թոփչյանը, զեկուցումներ են կարդում նաև Կ. Դուրգարյանը, Ալ. Թոփչյանը։

Ապրիլի 27-ին

Հրաչյա Ղափլանյանին շնորհվում է ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում։

Ապրիլ

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 4) տպագրվում են Գ. Էմինի բանաստեղծությունները և Ա. Արիստակեսյանի հարցազրույցը նրա հետ։

ՀՍԳ միության վարչության նախագահության նիստում լսվում է Էդ. Թոփչյանի զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների և գրողների առջև դրված խնդիրների մասին։

Մայիսի 7-ին

Վրացական ՍՍՀ-ի 50-ամյակի առթիվ «Գրական թերթը (№ 19) էջեր է հատկացնում վրաց գրականությանը։

Մայիս

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 5) տպագրվում են նյութեր Սովետական Վրաստանի 50-ամյակի առթիվ։

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 5) տպագրվում են Վ. Դավթյանի ստեղծագործությունները և Կ. Ստեփանյանի հարցազրույցը նրա հետ։

Հունիսի 1—3-ը

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերի դահլիճում տեղի է ունենում Հայաստանի գրողների VI համագումարը։ Բացման խոսք է ասում Գ. Սարյանը։

Հաստատվում է համագումարի հետևյալ օրակարգը.

1. Կոմունիստական շինարարությունը և գրականության հիմնական խնդիրները (ՀՍԳ միության վարչության հաշվետու զեկուցումը. զեկուցող՝ Էդ. Թոփչյան)։

Հարակից զեկուցումներ.

Սովետահայ պոեզիան (Վ. Մնացականյան), սովետահայ արձակը (Ս. Սարինյան), սովետահայ դրամատուրգիան (Լ. Հախվերդյան)։

2. Հայաստանի գրողների միության վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը (զեկուցող՝ Ա. Դարբնի)։

3. Հայաստանի գրողների միության ղեկավար օրգանների և ՍՍՀՄ V համագումարի պատգամավորների ընտրություններ։

Ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Պ. Սևակը, Ս. Արզումանյանը, Կ. Սիմոնյանը, Ա. Սարոյանը, Հր. Հովհաննիսյանը, ՍՍՀՄ գրողների վարչության քարտուղար՝ Ա. Սուրկովը, Վ. Նորենցը, Հմ. Սիրասը, Ս. Հարությունյանը, Ստ. Կուրտիկյանը, Ռ. Արամյանը, Ա. Սահինյանը, Վ. Պետրոսյանը, Ստ. Ալաջաջյանը, Վ. Տալյանը, Շ. Թորոսյանը, Վ. Կոզաչենկոն (Ուկրաինա), Բ. Ժղենտին (Վրաստան), Մ. Սուլեյմանովը (Ադրբեջան), Յու. Սիպակովը (Բելոռուսիա), Ս. Սեյիդովը (Ղազախստան), Բ. Ռասոն (Տաջիկըս-

տան), Ս. Սողոմոնյանը (Երևանի կայազորի մարտիկների անունից), Մ. Դավթյանը, Թ. Թուլախոջաևը (Ուզբեկստան), Շ. Բորչակովը (Թուրքմենիա), Մ. Չակլայսը (Լատվիա), Ս. Օմուրբաևը (Կիրգիզիա), Վ. Գրոսը (Էստոնիա), Լ. Շլիպախինան (Լենինգրադ), Ս. Վանդեյան (Մոլդավիա), Կ. Սայան, (Լիտվա), սփյուռքահայ գրողներ Ա. Դարյանը (Լիբանան), Ա. Արարատը (Սիրիա)։

Գ. Սարյանի բացման խոսքից

«Մեր համագումարը տեղի է ունենում այն օրերին, երբ դեռ շարունակվում է այն մեծ ոգևորությունը, որ առաջ են բերել ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները...։ Մեր համագումարը տեղի է ունենում նաև այն օրերին, երբ դեռ թարմ են մեր ազգային վերածննդի՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու հիսնամյա հոբելյանի անջնջելի տպավորությունները։ ...Ես կարծում եմ, որ մեր կյանքում տեղի ունեցած այդ մեծ ու շքեղ երևույթների առաջացրած ոգևորությունը կփոխանցվի նաև Հայաստանի գրողների VI համագումարին և մենք մեր գրականության անցյալ նվաճումների հպարտությամբ ու գալիք մեծարժեք ստեղծագործությունների երաշանքներով կանցկացնենք մեր համագումարը, քննության առարկա դարձնելով մեր գեղարվեստական գրականության հրատապ խնդիրները։

Թանկագին ընկերներ, մեր գրականության առաջ ծառացած են մի շարք լուրջ և կարևոր խնդիրներ։ Այդ խնդիրների կատարումը պարտավորեցնում է մեր արձակագիրներին, դրամատուրգներին, բանաստեղծներին՝ ավելի ու ավելի լարել իրենց ուժերը և գեղարվեստական մարմնավորում տալ այն թեմաներին, որոնք առաջադրում է մեզ կյանքը։

Այսօր այդ թեմաներից ամենաառաջնակարգը մեր կյանքը կառուցող աշխատավոր մարդկանց գեղարվեստական դիմանկարներ կերտելու խնդիրն է։ Մեր գրողների երկերում հաճախ են պատկերվել բանվորներ, ինժեներներ, գյուղատնտեսության աշխատողներ, մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ։ Բայց երբ նորից ու նորից այս հարցը առաջ է քաշվում, այդ նշանակում է, որ եղածը իր որակով դեռ չի բավարարում մեր խստապահանջ ընթերցողների պահանջները»։

«Գրական թերթ», № 23

Հայաստանի սովետական գրողների VI համագումարի բանաձևից

«...Սովետահայ գրականությունը առաջ է գնացել, ձեռք բերելով նոր ստեղծագործական նվաճումներ, գրականության մեջ ներգրավելով նոր անուններ։

...Սովետահայ գրականության մեջ այժմ լուրջ փորձեր են արվում ոչ թեառանձին երկերով, այլ լայն ընդգրկումով անդրադառնալու արդիականության մեծ թեմային։ Պետք է ողջունել այն գրողներին և այն երկերը, որոնք առաջ

են քաշում այսօրվա կենսական հարցերը, պատկերում են մեր օրերի և մեր շրջապատի կյանքը, գրականության մեջ են բերում Հայաստանի սոցիալիստական վերափոխումների պատկերը, մեր ժամանակի հերոսին, աշխատանքի մարդուն, խաղաղ օրերի ճշմարիտ հայրենասերի՝ կոմունիզմ կառուցողի կերպարը։

...Սովետահայ գրողները պիտի է՛լ ավելի մերձենան և լավագույնս ճանաչեն սփյուռքահայ իրականությունը։ Սփյուռքահայ գրականության բախտը պետք է մտահոգի ամեն մի սովետահայ գրողի։ Այդ իմաստով ոչ միայն պետք է շարունակել սովետահայ և սփյուռքահայ գրականության մերձեցման գործը, այլև ավելի կազմակերպված ու նպատակասլաց, հաճախակի դարձնել այդ երկու հատվածների գրողների փոխայցելությունները։

...Սովետահայ գրողները վստահությամբ են նայում իրենց ապագա գործին։ Մշտապես զգալով կուսակցության և կառավարության հոգատարությունը և աջակցությունը, գրողները լեցուն են հայրենիքին և ժողովրդին ազնվորեն ծառայելու վճռականությամբ»։

«Գրական թերթ», № 25

Հունիսի 2-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ալեքսանդր Արաքսմանյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հունիսի 4-ին

ՀՍԳ միության նորընտիր վարչության պլենումը ՀՍԳ միության առաջին քարտուղար է ընտրում Էդ. Թոփչյանին, երկրորդ քարտուղար՝ Հր. Հովհաննիսյանին, քարտուղարներ՝ Ստ. Ալաջաջյանին, Լ. Կարագյոզյանին։

Հունիսի 17-ին

Ավտովթարի զոհ դարձան մեծ բանաստեղծ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր Պարույր Սևակը (Ղազարյան, ծնվ. 1924 թ.) և նրա կինը՝ բանասեր-թարգմանչուհի Նելլի Մենաղարաշվիլին։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 26) տպագրել է մի շարք նյութեր։

«Սիրելի Պարույր.

Այսպիսի վիշտ, գոնե կյանքիս վերջին տարիներին, ես չէի ապրել։ Չէի էլ պատկերացնում, թե ի՞նչն այլևս կարող էր ինձ այսքան ցնցել...

Դու ընդամենը անհատ էիր, բայց ինչպիսի՞ անհատ։ Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում ու բնության ուժն է բերում ժողովրդին։ Եվ սիրում էինք քեզ, որովհետև չենք կարող բնությունը չսիրել։

Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջոցով երգեր իր ցավն ու ուրախությունը։ Այդպիսի անհատների՝ ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանցից։

Պարույր, սիրելի՛ զավակս, դու շատ լավ գիտեիր այս բոլորը, որ դու

միայն քոնը չես։ Դա պիտի դիտակցեն շատերը, դա պիտի լինի մեր առաքելությունը, մեր մտածողության արմատը։ Եվ ճակատագիրը այդքան դաժան չպիտի լիներ քո հանդեպ, ժողովրդի հանդեպ։

Հունիսի 20-ին ես մտքով քեզ հետ էի, ժողովրդի հետ և տեսնում էի ինչ էր կատարվում աշխարհից հեռու, մեր հեռու սարերի դրկում։ Իր մեջ մայր բնությունը, նրա ստեղծող ոգին, վատի դեմ ըմբոստ ու միշտ բարի բնավորությունը խտացնող, հողից եկած մի բեկոր էր ժողովուրդը հանձնում հողին։ Դա ժողովրդական ողբերգություն էր։

Ես ականատես եմ եղել մեր ժողովրդի ճակատագրական ողբերգություններին, շատ դառն օրերին։ Եվ եթե ես դեռ կամ այսօր, իբրև միակը մայր ժողովրդի լուսավոր բախտը երազած ու վաղուց արդեն անցած իմ սերնդի, ապա թերևս նրա համար միայն, որ այլևս կորուստ չտեսնեմ։ Դու աշխարհ էիր եկել կորուստներից հետո, կորուստներ ծածկելու, ոչ թե կորուստ դառնալու։

Դու աշխարհ էիր եկել քո բնության ուժով և խորը, շատ խորը հավատում էիր այդ ուժին։ Ժողովուրդը կշարունակի հավատալ Քո հավատին։

Հիշատակդ բարի, Սեա՜ղ Պարույր։ Ժողովուրդը կսպասի Քո գալուն»։

Մարտիրոս Սարյան

«Զոհվեց Պարույր Սեակը։ Զոհվեց, ինչպես ապրեց և ստեղծագործեց՝ կայծակնային արագությամբ, ավտոմեքենայի աղետի հետևանքով։

Այդպիսիների մասին ասում են՝ «աստծո ողորմածությամբ բանաստեղծ» էր։ Սեակը բանաստեղծ էր երկնքի ողորմածությամբ, Սևանի ողորմածությամբ, սարերի հովիվների, ինքնաթիռային անքուն կրակների և մարդկային մտքի ողորմածությամբ։

Ինչպե՜ս է նա իմաստավորել Հայաստանի տեղական բնանկարը։

Ծնվելով գյուղացու հարկի տակ, իբրև հողի անկեղծ որդի, Սեակը դատապարտում էր պարզունակ, կեղծ ժողովրդականությունը։ Նա մտավ պատմության և մշակույթի մեջ, ինչպես այդի է մտնում փորձված այգեպանը։ Նրա մուսան ինտելեկտուալ էր։ Մտածող, գիտության դոկտոր, հանրապետարանային հետազոտիչ բանաստեղծն իր միտքը սուզում էր հայկական հին էպոսի խորքերը, նրբորեն զգում էր ռուսական պոեզիան, անգլերեն անգիր մեջբերումներ էր անում էլիոթից։

Նա զգայուն էր ծաղկաթերթի, բառի, զգացմունքի հանդեպ։ Զինայից իրեն։ Սեակի բանաստեղծությունները կմնան։ Նրանք շարունակում են հնչել և խորհել։ Արվեստը և պատմությունը մահվան հաղթահարումն են։ Բանաստեղծի ոգին և անհատականությունը, որ ամփոփված են բանաստեղծական քառատողերում, «ցպահանջ» հասցեագրված են միլիոնավոր ապրող և դեռ չապրող մարդկանց։ Այդ այդպես է։ Բայց բանաստեղծի ինչ-որ, դույլ և ամենահնչեղ երգը, դեռ չծնված մնաց իր հետ միասին։ Եվ ոչ մի վերահրատարակություն չի լրացնի դա։

Մենք կորցրեցինք մաքուր ձայնի տեր մեր եղբորը՝ ընկերոջը կորցրինք, մեծ, անպաշտպան շուրթերով բանաստեղծին։ Կորուստը անփոխարինելի է։ Ռուսական պոեզիան սգում է Պարույր Սեակի մահը»։

Անդրեյ Վոզնեսենսկի

Հունիսի 29-ից—հուլիսի 2-ը

Մոսկվայում, Կրեմլի մեծ պալատում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների V համագումարը։ Բացման խոսք է ասում Ն. Ս. Տիխոնովը։ Հաշվետու զեկուցումով հանդես է գալիս ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Գ. Մ. Մարկովը։ Զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Վ. Միխալկովը, Ս. Ս. Նարովչատովը, Վ. Պ. Կոզաչենկոն, Ա. Պ. Բելյաուսկասը, Մ. Տանկը, Գ. Գ. Աբաշիձեն, Օ. Ն. Շեստինսկին, Կ. Մ. Սիմոնովը, Ա. Տ. Ալիմժանովը, Մ. Ի. Իբրահիմովը, Մ. Ն. Ալեքսեևը, Վ. Մ. Օզերովը, Զ. Այթմատովը, Ու. Մ. Էսենովը, Ռ. Ի. Ռոժդեստվենսկին, Եվ. Ս. Եվտուշենկոն, Ս. Բ. Զակովսկին և շատ ուրիշներ։

Հայաստանի գրողների անունից ելույթ է ունենում Էդ. Թոփչյանը (տե՛ս «Գրական թերթ», № 30)։ Համագումարն ընդունում է բանաձև (տե՛ս «Գրական թերթ», № 28)։

Համագումարում Հայաստանի գրողների պատվիրակությունը ներկայացնում էին պատգամավորներ Ստ. Ալաջաջյանը, Աղավնին, Ա. Գրաշին, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Էդ. Թոփչյանը, Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը, Ս. Հարությունյանը, Հր. Հովհաննիսյանը, Մ. Մնացականյանը, Հ. Շիրազը, Մ. Շաթիրյանը, Վ. Պետրոսյանը, Հ. Սահյանը, Սարմենը, Գ. Սարյանը, Ա. Սարոյանը, Գր. Տեր-Գրիգորյանը։

Ն. Ս. Տիխոնովի բացման խոսքից

«Սովետական գրողները գրում են մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների լեզվով. որովհետև բոլոր ազգային մշակույթների զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմանները կյանքի են կոչել նույնիսկ այնպիսի երկրամասերի ներկայացուցիչների, ուր մինչև հեղափոխությունը չկար գրավոր գրականություն։

Կոմունիստական կուսակցության և ժողովրդայնության սկզբունքները հղել և մնում են սովետական արվեստի և գրականության անկյունաքարը։ Աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը կարող է իրավամբ հպարտանալ իր գրականությամբ։ Այդ գրականությունը լայնորեն հայտնի է ամբողջ աշխարհում։ Այդ գրականությունը առաջադեմ, հեղափոխական խոսքը տանում է բոլոր ժողովուրդներին։ Այդ գրականությունը իր հետ բերում է Սովետական Միության և սովետական մարդու մասին ճշմարտությունը։ Մնվելով հեղափոխության բոցերում, այդ գրականությունը աճել և կոփվել է որպես առաջավոր ուժ, որը խոսում է ամենազլխավորի՝ աշխարհի և մարդու վերակառուցման մասին։

Դեռևս գրողների առաջին համագումարում մեծ Մաքսիմ Գորկին ասել է, որ մեր երկրի գրողների ստեղծագործական միությունը «ստեղծվում է ոչ նրա համար, որպեսզի խոսքի վարպետներին միավորի միայն ֆիզիկապես, այլ որպեսզի պրոֆեսիոնալ միավորումը հնարավորություն տա նրանց հասկանալու իրենց կոլեկտիվ ուժը, հնարավոր պարզությամբ որոշի ուղղությունների բազմազանությունը, նրա ստեղծագործությունները, նրա նպատակային դիրքավորումը և ներդաշնակորեն հավաքի բոլոր նպատակները այն միասնության մեջ, որը ղեկավարում է երկրի ամբողջ աշխատանքային-ստեղծա-

գործական էներգիան»։ Այն ժամանակ էլ Մաքսիմ Գորկին սովետական գրականությունը անվանեց «սոցիալիստական մշակույթի հզոր զենք»։

Մենք կարող ենք միայն ավելացնել, որ այն ժամանակից ի վեր այդ «հզոր զենքը» դարձել է ավելի մեծ, ավելի հզոր, լիովին արդարացվել են մեր մեծ բարեկամի և ուսուցչի խոսքերը։

Եվ ահա այսօր մենք հավաքվել ենք մեր հինգերորդ համագումարին, որպեսզի քննադատաբար վերհիշենք վերջին չորս տարում մեր գրականության անցած ուղին։ Սովետական գրականության կոլեկտիվ փորձը վկայում է, որ նախորդ համագումարներում հաջողությամբ լուծվել են գրական մեծ խնդիրներ։ Այս իմաստով մենք մեր մեջ զգում ենք նոր ուժեր նման լուծումների համար։ Գուցե մեր մեջ խոսում է սովետական բազմազգ գրականության զարգացման ավելի քան կես դարի ընթացքում կուտակված փորձի իմաստությունը։ Մենք հարթ ճանապարհ չենք ընտրում, լավ իմանալով, որ գրականությունը ոչ թե ասֆալտապատ ճանապարհ է, այլ ամենահնարավոր դժվարությունների հաղթահարում և առաջխաղացում այդ հաղթահարման միջոցով։

Այդ պատճառով էլ մեր այսօրվա խոսակցությունն այն մասին, թե ինչ է կատարվում գրական աշխարհում, չի կարող և չպետք է լինի ձանձրալի ու հարթ։ Այդ խոսակցությունը պետք է կազմված լինի մաքերի աշխույժ փոխանակությունից, պետք է լինի լուրջ, բազմազան, պահանջկոտ, արդյունավետ»։

Հուլիսի 2-ին տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության պլենումը։ ՍՍՀՄ գրողների միության վարչության նախագահ է ընտրվում Կ. Ա. Ֆեդինը, վարչության առաջին քարտուղար՝ Գ. Մ. Մարկովը։

Հունիս

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 6) տպագրվում են Հ. Շիրազի բանաստեղծությունները և Ղ. Հայրապետյանի հարցազրույցը նրա հետ։

Հուլիսի 9-ին

Նշվում է Քրիստափոր Թափալչյանի ծննդյան 60-ամյակը։

Հուլիսի 7-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գրականագետ Կամսար Գրիգորյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գրականության և արվեստի մի խումբ գործիչներ պարգևատրվում են շքանշաններով և մեդալներով։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվում են Վ. Նորենցը, Գ. Բեսը, Զ. Դարյանը, «Պատվո նշան» շքանշանով՝ Մ. Շաթիրյանը, Սբ. Ավագյանը, Վ. Պետրոսյանը, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով՝ Վ. Արամյանը, «Աշխատանքային արիության համար» մեդալով՝ Արաքսը։

Հուլիսի 14-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով էդվարդ Թոփչյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Աղավնին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հուլիսի 17-ին

Վախճանվեց բանաստեղծ Սողոմոն Տարոնցին (Մովսիսյան, ծնվ. 1905 թ.)։

Հուլիսի 18-ին

Գանձայում, Վ. Տերյանի տուն-թանգարանի բակում, տեղի է ունենում պոեզիայի օր։ Ելույթ են ունենում Ս. Արզումանյանը, Ռ. Իշխանյանը, Ռ. Դավոյանը, Ն. Միքայելյանը, բանաստեղծի դուստր Ն. Տերյանը և ուրիշներ։

Հուլիսի 26-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, թարգմանիչ Սերգո Պայազատը (ծնվ. 1909 թ.)։

Օգոստոս

«Գարուն» ամսագրի օգոստոսյան համարում տպագրվում է Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» թատերգությունը։

Սեպտեմբերի 15-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Արամաշոտ Պապայանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

ՀՍԳ միության կուսակազմակերպության ժողովում «ՍՍՀՄ գրողների միության V համագումարի արդյունքները և սովետահայ գրողների խնդիրները» զեկուցումով հանդես է գալիս Հր. Հովհաննիսյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Ժ. Ավետիսյանը, Էդ. Թոփչյանը, Ա. Սարոյանը, Հմ. Սիրասը, Ժ. Հարությունյանը, Մ. Օվչիննիկովը, Վ. Տալյանը։

Սեպտեմբերի 21-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության քննադատների բաժանմունքի նիստը։ Նիստը բաց է անում Էդ. Թոփչյանը։ Նա խոսում է քննադատության դերի և այն խնդիրների մասին, որոնք բխում են ՍՄԿԿ XXV համագումարի և ՍՍՀՄ գրողների V համագումարի որոշումներից։ Ելույթ են ունենում Ս. Սարինյանը, Լ. Մկրտչյանը, Ա. Ոսկերչյանը, Պ. Սահակյանը։ Ընտրվում է քննադատների բաժանմունքի նոր բյուրո։ Բյուրոյի նախագահ է ընտրվում Ս. Սարինյանը, տեղակալ՝ Պ. Սահակյանը։

Սեպտեմբեր

Հայաստանի Լենինյան կոմերիտմիության մրցանակը շնորհվում է Ռաֆ-միկ Դավոյանին։

«Գարուն» ամսագրի սեպտեմբերյան համարում տպագրվում է Պ. Սևակի «Հավատարմությունը սրտի արատ չէ» պոեմը։

Հոկտեմբերի 15—22-ը

ՀամԼԿԵՄ կենտկոմի և ՍՍՀՄ գրողների միության նախաձեռնությամբ Երևանում անցկացվում է եղբայրական հանրապետությունների երիտասարդ բանաստեղծների 5-րդ փառատոնը՝ նվիրված ՀամԼԿԵՄ 50-ամյակին։ Մասնակցում են ավելի քան 50 բանաստեղծներ։ Փառատոնի հանդիսավոր բացումը տեղի է ունենում Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում։ Երիտասարդական պոեզիայի հարցերին նվիրված զեկուցումով հանդես է գալիս «Մոլոդայա գվարդիա» հրատարակչության գլխավոր խմբագիր Վ. Օսիպովը։ Ելույթ է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Մ. Լուկոնինը։ Հաջորդ օրերին տեղի են ունենում սեմինար պարապմունքներ, որոնք ղեկավարում են բանաստեղծներ Իլյա Ֆրենկելը, Միխայիլ Լվովը, Մայա Ռումյանցևան, Վիկտոր Կոչետկովը, Յակով Խելեմսկին, Մարկ Մաքսիմովը։

Նոյեմբերի 4-ին

ՀՍԳ միության արձակագիրների բաժանմունքի նիստում քննարկվում է Հ. Մկրտչյանի «Անհայտ զինվորի հիշատակարանը» վեպի երկրորդ և երրորդ մասերի ձեռագիրը։ Զեկուցում է Մ. Սարգսյանը։

Նոյեմբերի 5-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Գրիգոր Քեշիշյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակները շնորհվում են Վադիմ Կոժևնիկովին («Հատուկ ստորաբաժանում» և «Պյոտր Ռյաբինկին» վիպակների համար), Ալեքսանդր Տվարդովսկուն («Այս տարիների քնարերգությունից» բանաստեղծական ժողովածուի համար), Լևոնիդ Ագրանովիչին («Մեղադրվում է սպանության մեջ» կինոնկարի սցենարի համար), Սերգեյ Գերասիմովին ու Վասիլի Շուկշինին («Լճի մոտ» կինոնկարի համար)։

Նոյեմբերի 11-ին

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում նշվում է Ֆ. Մ. Դոստոևսկու ծննդյան 150-ամյակը։ Նիստը բաց է անում Էդ. Թոփչյանը, զեկուցում է Պ. Սահակյանը։

Նոյեմբերի 19-ին

Նշվում է Դանթեի մահվան 650-ամյակը։

Նոյեմբերի 24-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Բաբկեն Կարապետյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Նոյեմբերի 26-ին

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում նշվում է Ն. Նեկրասովի ծննդյան 150-ամյակը։

Երևանի պետական համալսարանի, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գրականագիտության ու լեզվի բաժանմունքի և Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի նախաձեռնությամբ Երևանում անցկացվում է «Նեկրասովը և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը» թեմայով համամիութենական կոնֆերանս։ Կարդացվում են ավելի քան 50 զեկուցում և հաղորդում։

Նոյեմբեր

«Գարուն» ամսագրի նոյեմբերյան համարում տպագրվում են Ավետիք Իսահակյանի նորահայտ նամակները։

Դեկտեմբերի 10-ին

Նշվում է Խորեն Սարգսյանի ծննդյան 80-ամյակը։

Դեկտեմբերի 17-ին

Նշվում է Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակը։

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 12) տպագրվում են Հր. Հովհաննիսյանի բանաստեղծությունները և Ա. Արիստակեսյանի հարցազրույցը նրա հետ։

1971 թ. Բուլղարիայում լույս են տեսնում Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը, Ե. Չարենցի «Հատընտիրը», Մ. Շահինյանի «Հիդրոցենտրալ» և Պ. Զեյթունցյանի «Կլոդ Ռոբերտ Իզերլի» ստեղծագործությունները։

1971 թ. Նոբելյան մրցանակը գրականության բնագավառում շնորհվում է չիլիացի գրող Պաբլո Ներուդային։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Աղասյան Վ. — Մայրամուտի շողերով
Խաչունց Ա. — Սպասիր մի քիչ

Հակոբյան Մ. — Աշնան ծառուղի
Հարությունյան Ս. — Իմ պատուհանը
Հովհաննիսյան Հր. — Բանաստեղծություններ, հ. 1
Միրիջանյան Լ. — Դեպի ծով
Նորենց Վ. — Երկերի ժողովածու, հ. 1
Շիրազ Հ. — Բիբլիական
Սարյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 4
Սևակ Պ. — Ձեր ծանոթները
Վահյան Վ. — Մատյան սիրո և մորմոքի

Արձակ

Այվազյան Ս. — Կա և հետմահու կյանք
Անանյան Վ. — Երկեր, հ. 6
Ավագյան Աբ. — Հարավային տենդ
Ավագյան Էդ. — Կախարդական աշխարհ
Արմեն Մ. — Երկեր, հ. 1
Բալայան Վ. — Մշուշը ցրվում է
Բեռ Գ. — Ծնունդ
Գյուլնազարյան Խ. — Նոանի
Դևկանց Ա. — Կեսգիշերից լուսաբաց
Ռոթովենց Վ. — Կապույտ ծաղիկներ (ռուսերեն)
Խալափյան Զ. — Երիցուկի թերթիկներ։ Ձեր դիմանկարը
Նանզադյան Ս. — Մխիթար սպարապետ (ռուսերեն), Մոսկվա
Խեչումյան Վ. — Գիրք լինելության, գիրք 2
Հովսեփյան Բ. — Դու հասկացա՞ր ինձ
Մելքոնյան Հ. — Քարավան
Քոչար Հր. — Երկերի ժողովածու, հ. 6

Դրամատուրգիա

Դարյան Զ. — Հանրապետության նախադահը

Ժողովածուներ

Ավետիք Իսահակյանի մասին (հուշերի ժողովածու)
Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը
Հայկական նովելներ
Հրեղեն ձին (հայ ժողովրդական հեքիաթներ, լիտվերեն), Վիլնյուս
Ձայն համշենական
Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1

Դասականներ

Առաքել Բաղիշեցի — Ուսումնասիրություն, քննական բնագրեր
Արիստակես Լաստիվերտցի — Պատմություն
Դուրյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 1
Եղիշե — Վարդանի և հայոց պատերազմի մասին

Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի
Ծատուրյան Ա. — Գրչի հանաքներ
Կուրղինյան Շ. — Բանաստեղծություններ
Հովհաննիսյան Հովհ. — Հատընտիր
Նալբանդյան Մ. — Մինին՝ խոսք, մյուսին՝ հարոն
Նար-Դոս — Երկերի ժողովածու, հ. 5
Շիրվանզադե Ա. — Երկեր, գիրք 1, 2
Շիրվանզադե Ա. — Ընտիր երկեր (աղրբեջաներեն), Բաքու
Սունդուկյան Գ. — Պեպո
Բաֆֆի — Սամվել (ռուսերեն)

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 5
Աղաբաբյան Ս. — Ակսել Բակունց
Աղայան Էդ. — Դրվագներ Արևելքի գրականության պատմության
Ասմարյան Լ. — Վահան Թեքեյան
Առաքելյան Գ. — Գրականություն՝ ծնված պարբերական մամուլում
Ավդալբեկյան Մ. — Հայ դեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար)
Արիստակեսյան Ա. — Բանաստեղծների և բանաստեղծության մասին
Գյուլնազարյան Խ. — Հայ քննադատական միտքը 1920-ական թվականներին
Գրիգորյան Շ. — Հայոց հին գուսանական երգերը
Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվածների ժողովածու)
Թամրազյան Հր. — Պոեզիան պատմության քառուղիներով
Թամրազյան Հր. — Տաղանդի ծնունդը (Շիրվանզադեի կյանքից)
Թուփչյան Ստ. — Բաֆֆու էսթետիկական հայացքները
Կարինյան Ա. — Հովհաննես Թումանյան
Հակոբյան Գ. — Ներսես Լամբրոնացի
Հախումյան Տ. — Գրական ակնարկներ և հիշողություններ (ռուսերեն)
Մահարի Գ. — Այս հմուտ, հանճարեղ լուսին
Միրզաբեկյան Ջ. — Մեսրոպ Թաղիադյան
Մկրչյան Մ. — Սարգիս Ապուշեխցի
Սալախյան Հ. — Դասականներ և ժամանակակիցներ
Տեր-Մինասյան Ե. — Պատմա-բանասիրական հետազոտություններ
Տերտերյան Ա. — Մուրացան

Թարգմանություն

Արդամատսկի Վ. — Հատուցում
Բայրոն Ջ. — Պոեմներ
Բարուզդին Ս. — Անցածի կրկնությունը
Գոլյավկին Վ. — Վիպակներ և պատմվածքներ

Դրայդեր Թ. — Երկերի ժողովածու, հ. 7
Լիրիկական Արևելք (պարսկական դասական պոեզիա)
Ծաղկուն ճամփա (մոլդավական պատմվածքներ)
Համսուն Կ. — Պան
Մախմուդով Ն. — Մարած օջախները ծխացին
Մայակովսկի Վլ. — Այս մասին
Մոնղոլական քնար
Նեկրասով Ն. — Բանաստեղծություններ
Շեքսպիր Վ. — Մակբեթ
Չապլին Չ. — Իմ կենսագրությունը
Ռիդ. Մ. — Երկերի ժողովածու, հ. 1
Ռոլան Ռ. — Ժան Քրիստոֆ, հ. 4
Ռուսթավելի Շ. — Ալֆորիզմներ
Սարոյան Վ. — Խաղողի այգի
Սիմոնով Կ. — Ողջերն ու մեռածները
Տուրգենև Ի. — Մումու
Քրիստի Ա. — Արևելյան ճեպընթացը
Օստրովսկի Ն. — Փոթորկածիններ

1972

Հունվարի սկզբին

Մոսկվայում, գրողների տան դահլիճում, ՍՍՀՄ գրողների միության վարչության և ՀամՀԿՄ կենտկոմի նախաձեռնությամբ տեղի է ունենում «Գարուն» ամսագրի ընդլայնված քննարկումը։ Հաղորդմամբ հանդես է գալիս ամսագրի գլխավոր խմբագիր Վ. Պետրոսյանը, զեկուցում է Ս. Դայսարյանը։ Ելույթ են ունենում Ա. Դիմշիցը, Ա. Պետրոսյանը և ուրիշներ։ Քննարկումը ամփոփում է հայ գրականության խորհրդի նախագահ Վ. Լիդինը։

Տեղի է ունենում ՀՍԳ միության դրամատուրգների բաժանմունքի նիստը, որը քննության է առնում «Դրամատիկական երկերի տպագրությունը «Հայաստան» հրատարակչությունում» հարցը։ Զեկուցում է Գ. Բեսը, ելույթ են ունենում Գր. Տեր-Գրիգորյանը, Ա. Արաքսմանյանը, Վ. Հարությունյանը, Ա. Բարսեղյանը և Ա. Շահինյանը։

Հունվարի 14-ին

ՀՍԳ միության վարչության քննադատների բաժանմունքի ընդլայնված նիստում լսվում է Ս. Սարինյանի զեկուցումը «Գրական քննադատության խնդիրները ՍՄԿԿ XXIV համագումարի լույսի տակ» թեմայով։ Ելույթ են ունենում Մ. Սարգսյանը, Ստ. Կուրտիկյանը, Էդ. Թոփչյանը, Ն. Մուրադյանը, Ս. Հարությունյանը, Ս. Խանզադյանը։

Հունվարի 17—22-ը

Դիլիջանում, կոմպոզիտորների ստեղծագործական տանը, տեղի է ունենում երիտասարդ գրողների և արվեստագետների սեմինար՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Հունվարի 19-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում ՀՍԳ միության և կինեմատոգրաֆիստների միության վարչությունների միացյալ պլենումը։ Պլենումը բաց է անում Էդ. Թոփչյանը։ «Գրականությունը և կինոն» թեմայով զեկուցում է Գ. Հայրյանը։ Մարքերի փոխանակությանը մասնակցում են մի խումբ գրողներ (Հմ. Սիրաս, Հր. Հովհաննիսյան, Ռ. Արամյան, Վ. Արամյան, Մ. Շաթիրյան, Լ. Կարագյոզյան) և կինոռեժիսորներ։

Հունվարի 21-ին

«Գրական թերթում» (№ 4) հրապարակվում է խմբագրական կոլեգիայի որոշումը, թերթի 1971 թ. մրցանակները Հ. Շիրազին, Ռ. Հովսեփյանին, Վ. Խեչումյանին, Ս. Աղաբաբյանին, Կ. Տոնոյանին և Ա. Յարալյանին շնորհելու մասին։

Հունվարի 23-ին

Հայաստանի գրողների միության և «Երազ» ավտոգործարանի կուսակցական սկզբնական կազմակերպությունների համատեղ ժողովում «ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները և աշխատանքի մարդու արտացոլումը սովետահայ գրականության մեջ» թեմայով զեկուցում է Ս. Մանուկյանը։ Ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, գործարանի աշխատողները։ Վերջում Վ. Կարենցը, Ա. Դրաշին, Բ. Կարապետյանը կարդում են բանաստեղծություններ։

Հունվարի 26—28-ը

Տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության պլենումը՝ նվիրված գրական քննադատության հարցերին։ Բացման խոսք է ասում Գ. Մարկովը։ «Գրական-գեղարվեստական քննադատությունը և արդիականությունը» թեմայով զեկուցում է Վ. Օզերովը։

Հունվարի 28-ին

Նշվում է Սուրեն Աղաբաբյանի ծննդյան 50-ամյակը։ «Գրական թերթում» հրապարակվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Սիրելի ընկեր.

Իբրև գրականագետ և քննադատ, դաստիարակվելով և ձևավորվելով հայ մշակույթի կենսունակ և առաջավոր ավանդույթների վրա, Դուք Ձեր ողջ ստեղծագործական կյանքը տվեցիք հայ նորագույն գրականության, առանձնապես սովետահայ գրականության պատմության լուսաբանության գործին։ Գրական և ընթերցող հասարակայնությանը ծանոթ և հայտնի են Ձեր աշխատությունները Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Ն. Զարյանի, Գ. Մահարու և այլոց մասին, Ձեր բազմաթիվ հոդվածները սովետահայ արդի պոեզիայի և արձակի մասին։

Լինելով բարձրաճաշակ ու նուրբ գրականագետ, Դուք Ձեր աշխատություններում մեծ հաջողությամբ զուգակցել եք գրականության գաղափարայնության և գեղարվեստականության անխզելի համադրություն, սովետահայ գրականությունը հարստացրել եք արժեքավոր և մնայուն գործերով։

Շնորհավորելով Ձեր 50-ամյակը, մենք Ձեզ ցանկանում ենք երկար տարիների քաջառողջություն և ստեղծագործական հաջողությունների նոր լիցք ու խանդ»։

Հունվար

ՍՄԿԿ Կենտկոմը որոշում է ընդունում «Գրական-գեղարվեստական քննադատության մասին»։ Որոշման մեջ մասնավորապես ասված է.

«...Քննադատության վիճակը դեռևս լրիվ չափով չի համապատասխանում այն պահանջներին, որոնք բխում են կոմունիստական շինարարության մեջ գեղարվեստական կուլտուրայի ունեցած հարաճուն դերից։

Բավարար խորությամբ չեն վերլուծվում սովետական գրականության և արվեստի զարգացման, սոցիալիստական ազգերի կուլտուրաների փոխհարստացման և մերձեցման պրոցեսները։ Շատ հոդվածներ, տեսություններ, գրախոսականներ մակերեսային բնույթ են կրում, փիլիսոփայական ու գեղագիտական ցածր մակարդակ ունեն, վկայում են արվեստի երևույթները կյանքի հետ համադրելու անկարողություն։ Մինչև հիմա քննադատության աս-

պարեզում հաշտվողական վերաբերմունք կա գաղափարական և գեղարվեստական խոտանի նկատմամբ, դրսևորվում են սուբյեկտիվիզմի, մտերմականության և խմբակայնության հակումներ։

...Մի շարք թերթերի և հանդեսների խմբագրություններ միշտ չէ, որ պահանջկոտ են քննադատական հոդվածների գաղափարա-տեսական մակարդակի նկատմամբ։ Էական թերություններ կան գրախոսության պրակտիկայում։ Հրապարակվող գրախոսականները հաճախ միակողմանի բնույթ են կրում, լի են անհիմն հաճոյախոսություններով, սոսկ թռուցիկ կերպով վերապատմում են ստեղծագործության բովանդակությունը, պատկերացում չեն տալիս դրա իրական նշանակության և արժեքի մասին։

...Քննադատության պարտքն է... խորապես վերլուծել արդի գեղարվեստական պրոցեսի երևույթները, միտումներն ու օրինաչափությունները, ըստ ամենայնի նպաստել կուսակցականության և ժողովրդայնության լենինյան սկզբունքների ամրապնդմանը, պայքարել սովետական արվեստի գաղափարա-գեղագիտական բարձր մակարդակի համար, հետևողականորեն հանդես գալ բուրժուական գաղափարախոսության դեմ»։

«Գրական թերթ», № 5

Փետրվարի 3-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սուրեն Աղաբաբյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ռաֆայել Արամյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Փետրվարի 15-ին

ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված Խորեն Սարգսյանի ծննդյան 60-ամյակին։ Բացման խոսք է ասում Վ. Մնացականյանը։ Ելույթ են ունենում Ա. Ինճիկյանը, Մ. Ավդալբեկյանը, Ռ. Ջարյանը։

Փետրվարի 16-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով դրամատուրգ Մելիք Քոչարյանը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Փետրվարի 18-ին

ՀՍԳ միության կուսակցմակերպության ժողովում «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» որոշման առթիվ զեկուցումով հանդես է գալիս Ս. Խանզադյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Հարությունյանը, Հ. Սահյանը, Էդ. Ռուբչյանը և ուրիշներ։

Փետրվարի 23-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Կ. Ֆեդինը ծննդյան 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Կ. Ֆեդինի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ «Գրական թերթում» (№ 9), տպագրվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Թանկագին Կոնստանտին Ալեքսանդրովիչ.

Հայաստանի գրական կազմակերպությունը և գրական հասարակայնությունը, Ձեր անթառամ, նուրբ և հիանալի տաղանդի երկրպագուները ամբողջ սրտով շնորհավորում են Ձեզ՝ սովետական հրաշալի գրողին, կենդանի դասականին, հասարակական և գրական խոշոր գործչին, սովետական ավագագույն գրողին, սովետահայ գրականության մեծ բարեկամին՝ փառապանած հոբելյանի առթիվ։

...Թանկագին Կոնստանտին Ալեքսանդրովիչ, Հայաստանում սիրում և գնահատում են Ձեզ, ուշի-ուշով հետևում են Ձեր գրքերին, համամիութենական գրական կազմակերպության Ձեր անխոնջ գործունեությանը։ ...Դուք, որպես մեծ և նուրբ արվեստագետ, որպես կրքոտ հայրենասեր և հիանալի մարդ, համընդհանուր սեր և հարգանք եք վայելում»։

Փետրվարի 23—24-ը

Ալավերդիում և Դսեղում ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ ՀՍԳ միության վարչությունը կազմակերպում է պոեզիայի երեկոներ, որոնց մասնակցում են Ս. Շերվինսկին (Մոսկվա), Մ. Բարաթաշվիլին և Լ. Սուլաբերիձեն (Վրաստան), Մ. Ռահիմը և Ս. Մեխիտիևը (Ադրբեջան), Հր. Հովհաննիսյանը, Սարմենը, Մ. Սարգսյանը, Վ. Կարենցը և Լ. Դուրյանը։

Փետրվարի 24-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Համայակ Սիրասը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Այդ առթիվ արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո։ Երեկոն բաց է անում Ստ. Ալաջաջյանը, ղեկուցում է Մ. Նահապետյանը։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով բանաստեղծ Հենրիկ Թումանյանին շնորհվում է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Փետրվարի 29-ին

Արվեստի աշխատողների տանը գումարվում է ՀՍԳ միության վարչության երրորդ պլենումը։ Բացման խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ «ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը գրական-գեղարվեստական քննադատության մասին» զեկուցումով հանդես է գալիս Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ստ. Կուրտիկյանը, Հր. Թամրազյանը, Վ. Մկրտչյանը, Վ. Պետրոսյանը, Էդ. Ջրբաշյանը, Ս. Հարությունյանը, «Լիտերատուրնայա գազետա» թերթի գլխավոր խմբագիր Ա. Զակովսկին։

Փետրվար—մարտ

Նշվում է «Գրական թերթի» հիմնադրման 40-ամյակը։ Այդ առթիվ փետրվարի 24-ի հրամանագրով թերթը պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։ Թերթի № 10 և № 11-ում հրապարակվում

են «Լիտերատուրնայա գազետա», «Լիտերատուրուլի Սաքարթվելո», «Ադաբիյաթ վա ինչանաթ» թերթերի խմբագրությունների ողջույնի հեռագրերը և տարբեր հոդվածներ։ Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո։ Բացման խոսք է ասում Էդ. Թոփչյանը։ Թերթի անելիքների և առաջիկա խնդիրների մասին զեկուցում է Ս. Հարությունյանը։ Թերթի անցած 40-ամյա ճանապարհի մասին են խոսում նրա նախկին խմբագիրներ Հ. Մկրտչյանը, Վ. Մնացականյանը, Հր. Հովհաննիսյանը, Մ. Սարգսյանը, Վ. Դավթյանը։

Մարտի 13-ին

Նշվում է Ե. Չարենցի ծննդյան 75-ամյակը։

Մարտի 15—17-ը

Ե. Չարենցի ծննդյան 75-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանում անցկացվում են չարենցյան ընթերցումներ։ Զեկուցումներով հանդես են գալիս Ա. Ինճիկյանը («Չարենցը և Իսահակյանը»), Էդ. Ջրբաշյանը («Գորկու «Վալախական լեգենդի» թումանյանական և չարենցյան թարգմանությունների տաղաչափական համեմատությունը»), Հր. Թամրազյանը («Չարենցի մահվան տեսիլները»), Ա. Զաքարյանը («Ե. Չարենցի բանաստեղծական մոտիվը»), Ս. Աղաբաբյանը («Չարենցը և հեղափոխությունը»), Ռ. Իշխանյանը («Չարենցի լեզվի ուղին»), Վ. Գաբրիելյանը («Չարենցի արտասահմանյան ուղևորությունը»), Հ. Ֆելիքյանը («Չարենցը և մամուլը»), Ժ. Քալանթարյանը («Երկիր Նաիրի» վեպի առանձնահատկությունները), Գ. Անանյանը («Չարենց և Մայակովսկի»), Լ. Մկրտչյանը («Չարենցը Տարկովսկու թարգմանությամբ»), Կ. Աղաբեկյանը («Մահարու «Մրգահասը» Չարենցի գնահատմամբ»)։

Մարտի 29-ին

ՀՍԳ միության կուսակցական կազմակերպության ժողովում «Սովետական գրականության թարգմանության և հրատարակության վիճակը» զեկուցումով հանդես է գալիս Հր. Հովհաննիսյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Խանդադյանը, Ս. Հարությունյանը, Ա. Պողոսյանը, Բ. Կարապետյանը, Վ. Կարենցը։

Ապրիլի 14-ին

Նշվում է Զարզանդ Դարյանի ծննդյան 60-ամյակը։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակներ են շնորհվում Իվան Մելեժին («Ճանճուտի մարդիկ», «Ամպրոպի շունչը» վեպերի համար), Մարիետա Շահինյանին («Որդու ծնունդը» «Ուլյանովների ընտանիքը», «Առաջին համառուսաստանյանը», «Պատմության հարցատոմսը», «Չորս դաս Լենինից» գրքերի համար), Ագնիա Բարտոյին («Զմեռային անտառ՝ ծաղիկ քաղելու» բանաստեղծությունների գրքի համար), Յուրի Բոնդարևին և Օսկար Էստերկին-Կուրգանովին («Աղատագրում» կինոնկարի սցենարի համար)։

Ապրիլ

Երևանի ռադիոյի տանը տեղի է ունենում ՀՍԳ միության դրամատուրգների խորհրդի նիստը, որը քննում է «Դրամատիկական հաղորդումները՝ Երևանի ռադիոյում» հարցը։ Այդ մասին զեկուցում է ռադիոյի գլխավոր ռեժիսոր Գ.

Չալիկյանը։ Ելույթ են ունենում Գր. Տեր-Գրիգորյանը, Գ. Բեսը, Ա. Պապայանը, Ա. Արաքսմանյանը, Գ. Աբաջյանը, Ա. Դարբինին, Վ. Հարությունյանը, Վ. Շողերյանը։

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 1) Ա. Ինճիկյանը հրապարակում է անտիպ էջեր Հովհ. Թումանյանի գրական ժառանգությունից։

Հանդեսի նույն համարում Ն. Տերյանը հրապարակում է Վ. Տերյանի երկու նորահայտ նամակները՝ ուղղված Ա. Միսկարյանին։

Մայիսի 5-ին

«Գրական Թերթում» (№ 19) հրապարակվում է ՍՍՀՄ գրողների միության քարտուղարության և ՍՍՀՄ ժուռնալիստների միության քարտուղարության որոշումը՝ ժամանակակից գրականության հարցերին նվիրված գրքերի, հոդվածների, տեսությունների ամենամյա համատեղ մրցանակաբաշխություն անցկացնելու մասին։

Վախճանվեց ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Լենինյան և ՍՍՀՄ մրցանակների դափնեկիր Մարտիրոս Սարյանը (ծնվ. 1880 թ.)։

Մայիսի սկզբին

ՍՍՀՄ գրողների միությունը և Հայաստանի գրողների միությունը Մոսկվայում և մերձմոսկովյան շրջաններում կազմակերպում են սովետահայ պոեզիայի օրեր։ Մասնակցում են Ս. Կապուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Ռ. Դավոյանը, Մ. Մարգարյանը, Ա. Գրաշին, Յու. Սահակյանը։ Հայ բանաստեղծները հանդիպումներ են ունենում Մոսկվայի մարզի Լենինյան շրջանի նավթի և գազի արդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտի տեխնիկական մտավորականության, Մոսկվայի գնդաձանգքակալային գործարանի բանվոր-ծառայողների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի, Մոսկվայի մարզի Լյուբերցի քաղաքի աշխատավորների, ինչպես նաև № զորամասի մարտիկների ու սպաների հետ։ Այդ հանդիպումներին հայ բանաստեղծների հետ մեկտեղ մասնակցում էին ռուս բանաստեղծ-թարգմանիչներ Ս. Շերվինսկին, Մ. Պետրովիխը, Ի. Սենեգովան, Ե. Նիկոլաևսկայան, Ս. Սորինը, Վ. Կուպրինովը, թարգմանչուհի Ա. Բայանդուրը։

ՍՍՀՄ գրողների միության գեղարվեստական թարգմանության խորհրդի պլենար նիստում ՍՄԿԿ Կենտկոմի «Գրական գեղարվեստական քննադատության մասին» որոշման լույսի տակ քննության են առնվում գեղարվեստական գրականության թարգմանության հետ առնչվող մի շարք հարցեր։ Հայաստանից ելույթ է ունենում Լ. Մկրտչյանը։

Մայիսի 14-ին

Վախճանվեց Ալեքսանդր Կորնեյչուկը (ծնվ. 1905 թ.)։

Մայիսի 26-ին

Ֆիլադելֆիա քաղաքում վախճանվեց Կարապետ Սիտալը (ծնվ. 1890 թ.)։

Մայիսի 28-ին

Թբիլիսիում, Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ, տեղի է ունենում վարդատոն։

ՀՍԳ միության թարգմանիչների բաժանմունքի հերթական նիստում Լ. Մկրտչյանը զեկուցում է հայ միջնադարյան պոեզիայի ռուսերեն նոր թարգմանությունների մասին։

Մայիս

Պրագայում չեխերեն լույս է տեսնում Պ. Սևակի «Հիմն լույսին» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն (թարգմանիչ՝ Լ. Մոտալովա)։

Հունիսի 2-ին

Նշվում է Պարույր Սահակյանի ծննդյան 50-ամյակը։

Հունիսի 5—8-ը

Վիլնյուսում տեղի է ունենում լիտվացի և հայ արձակագիրների հանդիպում-զրույց՝ նվիրված վիպագրության հարցերին։ Հայ արձակագիրներից հանդիպմանը մասնակցում են Մ. Արմենը, Ռ. Արամյանը, Պ. Զեյթունցյանը, Ստ. Կուրտիկյանը, Ռ. Աթայանը, Բ. Հովսեփյանը, Լ. Հուրունցը, Բ. Ուլուբաբյանը։

Հունիսի սկզբին

ՀՍԳ միության արձակագիրների բաժանմունքի նիստում «Սփյուռքահայ արձակը» թեմայով զեկուցում է Գ. Սևանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ստ. Կուրտիկյանը, Ստ. Ալաջաջյանը, Վ. Հարությունյանը, Բ. Հովսեփյանը։

Հունիսի 16-ին

«Գրական թերթը» (№ 25) էջ է նվիրում Պ. Սևակի մահվան տարելիցին։

Հունիսի 21-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր հոբելյանական երեկո՝ նվիրված աշուղ Ալասկյարի ծննդյան 150-ամյակին։ Երեկոն բաց է անում Ս. Խանզադյանը, զեկուցում է Ա. Երևանլին։

Հունիսի 30-ին

Վախճանվեց ականավոր պատմաբան, բանասեր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը (ծնվ. 1887 թ.)։

Հուլիսի 10-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում հայկական, վրացական և ադրբեջանական թատերական ընկերությունների համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Հուլիսի 21-ին

Նշվում է Արշակ Չոպանյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 30) տպագրում է Ա. Ինճիկյանի «Մեծ երախտավորը» հոդվածը և ասույթներ, կարծիքներ նրա մասին։

Օգոստոսի 14-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վահագն Դավթյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։ «Գրական թերթում» (№ 34) տպագրվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Սիրելի Վահագն Դավթյան.

Հայաստանի գրողների միության վարչությունը, Ձեր գրչակից ընկերները սրտանց շնորհավորում են Ձեզ՝ ծննդյան հիսնամյակի և կառավարական բարձր պարգևի արժանանալու առթիվ։

Կեսդարյա Ձեր կյանքի ամենալավ ու ամենագիտակից մասը Դուք անցաք իբրև հայրենիքի զինվոր և ժողովրդի բանաստեղծ։ Տարիների ընթացքի հետ լայնացավ Ձեր հուզական աշխարհի հորիզոնը, և Ձեր շնորհքը հարստացավ նորանոր գույներով։ Դուք չմնացիք որևէ նախասիրած թեմայի շրջանակներում, Ձեզ համար բանաստեղծական մտահոգության նյութ դարձան մեր ժողովրդի փառահեղ ներկան, նրա հերոսական անցյալը։ Դուք ստեղծագործական ոլորտի մեջ առաք Ձեր հույզերն ու խոհերը՝ դարի, աշխարհի, մարդկության մասին և ամենուրեք դրսևորեցիք ճշմարիտ տաղանդ, գրական բարձր կուլտուրա, անհատականություն։

Ձեր պոեզիան՝ բանաստեղծական հայտնի շարքերը և պոեմները լիիրավ մտնում են սովետահայ մշակույթի մնայուն դանձարանը, մեր ժողովրդի հոգևոր հարստության շտեմարանը, նշանակում է՝ Դուք հավատարիմ եք եղել ժողովրդին ծառայելու նվիրական գործին և այսօր նույն ժողովուրդն էլ երախտագիտությամբ է նշում Ձեր այդ ծառայությունը»։

Օգոստոսի 18-ին

«Գրական թերթը» (№ 34) հրապարակում է Գրիգոր Զոհրապի անտիպ նամակը՝ ուղղված խմբագիր Տիգրան Արփիարյանին։

Օգոստոս

Մոսկվայի Սոկոլնիկի զբոսայգում, ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ, տեղի է ունենում երեկո՝ նվիրված Սովետական Հայաստանին։ Երեկոյին մասնակցում են Հենր. Թումանյանը, Ս. Աղարարյանը, Ա. Սահրադյանը։

Սեպտեմբերի 1-ին

Նշվում է Հակոբ Սալախյանի ծննդյան 50-ամյակը։

Սեպտեմբերի 7-ին

Տաջիկստանում սկսվում է հայ գրականության շաբաթը։ Պատվիրակության կազմում են Աղավնին, Ս. Կապուտիկյանը, Ա. Դարբինին, Ա. Գրաշին, Գ. Էմինը, Ս. Այվազյանը, Ա. Սարոյանը, Ա. Սահակյանը, Վ. Կարենցը։ Հայ գրողները հանդիպումներ են ունենում Վախշի շրջանի «Պրավդա» կոլտնտե-

սության աշխատավորության, Կուրգան-Տյուբե քաղաքի տրանսֆորմատորների գործարանի աշխատավորության, Հանիբադամ, Խաֆարա, Լենինաբադ քաղաքների հասարակայնության, Դուշանբեի պետական համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության, Նուրեկի հիդրոկայանի շինարարների հետ։ Լենինաբադում և ամբողջ մարզում բացվում են հայ գրքի ցուցահանդեսներ։

Սեպտեմբերի 12-ին

Մինսկում սկսվում է ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների շաբաթը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Սեպտեմբերի 13-ին

Տաջիկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հայաստանի գրողների միությունը պարգևատրվում է Տաջիկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Սեպտեմբերի 21-ին

Մոսկվայում սեպտեմբերի 19—20-ը տեղի ունեցած սովետական գրականության թարգմանիչների միջազգային երրորդ հանդիպման մի շարք մասնակիցներ ժամանում են Երևան։ Ժամանածների թվում են Մ. Գյուտյանը (Անգլիա), Ք. Լեզերը և Գ. Յոնիշեն (ԳԴՀ), Ա. Ռոմերոն (Իսպանիա), Խ. Մատոսը և Պ. Դե Օրան (Կուբա), Մ. Պարեդեսը (Մեքսիկա), Լ. Սոլովը (ԱՄՆ), Գ. Քրիստիանսենը (Իսլանդիա)։ Հայաստանի գրողների միությունում տեղի է ունենում հանդիպում ժամանած հյուրերի և հայ գրողների միջև։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Պ. Տոպերը, Մ. Պարեդեսը, Ս. Կապուտիկյանը, Խ. Մատոսը, Ս. Խանզադյանը, Ստ. Ալաջաջյանը, Գ. Էմինը, Մ. Շաթիրյանը, Վ. Մկրտչյանը։

Սեպտեմբերի 22-ին

Օտարազգի անունների տառադարձման վերաբերյալ «Գրական թերթում» (№ 39) մտքերի փոխանակության կարգով տպագրվում է Լ. Հախվերդյանի «Տարակուսանքներ և առաջարկներ» հոդվածը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ռ. Իշխանյանը՝ «Լեզվական ավանդույթ և համակարգություն» (№ 43), Ռ. Ղարագյուլյանը՝ «Վերջ տալ տառադարձական անմիօրինակություններին» (№ 48), Գ. Վիրապյանը՝ «Օտարազգի անունների տառադարձման ժամանակակից էթիկական սկզբունքները» (№ 50), բանավեճը հետագայում շարունակվում է «Գրական թերթի» 1973 թ. համարներում։

Սեպտեմբերի 26—28-ը

Երևանում կայանում է պուշկինյան 22-րդ կոնֆերանսը, որը կազմակերպել էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ռուս գրականության ինստիտուտը (Պուշկինյան տուն) և Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում են Մոսկվայի, Լենինգրադի, Հայաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մոլդավիայի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Թուրքմենիայի, Էստոնիայի, Լիտվայի գրականագետներ, գրականության գործիչներ։

Սեպտեմբերի 28-ին

Հայաստանի գրողների Սևանի ստեղծագործական տանը «Ժամանակակից կյանքը լիտվական և հայկական պատմվածքում» թեմայով տեղի է ունենում ժամանակակից լիտվական և հայկական պատմվածքին նվիրված գիտաժողով։ «Նորի միտումները լիտվական պատմվածքում» թեմայով զեկուցում է Ալ. Բուիչյանը։ Քննարկվող հարցի շուրջ ելույթ են ունենում Ս. Դարոնյանը, Լ. Յացինյավիչուսը, Ռ. Արամյանը, Մ. Սլուցկիսը, Լ. Հուրունցը, Ա. Պոցյուսը, Ս. Խանզադյանը, Ռ. Լանկաուսկասը, Հր. Հովհաննիսյանը, Ռ. Յանաուսկայանն։

Սեպտեմբեր

«Գարուն» ամսագրին կից մայիս ամսից սկսում է գործել երիտասարդ գրական-քննադատների «Արձագանք» ստուդիան։ Ամենամսյա նիստերում քննարկվում են գրական ընթացիկ պրոցեսին վերաբերող հարցեր։ Առաջին նիստի նյութերը տպագրված են ամսագրի սեպտեմբերյան համարում։ Ստուդիայի հետագա նիստերի նյութերը զետեղված են ամսագրի հետևյալ համարներում (1972, № 11, 1973, №№ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 1974, №№ 3, 9)։

Հոկտեմբերի 2—3-ը

ՍՍՀՄ ԳԱ Գորկու անվան գրականության ինստիտուտում կազմակերպվում է «Սովետական գրականությունը և համաշխարհային գրական պրոցեսը» թեմայով կոնֆերանս՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Հոկտեմբերի 6-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Նոր-Այրը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Հոկտեմբերի 8-ին

Երևանում, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում, տեղի է ունենում գիտական նստաշրջան։ Նստաշրջանը բաց է անում Հր. Հովհաննիսյանը։ Զեկուցումներ են կարդում Էդ. Ջրբաշյանը («Թումանյանի հումանիզմը»), Շ. Գրիգորյանը («Թումանյանը և ժողովուրդների բարեկամությունը»), Լ. Հախվերդյանը («Թումանյան. 100» հոբելյանական տարեգրքի մասին»)։

Հոկտեմբերի 9-ին

Թբիլիսիում բացվում է համամիութենական առաջին շեքսպիրագիտական գիտաժողովը։ Հայաստանից մասնակցում է Ռ. Ջաբյանը։ Նա խոսում է Հ. Մասեհյանի թարգմանական գործունեության մասին։

Հոկտեմբերի 12-ին

Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում իր աշխատանքն է սկսում «Գեղարվեստական թարգմանությունը իբրև ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների փոխադարձ հարստացման և մերձեցման միջոց» համամիութենական գիտական կոնֆերանսը։ Կոնֆերանսը բաց է անում համալսա-

բանի ռեկտոր Մ. Ներսիսյանը, ապա հանդես է գալիս ՍՍՀՄ գրողների միության գեղարվեստական թարգմանության խորհրդի նախագահ Ե. Կալաշնիկովան։ «Սովետական բազմազգ գրականությունը և գաղափարական պայքարը արդի աշխարհում» թեմայով զեկուցում է Ալ. Դիմշիցը, «Գեղարվեստական թարգմանությունը և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների փոխադարձ հարստացումն ու մերձեցումը» հարցի մասին խոսում է Լ. Մկրտչյանը։ Կոնֆերանսում հաղորդումներով և ելույթներով հանդես են գալիս Մոսկվայի, Լենինգրադի և միութենական հանրապետությունների շատ թարգմանիչներ, տեսաբաններ, բանաստեղծներ։ Զեկուցումների և ելույթների սեղմ շարադրանքը տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1972 թ. № 3։

Հոկտեմբերի 19—25-ը

Հայաստանում սկսվում է ռուս գրականության շաբաթը, որին մասնակցում են Ա. Նարովչատովը (պատվիրակության ղեկավար), Վ. Լիդինը, Ռ. Ռոժդեստվենսկին, Ս. Կունյաևը, Վ. Բոկովը, Ս. Օստրովոյը, Գ. Բակլանովը, Յու. Կազակովը, Ս. Շուրտակովը, Վ. Շեֆները, Ե. Նիկոլաևսկայան, Ի. Սնեգովան, Լ. Վասիլևան, Ս. Վիկուլովը, Դ. Սամոյլովը, Գ. Մանասյանը, Օ. Զուխոնցևը։

Շաբաթի հանդիսավոր բացումը տեղի է ունենում Ալ. Սպենդիարյանի անվան ակադեմիական թատրոնում, ուր ելույթ են ունենում Էդ. Թոփչյանը, ՀՍՍՀ ԳԱ նախագահության գիտական քարտուղար Ս. Բակունցը, ՌՍՖՍՀ գրողների միության վարչության քարտուղար Ս. Նարովչատովը, Ռ. Ռոժդեստվենսկին, Ս. Վիկուլովը, Վ. Բոկովը, Լ. Վասիլևան։

Միջոցառումներ են անցկացվում Երևանի հիմնարկ-ձեռնարկություններում (պետական համալսարան, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարան), հանրապետության այլ քաղաքներում (Լենինական, Կիրովական, Ստեփանավան, Արտաշատ)։

Հոկտեմբերի 24-ին

Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում պոեզիայի երեկո։ Երեկոն բաց է անում Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ս. Օստրովոյը, Ի. Սնեգովան, Ե. Նիկոլաևսկայան, Ս. Կապուտիկյանը, Դ. Սամոյլովը, Օ. Զուխոնցևը, Վ. Շեֆները, Ս. Կունյաևը, Գ. Էմինը, Հ. Շիրազը, Յու. Կազակովը, Ս. Շուրտակովը։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով՝ հայ գրականության թարգմանության և պրոպագանդման գործում ունեցած ծառայությունների և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Ս. Շերվինսկին պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հոկտեմբերի 25-ին

Բացվում է ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովն ու Հոբելյանական նստաշրջանը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Հոկտեմբերի 30-ին

Վախճանվեց արձակագիր Քրիստափոր Խուրշուդյանը (ծնվ. 1903 թ.)։

Նոյեմբերի 3-ին

Երևանի Գ. Սունդուկյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական ակադեմիական թատրոնի հիմնադրման 50-ամյակի առթիվ թատրոնի շենքում տեղի է ունենում հոբելյանական երեկո։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հոկտեմբերի 24-ի հրամանագրով թատրոնը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակները շնորհվում են Ռամազ Բաբաջանին՝ «Կենաց ծառ» պոեմի համար և Մուսաթ Քարիմին՝ «Տարիների հետքով» բանաստեղծական գրքի համար։

Նոյեմբերի 17-ին

Նշվում է Գարեգին Լևոնյանի ծննդյան 100-ամյակը։

Նոյեմբերի 26-ին

Վախճանվեց բանաստեղծուհի Հռիփսիմե Պողոսյանը (ծնվ. 1899 թ.).

Նոյեմբերի 29-ին

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ ստեղծագործական միությունների վարչությունների միացյալ պլենումը՝ «ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակը և սովետական բազմազգ մշակույթի զարգացումը» թեմայով։ Բացման խոսքով հանդես է գալիս Ն. Տիխոնովը։

Նոյեմբեր

«Գարուն» ամսագրի նոյեմբերյան համարում հրապարակվում է Հակոբ Պարոնյանի «Լևոր մարգարեի քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա» նարահայտ երգիծավեպը, որը հայատառ թուրքերենից արևմտահայերենի է վերածել Գ. Սահեփանյանը։

Դեկտեմբերի 8-ին

«Գրական թերթը» (№ 50) հաղորդում է տպագրում Սայաթ-Նովայի անհայտ ժողովածուի հայտնաբերման մասին, որի մեջ ասված է.

«19-րդ դարի հայտնի բանաստեղծ և ազգագրագետ Ա. Մ. Շեգրենի արխիվում վրաց գիտնական Ալեքսանդր Փոցխիշվիլին հայտնաբերել է Վրաստանին վերաբերող նոր նյութեր։

...Այդ նյութերի թվում գտնվել են նաև հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի վրացերեն անհայտ բանաստեղծությունները և դրանց գերմաներեն թարգմանությունները։ Ինչպես պարզել է Ա. Փոցխիշվիլին, Սայաթ-Նովայի բանաստեղծությունների ձեռագիր այդ ժողովածուն Ա. Շեգրենին է նվիրել շվեդ գիտնական, Վրաստանի մշակույթի մեծ գիտակ Խրիստիան Սահենը»։

Դեկտեմբերի 12-ին

Երևանի տրվեստի աշխատողների տանը տեղի է ունենում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի գրողների միությունների վարչությունների միացյալ

պլենումը՝ «Բարեկամության և եղբայրության ավանդները Անդրկովկասի ժողովուրդների գրականության մեջ» թեմայով։ Զեկուցում է Ս. Ս. Հարությունյանը։

Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր երեկո՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Դեկտեմբերի 21-ին

Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատում, տեղի է ունենում հանդիսավոր հոբելյանական նիստ՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։ Զեկուցումով հանդես է գալիս Լ. Ի. Բրեժնևը։

Դեկտեմբերի 22-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր, ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ Մկրտիչ Արմենը (Հարությունյան, ծնվ. 1906 թ.)։

Դեկտեմբերի 25-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Գեղամ Սարյանը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Դեկտեմբերի 28-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Լեոնիդ Հուրոնցը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Դեկտեմբերի 29-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով։

Դեկտեմբեր

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 3) Գ. Մադոյանը հրապարակում է Մուրացանի նամակներից յոթը, որոնցից հինգը մինչ այդ մնացել էին անտիպ, իսկ երկուսը նախկինում հրատարակվել էին աղավաղումներով։

«Սովետական գրականություն» ամսագրում (№ 12) նյութեր են տպագրվում՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

1972 թ. «Գրական թերթը» ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ համարներ է նվիրում տարբեր հանրապետությունների գրականությանը։

Մոսկվայի «Պրոգրես» հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայում հայ արձակի ժողովածու՝ «Մենք լեռնցիներ ենք» վերնագրով։

ՀԱՄԱՅԻՆՍ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ալազան Վ. — Անտիպ երգեր
Դրիգորյան Ս. — Ջլուն է գալիս (ռուսերեն), Մոսկվա
Գուսան Աշոտ — Սիրո կրակներ
Դավթյան Վ. — Անկեղ մորենի
Դարբնի Ա. — Երկեր, հ. 1
Զարյան Ն. — Երկերի ժողովածու, հ. 5
Զարյան Ն. — Սասունցի Դավիթ (լիտվերեն), Վիլնյուս
Էմին Գ. — Երգ Հայաստանի. հատընտիր (բելոռուսերեն), Մինսկ
Թորոսյան Շ. — Հանդիպում գագաթին
Թումանյան Հենր. — Սերը չի ծերանում
Կապուտիկյան Ս. — Դեպի խորքը լեռան
Հարությունյան Ս. — Արև և ծով (ռուսերեն), Մոսկվա
Հովհաննիսյան Հր. — Բանաստեղծություններ, հ. 2
Մարգարյան Մ. — Լցված լռություն
Շիրազ Հ. — Հուշարձան մայրիկիս
Սահյան Հ. — Սեզամ, բացվի՛ր...
Սարյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 5
Սարյան Գ. — Մտերիմ էջեր
Սևակ Պ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Սևակ Պ. — Հիմն լույսին (չեխերեն), Պրագա

Արձակ

Աթայան Ռ. — Սպարտակ (ռուսերեն), Մոսկվա
Այվազյան Ս. — Գարունս ձյունների տակ
Արշակյան Գ. — Դաղձի բույրը
Բալայան Ջ. — Հիպոկրատի գլխարկը
Բալայան Վ. — Ճակատագիրը բախում է դուռը
Գալշոյան Մ. — Ջորի Միրոն (ռուսերեն), Մոսկվա
Թոթովենց Վ. — Կապույտ ծաղիկներ
Թոթովենց Վ. — Պատմիր ինձ, Բելա (անգլերեն), Լոնդոն
Խանդաղյան Ս. — Երեք տարի 291 օր
Խաչատրյան Հ. — Տիգրան Մեծ
Ղուկասյան Հովհ. — Երկերի ժողովածու, հ. 1
Ղուկասյան Հովհ. — Ոսկան Երևանցի (ռուսերեն), Մոսկվա
Մաթևոսյան Հր. — Մենք ենք, մեր սարերը (կիրգիզերեն), Ֆրունզե
Սարգսյան Մ. — Ճակատագրով դատապարտվածները (ռուսերեն)
Սիմոնյան Կ. — Ֆանտաստիկա (ռուսերեն)
Քոչար Հր. — Կարոտ
Քոչար Հր. — Նահապետ (ռուսերեն)

Դրամատուրգիա

Բորյան Գ. — Նույն հարկի տակ
Պապայան Ա. — Աշխարհն, ա՜յո, շուտ է եկել
Վաղարշյան Վ. — Երկեր, հ. 1

Ժողովածուներ

Գրական ժառանգություն. Արևմտահայ գրողների նամակների
Մենք լեռնցիներ ենք (հայ արձակի ժողովածու, անգլերեն), Մոսկվա
Միջնադարյան հայ քնարերգություն (ռուսերեն), Մոսկվա

Դասականներ

Այգեկցի Վ. — Առակներ
Գրիգոր Տղա — բանաստեղծություններ և պոեմներ
Դուրյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 2
Թումանյան Հովհ. — Ընտիր երկեր (ուկրաիներեն), Կիև
Նահապետ Քուչակ — Հայրեններ (ռուսերեն), Մոսկվա
Պարոնյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 8
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 1
Տերյան Վ. — Նամակներ Անթառամ Միսկարյանին
Փափազյան Վրթ. — Երկերի ժողովածու, հ. 1
Փափազյան Վրթ. — Կոբսված արդարություն (ռուսերեն)
Փափազյան Վրթ. — Ճգնավոր Եղոն (մոլդավերեն), Քիշինև

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Գրիգորյան Գ. — Հայ ժողովրդական վիպերգը և պատմական երգային բանահյուսությունը (գիրք 1)
Էսթետիկայի հարցեր
Թումաճյան Մ. — Հայրենի երգ ու բան
Թումանյան 100. Հոբելյանական տարեգրություն
Իշխանյան Ս. — 20-րդ դարի սկզբի հայ քաղաքական երգիծանքը
Կարինյան Ա. — Եղիշե Չարենց
Կիրակոսյան Վ. — Ռուբեն Սևակ
Հակոբջանյան Ա. — Առանձար
Հայ նոր գրականության պատմություն, հ. 4
Ղանալանյան Հ. — Հայաստանը ռուս բանաստեղծների ստեղծագործության մեջ (ռուսերեն)
Մարտիրոսյան Ա. — Պատմութիւն և խրատք Խիկարայ
Մխիթարյան Ա. — Գրական-տեսական հարցեր
Շարուրյան Ա. — Պետրոս Դուրյան
Ջրբաշյան Էդ. — Գրականության տեսություն
Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ. — Գրականագիտական բառարան
Ջուհարյան Թ. — Հայ գրականության մեթոդիկա
Սաֆարյան Վ. — Մկրտիչ Պեշիկթաշլյան

Թարգմանություն

Աշուղ Ալեսկեր — Երգեր
Արևը վեր է ելնում (լիտվական պատմվածքներ)

Բարսթոու Ս. — Այսպիսի սեր
Բոկաչչո Ջ. — Դեկամերոն
Գոգոլ Ն. — Տարաս Բուլբա
Դրայզեր Թ. — Երկերի ժողովածու, հ. 8, 9
Եզոպոսի առակները
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 11
Լուտս Օ. — Ամառ
Հանդիպում (տաջիկական պատմվածքներ)
Հեմինգուեյ Է. — Հրաժեշտ զենքին
Մայակովսկի Վլ. — Բանաստեղծություններ և պոեմներ, հ. 1, 2
Մորուա Ա. — Պրոմեթեոս կամ Բալզակի կյանքը
Նոնեշվիլի Ի. — Լիներ սրտաբաց
Շեքսպիր Վ. — Քրոնիկներ, հ. 1
Պրեվեր Ժ. — Հեքիաթներ չարաճճի երեխաների համար
Պուշկին Ա. — Եվգենի Օնեգին
Ռաբլե Ֆ. — Գարգանտյուա և Պանտագրյուել
Ռոլանդի երգը
Սեմյոնով Յու. — Գարնան տասնյոթ ակնթարթ
Սիլվաչի Լ. — Սև պատուհաններ
Սկովորոդա Գ. — Հատընտիր
Սյուսակու Է. — Ամուսնական կյանք
Վինոգրադով Ա. — Ժամանակի երեք դույնը
Տուրգենև Ի. — Գարնանային ջրեր
Տվարդովսկի Ա. — Վասիլի Տյորկին
Ուայլդ Օ. — Դորիան Գրեյի դիմանկարը։ Իտալական ամուսինը
Ֆեյխտվանգեր Լ. — Իսպանական բալլադ

1973

Հունվարի 5-ին

Ուկրաինական գրականության պրոպագանդման համար Ուկրաինական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը Գեղամ Սարյանին շնորհում է հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

«Գրական թերթում» տպագրվում է Ս. Ռասսադինի «Մոլեգին Քուչակը» հոդվածը։

Հունվարի 20-ին

Վախճանվեց բանաստեղծ Վաղարշակ Նորենցը (Երիցյան, ծնվ. 1903 թ.)։

Հունվարի 23-ին

ՍՄԿԿ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» որոշման տարեդարձի առթիվ Մոսկվայում բացվում է գրական մամուլի խմբագիրների խորհրդակցություն։ Քննադատության հարցերի մասին զեկուցում է Գ. Մարկովը։

Հունվարի 26-ին

«Գրական թերթը» բանավեճ է սկսում Վահագն Գրիգորյանի «Կարմիր ձյունը» և «Թագավորի փոքր որդին» վիպակների շուրջ։ Բանավեճային հոդվածներով հանդես են գալիս Լ. Հախվերդյանը, Ռ. Հովսեփյանը (№ 5), Կ. Սիմոնյանը (№ 7), Զ. Ղուկասյանը (№ 9), Պ. Զեյթունցյանը (№ 11), Ալ. Թոփչյանը (№ 13), Վ. Դարբինյանը, Բ. Ադամյանը (№ 15)։ Բանավեճն ամփոփվում է հիշյալ գործերի բաց քննարկմամբ, որը տեղի է ունենում Երևանի պետական համալսարանում՝ սովետահայ գրականության ամբիոնի մասնակցությամբ (№ 18)։

Հունվարի 29-ին

Տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Գարեգին Լևոնյանի ծննդյան 100-ամյակին։ Զեկուցումներով հանդես են գալիս Մ. Նարյանը, Ստ. Թոփչյանը, Մ. Ղազարյանը։

Հունվարի 31-ին

Տեղի է ունենում Հայաստանի գրողների միության վարչության նախագահության նիստը՝ նվիրված թարգմանության հարցերին։ Նիստում հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն կատարվող թարգմանությունների մասին հաղորդում է անում «Հայաստան» հրատարակչության թարգմանական գրականության բաժնի վարիչ Յ. Պողոսյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Խանզադյանը, Ստ. Ալաջաջյանը, Ա. Սարոյանը, Ս. Հարությունյանը, Զ. Դարյանը, Էդ. Թոփչյանը և Վ. Բալայանը։

Հունվար

Մոսկվայում սկսում է լույս տեսնել ՍՍՀՄ գրողների միության օրգան «Լիտերատուրնոյե օբոզրենիե» ամսագիրը։

Փետրվարի 2-ին

«Գրական թերթի» 1972 թ. մրցանակները շնորհվում են Ա. Այվազյանին, Մ. Մարգարյանին, Հր. Հովհաննիսյանին, Ս. Սարինյանին, Ս. Խանզադյանին և Ռ. Մանուկյանին։

Փետրվարի 9-ին

Նշվում է Արսեն Տերտերյանի ծննդյան 90-ամյակը։

Փետրվարի 16-ին

Նշվում է Մ. Մ. Պրիշվինի ծննդյան 100-ամյակը։

«Գրական թերթը» (№ 8) առաջին անգամ հրապարակում է Ավետիք Իսահակյանի նամակները՝ ուղղված Ստ. Լիսիցյանին։

Փետրվարի 28-ին

Վախճանվեց բանաստեղծ Աշոտ Գրաշին (Գրիգորյան, ծնվ. 1910 թ.)։

Նշվում է թատերագիր Արարատ Բարսեղյանի ծննդյան 60-ամյակը։

Փետրվար

ՍՍՀՄ գրողների միության հայ գրականության խորհրդի նիստում լսվում են հաղորդումներ 1972 թ. հրատարակված հայ գեղարվեստական գրականության և հայ գրողների ուսերին լույս տեսած ստեղծագործությունների մասին։ Հաղորդումներով հանդես են գալիս Հր. Հովհաննիսյանը և Վ. Բալայանը։ Ելույթ են ունենում Ե. Նիկոլաևսկայան, Ա. Գուդինցևը, Ա. Գրիգորյանը, Ս. Խիտարովան, Գ. Մանասյանը, ՍՍՀՄ հրատարակչության նախագահի տեղակալ Հ. Մարտիրոսյանը և ուրիշներ։

«Սովետական գրականություն» ամսագրում շարունակաբար (№№ 2, 3, 4) տպագրվում է Ն. Զարյանի «Երկրորդ կյանք» ինքնակենսագրական վեպը։

Մարտի 16-ին

Նշվում է Արշալույս Սարոյանի ծննդյան 50-ամյակը։

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի է ունենում հուշեկեր՝ նվիրված ականավոր հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 80-ամյակին։ Ելույթ են ունենում Լ. Խաչիկյանը, Ա. Ղանալանյանը, Մ. Հասրաթյանը, Մ. Ավդալբեկյանը և ուրիշներ։

Մարտի 23-ին

Նշվում է Անահիտ Սեկոյանի ծննդյան 50-ամյակը։

Մարտի 23—24-ը

Տեղի է ունենում Հովհաննես Թումանյանի մահվան 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, որ կազմակերպել էին Թումանյանի տուն-թանգարանն ու Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանը։ Նստաշրջանը բաց է անում Ս. Մելիքսեթյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Էդ. Ջրբաշյանը, Ռ. Իշխանյանը, Ա. Ինճիկյանը, Մ. Ջանփոլադյանը, Ռ. Ամիայանը, Շ. Գրիգորյանը, Զ. Ավետիսյանը, Ի. Սաֆրազբեկյանը, Գ. Մադոյանը, Բ. Հովակիմյանը։

Մարտի 24—31-ը

Հայաստանի քաղաքներում և շրջաններում անց է կացվում մանկական գրքի շաբաթ։ Այդ առթիվ Խ. Գյուլնազարյանը, Վ. Անանյանը, Ն. Միքայելյանը, Վ. Տալյանը, Ա. Դարբինին և ուրիշներ հանդիպումներ են ունենում ընթերցողների հետ։ Մարտի 29-ին Ալ. Սպենդիարյանի անվան ակադեմիական թատրոնում տեղի է ունենում գրքի շաբաթին նվիրված համաքաղաքային ժողով։

Մարտի 25-ին

Վախճանվեց գրականագետ և քննադատ, պրոֆեսոր Տիգրան Հախումյանը (ծնվ. 1894 թ.)։

Մարտի 27-ին

Արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում երեկո՝ նվիրված թատրոնի միջազգային օրվան։ Երեկոն բաց է անում ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Մ. Խարազյանը։ Զեկուցումով հանդես է գալիս արվեստագիտության դոկտոր Բ. Հարությունյանը։

Մարտ

Հելսինկիում տեղի է ունենում ժամանակակից գրականության խնդիրներին նվիրված ֆինն և սովետական գրողների սեմինար, որին սովետական գրողների կազմում մասնակցում է Ս. Կապուտիկյանը։ Սեմինարում զեկուցումներ են կարդում ֆինն գրականագետ Կայ Լայտինեն («Անտառից դեպի քաղաք») և Լև Գինզբուրգը («Ժողովրդականությունը եվրոպական պոեզիայում»)։

Ապրիլի 11-ին

Ալեքսանդր Օստրովսկու ծննդյան 150-ամյակի առթիվ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Ներածական խոսք է ասում Գր. Տեր-Գրիգորյանը։ Զեկուցում է Ռ. Զարյանը։

Ապրիլի 27-ին

ՀՍԳ միության կուսակցական ժողովում «Ժամանակակից պատմվածքը» թեմայով զեկուցում է Ալ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ստ. Կուրտիկյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Հարությունյանը, Ս. Խանզադյանը, Հր. Հովհաննիսյանը և Ստ. Ալաչաջյանը։

Ապրիլ

«Սովետական գրականություն» ամսագրի № 4-ը նվիրված է ռումինական գրականությանը։

Տեղի է ունենում ՀՍԳ միության թարգմանիչների բաժանմունքի նիստը՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների ռուսերեն թարգմանությունների հարցին։ Զեկուցում է Լ. Մկրտչյանը։ Ելույթ են ունենում թարգմանիչներ Ա. Թադևոսյանը, Հ. Թուրշյանը, Գ. Վիրապյանը, Ի. Կարումյանը։ Նիստն ամփոփում է Ս. Վահունին։

Մայիսի սկզբին

Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում տեղի է ունենում երեկո՝ նվիրված ժան Բատիստ Մոլիերի մահվան 300-ամյակին։ Բացման խոսք է ասում Ռ. Զարյանը։ Զեկուցում է Ս. Սողոմոնյանը։

Մայիսի 11-ին

Նշվում է Մարտիրոս Վեսպերի ծննդյան 80-ամյակը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության օգոստոսի 16-ի հրամանագրով Մ. Վեսպերը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Մայիսի 18-ին

Վահրամ Ալազանի ծննդյան 70-ամյակի առթիվ «Գրական թերթը» (№ 21) տպագրում է Աղավնու, Ս. Կապուտիկյանի, Հր. Հովհաննիսյանի հոդվածները և Ալազանի անտիպ բանաստեղծություններից մի քանիսը։

Մայիսի 17—18-ը

Երևանի համալսարանում տեղի է ունենում շարենցյան երկրորդ ընթերցումները։ Զեկուցումներով հանդես են գալիս Հր. Թամրազյանը, Ս. Աղաբաբյանը, Հ. Ֆելեքյանը, Գ. Անանյանը, Վ. Դաբրիելյանը, Ա. Չարենցը, Ա. Մարությանը, Ժ. Քալանթարյանը։

Մայիսի 22—24-ը

Մոսկվայում, գրողների կենտրոնական տանը, տեղի է ունենում գրական քննադատների միջազգային ասոցիացիայի «կլոր սեղանի» խորհրդակցությունը, որին մասնակցում են 25 երկրների ներկայացուցիչներ։ Հաղորդումներով հանդես են գալիս ֆրանսիացի գրող, գրական քննադատների միջազգային ասոցիացիայի պրեզիդենտ Իվ Գանդոնը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Բ. Լ. Սուչկովը։

Մայիսի 25-ին

Նշվում է Հանրի Բարբյուսի ծննդյան 100-ամյակը։

Մայիսի 27-ին

Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցու բակում տեղի է ունենում վարդատոն՝ նվիրված Սայաթ-Նովային։

Հունիսի 5-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ակսել Խաչատրյանին՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ շնորհվում է սոցիալիստա-

կան աշխատանքի հերոսի կոչում նրան հանձնելով Լենինի շքանշան և «Մուրճ ու մանգաղ» ոսկի մեդալ։

Հունիսի 11-ին

Երևանում տեղի է ունենում սովետական և վենեսուելական գրողների ստեղծագործական հանդիպում՝ «Գրողը և արդիականությունը» թեմայով։ Ելույթներով հանդես են գալիս Է.Գ. Բոփչյանը, սովետական գրողների պատվիրակության ղեկավար Ս. Սմիռնովը, Վենեսուելայի գրողների ասոցիացիայի պրեզիդենտ Խոսե Ռամոն Մեդինան և ուրիշներ։ «Գրական թերթը» (№№ 24, 25) տպագրում է վենեսուելական գրողների ստեղծագործությունները։

Հունիսի 18-ին

Երևանի արվեստի աշխատողների տանը տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի շեքսպիրագիտության հայկական կենտրոնի գիտական հինգերորդ նստաշրջանը։ Նստաշրջանը բաց է անում Ռ. Զարյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Ն. Մուրադյանը («Շեքսպիրի երկերի առաջին ժողովածուն»), Բ. Անդրեասյանը («Լիրը» և «Խեղճ մերկ աղքատների պատկերը»), Ա. Գրիգորյանը («Դրամատուրգիական գործողության մեկնաբանությունը Փափազյան-Համլետի բեմական տարբերակում»), Ռ. Մարգունին («Անտոնիոս և Կլեոպատրայի» հերոսների լեզվական բնութագրման և հայերեն թարգմանությունների որոշ հարցերի մասին»)։

Հունիսի 29-ին

«Գրական թերթը» (№ 27) հրապարակում է Հայկական ՍՍՀ գրողների միության վարչության 1971 թ. հայտարարած ժամանակակից գեղարվեստական երկերի մրցանակաբաշխության արդյունքները։ Առաջին մրցանակի են արժանանում Մուշեղ Գալշոյանի «Բովտուն» վեպը և Հրանտ Թամրազյանի «Երիտասարդ Զարենցը» գրականագիտական ուսումնասիրությունը, երկրորդ մրցանակ է շնորհվում Վազգեն Մնացականյանի «Իսահակյանի սխրանքը» հրապարակախոսական աշխատանքին։ Խրախուսական մրցանակների են արժանանում Հենրիկ Բուդանյանի «Ճակատագիր» պոեմը և Ստեփան Կուրտիկյանի պատմվածքները։

Նշվում է Հարություն Մկրտչյանի ծննդյան 70-ամյակը։

Հունիս

«Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2) Ա. Ադամյանը հրապարակում է Ավ. Իսահակյանի անտիպ նամակները՝ ուղղված Կարեն Միքայելյանին։

Հոկտեմբերյանի շրջանի Արազափ գյուղում բացվում է Թաթուլ Հուրյանի հուշարձանը։ Տեղի է ունենում միտինգ, ուր ելույթ է ունենում Վ. Մնացականյանը։

Հուլիսի 6-ին

Նշվում է Սարգիս Խարազյանի ծննդյան 50-ամյակը։

Հուլիսի 18-ին

Նշվում է Վլադիմիր Մայակովսկու ծննդյան 80-ամյակը։ Երևանում, Ստանիսլավսկու անվան թատրոնում, կայանում է հանդիսավոր նիստ։ Նեյրածական խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ Զեկուցումով հանդես է գալիս

Մ. Շաթիրյանը։ Հանրապետական մամուլում («Գրական թերթ», № 29, «Սովետական գրականություն», № 7 և այլն) տպագրվում են բազմաթիվ հոդվածներ։

Հուլիսի 22-ին

Տերյանի ծննդավայր Գանձայում տեղի է ունենում պոեզիայի օր։

Հուլիս

Բրազիլիայի Սան-Պաուլո քաղաքի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Նատալի Գուզլյանը համալսարանի մի շարք դասախոսների համագործակցությամբ պորտուգալերեն լույս է ընծայում «Եղիշե Չարենցը և Հայաստանի նոր գրականությունը» մոտ երեք հարյուր մեծագիր էջից բաղկացած աշխատությունը։

Սեպտեմբերին Երևանում կայանալիք Ասիայի և Աֆրիկայի երկրների պոեզիային նվիրված գիտաժողովի կապակցությամբ «Գրական թերթը» (№ 28), «Սովետական գրականություն» ամսագիրը (№ 9) և հանրապետական մամուլի այլ օրգաններ պարբերաբար տպագրում են այդ երկու մայրցամաքների տարբեր երկրների բանաստեղծների ստեղծագործություններ և հոդվածներ։ «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայում «Այս հողը իմն է» և «Ազատության կանչ» ժողովածուները։

Օգոստոսի 10-ին

Գ. Մահարու ծննդյան 70-ամյակի առթիվ «Գրական թերթում» (№ 33) տպագրվում են Ս. Աղաբաբյանի, Վ. Դավթյանի հոդվածները և Մահարու անտիպ նամակներից։

Օգոստոսի 16-ին

Հայկական ՍՍՀ պետական մրցանակները շնորհվում են Ն. Զարյանին՝ «Սպասում եմ քեզ» և «Սասունցի Դավիթ» ստեղծագործությունների համար և Ա. Գյուլնազարյանին՝ «Պատվո բարը», «Պատմվածքներ Արտուտիկի մասին» և «Անահանգի սովերներ» մանկապատանեկան գրքերի համար։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն հրամանագրով Մկրտիչ Կորյունը ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է ՀՍՍՀ գերագույն սովետի պատվոգրով։

Օգոստոս

Ադրբեջանական գրող Իմադեդդին Նասիմիի ծննդյան 600-ամյակի առթիվ հանրապետության թերթերն ու ամսագրերը տպագրում են Նասիմիի ստեղծագործությունները և հոդվածներ նրա մասին։

Շառան Շաֆնուրը ֆրանսերեն գրված բանաստեղծությունների համար արժանանում է ֆրանսիական ակադեմիայի «Մոտար» գրական մրցանակին։

Սեպտեմբերի 5-ին

Ալմա-Աթայում բացվում է Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների 5-րդ կոնֆերանսը։

Սեպտեմբերի 10—14-ը

Երևանում տեղի է ունենում Ասիայի և Աֆրիկայի երկրների բանաստեղծների գիտաժողով։

Ողջույնի խոսք է ասում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Արզումանյանը։ Ելույթ են ունենում Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների ասոցիացիայի քարտուղար Յուսեֆ Էս-Սիբայը և սովետական պատվիրակության ղեկավար Միրզո Թուրսուն-Զադեն։

Գ. Արզումանյանի ելույթից

«...Թույլ տվեք ՀՍՍՀ կառավարության անունից ջերմորեն ողջունել ձեզ՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների պոեզիայի սիմպոզիումի մասնակիցներիդ և ի սրտե ասել. բարով եք եկել մեր հինավուրց ու նորոգ հողը, թող Հայաստանում անցկացվելիք ձեր օրերը լինեն բեղմնավոր, հաճելի ու անմոռաց...»։

«Գրական թերթ», № 38

Յու. Էս-Սիբայի ելույթից

«Ես ձեզ եմ դիմում անձամբ իմ կողմից և առաջին հերթին մեր բոլորիս անունից, որոնց բախտ է վիճակվել ժամանել ձեր գեղեցիկ քաղաքը։

Ես շնորհակալություն եմ հայտնում հայ ժողովրդին և սիմպոզիումի նախապատրաստական կոմիտեին այն ջերմ հյուրընկալության, այն արտակարգ սրտագին ընդունելության համար, որ ցույց տրվեց մեզ, հոգու այն վեհության համար, որ դրսևորեցիք դուք, համագործակցելով մեզ հետ և լիովին պաշտպանելով աֆրիկա-ասիական գրողների պոեզիայի սիմպոզիումի հիմնական գաղափարներն ու մաքերը»։

«Գրական թերթ», № 38

Մ. Թուրսուն-Զադեի ելույթից

«...Մեր հանդիպման հաջողությանը ուղեկցող երկու կարևոր հանգամանքներ վստահություն են ներշնչում, որ այն կարևոր ուղենիշ կդառնա աֆրիկա-ասիական պոեզիայի զարգացման պատմության մեջ։ Խոսքը վերաբերում է այն բանին, որ մեր սիմպոզիումը տեղի է ունենում հնագույն պոեզիայի մայրաքաղաքներից մեկում, որտեղ հավաքվել են բանաստեղծներ գրեթե բոլոր մայրցամաքներից։ Մեր խորհրդանշանի վրա պատկերված երկու ձեռքերին միացել են մյուս մայրցամաքների բարեկամական ձեռքերը։ Դա մեր հանդիպմանը իսկական միջազգային բնույթ է տալիս...»։

«Գրական թերթ», № 38

Գիտաժողովի առաջին նիստը նվիրվում է «Պոեզիան և ազգային ազատագրության, սոցիալիզմի ու խաղաղության համար մղվող պայքարը» թեմային։ Ելույթ են ունենում Բարի Ֆայնբերգը (Հարավային Աֆրիկա) Ե. Դալմատովսկին (ՍՍՀՄ), Իզեդդին Իսմայիլը (Եգիպտոս), Օդյուսան Սանդե Կուլիբալին (Սենեգալ Վոլտա), Հուսաաշ Պրյուդենսիոն (Դահոմեա), Աբդուլա

Բահթանին (Աֆղանստան), Կոստա դա Անդրադեն (Անգոլա), Թո Բոնը (Հարավային Վիետնամ)։

Երկրորդ նիստը նվիրվում է արդի պոեզիայի ավանդույթների և նորարարության հարցերին։ Զեկուցումով հանդես է գալիս Հր. Հովհաննիսյանը։ Ելույթ են ունենում ՎԴՀ-ի ներկայացուցիչ Տե Լան Վիենը, Դիադո Ամադուն (Նիգեր), Բ. Ցավուհուլանը (Մոնղոլիա), Ջոն Ստուկվեյ Օկայը (Գանա)։

Գիտաժողովի երրորդ նիստը նվիրվում է «Պոեզիան և մարդու հոգևոր աշխարհի ձևավորումը» թեմային։ Ելույթ են ունենում Սաֆվան Կուզոին (Սիրիա), Ալ. Միխայլովը (ՍՍՀՄ), Թոմաս Մոդեյրոն (Սան Տոմե և Պրինսիպի), Գ. Էմինը, Ե. Պետրոնդասը (Կիպրոս), Ս. Կապուտիկյանը։ Հաջորդ նիստում «Պոեզիան որպես արտահայտման և հաղորդակցման միջոց» թեմայով զեկուցում է Ե. Օսետրովը (ՍՍՀՄ)։ Ելույթ են ունենում Ժան-Ժորժ Պրոսպերը (Մավրիկոս), Մուին Բեսիսուն (Պաղեստին), Նավաքանտ Բարուան (Հնդկաստան), Աբդալա Մալահին (ԵԺՀ), Բոլամբա Լոկոլեն (Զաիր), Ա. Սաֆրոնովը (ՍՍՀՄ)։

Եզրափակիչ նիստում միաձայն ընդունվում են Ասիայի և Աֆրիկայի երկրների պոեզիայի միջազգային գիտաժողովի մասնակիցների ընդհանուր դեկլարացիան և բանաձևը Չիլիի դրության մասին։

Եզրափակիչ խոսքով հանդես է գալիս Ասիայի և Աֆրիկայի երկրների գրողների ասոցիացիայի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքս լա Գուման։

Ալեքս լա Գումայի խոսքից

«...Մեր սիմպոզիումում մենք քննարկեցինք պոեզիայի՝ որպես խաղաղության, ազգային ազատագրական պայքարի միջոցի նշանակության հարցերը։ Մենք այն միահամուռ եզրակացությանը եկանք, որ պոեզիան պետք է ծառայի մարդկությանը, այլապես այն անիմաստ է։ Եվ դա պետք է վիթխարի դեր խաղա մարդկային հոգու նորացման գործում...»։

«Գրական թերթ», № 39

Ասիայի և Աֆրիկայի երկրների պոեզիայի միջազգային գիտաժողովի մասնակիցները Երևանի համալսարանում, Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում և այլուր հանդիպումներ են ունենում հանրապետության աշխատավորության, մտավորականության և ուսանողության հետ։

Սեպտեմբերի 14-ին

«Գրական թերթը» (№ 38) տպագրում է գիտաժողովի մի շարք մասնակիցների պատասխանը խմբագրության ներկայացրած հարցերին։

ՀՍՍՀ կառավարությունը ընդունելություն է կազմակերպում Ասիայի և Աֆրիկայի երկրների պոեզիայի միջազգային առաջին գիտաժողովի մասնակիցների պատվին։

Սեպտեմբերի 21-ին

Նշվում է Գևորգ Հայրյանի ծննդյան 60-ամյակը։

Սեպտեմբեր

Փարիզի «Սեոյ» հրատարակչությունը լույս է ընծայում Կլեման Լեսլիդիսի «Հայը» վեպը, որը նվիրված է եղեռնի հետևանքով հայրենիքից հեռացած տարագիր հայերին։

Հոկտեմբերի 3-ին

Հայաստանի գրողների միության վարչության նախագահության նիստում Ասիայի և Աֆրիկայի երկրների բանաստեղծների Երևանում տեղի ունեցած գիտաժողովի մասին հաղորդում է անում Հր. Հովհաննիսյանը։ Նիստում լսվում է նաև Էդ. Թոփչյանի հաղորդումը՝ վարչության առաջիկա անելիքների մասին։

Հոկտեմբերի 5-ին

Նշվում է Էդ. Ջրբաշյանի ծննդյան 50-ամյակը։ «Գրական թերթում» (№ 41) հրապարակվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Թանկագին Էդվարդ Ջրբաշյան.

Հայաստանի գրողների միության վարչությունը, Ձեր բազմաթիվ գրական բարեկամները սրտանց շնորհավորում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 50-ամյակի առթիվ։

Ձեր բեղմնավոր գրական ու գիտական գործունեությունը, որ այնքան հայտնի է Սովետական Հայաստանի և նրա սահմաններից դուրս գտնվող գրական լայն հասարակայնությանը, Ձեզ դարձրել է արդի հայ գրականության նշանավոր դեմքերից մեկը։

Դուք, իբրև տեսաբան, իբրև գրականագետ, իբրև մանկավարժ, գրել եք աշխատություններ, որոնք աչքի են ընկնում իրենց հարուստ բովանդակությամբ, լայն ընդգրկումներով, փայլուն վերլուծական մտքով և գեղարվեստական բարձր ճաշակով։

Առանձնապես արժեքավոր է Ձեր ավանդը հայ հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ստեղծագործության գիտական մեկնաբանության ու գնահատման խնդրում։

Ձեր անխոնջ ու եռանդուն մասնակցությունը մեր գրական առօրյա հարցերի լուծմանը՝ ցույց է տալիս Ձեր քաղաքացիական պարտքի խորին գիտակցությունը և մարդկային ուղղամիտ, ճշմարիտ բնավորությունը։

Ցանկանում ենք Ձեզ, մեր սիրելի բարեկամ, երկար տարիների արդյունավետ գործունեություն, քաջառողջություն ու բերկրալի կյանք»։

Փարիզի «Լեզ էդիտոր ֆրանսե ռեյունի» հրատարակչությունը լույս է ընծայում հայ պոեզիայի ժողովածու, որն ընդգրկում է հայոց բանաստեղծությունը սկզբից մինչև մեր օրերը։

Հոկտեմբերի 9-ին

Կիևի ճարտարապետների տանը տեղի է ունենում հանդիսավոր երեկույթ՝ նվիրված Ուկրաինայում հայ գրականության տասնօրյակի բացմանը։

Ներածական խոսքով հանդես է գալիս Ուկրաինայի գրողների միության վարչության քարտուղար Ա. Լևադան։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Վ. Դավթյանը, Գ. Թաթոսյանը, Պ. Վորոնկոն, Մ. Ուշակովը, Վ. Կոշևսկին, Լ. Պերվոմայսկին և ուրիշներ։

Տասնօրյակի կապակցությամբ Ուկրաինայի «Դնիպրո» հրատարակչությունը լույս է ընծայում Ա. Բակունցի պատմվածքների ժողովածուն «Ալպիական մանուշակ» խորագրով։ Հրատարակվում են նաև սովետահայ արձակի և պոեզիայի ժողովածուներ։

Տասնօրյակի հանդիսավոր փակումը տեղի է ունենում Ի. Վ. Լիսենկոյի անվան պետական ֆիլհարմոնիայի դահլիճում։ Երեկոն բաց է անում Ուկրաինայի գրողների միության քարտուղար Պ. Ջապրելնին։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Ս. Խանզադյանը, Գ. Էմինը, Ս. Հարությունյանը, Վ. Պետրոսյանը, Ռ. Դավթյանը, Բ. Օլեյնիկը, Մ. Նազնիբեդան, Ս. Օլեյնիկը, Վ. Կոշևսկին և Ի. Դրաչը։

Երևանի № 1 դրախանութում բացվում է լատիշական գրքի ցուցահանդես։

Հոկտեմբերի 12-ին

Նշվում է Վ. Նորենցի ծննդյան 70-ամյակը։

Հոկտեմբերի 16-ին

Ուկրաինայում հայ գրականության տասնօրյակի անցկացման կապակցությամբ ՈՒՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Հայաստանի գրողների միությունը պարգևատրվում է ՈՒՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հոկտեմբերի 23-ին

«Պիոներ» ամսագրի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Ամսագրի անցած կեսդարյա ուղու մասին զեկուցում է խմբագիր Ա. Սահինյանը։ Ամսագրի հոբելյանի առթիվ ողջույնի խոսք են ասում Վ. Անանյանը, Վ. Բալայանը, Հ. Շիրազը, Գ. Խանջյանը և ուրիշներ։

Հոկտեմբերի 24-ին

ՀՍԳ միության վարչության հերթական նիստում լսվում է «Հայաստան» հրատարակչության դիրեկտոր Վ. Մկրտչյանի զեկուցումը՝ հրատարակչության կատարած աշխատանքների և նրա առաջ կանգնած խնդիրների մասին։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Հ. Մկրտչյանը, Լ. Հախվերդյանը, Ս. Հարությունյանը, Ս. Վահունին, Ռ. Հովսեփյանը, Մ. Նահապետյանը։

Հոկտեմբեր

«Սովետական գրականություն» ամսագիրը (№ 10) էջեր է նվիրում տաջիկ բանաստեղծներին։

Բելգիայում հրատարակվող «Լը ժուռնալ դը պոեզի» ամսագրի երրորդ համարում ընդարձակ բաժին է տրամադրվում սովետահայ երիտասարդ բանաստեղծներին։ Վահե Գոդելի թարգմանությամբ տպագրվում են Ռ. Դավոյանի, Ա. Ավագյանի, Ա. Մարտիրոսյանի, Դ. Հովհաննիսի, Հ. Գրիգորյանի և ուրիշների գործերը։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակները շնորհվում են բանաստեղծ Միխայիլ Լուկոնին («Անհրաժեշտություն» բանաստեղծությունների և պոեմների գրքի համար), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Մետչենկոյին («Կենսականը, նվաճվածը։ Սովետական գրականության պատմությունից» գրքի համար), բանաստեղծ Նաբի Խազրիին («Ծովն սկսվում է բարձունքներից» և «Բանաստեղծություններ և պոեմներ» գրքերի համար), բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Պերցովին («Մայակովսկի։ Կյանքը և ստեղծագործությունը» մենագրության համար)։

Նոյեմբեր

Երևանում, ՀՍԳ միությունում, «Լիտերատուրնայա գազետա» թերթը անց է կացնում բանավեճ՝ նվիրված պատմվածքի խնդիրներին։ Բանավեճին մասնակցում են Հր. Հովհաննիսյանը, Մ. Շաթիրյանը, Վ. Գուսևը, Ալ. Թոփչյանը, Ն. Տարասենկովան, Ս. Խանզադյանը։ Նյութերը տպագրվում են «Լիտերատուրնայա գազետայում» (№ 44) և «Գրական թերթում» (№ 47)։

Դեկտեմբերի 1-ին

Վախճանվեց գրականագետ Անուշավան Մակարյանը (ծնվ. 1910 թ.)։

Դեկտեմբերի 7-ին

Նշվում է Բաղիշ Հովսեփյանի ծննդյան 50-ամյակը։

Դեկտեմբերի 7—10-ը

Երևանում անց են կացվում Բրյուսովյան համամիութենական 5-րդ ընթերցումները՝ նվիրված Վ. Բրյուսովի ծննդյան 100-ամյակին։ Ընթերցումները կազմակերպել էին Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՍՍՀՄ պետական գրականության թանգարանը։ Ընթերցումների ընթացքում զեկուցումներ են կարդում Ի. Պոստուպալսկին, Գ. Թաթոսյանը, Գ. Բելայան, Վ. Լարցևը, Մ. Միրզա-Ավագյանը, Ն. Շիկը, Զ. Յասինսկայան, Վ. Դրոնովը, Է. Լիտվինը, Մ. Վասիլևը, Ս. Իլևը, Կ. Գերասիմովը, Ղ. Այվազյանը, Վ. Լազարևը, Ս. Փոթնյանը, Ն. Տրիֆոնովը, Մ. Լևչենկոն, Վ. Սիվովոլովը, Ք. Պախանյանցը, Գ. Դերբենևը, Է. Դանիելյանը, Ս. Նեբոշկին, Դ. Մաքսիմովը, Ի. Ազադովսկին, Է. Պոլոցկայան, Ա. Դավթյանը, Ն. Անդրեասյանը, Վ. Կուբիլիուսը, Ի. Աթաջանյանը, Յու. Փանյանը, Մ. Յերոևան, Ի. Խաչատրյանը, Մ. Գասպարովը, Ե. Տիխանչևան, Ս. Դարոնյանը։

Դեկտեմբերի 11-ին

Ալ. Սպենդիարյանի անվան ակադեմիական թատրոնի շենքում տեղի է ունենում հանդիսավոր հոբելյանական նիստ՝ նվիրված Վ. Բրյուսովի ծննդյան 100-ամյակին։ Բացման խոսք է ասում հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀՍՍՀ լուսավորության մինիստր Ս. Հախումյանը։ «Բանաստեղծը և քաղաքացին» զեկուցումով հանդես է գալիս Հր. Հովհաննիսյանը։ Վ. Բրյուսովի մասին հուշեր են պատմում Ս. Շերվինսկին և Բ. Պուրիշևը։

Դեկտեմբերի 12—13-ը

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում տաղաչափության ժամանակակից խնդիրներին նվիրված համամիութենական գիտաժողով։ Զեկուցումներով հանդես են գալիս Մ. Գասպարովը (Մոսկվա), Գ. Սիդորենկոն (Կիև), Մ. Տարլինսկայան (Մոսկվա), Մ. Գիշմանը (Դոնեցկ), Վ. Բաևսկին (Սմոլենսկ), Էդ. Ջրբաշյանը, Ա. Պապոյանը, Ռ. Պապայանը, Ա. Շարաբխանյանը, Դ. Գասպարյանը, Ռ. Ղուլյանը։ Գիտաժողովի նյութերը 1976 թ. ռուսերեն հրատարակվում են առանձին գրքով («Տաղաչափագիտության խնդիրներ»)։

Դեկտեմբերի 14-ին

Նշվում է արևմտահայ բանաստեղծ Արտաշես Հարությունյանի ծննդյան 100-ամյակը։

Դեկտեմբերի 19-ին

ՀՍԳ միության վարչության նիստում լսվում են ռադիոյի և հեռուստատեսության գրական-դրամատիկական խմբագրությունների գլխավոր խմբագիրներ Գ. Աբաջյանի և Պ. Ստեփանյանի, հեռուստատեսության երիտասարդական ու մանկական հաղորդումների խմբագրությունների գլխավոր խմբագիրներ Ա. Քալանթարյանի և Ռ. Ղասաբյանի հաղորդումները՝ վերոհիշյալ խմբագրությունների գծով տարվող հաղորդումների ներկա վիճակի և առաջիկա ծրագրերի մասին։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Հր. Հովհաննիսյանը, Վ. Անանյանը, Ս. Վահունին, Գ. Էմինը, Վ. Պետրոսյանը, Էդ. Թոփչյանը և ուրիշներ։

Դեկտեմբերի 19—20-ը

ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի է ունենում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրման 30-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։ «Ֆունդամենտալ գիտությունները և ժողովրդական տնտեսությունը» թեմայով զեկուցում է Վ. Համբարձումյանը։ Ընթերցվում են նաև այլ զեկուցումներ։

Դեկտեմբերի 28-ին

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 70-ամյակին։ Զեկուցում է Ռ. Պարսամյանը։

Դեկտեմբեր

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի ու ՍՍՀՄ գրողների միության քարտուղարության համատեղ խորհրդակցությունը, ուր «Խուդոժեստվեննայա լիտերատուրա», «Սովետսկի պիսատել», «Վագա» (Լիտվական ՍՍՀ) և «Հայաստան» հրատարակչությունների փորձի հիման վրա քննության է առնվում ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների թարգմանության և հրատարակման հարցը։

Նիստը բաց է անում հրատպետկոմի նախագահ Յու. Մելեսեը։ Ելույթ են ունենում «Խուդոժեստվեննայա լիտերատուրա», «Սովետսկի պիսատել» և «Մոլոդայա գվարդիա» հրատարակչությունների ղեկավարներ Վ. Սոմովը, Ն. Լեսյուչևսկին, Վ. Օսիպովը, Հայաստանի հրատպետկոմի նախագահ Ս. Բաղդասարյանը, Լիտվայի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Մ. Պոժարսկասը, մանկական գրող Ս. Միխալկովը, «Իսկուսստվո» հրատարակչության դիրեկտոր Կ. Դոլգովը, դրամատուրգ Վ. Ռոզովը, ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Կ. Դալլաքյանը, «Լիտերատուրնայա գազետա» թերթի գլխավոր խմբագիր Ա. Զակովսկին։ Խորհրդակցությունը ամփոփում է ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Վ. Օզերովը։

Վենետիկում Մխիթարյան միաբանության կողմից իտալերեն հրատարակվում է Ներսես Շնորհալու հոգևոր երգերի ժողովածուն (հատորը կազմել և թարգմանել է Մեսրոպ Ճանաշյանը)։

«Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչությունը որոշում է 1973 թվականից լույս ընծայել Ստեփան Զորյանի երկերի ժողովածուն 5 հատորով։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Առաքելյան Ե. — Կապույտ անձրև
Գրիգորյան Ք. — Կանաչ հնձան
Դավթյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 1
Դավոյան Ռ. — Մեղրահաց
Դուրյան Լ. — Եղեգան փող
Դև — Հատընտիր
Խարազյան Ս. — Տարիների միջով
Կապուտիկյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 2
Կորյուն Մ. — Առակներ
Մարտիրոսյան Ա. — Բանաստեղծություններ
Նորենց Վ. — Երկերի ժողովածու, հ. 2
Նորունի Հ. — Վերապրում
Չարենց Ե. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Լենինգրադ
Չարենց Ե. — Ընտիր երկեր

Պարսամյան Ա. — Փյունիկ
Սահյան Հ. — Կանչ, կոունկ
Սևակ Պ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Վշտունի Ա. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Մոսկվա
Տարոնցի Ս. — Կամրջվող ափեր

Արձակ

Ազալյան Ն. — Խաղաղ զորանոցներ
Ադալնի — Շիրակ (գիրք 1, 2)
Այվազյան Ա. — Փառահամար
Ավագյան Ար. — Եղել է, չի եղել
Ավետիսյան Ժ. — Ճանապարհներ, կամուրջներ
Արազի — Արյունոտ ծաղիկներ
Արամյան Վ. — Թանաքագույն ծաղիկներ
Արաբս — Զիմմի
Արզումանյան Ա. — Հրեղեն ոտնահետքեր
Արմեն Մ. — Երկեր, հ. 5
Բակունց Ա. — Եղբայրության ընկուզենիներ
Գալշոյան Մ. — Ծաղկած քարեր
Գարլյան Զ. — Սայաթ-Նովա (ռուսերեն), Մոսկվա
Թափալյան Քր. — Հայրենաշեն
Թորգոմյան Ծ. — Պատմվածքներ
Խանդամուրյան Հ. — Լուրջ կատակ
Խանդաղյան Ս. — Ծարավ եմ, ջուր տվեք (ռուսերեն)
Մկրտչյան Հ. — Անհայտ զինվորի հիշատակարանը (գիրք 2)
Պետրոսյան Վ. — Դեղատուն «Անի»
Պողոսյան Հռ. — Արձագանք
Սարգսյան Մ. — Բարև, բարի արև
Սեկոյան Ա. — Եթե Որոտանը խոսեր (ռուսերեն), Մոսկվա
Միրաս Հմ. — Նախօրեին (ռուսերեն), Մոսկվա
Սևունց Գ. — Թեհրան, գիրք 1, 2
Ղումասյան Ս. — Բաղարերդ

Դրամատուրգիա

Դեմիրճյան Դ. — Քաջ Նազար
Խալափյան Զ. — Հրաշք երեխա

Ժողովածուներ

Կեսար (Հայ արձակագիրների ժողովածու, ռուսերեն)
Հայկական պոեզիայի ժողովածու (Ֆրանսերեն, Փարիզ)

Դասականներ

Ազայան Գ. — Երկերի ժողովածու, հ. 1, 2
Զոհրապ Գ. — Գրականության մասին

Իսահակյան Ավ. — Արձակ
Իսահակյան Ավ. — Երկերի ժողովածու, հ. 1
Իսահակյան Ավ. — Լռության ասպետը
Իսահակյան Ավ. — Կտակ
Ներսես Շնորհալի — Ողբ Եդեսիոյ
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 7
Սունդուկյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 1
Տերյան Վ. — Աշնան մեղեդի
Տերյան Վ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Լենինգրադ
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 2
Փափազյան Վրթ. — Երկերի ժողովածու, հ. 2, 3

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աղաբաբյան Ս. — Եղիշե Չարենց, գիրք 1
Անանյան Գ. — Սովետահայ պոեզիան Մեծ Հայրենականի տարիներին
Ավետիսյան Զ. — Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան
Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը
Դանիելյան Կ. — Հայ գյուղագրությունը 19-րդ դարում (1860—1890)
Զաքարյան Ա. — 20-րդ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը
Լևո — Երկերի ժողովածու, հ. 3 (գիրք 2)
Կարինյան Ա. — Մամուրյանը մշակույթի պատմության մասին
Շտիկյան Ս. — Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801—1850)
Սարինյան Ս. — Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը
Սողոմոնյան Ս. — Դանթե, Պետրարկա, Շեքսպիր, Մոլիեր։ Եվրոպական ռեալիզմի պատմությունից
Ստեփանյան Գ. — Կենսագրական բառարան, հ. 1
Չարենցյան ընթերցումներ, հ. 1
Քենդերյան Հ. — Հովհան Մայրագոմեցի

Թարգմանություն

Ազատության կանչ (ասիական բանաստեղծների ժողովածու)
Այս հողը իմն է (աֆրիկյան բանաստեղծների ժողովածու)
Բարբյուս Հ. — Իրապատումներ
Բյոլլ Հ. — Բիլլարդ ինն անց կեսին
Բրեխթ Բ. — Լուկուլլոսի դասը
Գոնչար Օ. — Տրոնկա
Դորոխով Ա. — Հարկավոր է հիշել
Դրայզեր Թ. — Երկերի ժողովածու, հ. 10
Ժպիտը (ինդոնեզական նովելներ)
Լերմոնտով Յու. — Մեր ժամանակի հերոսը
Լինդսեյ Ջ. — Հաննիբալ
Կոլդուել Է. — Ջեննի
Կոչևսկի Վ. — Յոլքեր

Կուլիև Կ. — Բարի աչքով
Կուպեր Ֆ. — Գազանորսը
Հաշեկ Յ. — Քաջարի զինվոր Շվեյկի արկածները
Մացումոտո Ս. — Կետեր և գծեր
Մորուա Ա. — Յոթ նովել
Նասիմի Ի. — Հատընտիր
Շեքսպիր Վ. — Բրոնիկներ, հ. 2
Չակովսկի Ա. — Բլոկադա, գիրք 1, 2
Չեխով Ա. — Ընտիր պատմվածքներ
Չեխով Ա. — Պատմվածքներ
Պետեֆի Շ. — Բանաստեղծություններ
Ռեմարկ Է. — Հաղթական կամար
Ռիդ Մ. — Երկերի ժողովածու, հ. 3
Ռիլսկի Մ. — Կամուրջներ
Վինոկուրով Եվ. — Հատընտիր
Տաջիկական քնար
Տիչինա Պ. — Իմ ժողովուրդ
Տիչինա Պ., Ռիլսկի Մ. — Հայաստանի և հայ կուլտուրայի մասին
Ֆստրովսկի Ա. — Ամպրոպ

1974

Հունվարի 2-ին

Նշվում է արձակագիր Ստեփան Ալաջաջյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա պարգևատրվում է «Պատվո նշան» շքանշանով։

Հունվարի 3-ին

Նշվում է Արաքսի ծննդյան 70-ամյակը։ Այդ կապակցությամբ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունվարի 6-ին

Վախճանվեց արձակագիր, լրագրող Վարդան Ատրյանը (Աստվածատրյան, ծնվ. 1896 թ.)։

Հունվարի 15—16-ը

Ներսես Շնորհալու ծննդյան 800-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան, Երևանի համալսարանը և Մաշտոցի անվան Մատենադարանը կազմակերպում են գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներ են կարդում Վ. Նալբանդյանը («Միջնադարի մեծ մտածողն ու բանաստեղծը»), Շ. Նազարյանը («Ներսես Շնորհալին միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ»), Ղ. Այվազյանը («Ներսես Շնորհալին ռուս գրականության մեջ»), Գ. Հակոբյանը («Ներսես Շնորհալին և հայ հոգևոր բանաստեղծությունը»), Ն. Բահմիդյանը («Ներսես Շնորհալին և արևելյան քրիստոնեական երգարվեստը»)։ Զեկուցումներ են կարդում նաև Ա. Մնացականյանը, Լ. Տեր-Պետրոսյանը, Վ. Ներսիսյանը, Մ. Մկրտչյանը, Ա. Ղազինյանը։

Հունվարի 20-ին

Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն որոշում է 1975 թվականի հոկտեմբերին հանդիսավորությամբ նշել հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ ստեղծվում է հանրապետական կառավարական հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Ե. Քոչինյան (հանձնաժողովի նախագահ), Լ. Ա. Ստեփանյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ), Էդ. Ս. Թոփչյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ), Գ. Գ. Աբաշիձե, Ս. Բ. Աղաղարյան, Վ. Մ. Աճեմյան, Ստ. Ե. Ալաջաջյան, Ռ. Ա. Արզումանյան, Ա. Տ. Ասլանյան, Հ. Մ. Բաղդասարյան, Ս. Բ. Բաղդասարյան, Մ. Բ. Բայրամով, Վ. Ա. Դավթյան, Կ. Լ. Դալլաքյան, Ռ. Վ. Զարյան, Գ. Գ. Էմին, Հ. Վ. Թարջումանյան, Ս. Ս. Թովմասյան, Շ. Ա. Թորոսյան, Մ. Ա. Իբրահիմով, Ա. Մ. Ինճիկյան, Ն. Վ. Լևոնչևսկի, Մ. Կ. Լուկոնին, Ս. Ն. Խանզադյան, Ա. Վ. Խաչիկյան, Ս. Բ. Կապուտիկյան, Վ. Մ. Կոզաչենկո, Լ. Մ. Կրոյան, Ստ. Մ. Կուրտիկյան, Գ. Ա. Հայրյան, Վ. Ե. Համա-

զասպյան, Վ. Հ. Համբարձումյան, Վ. Մ. Հարությունյան, Ս. Մ. Հարությունյան, Գ. Հ. Հասրաթյան, Լ. Հ. Հախվերդյան (հանձնաժողովի քարտուղար), Ս. Տ. Հախումյան, Հր. Կ. Հովհաննիսյան, Հ. Տ. Ղանալանյան, Գ. Բ. Ղարիբջանյան, Լ. Պ. Ղարիբջանյան, Հ. Ն. Ղափլանյան, Գ. Մ. Մարկով, Ս. Ա. Մելքումյան, Էդ. Մ. Միրզոյան, Վ. Ա. Մկրտչյան, Մ. Ա. Մատոյան, Մ. Հ. Մուրադյան, Ս. Ե. Նազարյան, Վ. Ս. Նալբանդյան, Ս. Ս. Նարովչատով, Մ. Գ. Ներսիսյան, Մ. Ա. Շաթիրյան, Հ. Բ. Շիրազ, Ա. Բ. Զակովսկի, Ռ. Հ. Պարսամյան, Վ. Հ. Պետրոսյան, Կ. Ի. Պողոսյան, Ս. Կ. Պողոսյան, Էդ. Մ. Ջրբաշյան, Հ. Ս. Սահյան, Ռ. Մ. Սամսոնով, Գ. Բ. Սարյան, Ս. Ս. Սաֆարյան, Կ. Մ. Սիմոնով, Վ. Ս. Սոմով, Ա. Ա. Սուրկով, Վ. Ա. Սիրցև, Ս. Վ. Վահունի, Գ. Ա. Տեր-Գրիգորյան, Ն. Ս. Տիխոնով, Կ. Բ. Ուզումյան։

«Գրական թերթ», № 3

Հունվարի 25-ին

Նշվում է Ադամ Միցկևիչի ծննդյան 175-ամյակը։

Հունվարի 28-ին

ՀՍԳ միության կուսակցական ժողովում քննարկվում է «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցական ծրագրերում» հարցը։ Զեկուցում է Կ. Սիմոնյանը, ելույթ են ունենում Ռ. Աթայանը, Մ. Շաթիրյանը, Ս. Խանզադյանը, Գ. Էմինը, ուսուցիչ Վ. Եսայանը։

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Գ. Սարյանի ստեղծագործությանը։ Երեկոն բաց է անում Ա. Ինճիկյանը։

Հունվարի 28—29-ը

Մոսկվայի գրողների կենտրոնական տանը տեղի է ունենում քննադատների խորհրդակցություն՝ նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» որոշմանը։ Խորհրդակցությունը բաց է անում Վ. Օզերովը, զեկուցում է Լ. Նովիչենկոն։

Հունվարի 29-ին

Մոսկվայում բացվում է Վլադիմիր Մայակովսկու թանգարանը։

Հունվարի 31-ին

Վախճանվեց թարգմանչուհի Մարո Սաղյանը (ծնվ 1910 թ.)։

Հունվար

Խաչիկ Դաշտենցը ընտրվում է ԳԴՀ-ի շեքսպիրյան ընկերության անդամ։

Փետրվարի 6-ին

Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի է ունենում հոբելյանական երեկո՝ նվիրված Պ. Սևակի ծննդյան 50-ամյակին։ Ներածական խոսք է ասում Հր. Հովհաննիսյանը։ Զեկուցումով հանդես է գալիս Վ. Մնացա-

կանյանը։ Հիշատակի խոսք են ասում Գ. Խանջյանը, Ս. Կապուտիկյանը, Ջ. Թորոսյանը, օպերական գրականագետ Ն. Ջուսոյտին։

Պ. Սևակի ծննդյան 50-ամյակին նվիրված երեկոներ են կազմակերպվում նաև հանրապետության այլ քաղաքներում։ Հանրապետական մամուլը («Գրական թերթ», № 6, «Սովետական գրականություն», № 1, «Գարուն», № 1, «Սովետական Հայաստան», № 31, «Ավանդարդ», № 16, «Հայրենիքի ձայն», № 6, «Երեկոյան Երևան», № 30) լայնորեն անդրադառնում է այդ նշանակալի տարեդարձին։ Տպագրվում են Պ. Սևակի մի շարք անտիպ ստեղծագործություններ։

Փետրվարի 8-ին

«Գրական թերթի» 1973 թ. մրցանակները շնորհվում են Գ. Սարյանին, Ռ. Արամյանին, Լ. Մկրտչյանին, Գ. Ջանիկյանին։

Փետրվարի կեսերին

ՍՍՀՄ գրողների միությունում տեղի է ունենում գեղարվեստական թարգմանության խորհրդի ընդլայնված պլենումը՝ նվիրված եղբայրական գրականությունների փոխհարստացման գործում թարգմանական գրականության ունեցած նշանակությանը։ Հայաստանից ելույթ է ունենում Լ. Մկրտչյանը։

Բելգիայի Լուվեն քաղաքում լույս է տեսնում սփյուռքահայ գիտնական Սիրարփի Տեր-Ներսիսյանի «Բյուզանդական և հայկական ուսումնասիրություններ» երկհատոր աշխատությունը։

ՍՍՀՄ ժուռնալիստների միությունը Երևանում հրավիրում է Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հանրապետական և մարզային գրախոսների սեմինար։

Սեմինարը ներածական խոսքով բաց է անում ՀԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Կ. Դալլաբյանը։ Ելույթ են ունենում ՍՍՀՄ ժուռնալիստների միության գրաքննադատների և գրախոսների բաժանմունքի նախագահ Եվգենի Օսետրովը, «Լիտերատուրնայա գազետայի» գրական կյանքի բաժնի խմբագիր՝ Կ. Սերեբրյակովը, «Վոպրոսի լիտերատուրի» ամսագրի գրականության տեսության բաժնի վարիչ Ս. Լոմինաձեն, «Լիտերատուրնոյե օբոզրենիե» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ Վ. Ն. Խմարան։ Եզրափակման խոսք է ասում Ա. Խաչիկյանը։

Փետրվար

Տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության նիստը՝ նվիրված 1972 թ. ՍՄԿԿ Կենտկոմի ընդունած «Գրական-գեղարվեստական քննադատության մասին» որոշման լույսի տակ գրական մամուլի առաջնահերթ խնդիրներին։ Հաղորդումներով հանդես են գալիս խմբագիրներ Ստ. Կուրտիկյանը, Մ. Շաթիրյանը, Վ. Պետրոսյանը և «Գրական թերթի» գլխավոր խմբագրի տեղակալ Ֆ. Մելոյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Ս. Դարոնյանը, Ս. Սարինյանը, Շ. Թորոսյանը, Գ. Արշակյանը, Ա. Գրիգորյանը և Ն. Ադալյանը։

Մարտի 8-ին

Նշվում է Ռուբեն Որբերյանի ծննդյան 100-ամյակը։

Նշվում է գրականագետ Մինաս Հյուսյանի ծննդյան 70-ամյակը։

Մարտի 9-ին

Վախճանվեց բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ Խաչիկ Դաշտենցը (Տոնոյան, ծնվ. 1910 թ.)։

Մարտի 30-ին

Վախճանվեց թարգմանիչ Հարություն Հարությունյանը (ծնվ. 1896 թ.)։

Մարտ

Ռիգայի «Լիսնամա» հրատարակչությունը լատիշերեն լույս է ընծայում ժամանակակից հայ բանաստեղծության ժողովածու՝ «Սուրբ է քո հողը» վերնագրով։ Տպագրվում են Գ. Սարյանի, Պ. Սևակի, Հ. Շիրազի, Ա. Գրաշու, Հ. Սահյանի, Մ. Մարգարյանի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Հր. Հովհաննիսյանի, Վ. Դավթյանի, Լ. Դուրյանի, Ա. Ավագյանի, Ա. Սահակյանի ստեղծագործություններից։

Ապրիլի 5-ին

Նշվում է Սողոմոն Տարոնցու ծննդյան 70-ամյակը։

Ապրիլի 11-ին

Թբիլիսիի ֆիլհարմոնիայի դահլիճում տեղի է ունենում բարեկամության երեկո՝ նվիրված հայ մշակույթին ու գրականությանը։ Երեկոն բաց է անում Վրաստանի գրողների միության վարչության նախագահ Գ. Աբաշիձեն։ Ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Ս. Կապուտիկյանը, Ի. Նոնեշվիլին, Գ. Էմինը, Կ. Կալաձեն և ուրիշներ։

Ապրիլի 22-ին

Լենինյան մրցանակներ են շնորհվում արձակագիր Կոնստանտին Սիմոնովին («Ողջերը և մեռածները» եռագրության համար) և ակադեմիկոս Միխայիլ Խրապչենկոյին («Գրողի ստեղծագործական անհատականությունը և գրականության զարգացումը» գրքի համար)։

Ապրիլի 23—27-ը

Թբիլիսիում տեղի է ունենում գրողների և քննադատների համամիութենական ստեղծագործական խորհրդակցություն, ուր քննարկվում է սովետական գրականության գլխավոր խնդիրներից մեկը՝ կոմունիստի կերպարի մարմնավորումը գրականության մեջ։ Ելույթ են ունենում միութենական տարբեր հանրապետությունների 27 ներկայացուցիչներ, հայ գրողներից՝ Ջ. Բալայանը։

Ապրիլի 26-ին

Վախճանվեց բանաստեղծ Գրիգոր Գյուլյանը (Գյուլեջյան ծնվ. 1912 թ.)։

Ապրիլ

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 1) Ա. Զարենցը հրապարակում է «Զարենցը և Պուշկինը» հոդվածը, որը պարունակում է նորահայտ նյութեր Ե. Զարենցի գրական ժառանգությունից։

Հանդեսի նույն համարում Գ. Անանյանը հրապարակում է Ե. Զարենցի երկու անտիպ նամակները՝ ուղղված Ա. Մռավյանին։

Մայիսի 9-ին

Նշվում է Հովհաննես Շիրազի ծննդյան 60-ամյակը։ «Գրական թերթը» (№ 19) տպագրում է ՀՍԳ միության վարչության ողջույնը։ Այդ առթիվ հանրապետական մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ («Սովետական Հայաստան», № 38, «Սովետական գրականություն», № 4, «Գարուն» № 6)։

ՀՍԳ միության վարչության ողջույնը

«Թանկագին Հովհաննես Շիրազ.

Հայաստանի գրողների միության վարչությունը, Ձեր բոլոր գրական բարեկամները սիրով ու սրտանց ողջունում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ։

Մենք ուրախության զգացումով ենք նշում, որ Դուք չորս տասնամյակների ընթացքում դարձաք սիրված ու ճանաչված բանաստեղծ ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև բովանդակ սովետական երկրում և նրա սահմաններից դուրս։ Դուք պոեզիայի մեջ մտաք՝ բերելով հայ նոր քնարերգության գարնանային շունչը, հայրենի եղերքի ժպտուն պատկերը, երիտասարդ մարդու բուռն ու բանաստեղծական բնավորությունը, նոր օրերի խինդը, վերածնված հայ ժողովրդի արժանապատվության ու երջանկության երգը։ Դուք միանգամից հազարավոր ընթերցողների համար դարձաք սիրելի, Ձեր ջերմ խոսքը հնչեց իբրև մարդկային սրտին հարազատ մեղեդի։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Դուք բանաստեղծի հրաշունչ երգով նշավակեցիք անարգ թշնամու վայրագությունը և պանծացրիք սովետական մարդու անզուգական հաղթանակը։

Ձեր պոեմներն ու բանաստեղծությունները, որ սնվել են հայ դասական պոեզիայի զուլալ ակունքներից, միաժամանակ կրում են ստեղծագործական անհատականության վառ դրոշմը, մի անհատականություն, որ Ձեր պոեզիան դարձնում է ճանաչելի և արժեքավոր ողջ հայ գրականության մեջ։

Բարձր գնահատելով Ձեր տաղանդի ուժն ու հարստությունը, մենք լի ենք այն հույսով, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր մեծ աշխատանքը՝ ի փառս հայրենի գրականության»։

«Գրական թերթում» (№ 19) տպագրվում է Հր. Մաթևոսյանի և Ս. Սարինյանի երկխոսությունը՝ «Գրողի մասնագիտական պատվախնդրությունը» թեմայով։

Մայիսի 15-ին

Դ. Վարուժանի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Հայաստանի գրողների տանը տեղի է ունենում երեկո։ Ներածական խոսք է ասում Ս. Կա-

պուտիկյանը, զեկուցում է Ստ. Կուրտիկյանը, հուշեր է պատմում Ա. Պատրիկը։

Գ. Վարուժանի անվան դպրոցում տեղի է ունենում բանաստեղծի հուշարձանի բացումը։ Մամուլում տպագրվում են հոդվածներ («Գրական թերթ», № 17, 21, «Սովետական գրականություն», № 4)։

Մայիսի 17-ին

Նշվում է Համո Սահյանի ծննդյան 60-ամյակը։ Այդ կապակցությամբ «Գրական թերթում» (№ 20) տպագրվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը։ Հոդվածներ են տպագրվում «Սովետական գրականություն» ամսագրում (№ 5), «Սովետական Հայաստան» օրաթերթում (№ 118) և մամուլի այլ օրգաններում։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության մայիսի 20-ի հրամանագրով Համո Սահյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

ՀՍԳ միության վարչության ողջույնը

«Թանկագին Համո Սահյան.

Հայաստանի գրողների միության վարչությունը սրտանց ողջունում է Ձեզ՝ Ձեր ծննդյան արգասավոր 60-ամյակի առթիվ։

Գրականություն մուտք գործելով որպես ճշմարիտ հույզի և նուրբ զգացումի բանաստեղծ, Դուք առաջին իսկ բանաստեղծություններով հաստատեցիք Ձեր գրական ինքնությունը և ընթերցողի առջև բացեցիք հարուստ և անկրկնելի մի աշխարհ, որ ընթերցողին հայտնի է սահյանական աշխարհ անունով։ Ձեր «Մայրամուտից առաջ», «Քարափների երգը», «Սեզամ, բացվիր» ժողովածուները ժամանակակից հայ պոեզիայի ակնառու նվաճումներից են և իրենց ուրույն տեղը կգրավեն հայ բազմադարյան պոեզիայի պատմության մեջ։

Որդեգրելով հայ դասական պոեզիայի կենսունակ ավանդները, Դուք նոր խորություն ու զույն հաղորդեցիք մեր բանաստեղծական խոսքին։ Ձեր բանաստեղծություններին հատուկ զգացմունքայնությունն ու անմիջականությունը, որ դիտում է ընթերցողին, արդյունք է ոչ միայն անկեղծության, այլև բարձր վարպետության, որի շնորհիվ հասել եք ձևի և բովանդակության արտակարգ ներդաշնակության և երաժշտականության։

Սիրելի հոբելյար, մեծ է Ձեր վաստակը սովետահայ գրականության զարգացման գործում, նաև Ձեր շնորհիվ է, որ ժամանակակից հայ պոեզիան դուրս եկավ միութենական ասպարեզ և նվաճեց մեր մեծ երկրի բազմահազար ընթերցողների սերն ու համակրանքը»։

Մայիսի 22-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության նիստը՝ ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի, «Հայաստան» հրատարակչության աշխատակիցների մասնակցությամբ։ «Արդիական թեման «Հայաստան» հրատարակչության պլաններում» և «ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների թարգմանության հարցը» զեկուցումներով հանդես են գալիս «Հայաստան» հրատարակչության

գլխավոր խմբագիր Վ. Բալայանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գլխավոր խմբագիր Գ. Բալասանյանը։ Մտքերի փոխանակությանը մասնակցում են Մ. Մարգարյանը, Լ. Հախվերդյանը, Էդ. Թոփչյանը, Ա. Արաքսմանյանը, Լ. Միրիջանյանը, Շ. Թորոսյանը և Ս. Բաղդասարյանը։

Մայիսի 24-ին

ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի է ունենում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հիմնադրման 250-ամյակին։ «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան սովետական գիտության առաջատար կենտրոնն է» թեմայով զեկուցում է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Մայիսի 31-ին

Ա. Ս. Պուշկինի ծննդյան 175-ամյակի կապակցությամբ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում անցկացվում է գիտական նստաշրջան։ Բացման խոսք է ասում թանգարանի դիրեկտոր Ս. Մելիքսետյանը։ Զեկուցումներով հանդես են գալիս Գ. Հովնանը, Գ. Մադոյանը, Բ. Հովակիմյանը։

Մայիս—հունիս

Հանրապետությունում անցկացվում են «պուշկինյան» հանդիսություններ։

Հունիսի 2-ին

Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ա. Ս. Պուշկինի ծննդյան 175-ամյակին։ Բացման խոսք է ասում Երևանի քաղաքի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը։ «Պուշկինը և Հայաստանը» թեմայով զեկուցում է Ղ. Այվազյանը։ Ելույթ են ունենում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ս. Նարովչատովը և Հր. Հովհաննիսյանը։

Բեռլինի «Ֆոլկ ունդ վելտ» (Ժողովուրդ և աշխարհ») հրատարակչությունը լույս է ընծայում Հովհ. Թումանյանի երկերի հատընտիրը՝ «Աղավնու վանքը» խորագրով (ժողովածուի նախաբանի հեղինակ՝ Էլգի Էրբ, թարգմանիչներ՝ Ադոլֆ Էնդլեր և Ֆրիդեման Բերգեր)։ Գրքի առթիվ գերմանական մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ։ «Գրական թերթը» (№ 23) քաղվածքներ է տպագրում այդ հոդվածներից։ Ահա դրանցից մի քանիսը.

«Այս գիրքը նպատակ ունի գերմանացի ընթերցողին ծանոթացնել Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններին, մի բանաստեղծ, որին իրավամբ համարում են հայկական Պուշկին։ Այս արտահայտությունը չափազանց դիպուկ բնորոշում է այն դերը, որ խաղացել է բանաստեղծը հայ գրականության մեջ։

Որպես ժողովրդի իսկական զավակ, նա մասնակցել է իր ժամանակի ազգային-ազատագրական շարժումներին։ Որպես բանաստեղծ, նա միշտ էր

աչքի է ընկել նուրբ դիտողականությամբ, ժողովրդական զուսպ ու լակոնիկ ոճով, կենսասիրությամբ ու սրամիտ հումորով...»։

«ՈՒՆԶԵՐԻ ՅԱՅՏ»
(«Մեր ժամանակը»)

«Այս հատորով «Ֆոլկ ունդ վելտ» հրատարակչությունը մեզ է մատուցում հայ ժողովրդի լեգենդները, զրույցներն ու հեքիաթները, որոնք մշակել է մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը։ Նրա ստեղծագործությունները ներթափանցված են մեծ սիրով դեպի իր բազմաչարչար երկիրը։ Դրանք արտահայտում են հայ ժողովրդի խոհերն ու երազանքները։ Կարդալով գրքում ներկայացված ստեղծագործությունները, ակամա դու էլ ես ապրում հայ ժողովրդի ճակատագրով, նրա դարերի տառապանքով ու այսօրվա երջանկությամբ»։

«ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳԻՇԵ ՆՈՅԵՍՏԵ ՆԱԽՐԻԽՍԵՆ»
(«Բրանդենբուրգյան վերջին լուրեր»)

«Մենք առիթ ունեցանք ծանոթանալու մինչև այժմ անհայտ մի մեծ բանաստեղծի ստեղծագործություններին։ Այս գրքում մենք զգում ենք հայ ժողովրդի կրած տառապանքը թուրքական լծի տակ, ինչպես նաև՝ բանաստեղծի ջերմ սերը իր երկրի ու ժողովրդի նկատմամբ։ Այս վերջինի պերճախոս վկայությունն է «Անուշ» պոեմը՝ հզոր և նուրբ մի ստեղծագործություն։ Գրքում ներկայացված են նաև հայկական ժողովրդական հեքիաթներ, որոնք վկայում են Հովհ. Թումանյանի խոր իմացության ու ժողովրդական ստեղծագործությունների նկատմամբ ունեցած մեծ սիրո մասին»։

«ՏՅՈՒՐԻՆԳԵՐ ՏԱԳԵՐԲԼԱԴ»
(«Թյուրինգյան օրաթերթ»)

«Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները իր ժողովրդի կյանքի հայելին են, կյանք, որ անցել է տառապանքների, զրկանքների բովով ու միշտ ենթակա է եղել ոչնչացման վտանգին։

«ԳՈՌԲՈՒԻՍԵՐ ՏԱԳԵՐԲԼԱԴ»
(«Գոռբուայան լրագիր»)

«Ինչպես բոլոր մեծ բանաստեղծները, Թումանյանը մեծ ավանդ է ներդրել իր հայրենի գրականության զարգացման գործում։ Ինչպես բոլոր մեծ բանաստեղծները, նա եղել է իր ժողովրդի բանաստեղծը, նրա շահերի պաշտպանը։ Իր ստեղծագործությամբ նա նպաստել է ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքին։ Թումանյանի ստեղծագործությունը իր արմատներով գնում է դեպի իր ժողովուրդը, իր երկրի բանահյուսությունը։ Նրա չափածոն ապշեցնում է բազմակողմանիությամբ, կրքով և ուղղված է իր ժողովրդի ազատագրության գործին։ Նրա բանաստեղծությունները սիեղերական հնչեղություն ունեն։

Թումանյանը հավաքել է հայկական ժողովրդական բանահյուսությունը, որը չէր կարող մեծ ազդեցություն չունենալ նրա ստեղծագործության վրա։ Դա զգացվում է նրա հեքիաթներում, «Աղավնու վանքում» և առաջին հերթին «Սասունցի Դավիթ» պոեմում։ Այս էպոսի մշակման գերմաներեն թարգմանությունը շատ կարևոր ու նշանակալից երևույթ է։ «Սասունցի Դավիթը» հայ-

կական ժողովրդական բանահյուսության գանձարան է։ Այս պոեմի ընթերցումը մեր առջև բացում է մինչև այդ մեզ անծանոթ մի աշխարհ»։

«ԶՈՆՏԱԳ ԲԵՌԼԻՆ»
(«Կիրակնօրյա Բերլին»)

Հունիսի 3-ին

Երևանում, Տեխնիկայի հանրապետական տանը, բացվում է բելոռուսական գրքի ցուցահանդես։

Հունիսի 4—5-ը

Ա. Ս. Պուշկինի ծննդյան 175-ամյակի առթիվ Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի, Երևանի, Թբիլիսիի, Բաքվի պետական համալսարանների համամիութենական գիտական համատեղ կոնֆերանսը՝ «Պուշկինը և սովետական պոեզիան» թեմայով։

Ներածական խոսք է ասում համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանը։ Զեկույթ են ունենում Ն. Ստարիկովան (Մոսկվա)՝ «Պուշկինը և սովետական գրականությունը», Էդ. Ջրբաշյանը՝ «Պուշկինի ժառանգությունը և Ե. Չարենցի ստեղծագործության մի քանի հարցեր», Զ. Պապերնին (Մոսկվա)՝ «Պուշկինը և Մայակովսկին»։ Զեկուցումներով հանդես են գալիս նաև Յու. Մաննը, Մ. Միրզա-Ավագյանը, Ե. Տիխանչևան, Է. Նուրալովը, Ռ. Յուսուֆովը, Ռ. Սաֆարովը, Մ. Ռևը, Ի. Պոդգայեցկայան, Ն. Գեյը, Ե. Ալեքսանյանը, Ս. Գուլակյանը, Ռ. Պապայանը։

Հունիսի 7-ին

Նշվում է Վահագն Կարենցի ծննդյան 50-ամյակը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 4-ի հրամանագրով Վ. Կարենցը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունիսի 14-ին

Երևանում բացվում է Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի արձանը։ Արձանի բացման առթիվ տեղի է ունենում միտինգ։ Հայ գրողների անունից ելույթ է ունենում Ս. Կապուտիկյանը։

Հունիսի 16-ին

Գորիսում, Ակսել Բակունցի ծննդավայրում, նշվում է գրողի ծննդյան 75-ամյակը։ Զեկուցում է Ռ. Իշխանյանը, ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, Հ. Քենդերյանը։

Հունիսի 21-ին

Նշվում է Մկրտիչ Սարգսյանի ծննդյան 50-ամյակը։

Հունիսի 26-ին

Երևանում բացվում է Ալեքսանդր Թամանյանի արձանը։

Հունիս

Սլովենիայում լույս է տեսնում Նահապետ Քուչակի հայրենների ժողովածուն (թարգմանիչ՝ Յվետկո Զագորսկի)։

Փարիզում լույս է տեսնում Նահապետ Քուչակի հայրենների ժողովածուն՝ «Սիրո երգեր» խորագրով (թարգմանիչ՝ Վահե Գոդել)։

ՀՍԳ միության թարգմանիչների և ռուսական բաժանմունքի համատեղ նիստում քննարկվում է Ե. Չարենցի ռուսերեն նոր ժողովածուն, որը լույս էր տեսել 1973 թ. Լենինգրադում՝ «Բանաստեղծի գրադարան» մատենաշարով։ Ներածական խոսք է ասում ժողովածուի ընդհանուր խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ Գ. Թաթոսյանը։ Արտահայտվում են Էդ. Ջրբաշյանը, Ա. Գրիգորյանը, Վ. Բալասանը, Ս. Վահունին։

Հուլիսի 4-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում Սերո Խանզադյանին, Հրաչյա Հովհաննիսյանին և Վրույր Բալասանին։

Հուլիսի 9-ին

Երևանում տեղի է ունենում գրասենների կամավոր ընկերության հիմնադիր համագումարը։ Ընկերության նախագահ է ընտրվում ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ս. Մերգելյանը, նախագահի տեղակալ՝ Ս. Կապուտիկյանը։

Սախալինում անց են կացվում Հայկական ՍՍՀ մշակույթի օրեր։

Հուլիսի 17-ին

Հայաստանի ժուռնալիստների միության ակնարկագիրների բաժանմունքի նիստում «Գիտատեխնիկական հեղափոխությունը և ժուռնալիստիկան» թեմայով զեկուցում է Կ. Սիմոնյանը։

Հուլիսի 19-ին

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի լավագույն թարգմանական ստեղծագործության համար հայտարարված ամենամյա մրցանակաբաշխության մրցանակը առաջին անգամ շնորհվում է Ս. Վահունուն՝ Յ. Հաշեկի «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները» վեպի թարգմանության համար։

Օգոստոսի 20-ին

Վախճանվեց ուիյուքահայ ականավոր գրող Շահան Շահնուրը (ծնվ. 1903 թ.)։

Օգոստոս

Լույս է տեսնում Հայկական սովետական հանրագիտարանի առաջին հատորը։

Վրացական ՍՍՀ գրողների միության հարավ-օսեթական բաժանմունքի «Ֆիդուապ» ամսագրի օգոստոսյան համարը նվիրվում է Հայաստանի արվեստին և գրականությանը։

Սեպտեմբերի 3—4-ը

Մոսկվայում դումարվում է ՍՍՀՄ գրողների միության վարչության պլենումը՝ նվիրված սովետական գրողների առաջին համամիութենական համագումարի 40-ամյակին։ Բացման խոսք է ասում Գ. Մարկովը, զեկուցումով հանդես է գալիս Ն. Տիխոնովը։ Հայ գրողներից ելույթ է ունենում Հր. Հովհաննիսյանը։

Սեպտեմբերի 11-ին

Երևանում, Տեխնիկայի տանը, բացվում է ռումինական գրքի ցուցահանդես։

Սեպտեմբերի 20-ին

Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ստեղծվում է համամիութենական հոբելյանական կոմիտե։

Կոմիտեի կազմը.

Ա. Ա. Սուրկով (նախագահ), Մ. Կ. Լուկոնին (նախագահի տեղակալ), Ս. Ս. Թովմասյան (նախագահի տեղակալ), Գ. Գ. Աբաշիձե, Ա. Տ. Ալիմժանով, Տ. Ասկարով, Ս. Ա. Բարուզդին, Ա. Ա. Բելյան, Վ. Է. Բեկման, Էդ. Ս. Թոփչյան, Մ. Թուրսուն-Զադե, Ն. Վ. Լեսյուչևսկի, Ա. Պ. Լուպան, Ա. Ի. Խաչատրյան, Գ. Կ. Խոլոպով, Ի. Ա. Կասումով, Վ. Պ. Կոզաչենկո, Վ. Ֆ. Կուխարսկի, Հր. Կ. Հովհաննիսյան, Գ. Հ. Մանասյան, Է. Ն. Մամեդով, Գ. Մ. Մարկով, Լ. Ի. Մատվեև, Էդ. Բ. Մեժելայտիս, Ս. Վ. Միխալկով, Ս. Ա. Մելքումյան, Ս. Ս. Նարովչատով, Մ. Ս. Շահինյան, Ս. Վ. Շերվինսկի, Ա. Բ. Զակովսկի, Ի. Ի. Զիսիկվիշվիլի, Ս. Վ. Սարատակով, Կ. Մ. Սիմոնով, Ա. Վ. Սաֆրոնով, Վ. Ս. Սոմով, Յու. Ն. Օվերչենկո, Մ. Տանկ, Ն. Ս. Տիխոնով, Ա. Ե. Քոչինյան Ն. Տ. Ֆեդորենկո։

«Գրական թերթ», № 38

Սեպտեմբերի 25-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության պլենումը՝ նվիրված սովետական գրողների համամիութենական առաջին համագումարի 40-ամյակին։

Ներածական խոսք է ասում Ս. Խանզադյանը։ «Կուսակցության և ժողովրդայնության ուղիներով» զեկուցմամբ հանդես է գալիս Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ստ. Կուրտիկյանը, Դ. Մալյանը, Լ. Միրիջանյանը, Ա. Դարբինին, Հ. Մկրտչյանը, Հ. Ջնդին, Ա. Շամիլովը և Ռ. Աթայանը։

Հոկտեմբերի 4-ին

Երուսաղեմի սուրբ Հակոբյան հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայում Պ. Սևակի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Ընտիր բանաստեղծություններ» խորագրով (Թարգմանիչ՝ Կարիկ Պասմաճյան)։

Հոկտեմբերի 11-ին

Նշվում է Շահեն Թաթիկյանի ծննդյան 50-ամյակը։

Հոկտեմբերի 15-ին

Չարենցավանում տեղի է ունենում ՀՍԳ միության և Չարենցավանի գործիքաշինական գործարանի կուսակցական կազմակերպությունների համատեղ ժողովը։ Ժողովում ելույթ են ունենում Հր. Հովհաննիսյանը, Կ. Սիմոնյանը, Գ. Էմինը, Վ. Կոշևսկին, Ս. Խանզադյանը և գործարանի ինժեներատեխնիկական կազմի ներկայացուցիչները։

Հոկտեմբերի 15—16-ը

Երևանի պետական համալսարանում տեղի է ունենում համալսարանի, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի և Մոսկվայի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին պատումի հրատարակության 100-ամյակին։ Բացման խոսք է ասում Մ. Մկրյանը։ «Սասունցի Դավիթը և ՍՍՀՄ ժողովուրդների էպոսները» զեկուցումով հանդես է գալիս պրոֆեսոր Ա. Պետրոսյանը (Մոսկվա)։ Զեկուցումներ են կարդում նաև Գ. Գրիգորյանը («Հայ էպոսագիտության զարգացման փուլերը»), Վ. Զալոյանը («Սասունցի Դավիթ» էպոսի սոցիալական բովանդակությունը»), Ա. Ղարիբյանը («Բարբառագիտության հարցերը էպոսի պատումների գրառումներում»), Վ. Բդոյանը («Ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում»), Ա. Բուդաղյանը («Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունները և հետազոտությունները արտասահմանում»), Մ. Մուրադյանը («Սասունցի Դավիթ» էպոսի երգվող հատվածների ձայնագրությունները Կոմիտասի և այլոց կողմից»)։

Հոկտեմբերի 17-ին

Վախճանվեց բանաստեղծուհի Վարսենիկ Աղասյանը (ծնվ. 1898 թ.)։

Հոկտեմբերի 18-ին

Վախճանվեց արձակագիր, թարգմանիչ, ՀՍՍՀ վաստակավոր դերասան Հանրի Զարյանը (ծնվ. 1928 թ.)։

Հոկտեմբերի 21-ին

Մոսկվայում տեղի է ունենում սոցիալիստական երկրների գրական թերթերի գլխավոր խմբագիրների առաջին խորհրդակցությունը՝ «Գրական մամուլի դերը ժողովուրդների մշակութային մերձեցման, խաղաղության համար մղվող պայքարի գործում» թեմայով։

Հոկտեմբերի 25-ին

Նշվում է ռուս ականավոր բանաստեղծ, հայ գրականության բարեկամ Ալեքսեյ Սուրկովի ծննդյան 75-ամյակը։ «Գրական թերթում» (№ 43) հրապարակվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Թանկագին Ալեքսեյ Ալեքսանդրովիչ. մենք, հայ գրողներս, ամբողջ սրտով շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ։ Առաջին անգամ չէ, որ մենք նշում ենք Ձեր մեծ, փայլուն ծառայությունները մեր հայրենիքի, կոմունիստական կուսակցության, սովետական բազմազգ երկրի գրականության հանդեպ։ Ձեր պոեզիան մեր նոր հասարակությունը կառուցողների համար, մարդկանց համընդհանուր երջանկության պայքարում հենչում է որպես մի հզոր հիմն։ Ձեր հրապարակախոսությունը վառ կերպով արտահայտում է դարաշրջանի խոհերը, հայացքներն ու իղձերը, նրա շեշտա-

կի առաջընթացը, արդիականության վեհ իդեալները։ Քաղաքացու, կոմունիստի Ձեր անդուլ, հանդուն գործունեությունը հանուն խաղաղության, հանուն ժողովուրդների բարեկամության միշտ էլ արժանացել է սովետական ժողովրդի, Ձեր մտերիմ ու հեռավոր բարեկամների հիացմունքին։ Մենք հատկապես բարձր ենք գնահատում Ձեր բազմամյա սերտ ու անկեղծ բարեկամությունը հայ ժողովրդի, մեր մտավորականության հետ։

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ, ամուր սեղմում Ձեր վաստակած, առնական ձեռքը և մաղթում Ձեզ բերկրալի աշխատանքի երկար տարիներ, երիտասարդական ավյուն»։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակներ են շնորհվում արձակագիրներ Վասիլի Բիկովին («Կոթող» և «Ապրել մինչև լուսաբաց» վիպակների համար), Աբդիժամիլ Նուրպեիսովին («Արյուն և քրտինք» հեռապատումի համար), բանաստեղծներ Կայսին Կուլիևին («Հողի գիրք» ժողովածուի համար) և Լեոնիդ Մարտինովին («Հիպերբոլներ» բանաստեղծական ժողովածուի համար)։ Գրականության տեսության և պատմության բնագավառում մրցանակ է շնորհվում Բորիս Ռեիզովին («Ռոմանտիզմի դարաշրջանի ֆրանսիական պատմավեպը», «Բալզակի ստեղծագործությունը», «Ֆլոբերի ստեղծագործությունը», «XIX դարի ֆրանսիական վեպը» աշխատությունների շարքի համար)։

Նոյեմբերի 11-ին

Բուդապեշտում բացվում է գրական քննադատների միջազգային ասոցիացիայի կոնգրեսը՝ նվիրված «Քննադատը և մասսայական կուլտուրան» թեմային։

Նոյեմբերի 15-ին

Նշվում է Սերգեյ Սարինյանի ծննդյան 50-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 46) հրապարակվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Հարգելի Սերգեյ Սարինյան.

Հայաստանի գրողների միության վարչությունը, Ձեր գրական բազմաթիվ բարեկամները սրտանց ողջունում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 50-ամյակի կապակցությամբ։

Սովետական Հայաստանի գրական լայն հասարակայնության շրջաններում մեծ համարում ունի Ձեր գիտական գործունեությունը։ Դուք իրավամբ համարվում եք սովետահայ գրականագիտության նշանավոր դեմքերից մեկը։ Ձեր աշխատությունները աչքի են ընկնում իրենց գիտական խոր ընդհանրացումներով, լայն ընդգրկումներով, վերլուծական փայլուն մտքով և գեղարվեստական բարձր ճաշակով։

Առանձնապես արժեքավոր է Ձեր ավանդը հայ նոր գրականության պատմության հիմնհատորյակի ստեղծման, գրական ուղղությունների (ռեալիզմ, ռոմանտիզմ) գիտական արժեքավորման և տեսական իմաստավորման գործում։

Դուք անխոնջ ու հանդուն կերպով մասնակցում եք մեր գրական առօրյա հարցերի լուծմանը, կազմակերպում գրական քննադատության աշխատանքը։

Ցանկանում ենք Ձեզ, մեր սիրելի բարեկամ, երկար տարիների արդյունավետ գործունեություն, բաջառողջություն ու բերրի կյանք»։

Նոյեմբերի 25-ին

Վախճանվեց բանաստեղծ Արշալույս Սարոյանը (ծնվ. 1923 թ.)։

Նոյեմբերի 29-ին

ՀՍՍՀ պետական մրցանակներ են շնորհվում Էդ. Ջրբաշյանին («Գրականության տեսություն» բուհական դասագրքի չորրորդ վերամշակված հրատարակության համար) և Հր. Թամրազյանին (9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի համար)։

Նոյեմբեր

Դիլիջանում տեղի է ունենում գրամատուրգների փնջային սեմինար, որին մասնակցում են Անդրկովկասի Հանրապետությունների, Մոլդավիայի և Մոսկվայի գրամատուրգները։

Լոնդոնում «Մաշտոց պրեսս» հրատարակչությունը լույս է ընծայում սովետահայ պոեզիայի ժողովածու՝ Միշա Գյուտյանի թարգմանությամբ։

Դեկտեմբերի 10-ին

Նշվում է մանկագիր Հայրապետ Հայրապետյանի ծննդյան 100-ամյակը։ Այդ կապակցությամբ Հայաստանի գրողների միությունը և Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանի գիտխորհուրդը կազմակերպում են հանդիսավոր նիստ։ Նիստը բաց է անում Հր. Հովհաննիսյանը, զեկուցում է գրականագետ Ս. Լալախանյանը։ Գրողի մասին խոսք են ասում նրա անունը կրող դպրոցի դիրեկտոր Մ. Վարդանյանը, Սարմենը, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության դպրոցների վարչության պետի տեղակալ Ա. Դանիելյանը, ռադիոյի մանկա-պատանեական հաղորդումների բաժնի վարիչ Հ. Բաղալյանը, գրողի դուստր Մ. Հայրապետյանը։

Դեկտեմբերի 12-ին

ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ է ընտրվում Գ. Ջահուկյանը, թղթակից-անդամներ՝ Էդ. Ջրբաշյանը և Ռ. Զարյանը։

Դեկտեմբերի 26-ին

Երևանի Լենինի պողոտայի № 17 շենքում հիմնվում է Ե. Չարենցի տունթանգարանը։ Թանգարանում ներկայացվող ցուցանմուշները պատմում են բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին։

Դեկտեմբերի 31-ին

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, սովետահայ մշակույթի զարգացման գործում ունեցած վաստակի համար, գրող Ստ. Կուրտիկյանին, թարգմանչուհի Ս. Հայրապետյանին, թատերագետ Ս. Սարգսյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Դեկտեմբեր

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (№ 3) Գ. Մադոյանը հրապարակում է նորահայտ նյութեր Դ. Վարուժանի գրական ժառանգությունից։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Ալիքյան Ա. — Նժար
Ավագյան Ա. — Մաքրվող հեռուներ
Բաբայան Վ. — Հորձանուտ
Բախչունի Ա. — Միջօրեից հետո
Իսահակյան Ի. — Հեքիաթ արևի տակ
Կապուտիկյան Ս. — Երկերի ժողովածու, հ. 1
Կարենց Վ. — Իրիկնային ճամփաներ
Կորյուն Մ. — Առակներ (ռուսերեն), Մոսկվա
Հովհաննես Դ. — Երգերի պսակ
Շիրազ Հ. — Համամարդկային
Շիրազ Հ. — Քնար Հայաստանի, գիրք 3
Ջանյան Բ. — Կանչող հեռուներ
Սահակյան Յու. — Իմ մեղեդին
Սարյան Գ. — Ընտիր երկեր
Սարոյան Ա. — Ճամփեզրի ծառը
Սևակ Պ. — Երկերի ժողովածու, հ. 5

Արձակ

Ամիրբեկյան Վ. — Մենավոր ծառը
Անանյան Վ. — Որսորդական պատմվածքներ, պրակ 7
Ասատուրյան Հ. — Հովակիմին թոռները
Ավագյան Էդ. — Հավատ և սեր
Բեռ Գ. — Գողացված արևը
Գալշոյան Մ. — Բովտուն
Գրիգորյան Վ. — Թագավորի փոքր որդին։ Կարմիր ձյունը
Դարյան Զ. — Այս հին աշխարհը
Դեմիրճյան Դ. — Ընտիր պատմվածքներ
Դևկանց Ա. — Կաճեթա ծուռ
Էմին Գ. — Յոթ երգ Հայաստանի մասին
Խանզադյան Ս. — Սևանի լուսաբացը
Կուրտիկյան Ստ. — Լուսաշխարհ հանիմ զիմ գութան
Հարությունյան Վլ. — Վայոց ձոր, գիրք Բ
Ղուկասյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 2
Մաթևոսյան Հր. — Հաց և բան (ռուսերեն), Մոսկվա
Սահինյան Ա. — Կարոտ
Պետրոսյան Ռ. — Ներմակ թռչուններ
Մարգսյան Մ. — Քեռի Սիմոնը
Սեյրանյան Բ. — Սիրո լույս
Սիմոնյան Կ. — Ներսես Մաժան դեղագործը
Սիրաս Հմ. — Հայրենի աշխարհ
Ստեփանյան Ա. — Երբ իջնում է երեկոն

Սևան Գ. — Երեք սերունդ
Տոնոյան Կ. — Նիգուլը

Դրամատուրգիա

Արաքսմանյան Ա. — Պատեր անդունդի եզրին

Ժողովածուներ

Ալիշանը ժամանակակիցների հուշերում
Զանգակներ (մանկական բանաստեղծությունների ժողովածու)
Ժամանակակից հայ բանաստեղծներ (վրացերեն), Թբիլիսի
Լերմոնտովը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը (ռուսերեն)
Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 2
Պուշկինին՝ հայ բանաստեղծներից

Դասականներ

Աղայան Ղ. — Երկերի ժողովածու, հ. 3
Գրական ժառանգություն, հ. 7, Դ. Դեմիրճյան, Անծանոթ էջեր
Դեմիրճյան Դ. — Վարդանանք
Մեծարենց Մ. — Իրիկվան ձայներ
Մուրացան — Գևորգ Մարզպետունի (ռուսերեն)
Իսահակյան Ավ. — Երկերի ժողովածու, հ. 2
Իսահակյան Ավ. — Լիլիթ
Իսահակյան Ավ. — Հատընտիր (ռուսերեն)
Հովհաննես Սեբաստացի — Պատմութիւն Սեբաստիոյ
Պատկանյան Ռ. — Երկերի ժողովածու, հ. 8
Պռոշյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 1
Սունդուկյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 2

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկերի ժողովածու, հ. 6
Աղաբաբյան Ս. — Գրական հերկերում
Անանյան Գ. — Որոնումներ
Արիստակեսյան Ա. — Պարույր Սևակ
Գաբրիելյան Վ. — Արևմտահայ բանաստեղծներ
Գրիգորյան Ա. — Գեղարվեստական ոճ և պատկերի կառուցվածք (ռուսերեն)
Գրիգորյան Կ. — Ռուս-հայկական գրական և մշակութային կապերի հարաբերությունների պատմությունից (10—20-րդ դ. սկիզբ. ռուսերեն)
Զարյան Ռ. — Ավետիք Իսահակյան

Թամրազյան Հր. — Երիտասարդ Չարենցը
Թումանյան. 100 (ռուսերեն)
Իշխանյան Ռ. — Բակունցի կյանքն ու արվեստը
Կարդալով Նարեկացուն (ռուսերեն)
Հախվերդյան Լ. — Խաչակիրների կյանքն ու գործը
Հայ էսթետիկական մտքի պատմությունից
Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1
Հայրապետյան Ա. — Բնությունը և մարդը Հ. Սահյանի պոեզիայում
Հայրյան Գ. — Գրականություն և կինո
Հարությունյան Լ. — Լենինի կերպարը սովետական բազմազգ պոեզիայի մեջ (ռուսերեն)
Հովակիմյան Հ. — Գրողը և թատրոնը
Հովհաննես Շիրազի մասին (հոդվածների ժողովածու)
Մելիքսեթյան Ս. — Շեքսպիրը և մերոնք
Մկրտչյան Լ. — Հայաստանի բանաստեղծը
Մնացականյան Լ. — XIX դարավերջի հայ ռեալիստական գրաքննադատության պատմությունից
Շեքսպիրական, հ. 4
Չարենցյան ընթերցումներ, հ. 2
Ոսկերչյան Ա. — Ալ. Մյասնիկյանը և գրական հարցերը
Սահակյան Պ. — Նիկոլայ Օստրովսկի
Սամվելյան Լ. — Շեքսպիրը և հայ գրական և թատերական մշակույթը
Սարգսյան Խ. — Կյանքի և գրականության ուղիներով (ռուսերեն)
Քալանթարյան Ժ. — Ժանրերը սովետահայ գրականության ձևավորման շրջանում

Թարգմանություն

Ալեքսին Ա. — Մեր ընտանիքը
Ալիմժանով Ա. — Հուշանվեր օտարից
Անգլիական և իռլանդական լեգենդներ
Բայրոն Ջ. — Լարա
Բենվենուտո Չելլինիի կյանքը
Գոգոլ Ն. — Մեռած հոգիներ
Եվտուշենկո Եվ. — Երրորդ հիշողություն
Էմինեսկու Մ. — Հատընտիր
Թրուայա Ա. — Սպավոր ձյունը
Լալիչ Մ. — Հարսանիք (վեպ)
Կոժևնիկով Վ. — Հատուկ ատորաբաժանում
Կոզաչենկո Վ. — Սպիտակ բիծ
Հեդայաթ Ս. — Հաջի աղա
Մալո Հ. — Ռոմեն Կալբրի
Մարդագետինների բույրը (վիետնամական պատմվածքներ)
Մարդը անցել է լեռներով (ռումինական պատմվածքներ)
Շեքսպիր Վ. — Ռոմեո և Ջուլիետ
Չակովսկի Ա. — Բլոկադա, գիրք 3, 4

Պուշկին Ա. — Լիրիկա
Սլուցկիս Մ. — Երկինք տանող սանդուղք
Տոլստոյ Լ. — Պատմվածքներ
Ցվայգ Ս. — Մարդկության աստեղային ժամերը
Ունգեր Ֆ. — Արգելված սենյակ
Քիփլինգ Ռ. — Պատմվածքներ հենց այնպես
Օլդրիջ Ջ. — Վերջին դույմը
Ֆեյխտվանգեր Լ. — Դոլա կամ իմացության դժվարին ուղի

1975

Հունվարի 10-ին

Նշվում է Վահան Թոթովենցի ծննդյան 80-ամյակը։

Տեղի է ունենում Եղիշե Չարենցի տուն-թանգարանի հանդիսավոր բացումը։ Բացման խոսք է ասում ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Ռ. Պարսամյանը։ Ելույթ է ունենում Էդ. Թոփչյանը։

ՀՍԳ միության կուսակազմակերպության և վարչության համատեղ նիստում քննվում է ՍՄԿԿ Կենտկոմի դիմումը կուսակցությանը և սովետական ժողովրդին։ Զեկուցում է Էդ. Թոփչյանը։ Ելույթ են ունենում Ա. Դարբինին, Մ. Շաթիրյանը, Նոր-Այրը, Ս. Հարությունյանը, Աղավնին, Ս. Խանզադյանը և ուրիշներ։

Հունվարի 17-ին

«Գրական թերթը» բանավեճ է սկսում «Աշխատանքը և աշխատանքի մարդը սովետահայ արձակում» թեմայով։ Նյութերը տպագրվում են №№ 3, 9, 11, 12, 23-ում։ Բանավեճի ամփոփումը տեղի է ունենում ՀՍԳ միությունում։ Ելույթ են ունենում Ա. Մելիքյանը, Ա. Արաքսմանյանը, Ս. Արզումանյանը, Ս. Հարությունյանը, Ս. Սարինյանը, Արփա-Սևան ջրատարի երրորդ տեղամասի կուսկազմակերպության քարտուղար Ռ. Դավթյանը և ուրիշներ։ Նյութերը տպագրված են «Գրական թերթի» № 28-ում։

Հունվարի կեսերին

ՀՍԳ միության պրոպագանդայի բյուրոն Ծաղկաձորում կազմակերպում է պոեզիայի երեկո։ Միջոցառմանը մասնակցում են Ա. Դարբինին, Մ. Սարգսյանը, Վ. Կարենցը, Լ. Դուրյանը։

ՍՍՀՄ գրողների միությունում տեղի է ունենում «Սովետական բազմազգ գրականության պատմության» վեցհատորյակի ստեղծագործական քննարկումը, որին մասնակցում են 292 հեղինակներ։ Ելույթ էին ունենում վեցհատորյակի գլխավոր խմբագիր Գ. Լոմիձեն, հրատարակության գլխավոր խմբագիր Լ. Տիմոֆեևը, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Լ. Նովիչենկոն և ուրիշներ։

Հունվարի 30-ին

Տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը. օրակարգում՝ «ՍՄԿԿ Կենտկոմի 1974 թ. դեկտեմբերյան պլենումի արդյունքների և հանրապետության կուսակցական կազմակերպության խնդիրների մասին» հարցը։ Զեկուցումով հանդես է գալիս Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը։ Զեկուցման քննարկմանը մասնակցում են Լ. Ղարիբջանյանը, Ս. Առաքելյանը, Վ. Համբարձումյանը, Ս. Խանզադյանը և ուրիշ-

ներ։ Պլենումի նյութերը տպագրված են հանրապետական թերթերում («Սովետական Հայաստան», № 28, «Գրական թերթ», № 5 և այլն)։

Հունվարի 31-ին

Նշվում է Ա. Ս. Գրիբոյեդովի ծննդյան 180-ամյակը։

Փետրվարի 7-ին

Մոսկվայում տեղի է ունենում Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ստեղծված համամիութենական հոբելյանական հանձնաժողովի առաջին նիստը։ Ելույթ են ունենում համամիութենական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ա. Սուրկովը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանը։

Փետրվարի 8-ին

Վահան Տերյանի ծննդյան 90-ամյակի առթիվ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի է ունենում գրական—երաժշտական երեկո։

Փետրվարի 12-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով «Սովետական գրականություն» ամսագիրը՝ առաջին համարի լույս ընծայման քառասունամյակի կապակցությամբ, պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Փետրվարի կեսերին

Տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության նախագահության նիստը, ուր «Երիտասարդության հայրենասիրական և ինտերնացիոնալիստական դաստիարակության հարցերը «Գարուն» ամսագրում» թեմայով զեկուցում է ամսագրի գլխավոր խմբագիր Վարդգես Պետրոսյանը։ Զեկուցման շուրջ արտահայտվում են Վ. Մնացականյանը, Էդ. Ջրբաշյանը, Հր. Թամրազյանը, Հ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Ջ. Դարյանը, Հր. Հովհաննիսյանը։

Փետրվարի 21-ին

Նշվում է Հենրիկ Բուռնազյանի ծննդյան 60-ամյակը։

Նշվում է Սուրեն Այվազյանի ծննդյան 60-ամյակը։ Այդ կապակցությամբ գրողների տանը տեղի է ունենում երեկո։ Զեկուցում է Բ. Ուլուբաբյանը։ Ելույթ են ունենում Սա. Կուրտիկյանը, Ս. Արզումանյանը, Խ. Բարսեղյանը և ուրիշներ։ Վերջում շնորհակալական խոսք է ասում հոբելյարը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության մարտի 27-ի հրամանագրով Ս. Այվազյանը պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Փետրվարի 28-ին

ՀՍԳ միության դահլիճում տեղի է ունենում Վահան Տերյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական երեկո։ Երեկոն բաց է անում Էդ. Թոփչյանը։ Զեկուցում է Վ. Պարսիզունին։

Փեբրվարի 27-ից Մարտի 3-ը

Մինսկում տեղի է ունենում գրողների և քննադատների համամիութենական խորհրդակցություն՝ «Ժողովրդի անմահ սխրանքը Հայրենական մեծ պատերազմում և սովետական գրականությունը» թեմայով։ Ելույթ է ունենում Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Պ. Մաշերովը։ Զեկուցում է Լ. Յակիմենկոն։ Խորհրդակցության աշխատանքների մասին հաղորդում է անում Վ. Օզերովը։ Խորհրդակցության արդյունքները ամփոփվում են ՍՍՀՄ գրողների միության վարչության նիստում, որին մասնակցում են Մ. Ալեքսեևը, Ս. Բարուզդինը, Յու. Վերշինկոն, Յու. Կուզմենկոն, Մ. Լուկոնինը, Ռ. Ռոժդեստվենսկին, Ս. Սմիրնովը, Ա. Զակովսկին, Լ. Յակիմենկոն։

Մարտի 4—6-ը

Լենինականում անցկացվում է երիտասարդ գրողների հանրապետական 6-րդ խորհրդակցությունը։ Բացման խոսք է ասում Էդ. Թոփչյանը։ «Երիտասարդական արձակը» թեմայով զեկուցում է Կ. Սիմոնյանը, «Երիտասարդական պոեզիան և արդիականությունը» թեմայով՝ Ալ. Թոփչյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Շ. Թորոսյանը, Դ. Հովհաննեսը, Հ. Սարուխանը, Ա. Ավագյանը, Հր. Հովհաննիսյանը, Վ. Կարենցը, Դ. Գասպարյանը, Ա. Պետրոսյանը և ուրիշներ։ Խորհրդակցությունը ամփոփում է Էդ. Թոփչյանը։ Մարտի 6-ին խորհրդակցության մասնակիցները ծանոթանում են Լենինական քաղաքին, այցելում թանգարաններ և արդյունաբերական ձեռնարկություններ։

Մարտի 11-ին

Տեղի է ունենում Հայաստանի գրողների միության կուսակազմակերպության ժողովը՝ նվիրված ՀԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումի արդյունքների քննարկմանը և հանրապետության գրական կազմակերպությունների անելիքներին։ Զեկուցում է Ս. Խանզադյանը, ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը, Ստ. Կուրտիկյանը, Ս. Կուրղինյանը, Շ. Թաթիկյանը, Մ. Շաթիրյանը, Ա. Դարբնին, Վ. Բալայանը, Ն. Ադալյանը, Մ. Դավթյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը։

Մարտի 14-ին

Նշվում է Հենրիկ Սևանի ծննդյան 50-ամյակը։

Մարտի 18-ից 24-ը

Մոսկվայում տեղի է ունենում երիտասարդ գրողների համամիութենական 6-րդ խորհրդակցությունը։ Խորհրդակցությունը բացում է ՍՍՀՄ գրողների միության վարչության առաջին քարտուղար Գ. Մարկովը։

«Սովետական երիտասարդ գրողները կոմունիստական կուսակցության և կոմերիտմիության ակտիվ օգնականներն են երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում» թեմայով զեկուցում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Լ. Ի. Մատվեևը։ Ելույթ են ունենում Վ. Օզերովը, Մ. Լուկոնինը, Ա. Սալինսկին, Ա. Ալեքսինը, Լ. Օզերովը։

Մարտի 22-ին

Վախճանվեց բանաստեղծ, գրականագետ, տեքստարան Արամ Ինճիկյանը (ծնվ. 1910 թ.)։

Մարտի 23—30-ը

ՀԱՄԽ-ի, ՀԿԵՄ Կենտկոմի, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության և գրողների միության վարչության համատեղ որոշմամբ անցկացվում է մանկապատանեկան գրքի շաբաթ։

Մարտի 25-ին

Էջմիածնի մշակույթի պալատում տեղի է ունենում քաղաքի աշխատավորության հանդիպումը սովետահայ մի խումբ գրողների հետ՝ նվիրված գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակին։ «Սովետահայ գրողների մասնակցությունը հայրենական պատերազմին» թեմայով զեկուցում է Սասուն Գրիգորյանը, ելույթ են ունենում Վ. Անանյանը, Ա. Դարբինին, Բ. Հովսեփյանը, Սարմենը, Վ. Արամյանը, Վլ. Հարությունյանը։

Մարտի 27-ին

Նշվում է Աշոտ Շայբոնի ծննդյան 70-ամյակը։ Այդ կապակցությամբ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Լևոն Հախվերդյանը պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Ապրիլի 15-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Մը-կըրտիչ Սարգսյանին, Գրիգոր Բալասանյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Տեղի է ունենում ՀՍԳ միության դրամատուրգների խորհրդի նիստ՝ նվիրված Ա. Սահինյանի «Տիկնիկներ» պիեսի քննարկմանը։ Ելույթ են ունենում Գր. Տեր-Գրիգորյանը, Ա. Շահինյանը և Վ. Շողերյանը։

Ապրիլի 17-ին

Վախճանվեց արձակագիր Վիգեն Խեչումյանը (ծնվ. 1916 թ.)։

Ապրիլի 18-ին

«Գրական թերթը» (№№ 16, 18) էջեր է նվիրում Հայրենական մեծ պատերազմում զոհված գրողներին։

ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական նստաշրջան՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 30-ամյակին։ Նստաշրջանը ներածական խոսքով բաց է անում Վ. Նալբանդյանը։ Զեկուցում են Վ. Մնացականյանը («Մեծ սխրանքի պոեզիան»), Ն. Ադալյանը («Հայրենական պատերազմի տարիների պատմվածքը»), Լ. Կիրակոսյանը («Պատերազմի գեղարվեստական արտացոլումը արդի հայ արձակում»), «Հայրենական պատերազմի տարիների գրակա-

նության ուսումնասիրման սկզբունքները» թեմայով հաղորդում է անում Ս. Աղաբաբյանը։

Ապրիլի 24-ին

Թուրքիայի ռեակցիոն կառավարողների կազմակերպած գենոցիդի, հայկական մեծ եղեռնի 60-ամյակի առթիվ Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները պսակ են դնում եղեռնի զոհերի հուշարձանին։

«Գրական թերթում» (№ 17) տպագրվում են Վ. Դավթյանի «Անշեջ կրակ», Ս. Խանզադյանի «Զգաստ եղիք, մարդի՛կ» և Զ. Բալայանի «Չի՛ մոռացվի։ Չի՛մ թողնի» հոդվածները։

Ապրիլի 28-ին

Հայաստանի գրողների միությունում տեղի է ունենում ՀՍՍՀ ստեղծագործական միությունների միացյալ պլենումը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակին։ Պլենումը բաց է անում Էդ. Թոփչյանը։ Նլույթ են ունենում Հայաստանի ժուռնալիստների միության վարչության նախագահ Ա. Խաչիկյանը, նկարիչ Գ. Խանջյանը, գրողներ Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Ա. Գրիգորյանը, դերասան Գ. Ջանիբեկյանը, կոմպոզիտոր Էդ. Հովհաննիսյանը, կինոռեժիսոր Ֆ. Դովլաթյանը, ռեժիսոր Ե. Ղազանչյանը և ուրիշներ։

Մայիսի 7-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Սերգեյ Սարինյանը պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Սերգեյ Դարոնյանը պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Մայիսի 8-ին

Տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների միության վարչության պլենումը, որը քննարկում է կազմակերպական հարցեր։ Պլենումը բավարարում է Էդ. Թոփչյանի խնդրանքը և համաձայն իր դիմումի նրան ազատում ՀՍԳ միության վարչության առաջին քարտուղարի պարտականություններից։ Պլենումը պարտականություններից ազատում է նաև ՀՍԳ միության վարչության երկրորդ քարտուղար Հր. Հովհաննիսյանին։

Պլենումում Հայաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար է ընտրվում Վարդգես Պետրոսյանը, երկրորդ քարտուղար՝ Լևոն Մկրտչյանը, քարտուղար՝ Պերճ Զեյթունցյանը։

ՀՍԳ միության վարչության նախագահության անդամներ են ընտրվում Լ. Մկրտչյանը, Պ. Զեյթունցյանը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Հր. Մաթևոսյանը և Ռ. Դավոյանը։

Մայիսի 9-ին

Լրանում է գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակը։ «Գրական թերթը» (№ 19) էջեր է նվիրում պատերազմի մասնակից հայ գրողներին (Հրաչյա Քոչար, Էդվարդ Ջրբաշյան, Գևորգ Էմին, Հենրիկ Թումանյան, Համո Սահյան, Գուրգեն Բալասանյան, Գարեգին Բեռ և ուրիշներ)։

Մայիսի 20-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության կուսակցական կազմակերպության ժողովը՝ նվիրված գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակին։ «Հայրենական պատերազմը և հայ գրականությունը» թեմայով զեկուցում է Հրանտ Թամրազյանը։ Մաքերի փոխանակությանը մասնակցում են Ռ. Աբրամյանը, Ա. Դարբինին, Ա. Գրիգորյանը, Բ. Հովսեփյանը, Ս. Խանզադյանը և ուրիշներ։

Մայիսի 22-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Միխայիլ Շոլոխովը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Թերթերում հրապարակվում է ՍՄԿԿ Կենտկոմի ողջույնը՝ ուղղված Մ. Շոլոխովին։ Ողջույնի մեջ ասված է.

«ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն Ձեզ՝ սովետական ականավոր գրողիդ և հասարակական գործչիդ, ի սրտե ողջունում է Ձեր 70-ամյակի օրը։

Ձեր կերտած ստեղծագործությունները համաժողովրդական սեր են վայելում։ Դրանք հսկայական գեղարվեստական ուժով բացահայտում են սոցիալիստական վերափոխումների իմաստն ու պատմական նշանակությունը, հարստացնում են կոմունիզմի իդեալների մարմնավորման համար պայքարող միլիոնավոր մարդկանց հոգևոր աշխարհը։

Ձեզ, թանկագին Միխայիլ Ալեքսանդրովիչ, մաղթում ենք քաջառողջություն, երկար կյանք, բեղմնավոր ստեղծագործական գործունեություն»։

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում նշվում է Միխայիլ Շոլոխովի ծննդյան 70-ամյակը։ Նիստը բաց է անում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս. Բռվմասյանը։ Զեկուցում է Ս. Դարոնյանը։ Ելույթ են ունենում Ս. Խանզադյանը, Աղավնին։

Մայիսի 23-ին

Մոսկվայում, Մեծ թատրոնում, տեղի է ունենում երեկո՝ նվիրված Միխայիլ Շոլոխովի ծննդյան 70-ամյակին։ Երեկոն բաց է անում համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ Ն. Տիխոնովը։ Զեկուցում է ՍՍՀՄ գրողների միության վարչության առաջին քարտուղար Գ. Մարկովը։

Մայիսի 25-ին

Թբիլիսիում, Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ, տեղի է ունենում վարդաստան։ Վարդաստանը բաց է անում Վրաստանի գրողների միության վարչության քարտուղար Իոսեբ Նոնեշվիլին։ Ելույթ են ունենում Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ Բենիկ Սեյրանյանը, ՀՍԳ միության վարչության երկրորդ քարտուղար Լևոն Մկրտչյանը, Սերո Խանզադյանը, Մարո Մարգարյանը, Ռազմիկ Դավոյանը, Գիվի Շահնազարը և վրացի, ադրբեջանցի, օս, քուրդ այլ գրողներ։

Մայիս

Հմայակ Սիրասը ֆիննական «Կալևալա» էպոսը հայերեն փոխադրելու համար ընտրվում է «Կալևալա» ընկերության պատվավոր անդամ և պարգևատրվում ընկերության ոսկի հուշամեդալով։

Ղազախական ՍՍՀ Սեմիպալատինսկի կայազորում տեղի է ունենում միջոցառում՝ նվիրված Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։ «Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» և «Սիրո հավերժական թեման և Իսահակյանը» թեմաներով զեկուցում են զինծառայողներ Ս. Սիմոնյանը և Գ. Ամբարյանը։

Հունիսի 4-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վաչե Պարտիզունին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունիսի 6-ին

Նշվում է սիյուսքահայ անվանի գրող Գառնիկ Ադգարյանի ծննդյան 50-ամյակը։

Մոսկվայում տեղի է ունենում ՍՍՀՄ գրողների միության դրամատուրգների ու հայ գրականության խորհուրդների համատեղ նիստը՝ նվիրված սովետահայ դրամատուրգների ստեղծագործություններին։ Բացման խոսք է ասում ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, դրամատուրգների խորհրդի նախագահ Ա. Սալինսկին։ Հայ դրամատուրգների ստեղծագործության վերլուծությամբ հանդես է գալիս թատերագետ Վ. Ֆրոլովը։ Այնուհետև ելույթ են ունենում նիստի մի շարք մասնակիցներ՝ քննադատներ Վ. Ռոզովը, Գ. Մդիվանին, Ի. Շտոկը, Լ. Սամվելյանը, Լ. Հախվերդյանը, Մ. Մեդվեդևան։ Ելույթ են ունենում նաև դրամատուրգներ Ա. Բարսեղյանը, Ա. Արաքսմանյանը, Լ. Կարապետյանը, Գր. Տեր-Գրիգորյանը։ Նիստը ամփոփում է Ա. Սալինսկին։

Հունիսի 19-ին

«Սովետական գրականություն» ամսագիրը ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրվելու կապակցությամբ ՀՍԳ միությունում տեղի է ու-

ննում պատվոգրի հանձնման արարողություն։ Ելույթ են ունենում Վ. Պետրոսյանը, Ռ. Զարյանը, Էդ. Ջրբաշյանը, Վ. Պարտիզունին և Ստ. Կուրտիկյանը։

Հունիսի 25-ից հուլիսի 1-ը

Հայաստանում տեղի է ունենում տաջիկական գրականության շաբաթ։ Շաբաթի հանդիսավոր բացումը տեղի է ունենում հունիսի 26-ին Սունդուկյանի անվան թատրոնում։ Բացման խոսք է ասում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանը։ Ելույթ են ունենում տաջիկական պատվիրակության ղեկավար Մուսին Կանոատոր, ՀՍԳ միության վարչության առաջին քարտուղար Վ. Պետրոսյանը և տաջիկ ու հայ մի շարք գրողներ՝ այդ թվում Ս. Կապուտիկյանը, Մ. Միրշաքարը, Բոբի Ռահիմ-Զադեն, Ս. Խանզադյանը, Մ. Վահիդովը, Ռ. Դավոյանը, Հր. Հովհաննիսյանը։

Շաբաթին մասնակցում են նաև անվանի արտիստներ Խանիֆա Մավլյանովան, Ջաֆար Նազիմովը, Մահմուդ Վահիդովը։

Տաջիկական գրականության շաբաթի մասնակիցները Երևանում, Կիրովականում, Գեղարդում, Լենինականում, Էջմիածնում հանդիպումներ են ունենում հանրապետության աշխատավորների հետ։ Նրանք լինում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, Մ. Սարյանի տուն-թանգարանում և Երևանի ու հանրապետության այլ տեսարժան վայրերում։

Հունիսի 30-ին

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը ընդունում է տաջիկական գրականության շաբաթի մասնակիցներին։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, տաջիկական գրականության շաբաթի առթիվ, տաջիկական գրողների միությունը պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով տաջիկ գրողներ Միրսայիդ Միրշաքարը, Բոբի Ռահիմ-Զադեն և Զիլոլ Իկրամին պարգևատրվում են Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հունիս

Հայկական ՍՍՀ ինքնավար գումարման գերագույն սովետի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Երևանի, Լենինականի, Կիրովականի քաղաքային սովետների ընտրական հանձնաժողովների հաղորդումների համաձայն՝ Հայաստանի գրողների միության անդամներից դեպուտատներ են ընտրվում Վ. Պետրոսյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Նալբանդյանը, Վ. Անանյանը, Վ. Բալայանը, Ս. Դարոնյանը, Ս. Խանզադյանը, Հր. Հովհաննիսյանը, Վ. Մկրտչյանը, Հ. Ջնդին, Ք. Գրիգորյանը, Շ. Թորոսյանը, Նոր-Այրը։

Եղիշե Չարենցի տուն-թանգարանում տեղի է ունենում ՀԳՄ բանաստեղծների խորհրդի հերթական պարապմունքը, Չարենցին նվիրված իրենց ստեղծագործություններն են կարդում Վ. Կարենցը, Ն. Միքայելյանը, Լ. Դուրյանը, Թ. Բոլորչյանը, Բ. Կարապետյանը։

Հուլիսի 4-ին

Նշվում է Մուշեղ Նարյանի ծննդյան 60-ամյակը։

Հուլիսի 11-ին

Նշվում է Գուրգեն Բորյանի ծննդյան 60-ամյակը։

Սոֆիայում բուլղարերեն լույս է տեսնում «Հայկական պատմվածքներ» ժողովածուն, որի մեջ ներկայացված են դասական և ժամանակակից գրողներ։

Հուլիսի 16-ին

Տեղի է ունենում Հայաստանի գրողների միության և «Կոմունիստ» թերթի խմբագրության կուսակցական կազմակերպությունների միացյալ ժողովը։ Զեկուցում են Զ. Բալայանը և թերթի գրականության և արվեստի բաժնի վարիչ Հ. Լալայանցը։ Ելույթ են ունենում Շ. Թաթիկյանը, Ա. Դարբինին, Ա. Սահինյանը, Ս. Խանզադյանը, թերթի խմբագիր Բ. Մկրտչյանը և ուրիշներ։

Օգոստոսի 1-ին

Նշվում է Վահան Գրիգորյանի ծննդյան 70-ամյակը։

Օգոստոսի 8-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գրող Միքայել Հակոբյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Գարեգին Բեսին, Արամաշոտ Պապայանին, Ժորա Հարությունյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Օգոստոսի 13-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վախթանգ Անանյանը ծննդյանը 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով։

Օգոստոսի 22-ին

«Գրական թերթում» (№ 13) տպագրվում է Էդ. Ջրբաշյանի «Մոռացված մի էջ Եղիշե Չարենցի գրական ժառանգությունից» հոդվածը, որի մեջ նա տեղեկացնում է, որ 1928 թ. Երևանի «Հերմես» հրատարակչությունը տպագրել է «Եղիշե Չարենց (փոխադրություն).— Գիքորի երազը. գունատիպ» գիրքը, որը Ս. Մարշակի «Գիրք գրքերի մասին» մանկական պոեմի փոխադրությունն է։

Օգոստոսի 29-ին

Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծվում է հանրապետական հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. Գ. Արզումանյան (հանձնաժողովի նախագահ),

Գ. Աբաշիձե, Ս. Ավետիսյան, Վ. Աճեմյան, Գ. Ալեքսիձե, Վ. Անջափարիձե, Գ. Առաքելյան, Ա. Աբբուզով, Կլ. Բաբիչևա, Ս. Բաղդասարյան, Զ. Բաղիրով, Ս. Բայանդուր, Բ. Գոձիաշվիլի, Մ. Դավթյան, Կ. Դալլաքյան, Ռ. Զարյան, Օ. Թաքթաքիշվիլի, Ս. Թովմասյան, Մ. Ժարով, Ա. Խաչատրյան, Ա. Խաչիկյան, Ի. Կասումով, Լ. Կրոյան, Օ. Կուրբանովա, Ս. Ղազանչյան, Հր. Ղափլանյան, Դ. Մալյան, Ս. Մելիքսեթյան, Էդ. Միրզոյան, Բ. Մկրտչյան, Մ. Մուրադյան, Բ. Ներսիսյան, Ռ. Պարսամյան, Վ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Գ. Ջանիբեկյան, Ա. Սալինսկի, Ս. Սաֆարյան, Ե. Սիմոնով, Բ. Սորոկին, Ա. Սաֆրոնով, Գր. Տեր-Գրիգորյան, Ի. Օսմանլի։

«Գրական թերթ», № 35

Օգոստոս

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի № 2-ում Ա. Զարենցը հրապարակում է Ե. Զարենցի անտիպ բանաստեղծությունները Վ. Տերյանի մասին։

Սեպտեմբերի 3-ին

Վախճանվեց գրականագետ, Հայաստանի գրողների միության վարչության երկարամյա առաջին քարտուղար Էդվարդ Թոփչյանը (ծնվ. 1911)։

Սեպտեմբերի սկզբներին

Հայաստանում հյուրընկալվում է լեհ նշանավոր վիպասան, Լեհաստանի գրողների միության քարտուղար, «Լիտերատուրա» թերթի գլխավոր խմբագիր Եժի Պուտրամենտը։

Էստոներեն լույս է տեսնում «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը (թարգմանիչ՝ Բ. Կաբուլ)։

Պրագայում վախճանվեց թարգմանչուհի, հայագետ Լուդմիլա Մոտալովան։

Սեպտեմբերի 19-ին

ՀՍԳ միությունում տեղի է ունենում մանկական գրականության խորհրդի նիստը։ «Մանկապատանեկան գրականության մի քանի հարցերի մասին» զեկուցում է Խ. Գյուլնազարյանը։ Ելույթ են ունենում Պ. Զեյթունցյանը, Կ. Սիմոնյանը, Մ. Կորյունը, Վ. Տալյանը, Ս. Մուրադյանը, Պ. Խաչատրյանը և ուրիշներ։

Նշվում է Աղասի Այվազյանի ծննդյան 50-ամյակը։

Սեպտեմբերի 23-ին

Ա. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր ժողով՝ նվիրված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային ժողովուրդների բարեկամության շքանշանի հանձնմանը։ Հանդիսավոր ժողովը բաց է անում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Արզումանյանը, ճառով հանդես է գալիս Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին

քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։ Վերջում ելույթ է ունենում ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

Սեպտեմբերի 25-ին

ՀՍԳ միությունում տեղի է ունենում մեծարման երեկո՝ նվիրված Վախթանգ Անանյանի ծննդյան 70-ամյակին։ Երեկոն բաց է անում ՀՍԳ միության վարչության երկրորդ քարտուղար Լ. Մկրտչյանը։ Զեկուցում է Ս. Աղաբաբյանը։ Ելույթ են ունենում Հ. Սահյանը, Խ. Գյուլնազարյանը, Պ. Զեյթունցյանը և ուրիշներ։ Վերջում ելույթ է ունենում հոբելյարը։

Սեպտեմբերի 29-ին

ՀՍԳ միության արձակագիրների խորհրդի նիստում քննարկվում է Ա. Սահինյանի «Կարոտ» վեպը։ Զեկուցում է Ս. Արզումանյանը։ Ելույթ են ունենում Մ. Մարգարյանը, Պ. Զեյթունցյանը, Շ. Տատուրյանը, Ս. Խանզադյանը, Լ. Հախվերդյանը և ուրիշներ։

Տեղի է ունենում Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյակի տոնակատարության անցկացման հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նիստ։ Նիստը քննարկում է հոբելյանի նախապատրաստական աշխատանքների հարցը։

Սեպտեմբերի 30-ին

Գրողների միությունում տեղի է ունենում Հայկական սովետական հանրագիտարանի 1-ին հատորի գրական նյութերի քննարկումը։ Ներածական խոսք է ասում Վ. Պետրոսյանը։ Զեկուցում է Պ. Հակոբյանը։ Ելույթ են ունենում Էդ. Ջրբաշյանը, Հ. Խաչատրյանը, Ստ. Կուրտիկյանը, Ս. Խանզադյանը, Կ. Սիմոնյանը և Ա. Սիմոնյանը։

Հոկտեմբերի 2-ին

Բաքվում սկսվում են սովետական գրականության օրերը, որոնք անց են կացվում «Ինտերնացիոնալիզմի և բարեկամության լենինյան գաղափարները գրականության մեջ» նշանաբանով։ Մասնակցում է հայ գրողների պատվիրակությունը Վ. Պետրոսյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում են Ս. Խանզադյանը, Հր. Հովհաննիսյանը, Գ. Էմինը, Ա. Դարբինի, Ա. Սահակյանը։

Հոկտեմբերի 7-ին

Կրեմլի համագումարների պալատում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանին։ Հոբելյանական նիստը բաց է անում ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտի պաշտոնակատար Վ. Ա. Կոտելնիկովը։ Ճառով հանդես է գալիս Լ. Ի. Բրեժնևը։

Հոկտեմբերի 14-ին

Գրողների տանը տեղի է ունենում գրական երեկո՝ նվիրված Ս. Եսենինի ծննդյան 80-ամյակին։ Երեկոն բաց է անում Պ. Զեյթունցյանը։ Զեկուցում է Մ.

Աթաբեկյանը։ Ելույթ է ունենում Շահան Տալյանը։ Իրենց թարգմանություններն են կարդում Ս. Կապուտիկյանը և Վ. Կարենցը։

Հոկտեմբերի 14—16-ը

Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Երևանի պետական համալսարանում անց է կացվում գիտական նստաշրջան։ Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ զեկուցում են Մ. Մկրյանը, Էդ. Ջրբաշյանը, Ռ. Իշխանյանը, Մ. Ջանփոլադյանը, Հր. Թամրազյանը, Հ. Ֆելիքյանը, Հ. Հարությունյանը և Ավիկ Իսահակյանը։

Հոկտեմբերի 15-ին

Մոսկվայում, ՍՍՀՄ գրողների միությունում, տեղի է ունենում Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարության համամիութենական հոբելյանական կոմիտեի նիստը։ Բացման խոսք է ասում Ա. Սուրկովը։ Ելույթ են ունենում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանը, Ա. Խաչատրյանը, Մոսկվայում ՀՍՍՀ մշտական ներկայացուցիչ Ս. Մելքումյանը։

Հոկտեմբերի 16-ին

ՀՍԳ միությունում տեղի է ունենում երաժշտական կոմեդիայի թատրոնի նոր թատերաշրջանի խաղացանկի քննարկումը։ Զեկուցում է թատրոնի դիրեկտոր և գեղարվեստական ղեկավար Մ. Մարինոսյանը։

Հոկտեմբերի 20—21-ը

Տեղի է ունենում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։ Նստաշրջանը բաց է անում Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներ են կարդում Վ. Մնացականյանը («Մեծ բանաստեղծն ու քաղաքացին»), Ս. Աղաբաբյանը («Իսահակյանը և արդիականությունը»), Էդ. Ջրբաշյանը («Աբու-Լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները»), Ա. Դանիելյանը («Ժողովրդական ավանդությունների իսահակյանական մշակումները»), Ա. Զաքարյանը («Իսահակյանը բնության երգիչ»), Բ. Արվելաձեն՝ Թբիլիսիից («Իսահակյանը և վրաց գրականությունը»), Մ. Սեիդովը՝ Բաքվից («Իսահակյանը և ադրբեջանական գրականությունը»), Ե. Ալեքսանյանը («Համաշխարհային և ռուսական գեղարվեստական ավանդույթները Իսահակյանի արձակում»), Վ. Առաքելյանը («Իսահակյանի լեզվի և ոճի առանձնահատկությունները»), Լ. Կիրակոսյանը («Իսահակյանի հրապարակախոսությունը»), Ս. Ամիրյանը («Իսահակյանը և Ուկրաինան»), Ա. Եղիազարյանը («Իսահակյանի բառի պոետիկան»), Մ. Մուրադյանը («Իսահակյանը երաժշտության մեջ»)։

Հոկտեմբերի 22-ին

ՀՍԳ միության արձակագիրների խորհրդում քննարկվում է Կ. Սիմոնյանի «Ներսես Մաժան դեղագործը» վեպը։ Զեկուցում է Դ. Մուրադյանը։

Հոկտեմբերի 23-ին

Գրողների տանը կազմակերպվում է սովետահայ գրողների և կոմպոզիտորների հանդիպում՝ Ավ. Իսահակյանի 100-ամյակի առթիվ։ Միջոցառման թեման՝ «Ավ. Իսահակյանը երաժշտության մեջ»։

Հոկտեմբերի 24-ին

Նշվում է Վազգեն Մնացականյանի ծննդյան 60-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթում» (№ 43) տպագրվում է ՀՍԳ միության վարչության ողջույնը, որի մեջ ասված է.

«Հարգելի Վազգեն Մնացականյան.

Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր 60-ամյակը։

Լինելով խոր գիտելիքների տեր գիտնական և ծավալելով բեղմնավոր ստեղծագործական գործունեություն, Դուք մեծ ծառայություն եք մատուցել սովետահայ գրականությանը՝ արժանանալով համընդհանուր ճանաչման ու հարգանքի։

...Երկար տարիներ վարելով «Գրական թերթի» և «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրի պաշտոնները, գրական արժեքների գնահատման գործում Դուք աչքի եք ընկել Ձեր խստապահանջությամբ, ակտիվորեն մասնակցել եք գրական պրոցեսին և օժանդակել նոր սերնդի ձևավորման գործին։

Ձեր «Գրական հարցեր», «Գեղամ Սարյանի պոեզիան», «Ժամանակի հետ» երկերը, հանդիսանալով գիտական լուրջ աշխատություններ, նպաստել են հայ գրականագիտական մտքի զարգացմանը։

...Հարգելի Վազգեն Մնացականյան, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, նորանոր ստեղծագործական հաջողություններ»։

Կիևի պետական ֆիլհարմոնիայի Լիսենկոյի անվան դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։ Երեկոն բաց է անում Ուկրաինայի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վ. Կոզաչենկոն։ Իսահակյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում է Վ. Կոչևսկին։ Իսահակյանին նվիրված բանաստեղծություններ և Իսահակյանից կատարած թարգմանություններ են կարդում Լ. Վիշնևսկին, Ս. Կրիժանովսկին, Ի. Դրաչը, Օ. Նովիցկին, Դ. Բելոուսը։ Ելույթ են ունենում նաև Հայաստանից ժամանած հյուրերը՝ Ռ. Արամյանը և Ս. Ամիրյանը։

Հոկտեմբերի 27—31-ը

Երևանում և Լենինականում անց են կացվում «Իսահակյանական» հանդիսություններ։

Հոկտեմբերի 28-ին

Հայ գրողները, ՍՍՀՄ բոլոր հանրապետություններից, Մոսկվայից, Լենինգրադից, արտասահմանյան երկրներից ժամանած հյուրերը այցելում են Ավ. Իսահակյանի շիրիմին։

Հոկտեմբերի 29-ին

Հանդիսությունների մասնակիցները մեկնում են Լենինական, ուր տեղի է ունենում Իսահակյանի հուշարձանի և հուշատան բացումը։ Ավ. Իսահակյանի հուշատունը բացում է ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Սարկիսովը։ Միտինգում ելույթ են ունենում Լենինականի քաղսովետի

գործկոմի նախագահ Ա. Նալբանդյանը, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Մ. Լուկոնինը, ուկրաինացի բանաստեղծ Վ. Կոչևսկին, գրականագետ Լ. Հախվերդյանը։

Միտինգ է տեղի ունենում նաև Թատերական հրապարակում՝ Խաչատուրյանի արձանի բացման ժամանակ։ Բացման խոսք է ասում Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Ռ. Արզումանյանը։ Ելույթ է ունենում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Արզումանյանը, որը բաց է անում Խաչատուրյանի արձանը (գործ Ն. Նիկողոսյանի)։ Այնուհետև ելույթ են ունենում Ս. Խանդաղյանը, բանվոր Մ. Միքիթարյանը, վրացի բանաստեղծ Զ. Կիխինիձեն, ադրբեջանցի բանաստեղծ Ն. Խազրին։ Երևկոյան Լենինականի Ա. Մռավյանի անվան թատրոնում ՍՍՀՄ գրողների միության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունենում ՀՍՌ միության վարչության հոբելյանական պլենումը։ Նախագահությունում էին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարներ Կ. Դեմիրճյանը, Բ. Սարկիսովը, Գ. Արզումանյանը, Պ. Անիսիմովը, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, Վրաստանի կոմկուսի քարտուղար Վ. Սիրաձեն, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրի տեղակալ Վ. Կուխարսկին։ Պլենումը բաց է անում Վ. Պետրոսյանը։ Զեկուցում է ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, բանաստեղծ Մ. Դուդինը։ Ելույթ են ունենում համամիութենական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Ա. Սուրկովը, ՀԿԿ Լենինականի քաղկոմի երկրորդ քարտուղար Դ. Հարությունյանը, Վրաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Գ. Աբաշիձեն, ուկրաինացի բանաստեղծ Ի. Դրաչը, Գ. Էմինը, թարգմանչուհի Ն. Նիկոլաևսկայան, տաջիկ բանաստեղծ Ա. Սիդկին, ռուս բանաստեղծ Վ. Սոկոլովը, ադրբեջանցի բանաստեղծ Ս. Շյուքյուրովը, Լատվիայի գրողների միության վարչության քարտուղար Յ. Պետերսը, Հ. Շիրազը, մոլդավացի բանաստեղծ Ա. Զոկանուն, Տարտուի քաղկոմի քարտուղար Վ. Զուևը, Շ. Բորոսյանը, թարգմանիչ Գ. Շահնազարը, Ռ. Դավոյանը։

Մ. Դուդինի «Խոսք Ավետիք Իսահակյանի մասին» զեկուցումից

«Պոեզիան մարդկային ոգու ոտնն է՝ մարդու ամենազարմանալի ոտնը։ Այդ ոտնին առաջին շարքում փայլում են մարդկային լավագույն հատկությունները։ Մեծահոգությունն ու բարությունը, քնքշությունն ու արիությունը, տաղանդն ու վարպետությունը, ժամանակի ու ներդաշնակության զգացումը, մարդկանց և աստղերի հետ հարազատության զգացումը և սերը։

Պոեզիան վեհաբարո և անկեղծ է, ինքը՝ բանաստեղծն էլ զեղեցիկ է իր զգացման անկեղծությամբ։ Այդպիսին էր նաև Ավետիք Իսահակյանը, Մարդ-ոտնը, որովհետև նա պոեզիա էր ճառագայթում, որովհետև պոեզիան, հանգամանքների հազվագեպ բերումով, նրա էությունն էր։

Նրա կյանքի օրինակով մենք կարող ենք հասկանալ այն հոյակապ ճշմարտությունը, որ աշխարհի վերակերտման մեծ գործը պետք է սկսել հենց իրենից։ Նրա ստեղծագործության օրինակով մենք կարող ենք ամենահամոզիչ կերպով հասկանալ, որ բանաստեղծը մասնագիտություն չէ, այլ մի ճաշակատարիր, որի վրա ժամանակը իր բոլոր նյարդային ուղիները խաչաձևում է՝

դարձնելով մի բաբախուն հանգույց, որն իր ազդանշաններով կապված է աշխարհի բոլոր նավաբեկությունների և աղետների հետ։

Նա չի ժխտում տառապանքը։ Նա սովորեցնում է հաղթահարել այն։ Եվ դրանում է նրա ակտիվ ու ներգործուն հումանիզմն ու մարդկայնությունը։ Նա ինքը այդ բանը խոստովանում է ամենայն անկեղծությամբ, զուսպ և անհերքելիորեն։

Տիեզերքն այս անսահման
Իր ծանրությամբ ահագին
Կախված է սոսկ մի մազից,—
Եվ այդ մազն է իմ հոգին։

Ահա թե ինչպիսի պատասխանատվություն էր վերցնում իր վրա նրա պոեզիան։ Եվ ահա թե ինչն է զարմանալի։ Նա դիմանում էր այդ անչափելի ծանրությանը, որպես մի Անթեյ, պահպանելով ներդաշնակության հավասարակշռությունը և հանդիսանալով նմանվելու արժանի օրինակ՝ ինքն էլ այդ չնկատելով, իր ստեղծագործությամբ մարդկանց հաղորդակից էր դարձնում մարդկային եղբայրության ներդաշնակությանը։ Դա է նրա անգնահատելի ծառայությունը պոեզիայի հանդեպ, իր ժողովրդի հանդեպ, մեր հայրենիքի ժողովուրդների լենինյան եղբայրության հանդեպ, մաքառումներով խաղաղություն որոնող մարդկության հանդեպ։

Նրա հայրենիքը՝ հնամենի Հայաստան աշխարհը, դարերի և ճակատագրերի, աղետների և սլացքների, բարբարոսության և զարթոնքի խաչմերուկը, և նրա ճանապարհների յուրաքանչյուր քարը կրում է արյան ու հրի հետք, նրա վրա դրոշմված են հանճարի հայացքը, շինարարի կոշտուկների և նվաճողի կեղտի հետքերը։ Պետք է միայն կարողանալ հայացքով թափանցել օրհնյալ արևից թրծված այդ քարերի մեջ։ Պետք է միայն կարողանալ այդ քարերի վրա կարդալ ժողովրդի պատմության, նրա պայքարի ու տառապանքների, նրա արիության և համբերության, համընդհանուր դարման տոնի, իր հաղթանակի աննկուն հավատի կենդանի հոգին։ Նա ինքն է ընդգծում. «Արվեստագետ լինելու համար պետք է խմել կուլտուրայի բոլոր աղբյուրներից»։

Նա կարողանում է ամեն ինչ տեսնել իր ծանրանիստ, ասես քարից քանդակված կոպերի տակից, մանկան միամտություն արտահայտող, հավիտենության նման սև աչքերով, և ում բախտ է վիճակվել տեսնել այդ աչքերի լույսը, նա երբեք չի մոռանա այդ լույսի հոգեզմայլ թովչանքը։ Այդ աչքերի լույսի մեջ միշտ արտացոլվում էր հավատարմությունը քարի պարզությանը, արևի օրհնվածությանը, ծովի խռովքին և դիշերվա խորհրդավորությանը։

Վերքերը երգեր էին ծնում։ Երգերը վերքեր էին բուժում։

Դրանում էր նրա կոչումը, նրա դերը՝ լեցուն բարի խորհրդով այդ արյունաներկ օրհնյալ հողում՝ հանուն իր ժողովրդի անմահ փառքի, հանուն նրա կյանքի։

Նրա քնարերգությունը ներքին զրույց է ինքն իր հետ, շաղախված անկեղծությամբ ու ազնվությամբ։ Այն հուզիչ է և պայծառ։ Այն նշանակալի է մարդկային հոգու վրա ունեցած իր անմիջական, զարմանալի անմիջական ներգործությամբ։

Նա գերադասում էր խոսել ոչ բարձրաձայն, բայց իմաստալից։ Դա նրա տաղանդի, նրա բնավորության հատկանիշն էր։ Եվ հիրավի, նրա բանաստեղ-

ծությունններում հայոց հին լեզուն հնչում էր ախորժալուր ու հաղթական։ Որովհետև նա նրան սիրահարված էր իր ժողովրդի պայքարի ամբողջ պատմությամբ, այս աշխարհում գոյատևելու պայքարի պատմությամբ։

Ինձ համար առանձնապես հաճելի է այստեղ, բանաստեղծի ծննդավայրում, այս քարքարոտ հողում, որը դեռ պահպանում է նրա ոտքերի ջերմ հպումը, վերհիշել այն, որ իմ քաղաքում, Նևայի վրա, համաշխարհային պատմության մեծ իրադարձությունների նախօրյակին, Ռուսաստանի հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բլոկը այնպիսի հուզիչ, ես կասեի, սրբազան սիրով է թարգմանել իր եղբայր Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները, առաջինը դրանք հաղորդակից դարձնելով համաշխարհային մշակույթին։ Նա հարկ էր համարել այդ թարգմանությունները հրատարակչին ուղարկել այժմ արդեն հայանի խոսքերով. «Չգիտեմ, թե ինչպես է ստացվել թարգմանությունը, բայց Իսահակյանը առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այդպիսի թարմ և անմիջական տաղանդ հիմա ամբողջ Եվրոպայում չկա»։ Աշխատելով հարազատ մնալ, նա թարգմանությունների մեջ էր դնում իր հոգին, գիտենալով, որ բանաստեղծությունների թարգմանության մեջ ճշգրտությունը համեմատաբար սուբյեկտիվ բան է։ Մեզ հայանի է, որ խստապահանջ և արդարացի Ալեքսանդր Բլոկը, ռուս և համաշխարհային պոեզիայի այդ նուրբ գիտակը, որը կանխազգալու բացառիկ տաղանդ ուներ, հաղվադեպ էր սխալվում իր գնահատականների մեջ։ Եվ Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններին տված նրա այդ, թվում է թե հարևանցի ու պատահական գնահատականը արդարացի է՝ իր հիացական և շահագրգիռ սիրահարվածությամբ հանդերձ։

Որպես մեծ մասշտաբի բանաստեղծ, Ավետիք Իսահակյանը հիրավի նորարար էր։ Նա դավանում էր, ըստ իս, նորարարության ամենահին ավանդույթին, որից օգտվել են ամբողջ աշխարհի ամենամեծ արվեստագետները բոլոր ժամանակներում։ Այդ նորարարության իմաստը պարզ է, գեղեցիկ միտքը միշտ գեղեցիկ արտահայտություն ունի, քանի որ առանց բովանդակության՝ ձև, և առանց մարմնի չկա ոգի։

Նա ուներ սիրո իր աշխարհը՝ լուսավորված հիացմունքի, հավատարմության, ինքնազոհաբերման, հոգեկանության և կրքի անսովոր լույսով, ասես նա հենց իրականում կերպավորում էր այն բեղվինին, որի մասին գրել է.

Անապատում, միրաժի մեջ մի բեղվին
Շողքն է տեսել մի աղջկա դեղեցիկ,
Եվ փընտրում է հոգեսրլա՜ց, տենչագին
Սով-կարոտով ա՛յն աղջկա դեղեցիկ։
. . . . . .

Զարմանալի թարմությամբ շնչող, ճանապարհին բռնկած խարույկ հիշեցնող այս բանաստեղծության ինտոնացիայի մաքուր բնականության մեջ, զգացմունքի, մտքի ու ձևի այդ կատարյալ միացության մեջ ես տեսնում եմ այն վեհ քնարերգության տիպարը, որը պայծառացնում է մարդկային հոգին, նրա համար բացում ուրախության անծանոթ հեռուներ։ Նրա սերը ոչ թե ապաստան է երկրային ապականությունից, այլ ռևալություն է, որն ընդլայնում է մարդկային կեցության աշխարհը, մարդուն ուժ է տալիս։

Նա իր քնարերգությամբ մեզ դուրս է բերում մարդկային հոգու լեցունության աշխարհը, զգացման ճանաչման աշխարհը։ Եվ դա հիանալի է։ Հենց դա էլ պոեզիայի իսկության աշխարհն է։

Այդ քնարերգությունը սրտաբուխ է և առնական»։

«Գրական թերթ», № 45

Հոկտեմբերի 30-ին

Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։ Նախագահությունում են Հայաստանի կառավարության և կուսակցության ղեկավարներ, հյուրեր, գրողները։ Նիստը բաց է անում հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը (բացման խոսքը տպագրված է հանրապետական թերթերում, տե՛ս նաև «Գրական թերթ», № 45)։ Ելույթ են ունենում Իսահակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարության համամիութենական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ա. Սուրկովը, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրի տեղակալ Վ. Կուխարսկին, ՀԳՄ վարչության առաջին քարտուղար Վ. Պետրոսյանը, ՌՍՖՍՀ պատվիրակության ղեկավար, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար Մ. Դուդինը, Ուկրաինայի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վ. Կոզաչենկոն, Բելոռուսիայի գրողների միության նախագահ Մ. Տանկը, Ուզբեկստանի գրողների միության վարչության նախագահ Ք. Յաշենը, Ղազախստանի գրողների միության վարչության քարտուղար Ա. Ալիմժանովը, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Սիրաձեն, Ադրբեջանի գրողների միության առաջին քարտուղար Ի. Կասումովը, Լիտվայի գրողների միության վարչության նախագահ Ա. Մալդոնիսը, Մոլդավիայի գրողների միության վարչության քարտուղար Ի. Զորանուն, Լատվիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. Գորիսը, Կիրգիզիայի գրողների միության վարչության առաջին քարտուղար Տ. Ասկարովը, Տաջիկստանի գրողների միության վարչության քարտուղար Ու. Ռաջաբը, Թուրքմենական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, Թուրքմենիայի ԳԱ թղթակից-անդամ, գրող Կ. Կուլիևը, Էստոնացի գրող Լ. Մերին, Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Օ. Շելագինը, Կաբարդինա-Բալկարիայի ժողովրդական բանաստեղծ Կայսին Կուլիևը, ֆրանսիացի հայագետ Ֆ. Ֆեյդին, ամերիկահայ գրող Վ. Հայկը, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի քարտուղար Լ. Հախվերդյանը, Հանդիսավոր նիստը ղեկավարում է Կ. Դեմիրճյանը։

Նոյեմբերի 7-ին

ՍՍՀՄ պետական մրցանակներ են շնորհվում արձակագիր Ֆյոդոր Աբրամովին («Մանողները» եռագրության համար), բանաստեղծներ Անդրեյ Լուպանին («Սեփական բերը» գրքի «Մայրուղիներ» շարքի համար), Բորիս Օլեյնիկին («Կանգնած եմ գետնի վրա» գրքի համար), մանկագիր Դավրիիլ Տրեոպոլսկուն («Սևականջ սպիտակամազ Բիմը» գրքի համար), գրականագետ Բորիս Սուչկովին (ամփոփում, «Ռեալիզմի պատմական ճակատագիրը» ուսումնասիրության համար), Բորիս Վասիլևին («Իսկ արշալույսներն այնտեղ խաղաղ էին...» վիպակի և սցենարի համար)։ 1971—1973 թվականների հա-

մերգային ծրագրերի համար մրցանակի է արժանանում նաև ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գլխավոր դիրիժոր ու գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանը։

Նոյեմբերի 10-ին

Մոսկվայում, ՍՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում տեղի է ունենում գիտական կոնֆերանս՝ նվիրված Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։ Կոնֆերանսը հրավիրել էին Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և ՍՍՀՄ գրողների միությունը։ Կոնֆերանսը բաց է անում Գ. Լոմիձեն։ Զեկուցում են Ս. Աղաբաբյանը («Իսահակյանը և արդիականությունը»), Վ. Մնացականյանը («Մեծ բանաստեղծն ու քաղաքացին»), Ի. Գրինբերգը («Աբու-Լալա Մահարի» պոեմը»), Ավիկ Իսահակյանը («Իսահակյանի արձակը»), Ե. Ալեքսանյանը (Ավ. Իսահակյանի ստեղծագործությունը և համաշխարհային գրականության փորձը») Լ. Հարությունովը («Ավ. Իսահակյանի գեղագիտության մի քանի հարցեր»), բանաստեղծ-թարգմանիչ Ս. Շերվինսկին և Ս. Խիտարովան, որը զեկուցում է Իսահակյանի ստեղծագործությունների ռուսերեն հրատարակությունների մասին։

Նոյեմբերի 14-ին

Մոսկվայում, ՍՍՀՄ Մեծ թատրոնում, տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր երեկո՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին։

Ներկա էին ընկ. ընկ. Վ. Գրիշինը, Ա. Կիրիլենկոն, Ա. Պելշեն, Բ. Պոնոմարյովը, Դ. Ուստինովը, Վ. Դոլգիխը, Կ. Կատուշևը։

Նախագահությունում էին ընկ. ընկ. Կ. Դեմիրճյանը, Բ. Սարկիսովը, Գ. Արզումանյանը, Մ. Գևորգաձեն, Վ. Կոշեմասովը, Ա. Միկոյանը, Հ. Բաղրամյանը։

Երեկոն բաց է անում համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ Ա. Սուրկովը։ Զեկուցում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Հ. Ոսկանյանը։ Ելույթ են ունենում Էդ. Մեժելայտիսը, Ս. Կապուտիկյանը, Մ. Դուդինը։

Թերթերը հրապարակում են խաղաղության համաշխարհային խորհրդի հեռագիրը Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի առթիվ, որի մեջ ասված է.

«Սովետական Հայաստանի խոշորագույն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան հարյուրամյակը համաշխարհային նշանակություն ունեցող երևույթ է, որ կապված է արդիականության մեծագույն շարժման՝ խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար մղվող պայքարի հետ։ Մեծ է Ավետիք Իսահակյանի դերը հումանիստական գաղափարների զարգացման, բոլոր ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործում։ Նրա ստեղծագործությունը խորապես կապված է հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հետ և միաժամանակ արտացոլում է ռուս և համաշխարհային գրականության լավագույն ավանդները։ Իբրև բանաստեղծ Իսահակյանը դեռևս ռուսական առաջին հեղափոխության տարիներին ժողովրդին կոչում էր պայքարի՝ հանուն ազատության։ Ժողովրդի ազատարարի՝ Մհերի նրա ստեղծած կերպարը դարձավ մարդկության առաջադեմ մասի անկեղծ ձգտումների

բանաստեղծական մարմնացումը։ Ֆաշիզմի դեմ մղված պատերազմի տարիներին Իսահակյանի գրած բանաստեղծությունները բարի կամքի տեր մարդկանց հոգում ամրապնդում էին հաղթանակի ու աղատության անխուսափելիության հավատը։

Լինելով Հայաստանի գրողների միության վարչության նախագահն ու խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ, Ավետիք Իսահակյանն իր բոլոր ուժերը և հոգու ողջ կրակը նվիրաբերեց խաղաղության գործին։

Խաղաղության համաշխարհային խորհուրդը բարձր է գնահատում բանաստեղծի և հասարակական գործչի ավանդը, որն իր ձայնը բարձրացրեց ընդդեմ սառը պատերազմի, ռասիզմի և նեոֆաշիզմի գաղափարների, հանուն ճշմարտության հաղթանակի, հանուն խաղաղության համար պայքարող բոլոր ուժերի համախմբման։

Հայ մեծագույն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի անունը պատկանում է ողջ առաջադեմ մարդկությանը և միշտ կմնա աշխարհում խաղաղության հաստատման համար մղվող պայքարի պատմության էջերում»։

Նոյեմբերի 21-ին

Տեղի է ունենում ՀՍԳ միության քննադատների խորհրդի նիստը։ «Ժամանակակից պոեզիայի զարգացման ուղիները» թեմայով զեկուցում է Զ. Ավետիսյանը։ Ելույթ են ունենում Ս. Սարինյանը Կ. Աղաբեկյանը և ուրիշներ։

Նոյեմբերի 24-ին

Հայաստանի գրողների տանը տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ծննդյան 80-ամյակին։ Երեկոն կազմակերպել էին ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը, Հայաստանի գրողների միությունը և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը։ Երեկոն բաց է անում Գ. Ղարիբջանյանը։ Զեկուցում է Մ. Մելքոնյանը։ Ելույթ են ունենում Ս. Մելիքսեթյանը, Մ. Գարագաշը, Ռ. Զարյանը։

Նոյեմբերի 27-ին

Գրողների տանը տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված Գուրգեն Բորյանի ծննդյան 60-ամյակին։ Երեկոն բաց է անում Պ. Զեյթունցյանը, զեկուցում է Գր. Տեր-Գրիգորյանը։ Ելույթ են ունենում Ստ. Կուրտիկյանը և Վ. Կարենցը։

Նոյեմբերի 28-ին

1975 թ. հանրապետական պետական մրցանակները գրականության բնագավառում շնորհվում են Հովհաննես Շիրազին («Համամարդկային» գրքի համար) և Համո Սահյանին («Սեղամ, բացվի՛ր...» ժողովածուի համար)։

Նշվում է Ա. Լունաչարսկու ծննդյան 100-ամյակը։ Այդ առթիվ «Գրական թերթը» (№ 48) տպագրում է Գ. Հովնանի «Լունաչարսկին Հայաստանի և հայ մշակույթի մասին» հոդվածը։

Դեկտեմբերի 1—2-ը

Գրողների տանը տեղի է ունենում ՀՍԳ միության վարչության և ՍՍՀՄ գրողների միության թարգմանական խորհրդի համատեղ պլենումը՝ նվիրված թարգմանության արդիական հարցերին։ Պլենումի օրակարգը ընդգրկում է հետևյալ հարցերը. 1. Սովետական ժողովուրդը որպես պատմական նոր ընդհանրություն և եղբայրական մշակույթների փոխհարստացման հարցերը, 2. Թարգմանական մասնաճյուղերի և խորհուրդների գործունեությունը տարբեր հանրապետություններում։

Պլենումը բաց է անում Վ. Պետրոսյանը։ Թարգմանական տարբեր հարցերի մասին զեկուցում և ելույթներ են ունենում Լ. Մկրտչյանը, Ֆ. Վելիխանովան (Ադրբեջան), Վ. Կոշևսկին (Ուկրաինա), Ս. Հարությունյանը, Ս. Իվանովը (Մոսկվա), Կ. Սուրենյանը, Գ. Էմինը, Ու. Ռեժինաշվիլին (Վրաստան), Վ. Ռոսևսը (Մոսկվա), Վ. Գանիևը (Մոսկվա), Ն. Ջիսիձեն (Վրաստան), Վ. Սոկոլովը (Մոսկվա), Ա. Բադյուջիևան (Կազան)։

Դեկտեմբերի 4-ին

Նշվում է Սերո Խանզադյանի ծննդյան 60-ամյակը։ Այդ կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Դեկտեմբերի 8-ին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վարդան Աճեմյանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ շնորհվում է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Նա պարգևատրվում է Լենինի շքանշանով և «Մուրճ ու մանգաղ» ոսկե մեդալով։

Դեկտեմբերի 12-ին

Նշվում է մանկագիր Հակոբ Աղաբաբի ծննդյան 100-ամյակը։

Դեկտեմբերի 18-ին

Քննադատների խորհրդի նիստում «Ժամանակակից քննադատության հարցերից» թեմայով զեկուցում է Հ. Գալստյանը։ Ելույթ են ունենում Կ. Դանիելյանը, Լ. Ամատրյանը, Կ. Աղաբեկյանը, Ս. Սարինյանը և ուրիշներ։

Դեկտեմբերի 19-ին

Նշվում է Բագրատ Ուլուբաբյանի ծննդյան 50-ամյակը։

Դեկտեմբերի 22-ին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Միխայել Դուդինին, Կայսին Կուլիևին և Էդուարդաս Մեժելայտիսին շնորհվում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունենում Վարդան Աճեմյանի մեծարման երեկո։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Կարպիս Սուրենյանը ծննդյան 50-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով։

Տեղի է ունենում ՀՍԳ միության մանկական գրականության խորհրդի ընդլայնված նիստը։ Զեկուցումով հանդես է գալիս Խնկո-Ապոր անվան գրադարանի դիրեկտոր Հ. Դանիելյանը։ Ելույթ են ունենում Պ. Զեյթունցյանը, Խ. Գյուլնազարյանը, «Հայաստան» հրատարակչության մանկապատանեկան գրականության բաժնի վարիչ Ա. Ղուկասյանը և ուրիշներ։

Դեկտեմբերի 25-ին

Հայաստանի գրողների տանը տեղի է ունենում հուշ-երեկո՝ նվիրված Ն. Զարյանի ծննդյան 75-ամյակին։ Ն. Զարյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում է Գ. Էմինը։ Ելույթ են ունենում Ս. Կապուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Ռ. Արամյանը։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱՊԻՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Պոեզիա

Առաքելյան Վ. — Արթնացում
Բաբայան Յ. — Կռունկները չվերադարձան
Բեժանյան Մ. — Քեզ փնտրող աչքեր
Բոլորչյան Թ. — Ամռան լուսաբաց
Գյուլասարյան Հ. — Երազների պարս
Գրիգորյան Հ. — Երգեր առանց երաժշտության
Դավթյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 2
Դավոյան Ռ. — Կեղեղ բաց տրա
Զարյան Ն. — Միհատորյակ
Էմին Գ. — Երկերի ժողովածու, հ. 1
Էմին Գ. — Սասունցիների պարը
Թորոսյան Շ. — Ճերմակ նժույգներ
Թումանյան Հեր. — Ճակատագիր
Խաչունց Ա. — Ճակատագիր
Հակոբյան Կ. — Հավատի ճամփա
Հովհաննիսյան Թ. — Կենաց ծառ
Հովհաննիսյան Վ. — Կարոտի գույներ
Հովսեփյան Վ. — Կանաչ մամուռ
Մատակյան Շ. — Չափածո և արձակ էջեր
Մարգարյան Մ. — Օրերի խորքից
Միրիջանյան Լ. — Ճանապարհ
Միքայելյան Ն. — Կարոտի աշխարհ
Պողոսյան Ա. — Հիմն հողի և արևի
Սահակյան Ա. — Ես սիրում եմ ձեզ
Սահյան Հ. — Երկերի ժողովածու, հ. 1
Սարդարյան Ռ. — Վայրկյանների երգը

Սևակ Պ. — Բանաստեղծություններ (ռուսերեն), Մոսկվա
Սևան Հ. — Գլուխն ուղարկեց նորոգելու
Ծհանյան Գ. — Բափանցիկ դռներ

Արձակ

Ալաջաջյան Ստ. — Մադլենն ապրում է Փարիզում
Աղավնի — Նրա մտերմական աշխարհում
Ավագյան Էդ. — Ոսկե հասկեր
Բալայան Զ. — Երկնագույն ճանապարհներ։ Սառույցյալ ուղի
Բալայան Վ. — Լույս և ստվեր
Բալասանյան Գր. — Պատուհանի տակ ծղրիդն է երգում
Բակունց Ա. — Պատմվածքներ
Բարսեղյան Խ. — Ավ. Իսահակյանի հետ
Գյուլնազարյան Խ. — Ջուղարկված նամակներ
Գրիգորյան Վ. — Համատեղություն
Դարյան Զ. — Շուշան
Զեյթունցյան Պ. — Կատակերգություն առանց մասնակիցների
Թաթիկյան Վ. — Նախահայրեր ենք ամենքս էլ
Խալափյան Զ. — Մենող հառնող
Խաչատրյան Հ. — Արտավազդ
Հովսեփյան Բ. — Ընտիր երկեր
Հովսեփյան Ռ. — Ճիչ (ռուսերեն)
Մահարի Գ. — Երկերի ժողովածու, հ. 3
Մելիքյան Ա. — Ուշանում եք, տղաներ
Չարենց Ե. — Երկիր Նաիրի։ Երևանի ուղղիչ տնից (ռուսերեն)
Պետրոսյան Վ. — Հայկական էսքիզներ։ Ապրած և չապրած տարիներ։ Դեղատուն «Անի» (ռուսերեն)
Քոչար Հր. — Ընտիր երկեր, հ. 1

Դրամատուրգիա

Հարությունյան Սաղաթել — Միայն մարդն է ուղիղ քայլում

Ժողովածուներ

Գիրք սիրո (բանաստեղծությունների ժողովածու)
Գրական ժառանգություն, գիրք 8 (ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին)
Գրիգորյան Ս. — Հուշամատյան սիրո և սխրանքի (1941—1945 թթ. զոհված բանաստեղծներ)
Խաչատրյան Հ. — Գրական տեղեկատու
Խոսք Ավետիք Իսահակյանի մասին (ռուսերեն)
Խոսք Միխայիլ Շոլոխովի մասին
Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին
Նոր ձայներ (բանաստեղծությունների ժողովածու)

Պուշկինը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը (ռուսերեն)

Դասականներ

Աբովյան Խ. — Վերք Հայաստանի
Թալիադյան Մ. — Հոդվածներ, նամակներ, վավերագրեր։ Գրական ժառանգություն, հ. 9
Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի
Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի (անգլերեն)
Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի (ռուսերեն)
Իսահակյան Ավ. — Աբու-Լալա Մահարի (ֆրանսերեն)
Իսահակյան Ավ. — Արձակ (ռուսերեն)
Իսահակյան Ավ. — Բանաստեղծի սիրտը (նամակներ)
Իսահակյան Ավ. — Բանաստեղծություններ (ռուսերեն)
Իսահակյան Ավ. — Երկերի ժողովածու, հ. 3, 4
Իսահակյան Ավ. — Բանաստեղծություններ և պոեմներ (ռուսերեն), Լենինգրադ
Իսահակյան Ավ. — Ընտիր երկեր (աղբրեջաներեն), Բաքու
Իսահակյան Ավ. — Ընտիր երկեր, հ. 1, 2 (ռուսերեն), Մոսկվա
Իսահակյան Ավ. — Ժողովածու (բրդերեն)
Իսահակյան Ավ. — Հատընտիր
Իսահակյան Ավ. — Ուշինսարա (աղբրեջաներեն)
Մուրացան — Երկերի ժողովածու, հ. 1
Նահապետ Քուչակ — Հազար ու մեկ հայրեն (հայերեն և ռուսերեն)
Ներսես Մոկացի — Բանաստեղծություններ
Շիրվանզադե — Քառս (ռուսերեն)
Պողոսյան Պ. — Երկերի ժողովածու, հ. 2
Սունդուկյան Գ. — Երկերի ժողովածու, հ. 3
Վարուժան Դ. — Ձոն
Տերյան Վ. — Երկերի ժողովածու, հ. 3
Բաֆֆի — Սամվել (ռուսերեն)

Հայագիտություն, գրականության պատմություն, քննադատություն

Աբեղյան Մ. — Երկեր, հ. 7
Արեղյան Հ. — Իսահակյանը և ժողովրդական էպոսը
Աղաբեկյան Կ. — Գուրգեն Մահարի
Անանյան Գ. — Ինտերնացիոնալիզմը սովետահայ գրականության պաթոսն է
Ամատունի Լ. — Ավետիք Իսահակյան
Առաքելյան Ա. — Հռոմեական գրականության պատմություն
Առաքելյան Վ. — Գրիգոր Նարեկացու լեզուն ու ոճը

Բարսեղյան Խ. — Հանդիպումներ Ավետիք Իսահակյանի հետ
Գայսարյան Ս. — Ավետիք Իսահակյան
Գայսարյան Ս. — Ավետիք Իսահակյան (ռուսերեն)
Գրիգորյան Կ. — Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ուղին (ռուսերեն)
Գրիգորյան Վ. — Սովետահայ դրամատուրգիայի ձևավորումը
Դարոնյան Ս. — Միքայել Նալբանդյան (ռուսերեն)
Եղեկյան Լ. — Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը
Երևանլի Ա. — Ավետիք Իսահակյանը և ազգբնչանական գրականությունը (ազգբնչաներեն)
Զարյան Ռ. — Հուշապատում, գիրք 1
Թամրազյան Հր. — Գրական դիմանկարներ, հոդվածներ
Իսահակյան Ավիկ — Իսահակյանի արձակը
Կարապետյան Լ. — Վախթանգ Անանյանի կանաչ աշխարհը
Կիրակոսյան Լ. — Մարդը և սխրանքը (ռուսերեն)
Հայրյան Գ. — Սերո Խանզադյան
Հակոբյան Է. — Քերովբե Պատկանյան (ռուսերեն)
Հարությունյան Ս. — Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ
Հովհաննիսյան Գ. — Ավետիք Իսահակյան
Ղազարյան Հովհ. «Անուշի» ստեղծագործական պատմությունը
Ղանալանյան Հովհ. — Ավետիք Իսահակյան (հուշեր)
Ղանալանյան Հովհ. — Ավետիք Իսահակյան (ռուսերեն)
Մանուկյան Ս. — Հակոբ Հակոբյան
Մաքսուդեանյան Մ. — Ռաբինդրանաթ Թագորը հայ մտքի գնահատմամբ
Մկրյան Մ. — Իսահակյանի հումանիզմը
Մկրտչյան Լ. — Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը (ռուսերեն)
Մուրադյան Հ. — Հովհաննես Շիրազ
Շեքսպիրական, հ. 5
Պարսիզոնի Վ. — Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը
Սահակյան Հ. — Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16—17-րդ դդ.)
Սահակյան Պ. — Շոլոխովի համաշխարհային փառքը
Սարգսյան Ս. — Երգիծանքը հայ ժողովրդական հեքիաթներում

Թարգմանություններ

Արդամատսկի Վ. — Քաջերի խենթությունը
Բոդլեր Շ. — Փոքրիկ արձակ պոեմներ
Գալդոսի Է. — Կիսաճանապարհին
Գոգոլ Վ. — Հատուկ նշաններ
Գոլսուորդի Ջ. — Ասք Ֆորսայթների մասին, հ. 1, Սեփականատերը
Դանդուլով Ս. — Կուզնեցկի մոստ
Դեմեարիուս Լ. — Աշխարհն սկսվում է ինձնից

Զեգգինիձի է. — Գարունը վաղ սկսվեց
Էլլին Թ. — Հառաչանք
Էքերման — Զրույցներ Գյոթեի հետ
Լատիշական ժողովրդական հեքիաթներ
Լոնդոն Ջ. — Երկերի ժողովածու, հ. 12
Կուպրին Ա. — Յամա
Հելլադայի հերոսները, հին հունական առասպելները
Մելնիժ Ի. — Ճահճուտի մարդիկ
Միցկևիչ Ա. — Պանի Տվարդովսկա
Շոլոխով Մ. — Մարդու ճակատագիրը
Պրիշվին Մ. — Իմ պատանի բարեկամներին
Պրուս Բ. — Տիկնիկ, գիրք 1
Ռիդ Մ. — Երկերի ժողովածու, հ. 4
Ռոլան Ռ. — Հմայված հոգին, հ. 1, գիրք 1, 2
Սեմյոնով Յու. — Ռումբ նախագահի համար
Սենկևիչ Հ. — Երաժիշտ Յանկոն
Սիմենոն Ժ. — Դեղին շունը
Սուրկով Ա. — Լիրիկա
Սքոթ Վ. — Այվենհո
Վիպակներ և պատմվածքներ (սոցիալիստական երկրների արկածային ու գիտաֆանտաստիկ գործերի ժողովածու)
Տոլստոյ Լ. — Պատերազմ և խաղաղություն, հ. 1, 2
Քեմալ Յ.— Ցախ Մամեդ
Ֆիրդուսի — Շահնամե

ՀԵՆՐԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ, ԴԱՎԻԹ ՎԱԶԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ГЕНРИХ АНУШАВАНОВИЧ ГАЛСТЯН, ДАВИД ВАЗГЕНОВИЧ ГАСПАРЯН

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչության խմբագիր Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ, տեխնիկական խմբագիր Ս. Կ. ՁԱՔԱՐՅԱՆ, սրբագրիչներ Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ, Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՖ 04360 Պատվեր 235 Հրատ. 4637 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 16/III 1977 թ.։ Ստորագրված է տպագրության. 1/VII 1977 թ.։
Տպագրական 20,0 մամուլ, հրատ. 20,52 մամուլ, պայման. 28,0 մամուլ։
Թուղթ № 1, 70×108 1/16, գինը 2 ռ. 30 կ.։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՍ Հիմնարար գիտ. գրադ.
FL0072286

A III 4557

A III 4593